

The background of the image is a composite. The upper portion shows a map of Armenia with the word 'ARMENIA' clearly visible. The lower portion shows a close-up of a man with white hair and a beard, wearing glasses and a white shirt with a tie. The overall color palette is dark, with the map and the man's face providing points of contrast.

# ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

## ԹՈՒՐԲԵՐՈՒՆ ԼԻԲՐ ՆԵ՛՛՛՛ ԶՊԻՏՅԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**Յ**ռոմ գացողները գիտեն քաղաքի կեդրոնը (COLOSSEO) էն դեպի «FORO ROMANO» տանող պատմական ճամբուն վրայ, մարմարե հսկայ քարտեսներ կան, որոնք Յռոմեական կայսրության ստեղծման առաջին շրջանեն, մինչեւ վերջին շրջանի ծաւալման պատմութիւնը կը ցուցաբերեն:

Առաջին քարտեսին վրայ պզտիկ կէտ մը կազմող «ROMULUS»-ին հիմնած Յռոմ քաղաքէն սկսեալ Յռոմեական կայսրութիւնը, տարիներու ընթացքին կը տարածուի ամբողջ Եւրոպայի մէջ, հասնելով Յիւսիսային Ափրիկէ, Միջին Արեւելք եւ մինչեւ Փոքր Ասիա:

Այդ տարիներուն Եւրոպայի քարտեսին վրայ ո՛չ Ֆրանսային անունը կայ, ո՛չ ալ այսօրուան ուրիշ եւրոպական պետութիւններուն անունները:

Որովհետեւ ասոնք գոյութիւն չունէին:

Միայն Յունաստանը կայ, եւ կարգ մը ուրիշ հին երկիրներու անունները:

Եւ Փոքր Ասիոյ Արեւելքի հողերուն ամբողջութեան վրայ տարածուած պետութիւն մը: Անունը՝ «ARMENIA»:

Քով քովի դրուած մեծ մարմար քարտեսներու վրայ, Յռոմեական կայսրութեան ստեղծման առաջին քարտեսն սկսեալ «ARMENIA»-ն միշտ գոյութիւն ունի:

Միայն Յռոմեական կայսրութեան ծաւալման վերջին շրջանին է, որ «ARMENIA»-ն Յռոմեական կայսրութեան կը ենթարկուի: Բայց միշտ կը մնայ «Յայաստանի մեծ թագաւորութիւնը»:

Երբ առաջին անգամ Յռոմի մէջ այս մարմար քարտեսներու վրայ «ARMENIA» անունը տեսանք, հպարտութեամբ լեցուեցաւ մեր կուրծքը: Եւ աւելի հաւատացինք Յայ Ազգին մեծութեան:

Քրիստոսէ առաջ Ա. դարում, Մեծ Տիգրանի թագաւորութեան շրջանի «ARMENIA»-ն աշխարհակալ կայսրութիւն մըն էր, եւ Յայաստանի բնակչութեան թիւը 3 միլիոնի կհասներ:

Այդ շրջանին երեք միլիոնէ աւելի եղող ազգերը՝ մատի վրայ կհամրուէին...

Բայց Յայաստանը 11 դարու վերջավորութենն սկսեալ մինչեւ 20 դարուն սկիզբը տեւաբար թրջական ջարդերու ենթարկուեցաւ:

Եւ եթէ հայերը 24 Ապրիլ 1915-ին թուրքերու կողմէ գործադրուած ցեղասպանութեան զոհը չըլլային՝ այսօր միացեալ մեծն Յայաստանով, նուազագոյն 30 միլիոննոց ազգ մը պիտի ըլլային:

Յռոմի այս մարմար քարտեսները՝ հայ ազգին մեծութեան խորհրդանիշներն են:



**ՀԱՆԳՍԿ**  
ՀՐԱՏԱՐԱԿԿՈՒՅՈՒՄ





---

ԹՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԻՄՆԱՐԿ

ՅՈՎՆԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ԹՈՒՐ-ՔԵՐՈՒՆ

[ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՅԱԾ

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երրորդ լրացված վերահրապարակություն



ՉԱՆԳԱԿ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

2013

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)52

Չ 554

Գիրքը տպագրվում է  
Մեծ եղեռնի և Հայոց ազատամարտի  
«Ուխտատուն» Թանգարան-ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Կազմել և խմբագրել են «Նաիրի» հանդեսի գլխավոր խմբագիր  
ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻՆ (Բեյրութ)

և

պատմական գիտությունների դոկտոր  
ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ (Երևան)

Չիլինկիրեան Յովհաննէս

Չ 554 Թուրքերուն [իբր թէ] չգիտցած իրականութիւնները  
(Երրորդ լրացված վերահրատարակություն) / Չիլինկիրեան  
Յովհաննէս.— Եր.: Չանգակ, 2013.— 528 էջ:

Գիրքը նվիրված է Հայոց ցեղասպանության 100-ամյակին:  
Հեղինակը հանդես է գալիս Հայոց ցեղասպանությունը ժխտելու  
թուրքական փորձերի դեմ:

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)52

ISBN 978-9939-68-139-9

© Չիլինկիրեան Յ., 2013թ.  
© «Չանգակ-97» ՍՊԸ, 2013 թ.

## ԿԱԶՄԻ ՆԿԱՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ

Հոռոմ գացողները գիտեն քաղաքի կեդրոնը (COLOSSEO)- էն դեպի «FORO ROMANO» տանող պատմական ճամբուն վրայ, մարմարէ հսկայ քարտէսներ կան, որոնք Հռոմէական կայսրութեան ստեղծման առաջին շրջանէն, մինչեւ վերջին շրջանի ծաւալման պատմութիւնը կը ցուցաբերեն:

Առաջին քարտէսին վրայ պզտիկ կէտ մը կազմող «ROMULUS»-ին հիմնած Հռոմ քաղաքէն սկսեալ Հռոմէական կայսրութիւնը, տարիներու ընթացքին կը տարածուի ամբողջ Եւրոպայի մէջ՝ հասնելով Հիւսիսային Ափրիկէ, Միջին Արեւելք եւ մինչեւ Փոքր Ասիա:

Այդ տարիներուն Եւրոպայի քարտէսին վրայ ո՛չ Ֆրանսային անունը կայ, ո՛չ ալ այսօրուան ուրիշ եւրոպական պետութիւններուն անունները:

Որովհետեւ ասոնք գոյութիւն չունէին:

Միայն Յունաստանը կայ, եւ կարգ մը ուրիշ հին երկիրներու անունները:

Եւ Փոքր Ասիոյ Արեւելքի հողերուն ամբողջութեան վրայ տարածուած պետութիւն մը: Անունը՝ «ARMENIA»:

Քով քովի դրուած մեծ մարմար քարտէսներու վրայ, Հռոմէական կայսրութեան ստեղծման առաջին քարտէսէն սկսեալ «ARMENIA»-ն միշտ գոյութիւն ունի:

Միայն Հռոմէական կայսրութեան ծաւալման վերջին շրջանին է, որ «ARMENIA»-ն Հռոմէական կայսրութեան կը ենթարկուի: Բայց միշտ կը մնայ «Հայաստանի մեծ թագաւորութիւնը»:

Երբ առաջին անգամ Հռոմի մէջ այս մարմար քարտէսներու վրայ «ARMENIA» անունը տեսանք, հպարտութեամբ լեցուեցաւ մէր կուրծքը: Եւ աւելի հաւատացինք հայ ազգին մեծութեան:

Քրիստոսէ առաջ Ա. դարում, Մեծ Տիգրանի Թագաւորութեան շրջանի «ARMENIA»-ն աշխարհակալ կայսրութիւն մըն էր, եւ Հայաստանի բնակչութեան թիւը 3 միլիոնի կհասներ:

Այդ շրջանին երեք միլիոնէ աւելի եղող ազգերը՝ մատի վրայ կհամրուէին...

Բայց Հայաստանը 11-րդ դարու վերջավորութենէն սկսեալ մինչեւ 20-րդ դարուն սկիզբը տեւաբար թրջական ջարդերու ենթարկուեցաւ:

Եւ եթէ հայերը 24 Ապրիլ 1915-ին թուրքերու կողմէ գործադրուած ցեղասպանութեան զոհը չըլլային՝ այսօր միացեալ մեծն Հայաստանով, նուազագոյն 30 միլիոննոց ազգ մը պիտի ըլլային:

Հոռմի այս մարմար քարտէսները՝ հայ ազգին մեծութեան խորհրդանիշներն են:

## ՑԱՌԱՋԱԲԱՆ

Ցարգելի՛ ընթերցողներ, ձեզմէ պիտի խնդրենք, եթէ կարելի է, Երոպայի եւ չրջակայքի քարտէսին ուշադրութեամբ նայեցէք:

Այդ քարտէսին վրայ, արդեօ՞ք պետութիւն մը կրնաք գտնիլ, որուն բնակչութեան մեծամասնութիւնը, հազարաւոր տարիներէ ի վեր այդ հողերուն վրայ բնակող տեղացի ժողովուրդը չըլլայ, այլ ընդհակառակը ետքը եղող օտարներ ըլլան:

Երոպայի մէջ, այս տեսակ պետութիւն մը գոյութիւն չունի:

Բայց, Երոպայէն դուրս գտնուող նոր պետութիւն մը կայ: Այն ալ Ասիոյ ցամաքամասին վրայ, Երոպայի մօտ մեծ թերակղզի մը եղող եւ «Փոքր Ասիա» կոչուող Անատոլիոյ մէջ, 1923-ին ոչինչէն ստեղծուող Թուրքիա ըսուած պետութիւնն է:

Քաղաքակրթութիւններու եւ քրիստոնէութեան օրրանը եղող Անատոլիոյ մէջ, 1915-ին սկիզբները ապրող ժողովուրդին մեծամասնութիւնը քրիստոնեայ էր:

Բայց, 1915-էն մինչեւ 1923, ութը տարուան ընթացքէն, Անատոլիոյ քրիստոնեայ բնակչութիւնը ամբողջութեամբ մաքրագործուեցաւ:

Միլիոնաւոր քրիստոնեաներ սպաննուեցան, եւ մնացեալները աքսորուեցան, եւ 1923-ին Անատոլիոյ բնակչութեան 99,9 % միւսլիման եղաւ...

Քսաներորդ դարուն սկիզբները Թուրքերուն իրագործած այս զարհուրելի ազգազրական մաքրագործումին եւ ցեղասպանութեան նմանը պատմութեան ոչ մէկ չրջանին գտնել կարելի է:



\* \* \*

11-րդ դարուն վերջաւորութեան, Միջին Ասիայէն եկող թուրքերը, տասը հազարնոց ցեղախումբ մը ըլլալով Անատոլիան գրաւելու սկսած չրջաններուն, պատմութեան գիտցուած թուականներէն ի վեր Անատոլիոյ բնիկ ժողովուրդները՝ յոյները եւ հայերն էին:

Այն ժամանակներուն, մէկ հատ թուրք չիկար Անատոլիոյ մէջ:

11-րդ դարէն վերջէ, որ թուրքերը իրենց սարսափելի վայրագութեամբ Անատոլիոյ մէջ յառաջանալ սկսան:

Եւ քանի մը դար յետոյ, 1453-ին թուրքերը Պոլիսը գրաւեցին, եւ Բիւզանդական կայսրութիւնը քանդեցին:

Ե՛ւ նոյն վայրագութեամբ, ե՛ւ թալանելով, մինչեւ Վիէնայի դռները յառաջացան:

Բայց 1683-ին քրիստոնեայ բանակները, միանալով Վիէնայի դռներուն առջեւ, պարտութեան մատնեցին թուրքերը:

Եւ այն թուականէն յետոյ, թուրքերը նահանջել սկսան:

\* \* \*

1876-ին ռուսական բանակները Պոլիսը գրաւելով՝ Օսմանեան կայսրութեան վերջ մը պիտի տային: Եւ ռուսերը թուրքերը իրենց եկած Միջին Ասիոյ տափաստանները պիտի քչէին:

Բայց, 19-րդ դարուն մէջտեղ ելլող միջազգային մեծ դրամատէրերու կազմակերպութիւնը օսմանյան պետութեան կործանումին արգելք եղաւ:

Եւ արեւմտեան պետութիւնները «հիւանդ մարդ» որակուող օսմանեան թուրքերը վերակենդանացնել սկսան:

Ինչո՞ւ:

Ռուսերուն Միջերկրական ծովը իջնելուն արգելք ըլլալու համար:

Եւ միւսլիման թուրքերը՝ Անատոլիոյ մէջ ռուսերուն դէմ վահան ըլլալով գործածուեցան:

Եւ այս ծրագրին «վարագոյրին ետեւը» միջազգային մեծ դրամատէրերու կազմակերպութիւնը կար. եւ այս ծրագիրը թուրքերը երեք հանգրուաններու մէջ գործադրեցին:

1. Հանգրուան - Առաջին աշխարհամարտին խառնաշփոթութիւնէն օգտուելով, 1915-ին օսմանեան պետութեան սահմաններուն մէջ բնակող բոլոր հայերը ցեղասպանութեան ենթարկեցին:

2. Հանգրուան - 1919-էն սկսեալ Սեւ ծովու չրջակայքի «Pontus»-ցի յոյները, եւ Անատոլիոյ մէջի ասորիները եւ միւս քրիստոնեաները ջարդեցին:

3. Հանգրուան - Մինչեւ 1923 թուականը, Անատոլիոյ մէջի բոլոր յոյները, եւ 1915 ցեղասպանութիւնէն վերապրող սուրի մնացորդ բոլոր հայերը մաքրագործեցին...

Այս զարհուրելի ծրագրին գործադրութեան հետեւանքով, 20-րդ դարու սկիզբը Անատոլիոյ մէջ մեծամասնութիւն եղող քրիստոնեաները բոլորն ալ մաքրագործուեցան, եւ 1923-ին, բնակչութեան 99,9 % միւսլիման եղող նոր Թուրքիա մը մէջտեղ հանուեցաւ:

Եւ այս սարսափելի ազգագրական մաքրագործումները եւ ցեղասպանութիւնները (իբր թէ) մարդասիրութեան առաքեալներ ըլլալը յաւակնող արեւմտյան պետութիւններուն բարձրագոյն շահերուն համար, եւ անոնց աչքերուն առջեւ կատարուեցան...

\* \* \*

Արդեօ՞ք իրականութիւնները ե՞րբ մէջտեղ պիտի ելլեն:

Եւ այս ցեղասպանութիւններուն բուն պատասխանատուները ե՞րբ իրենց պատիժը պիտի կրեն:

Այս պատասխանատուները մինչեւ որ չի պատժուին աշխարհի վրայ արդարութեան մասին խօսիլը անկարելի է:

Այս գիրքը, այս սարսափելի անիրաւութեան դէմ ընդվզումի ազադակ մըն է:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)

Թիւ 1

«Նայիրի», 1 Յունուար 2001, Բացառիկ,

**ԹՈՒՐԵՈՍԱՆԻ**

Ապտուլլահ Էօճալանին համար «հայու ապօրինի զաւակ,  
«փիչ է» ըսէր էք:

Էօճալանին հայու «փիչ» ըլլալը չենք կրնար գիտնալ:

Բայց, մեր գիտցած մէկ բանը կայ:

Դուք մէծամասնութեամբ յոյնի, հայու «փիչ» էք:

Թիւ 2

«Նայիրի», 9 Յունուար 2001, Թիւ 139

**ԹՈՒՐԵՈՍԱՆԻ**

«Աշխարհակալ կայսրութիւն մը ստեղծեցինք՝  
ցեղախումբէ մը»:  
Նամըք Քէմալ (1840-1888)

Նամըք Քէմալին այս խօսքերը՝ «օղ» ըլլայ ձեր  
ականջներուն:

Կեդրոնական Ասիոյ տափաստաններէն եկող վայրենի  
ցեղախումբ մը ըլլալով՝ խուժեցիք քաղաքակրթութիւններուն  
օրրան եղող Անաթոլիոյ հողերը:

Ձեր սարսափելի վայրագութեամբ ահաբեկում սփռեցիք  
Անաթոլիոյ բնիկ ժողովուրդներուն:

Դարեր տեւող այս վայրագութեան «չնորհիւ» տեղաւո-  
րուեցաք Անաթոլիոյ հողերուն վրայ:

Դուք այն դարերէն մինչեւ այսօր նոյն վայրենիներն էք:

Քաղաքակրթութիւններուն օրրան Անաթոլիան կործանող եւ բնիկ ժողովուրդները ցեղասպանութեան ենթարկող վայրենիներ:

Թիւ 3

«Նայիրի», 23 Յունուար 2001, Թիւ 140

### ԹՈՒՐԵՈՍԱՆԻ

Էճէվիտը, Հայկական ցեղասպանութեան համար «Երեւակայական ցեղասպանութիւն» ըսէր է:

Երեւակայութիւններուն, սուտերուն «վարպետը» էճէվիտն է: 1950-ներուն յոյներուն համար «Եղբայրութեան» բանաստեղծութիւններ գրող էճէվիտը, 1974-ին, իր ուսուցիչին «Kissinger»-ին հրամանով Կիպրոսի վրայ յարձակեցաւ, եւ հազարաւոր կիպրացի յոյներուն մահուան պատճառ եղաւ: Եւ բոլոր կիպրացի յոյն ժողովուրդը սուգի մատնեց:

Եւ «Կիպրոսի դահիճ» էճէվիտը այս ողբերգութեան անունը «Սաղաղութեան գործողութիւն» որակեց:

Կիպրոսի դահիճ էճէվիտ քիչ մը պատմութիւն կարդայ, եւ սորվէ՝ Անաթոլիոյ բուն տէրերը յոյները եւ հայերն են: Այսօր Անաթոլիոյ հողերուն վրայ մէկ հատ յոյն եւ հայ չիկայ:

Ի՞նչ եղան այս յոյներն ու հայերը:

Քեզի պէս «ստախօսներու» կողմէ անոնք ցեղասպանութեան ենթարկուեցան:

Թիւ 4

«Նայիրի», 6 Փետրուար 2001, Թիւ 141

## ԹՈՒՐՔՈՍԱՆԻ ԳՈՂՅՈՒԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Պատմութեան գիտցուած թուականներէն հինգ հազար տարիներէ ի վեր, իր մայր հայրենիքը եղած Արեւելեան Անաթոլիայի մէջ ապրող հայ ազգը ձեր տարածած սարսափով թրքացուցիք, եւ իսլամացուցիք:

Իսլամանալը չընդունողներուն մէկ մասը ձեր կողմէ սպաննուեցաւ, մէկ մասն ալ, իր հայրենիքը լքելու, փախչելու եւ Արեւմտեան Անաթոլիա, Թրակիա եւ այլուր հաստատուելու ստիպուեցաւ:

Հայ ազգին դէմ այս վայրագութիւնը ձեր Անաթոլիոյ հողերուն վրայ ոտք կոխած 11-րդ դարէն մինչեւ 20-րդ դարուն սկիզբները շարունակուց:

Եւ 24 ապրիլ 1915-էն սկսեալ, Առաջին աշխարհի պատերազմին խառնաչփոթութիւններէն օգտուելով, հայ ազգը հտիրնէն մինչեւ Վան պատմութեան մէջ չի տեսնուած վայրագութեամբ ցեղասպանութեան ենթարկեցիք:

Պատմութեան մէջ ուրիշ մէկ նմանը գոյութիւն չունեցող այս Հայկական ցեղասպանութիւնը արեւմտեան պետութիւններուն, Սովետներուն դէմ ձեզի նեցուկ կենալուն պատճառաւ մինչեւ այսօր անպատիժ մնաց:

Եւ Հայկական ցեղասպանութիւնէն 85 տարիներէ վերջ այսօր, դուք Հայկական ցեղասպանութեան համար՝

«Երեւակայական ցեղասպանութիւն» կ'ըսէք:

Այս «սուտերը» ըսիլ տուողը Փաշիստ եւ ցեղապաշտ թրքական պետութեան քարոզչութիւնն է:

Եթե, մէջերնիդ իրականութիւնները գիտնալ ուզող կայ, 1971-ին Պոլսոյ մէջ «Toker» հրատարակչատան կողմէ տպագ-

րուած - «Անաթոլիոյ թրքացուիլը եւ իսլամացուիլը» անունը կրող գիրքը թող կարդայ:

Իրականութիւնները՝ Արեւուն նման ցեխով չի ծեփուիր:

Թիւ 5

«Նայիրի», 20 Փետրուար 2001, թիւ 142

## ԱՆՊԱՏԻԺ ՄՆԱՅԱՄ

### ՄԱՐԴԱՍՊԱՆՆԵՐՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԷԻԱ

Ֆրանսան, Հայկական ցեղասպանութիւնը ընդունեց ըսելով իրար անցաք:

Ինքզինքէն ելած խելագարներուն նման կը պոռաք ու կը յոխորտաք:

Ասոր կ'ըսին Յանցաւորութեան բարդոյթ:

Որովհետեւ, դուք շատ լաւ գիտէք, ձեր գործած ոճիրին ահաւորութիւնը:

Այս պատճառաւ վախու մէջ էք: «CELAL BAYAR»-ը հայոց համար՝ «Կամ մենք պիտի մնայինք, կամ թէ հայերը: Ստիպուած էինք հայերը մաքրագործելու» ըսած էր:

Կը հասկնաք չէ՞, այս խօսքերուն իմաստը: Այսօրուան Թուրքիա ըսուած պետութիւնը՝ Հայոց ցեղասպանութեան «չնորհիւ» մէջտեղ ելաւ:

Հայերը ցեղասպանութեան ենթարկեցիք: Եւ անոնց հայրենիքը գողցաք:

Ահա՛, ասոր հաշիւը պիտի տաք:

Ահա՛, ասոր պատիժը պիտի կրէք:

Թիւ 6

«Նայիրի», 6 Մարտ 2001, Թիւ 143

### ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՍԱՐՍԱՓԱՉԴՈՒ ՅԵՂԱՊԱՇՏ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ՝ «ԹՈՒՐԲԻԱ»

1933-ի «Տասներորդ տարուոյ քայլերգը» գիտէք անպայման: (1923-ի Թրքական Հանրապետութեան 10-րդ տարեդարձը):

«Տասը տարուան մէջ տասնըհինգ միլիոն երիտասարդ ստեղծեցինք, ամէն տարիքէ»:

Դուք ինչպէս կը ստեղծէք «Աստուած էք»:

Բնական է ոչ: Թրքական մեթոտը ողջ ըլլայ:

Գնչու ծագումով, բայց Փարմասոններուն նախագահը «մեծ վարպետ» Թալեաթ փաշան հայերը ցեղասպանութեան ենթարկեց:

Սելանիկցի Մուստաֆա Քեմալը յոյները, եւ Թալեաթ փաշայէն ճողոպրած հայերը մաքրագործեց:

Յետո՞յ.

Յետոյ, Փարմասոն յոյն Վենիզելոսը ձեզի հետ համաձայնեցաւ եւ Յունաստանի մէջ (Արեւմտեան Թրակիաէն զատ) բոլոր, սուրի ճնշումով իսլամացած, յունական ցեղին ամենամաքուր միլիոնաւոր մարդիկը՝ «Թուրք են» ըսելով ձեզի ուղարկեց:

Յետոյ, Պուլկարիայէն, մաքրամաքուր պուլկար ցեղէն, բայց սուրի ճնշումով իսլամացած «բոմիաքները» ալիք-ալիք ձեզի եկան: Եուկոսլաւիայէն իսկական սերպական ցեղէն, բայց սուրի ճնշումով իսլամացած «պոսնիաքներն» ալ եկան:

Անաթոլիոյ մէջ ալ, խախամապէտի աղջիկ, հրէայ, բայց ծայրայեղ թուրք Հալիտէ էտիպ ցեղասպանութիւնէ մնացորդ հարիւր հազարներով հայ երախաները, իսկական թուրքերու վերածեց:

Ասոնց աւելցուցէք 1915-ին, սպանուելէ վախնալով իսլամացած, միլիոններու հասնող հայերը:

[Չորս հազար տարուան իրեն հայրենի հողերուն վրայ ապրող ազգ մը՝ որչափ ալ ջարդէք, չէք կրնար լմնցնել]:

Հաշիւը մէջտեղն է:

Ահա՛, այս ձեռով ստեղծեցիք «Տասը տարուան մէջ, 15 միլիոն երիտասարդ, ամէն տարիքէ»:

Թիւ 7

«Նայիրի», 20 Մարտ 2001, Թիւ 144

### **ՀՐՇԷՑ ԹՈՒՆՈՒՄՊԱՅԻ ԻՍՍԱՅԻԼ ՃԵՄ**

Թուրքիոյ պետութեան, հրէայ արտաքին գործոց նախարարին շատ մը ծաղրանուններ տալ կարելի է. բայց ամէնէն վայելուչը հրչէջ (թուլումպաճին) է: Ինչո՞ւ համար, գիտէ՞ք: Որովհետեւ վերջին շրջաններուն իր ամէնէն կարեւոր պարտականութիւնը աշխարհի ամէն կողմը բռնկող Հայկական ցեղասպանութեան կրակը մարել է:

«Մէյ մը» Ամերիկա, «մէյ մը» Պարսկաստան, յետոյ Իտալիա, աւելի վերջ Ֆրանսա:

Ամէնէն վերջ ալ Ջուիցերիա էր:

Անցեալ տարի, հոկտեմբեր ամսոյն՝ Ամերիկեան «Սենաթօն» Հայկական ցեղասպանութիւնը ընդունելէն վախնալով Ամերիկա էր: Այդտեղ, իր հրէայ ցեղակիցներուն օգնութեամբ կրակը մարելու աշխատեցաւ:

Շատ դժուար եղաւ, բայց վերջին վայրկեանին սեքսիմանքէն Պիլ Գլինթոնին շնորհիւ յաջողեցաւ:

Յետոյ կրակը Իտալիա ցատկեց: Անմիջապէս Իտալիա մեկնեցաւ, բայց ուչ էր մնացած: Կրակը ամէն կողմ պատած էր արդէն:

Եւ Թրքական մամուլի ձաբոտուքի ընկերակցութիւնը «կրակ ժայթքեց» Իտալիոյ դէմ:

Ալ ինչ սպառնալիքներ, ինչ հայհոյանքներ. Ամօթ. Ամօթ:



Բայց ամենէն կարեւորը Ֆրանսայի մէջ բռնկող Հայկական ցեղասպանութեան կրակն էր:

Իսմայիլ Ճէմ իր «Company»-ին հետ շատ աշխատեցաւ, շատ ջանք թափեց, բայց վասն ոչինչի: Կրակը մինչեւ առաստաղ հասած էր արդէն:

Եւ մենք, թրքական մամուլին եւ թելիվիզիոնի մաֆիային այս աստիճան կատողիլը չէինք տեսած:

Ի՞նչ սուտեր, ի՞նչ զրպարտութիւններ:

Եւ ըսողները ո՞վքեր էին՝ պոլսեցի պատանդ-գերի հայերը:

«Սուտ է եղեր՝ թուրքերը հայերուն բան մը չէին ըրեր: Հայերը՝ ջարդեր են թուրքերուն»:

Այս սուտերը ո՞ւրկէ ելան: Ո՞վ կը հաւատայ այս պոչաւոր սուտերուն:

Փարիզի երեսփոխան PATRIK DEVEDJIAN-ին ըսածին պէս «Խեղճ պոլսեցի հայերը»:

Հրչէջ (թուլումպաճի) Իսմայիլ Ճէմին վերջին ճարակութիւնը՝ Զուիցերիոյ Հայկական կրակը մարելու մէջ էր:

Բայց, ան այս անգամ գործը սկիզբէն շատ սեղմ բռնեց:

Դեռ 25 Յունուար 2001-ին Պէրնի մէջ Զուիցերիոյ արտաքին գործերու նախարար Joseph Deiss-ին հետ համաձայնեցաւ:

Ինչի՞ համար համաձայնութիւն:

Հասկցէք խնդրեմ. Զուիցերիոյ մէջ Թուրքիոյ հարուստները այնքան դրամ ունին որ:

Բայց, հակառակ ամէն բանին, Իսմայիլ Ճէմ նորէն վախ ունէր:

Որովհետեւ Զուիցերիոյ երեսփոխան (ծնունդով պոլսեցի յոյն) Josef Zisyadis-ին՝ աջը ձախը յայտնի չէր ըլլար:

13 մարտ 2001 թուականին, Լուկանո՛ի մէջ, քիչ մնաց, աշխարհ Իսմայիլ Ճէմին գլխուն պիտի փլէր, փլաւ, փլելու վրայ էր:

Բայց մազապուր ազատեցաւ 70-ի դէմ 73 քուէով:

Շնորհաւորութիւններ սելանիկցի Իսմայիլ Ճէմ:

Բայց այս դեռ գործին սկիզբն է:

Եւ հրչէջ (Թուլումպաճի) Իսմայիլ Ճէմ, իրաւունք ունիս վախնայէ՝ Josef Zisyadis-էն:

Ան շատ կրակոտ երիտասարդ մըն է:

Անոր կրակը մարելը շատ դժուար գործ է:

Թիւ 8

«Նայիրի», 3 Ապրիլ 2001, Թիւ 145

### **ԶԱՆԶԱՆԻՉ ՄԵՏԱՄԱՍՆՈՒԹԵԱՄԲ՝ ԴՈՒՔ ԲՈՒՈՐԴ ԱՆ ՄԱՐԴԱՍԴԱՆՆԵՐ ԷՔ**

1939-1945-ին Գերմանիոյ մէջ կատարուած հրէական «ցեղասպանութեան» եւ 1915-ին Թուրքիոյ մէջ կատարուած Հայկական ցեղասպանութեան միջեւ տարբերութիւնը ի՞նչ է:

Գերմանացիները (1939-1945) Երկրորդ աշխարհապատերազմին, իրենց գրաւած երկիրներուն մէջ ապրող հրէաները ժողովեցին եւ Գերմանիոյ մէջ եւ չրջակայքի «CAMP»-երը լեցուցին:

Եւ այս հրէաներուն մեծամասնութիւնը այս «CAMP»-երուն մէջ «S.S.» ըսուած գերմանացի «CAMP»-ի ոստիկաններուն կողմէ սպաննուեցան.

Գերմանացի S.S. CAMP-ի ոստիկաններուն կողմէ կատարուած այս սպանդին գերմանացի ժողովուրդը ոչ մէկ ձեւով մասնակցեցաւ:

Անաթոլիոյ մէջ դարերէ ի վեր տեւող, հայ ազգին սպանդը՝ 24 Ապրիլ 1915-ին հայ ժողովուրդին ցեղասպանութեան ենթարկուելովը վերջ գտաւ:

«Իթիթիհատ եւ Թերաքքի» կուսակցութեան, տարիներէ ի վեր պատրաստած, հայ ազգը բնաջնջուելու ծրագիրը՝ Առաջին աշխարհի պատերազմին խառնաշփոթութիւններէն օգտուելով 24 Ապրիլի 1915-ին գործադրութեան դրուեցաւ:

Պոլսոյ եւ Իզմիրի մէջ ապրող հայերէն գատ (այս քաղաքներուն մէջ մեծ թիւով եւրոպացի օտարներ կապրէին: Անոնց աչքին առջեւը աքսոր եւ ջարդ կատարելը շատ պատշաճ չէր ըլլար) էտիրնէէն սկսեալ մինչեւ Վան բոլոր հայութիւնը 48 ժաման մէջ աքսորի ելլալու պարտադրուեցան: Եւ ժանտարմներուն հսկողութեան տակ ճամբայ հանուեցան, եւ Սուրիական անապատները քշուեցան:

Անվերջանալի կարավաններով յառաջանալու ջանացող այս հայ աքսորեալներուն վրայ թրքական բանտերէն մասնաւորապէս ազատ արձակուած մարդասպանները եւ աւազակները դրկուեցան:

Եւ Անաթոլիոյ անթիւ անհամար քաղաքներուն, գիւղաքաղաքներուն եւ գիւղերուն մէջ կատարուած հայկական տեղահանութիւնը «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան կատաղի վարիչներուն, թուրք ժողովուրդը գրգռելնուն պատճառաւ ջարդի վերածուեցաւ:

Եւ 1915-ին գործադրուած այս հայկական ցեղասպանութեան (Գերմանիոյ մէջ կատարուած հրէական «ցեղասպանութեան» հակառակ ձեւով) թուրք ժողովուրդը մեծամասնութեամբ մասնակցեցաւ:

Կիրարկուած սենարիօն հետեւեալ ձեւով էր՝

Անաթոլիոյ քաղաք եւ գիւղաքաղաք եւ գիւղերուն հայ բնակչութիւնը տեղահանութեան պատրուակով ճամբայ կը հանուէր:

Ճամբայ ելլելէ քանի մը ժամ ետք, կիրճի մը մէջ պահուրտած սպասող, հայ աքսորեալներուն դրացիները եղող թուրքերուն կողմէ, պզտիկ, մեծ, կին, էրիկմարդ, առանց խտրութեան բոլոր հայերը ոչխարներու պէս կը մորթուէին, կը մեռցուէին:

Եւ յետոյ դիակներուն վրայ, ինչ որ կար, մինչեւ անոնց հագուստները կը գողցուէր:

1915-ին «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան կողմէ իրագործուած հայկական ցեղասպանութեան իսկական սենարիօն այսպէս է:

Այս վայրագութիւնը կատարող թուրքերը, մինչեւ վերջին ժամանակները այս հայկական ջարդին «պատմութիւնները» որսորդի պատմութիւններու պէս գոռոզանալով եւ հպարտութեամբ իրենց զաւակներուն եւ թոռներուն կը պատմէին:

Որովհետեւ անոնց կատարած սարսափելի ջարդը մինչեւ այսօր անպատիժ մնացած էր:

Այդ պատճառաւ, առանց քաշուելու անոնք կը պատմէին, թէ ինչպէս ամէն մէկ թուրք յիսուն, վաթսուն հայ կեանքուրի գլուխը կտրած էր:

Նոյնիսկ, մէջերնին «ախոյեաններ» կային: Եւ այս «ախոյեաններուն» ամէն մէկը նուազագոյն հինգ հարիւր հայ կեանքուրի գլուխը թոցուցած էր...

Մենք իրենց մահուան սեմին, անկողինին մէջ զառանցող եւ իրենց կտրած հայ երեխաներուն աղաղակներով դժոխային չարչարանքներու ենթարկուող թուրք ծերունիներ տեսանք անձնապէս:

Այստեղ երախտագիտութեամբ յիչենք նաեւ կարգ մը բարեսիրտ թուրք ընտանիքները՝ որոնք իրենց դրացի հայերը պահելով ջարդէ ազատած էին:

Այս տեսակ մարդասէր թուրքեր ալ կային:

Բայց հազարէն մէկ...

Եւ այսօր դուք՝ թուրքերդ, հայկական ցեղասպանութիւնը կ'ուրանար: Եւ մինչեւ վերջ ալ պիտի ուրանար:

Բայց... սպասեցէք, պիտի տեսնէք: Աշխարհի մէջ անպատիժ մնացած վերջին «Աւազակ-Պետութեան» կեանքը շատ երկայն պիտի չի տեւէ:

Թիւ 9

«Նայիրի», 24 Ապրիլ 2001, Թիւ 146

**24 ԱՊՐԻԼ 1915-Ը**

**ԹՈՒՐԶ ԱԽԱՅԿ ՊԵՏՈՒԹԵԱՆ՝ ՀԱՅ ԱՉԳԻՆ ԴԵՍ**

**ԳՈՐԾԱԴՐՈՒՄԾ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ**

**ՍԿՁԲՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆՆ Է**

Թուրք աւազակ պետութիւնը, հայ ազգը մէջտեղէն վերցնելու համար տուած մահուան վճիռը 24 Ապրիլ 1915-ին գործադրել սկսաւ:

Դուք, վայրենի՛ թուրքեր, «գլուխ թոցնելու» մէջ աշխարհի ախոյեանն էք: Գիտէք որ գլուխ չունեցող մարմին մը հարիւրին հարիւր մեռած է:

Ազգի մը գլուխ ո՞վ է՝ «առաջնորդները, գրողները, մտաւորականները»:

Ուրեմն հայ ազգը մէջտեղէն վերցնելու համար նախ եւ առաջ անոնց առաջնորդները, գրողները եւ մտաւորականները մեռցնել պէտք էր, որ հայ ազգը առանց «գլուխ» մնայ:

24 Ապրիլ 1915-ին գիշերը՝ Պոլսոյ մէջ գտնուող բոլոր հայ առաջնորդները, գրողները եւ մտաւորականները ձերբակալեցիք, եւ ամէնքն ալ Չանղրըրը եւ Այաչ արքայքեցիք: Եւ հոն բոլորն ալ կամաց-կամաց սպաննեցիք:

Ահա՛, այս ձեռով սկսաւ 24 Ապրիլ 1915-ին հայ ազգին ցեղասպանութիւնը:

Անկէ յետոյ, դիւրին եղաւ, առանց «գլուխի» մնացած հայ ազգը մաքրագործելը:

Թրակիայէն մինչեւ Անաթոլիա, էտիրնէէն մինչեւ Վան բոլոր քաղաքներուն, գիւղաքաղաքներուն եւ գիւղերուն մէջ գտնուող բոլոր հայերը տարեց, երիտասարդ, երեխայ, կին, էրիկմարդ, բոլորն ալ հաւաքեցիք եւ ժանտարմներուն հսկողութեան տակ, անօթի, ծարաւ ոչխարներու պէս քշեցիք դէպի Սուրիական անապատները:

Եւ ներքին գործոց նախարար Թալեաթ փաշային հրահանգովը՝ պզտիկ մեծ չի նայած, բոլորը մորթելով, սպաննեցիք:

24 Ապրիլ 1915-ին սկսող Հայկական ցեղասպանութեան մէջ, ձեր գործադրած սարսափելի վայրագութիւնը պատմութեան ոչ մէկ շրջանին, ոչ մէկ պետութիւն կրցած է կատարել:

Ո՛չ Ճինկիզ խանին, ո՛չ ալ Թիմուր-Լէնքին վայրագութիւնը ձեր Հայկական ցեղասպանութեան մէջ կատարած վայրագութեան կրնան հասնիլ:

Այս տեսակէտով, դուք «աշխարհի ամէնէն սարսափազդու դահիճներու պետութեան տիտղոսը» հպարտութեամբ կրնաք կրել:

Բայց, բոլոր հայերուն համար ամէնէն ցաւալի եղողը՝ ձեր իրագործած այս սարսափելի Հայկական ցեղասպանութեան պատճառաւ, մինչեւ այսօր անպատիժ մնացած ըլլալնիդ է:

Եւ դո՛ւք, մինչեւ որ անպատիժ մնալու շարունակէք, աշխարհի մէջ արդարութեան մասին խօսիլը անկարելի է: Այն ատէն կը մնայ միայն Երկնային արդարութիւնը, Աստուծոյ արդարութիւնը: Եթէ «Աստուած» գոյութիւն ունի վստահ եղէք, որ ձերինին պէս, «մարդկութեան երեսին մուր» պետութիւն մը «թուրք պետութիւնը» անպայման իր արժանի եղած պատժին պիտի ենթարկուի:

Թիւ 10

«Նայիրի», 8 Մայիս 2001, Թիւ 147

**«ԿԵՐԷՔ ԷՖԵՆՏԻՆԵՐ, ԿԵՐԷ. ԿԵՐԷ, ՄԻՆՉԵՒ ՈՐ ՊԱՅՌԻՔ՝  
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵԱՒՈՒՐԻՆ ՄԻԼԻԱՌԱՒՈՐ ՏՈՒՐՆԵՐ  
ԱՐՏՕՆԵԱԼ ԵՆ ՁԵՁԻ»**

Շնորհաւորութիւններ՝ Թուրքիոյ տնտեսութեան նախարար Քեմալ Տերվիշ: 27 Ապրիլ 2001-ի ուրբաթ օրը, Ամերիկայէն տասը միլիաո տոլար կորզեր ես նորէն:

Մինչդեռ, ասկէ քանի մը ամիսներ առաջ 2000թ. վերջին ամիսներուն, Ամերիկան ձեզի տասը միլիաո տոլար տուած էր արդէն: Ի՞նչ եղան այս միլիաոաւոր տոլարները: Ի՞նչ կ'ուզես որ ըլլան: «Հոր, հոր շարալոմ»: «Թուաւ, գնաց, փոշի եղաւ»:

Աճապարարներէն միայն ճաւիթ Չաղլարին անունը մէջտեղն է: Դիպուածին նայեցէք, որ ան ալ Ամերիկա փախուստ տուած է եղեր:

Ո՞ւր են միւս աճապարարները: Այսքան միլիաոաւոր տոլարները՝ Չաղլարը մինակ չի կրնար ուտել: Դուն ալ շատ միամիտ ես եղեր: Չես գիտե՞ր ստացուածքը «Պետութեան ապրանքը ծով է: Չուտողը խոզ է»:

Քեզի, շիտակը ըսեմ. «Շատ մի խառներ, տակէն «չօրոլա» կ'ելլայ»:

Բայց այսքանն ալ շատ է. 2001-ի Մարտ ամիսն էր տոլարին փոխարժէքը եօթ հարիւր հազար լիրայէն մէկ միլիոն երկու հազար լիրայի բարձրացաւ:

Թրքական լիրան, մէկ օրուան մէջ իր արժէքէն հարիւրին եօթանասունը կորսնցուց:

Ասոր, մեր գիտցածով սնանկութիւն կ'ըսեն: Սնանկութիւնէն ալ գէշ էր վիճակը: Անկէ յետոյ, փոթորիկ մը, փոթորիկ մը... «ընկղմելու վրայ ենք»: «Ընկղմեցանք»:

S.O.S., S.O.S., S.O.S..

Աման Ամերիկա՛, մընէր, մըլլար.

Մեզ ազատէ, դուք, ի՞նչ որ ուզէք, ան պիտի ընենք:

Ձեր ուզած «բարենորոգման» օրէնքները Ազգային ժողովէն ելլալու վրայ են... Եւ յետոյ ամէն բան եղաւ, լմնցաւ մաշալլահ... Էն ետքը, Քեմալ Տերվիչը ամերիկացիները համոզեց. «Ապրին, կեաւուր Սամ հօրեղբայր»:

Եւ վերջապէս, տասը միլիառ տոլարը Քեմալ Տերվիչին «գրպանն է» կրնանք նկատել: Այ հիմա, հին «տետրակները» կրնանք փակել: Եւ նորերուն սկսիլ:

\* \* \*

Այս մեր պատմածները գործին միայն պաշտօնական կողմ են: Մետալին մէկ կողմն է միայն: Հապա, մետալին միւս կողմը, ի՞նչ է որ.

Դուք «էօճիւի» պատմութիւնը ի՞նչ է նէ գիտէ՞ք:

Մեր ատենները, որպէսզի երախաները բարի կենան, «էօճիւ»ն պիտի գայ, «էօճիւն» պիտի գայի սուտերով կը վախցրնէին: Նոյն ձեւով հիմա «Թուրքիոյ մէջ «Հիզպոլլահները» իշխանութեան պիտի գան» ըսելով Ամերիկան կը վախցնեն:

Ամերիկան ալ, այս «Հիզպոլլահները» Թուրքիոյ մէջ իշխանութեան չգան ըսելով բազմամիլիառ տոլարներ կու տայ Թուրքիոյ:

Պատմութիւնը այսքան պարզ է:

Բայց, խօսքը մէջերնիս, ձեզի շիտակը ըսե՞մ, իրականութեան մէջ, Ամերիկան «Հիզպոլլահներէն» վախ չունի: Իսկութեան մէջ առաջ Սովետներուն դէմ, հիմա ալ ռուսներուն եւ չինացիներուն դէմ պայքարին ըսելով, մոլեռանդ իսլամներուն թիկունք կանգնողը ամերիկեան C.I.A. կազմակերպութիւնն է:

Ամերիկայի մտահոգութիւնը Իսրայէլի համար է: Եթէ Թուրքիան, Պարսկաստանի նման «Հիզպոլլահներուն» ձեռքը անցնելիք ըլլայ, Իսրայէլի ապահովութիւնը կրնայ վտանգի ենթարկուիլ: Ամերիկային վախը ասկէ է:



Այս պատճառով է, որ Ամերիկյան իբր «էօճիւի» դրամ, Թուրքիոյ միլիառաւոր տոլարներ կը վճարէ:

Թիւ 11

«Նայիրի», 22 Մայիս 2001, Թիւ 148

### **ՍՈՒՏԵՐՈՒ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՍԸ «ԻԲՐ ԹԷ ԹՈՒՐՔԻԱ»**

Հայկական ցեղասպանութեան համար «Իբր Թէ ցեղասպանութիւն» ըսեր էք:

Իրաւունք ունիք, այսպէս ըսելու:

Որովհետեւ, եթէ իրականութիւնը ըսելու ըլլաք, սուտերու վրայ հիմնուած Թուրքիա ըսուած պետութեան վերջը կու գայ:

Դուք ինչպէ՞ս «Թուրքիա» կրնաք ըլլալ:

Մինչեւ 1920թ. «Թրքական պետութիւն» ըսուած բան մը գոյութիւն չունէր:

Օսմանեան պետութիւն էր անունը:

Եւ 1918-ին ձեր վերջը եկած էր:

Եւ «օսմանեան պետութիւն» ըսուած սպանդի եւ թալանի դրութեան վրայ հիմնուած աւարառուներու պետութիւնը, մարդկութեան մարմնին վրայ գտնուող ուռի մը պէս, պիտի կտրուէր եւ պիտի նետուէր:

Բայց վերջին վայրկեանին կրկին ձեր բախտը քայեց:

Արեւմտեան պետութիւններուն բարձրագոյն շահերը եւ անոնց սանձերը ձեռքը բռնող անտեսանելի սարսափազդու «ուժը» ձեր մահուան արգելք եղաւ:

Եւ դուք կրկին չորս ոտքի վրայ ինկաք:

Եւ աճպարարին սնտուկէն ելլող նապաստակին նման, օսմանեան պետութեան դազադին մէջէն «Թուրքիա» ըսուած ուրուականը եղաւ:

Եւ մակեդոնական օթեակին մէջ Փարմասոն ըլլալով արձանագրուած եւ ծնունդով սելանիկցի ձեր նախահայրը թրքութեան առաքեալը ըլլալով մէջտեղ ելաւ:

Ալ ի՞նչ ճառեր, ի՞նչ ճառեր: Ամէն ինչ թուրք, ամէն բան թուրք: Ե՛լ թուրքիա, ե՛լ տեւական թուրքիա:

Բայց ո՞վ է թուրքը: Ամէն մարդ թուրք է: Ուզես արար եղիր, ուզես քիւրտ: Ուզես հայ եղիր, ուզես յոյն: «Ի՞նչ երջանիկ է, թուրք եմ ըսողը»: Որովհետեւ, թուրք ըսուած մէկը գոյութիւն չունի:

Եւ անկէ յետոյ, ուռեցուր եւ ուռեցուր, երակներուն ուժի դեղ:

Նախահայրը ձեր երակներուն մէջի ազնուական արիւնէն խօսք ըրեր է: Այդ ո՞ր արիւնն է արդեօք բոմիա՞ք է, պոսնիա՞ք է, չէրքէ՞ղ է, ալպանացի՞ է: Մի գո՞ւցէ հայկական արիւն չըլլայ:

Թիւ 12

«Նայիրի», 5 Յունիս 2001, Թիւ 149

## ՕՍՄԱՆԵԱՆ ՀՐԱՇԸ

«Ինչպէ՞ս աշխարհակալ կայսրութիւն մը մէջտեղ բերիք ցեղախումբէ մը»:

Ինչպէ՞ս ըրիք այս գործը:

Ողջ ըլլայ օսմանեան եաթաղանը: «Կամ միւսլիմանութիւնը կ'ընդունիք, կամ ձեր գլուխները կը թռին այս եաթաղանով»:

Այս հրաչք նախադասութիւնը բացաւ ձեզի յաջողութեան դռները՝ «Բացուէ՛, Սեզա՛մ, բացուէ՛» պատմութեան մէջ եղածին նման:

Շատ դժուար էր, ձեր գերեվարած ժողովուրդներուն համար, այս սարսափելի ընտրութեան մէջ, այս մահու կենաց հարցին մէջ, կեանքին դէմ «Մահը» ընտրելը:

Ամէն մահկանացուի յատուկ չէր այս կարողութիւնը:

Հակառակ ասոր, բիրաւոր հաւատացեալ քրիստոնեաներ «Մահը» ընտրեցին: ... Եւ անոնց գլուխները կտրուեցան եաթաղանով:

Բայց միլիոնաւոր խեղճ մարդիկ այս քաջութիւնը չկրցան ցուցաբերել: Եւ անոնք «իրական հաւատքը» ընդունեցին եւ իսլամ եղան:

Բայց «քառասուն տարուան “եանին” քանի կ'ըլլա՞յ»: Բայց եղաւ. «մահու սպառնալիքով ամէն բան կարելի է փոխել»:

Եւ ձեր այս սպանդի եւ թալանի քաղաքականութեան «չնորհիւ» յառաջացաք Անաթոլիոյ մէջ Պալքաններու մէջ, եւ հասաք մինչեւ Վիէննայի դռները:

Սերպիոյ պոսնիաքները, Պուլկարիոյ բոսնիաքները, Ալպանիոյ «արնաւութները» ձեր սարսափելի եաթաղանին մէջտեղ բերած «pic»-երն են, ապօրինի զաւակներն են:

Բայց Վիէննայի դռներուն առջեւ ձեր «խաղը» աւարտեցաւ: Լեհաստանի թագաւորը Jean Sobieski-ին Վիէննայի դռներուն առջեւ 1683-ին, ձեզի տուած հարուածէն յետոյ, մէյ մըն ալ մէջքերնիդ չչտկուեցաւ:

Որովհետեւ, ձեր Վիէննայի պարտութենէն յետոյ, սպանդի եւ թալանի վրայ հիմնուած ձեր ռազմավարութիւնը սնանկացաւ: Ուրիշ թալանուելիք հողամասեր չկրցաք գրաւել: Եւ անկէ ետք սկսաք նահանջել:

Բայց, բնաւորութիւնները կարելի չէ փոխել: Վարժուած էիք, եաթաղանով գլուխներ թոցնելու:

1809-ին Սերպիոյ «նիշ» քաղաքին մէջ, ձեր բռնակալ վարչութեան դէմ ապստամբող սերպ ժողովուրդը արիւնի մէջ խեղդեցիք...

...Եւ ձեր կտրած սերպ հայրենասէրներուն գլուխները վրայ վրայի դիզելով՝ սարսափելի «Գանկերու աշտարակ» մը կառուցանեցիք: Որ սերպերը դաս առնեն, վախնան, եւ ուրիշ ատեն, կրկին չապստամբին...

Սերպերը, տասնեակ տարիներ վերջ իրենց անկախութեան տիրանալէ յետոյ, այս «Գանկերու աշտարակը» պահ-

պանեցին ձեր վայրագութեան անհերքելի՝ մէկ ապացոյցը ըլլալով:

Այսօր, այս «Գանկերու աշտարակը» ամբողջ սերպ ժողովուրդին համար, սուրբ ուխտատեղի մըն է:

Եւ «Նիչ» քաղաքին մուտքի մայր պողոտային վրայ, չորս լեզուներով սերպերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն “TOWER OF CRANES”, “LA TOUR DES CRANES”, “SCHADEL-TURM” մեծ ծանուցում մը այս սուրբ գանկերու աշտարակին մուտքի վայրը կը նշանակէ:

Եթէ դուք, թուրքեր՛ր, եթէ «NICH» քաղաքէն անցնելու ըլլաք, գացէք, եւ տեսէք ձեր վայրագութեան սարսափազդու «ձեռակերտը»:

Մենք այցելեցինք եւ տեսանք Նիչին մէջի այս ահուելի գանկերու աշտարակը:

Եւ հայ մը ըլլալով պատկերացուցինք մեր հայ ազգակիցներուն, Անաթոլիոյ մէջ, երկար դարեր, ձեր բարբարոսութիւններով ինչպէս չարչարուած ըլլալը:

Եւ ցաւով վերյիշեցինք 24 Ապրիլ 1915-ին ալ, ձեր շղթայազերծած ցեղասպանութեամբ, հայ ազգին ամբողջութեամբ բնաջնջուիլը:

Եւ թրքական բարբարոսութեան անհերքելի «ստեղծագործութիւնը» եղող այս գանկերու աշտարակին մասունքներուն առջեւ, աչքերնիս արցունքով լեցուն, յարգանքով խոնարհեցանք:

Ստախօս թուրքեր...

Ի՞նչ պիտի ըսեք այս գանկերու աշտարակին համար...

Այս գանկերու աշտարակն ալ ձեր արտայայտութեամբ «ԻԲՐ ԹԷ ԶԱՐԴ Է» հայկական «ԻԲՐ ԹԷ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ» նման:

Թիւ 13-14

«Նայիրի», 19 Յունիս 2001. Թիւ 150

«Նայիրի», 6 Յուլիս 2001, Թիւ 151

**ՊԻՏԻ ԵՐԹԱՔ ԷՖԵՆՏԻՆԵՐ,  
ԱՆՊԱՅՄԱՆ ՊԻՏԻ ԵՐԹԱՔ. ՁԵՐ ԵԿԱԾ`  
ՄԻՋԻՆ ԱՍԻՈՅ ՏԱՓԱՏՏԱՆՆԵՐԸ**

Դուք օսմանեան պատմութիւնը գիտե՞ք:

1683-ին մինչեւ Վիէննայի դռներուն առջեւը յառաջացող օսմանեան բանակին մաս կազմող զինուորներուն անունը «ենիչերի» էր: Դուք ենիչերիներուն ով ըլլալը գիտե՞ք:

Բոլորն ալ յոյն, սերպ, պուլկար եւ հայ ընտանիքներուն ձեռքէն, եաթաղանի սպառնալիքով գողցւած, իրենց հինգ-վեց տարիքին, քրիստոնեայ ընտանիքներու մանչ զաւակներ էին:

Այս տղաքը, թլպատուելով կ'իսլամացուէին, եւ ենիչերիներուն կեդրոններուն մէջ կը պատրաստուէին եւ օսմանեան ռազմիկի կը վերածուէին:

Անգլիացի պատմագէտ Arnold Toynbee-ին 1934-ին սապէս գրած էր՝

«Այս քրիստոնեայի զաւակ ենիչերիները, իրենց ծագումը բոլորովին մոռցած էին եւ օսմանեան վայրագ եւ անգուլթ կերպարը իւրացուցած էին:

Եւ այս ենիչերիները Յունաստանի, Սերպիոյ, Պուլկարիոյ եւ Հայաստանի հողամասերուն վրայ, թալանի համար արշաւած միջոցին, իրենց ազգակիցները ամէնէն վայրագ ձեռով կը սպաննէին»:

Ահա, այս ձեր վայրագութեան շնորհիւ, յառաջացաք մինչեւ Վիէննայի դռներուն առջեւը:

Մինչեւ 1820-ները Յունաստանը ձեր տիրապետութեան ենթարկուած էր:

Հին յունական պատմութեան ամէնէն արժեքաւոր տաճարը եղող Աթինայի Acropole-ի “Parthenon-ը” վառօդի մթերանոցի վերածած էիք: Եւ 1687-ին վառօդի մթերանոցը կը պայթի, եւ յունական պատմութեան հպարտութիւնը եղող Parthenon-ը աւերակի կը վերածուի:

1820-ներուն յունական ապստամբութեան շրջանին, այն աստիճան վայրագութիւններ կատարեցիք, որ հռչակաւոր Ֆրանսացի գրագէտ Victor Hugo-ն իր «Յոյն տղան» վերտա-  
նութեամբ բանաստեղծութեան մէջ, ձեր վայրագութիւնը հետեւեալ տողերով պատմութեան էջերուն անցուց՝ «Թուր-  
քերը այստեղէն անցան, ամէն տեղ աւերակ է. ամէն մարդ սուգի մէջ»:

Դուք “Cappadocia”-ն գիտէք: Դուք այս տեղերուն «Պարիկի ծխնելոյզներ» կ’ըսէք:

Դուք այս քրիստոնէութեան օրրանը եղող սուրբ հողե-  
րուն վրայ ժայռերը փորելով հոն կառուցուած եկեղեցիները այցելած էք:

Եւ փորուած եկեղեցիներուն պատերը զարդարող բիւ-  
զանդական արուեստին հրաշալիքները եղող “Fresgue”-ները [որմնանկար] տեսած էք:

Քրիստոսին եւ սուրբերուն նկարներով ճոխացած այս “Fresgue”-ներուն ուշադրութեամբ նայած էք:

Մենք զացինք ու տեսանք: Եւ հոն տեսած «աղէտին» հետեւանքով տառապեցանք: Որովհետեւ “Fresgue”-ներուն վրայի Քրիստոսին եւ Սուրբերուն աչքերը [մեծամասնու-  
թեամբ] փորուած էին:

Ձեր մոլեռանդ կրօնաւորներուն դրդումով, այս «աշխարհի հրաշալիքները» “Gavour”-ի պատկեր է ըսելով, ստորին ձեռ-  
քերու միջոցաւ քանդուած էին:

Մինչեւ 1923, դուք այս եկեղեցիներուն «տէրերը» դաժանօրէն սպաննեցիք:

Եւ յետոյ, արուեստի հրաշալիքներ եղող այս “Fresgue”-նե-  
րուն վրայ, ձեր վայրագութեան կնիքը զարկիք:

\* \* \*

Վերջին չրջաններուն ձեր պոռոտախօս եւ պոռչտացող  
թերթերուն մէջ անունը շատ կ'անցնի:

Քրիստոսէ յետոյ 1000 տարիներուն, Հայաստանի թագա-  
ւորութեան մայրաքաղաքը «Անի» քաղաքն է:

Հայկական պատմութեան մէջ Անի քաղաքին անունը  
«Հազար ու մէկ եկեղեցիներու քաղաք» ըլլալով կը յիշատա-  
կուի:

Այսօր, այս հազար ու մէկ եկեղեցիներով հայկական թա-  
գաւորութեան մայրաքաղաք «Անիէն» մէկ եկեղեցի մը մնա-  
ցած է: Ան ալ կէս աւերակ վիճակի մէջ:

Ի՞նչ եղան այդ հազար ու մէկ եկեղեցիները:

Դուք, վայրենի՛ թուրքեր, այս եկեղեցիները քանդեցիք,  
մաս մը քարերը ուրիշ տեղ փոխադրեցիք եւ շատերն ալ կիր  
ըլլալով այրեցիք:

Վերջին մնացած եկեղեցիներն ալ 1945-էն ետք, ձեր «ազ-  
գային պետին» Իսմէթ Ինօնիւի հրամանով ուժանակով օդը  
հանեցիք:

«Ազգային պետէն» հրահանգ եկած էր «Հայութենէն  
հետք պիտի չմնայ»:

Այսօր, ձեր գրաւած Արեւմտեան Հայաստանի ու անթիւ  
անհամար քաղաք եւ գիւղաքաղաքներուն մէջ տասը հազար-  
ներով հայկական եկեղեցի կար:

Ի՞նչ եղան այս եկեղեցիները:

Ֆրանսացի մեծ գրագէտ Victor Hugo-ին ըսածի պէս՝  
«Թուրքերը այս տեղէն անցան, ամէն տեղ աւերակ եւ սուգ է»:

\* \* \*

Արեւելեան Հոռոմէական կայսրութեան մայրաքաղաքը,  
կայսր Constantin-ի կողմէ հիմնուած ըլլալուն պատճառաւ,  
այս քաղաքին անունը “Constantinople” էր:

Այս քաղաքին անունը մինչեւ 1930 թուականը պաշտօնապէս “Constantinople” ըլլալով մնաց: 1930-ին դուք, “Constantinople” անունը, իբր թէ թրքացուցիք եւ “Istanbul”-ի վերածեցիք:

Իրականութեան մէջ, “Istanbul” անունն ալ յունարէն “Istanbul”-ի անունին տարրեր մէկ ձեւն է:

Բայց դուք “Istanbul”-ի անունը որչափ որ ուզէք փոխեցէք “Istanbul”-ը միշտ “Gavur”-ի քաղաք է:

“Istanbul”-էն հանեցէք բիւզանդական յուշարձանները:

Հանեցէք, դաւանափոխ հայ մը եղող Կեսարիոյ «Ադրնաս» գիւղէն մեծ ճարտարապետ Սիանին ստեղծագործութիւնները:

Եւ մանաւանդ հանեցէք՝ 19-րդ դարուն «Պալեան» ճարտարապետներուն ընտանիքին կառուցանած ստեղծագործութիւնները Dolmabahçe-ի Çırağan-ի Beylerbeyi-ի Իսթանպուլի զարդերը եղած պալատները եւ Պալեաններուն կառուցանած անթիւ-անհամար կոթողները:

Յետոյ՝ ինչ կը մնայ Պոլսոյ մէջ:

“Istanbul”-ի մէջ ի վերջոյ կը մնայ ծուռումուռ Beton չէնքերը, եւ կը մնայ մանաւանդ «Գիշերաբոյսները»:

\* \* \*

Դուք ամբողջ օսմանեան պատմութեան ընթացքին, ձեր գրաւած հողերուն վրայ, միայն սարսափ եւ վայրագութիւն սփռեցիք: Դուք պատմութեան հպարտութիւնը եղող կոթողները քանդեցիք: Դուք բարգաւաճ վայրերը աւերակի վերածեցիք: Դուք այս հողերուն վրայ բնակելու արժանի չէք:

Եւ ինչպէս որ Վիէնայէն, Պելկրատէն, Աթինայէն, Սօֆիայէն, Պաղտատէն, Դամասկոսէն եւ Պէյրութէն վռնտուեցաք, նոյնպէս ալ քաղաքակրթութիւններու օրրան Անաթոլիայէն եւ Պոլիսէն պիտի վռնտուիք եւ պիտի վերադառնաք Միջին Ասիոյ տափաստանները:



Թիւ 15

«Նայիրի», 17 Յուլիս 2001, Թիւ 152

## ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆԸ ԹՈՒՐԵՐՈՒՆ [ԻՐՐ ԹԷ] ԶԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### ՂԵՂԸ - Ա.

### ՖՐԱՆՍԱՅԻ ԲՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՍԸ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ

Տարի 1948թ. SÜMERBANK-ի հրաւերով, Ֆրանսայէն բուրդի մասնագէտ մը, Պոլիս կու գայ, եւ Անաթոլիայի ոչխարներուն բուրդի որակը նշանակելու համար, SÜMERBANK-էն պատասխանատուի մը հետ միասին, Արեւելեան Անաթոլիոյ քաղաք եւ գիւղաքաղաքներուն մէջ ուսումնասիրութեան ճամբորդութեան մը կ'ելլայ:

Ֆրանսացի մասնագէտը, SÜMERBANK-ի պատասխանատուին հետ, ոչխարներուն արածած բարձրավանդակները կ'այցելէ:

Եւ այս պտոյտներու ընթացքին, Ֆրանսացի մասնագէտին ուշադրութիւնը կը գրաւէ ուժանակի պայթումներու ձայները:

Կը հետաքրքրուի եւ մօտը կ'երթայ պայթումներուն:

Եւ կը տեսնէ, թէ սպայի մը հսկողութեան տակ, թուրք գինուորները, բարձր բլուրներու վրայ կառուցուած հայկական պատմական վանքերու եկեղեցիները ուժանակով օդը հանելու եւ փլցնելու կ'աշխատին:

Ֆրանսացի մասնագէտը թուրք սպային կը հարցնէ. «Լեռան գլուխը գտնուող հայկական պատմական այս եկեղեցիները ի՞նչ վնաս ունին ձեզի»:

Թուրք սպան սա պատասխանը կու տայ. «İSMET İNÖNÜ»-էն հրաման կայ՝ հայերէն որեւէ հետք պիտի չմնայ»:

Թիւ 16

«Նայիրի», 31 Յուլիս 2001, Թիւ 153

**ՊԵՊԵ - Բ.**

**ԿԵՍԱՐԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ՊԱՏՄԱՍՆԵՐԸ**

(Հայ երիտասարդին թրքերէն ըլլալով պատմածները՝ իր խօսքերուն հաւատարիմ մնալով տալու պիտի ջանանք)

1915-էն առաջ «Թալասը» շատ բարգաւաճ քաղաք մըն է եղեր:

Շատ մեծ թիւով հայեր կ'ապրին եղեր Թալասի մէջ: Յոյներ ալ կան եղեր, բայց յոյները հայերուս չափ չեն եղեր: Վերի թաղամասը, բոլորովին հայ են եղեր:

26 հատ փուռեր կ'աշխատին եղեր Թալասի թաղամասերուն մէջ:

Կիւլպէնկեանին ընտանիքը թալասցի է (հռչակաւոր միլիտանտէր Գալուստ Կիւլպէնկեան: «Պարոն հարիւրին հինգ»):

Երիտասարդ Կիւլպէնկեանը Եւրոպա կ'երթայ՝ ուսանելու: Յետոյ կը հարստանայ, միլիտանտէր կ'ըլլայ:

Եւ կուզէ, որ Թալասի մէջ իր անունով եկեղեցի մը կառուցուի:

«Շատ գեղեցիկ եկեղեցի մը ըլլայ, ծախսուելիք դրամը կարելոր չէ», — ըսեր է:

Եւ շատ գեղեցիկ եկեղեցի մը կը կառուցանեն: Շատ ամուր քարեր կը գործածեն: Եւ երկու քարը իրարու վրայ դնելէ ետք, անոնց միջեւ կապար կը լեցնեն:

Այս եկեղեցին՝ բացառիկ զանգակ մը ունի եղեր, հնչած ատենը զանգակի ձայնը Կեսարիայէն կը լսուի եղեր:

Չանգակը “Bronze” եւ ոսկիի խառնուրդ է եղեր:

Հիմա այս զանգակը “ERCIYAS”-ի լեռը տարած են: [Կեսարիոյ մօտ 4000 MT. լեռ]: Որպէսզի մշուշոտ օրերուն, սահնա-

կով սահողները փոթորկալից օղերուն, զանգակին ձայնին գան, գտնան եւ չկորսուին:

Այս եկեղեցիին նկարները գծագրող արուեստագէտը աշխատած օրերուն, 105 ոսկի-լիրայի գինի խմեր է եւ շատ գեղեցիկ «Motif»-ներ գծագրեր է...

Շատ վերջը 1950-ներուն, Կեսարիա Nazmi Toket անունով կուսակալ մը կու գայ:

«Հայկական յուշարձան պիտի չմնայ»-ըսելով, այս եկեղեցին ուժանակով փլցնել կու տայ:

Քարերուն մէջ կապար լեցուած ըլլալուն, բրիչներով փլցնել անկարելի կ'ըլլայ:

Եւ այժմ պարտէզ ըլլալով կը գործածուի:

Ծառեր տնկուած են:

Հիմա այստեղ, եկեղեցիէն հետք մը, նոյնիսկ քար մ'անգամ չէ մնացած: Իրականութիւնը այս է:

Միայն, մեծ հայրս չմահացած, Կիւլպէնկեան ընտանիքին, վրան հայերէնով արձանագրուած տապանաքարը կ'առնէ, տուն կը բերէ:

Այս եկեղեցիէն մնացած միակ յիշատակը՝

Կիւլպէնկեան ընտանիքին տապանաքարն է:

Թիւ 17

«Նայիրի», 14 Օգոստոս 2001, Թիւ 154

## ՂԵՂՔ - Գ.

### ՀԱՅՐԸ ՍԵՐԱՍՏԱՅԻ ԵՂՈՂ

### ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՍԸ ՊԱՏՄԱՍՆԵՐԸ

Ես Պոլիս ծնած եմ, մայրս ալ ծնունդով պոլսեցի է: Մինչ-դեռ հայրս 1904-ին Սերաստիա ծներ է:

Ես լիսէն 1948-ին աւարտեցի, այն տարիները, գլխերնուս վրայ «Milli Şef» (ազգային ղեկավար) İsmet İnönü-ն կար:

1948-ին քառասուն տարուան մենատէր ղեկավար Ismet Inonun-ն մէկէն ժողովրդավարի վերածուեցաւ:

Կը հարցնէք, թէ ինչպէ՞ս եղաւ: Անգլիացի Չրչիլին շնորհիւ:

Իսմէթ Ինէօնիւն, 1939-էն մինչեւ 1943 թուականը, գերմանացիներուն հետ շատ սիրաբանեցաւ:

Եւ եթէ Սթալինկրատը գերմանացիներուն ձեռքը իյնար, գերմանացիներուն հետ միասին, Հայաստանի վրայէն, դէպի Ռուսիա պիտի յարձակէր:

Բայց «փափաքը փորը մնաց» ազգային ղեկավարին:

Սթալինկրատը չինկաւ, ընդհակառակը գերմանացիները պարտուիլ սկսան:

Եւ ազգային ղեկավարը, ստիպողաբար, անգլիացիներուն դարձաւ:

Եւ Չրչիլին հրահանգները, բառ առ բառ, գործադրել սկսաւ:

Որովհետեւ Չրչիլին ամբողջ «տերտը» թուրքերուն ուսերուն ձեռքը իյնալուն արգելք ըլլալ էր:

Ինէօնիւն Չրչիլին առաջին հրամանին վրայ գերմանացիներուն դէմ պատերազմ հռչակեց:

Բայց այս ի՞նչ տեսակ պատերազմ է:

Գերմանացիները, երկար ժամանակէ ի վեր, Պալքաններէն քաշուած էին, եւ ուր որ է Գերմանիա պիտի վերադառնային:

Բայց Չրչիլին համար կարելորդ թուրքիոյ դաշնակիցներուն կողքին երեւալն էր:

Յետոյ Չրչիլ Իսմէթ Ինէօնիւն «ժողովրդավար պիտի ըլլաս» հրամանը տուաւ: Եւ ազգային ղեկավար Ինէօնիւ ժողովրդավար Ինէօնիւի վերածուեցաւ:

Այս ի՞նչ տեսակ գործ է:

Պետութիւն կը կառավարէք, թէ՞ թատրոն կը խաղաք:

Դուն այդ բանին մի նայիր: Թատրոն, մատրոն... Չրչիլը, թուրքիան դաշնակից եւ ժողովրդավար պետութիւն մըն է ըսելով, ամբողջ աշխարհին կլեցուց. դուն անոր նայէ:

Եւ ոուսերը, այս գործին մէջ «ափերնին լզեցին»:

Բայց եկէք, նայեցէք, որ ժողովրդավարութեան խաղը Պոլսոյ ոչ իսլամներուն օգտակար եղաւ:

Մինչեւ 1948 ոչ իսլամները, որ աղբահաւաք անգամ չէին կրնար ըլլալ, ժողովրդավար Ինչօնին լիսէն աւարտող ոչ իսլամներուն ալ պահեստի սպայ ըլլալու իրաւունքը տուաւ:

Եւ ես 1949-ին պահեստի սպայ եղայ, եւ 1949-ի աշնան, հօրս ծնած քաղաքը եղող Սեբաստիոյ մէջ, իբր պահեստի սպայ ըլլալով պաշտօնի սկսայ:

Սեբաստիոյ մէջ, առաջին գործ ըլլալով, հօրս գոված Սեբաստիոյ հայկական մեծ եկեղեցին այցելեցի: Եկեղեցին մթերանոցի վերածած էին: Բայց այդ վիճակին մէջ նոյնիսկ, եկեղեցին նորէն շատ չքեղ էր: Երեւակայեցէք Պոլսոյ ամենամեծ եկեղեցին եղող Կալաթասարայի Սուրբ երրորդութեան եկեղեցիէն ալ աւելի մեծ եկեղեցին մթերանոց ըրած էին:

Նեղութենէս եկեղեցւոյ դիմացը գտնուող սրճարանը գացի նստայ, սուրճ մը խմեցի:

Քիչ յետոյ, ի՞նչ տեսնեմ – զօրախումբի մը զինուորները, ենթասպայի մը ղեկավարութեամբ, բահ ու բրիչներով եկան եւ դէպի եկեղեցին ուղղուեցան: Յետոյ տեսայ, թէ եկեղեցիին մէջ գտնուող ապրանքները դուրս հանել սկսան, եւ նկատեցի, թէ եկեղեցին փլցնելու կը պատրաստուին:

Այլեւս հոն չէի կրնար մնալ:

Յետոյ, շարաթ մը վերջ հետաքրքրուեցայ, եւ եկեղեցին ի՞նչ ըրին ըսելով նայելու գացի:

Զինուորները դեռ հոն էին եւ բահ ու բրիչներով կ'աշխատէին, բայց եկեղեցին կանգուն վիճակով իր տեղը կեցած էր:

Եւ զօրախումբ մը զինուոր, եկեղեցիին մէկ քարն անգամ տեղէն չէին կրցած հանել:

Սպայի հագուստովս էի, եւ զինուորներուն ղեկավարը եղող ենթասպային քով գացի եւ իրեն հարցուցի.

«Ինչո՞ւ կը փլցնէք այս եկեղեցին»:

Ենթասպան ինձի սա պատասխանը տուաւ.

«Եկեղեցին փլչելու վտանգ կայ»:

Այս պատասխանէն յետոյ, այլեւս չկրցայ հանդուրժել եւ ենթասպային ըսի.

«Անամօթ մարդիկներ՝ մէկ շաբաթէ ի վեր ձեզ կը դիտեմ, զօրախումբ մը զինուոր, բահերով եւ բրիչներով մէկ շաբաթէ ի վեր այս եկեղեցիին մէկ քարը անգամ չկրցաք տեղէն հանել: Եւ հիմա ելեր էք ու եկեղեցիին փլչելու վտանգը կայ կ'ըսէք: Աստուծմէ վախցէք, ստախօսներ»: Այս խօսքերը ըսելէ յետոյ, հեռացայ եկեղեցիին քովէն:

Եւ զինուորութիւնս աւարտելէն ետքն ալ, մէյ մըն ալ եկեղեցիին քովը չգացի:

Եւ տարիներ վերջ, իմ յաճախորդներէս մէկէն տեղեկացայ, թէ Սերաստիոյ այդ չքեղ հայկական եկեղեցին, 1950-ի Ապրիլ ամսուն, ուժանակով փլցուցեր են:

Թիւ 18

«Նայիրի», 28 Օգոստոս 2001, Թիւ 155

## **ԴԷՊՔ - Դ.**

### **ՎԱՐԴԱՆ ԱՆՈՒՆՈՎ ԴՈՒՍԵՅԻ**

### **ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ԼՍԼՈՎ ԴԱՏՄԱՍՏԵՐԸ**

1947-ին լիսէին վերջին դասարանն էի: Հօրս յանկարծամահ ըլլալէն ետք, ստիպուած եղայ, ընտանիքիս օգնելու համար, դպրոցը ձգելու: Եւ հօրս գործին մէջ մեծ եղբօրս հետ, աշխատիլ սկսայ:

Վեց ամիս յետոյ ինձի զինուորութեան կանչեցին: Եւ ինձի արեւելեան նահանգներէն Մուշ ուղարկեցին: Մուշի մասին մեծ հայրէս լսած էի, թէ Մուշ մինչեւ 1915, զարգացած հայկական քաղաք մը եղած էր:

Մուշի քաղաքագօրքին մէջ պաշտօնի սկսայ:

Մեր հրամանատարը Մուստաֆա Եալըն անունով հարիւրապետ մըն էր: Այս հրամանատարը շատ խիստ բնաւորու-

Թեան տէր սպայ մըն էր: Երեսը բնաւ չէր խնդար: Զինուորներուն պզտիկ մէկ յանցանքը ձեռքը գտնուող մտրակով, ափերնուն մէջ զարնելով կը պատժէր: Զինուորներուն մէջ ամէնէն ուսեալը ես ըլլալուս, բոլոր դժուար գործերը ինծի ընել կու տար:

Մուշի ընդհանուր կլիման շատ խիստ չէր բաղդատաբար ուրիշ արեւելեան նահանգներուն:

Ազատ եղած ժամերուս, Մուշի շուկան կ'երթայի, եւ հոն, սրճարան մը նստելով, մշեցիներուն հետ կը խօսակցեի:

Երբ որ հայ ըլլալս գիտցան սկիզբը ինձմէ հետու կեցան: Ժամանակ մը ետք, մեր միջեւ գտնուող սառերը հալեցան, եւ մտերմացանք իրարու հետ: Ինծի պատմեցին, թէ Մուշի դաշտը չրջապատող լեռներէն մէկուն լանջերուն վրայ, բարձր բլուրի մը ստորոտը, հռչակաւոր Մշոյ սուլթան Սուրբ Կարապետ վանքը կայ եղեր: Հայոց եղած ատենը այս վանքը, շատ սուրբ մէկ վայր մըն է եղեր: Շատ հիւանդներ այս վանքը ուխտագնացութեան կու գան եղեր:

Հին մշեցի թուրքերուն պատմածին համաձայն, այս վանքին մէջ կրօնականները շատ բարգաւաճ երկրագործական եւ անասնաբուժական կեդրոն մը ստեղծեր են: Վանքին շուրջ արածող ոչխարներուն եւ կովերուն կաթերը լեռներու լանջերէն խողովակներու միջոցաւ դաշտ կը հոսեցնեն եղեր, եւ հոնկէ կաթը, մասնաւոր կաթսաներով, Մուշ կը փոխադրեն եւ հոն կը բաժնեն եղեր: Հին մշեցիներուն հարցուցի.

«Հիմա, ի՞նչ եղած է այս վանքը»:

«Հայերուն մեկնելէն յետոյ [աւելի ճիշդը՝ հայերուն ջարդուելէն յետոյ ըսել կ'ուզէին] վանքը անտէր եւ անխնամ մնաց: Եւ հիմա, լերան գլուխը, անանկ կեցած է»,— ըսին:

Օր մը հարիւրապետը ինծի կանչեց եւ ըսաւ. «Այսօր կարելոր պաշտօն մը ունինք կատարելիք»:

«Ի՞նչ տեսակ պարտականութիւն»,— ըսի: «Կը տեսնես»,— պատասխանեց:

Յետոյ հարիւրապետը, երեք «քամիոն» զինուորներով, եւ զիս ալ իր «ճիւլին» մէջը առած, մէկ ժամ ամբողջ լեռնային

ճամբաներէն երթալէ ետք, բարձր պատերով չրջապատուած բերտի մը առջեւ հասցուց. ուր կեցանք: Քիչ յետոյ հասկցայ, թէ Սուրբ Կարապետ վանքին առջեւ եկած ենք:

Հարիւրապետը ըսաւ. «Իսմէթ փաշայէ հրաման եկաւ, եկեղեցիները ուժանակով պիտի փլցնենք»:

Ես ապուշցած, շնորած էի: Բայց ստիպուած էի հրամանը լսելու եւ կատարելու: Եւ սիրտս արիւն լալով այդ գեղեցիկ եկեղեցիները ուժանակով օդը հանեցինք:

Հարիւրապետին նայեցայ: Այդ չժպտացող մարդը, գոհունակութենէն կը խնդար այդ օր:

Հայկական եկեղեցիները հայ Վարդանին ձեռքերովը օդը հանել տուած էր:

Այսօր այդ օրէն ի վեր, տասը տարիներ անցան: Շատ ատեն, ուժանակով փլցուած եկեղեցիներուն ողբալի վիճակը աչքերուս առջեւ կու գայ, եւ աչքերէս արցունքներ ինքնաբերաբար կը հոսին: Եւ ես անէծք կը կարդամ հարիւրապետ MUSTAFA YALIN-ին, եւ մանաւանդ՝ INÖNÜ-ին:

Թիւ 19

«Նայիրի», 11 Սեպտեմբեր 2001, Թիւ 156

## ՂԵՊՔԵՐՈՒՆ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ

Տարի 1945: Դաշնակիցներուն Գերմանիոյ դէմ տանելիք յաղթանակին վերջին ամիսներն էին:

Եւ Փետրուար 1945-ին Ստալին, Ռուզվէլթ եւ Չրչիլ, Եալթայի մէջ հաւաքուեցան, եւ յետ պատերազմի Եւրոպային նոր քարտէսը գծեցին:

Եւ Ռուզվէլթ, հակառակ Չրչիլին մոմոալուն, Ստալինին պահանջած շատ մը առաջարկները ընդունեց:

Չմոռնանք, որ Սովետական Միութիւնը, Երկրորդ համաշխարհային պատերազմին, 20 միլիոն զոհ տուած էր:



Եալթայի վեհաժողովին առնուած որոշումներուն մէջ մեզի համար ամէնէն կարեւորները՝

1. - Թուրքերը նեղուցներուն մէջ Սովետներուն խարխիսներ պիտի տային:

2. - Կարսը եւ Արտասանը Սովետներուն պիտի վերադարձուէին:

Եկէք ու տեսէք, որ Ռուզվելթը Ապրիլ 1945-ին, անակրնկալօրէն մահացաւ:

Եւ տեղը եկող նախագահը Թրուման, Օգոստոս 1945-ին, POTSDAM-ի բանակցութեան ընթացքին, Ռուզվելթին Եալթայի մէջ ընդունած շատ մը որոշումները դրժեց:

Թրումանին մերժած որոշումներուն մէջ Թուրքերուն նեղուցներու մէջ Սովետներուն խարխիս տալու հարցը կար. եւ Կարսը եւ Արտասանը Սովետներուն վերադարձնելու որոշումն ալ կար:

Հակառակ այս մերժումին, Սովետները, 1946-ին Թուրքերուն «NOTA» մը տուին եւ նեղուցներուն մէջ խարխիս եւ Կարս եւ Արտասանին վերադարձուիլը պահանջեցին:

Ահա այն ատեն Թրուման, «Ամերիկային սահմանները Կարսէն կ'սկսի» ըսելով, Թուրքիոյ օգնութեան հասաւ:

Եւ ռուսերը ստիպողաբար, աւելի յառաջ չկրցան երթալ:

Այդ տարիներուն Ամերիկային ձեռքը աթոմական ռումբ կար, եւ ռուսերը դեռ աթոմական ռումբ չէին կրցած պատրաստել:

Եւ ազգային ղեկավար Իսմէթ Ինչօնիւ հանգիստ շունչ մը առաւ:

Բայց Ինչօնիւն մտահոգուած էր. շատ կը մտածէր՝ «Եթէ Ամերիկան միտքը փոխէ», «Եթէ Թրումանին տեղ Ռուզվելթին նման Սովետներուն համակիր մէկը գայ», «Եթէ Միացեալ Ազգերէն ներկայացուցիչներ գան եւ Արեւելեան Անաթոլիոյ մէջ գտնուող հայկական եկեղեցիները տեսնեն եւ ըսեն թէ՝ «Այս երկրին իսկական տէրերը հայերն են», «Այս մեզի համար շատ փտանգաւոր է», — ըսաւ:

Ազգային ղեկավարը՝ «Ի՞նչ կրնանք ընել» ըսելով մտածեց:

Եւ քիչ յետոյ՝ «Եւրեքա» ըսաւ. գտած էր լուծման ճամբան:

Հայկական եկեղեցիները մէջտեղէն վերցնել պէտք էր, որ հայերէն հետք չմնայ: Եւ այդպէս ալ ըրաւ: Քանի մը ամիս յետոյ, առաջնակարգ պատմական եկեղեցիները, Իսմէթ Ինէօնիւի հրահանգով, ուժանակով օդը հանուեցան:

«Նայիրի» թերթին մէջ 4 թիւերէ ի վեր շարունակուող զանազան վկաներուն պատմած, հայկական եկեղեցիներուն ուժանակով օդը հանուելու պատահարները, Իսմէթ Ինօնիւին մտահոգութիւններուն արդիւնքներն են:

\* \* \*

Բայց 1948թ. դէպք մը պատահեցաւ: Եւ այս դէպքը Իսմէթ Ինէօնիւին «սեւ-սեւ» մտածելուն պատճառ եղաւ:

1933թ. Գերմանիոյ մէջ, Հիթլերի իշխանութեան գալէն յետոյ, շատ մը հրէայ ծագումով գերմանախօս փրոֆեսորներ Թուրքիա եկան: Նոյն շրջաններուն Հիթլերի դէմ եղող քանի մը գերմանացի փրոֆեսորներ ալ եկան:

Այս գերմանացի փրոֆեսորներէն մէկը Գեղարուեստի ակադեմիային եւ գրականութեան ֆակուլթէթին մէջ «Արուեստի պատմութեան» դասեր տուող ERNST DIETZ-ն էր:

Եւ ERNST DIETZ 1948թ. Պոլսոյ մէջ «Սելջուկեան արուեստը» անունը կրող գիրք մը հրատարակեց:

Բայց այս գիրքին հրատարակուելէն միջոց մը յետոյ, ERNST DIETZ-ին գիրքերը ոստիկաններուն կողմէ հաւաքուեցան: Եւ փրոֆ. ERNST DIETZ-ին Գեղարուեստի ակադեմիային եւ գրականութեան ֆակուլթէթի մէջ ունեցած պաշտօններուն վերջ տրուեցաւ:

Ի՞նչ ըրած էր. պատճառը ի՞նչ էր փրոֆեսորին պաշտօնանկ ըլլալուն: Փրոֆ. ERNST DIETZ-ը իր գրած գիրքին մէջ շատ մեծ «յանցանք» մը գործած էր «Սելջուկեան արուեստը» անունը կրող այս գիրքին մէջ «Սելջուկեան արուեստը հայ-

կական արուեստին շարունակութիւնն է» ըսելու համարձակութիւնը ունեցած էր:

Եւ այս պատճառով, վերէն եկող [Խամէթ Ինէօնիւէն] հրամանով իր գիրքերը հաւաքուած էին եւ իր պաշտօնին ալ վերջ տրուած էր:

Թիւ 20

«Նայիրի», 25 Սեպտեմբեր 2001, Թիւ 157

### **ՂՈՒՔ, ԹՈՒՐՔԵՐ, ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍԴԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՈՒՐԱՆԱՔ**

Իրաւունք ունիք, ձեզի համար հայերը կտրելը՝ շատ բնական բան մըն էր:

Որովհետեւ դարեր շարունակ դուք, հայերը ոչխարներու նման կտրելու, անոնց ունեցած բոլոր հարստութիւնները, անոնց աղջիկները, կիները գողանալու վարժուած էիք:

Հայկական ցեղասպանութիւնը (իբր թէ) չգիտցող թուրքեր, ձեր մեծ հայրերուն գաղտնաբար հարցուցէք:

Անոնք ձեզի, հայերը ինչպէ՞ս ջարդած ըլլալնին հպարտութեամբ կը պատմեն:

Եաշար Քեմալին «Ինձէ Մեմեդ» վէպը կարդացէք:

Այս վէպին մէջ, երկու ատանացի հարուստ «աղաներ» իրարու հետ կը շողակրատեն:

Մէկը կ'ըսէ.

«Դուն հայ կարապետին հարստութեան վրան նստար»:

Միւսը կը պատասխանէ.

«Դուն ի՞նչ կ'ըսես. քուկին հայ Գիրգորէն առածներուդ քովը, իմ առածներս ոչինչ կը մնան»:

Այսօրուան անաթոլիացի թուրք հարուստներուն «տակը» քիչ մը խառնեցէք:

Բոլորին «տետրակին» մէջէն Հայկական ցեղասպանութեան չրջանին ձեռք անցուած հարստութիւնները մէջտեղ կ'ելլեն:

Այս դէպքերը, հազարով, տասը հազարով բազմապատկեցէք:

Այն ատեն Հայկական ցեղասպանութեան իրականութիւնները մէջտեղ կ'ելլեն:

Բայց, դուք, թուրքեր՛ր, դուք իրականութեան հետ կապ չունիք որ:

Որովհետեւ ձեր ամէն բանը կեղծ է, ամէնը սուտ է:

Թիւ 21

«Նայիրի», 9 Հոկտեմբեր 2001, Թիւ 158

### **«ՀԱՒՍՏԱՐԻՍ ԱՂԳ ՀԱՅՈՅ»-1**

Յարգարժան եւ ոչ յարգարժան թուրքեր՛

Դուք «Հաւատարիմ ազգ Հայոց» նախադասութիւնը բնաւ իմացած էք:

Այս նախադասութիւնը ձեր արիւնարբու բռնակալը, սուլթան Ապտիլ Համիտը ըսած էր 1876-ին Հայ ազգին օսմանեան պետութեան հանդէպ ցուցաբերած հաւատարմութիւնը գնահատելու համար:

Որովհետեւ օսմանեան պետութեան լուծին տակ ապրող յոյները, սերպերը, պուլկարները մէկը միւսին ետեւէն ապստամբած եւ այս ձեռով իրենց անկախութեան տիրացած էին:

Բայց միայն հայերն էին, որ մինչեւ վերջ օսմանեան պետութեան հաւատարիմ մնացին:

1877-ին ռուսերը մինչեւ Պոլսոյ դռները, մինչեւ Այասթաֆանոս (այսօրուան անունով Եշիլքէօյ) եկած էին, եւ Պոլիսը ռուսերուն ափերնուն մէջն էր:

Արեւելքի մէջ ալ ուսական բանակները Արեւմտեան Հայաստանին մեծ մասը ազատագրած եւ մինչեւ էրզրում յառաջացած էին:

Եւ հայերն ալ՝ յոյներուն, սերպերուն եւ պուլկարներուն նման օսմանեան լուծէն պիտի ազատէին:

Բայց այն ատենուան Պոլսոյ Հայոց պատրիարքը Ներսէս Վարժապետեան հայ ազգին ճակատագրին հետ խաղաց, եւ օսմանեան պետութեան հանդէպ իր հաւատարմութիւնը ցոյց տալու համար կոնդակ մը հրատարակեց, որ բոլոր հայկական եկեղեցիներուն մէջ կարդացուի:

Ահա այս կոնդակը. «Օսմանեան պետութիւնը պաշտպանել Հայաստանը պաշտպանել ըսել է, նոյնիսկ հայուն կրօնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը, պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է»:

Եւ հայերը օսմանցիներուն հետ միասին, ոուսերուն դէմ պայքարելու հրաւիրեց:

Այս մեծ առիթը չփախցնող Անգլիոյ այն ատենուան վարչապետը հրէայ Պէնժամէն Տ'իզրայէլի ոուսերուն վերջնագիր մը տալով ոուսերը ետ քաշուելու ստիպեց: ...Եւ օսմանեան պետութեան հանդէպ կատարած այս մեծ ծառայութեան փոխարէն, սուլթան Ապտիւլ Համիտ Անգլիոյ վարչապետ հրէայ Պէնժամէն Տ'իզրայէլին Կիպրոս կղզին նուէր տուաւ:

Եւ հայերը այս ձեւով օսմանեան պետութեան հանդէպ իրենց հաւատարմութիւնը ապացուցանեցին եւ մինչեւ վերջ օսմանեան պետութեան մէջ «Հաւատարիմ ազգ Հայոց» ըլլալով մնացին:

Եւ դուք, թուրքե՛ր, հայերուն գառնուկներու վայել այս հաւատարմութիւնը չատ գնահատեցիք...

Եւ Առաջին աշխարհամարտի խառնաշփոթ կացութենէն օգտուեցաք եւ բոլոր հայերը գառնուկներու նման մորթեցիք:

Եւ հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցիք:

Թիւ 22

«Նայիրի», 24 Հոկտեմբեր 2001, Թիւ 159

**«ՀԱՒԱՏԱՐԻՄ ԱԶԳ ՀԱՅՈՑ» - 2**

**«ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ»**

19-րդ դարուն սկիզբները, օսմանեան կայսրութիւն կոչուած, Թալանի սիստեմի վրայ հիմնուած պետութեան օրերը համրուած էին:

Եւրոպացիները, այս պետութեան «հիւանդ մարդ» անունը տուած էին:

Բայց արեւմտեան պետութիւնները այս «հիւանդ մարդը» առողջացնել ուզեցին՝ ռուսերուն առաջացման արգելք ըլլան ըսելով:

1839-ին, սուլթան Ապտիւլ Մեճիտի ատենը, արեւմտեան պետութիւններուն ծրագիրը գործադրող եպարքոս Մուստաֆա Ռեչիտ փաշան «Կիւհանէի» կոնդակով «TANZIMAT» ըսուած բարենորոգումներու շրջանը բացաւ:

Այս կոնդակով «ոչ իսլամները՝ իսլամներուն հետ հաւասար իրաւունքներ պիտի ունենային»:

Այս «անուշ խօսքերուն» ամէնէն շատ հայերը հաւատացին: Անոնք, դարեր տեւողութեամբ Թուրքերէն տեսած գեշութիւնները մոռցան եւ օսմանցիներէն աւելի օսմանցի եղան:

Եւ օսմանեան պետութեան վերականգնումին համար մեծ խանդավառութեամբ աշխատիլ սկսան:

Բացէք պատմական վաւերագիրները եւ կարդացէք:

Բոլոր մարդերուն մէջ իբր առաջնորդող ուժ ըլլալով, հայերը պիտի տեսնէք:

Առաջին վառօդի գործարանը հիմնողը՝ Տատեան, փողերանոցը արդիականացնողը՝ Պէգճեան, Պոլսոյ պալատները կառուցանողները՝ Պալեան ընտանիք, գեղարուեստից վարժարանը եւ «ARCHEOLOGIE» Թանգարանը հիմնողը՝

Երուանդ Ոսկան, Թատրոնը հիմնողը՝ Յակոբ Վարդովեան (GÜLLÜ YAKUP), Թղթատարութիւնը հիմնողը՝ Երուանդ Մարտիկեան, «HALKALI»-ի երկրագործական վարժարանը հիմնողը՝ Հայ, տպարանները հիմնողները՝ Հայեր, մամուլը հիմնողները՝ Հայեր, ամէն տեսակի ճարտարարուեստը հիմնողները՝ Հայեր, ամէն տեսակի աշխատանքի մարզերը հիմնողները՝ Հայեր:

Հայերը, նոր եւ ուժեղ օսմանեան պետութիւն մը ստեղծելու համար, միամտաբար եւ հաւատարմաբար աշխատեցան:

Եւ դուք, Թուրքեր՛ր, այս հաւատարիմ ազգին, իբր երախտագիտութիւն ի՞նչ ըրիք:

Միայն եւ միայն ապերախտութիւն:

Եւ ամենամեծ ապերախտութիւնը՝ 24 Ապրիլ 1915-ին կատարեցիք:

24 Ապրիլ 1915 Թուականը դուք մի՛ մոռնաք: Դուք այդ Թուականին հայ ազգը ցեղասպանութեան ենթարկել սկսաք:

Թիւ 23

«Նայիրի», 6 Նոյեմբեր 2001, Թիւ 160

**«ՀԱԻՍՏԱՐԻՍ ԱՉԳ ՀԱՅՈՅ» - 3**

**«ՀԱԻՍՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԴԷՍ ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ»**

Սելանիկի մէջ դաւանափոխներու եւ ֆարմասոններու կողմէ հիմնուած «Երիտասարդ Թուրքերու» կազմակերպութիւնը, 1908-ին Պոլսոյ վրայ քալելով, Պոլիսը գրաւեց: Եւ Ապտիւլ Համիտ ստիպուած եղաւ կրկին «Սահմանադրութիւն» հռչակելու:

Եւ «Երիտասարդ Թուրքերը» իշխանութիւնը ձեռք անցուցին եւ «ազատութիւն» հռչակեցին:

Պոլսոյ ժողովուրդը ուրախութեան մէջ էր. հո՞ճա, քահանայ, ուարիներ՝ եղբայր եղած, իրարու հետ կը ողջագուրէին:

«Երիտասարդ թուրքերու» կազմակերպութեան գլուխը՝ Նիեազի, Թալեաթ, Էնվեր եւ Ճեմալը կային:

Հայ երեւելիներէն, գրող եւ փաստաբան Գրիգոր Զօհրապը Փարմասոններու օթեակէն Թալեաթին «եղբայրը» եւ նաեւ ամէնէն լաւ բարեկամն էր:

Բայց «ազատութեան» ուրախութիւնը շատ չ'տեւեց:

«Յետադիմականները» եւ «մոլեռանդները» ապստամբեցան, եւ Պոլիսը գրաւեցին եւ «Երիտասարդ թուրքերը» փնտռել սկսան վրէժխնդրութեամբ, անոնք մեռցնելու համար:

Այդ սարսափելի օրերուն Թալեաթ եւ իր ընկերները «փախչելիք ծակ» կը փնտռէին:

Գրիգոր Զօհրապ եւ իր ընկերները, Թալեաթը եւ անոր խմբակը, իրենց տունը պահելով յետադիմականներուն ձեռքէն, ստոյգ մահէ մը ազատեցին:

Միջոց մը յետոյ, Սելանիկէն եկող ուժերը յետադիմականներուն ապստամբութիւնը կասեցուցին եւ Ապտիւլ Համիտը գահընկեց ընելով, աքսորի դրկեցին, եւ «ազատութիւնը» վերստին եկաւ:

Հայ Գրիգոր Զօհրապը եւ ընկերները օսմանեան պետութիւնը զօրացնելու համար շատ աշխատեցան:

Օսմանեան նաւատորմը կրկին վերակազմեցին: Հայ Զօհրապին եւ ընկերներուն մեծ ջանքերուն շնորհիւ օսմանեան պետութիւնը «հիւանդ մարդ» ըլլալէ դադրեցաւ:

Բայց «Երիտասարդ թուրքերը» 1914-ին, օսմանեան պետութիւնը գերմանացիներուն դաշնակիցը ըլլալով, պատերազմի մտցուցին:

Եւ պատերազմի խառնաշփոթութենէն օգտուելով՝ Հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին:

Փարմասոններուն մեծաւորը եղող «մեծ վարպետ» Թալեաթ փաշան, զիրենք մահէն ազատող Փարմասոն «եղբորը» Զօհրապին հանդէպ «չատ մեծ հոգածութիւն» ցուցաբերեց:

Զօհրապը Ատանա աքսորեց, եւ հոն, չէրքէզ Ահմէտ Զօհրապին գլխուն քարով մը հարուածներ տալով, սպաննեց:



Թիւ 24

«Նայիրի», 20 նոյեմբեր 2001, Թիւ 161

**«ՀԱՄԱՏԱՐԻՍ ԱԶԳ ՀԱՅՈՅ» - 4**

**«ՀԱՄԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԴԷՍ ԱՊԵՐԱՆՏՈՒԹԻՒՆ»**

5 Հոկտեմբեր 1915 թուականին Պոլսոյ գերմանական դեսպանատունէն *FREIHERR K. VON NEURATH*, դեսպանին փոխանորդը ըլլալով, Պերլին Գերմանիոյ վարչապետին տեղեկագիր մը կ'ուղարկէ:

Ու՛վ էր *VON NEURATH*-ը: Հիթլերի ամենամօտիկ աշխատանքի ընկերներէն մէկը: 1939-ին Չեխոսլովագիոյ հրամանատարն էր: 1946-ին Նիւրնպերկի դատաւարութեան, պատերազմի յանցաւոր ըլլալով, 15 տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ:

Եւ *VON NEURATH*-ը այս տեղեկագիրին մէջ, Գերմանիոյ վարչապետին հետեւեալ տեղեկութիւնները կու տայ:

«Պոլսոյ մէջ բժիշկ Ռուբէն Սեւակին գերմանացի կինը Չանդրըրը արսորուած իր ամուսինը ազատելու համար շատ աշխատեցաւ:

Բայց Պոլսոյ ոստիկանապետ Պէտրի Պէյը մերժեց Ռուբէն Սեւակը արսորէ ազատել:

Եւ սա պատճառաբանութիւնը տուաւ. «Բժ. Ռուբէն Սեւակ կը նկատուի այն մտաւորականներէն, որուն զանգուածներու վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի»:

Ու՛վ է բժիշկ Ռուբէն Սեւակը:

Հայոց առաջնակարգ բանաստեղծ եւ գրողներէն է: 1911-ին, Լոզանի բժշկական համալսարանէն բժիշկ ըլլալով, չրջանաւարտ եղաւ:

Եւ 1911 - էն մինչեւ 1914 թուականը, Լոզանի հիւանդանոցներուն մէջ, իբր բժիշկ աշխատեցաւ:

Անոր Լոզան գտնուած տարիներուն, Պոլսէն շատ մը թուրք առաջնակարգ անձնաւորութիւններ, փաշաներ եւ նախարարներ Լոզան կուգան դարմանուելու:

Եւ Ռուբէն Սեւակ անոնց Լոզանի մէջ իբր բժիշկ, շատ օգնած էր:

Եւ այս փաշաները եւ նախարարները շատ երախտապարտ էին Ռուբէն Սեւակին:

Եւ «եթէ Պոլիս գալու ըլլաք, մեր ապարանքին մէջ մեր հիւրը պիտի ըլլաք» ըսելով իրարու հետ կը մրցէին:

Բժ. Ռուբէն Սեւակ, Յունիս 1914-ին, ընտանեօք Պոլիս կը վերադառնայ եւ հոն, իբր բժիշկ, կ'աշխատի:

Ռուբէն Սեւակին Պոլսոյ ամենամօտիկ թուրք բարեկամներէն մէկը՝ Պոլսոյ երեսփոխան Սալահ Ճիմճոզն էր: (Սալահ Ճիմճոզին ընտանիք էն ծանօթ արուեստագէտ Ֆերտի Թայֆուրին եւ Թուրքիոյ Հանրապետութեան նախագահներէն Ֆահրի Գորութիւրքին անունները տանք):

24 Ապրիլ 1915-ին, Թալեաթ փաշա եւ խմբակը, հայ ազգին ցեղասպանութիւնը նախ հայ մտաւորականները եւ առաջնակարգ անձնաւորութիւնները Անաթոլիա աքսորելով սկսաւ:

Եւ Ռուբէն Սեւակն ալ Չանդրըրը աքսորուեցաւ:

Անոր գերմանացի կիներ Ռուբէն Սեւակը աքսորէն ազատելու համար, շատ աշխատեցաւ:

Ան դիմեց գերմանական դեսպանին, VON DER GOLTZ փաշային, եւ նաեւ Ռուբէն Սեւակին երախտապարտ եղող փաշաներուն եւ նախարարներուն, եւ մանաւանդ դիմեց Ռուբէն Սեւակին շատ մտերիմ թուրք ընկերոջը Պոլսոյ երեսփոխան Սալահ Ճիմճոզին:

Բայց, ոչ մէկը կարողացաւ ազատել Ռուբէն Սեւակը:

Եւ 26 Օգոստոս 1915-ին, «Իթիհատ եւ Թերաքքի» կուսակցութեան Չանդրըրի ներկայացուցիչ Ճեմալ Օղուզի առաջնորդութեամբ աւազակները, Չանդրըրէն Այազ գացող ճամբուն վրայ, Գալեճիգի մօտ, Թիւնէյ գիւղի շրջակայքը, վայրագօրէն սպաննեցին բժիշկ Ռուբէն Սեւակը:

Թիւ 25

«Նայիրի», 1 Յունուար 2002, Բացառիկ

**«ՀԱԻՏԱՐԻՄ ԱԶԳ ՀԱՅՈՅ» - 5**

**«ՀԱԻՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԱՂԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ»**

**1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ,  
ՀԱՅ ՄՏԱԽՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԳԱՆՂԸՐԸ  
ՔԱՂԱՔԸ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԷՋ,  
ՍԻՐԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՍԸ**

24 Ապրիլի Հայկական ցեղասպանութեան ընթացքին, շատ մը հայ մտաւորականներուն հետ, բժիշկ Ռուբէն Սեւակն ալ Չանղըրը աքսորուած էր:

Չանղըրըյի մէջ աքսորեալները, սկիզբը բոլոր միասին, զօրանոցի սրահի մը մէջ բանտարկուած էին:

Քանի մը շաբաթ յետոյ, աքսորականներուն Չանղըրըյէն չեյլելու պայմանաւ, քաղաքին մէջ տուն վարձելու արտօնութիւն տրուեցաւ:

Բժիշկ Ռ. Սեւակն ալ, ընկերոջը հետ տուն մը վարձեց:

Այդ օրերուն, Չանղըրըյի ժողովուրդին մէջ լուր մը տարածուեցաւ, թէ հայ աքսորականներուն մէջ եւրոպացի բժիշկ մը կը գտնուի:

Եւ այդ օրէն յետոյ բժ. Ռ. Սեւակ, գիշեր ու ցերեկ մէկ հիւանդէն միւս հիւանդը վազելով, Չանղըրըյի թուրք ժողովուրդը դարմանելու աշխատեցաւ:

Այս դարմանումներուն ընթացքին, բժիշկ Ռուբէն Սեւակ հրաչքներ կը գործէր:

Եւ Չանղըրըյի ժողովուրդը այս հրաչք դարմանումները կատարող տօքթ. Ռուբէն Սեւակը կը պաշտէր:

Այդ օրերուն տք. Ռուբէն Սեւակ Չանղըրըյի կառապանապետը եղող Իսմայիլին աղջիկը կը դարմանէր: Եւ աղջիկը քանի մը շաբաթ վերջ բոլորովին ապաքինեցաւ, բայց տխուր

էր: Հայր Իսմայիլ իր աղջկան տրտմութեան պատճառը հարցուց: Ան նախ ըսել չուզեց:

Բայց ամէնէն վերջ խոստովանեցաւ:

Աղջիկը բժիշկին սիրահարուած էր, եւ տք. Ռուբէն Սեւակը այս խնդրէն լուր չունէր:

Հայրը շուարեցաւ: Բայց իր աղջիկը շատ սիրելուն, հետեւեալ օրը տք. Ռ. Սեւակը կանչեց եւ անոր «Նայէ տօքթոր,— ըսաւ,— այստեղ բոլորդ մահուան դատապարտուած էք: Ոչ մէկդ կրնաք ազատիլ: Բայց եթէ դուն ուզես, ես քեզ կրնամ ազատել: Աղջիկս քեզի սիրահարուեր է, եկուր, միւսլիմանութիւնը ընդունէ, եւ աղջկանս հետ ամուսնացիր: Այս պայմանաւ քեզ սպաննուելէ կրնամ ազատել»:

Տք. Ռուբէն Սեւակ՝ «Անկարելի է, ես արդէն ամուսնացած եմ եւ երկու զաւակ ունիմ»,— պատասխանեց:

Կառապանապետ Իսմայիլ՝ «Վնաս չունի» ըսաւ: «Իսլամ կրօնքին մէջ այս խնդիրը արտօնուած է: Եթէ ուզես մտածէ, վաղը պատասխան տուր»:

Բժ. Ռուբէն Սեւակ իր մտերիմ ընկերներուն եղելութիւնը պատմեց:

Բոլորն ալ՝ «Միւսլիմանութիւնը ընդունէ, աղջկան հետ ամուսնացիր, եւ կեանքդ փրկէ» ըսին:

Բայց բժիշկ Ռուբէն Սեւակ՝ «Թրքանալը նուաստանալ է» ըսաւ, եւ միւսլիմանութիւնը ընդունելով սպաննութիւնէ ազատելու առաջարկը մերժեց:

26 օգոստոս 1915 թուականին, Ռուբէն Սեւակ եւ իր 4 մտաւորական ընկերները, Չանղըրըյէն Այաչ փոխադրուելու պատրուակով, զինուորներուն հսկողութեան տակ, կառքերով ճամբայ հանուեցան:

Ճամբու ընթացքին, Գալէճիկի Թիւնէյ գիւղի մօտերը, «Իթթիհատ եւ Թերաքքի» կուսակցութեան Չանղըրըի ներկայացուցիչ ճեմալ օղուզի աւազակները, կառքերուն ճամբան կտրեցին:

Զինուորները նախ դիմադրել ուղեցին: Բայց զինուորներուն հրամանատարը սելանիկցի ենթասպան զինուորներուն արգելք եղաւ:

Եւ աւազակները տք. Ռուբէն Սեւակը եւ ընկերները ծառերու կապելէ յետոյ, վայրագորէն սպաննեցին:

Այս աւազակներուն մէջն էր նաեւ տք. Ռուբէն Սեւակին դարմանած աղջկան հայրը՝ կառապանապետ Իսմայիլը:

Թիւ 26

«Նայիրի», 15 Յունուար 2002, [Թիւ 162

**«ՀԱԻՍՏԱՐԻՄ ԱՉԳ ՀԱՅՈՅ» - 6  
«ՀԱԻՍՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ»**

**ՊՈԼՍՈՅ ՄԵՋ ՏՕԼՍԱՊԱՀՉԷԻ ՊԱԼԱՏԸ ԱՅՅԵԼՈՒԹԵՆԵՆ  
ՏՊԱՌՈՒԹԻՆՆԵՐ**

Ասկէ տասը տարիներ առաջ, Եւրոպայի հայ կրօնական առաջնորդներէն արքեպիսկոպոս մը, Պոլսոյ Տօլմապահչէի պալատը «Թուրիսդ» ըլլալով կ'այցելէ:

Եւ Ֆրանսացի զբօսաչրջիկներու խումբի մը հետ, Թուրք Թարգմանի մը առաջնորդութեամբ պալատը պտտիլ կը սկսին:

Եւ Թուրք Թարգմանը, Ֆրանսերէնով տեղեկութիւն կու տայ զբօսաչրջիկներուն, այդ պալատի մասին. «Տօլմապահչէի պալատը, 19-րդ դարու կէսերուն, իտալացի ճարտարապետ Պալեանի կողմէ կառուցուած է»:

Յետոյ, պալատին սրահները կ'այցելեն:

Թուրք Թարգմանը պատերուն վրայ կախուած մեծ իւղաներկ պաստառներուն առջեւ կը կենայ եւ սա բացատրութիւնը կու տայ. «Այս մեծ ծովանկարները ուս նկարիչ Այվազովսկին գծագրած է»:

Եւ թուրք թարգմանը, կը շարունակէ զբօսաշրջիկներուն պտտցնել պալատը: Երբ մեծ, յախճապակեայ վառարանի մը առջեւ կանգ կ'առնեն, հետեւեալ բացատրութիւնը կու տայ. «Այս վառարանին յախճապակիները, հռչակաւոր Քիւթայեայի յախճապակիներ են, եւ թուրք յախճապակիի վարպետներու կողմէ շինուած է»:

Եւ այն ատեն հայ արքեպիսկոպոսը այլեւս չի կրնար դիմանալ եւ թուրք թարգմանին թրքերէն լեզուով սա խօսքերը կ'ըսէ.

«**ԷՖԵՆՏԻ. ՀԻՄԱ ԱԼ ԶԻՍ ՄՏԻԿ ԷՐԷ. ԵՒ ԵԹԷ ԶԵՍ ԳԻՏԵՐ, ՍՈՐՎԷ.**

**ԱՅՍ ՎԱՌԱՐԱՆԻՆ ՅԱԽՃԱՊԱԿԻՆԵՐԸ ՇԻՆՈՂ ՎԱՐՊԵՏԸ ՀԱՅ Է: ՆԱՅԷ, ԿԱՐԴԱՅ:**

ՎԱՐՊԵՏԸ ՀԱՅԵՐԷՆՈՎ ԱՆՈՒՆԸ ԳՐԵՐ Է. ՅԵՏՈՅ, ՄԵԾ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ԾՈՎԱՆԿԱՐՆԵՐԸ ԳԾԱԳՐՈՂ ՆԿԱՐԻԶԻՆ ՀԱՄԱՐ «ՌՈՒՍ ՆԿԱՐԻԶ» ԸՍԻՐ. ԱՅԴ ՆԿԱՐԻԶԻՆ ԱՆՈՒՆԸ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ Է. ԵՒ ՄԻՆԶԵՒ ԾՈՒԾԸ ՀԱՅ ՆԿԱՐԻԶ ՄԸՆ Է:

ԵՒ ԱՄԷՆԷՆ ԿԱՐԵՒՈՐԸ՝ ՏՕԼՄԱՊԱՀԶԷԻ ՊԱԼԱՏԸ ԿԱՌՈՒՑԱՆՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻՆ ՀԱՄԱՐ «ԻՏԱԼԱՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՊԱԼԵԱՆԻ» ԸՍԻՐ. ՍՈՒՏ Է: ՏՕԼՄԱՊԱՀԶԷԻ ՊԱԼԱՏԸ ԿԱՌՈՒՑԱՆՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ ՀԱՅ ՊԱԼԵԱՆԷՆ Է: ՊՈԼՍՈՅ ԲՈԼՈՐ ՊԱԼԱՏՆԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՆՈՂ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐՈՒ ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԷՆ: ԵՒ ԱՍՈՆՔ ՔԵԶԻ ԸՍՈՂԸ ԵՍ ԱԼ, ՀԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԸՆ ԵՄ:

- ՀԱՍԿՑԱՐ ՀԻՄԱ. ԱՍԿԷ ՅԵՏՈՅ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԸՍԷ, ՍՈՒՏ ՄԻ՝ ԽՕՍԻՐ»:

Թիւ 27

«Նայիրի», 29 Յունուար 2002, Թիւ 163

**«ՀԱՒԱՏԱՐԻՄ ԱՉՔ ՀԱՅՈՃ» - 7**

**«ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԱՊԵՐԱՆՏՈՒԹԻՒՆ»**

**«ԿԹԱՆ ԿՈՎԵՐՈՒ ՆՄԱՆ ԱՉՔ ՄԸ» ՀԱՅԵՐԸ**

Դուք, 11-րդ դարուն, հայերուն շնորհիւ Անաթոլիա մտաք:  
1071 թուականին, Մանազկերտի մէջ (ձեր աղաւաղած  
անունով Մալազկիրտի մէջ) հայոց շնորհիւ բիւզանդացիները  
պարտութեան մատնեցիք:

Բիւզանդացիները, երկար դարերէ ի վեր Հայաստանը  
(Արեւելեան Անաթոլիայի մէջ) տեւական կրօնական եւ քա-  
ղաքական ճնշումի տակ բռնած էին:

Այս տեսակէտով հայերը, բիւզանդացիներուն հետ տեւա-  
կան պայքարի մէջ էին:

Ձեր, Անաթոլիան գրաւել սկսած տարիներուն, շատ մը  
ինքնավար հայ իշխաններ, իրենց նստած ճիւղը կտրելով, բիւ-  
զանդացիներուն կոնակ դարձուցին եւ ձենէ յոյս սպասեցին:

Հայերը այս ձեւով, բիւզանդացիներուն ճնշումէն պիտի  
ազատին կարծեցին:

Մինչդեռ հայերը, բիւզանդացիներուն դէմ այս սխալ  
ուղղամարտութեամբ, իրենց գերեզմանը փորած եղան:

Եւ նոյն ատեն Մանազկերտի մէջ բիւզանդացիներու պար-  
տութեան ալ պատճառ եղան:

Եւ դուք, այս ձեւով, հայերուն շնորհիւ Անաթոլիա մտաք,  
եւ ձեր սարսափելի վայրագութեան շնորհիւ ալ, քանի մը  
դարուան ընթացքին, ամբողջ Անաթոլիան գրաւեցիք:

Եւ դուք, 1071-ի ձեր Մանազկերտի յաղթանակէն սկսեալ,  
մինչեւ 24 Ապրիլ 1915-ի Հայկական ցեղասպանութեան  
թուականը հայերը, կաթնատու կովերու պէս, կլթեցիք:

Եւ 24 Ապրիլ 1915-ին ալ, կաթը վերջացած կովերուն ըրած-նուն նման, այս հաւատարիմ հայ ազգը մորթուելու ուղարկեցիք:

Թիւ 28

«Նայիրի», 12 Փետրուար 2002, Թիւ 164

**«ՀԱԻՍՏԱՐԻՄ ԱԶԳ ՀԱՅՈՅ» - 8**

**«ՀԱԻՍՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ»**

**1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅԵԻՆ  
ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ ՄԻԼԻՈՆԱԽՈՐ ԱՐԻԷՆՈՏ  
ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՄԵԿ ՕՐԻՆԱԿ ԶԵՉԻ**

Տարի 1915: Դէպքը Չանդըրըի գիւղաքաղաքներէն Գալեճիկի մէջ կ'անցնի:

1915-ի Մայիս ամսուն, Գալեճիկի փոխկուսակալը, Պոլսէն եկող, ներքին գործոց նախարարին, ծագումով գնչու, բայց Փարմասոններուն նախագահը «մեծ վարպետ» Թալեաթ փաշային գաղտնի հրամանագիրը կիրարկել կը սկսի:

Գալեճիկի հայ բնակչութեան, տասներկու տարեկանէն մեծ, բոլոր էրիկմարդիկը, մինչեւ ամէնէն ծերերը, գործաւորներու գումարտակներու մէջ աշխատելու պատրուակով կը հաւաքեն եւ ժանտարմներու հսկողութեան ներքեւ դէպի Էնկիւրի (ձեր աղաւաղած անունով այսօրուան Անգարան) հետիոտն ճամբայ կը հանուին:

Գալեճիկի հայ բնակիչներէն, չորս զաւակ ունեցող Վարդուհին ամուսինը՝ Ներսէս Գաբրիէլեանն ալ, այս կարաւանով ճամբայ հանուողներուն մէջն է:

Վրայէն քանի մը օրեր կ'անցնին:

Եւ Վարդուհի Գաբրիէլեան, իր ամուսինին քովը գործաւոր ըլլալով աշխատող Մուստաֆան կը տեսնէ: Այն Մուստաֆան, որուն աղքատ ընտանիքին իր ամուսինը միշտ օգնած է:



Մուստաֆան կը մօտենայ, եւ Վարդուհի, Մուստաֆային մատին վրայ, իր ամուսնին գոց կանանչ գոյն քարով «չէօ-վալիէ» մատանին կը տեսնէ:

Եւ այն ատեն Վարդուհին կը հասկնայ, թէ իր ամուսինը, ճամբայ հանուող կարաւանին մէջ գտնուող բոլոր հայ էրիկմարդոց հետ միասին, իրենց թուրք դրացիներուն կողմէ սպաննուած է: Եւ Վարդուհին, տառապանքէն խելագարներու նման հառաչել կը սկսի եւ, ուշքը կորսնցնելով, քարերուն վրայ կը տապալի:

Թիւ 29

«Նայիրի», 26 Փետրուար 2002, Թիւ 165

### **ԵՐԿՐՈՐԳ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻՆ 1942-ԻՆ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԱԾ «ՔՍԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻ» ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ**

Տարի 1942: Գերմանացիները Ռուսիոյ մինչեւ «Սիրտը» յառաջացած էին:

Լենինկրատը շրջապատուած էր:

Եւ գերմանական բանակները Մոսկուայի մօտեցած էին: Եւ ամէնէն կարելորը գերմանացիները Կովկասի մէջ կը յառաջանային, եւ Սթալինկրատը իյնալու վրայ էր:

Եւ թուրքերը ուրախութենէ կը խայտային իրենց ոխերիմ թշնամին՝ ոռւսերու պարտութիւնը իմանալով:

Եւ գերմանացիներուն Սթալինկրատին մօտեցած օրերուն, Թուրքիոյ այն ատենուան մենատէրը՝ Միլլի շէֆ կոչուող Իսմէթ Ինէօնիին հրամանով, Պոլսոյ մէջ ապրող բոլոր ոչ իսլամներուն՝ յոյն, հայ եւ հրէաներուն 25 տարեկանէն մինչեւ 45 տարեկան «Քսան դասակարգ» կոչուող բոլոր այր մարդիկը, զինուորագրելու պատրուակով Անաթոլիոյ խորքերը աքսորուեցան:

Այս աքսորեալներուն շատերուն բերնէն մեր անձնապէս լսած տխուր յուշերը պատմելու ջանանք:

«Քսան դասակարգ» կոչուած մեր աքսորականի օրերուն ենթարկուած մահուան սպառնալիքները՝ իմ կեանքի բոլոր տեսողութեան չեմ կրնար մոռնալ:

Ուսերնուն սուինաւոր զէնքեր կախած զինուորները՝ մեզի պէս հարիւրաւոր աքսորեալները, շատ լայն եւ փոս դաշտի մը մէջ հաւաքեցին:

Մեր չորս կողմը, փողերը դէպի մեր վրայ ուղղուած գնդացիները գետեղած էին:

Եւ սարսափազդու դէմք ունեցող սպայ մը, բեռնակառքի մը վրայ ելլելով, մեզի հետեւեալ սպառնալիքները կատարեց:

«Դուք անգամ մըն ալ Պոսլոյ երեսը պիտի չկարենաք տեսնել:

Ձերին, միայն դիակը այստեղէն կրնայ ելլել»:

Այս սպառնալիքներէն յետոյ, օրերով մեր աչքերը քուն չտեսան:

Եւ այս մղձաւանջներով լեցուն օրերը՝ ամիսներ տեւեցին:

Եւ օր մը, անհաւատալի լուր մը մեր աքսորեալներուն միջեւ տարածուիլ սկսաւ:

«Մեզի Պոլիս ետ պիտի դրկեն եղեր»:

Հետեւեալ օրը եկող լրագիրները կարդալէ յետոյ, այս լուրին պատճառը հասկեցանք:

Գերմանացիները Սթալինկրատի մէջ ռուսերուն պարտուեր են:

Եւ իրենց գլուխը «Marechal Paulus»-ը ըլլալով, գերմանական բանակէն ողջ մնացողները ռուսերուն յանձնուեր են:

Եւ մենք, ռուսերուն Սթալինկրատի յաղթանակին շնորհիւ, ստոյգ մահէ ազատեցանք:

Եթէ գերմանացիները Սթալինկրատի մէջ յաղթանակ տարած ըլլային, թուրքերը՝ ռուսերուն դէմ պատերազմ պիտի հռչակէին:

Եւ այն ատեն, սարսափազդու դէմք ունեցող սպայի ըսածին պէս՝

«Ոչ մէկերնիս Պոլսոյ երեսը կրկին պիտի չկարենայինք տեսնել:

Եւ մեզի, այդ փոս դաշտին մէջ, գնդացիներով պիտի սպաննէին»:

Թիւ 30

«Նայիրի», 12 Մարտ 2002, [Թիւ 166

**ԻՆՉ Է ՎԱՅՐԻ ԿԵՆՂԱՆԻ ՄԸ  
ԵՒ ԹՈՒՐԷԻ ՄԸ ՄԻՋԵՒ ԵՂՈՂ ՏԱՐՔԵՐՈՒԹԻՒՆԸ**

**ՎԱՅՐԵՆԻ ԿԵՆՂԱՆԻՆ, ՄԻԱՅՆ ԱՆՕԹԻ ԵՂԱԾ ՄԻՋՈՅԻՆ՝  
ԿԵՆՂԱՆԻ ՄԸ ԿԸ ՄԵՌՅՆԷ ԵՒ ԱՆՕԹՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱԳԵՅՆԷ:  
ՄԻՆՉՂԵՌ ԹՈՒՐՔԸ՝ ՄԵՌՅՆԵԼՈՒ ՀԱՃՈՅՔԻՆ ՀԱՄԱՐ,  
ՄԱՐԴ ԿԸ ՄԵՌՅՆԷ**

Արդեօ՞ք, [Թուրքին վայրագութիւնը ապացուցանելու համար, փաստերը կարգաւ շարելնիս պայման է:

Եթէ ուզէք, սկսինք, պատմութեան մէջ վայրագութեան խորհրդանիշը ըլլալով ճանչցուած ճենկիզ խանէն եւ Դամերլանէն:

Եւ շարունակենք վայրագ օսմանեան սուլթաններով՝ Ֆաթիհ սուլթան Մեհմետ, Եաւուզ սուլթան Սելիմ, եւ գանունի սուլթան Սիւլէյման:

Այս սուլթանները, միայն իրենց գրաւած հողերուն վրայ ապրող քրիստոնեայ ժողովուրդը սպաննելով չմնացին:

Նոյն ատեն, իրենց մրցակիցը չըլլան ըսելով, իրենց հարազատ եղբայրներն ալ կը մեռցնէին:

Գանք, պատմութեան աւելի մօտ [Թուականներու վայրագներուն:

Հայ ազգին սպաննիչը՝ սուլթան Ապտիւլ Համիտը:

Եւ հայ ազգը ցեղասպանութեան ենթարկող՝ եպարքոս Թալեաթ փաշան, եւ միւսները:

Այս վայրագներուն անունները համրելով չենք կրնար լմնցնել:

Վայրագութիւնը՝ Թուրքին արիւնին անցած է: Թուրքերուն քրոմոզոմներուն մէջ կրնաք գտնել մարդասպանութեան ազդակը:

Եթէ ուզէք, պզտիկ հաշիւ մը ընենք:

Եւ կրկնենք, ձեր հռչակաւոր բանաստեղծ Նամըք Քենալին ըսածները.

«Ցեղախումբէ մը աշխարհակալ պետութիւն մը մէջտեղ բերինք»:

Ցեղախումբ մը քանի՞ հոգի է:

Ըլլայ, ըլլայ, ամէնէն շատ տասը հազար հոգի:

Տասը հազար հոգիով մտաք քաղաքակրթութեան եւ քրիստոնէութեան օրրան Անատոլիոյ հողերը:

Եւ այսօր, ձեր Թուրքիա ըսած, յոյներէն եւ հայերէն գողցրած հողերուն վրայ մնացած քրիստոնեաներուն թիւը՝ ամէնէն մեծ հաւանականութեամբ՝ վաթսուն հազարը չ'անցնիր:

Եւ ձեր վիճակագրական տուեալներով, «Թուրքիոյ» մէջ ապրող բնակչութեան, հարիւրին իննսունըինը ստորակէտ ինը համեմատութիւնը իսլամ թուրք է:

Ինչպէ՞ս եղաւ, որ տասը հազար հոգիանոց ցեղախումբէ մը, այսօր վաթսուն ու հինգ միլիոն իսլամ թուրք բնակչութեան հասար:

Թուրքին քրոմոզոմներուն մէջ գտնուող մարդասպանութեան ազդակին շնորհիւ:

Թիւ 31

«Նայիրի», 26 Մարտ 2002, Թիւ 167

## **ՆՈՐ ՏԱՐԻՆ՝ ՁԵՐ ՆԵՎՐՈՒՉԻ ՏՕՆԸ ԿԸ ԸՆՈՐՀԱԽՈՐԵՆՔ, ՔԻՒՐՏԵՐ**

Ներողամիտ գտնուեցէք, սխալ մը գործեցինք. Թուրքիոյ մէջ քիւրտ ըսուած բան մը գոյութիւն չունի:

Ձեր քիւրտ ըսածը՝ «լեռնային թուրքեր» են:

Այս ձաբառուքներուն տարիներով դուք ալ հաւատացիք: Եթէ շիտակը ըսել պէտք է, դուք ուրիշ ճար չունէիք:

Այս քրտական խնդիրը լուծելը շատ դժուար էր:

Ամբողջ Արեւելեան Անաթոլիան քիւրտերով լեցուած էր, եւ չրջանը գրեթէ Քիւրտիստան եղած էր:

Սերաստիայէն դէպի արեւելք գացող բոլոր փոխադրական միջոցները, քիւրտ բեչմերկաններուն քննութենէն կ'անցնէին:

Ի՞նչ կրնայիք ընել: Այս քրտական հարցը ձեզի սեւ-սեւ մտածել կու տար:

Դուք 1885-էն սկսեալ, Հայկական հարցը արմատէն «կարգադրել» սկսաք:

Ձեր սուլթան Ապտիլ Համիտը քրտական խնդիրը ստեղծող մեծագոյն յանցաւորն է:

Ինչո՞ւ, գիտէ՞ք:

1885-թուականներուն Արեւելեան Անաթոլիայի մէջ շարժիլ սկսող հայերը մաքրագործելու համար, հարաւային նահանգներուն մէջ որչափ քիւրտ կար, ժողուել տուաւ եւ անոնցմէ համիտիյէի զօրքեր կազմեց, եւ զանոնք արեւելքի հայկական նահանգները դրկեց:

Հոն, այս քիւրտերը, բոլոր հայերը սուրէ անցուցին:

Եւ Ապտիլ Համիտ, այս պարպուած հողերը քիւրտ ժողովուրդով լեցուց:

Առաջին աշխարհամարտին 1915-ին թուրքերը հայ ազգը ցեղասպանութեան ենթարկել սկսան:

Եւ այս ցեղասպանութեան մէջ թուրքերը, քիւրտերը իբր դահիճ գործածեցին:

Եւ 1915-ին, մեծամասնութեամբ քիւրտերը, սուրէ անցուցին հայերը:

Ապուշ քիւրտերը թուրքերուն խաղին ինկած էին:

Հին չրջաններուն Անաթոլիոյ կեդրոնական մասերը եւ բոլոր ծովեզերեայ մասերը յոյներով բնակուած էին: Արեւելքը հայերով եւ հարաւը քիւրտերով բնակուած էին:

Թուրքերը շատ ետքը եկան Անաթոլիա:

Եւ ձեր ասացուածով «Լեռէ եկաւ, այգեստան եղողին վոնտեց»:

1915-էն մինչեւ 1923 տարիներուն, Թալեաթ եւ Մուստաֆա Քեմալ խմբակցութիւնը, Անաթոլիոյ մէջ որքան հայ եւ յոյն որ կային, բոլորին ալ մաքրագործեցին:

Եւ միայն մնացին թուրքերը եւ քիւրտերը: Ներողութիւն՝ լեռնային թուրքերը:

Այս ձեռով քիւրտերը, թուրքերու հետ դէմ դիմաց մնացին:

Եւ հայերէն եւ յոյներէն յետոյ, մաքրագործուելու կարգը քիւրտերուն եկաւ:

«Մի առներ անմեղին անէծքը կ'ելլայ կամաց-կամաց»:  
Քիւրտերը հայերը սուրէ անցուցած ըլլալնուն պատիժը պիտի կրէին:

1935թ. չէյխ Սայիտէն սկսեալ մինչեւ այսօր, թուրքերը կը շարունակեն սպաննել քիւրտերը: Այսօր Արեւելեան Անաթոլիոյ գիւղերուն մէջ, քիւրտ ըսուած բան մը չէ մնացած: Թրքական բռնատոնները բոլոր քիւրտերը սպաննեցին:

Թուրքերը՝ քիւրտերուն ամէնէն մեծ հարուածը՝ Ապտուլ-լահ Էօճալանը ձեռք անցրնելով տուած եղան:

Հայկական «ԱՍԱԼԱ»-ի կազմակերպութիւնը մաքրագործող իսրայէլական մասնաւոր խումբերը՝ Էօճալանը ծուղակը ձգեցին եւ թուրքերուն յանձնեցին:

Հիմա էօճալանը թուրքերուն ձեռքին մէջ պատանդ է: Մարմարայի «Իմրայը» կղզիին մէջ բանտարկուած էօճալանը հիմա, տեւական խաղաղութեան եւ թուրքերուն հետ միասին ապրելու շուրջ կը խօսի:

Հին առիւծ էօճալանը հիմա գացեր է, եւ տեղը գառնուկի պէս կակուղ մէկ էօճալան մը եկեր է:

Ահա այսպէս: «Մի իյնար, մի տեսնարի աշխարհ է», ի՞նչ կրնանք ընել:

«Մարդկութիւնը շուարուն է»:

Թիւ 32

«Նայիրի», 9 Ապրիլ 2002, Թիւ 168

**5 ԱՊՐԻԼ 2002 ԹՈՒՄԿԻՐ**

**«HÜRRİYET» ԹԵՐԹԻՆ ՄԷՉ ԿԱՐԴԱՅԻՆԷ:**

**ԹՈՒՐԷՒՈՅ ՊԵՐԼԻՆԻ ՄԵՇ ՂԵՍՂԱՆԸ ՕՍՄԱՆ**

**ԳՈՐՈՒԹԻՒՐՔԸ ՍԱՂԵՍ ԸՍԵՐ Է՝**

**«ԹՈՒՐԷՒԱՆ, 700 ՏԱՐԻ Է. ԵՒՐՈՂԱ Է:**

**ԹՈՒՐԷՒԱՆ ԵՒՐՈՂԱՅԻ ՄԷՉ ԻՐ ՏԵՂԸ ԱՌՆԵԼՈՒ Է»**

Յարգելի Գորութիւրքին հարցնենք՝

Դուք ի՞նչ գործ ունէիք եւրոպական հողերուն վրայ:

Ձեր ազգային բանաստեղծի Նամըք Քեմալին ըսածին պէս՝ դուք 11-րդ դարուն վերջաւորութիւններուն ցեղախումբ մը ըլլալով մտաք Անաթոլիոյ հողերը:

Անաթոլիոյ մէջ գտնուող բնիկ քրիստոնեայ ժողովուրդը՝ սուրի ուժով իսլամացուցիք:

Իսլամանալը չընդունողներուն մեծ մասը սպաննեցիք:

Եւ Անաթոլիան թալանեցիք:

Երբ որ թալանելիք բան չմնաց, Տարտանելէն Թրակիա անցաք եւ այնտեղի քաղաք եւ գիւղաքաղաքները թալանել սկսաք:

Աւելի վերջ այս վայրագութեան եւ թալանի դրութեամբ՝ Պուլկարիան, Յունաստանը եւ Սերպիան գրաւեցիք:

Եւ ամէն կողմ վայրագութիւն սփռելով մինչեւ Վիէննայի դռները յառաջացաք:

Եւ հոն, 1683-ին Լեհաստանի թագաւորը Սոպիէսքին ձեր յառաջացումը կասեցուց եւ ձեր բանակները ցրուեց:

Եւ անկէ յետոյ, դուք սկսաք նահանջել:

19-րդ դարուն եւրոպական պետութիւնները ձեզի «հիւանդ մարդ» մակդիրը տուած էին:

Եւ այլեւս ձեր վերջը եկած էր: Եւ պիտի խորտակուէիք:

Եւ ռուսերը ձեզի, ձեր եկած տեղը Միջին Ասիոյ անապատները պիտի քշէին:

Բայց, աղօթեցէք անգլիացիներուն վարչապետ հրէայ Պենժամէն Տ'իսրայէլիին: 1876-ին ան ձեզ ազատեց:

Որովհետեւ ձեզի, ռուսերուն յառաջացման դէմ իբր վահան գործածեց:

Եւ արեւմտեան պետութիւններուն, ռուսերուն դէմ ձեզ թիկունք կանգնելու քաղաքականութիւնը, մինչեւ այսօր կը շարունակուի:

Եւ դուք, այս քաղաքականութեան շնորհիւ կրցաք, մինչեւ այսօր ալ մնալ, Անաթոլիոյ, Թրակիոյ եւ Պոլսոյ մէջ:

«Մենք, 700 տարիներէ ի վեր, Եւրոպա ենք», — կը յայտարարէք:

Արդեօք դուք, այդ ձեր գրաւած Յունաստանի, Պուլկարիոյ, Սերպիոյ, Ռումանիոյ մէջ իբր ստեղծագործութիւն, իբր յիշատակ ի՞նչ ձգեցիք:

Միայն եւ միայն սարսափազդու վայրագութեան, թալանի եւ ջարդի եղելութիւններով կը յիշատակուիք դուք Պալքանեան ազգերու պատմութիւններուն մէջ:

Բայց ներողութիւն՝ մոռցանք:



Վայրագութիւն, թալան եւ ջարդերէն զատ, Պալքանեան ազգերուն ձեր ձգած ամէնէն կարեւոր յիշատակը:

Սուրէ չանցնելու համար ստիպողաբար իսլամացածներն են, Պուկարիոյ մէջ՝ բոմիաքները, Սերպիոյ մէջ՝ պոչնիաքները, Ալպանիոյ մէջ՝ արնաուլթները:

Եւ դուք, այս խեղճ դաւանափոխները գրգռելով, օսմանեան կայսրութիւնը վերստին ստեղծելու աշխատանքներ կը տանիք այսօր:

Աստուած, Պալքանեան ազգերը, այս տեսակ ողբերգութենէ մը պահպանէ:

Թիւ 33

«Նայիրի», 23 Ապրիլ 2002, Թիւ 169

## **20 ԱՊՐԻԼ 2002 ԹՈՒՄԿԻՐ «HÜRRİYET» ԹԵՐԹԻՆ ՄԷՉ ՄԵՀՄԵՏ ԱԼԻ ՊԻՐԱՆՏԻՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Պոռոտախօս եւ պոռչտացող թրքական մամուլին մէջ առաջին անգամ ըլլալով, բաւական իրապաշտ գրութիւն մը կարդացինք:

Մեհմետ Ալի Պիրանտ, «ԹՈՒՐԳ ԸՍՈՒԱԾ ԱՏԵՆ՝ ՄԻՏՔ ԵԿԱԾՆԵՐԸ» խորագրով գրութեան մէջ թուրքին ինչ ըլլալը կը խոստովանի եւ եւրոպացիներուն թուրքին մասին ինչ մտածելնին սա նախադասութիւններով կը բացատրէ.

«...Խիստ երեւոյթով, զինուորականի մտայնութեամբ, մարդկային իրաւունքներու եւ ժողովրդավարութեան բնաւ կարեւորութիւն չտուող, շուրջիներուն սպառնացող եւ եւրոպացիներու հետ կենցաղային տարբերութիւն ունեցող...»:

Եւ կ'աւելցնէ՝ «Ընդունինք, թէ մենք տարբեր ենք: Եւրոպացիին Աշխարհը» տարբեր է: Մեր «Աշխարհը» տարբեր: Այս տարբերութիւնը՝ տարիներու ընթացքին, երթալով կը նուազի»:

Յարգելի Պիրանտը արդեօք ո՞ր նուազումին մասին կը խօսի:

Զգենք, դարեր տելողութեամբ, Անաթոլիոյ եւ Պալքաններու մէջ եւ նաեւ ձեր գրաւած բոլոր երկիրներուն մէջ ձեր սփռած վայրագութիւնները եւ ջարդերը:

Զգենք նաեւ մեր բաւական իրապաշտ նկատած եւ ընդհանուր թրքական յայտարարութիւններուն յարմարող ձեր «Հայկական ցեղասպանութեան պնդումները»:

Զգենք նաեւ Անաթոլիոյ եւ Պոնտոսի մէջ ձեր յոյներուն դէմ կատարած ջարդերը:

Սօսքը չընենք Հայկական ցեղասպանութեան չըջանին՝ «ԱՆՈՆՔ ԱԼ ԿԵԱՎՈՒՐ ԵՆ» ըսելով ձեր ջարդած ասորիներուն:

Գանք, աւելի մօտ թուականներուն ձեր կատարած ոճիրներուն:

Ունելորութեան տուրքը, քսան դասակարգի աքսորը, եւ մանաւանդ 6-7 սեպտեմբեր 1955 ըսուած ողբերգութիւնն ալ անցեալին ձգենք:

Բայց, ի՞նչ ըսենք 1974-ի Կիպրոսի մէջ, խաղաղութեան գործողութիւն անունին տակ, սուտ վերագրումներով, յոյն ժողովուրդին դէմ ձեր կատարած ջարդերուն:

Գանք Հիմա, վերջին չըջաններուն, ձեր քիւրտներուն դէմ ըրածներուն:

Յոյներուն եւ հայերուն նման, Անաթոլիոյ բնիկ ժողովուրդը եղող քիւրտերը իրենց ազգային ինքնութիւնը պահել ուզելուն պատճառաւ դուք Արեւելեան Անաթոլիոյ մէջի բոլոր քրտական գիւղերը այրեցիք եւ բնակչութիւնը սպաննեցիք:

Ա՞յս է ձեր՝ «եւրոպացիներուն հետ մեր տարբերութիւնները կը նուազին» ըսածը:

Դուք, դարերէ ի վեր, ինչ տեսակի վայրենիներ որ էիք, այսօր ալ նոյն վայրենիներն էք:

Եւ ձեր 1915-ին, հայ ազգին դէմ կատարած ամբողջ պատմութեան ընթացքին եւ մինչեւ այսօր նմանը չեղող սարսափելի ցեղասպանութեան պատճառաւ, մինչեւ որ արժանի

եղած պատիժը չկրէք, դուք պիտի մնաք նոյն վայրենիները, ինչ որ էիք դարերէ ի վեր:

Թիւ 34

«Նայիրի», 7 Մայիս 2002, Թիւ 170

**27 ԱՊՐԻԼ 2002 ԹՈՒՍՎԻՐ «ՄԻԼԼԻԷԹ» ԹԵՐԹԻՆ ՄԷՉ,  
«ՓՈՐՔ ԲԱՅԼԵՐՈՒ ԲԱՂԱԲԱՎԱՆՈՒԹԻՒՆ» ՎԵՐՆԱԳՐՈՎ  
ԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՉ, ՍԱՄԻ ԳՈՂԵՆԻՆ ԸՍԱԾՆԵՐԸ**

Սամի Գոհէն՝ «Միլլիէթ» թերթով ելած այս գրութեան մէջ, թուրք-հայկական յարաբերութիւններուն դէպի կանոնաւորման ճամբուն մէջ ըլլալը չեշտելէ յետոյ, թուրքիոյ Հայաստանի հետ քաղաքական կապեր հաստատելու պայման ըլլալով, այլեւս բերնի ծամոց դարձած առաջարկները կը նշէ.

1- Հայաստանէն ցեղասպանութեան պնդումին թուրքիոյ կողմէ ընդունման պահանջէն հրաժարիլը:

2- Հայաստանի կողմէ գրաւուած ազրպայճանական հողերուն վերադարձուիլը:

Այս յանկերգէն յետոյ, Սամի Գոհէն իր գոհունակութիւնը կը յայտնէ, Հայաստանի արտաքին գործերու փոխնախարար Ռուբէն Շուկարեանին Սթոքհոլմի մէջ միջազգային մէկ ժողովի ընթացքին ըսած խօսքերուն համար:

Սամի Գոհէնին գրածին համեմատ Ռուբէն Շուկարեան իբր թէ հետեւեալը ըսած է.

«Թուրքիոյ եւ Հայաստանի կապերուն կանոնաւորման մէջ գործնական ըլլալու ատենը եկած է:

Ասոր համար, ցեղասպանութեան ճանաչման նման առաջին պայման մը ներկայացնելը, խնդրոյ առարկայ չէ: Ասիկա քաղաքական հարց մը չէ, այլ՝ հոգեկան հարց...»:

Ռուբէն Շուկարեանին իրապէս այս տեսակ ելոյթ մը ունեցած ըլլալը չենք կրնար գիտնալ:

Բայց մեր գիտցածը հետեւեալն է.

Այն ալ աշխարհի մէջ յետին հայն անգամ՝ 1915-ի ցեղասպանութեան ճանաչման պահանջէն չի կրնար հրաժարիլ:

Յարգելի Սամի Գոհէնին հարցնենք՝

Իր հրէայ ցեղակիցները, Երկրորդ աշխարհամարտին Գերմանիոյ մէջ կատարուած հրէական սպանդներուն ողբերգութեան համար՝ պզտիկ մէկ քննադատութեան եւ կամ կասկածի արտայայտութեան կրնա՞ն հանդուրժել արդեօք:

Աւելին՝ 1940-1945-ին Գերմանիոյ մէջ կատարուած հրէական ցեղասպանութեան դէմ կատարուելիք ամէն քննադատութիւն եւ կասկած, դատաւորներու կողմէ պատիժի կ'ենթարկուի:

1915-ի Հայկական ցեղասպանութեամբ ազգ մը բնաջնջուեցաւ: Հայրենիք մը գողցուեցաւ:

Այս ցեղասպանութեան անպատիժ մնալը ոչ մէկ հայ կրնայ ընդունիլ:

Այս տեսակ անիրաւութիւն մը 1915-ի ցեղասպանութեան Անաթոլիոյ մէջ ոչխարներու նման մորթուած հայերուն յիշատակին դէմ կատարուած ամենամեծ անարգանքն է:

Եթէ այս տեսակ անիրաւութիւն մը կատարուի, 1915-ի ցեղասպանութեան շրջանին վայրագօրէն սպաննուած միլիոնաւոր անմեղ հայերուն հոգիները այս անիրաւութեան պատճառ եղողները, մինչեւ իրենց կեանքին վերջը, դժոխային չարչարանքներու կ'ենթարկեն:

Թիւ 35

«Նայիրի», 21 Մայիս 2002, Թիւ 171

## 9 ՄԱՅԻՍ 2002 ԹՈՒԱԿԻՐ «ՄԻԼԼԻԷԹ» ԹԵՐԹԻՆ ՄԷՉ

### «ԵՐՈՂԱԿԱՆ ԱՆԵԼԸ» ՎԵՐՆԱԳՐՈՎ ՅՕԴՈՒԱԾԻՆ ՄԷՉ ՍԱՍԻ ԳՈՂԷՆ՝ «ԱՅՍ ՄԻՋՈՅԻՆ, ԵՐՈՂԱԿԱՆ ՀԱԻԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՉ ԾԱՅՐԱՅԵՂ ԱՉՎԱՅՆԱԿԱՆ ՃԵՂԱՊԱՆԵՐ ԶԳՏՈՒՄՆԵՐ ՄԷՉՏԵՂ ԵԼԼԵԼ ՍԿՍԱԾ ԵՆ» ԿՂՍԷ

Յարգելի Սամի Գոհէնը «Միլլիէթի» իր գրութեան մէջ աշխարհի մամուլին դեկը ձեռքերնին եղող իր ցեղակիցներուն, Եւրոպայի մէջ տարած քարոզչութեան ոտք կը յարմարացնէ, եւ Աւստրիոյ, Դանիոյ, Իտալիոյ, Ֆրանսայի եւ Հոլանտայի տեղացի ժողովուրդին, օտարներուն օրէ օր շատնալուն պատճառով, իրենց ինքնութիւնը կորսնցնելու վտանգին դէմ իբր հակազդեցութիւն, ընտրութիւններուն հայրենասէր կուսակցութիւններուն քուէ տալերնին՝ ծայրայեղ ազգայնականութիւն եւ ցեղապաշտութիւն ըլլալով կը մեկնաբանէ:

Եւ այս հոսանքին դէմ, աչքի փոշի փչելու համար, Ամերիկան օրինակ կը ցուցնէ եւ Ամերիկային գաղթականներուն երկիր մը ըլլալուն պատճառաւ, այս աստիճան յառաջացած ըլլալը կը բացատրէ, եւ «Այսօր, եւրոպացիները, ամերիկեան օրինակը նկատողութեան առնելու են» կ'ըսէ:

Յարգելի Սամի Գոհէնին չգիտցած, աւելի ճիշդ գիտնալ չուզած մէկ բանը կայ...-

Եւրոպական ժողովուրդները «ամերիկացի» չըլլալու համար, իրենց եւրոպական ինքնութիւնը չկորսնցնելու համար կը պայքարին:

Այն եւրոպան, որ յոնական եւ հոմէական քաղաքակրթութիւններուն շառաւիղը ըլլալով, այսօրուան քաղաքակրթութեան օրրանն է:

Եւ անտեսանելի ուժեր, աւելի ճիշդ՝ ամէնուն գիտցած, բայց ըսելու համարձակութիւնը չունեցած ուժերը, եւրոպական քաղաքակրթութիւնը փլցնել կ'ուզեն:

Ահա, այս վտանգին պատճառաւ է, որ հայրենասէր եւրոպացիները երեք հազար տարուան յունական-հոմէական-եւրոպական քաղաքակրթութիւնը պաշտպանելու համար կը պայքարին:

Ամերիկայի նման առանց պատմութեան, առանց ազգութեան, հոգիով պարպուած «Robot»-ներու երկիր մը չըլլալու համար կը պայքարին:

Ամերիկայի նման Cowboy-ներու, Gangster-ներու երկիր մը չըլլալու համար կը պայքարին:

Նոր ճենկիզխաններու, նոր թամիրլաններու, նոր «KANUNI SULTAN SÜLEYMAN»-ներու վայրագութիւններուն չենթարկուելու համար կը պայքարին:

Եւ եւրոպացիները 6-7 սեպտեմբեր 1955-ին, Պոլիսը քանդող մտայնութիւնը եւրոպա փոխադրող եւ Պերլինի, Փարիզի, Սթրասպուրկի, Լիոնի եւ շատ մը եւրոպական քաղաքներու մէջ, 6-7 սեպտեմբերեան քանդիչ գիշերներ կազմակերպող վայրենի թուրքերուն դէմ կը պայքարին:

Յարգելի Սամի Գոհէնը այս իրականութիւնները հասկնալ կ'ուզե՞ր արդեօք:

Թիւ 36

«Նայիրի», 4 Յունիս 2002, Թիւ 172

## ՍԵԼԱՆԻԿԻ ՄԵՉ ՁԵՐ ՆԱԽԱՀՕՐ ՇՆԱԾ ՏՈՒՆԷՆ ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քանի մը շաբաթներ առաջ էր. ձեր նախահայրին ծնած տունին առջեւէն անցանք:

Շատ անգամ, կարգ մը չար լեզուներ, ձեր նախահօր Սելանիկ ծնած ըլլալուն պատճառաւ, շատ մը տեղի-անտեղի մեկնաբանութիւններ կ'ընեն:

Ծանօթ իրականութիւն է, թէ հինէն Սելանիկը՝ «ջուր չխառնուած» հրէաներուն եւ «ջուր խառնուած հրէաներուն» (այսինքն՝ դաւանափոխ հրէաներուն) մեծաթիւ գտնուած քաղաքն էր:

Զգենք այս բամբասանքները, եւ իրականութեան վերադառնանք:

Մեզի, դպրոցին մէջ սորվեցուցածներուն համաձայն՝ «1900-ներէն յետոյ, իշխանութեան եկող բոլոր թուրք ղեկավարները Փարմասոն են: Ի բացառեալ միայն Մուստաֆա Քեմալը»:

Մենք ալ հաւատացած էինք այս խօսքերուն:

Եւ ապացոյցն ալ կար. Մուստաֆա Քեմալ իշխանութեան գալէ յետոյ Փարմասոնութիւնը արգիլած եւ բոլոր Փարմասոնական օթեակները գոցել տուած էր:

Բայց քանի մը տարի առաջ գերմանական մամուլը, հռչակաւոր Փարմասոններուն անունները հրատարակեց: Որոնց մէջ Մուստաֆա Քեմալին անունն ալ կար:

Ասոր վրայ, թուրք մամուլը կատղեցաւ: Ի՞նչ խօսքեր, ի՞նչ պողոտուքներ գերմանացիներուն դէմ:

Գերմանացիները բնաւ կարեւորութիւն չտուին: Միայն բան մը ըրին: Զեր նախահօր իտալական օթեակին անդամակցութեան վաւերագիրը հրատարակեցին:

Անկէ յետոյ, թրքական մամուլը մունջ դարձաւ:

Այդ պողոտուքները՝ բոլորն ալ մարեցան:

Զեր նախահայրին ծնած տունին առջեւէն անցած միջոցին, երբ այս բաները կը մտածէինք, պատին վրայ տեսանք մարմարէ արձանագրութիւն մը, որուն մէջ չորս լեզուներով հետեւեալ տողերը գրուած էին:

«Թուրք ազգին ստեղծիչը եւ Պալքանեան միութեան պաշտպանը՝ Մուստաֆա Քեմալը այս տան մէջ ծնած է»:

Այս յիշատակ-արձանագրութեան մէջ ըսուածները շատ ճիշդ են:

Զեր նախահայրը 1923-ին, մինչեւ այն ատեն գոյութիւն չունեցող ազգ մը ստեղծեց:

Մինչեւ 1918-ը օսմանցիներ էիք: Յոյն, հայ, արաբ, քիւրտ, լազ ժողովուրդներու խառնուրդ մը: Թուրք ըսուածները փոքրամասնութիւն էին:

Եւ 1923-ին, մէկ օրէն միւսը, «Թուրքիայի» վերածուեցաք: Ինչպէ՞ս, անտեսանելի ուժերուն շնորհիւ:

Անտեսանելի ուժերը ձեր նախահայրին օգնեցին:

1918-ին Օսմանեան կայսրութիւնը կործանած էր: Եւ ամէն բան կորսնցուցած էիք, բայց քանի մը տարի յետոյ, վերակենդանացաք եւ կրկին Անաթոլիան ձեռք անցուցիք:

**ԿԵՑՑԷ ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵՄԱԼԸ, ԲԱՅՑ ՄԱՆԱԽԱՆԴԻ ԿԵՑՑԵՆ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՈՒԺԵՐԸ:**

Թիւ 37

«Նայիրի», 18 Յունիս 2002, Թիւ 173

**ՍԵԼԱՆԻԿԻ ՄԷՋ ՍԿՍՈՂ ԵՒ ԹՈՒՐՔ, ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ  
ԱՉԳԵՐՈՒՆ ՃԱԿԱՏԱԳԻՐՆԵՐԸ ՓՈԽՈՂ  
ԵՐԵՔ ԿԱՐԵԻՈՐ ԴԷՊՔԵՐ**

**ԱՌԱՅԻՆ ԴԷՊՔ.-**

**ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵՄԱԼԻՆ ՍԵԼԱՆԻԿԻ ՄԷՋ ՇՆՈՒՆՂԸ**

Սելանիկի մէջ Մուստաֆա Քեմալին ծնած տան պատին մարմարեայ արձանագրութեան վրայ գրուածին համեմատ «Մուստաֆա Քեմալ, 1923-ին, Թուրք ազգը ստեղծեց»:

Մուստաֆա Քեմալին այս աստուածային, ստեղծելու կարողութեան մասին 1933-ի տասնամեակի քայլերգին մէջ



ալ կը տեսնենք. «Տասը տարուան մէջ, 15 միլիոն երիտասարդ ստեղծեցինք ամէն տարիքէ»: Այսինքն՝ Մուստաֆա Քեմալը գերբնական կարողութիւններ ունեցող ա՞նձ մըն էր: «No comment»: Անցնինք:

Մուստաֆա Քեմալին կենսագրութեան մասին գիրքերու մէջ ի՞նչ գրուած ըլլալը հասկնալ ուզեցինք, եւ նախ նայեցանք 1969-ին հրատարակուած «Դպրոցի հանրագիտարանին» մէջ:

Այս հանրագիտարանին մէջ, Մուստաֆա Քեմալին մեռած թուականը (10 նոյեմբեր 1938), օր, ամիս, տարի ըլլալով կայ, բայց ծննդեան թուական որպէս միայն 1881 գրուած է, իսկ օրը եւ ամիսը չկայ, ինչո՞ւ. Մուստաֆա Քեմալ շատ դարեր առաջ ապրած անձ մը չէ: Եղածը ընդամէնը 120 տարի է:

Այդ թուականին պատահած ամէն բան բոլորին ծանօթ եղող մօտ թուական մըն է:

Ասկէ զատ, դպրոցի հանրագիտարանին մէջ, Մուստաֆա Քեմալին մօրը անունը «Զիւպէյտէ» ըլլալով գրուած է, բայց իր հօր անունը չկայ, ինչո՞ւ: Շատ տարօրինակ է: Իր ծնած տունը յայտնի է, բայց հօրը անունը չկայ:

Եկուր եւ չար լեզուներուն ըսած սուտ եւ սխալ բամբասանքներուն մասին մի մտածեր:

Այս պատճառաւ մեր փնտռողները խորացուցինք եւ գերմանական «DER GROSSE BROCKHAUS» մեծ հանրագիտարանին մէջ, Մուստաֆա Քեմալին մասին գրուածները կարդացինք:

Զարմանալի է, այս հանրագիտարանին մէջ ալ, Մուստաֆա Քեմալին ծննդեան թուականը 1880 գրուած էր եւ քովն ալ հարցական նշան մը դրուած, ինչո՞ւ:

Այսքան ծանօթ անձնաւորութիւն մը, որուն գերբնական կարողութիւններ կը վերգրուի եւ իր ծնած տունը թանգարանի վերածուած է, ծննդեան թուականին չգիտցուիլը՝ գերբնական դէպք մըն է:

Բայց, մեզի համար ամէնէն կարեւորը Մուստաֆա Քեմալին կենսագրութեան մէջ գրուած սա տողերն են.

«Մուստաֆա Քեմալը, էնվեր փաշային գաղափարակից ընկերը ըլլալով, մասնակցեցաւ 1908-1909 «Երիտասարդ թուրքերուն» յեղափոխութեան»:

Այս ըսել է, որ Մուստաֆա Քեմալը Սելանիկի մէջ դաւանափոխներուն եւ ոչ դաւանափոխներուն հիմնած «İTTİHAT VE TERAKKİ» կուսակցութեան անդամ էր:

Մինչդեռ, դպրոցներուն մէջ մեր կարդացածին համեմատ Մուստաֆա Քեմալը իր ճառերուն մէջ «İTTİHAT VE TERAKKİ» կուսակցութիւնը գետնէ գետին զարկած էր:

Եւ նաեւ, «İTTİHAT VE TERAKKİ» կուսակցութեան շատ մը առաջնակարգ անձնաւորութիւնները, 1923-էն յետոյ, մահուան դատապարտել տուած էր:

Իրապէս ալ, Մուստաֆա Քեմալը, գերբնական ուժերու տէր եւ անհասկնալի անձնաւորութիւն մըն է:

Թիւ 38

«Նայիրի», 2 Յուլիս 2002, Թիւ 174

### **ԵՐԿՐՈՐԴ ԴԷՊԸ.-**

### **«ԻԹԹԻՂԱՏ ԵՒ ԹԵՐԱՔԷԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԵԼԱՆԻԿԻ ՄԵՅ ԿԱԶՄՈՒԻԼԸ**

Արդեօք դիպուած է՝

1.- Թուրք ազգը վերատին ստեղծող Մուստաֆա Քեմալին սելանիկցի ըլլալը:

2.- Հայ ազգը 24 Ապրիլ 1915-ին ցեղասպանութեան ենթարկող «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան Սելանիկի մէջ հիմնուիլը:

Ասոնց դիպուած է ըսելու համար՝ կոյր, համր եւ անխելք ըլլալ պէտք է:

Միայն հետեւեալ կացութեան՝ ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք:

1905-երուն Սելանիկի բնակչութեան բաժանումը հետեւեալ ձեւով էր՝

40000 (քառասուն հազար) Սաֆարիդ հրէայ, 20000 (քսան հազար) դաւանափոխ հրէայ, 20000 (քսան հազար) իսլամ, 40000 (քառասուն հազար) յոյն, 3000 (երեք հազար) անուշ ջուրի ֆրանսացիներ-լեւանդեններ:

Եւ հրէաներուն մեծ մասը իտալահայատակ էին եւ իրենց մէջ շատերը իտալական մասոնական օթեակին անդամ էին:

Սուլթան Ապտիւլ Համիտ, 1895-ին շղթայազերծած Հայկական ջարդերով, անտեսանելի եւ բարձրագոյն ուժերուն ծրագիրները իրենց տեղը բերած էր:

1908-ին «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան բանակը Պոլիս մտաւ եւ, պարտականութիւնը աւարտած Ապտիւլ Համիտը գահընկեց ընելով, կառավարութիւնը ձեռք անցուց:

1914-ին «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութիւնը անտեսանելի եւ բարձրագոյն ուժերուն մէկ նոր ծրագիրը կիրարկել սկսաւ:

1914-ին սկսող Առաջին աշխարհամարտին, գերմանացիներուն կողքին մասնակցեցաւ եւ, պատերազմին խառնաչիթութեանէն օգտուելով, 24 Ապրիլ 1915-ին, ներքին գործոց նախարար, ծագումով գնչու եւ ֆարմասոններուն «մեծ վարպետը»՝ Թալեաթ փաշան, հայ ազգը ցեղասպանութեան ենթարկել սկսաւ:

Եւ տարիներէ ի վեր շարունակուող Հայկական խնդիրը քանի մը ամսուան մէջ, պատմութեան մէջ չտեսնուած վայրագութեամբ լուծեց:

Եւ 19 մայիս 1919-ին, ծրագրին վերջին մասը կիրարկուիլ սկսաւ:

Մուստաֆա Քեմալը Սամսոն ելաւ եւ նոր եւ զօրաւոր Թուրքիա մը ստեղծելու աշխատանքներուն սկսաւ:

Ժամացոյցի զսպանակի ճշգրտութեամբ կիրարկուող նոր թուրքիա մը ստեղծելու ծրագրին արմատներուն Սելանիկի մէջ ըլլալը դիպուած էր արդեօք:

Բացարձակապէս՝ ոչ:

1914-էն մինչեւ 1923 թուականը Անաթոլիոյ մէջ կատարուած դէպքերը՝ անտեսանելի եւ բարձրագոյն ուժերուն նոր աշխարհ մը ստեղծելու ծրագիրներուն մէկ մասն էին միայն:

Եթէ աչք ունիք, կը տեսնաք: Եթէ խելք ունիք, կը հասկնաք:

Այսօր, աշխարհի մէջ տեղի ունեցող բոլոր դէպքերը, անտեսանելի բարձրագոյն ուժերուն ծրագիրներուն գործադրութեան հետեւանքներն են:

Թիւ 39-44

«Նայիրի», 16 Յուլիս 2002, Թիւ 175, 30 Յուլիս 2002, Թիւ 176, 13 Օգոստոս 2002, Թիւ 177, 27 Օգոստոս 2002, Թիւ 178, 10 Սեպտեմբեր 2002, Թիւ 179, 27 Սեպտեմբեր 2002, Թիւ 180

**ԵՐՐՈՐԴ ԴԷՊԵ.-**

### **6-7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1955-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ ՊՈԼՍՈՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ**

Յարգելի՛ պոլսաբնակ երիտասարդներ. դուք 6-7 Սեպտեմբեր 1955-ին տեղի ունեցած Պոլսոյ ողբերգութիւնը գիտէ՞ք արդեօք:

Չէք գիտե՞ր, իրաւունք ունիք:

Այդ թուականէն ի վեր, գրեթէ 50 տարիներ անցեր են, դուք այդ թուականին չէիք ծնած անգամ, բայց դուք, այս մասին, բնաւ չկարդացի՞ք, բնաւ չհետաքրքրուեցա՞ք:

«Զլսեցի», «չտեսայ», «չեմ գիտեր» - իրաւունք ունիք. դուք Հայկական ցեղասպանութիւնն ալ, բնաւ չէք գիտեր. դուք միայն ձեզի սորվեցուցածնին գիտէք:

«Հայերը՝ թուրքերը ջարդեր են»: Խեղճեր: Անոր համար է, որ հայերուն հայրենիքը եղող Արեւելեան Անաթոլիոյ մէջ այսօր մէկ հատ հայ չկայ:

Բայց միլիոնաւոր թուրքեր կան:

Եթէ հայերը ջարդեցին թուրքերը, ուրկէ՞ ելան Անաթոլիոյ մէջի միլիոնաւոր թուրքերը: Ինչպէ՞ս կը հաւատար ձեր առաջնորդներուն յերիւրածոյ ձարուտութիւններուն:

Աւելի ճիշդ հաւատալ կը ձեւացնէք:

Որովհետեւ դուք իրականութիւնը ուրիշներէն աւելի լաւ գիտէք: Հայերը ջարդած ձեր մեծ հայրերը ձեզի պատմած են իրենց «քաջագործութիւնները»:

Վերադառնանք 6-7 Սեպտեմբեր 1955-ի Պոլսոյ ողբերգութեան:

Մենք, 6-7 Սեպտեմբերի գիշերը, այս ողբերգութիւնը առաջին վայրկեանէն մինչեւ վերջին վայրկեանը «ապրեցանք»:

Տեսանք ժողովուրդ ըսուած թուրք խուժանին կատաղիլը:

Ամէն բան, 6-7 Սեպտեմբերի գիշերը «İSTANBUL EKSPRES» թերթին հրատարակած երկրորդ տպագրութեան մէջ մեծ տառերով տրուած գրգռիչ լուրով սկսաւ «Սելանիկի մէջ Աթաթիւրքին ծնած տունը ոմբակոծուեցաւ»:

Այս թերթին տուած լուրը ազդանշան մըն էր: Այս դէպքերուն սկսելու համար տրուած հրաման մըն էր:

Կէս ժամ չանցած՝ Պոլսոյ յոյներուն, հայերուն խանութներուն, տուններուն, եկեղեցիներուն վրայ յարձակումը սկսաւ:

Պատճառը: Յոյները, Սելանիկի մէջ, Աթաթիւրքին տունը ոմբակոծեր են:

Իբր թէ, ասոր վրէժը պիտի լուծէին:

Բայց այս առաջուրնէ, ժամացոյցի ճշդապահութեամբ, ծրագրուած էր:

Եւ կասկած չկայ, որ Պոլսոյ «կեափուրներուն» վրայ յարձակման ծրագիրը «MIT» (թրքական հետախուզական-տեղեկատուութեան կազմակերպութիւն) սպայակոյտին կողմէ, պատերազմական ծրագրի մը նման, շատ առաջուրնէ պատրաստուած էր:

Պոլսոյ կեաւորներուն թաղամասերուն վրայ յարձակումը ամէն կողմ նոյն ատեն, ժամը 21-ին սկսաւ:

«Կիպրոսը թուրք է», «Դրօշակ կախեցէք» վայնասուններով եկող հազարաւոր թալանողներ առաջուրնէ ճշդուած «կեաւորներուն» խանութները, չտեսնուած վայրագութեամբ քանդելով եւ թալանելով կը յառաջանային:

Եւ այս վայրենիներուն արգելք ըլլալու համար, մէջտեղները ոչ մէկ ոստիկան եւ ոչ ալ զինուոր մը կար:

\* \* \*

6-7 Սեպտեմբեր 1955-ի գիշերը ժամը 21-ին սկսող դէպքերուն ընթացքին, ինչո՞ւ մէկ հատ ոստիկան եւ ոչ ալ մէկ հատ զինուոր չտեսնուեցաւ:

Պոլսոյ ապահովութեան ուժերը բոլորովին մէջտեղէն վերցուած եւ կարծէք գետնին տակը մտած էին:

Որովհետեւ այս վիճակն ալ պատրաստուած յայտագրին մաս կը կազմէր:

Որովհետեւ այն օրուան վարչապետը Ատնան Մենտերէսը «Զգեցէք, տղաքը քիչ մը զուարճանան» ըսած էր:

Այդ պատճառաւ ոստիկանները եւ ապահովութեան ուժերը բնաւ չմիջամտեցին: Եւ այդ տղաքը շատ լաւ զուարճացան:

Եւ քանի մը ժամուան ընթացքին բոլոր յոյներուն եւ հայերուն խանութները եւ եկեղեցիները թալանեցին:

6-7 Սեպտեմբեր 1955-ի գիշերը Պոլսոյ փողոցներուն միակ «տէրը» այս թալանող խումբերն էին:

Բայց անկազմակերպ կարծուած այս թալանող խումբանին՝ եթէ քիչ մը ուշադրութեան նայուէր, անոնց շատ մեծ կարգապահութեամբ աշխատանք մը տանիլը յայտնի կ'ըլլար:

Ամէն մէկ խումբին գլուխը ղեկավար մը կար. եւ այս ղեկավարը կը հրամայէր, ցոյց կու տար քանդուելիք խանութը:

Ընդհանուր առմամբ, 6-7 Սեպտեմբեր 1955-ի գիշերը, բնակարաններու վրայ յարձակում չեղաւ:

Բնակարաններու վրայ կատարուած յարձակումները՝ խանութներու վրայ կատարուածներու հետ բաղդատարար, շատ քիչ էին:

Որովհետեւ 6-7 Սեպտեմբերի յայտագրին մէջ ջարդի հրաման չէր տրուած:

Միայն խանութները եւ եկեղեցիները՝ պիտի թալանուէին:

Այս յայտագիրը շատ ուշադրութեամբ հաշուուած եւ ծրագրուած էր: Եւ յայտագիրը շատ կանոնաւոր ձեւով գործադրուեցաւ:

Մենք, դէպքերուն սկսած ժամերուն, Քուրթուլուչ-էրկենեգոն պողոտայի մեր բնակարանը կը գտնուէինք:

Ժամը 21-ին թալանողներու խումանը՝ Բանկալթի գտնուող շատ ծանօթ «HAYLAYF» ծաղարանը թալանելով սկսաւ:

Եւ միայն այն ատեն, հեռաձայնով տրուած այս լուրէն յետոյ, դէպքին տեղեակ եղանք:

«HAYLAYF»-ը փլատակի վերածելէ յետոյ, թալանողներուն մէկ խումբը դէպի Օսմանպէյ յառաջանալ սկսաւ, ուրիշ մէկ թալանողներու խումբ մըն ալ էրկենեգոն պողոտայէն վեր ելլելով, դէպի Քուրթուլուչի կողմը յառաջացան եւ այն ճամբուն վրայ գտնուող «Կեալուրներուն» խանութները խորտակել սկսան:

Եւ այդ վայրկեանէն սկսեալ, մեր աչքերովը հետեւեցանք դէպքերուն:

Նուժանին առջեւ գտնուող ղեկավարին ցուցմունքով, այդ՝ մարդկութենէ ելած եւ գազանի վիճակ առած թալանողները, քանի մը վայրկեանի մէջ խանութին փեղկերը խորտակելով ներս կը մտնէին եւ խանութը ամբողջութեամբ կը կողոպտէին:

Եւ կարճ ժամանակի մը մէջ այդ խանութը աւերակի վերածելէ յետոյ, ղեկավարին ցոյց տուած մէկ ուրիշ խանութը կը սկսէին խորտակել:

\* \* \*

Բանկալթին Քուրթուլուչի կապող էրկենեզոն պողոտային վրայ գտնուող մեր տունին շարքին շատը կեավուրներուն պատկանող նպարավաճառի, աղանդերի, պտղավաճառի, մսավաճառի, ծաղավաճառի, հագուստեղէնի եւ նաեւ տեսակ-տեսակ ապրանք ծախող խանութներ կային:

Եւ թալանողները խանութներուն վրայ յարձակելով, ներսը գտնուող ապրանքները կտտրել թափելէ յետոյ, կտոր-կտոր եղած ապրանքները փողոց կը նետէին:

Այս ձեւով փողոցները հազար ու մէկ տեսակ ապրանքներով լեցուն աղբանոցի վիճակ մը առած էր:

Եւ այս խանութներուն մէջ գտնուող զանազան ապրանքներուն՝ քացախ, գինի, օղի, քարիւղ, ալիւր, շաքար եւ նաեւ ուրիշ շատ մը նիւթերուն կտտրուելէն, թափուելէն եւ խառնուելէն յառաջ եկող հոտ մը, մինչեւ այդ մեր չգիտցած, տարօրինակ հոտ մը տուններէն ներս կը թափանցէր եւ մեր կոկորդները կ'այրէր...

Եւ մենք, մինչ այդ, այս խանութները կտտրող թափող մարդոց երեսները նայելու կը ջանայինք:

Ասոնց մէջ գողութիւն ընողներ ալ կային, բայց այս խուժանին մէջ գտնուող մարդոց մեծամասնութիւնը՝ քանդելու համար, կտտրելու համար, մեծ կատաղութեամբ կը յարձակէին խանութներուն վրայ:

Եւ այդ վայրկեանին այս մարդիկը իսկական գազանի մը հոգեվիճակին մէջ մտած էին:

Աւելի ճիշդը՝ իրենց երեսին կեղծ դիմակը վար առած եւ իսկական կործանարար «օսմանցիի» վերածուած էին:

Եւ այս կտտրել-թափելը եւ թալանը, կէս գիշերէն յետոյ մինչեւ ժամը մէկը տեսց:

Եւ ճիշդ ժամը մէկին, Բանկալթիէն դէպի Քուրթուլուչ յառաջացող «jeep» մը երեւցաւ:

Եւ jeep-ին վրայ քանի մը զինուոր, եւ վարորդին քովն ալ ոտքի կեցած սպայ մը կար:



Եւ այս յօր-ին վրայի սպան, մէկ կողմէ բերանը սուլիչ մը, անդադար կը սուլէր, իսկ միւս կողմէ ալ կը պոռար «կորսուեցէք, հեռացէք»:

Եւ այս սպային մէկ սուլիչի ձայնը, եւ անոր պոռալ-կան-չելը բաւարար եղան՝ այս թալանող խուժանին քանի մը վայրկեանի մէջ ցրուելուն եւ մէջտեղէն կորսուելուն:

Եւ մեզի մնաց աւերակի վերածուած խանութները, աղբանոցի երեւոյթով փողոցները, եւ այդ գարշելի եւ անտանելի հոտը:

Բայց, այս ողբերգութիւնը ապրող, մենք՝ «կեափուրներուն» հոգիներուն մէջ, յաւէտ մտաւ սարսափի, վախի եւ բարկութեան զգացումն ու յոյզը 6-7 Սեպտեմբեր 1955-ի գիշերը:

\* \* \*

Կէս գիշերէն յետոյ, ժամը մէկին, փողոցներուն մէջ ոչ մէկ թալլող մնացած էր:

Բայց անոնց տեղը, բոլորովին ուրիշ, տարօրինակ ժողովուրդ մը եկաւ:

Փլատակի վերածուած «կեափուրներուն» խանութները տեսնելու եկած մարդոցմով լեցուած էին փողոցները:

Եւ անոնք, թատրոն մը, շարժանկար մը դիտելու նման, հաճոյքով կը նայէին այս փլատակներուն:

Այդ վայրկեանէն սկսեալ, մենք ալ խառնուեցանք ժողովուրդին եւ դէպի Բանկալթի քալել սկսանք:

Բանկալթիի ճոխ խանութները եւ մանաւանդ տեղւոյն գեղեցիկ «հայլայֆ» ծաղարանը անճանաչելի դառնալու աստիճան քանդուած էր:

Անկէ դէպի Հարպիյէ յառաջացանք:

Այստեղ բազմութիւնը երթալով շատցաւ:

Մասնաւորապէս՝ ինքնաշարժերուն ետեւի կողմը, «պակածէն» կախուած կերպասէ շատ երկայն պոչեր կային:

Եւ այս ինքնաշարժերուն տէրերը՝ «կեափուրներուն» պատկանող կերպասի խանութները թալանի տուած միջոցին, շատ մը կերպասի ծրարները իրենց ինքնաշարժին մէջ կը

փոխադրէին: Եւ յետոյ, զուարճանալու համար քանի մը կերպասի ծրարներ ինքնաշարժին ետեւը կը կապեն եւ ճամբայ ելլելէ յետոյ, այս ծրարները գետին գլորելով տարօրինակ եւ երկար պոչեր կը կազմեն:

Չորս-հինգ պոչ ունեցող եւ հրէշի մը նմանող այս ինքնաշարժերուն զուարճանալու համար Պոլսոյ փողոցներուն մէջ շրջագայիլը, այդ գիշերուան սարսափելի յիշատակներէն մէկը ըլլալով, միշտ մեր աչքերուն առջեւը կը մնայ:

Եւ մենք, այս ինքնաշարժերուն քովէն քալելով, Հարպիյէն Թաքսիմ հասանք:

Թաքսիմի հրապարակին վրայ գտնուող ու խուժանին կողմէ կրակի տրուած մեծ «Այաթրիատ» եկեղեցին, դեռ բոցերու մէջ կ'այրէր ու կ'այրէր:

Մինչեւ 1923 Constantinople կոչուած քաղաքին հպարտութիւնը եւ Պոլսոյ հարուստ դասակարգին կեդրոնը եղած Rue De Pera-ն, ներկայիս Պէյօղլու կոչուած պողոտան ոմբակոծումի ենթարկուածի տեսարան մը կը պարզէր:

Աչքերնուս հաւատալ չէինք ուզեր:

Պէյօղլուի պողոտայ ըսուած տեղ մը չէր մնացած:

Եւ պողոտան խանութներուն կողոպուտի ենթարկման ընթացքին չորսդի նետուած ապրանքներով բոլորովին գոցուած էր: Եւ տեղ-տեղ ալ մէկ մեթր բարձրութեամբ բլրակներ կազմուած էին:

Եւ մենք, պարզուած այս սարսափելի երեւոյթը տեսնելով, չկրցանք դիմանալ եւ լացինք՝ մարդ ըսուած վայրենի արարածին բարբարոսութեան խորհրդանիշը եղող այս փլատակներուն առջեւ:

\* \* \*

«ՆԱՅԻՐԻ»-ի սիւնակներուն մէջ, 4 թիւերէ ի վեր, 6-7 Սեպտեմբեր 1955-ի Պոլսոյ ողբերգութեան ընթացքին մեր ապրած, մեր տեսած սարսափելի դէպքերը պատմելու ջանացինք:

Եւ հիմա ալ, այս ողբերգութեան կատարուելուն պատճառ եղող ազդակները պատմելու պիտի ջանանք:

1951-ին Թուրքիոյ արտաքին գործերու նախարար «Fuat Köprülü» յայտարարութիւն տուած էր եւ, պաշտօնապէս, «Մենք Կիպրոս ըսուած հարց մը չունինք» ըսած էր:

Բայց, աւելի վերջ, անգլիացիներուն աւանդական պոռնիկ քաղաքականութիւնը աշխատիլ սկսաւ, եւ Կիպրոսը չկորսնցնելու եւ տեւական Կիպրոս մնալու համար Թուրքերուն գրգռել սկսան:

Անգլիական գաղտնի սպասարկութիւնը այս պարտականութիւնը Պոլսոյ «Hürriyet» թերթի տէրը եւ ծագումով կիպրացի «Sedat Simavi»-ին տուաւ:

Կիպրոսի հետ կապ ունեցող բոլոր ցաւալի դէպքերուն առաջին պատասխանատուն՝ այս «Hürriyet» ըսուած թերթն է:

Եւ այս «Hürriyet» թերթը, 1951-ի տարիներէն սկսեալ տուած անիրական լուրերով եւ հրատարակած գրգռիչ գրութիւններով, Թուրք ժողովուրդին ուղեղին մէջ կիպրական հարցը ներմուծեց:

«Կիպրոսը Թուրք է» լողունգը ստեղծողը «Hürriyet» թերթն է:

Եւ այս թերթին գրգռութիւնները տարիներ տեւեցին:

Եւ քիչ միջոց մը յետոյ, անգլիական գրգռիչ քաղաքականութիւնը իր արդիւնքը տուաւ, եւ Թրքական կառավարութիւնը կիպրական հարցին տէր ելլելով, սկսաւ շատ յարձակողական քաղաքականութիւն մը կիրարկել:

Օգոստոս 1955-ին Լոնտոնի մէջ սկսելիք Կիպրական բանակցութիւններէն երեք ամիսներ առաջ, Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Fatin Rüştü Zorlu-ին հետ տեսնուող Անգլիոյ արտաքին գործերու նախարարը՝ Zorlu-ին սա թելադրանքները կը կատարէ.

«Յոյները, Կիպրոսի համար, տեւական ցոյցեր կը կատարեն. դուք ինչո՞ւ անչարժ կը կենաք:

Դուք ալ, Կիպրոսի համար, ցոյցեր կատարեցէք, եւ Կիպրոսի համար իրաւունք պահանջեցէք»:

Եւ անգլիացիներուն այս գրգռիչ թելադրանքներն են՝ 6-7 Սեպտեմբեր 1955-ի Պոլսոյ ողբերգութեան առաջին պատասխանատուն:

Եւ անկէ յետոյ, ամէն բան՝ *Fatin Rüştü Zorlu*-է, վարչապետ Ատնան Մենտերեսէ եւ թրքական հետախուզութեան (*MIT*)-ի նախագահէն բաղկացած երրորդութեան կողմէ կազմակերպուեցան:

Եւ շատ մաքիաւելական սենարիօ մը պատրաստուեցաւ եւ այս սենարիօն Սելանիկ ուղարկուեցաւ:

Եւ այս սենարիօյին 4 առաջնակարգ դերակատարները հետեւեալ անձերն էին՝

1.- Սելանիկի բարձր հիւպատոսը՝ *Mehmet Ali Balin*.

2.- Սելանիկի բարձր հիւպատոսի օգնականը *Mehmet Ali Tetikalp*.

3.- «*MIT*»-ի գործակալ, եւ իբր թէ Սելանիկի մէջ իրաւաբանութեան ուսանող *Oktay Engin*.

4- Սելանիկի բարձր հիւպատոսութեան դռնապան *Hasan Uçar*.

Եւ այս սենարիօյին բեմադրութիւնն ալ, սապէս որոշուած էր՝

Սելանիկ գտնուող Մուստաֆա Քեմալին ծնած տան պարտէզին մէջ, Պոլսէն բերուած ումը մը պիտի պայթեցուէր: Եւ այս դէպքը Պոլիս պիտի տեղեկացուէր հետեւեալ ձեւով.

«Յոյները, Աթաթիւրքին տունը ոմբակոծեցին»:

Ահա, Սելանիկի մէջ կիրարկուած այս սենարիօն էր, որ 6-7 Սեպտեմբեր 1955-ի գիշերը՝ Պոլիսին աւերակի վերածուելուն պատճառ եղաւ:

\* \* \*

6-7 Սեպտեմբեր 1955-ի Պոլսոյ ողբերգութեան մասին պաշտօնական իշխանութիւններուն տուած վնասներութեան չափները հետեւեալներն են՝

«3 հոգի մեռած եւ 30 հոգի վիրաւորուած են. 73 եկեղեցի, 8 Այազմա, 2 վանք եւ միայն մէկ սինակոկ քանդուած են:

Յոյներու պատկանող 3584 խանութներ եւ հայերու եւ ոչ իսլամներու պատկանող 1954 խանութներ քանդուած են»:

Հիմա ալ, այս մասին մեր գիտցածները նշենք՝

6-7 Սեպտեմբեր 1955-ի օրը, յոյներու պատկանող բոլոր եկեղեցիները (ի բացառեալ «Փեների» յոյն պատրիարքանիստ եկեղեցին) քանդուած եւ թալանուած են:

Հայերու եւ միւս քրիստոնեաներու պատկանող եկեղեցիներուն շատերը քանդուած են:

Հրէաներու պատկանող միայն մէկ սինակոկ, ան ալ՝ սխալմամբ քանդուած է:

Յոյներու պատկանող բոլոր խանութները քանդուեցան:

Հայերու եւ միւս քրիստոնեաներու պատկանող խանութներուն մեծ մասը քանդուեցան:

6-7 Սեպտեմբեր 1955-ի Պոլսոյ ողբերգութեան ընթացքին պատահած զարհուրելի դէպքերէն միայն մէկ քանին նշելու ջանանք:

Այն օրը դիպուածով, թալանող խուժանին քովէն անցնող յոյն քահանայ մը մօրէ մերկ կը հանուեցնեն եւ ամորձիքներէն կախելով կ'սպաննեն:

Պալըքլըի յունական գերեզմանատան մէջ գտնուող յոյն պատրիարքներուն պատմական դամբարանները կը խորտակեն եւ պատրիարքներուն ոսկորները անոնցմէ հանելով, ոտքերու տակ կը ճգմեն:

Բայց ամէնէն ցաւալին նոյն օրը, Պոլսոյ մէջ միջազգային ժողովի մը մասնակցող ամերիկեան CIA կազմակերպութեան նախագահ ALLEN DULLAS, Սեպտեմբեր 1955-ի դէպքերուն պատասխանատուութիւնը համայնավարներուն վրայ կը նետէ:

Նոյն միջազգային ժողովին մասնակցող Ֆրանսայի վարչապետ հրէայ MENDES-FRANCE, Ֆրանսա վերադառնալէ յետոյ, 6-7 Սեպտեմբերի դէպքերուն մասին, ականատես եղած ըլլալուն հակառակ, բնաւ չ'արտայայտուիր:

Բայց 6-7 Սեպտեմբերի ողբերգութեան մէջ Պոլսոյ աւերակի վերածուելէն զատ, մէջտեղ ելած ամենակարեւոր դէպքը հետեւեալն է.

— 1923-էն յետոյ, Թուրքերը քաղաքին անունը փոխեցին, եւ *CONSTANTINOPLE* անունը *ISTANBUL*-ի վերածեցին:

Հակառակ այս փոփոխութեան, Պոլիսը մինչեւ 1955, քաղաքը ապրող 100.000 յոյն ժողովուրդով իր *CONSTANTINOPLE*-ի յատուկ նկարագիրը չփոխեց:

Բայց 6-7 Սեպտեմբերի ողբերգութենէն յետոյ, յոյները Պոլսէն արտագաղթելու սկսան, եւ շատերը Յունաստան հաստատուեցան:

Այսօր, Պոլսոյ մէջ ապրող յոյներուն թիւը, քանի մը հարիւրը չ'անցնիր:

Իրականութեան մէջ, Թուրքիան կառավարող անտեսանելի ուժերուն ուզածն ալ այս էր: Անոնք, մինչեւ 1923թ., Անատոլիան կեաւորներէն մաքրագործած էին:

6-7 Սեպտեմբերի ողբերգութեամբ ալ, անոնք, Պոլիսը կեաւորներէն մաքրագործեցին:

Այս հարցին վերաբերող Թուրքիոյ նախկին արտաքին գործոց նախարար *FUAT KÖPRÜLÜ*-ին ըսածները շատ կարեւոր են. — «1957-ին, հանրապետութեան նախագահ *CELAL BAYAR*-ին 6-7 Սեպտեմբերի դէպքերուն մասին հարցուցի: Ան ինձի սա պատասխանը տուաւ. — «Ամէն պարագայի, այս դէպքերուն մէջտեղ գալը լաւ եղաւ, մեր ընկերներն ալ այսպէս կը մտածեն»:

Թիւ 45

«Նայիրի», 8 Հոկտեմբեր 2002, Թիւ 181

## **6-7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1955-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ ՊՈԼՍՈՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ**

### **ՂԵՂՔԵՐՈՒՆ ԱՎԱՆԱՏԵՍ ՎԿԱՅ ԸԼԼԱԼՈՎ՝ ՄԵՐ ՅԱՆՎԱԾ ԵՉՐԱՎԱՅՈՒԹԻՒՆԸ**

Թուրքերը քրիստոնեայ Պոլիսը գրաւեցին 1453-ին:

Բայց, միայն 500 տարիներ յետոյ, 1955-ի 6-7 Սեպտեմբերի գիշերը, քրիստոնեայ Պոլիսը քանդելով կրցան թրքացնել:

6-7 Սեպտեմբերի դէպքերուն դրդապատճառը կը կարծուի, որ Կիպրոսի հարցն է:

Բայց այս դէպքերուն միայն արտաքին երեւոյթն է:

Բուն պատճառը անտեսանելի բարձրագոյն ուժերուն մէկ դարէ ի վեր գործադրուող ծրագիրն է:

1850թ. սկսեալ, անտեսանելի բարձրագոյն ուժերը, «հիւանդ մարդ» կոչուած օսմանեան պետութիւնը ողջնցնելու աշխատեցան:

Անոնք 1915-ին, հայ ազգին դէմ գործադրած ցեղասպանութեամբ, Անաթոլիան հայերէն մաքրագործեցին:

1919թ. մինչեւ 1923- ալ Անաթոլիայի պոնտոսցիները եւ յոյները ցեղասպանութեան ենթարկեցին:

Եւ այս ձեւով Անաթոլիան՝ բոլորովին «կեափուրներէն» մաքրագործուած եղաւ:

6-7 Սեպտեմբեր 1955-ին ալ ծրագրին վերջին մասը գործադրուիլ սկսաւ:

Եւ Պոլիսն ալ «կեափուրներէն» մաքրագործուեցաւ:

1960թ. սկսեալ, անտեսանելի բարձրագոյն ուժերուն գործակալը Փարմասոն Սուլէյման Տէմիրէլ, «Մեծն Թուրքիա» ծրագիրը մէջտեղ նետեց՝ 1.- 1974-ին Կիպրոսին գրաւումը, 2.-1992-ին Պոսնիոյ իսլամացուիլը, 3.- 1998-ին ալ Քոսովոյին

բոլորովին միևսիման ալպանացիներուն յանձնուիլը «Մեծն Թուրքիոյ» ծրագրին գործադրութեան հետեւանքներն են:

Վերջին շաբաթներուն, Թուրքիան ուրիշ «երազ» մը տեսնել սկսած է՝ քարիւղի երազը:

Անտեսանելի բարձրագոյն ուժերը, աւելի ճիշդը՝ այլեւս լոյս աշխարհ ելող «Ամերիկա-Իսրայէլ-Թուրքիա» միութիւնը, Իրաքի վրայ յարձակելու կը պատրաստուի:

Եւ Թուրքիոյ աչքը Քերքուկի քարիւղին վրայ է:

Բայց, ուշադրութիւն ըրէք, Թուրքե՛ր, «Տիմյաթ բրինձ առնելու գացած միջոցին, տունը գտնուող կորկոտէն չըլլաք»:

Թիւ 46

«Նայիրի», 22 Հոկտեմբեր 2002, Թիւ 182

## ԹՐՔԱԿԱՆ ՄԵՍ ԹԱՏՐՈՆԸ

Մեր այսօրուան նպատակը, 1873-ին Պոլսոյ Կետիկբաշա թաղին մէջ, առաջին թրքական թատրոնը հիմնող հայազգի Յակոբ Վարդովեանին (թրքացած նոր անունով GÜLLÜ YAKUP)-ին մասին խօսիլ չէ:

Այն Յակոբ Վարդովեանը, որ 1873-ին Եամրկ Քեմալին «Հայրենիք կամ Սիլիսթիէ» թատերախաղը ներկայացնելով ներկայ ժողովուրդը գրգռելուն պատճառով, սուլթան Ապտիւլ Համիտին կողմէ մահուան դատապարտուած էր:

Բայց միջոց մը յետոյ, շատ ծանօթ օսմանեան մեթոտ մը եղող՝ «Կամ կ'իսլամանաս, եթէ ոչ գլուխդ կը կտրենք» առաջարկին իսլամանալը ընդունելով գլուխը կ'ազատէ:

Եւ ոչ ալ մեր նպատակը, Յակոբ Վարդովեանէն յետոյ, թրքական թատրոնը ամէնէն ընտրեալ եւրոպական թատերգութիւնները ներկայացնելով այսօրուան բարձր մակարդակի հասցուցած Մնակեան էֆենտիին մասին խօսիլ է:



Մանաւանդ Յակոբ Վարդովեանին՝ «Անաթոլիոյ մէջ թրքական ընտանիքէ մը սերած է, բայց աւելի վերջ քրիստոնէութիւնը ընդունելով հայացած է» ձաբոտուքը մէջտեղ նետող մեծ արուեստագէտ, բայց թրքական ճնշումի եւ բռնութեան մտայնութեան գործակալը եղող VASFI RIZA ZOBU-ի մասին խօսելու բնաւ մտադրութիւն չունինք:

Մեր այսօրուան նպատակը՝ վերջին շրջաններուն թրքական կառավարութեան կողմէ Ամերիկային Իրաքի վրայ յարձակումի ծրագիրէն օգտուելով, Իրաքի դէմ եւ մանաւանդ Իրաքի քիւրտերուն դէմ խաղցուող «Մեծ թատրոնին» մասին խօսիլ է:

Վերջին ատեններ, Ամերիկային Սատտամ Հիւսէյնը տապալելով, Միջին Արեւելքի քարիւղի հանքերը ամբողջովին ձեռք անցընելու ծրագիրը՝ թուրքերը շատ ուրախացուց:

Պատերազմի խառնաշփոթութիւններէն օգտուելով՝ Իրաքի քիւրտերուն հաշիւը տեսնելը շատ լաւ պիտի ըլլար:

Մանաւանդ՝ աւելի առաջ երթալով Կիպրոսի մէջ կատարուած «խաղաղութեան արշաւանքին» նման, իբր թէ Քերքուկի թիւրքմէն ժողովուրդը ազատելու պատրուակով մինչեւ Քերքուկ իջնել եւ այնտեղի քարիւղի հանքերը ձեռք անցընելը՝ թուրքերուն մեծ երազն է:

12 Հոկտեմբեր 2002 թուակիր «MİLLİYET» թերթին գրգռիչ խորագիրը թուրքերուն այս մտադրութիւններուն ապացոյցն է:

10 սմ-նոց բունթոներու վերնագրով «MİLLİYET» թերթը, կ'սպառնայ քիւրտերուն «Այլեւս չափը անցուցին» կ'ըսէ:

Պատճառօր, քիւրտերը, իրաքեան քիւրտերուն նոր պատրաստուած սահմանադրութեան մէջ, Քերքուկը մայրաքաղաք ցոյց տուեր են:

18 Հոկտեմբեր 2002 թուակիր «MİLLİYET» թերթին մէջ ալ, կրկին շատ մեծ բունթոներով վերնագիրով մը, աւելի ծանր յանդիմանութիւն մը կայ՝ «Նելքդ գործածէ Պարզանի»: Ի՞նչ է եղեր: Եւրոպայի քրտական ներկայացուցչական վայրերուն մէջ քիւրտերը, Արեւելեան Անաթոլիան ալ մէջը առնող Քիւրտիստանի մէկ քարտէսը կախեր են:

Քիւրտերուն այս քարտէսը նոր բան մը չէ որ: Ամէնէն քիչը յիսուն տարուան է: Թուրքերը ասիկա հիմա՞ է որ կը տեսնեն: Կարելի չէ: Ասիկա պարզապէս պատրուակ մըն է: Այս, թուրքերուն խաղալիք թատրոնին պատրաստութեան ծրագրին մաս կը կազմէ:

Բայց արդեօք, Ամերիկան Քերքուկի քարիւղը թուրքերուն կը ձգէ՞: Մեր վերջին գրութեան մէջ սապէս գրած էինք.- «Ուշադրութիւն ըրէք թուրքեր՝ «ՏԻՄՅԱԹ ԲՐԻՆՁ ԱՌՆԵԼՈՒ ԳԱՅԱԾ ՄԻՋՈՑԻՆ, ՏՈՒՆԸ ԳՏՆՈՒՈՂ ԿՈՐԿՈՏԷՆ Չ'ԸԼԼԱՔ»:

Վերջին օրերուն թրքական թերթերուն, Իրաքի մասին շատ բան չգրելը, թուրքերուն այս նիւթին մասին, «սեւ, սեւ» մտածել սկսելնուն պատճառով է արդեօք:

Թիւ 47

«Նայիրի», 5 Նոյեմբեր 2002, թիւ 183

### **30-10-2002 ԹՈՒՍԿԻՐ «HÜRRİYET» ԹԵՐԹԻՆ ՄԵՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ, TUFAN TÜRENÇ-ԻՆ ՏՂԱՅԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԱՄ ԽՆԴԱՅՆՈՂ ՉԱԲՈՏՈՒՔՆԵՐԸ**

Մենք, թրքական մամուլի մէջ հրատարակուած գրութիւններուն, մեծամասնութեամբ թուրք ֆաշիստ պետութեան քարոզչութեան հայելին ըլլալը ըսած էինք:

Բայց, 30-10-2002 թուակիր «HÜRRİYET» օրաթերթին մէջ լոյս տեսած եւ TUFAN TÜRENÇ ստորագրութիւնը կրող յօդուածին պէս գրութեան մը, ընթերցողները ապուշ եւ տխմար նկատող մտայնութեամբ գրուած, առաջինէն մինչեւ վերջին տողը սուտ եւ ձաբոտութեամբ լեցուն, չէինք մտածած որ օր մը կրնանք հանդիպիլ:

Ռուսերուն թուրքիոյ յանձնած եւ թրքական պետութիւնը չէզնիսացի ահաբեկիչները հովանաւորելու յանցանքով ամբաստանող բողոքագրին դէմ TUFAN TÜRENÇ յանցանքը

քողարկելու եւ ուշադրութիւնները ուրիշ տեղ քաշելու համար, Մոսկւայի թատրոնին մէջ մահացող հարիւրէ աւելի պատանդներուն զոհուելուն պատասխանատուութիւնը Ռուսիոյ նախագահ Փութինին վրայ կը նետէ:

Յարգելի TUFAN TÜRENÇ-ը, 700-է աւելի պատանդներուն ստոյգ մահէ ազատած ըլլալնուն պատճառաւ, մեծ պետութիւններուն նախագահներուն POUTINE շնորհաւորած ըլլալնին չէ՞ր գիտեր արդեօք:

11 Սեպտեմբեր 2001-ի NEW YORK-ի ողբերգութեան օրը, ամերիկեան պատերազմական «ճէթերուն» կողմէ, ահաբեկիչներուն ձեռք անցուցած եւ դէպի Սպիտակ տուն յառաջացող ճամբորդատար օդանաւին, մեծ աղէտի մը արգելք ըլլալու համար օդանաւին մէջի ճամբորդները զոհելով, վար առնուիլը չէ՞ր գիտեր արդեօք:

TUFAN TÜRENÇ-ը այս բոլոր շատ լաւ գիտէ:

Բայց անոր նպատակը չէ՛չնհացի ահաբեկիչները հովանաւորող, Փաշիստ թրքական պետութեան յանցանքը քողարկել է:

Անոր ծանօթ եղող ուրիշ բաներ ալ կան:

11 Սեպտեմբեր 2001-ին, NEW YORK-ի ողբերգութեան պատճառ եղած BEN LADEN-ին հրոսակախումբին եւ Աֆղանիստանի մէջ «Թալիպան» կոչուած յետադիմական իշխանութեան դէմ, Ամերիկայի առաջնորդութեամբ, Միացեալ Ազգերը պատերազմ հռչակեցին:

Եւ մէկ քանի շաբթուան մէջ TALIBAN կոչուած յետադիմական վարչաձեւը բնաջնջուեցաւ:

Չէ՛չն ահաբեկիչները ի՞նչ տարբերութիւն ունին Պէն Լատէնի հրոսակախումբէն:

Եւ չէ՛չն ահաբեկիչները հովանաւորող թուրք Փաշիստ պետութիւնը TALIBAN-ներու յետադիմական պետութիւնէն նա՞զ յանցաւոր է:

TALIBAN յետադիմական պետութիւնը պատժուեցաւ:

Թուրք Փաշիստ վարչակարգը ե՞րբ պիտի պատժուի:

Թիւ 48

«Նայիրի», 19 Նոյեմբեր 2002, Թիւ 184

**ՔԻՉ ՄԸՆ ԱԼ ԽՆԴԱՆԷ  
ԼՎԸ ԽՆԴԱՆԷ՝ ՄԵՐ ԼԱԼԻՔ ՎԻՃԱԿԻՆ**

**30-10-2002 ԹՈՒՄԿԻՐ «HÜRRİYET» ԹԵՐԹԻՆ ՄԷՋ,  
ՀՐԴՊԱՐԱԿԱԳԻՐ TUFAN TÜRENC-ԻՆ, ԱՇԽԱՐՀԻ  
ՄԷՋ ՅԵՂԱՇՐՋՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՍՏԻՃԱՆ ՄԵԾ ԳԻՏԸ.-  
«ԱՆԱԹՈՒԼԻԱՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՃԱՍԱՔԱՍՄԱՍԻՆ  
ՄԱՍ ԿԸ ԿԱԶՄԷ»**

TUFAN TÜRENC-ին այս նոր գիւտին շնորհիւ, հնադարեան չրջաններէն ի վեր Ասիոյ ցամաքամասին կապուած ըլլալուն «Փոքր Ասիա» կոչուող Անաթոլիան, ասկէ յետոյ «Փոքր Եւրոպա» պիտի կոչուի եւ եւրոպական ցամաքամասին պիտի կապուի:

Յարգելի TUFAN TÜRENC, կատակը թողունք մէկդի. «Քառասուն տարուան «եանին» «Քանի» կ'ըլլա՞յ: Զըլլար, բայց՝ «բռնութիւնը օրէնքը կ'արէ»:

Եաթաղանի բռնութեամբ, մահուան սպառնալիքով քառասուն տարուան «եանին» «Քանի» կ'ըլլայ:

Ինչպէս որ ըրիք: Քաղաքակրթութեան եւ քրիստոնէութեան օրրանը եղող Անաթոլիոյ քրիստոնեայ ժողովուրդը եաթաղանի բռնութեամբ թրջացուցիք:

Կրօնին փոխել չուզողներուն գլուխները կտրեցիք:

Այս սիսթեմով, Յունաստանի, Պուլկարիոյ, Ալպանիոյ եւ Սերպիոյ մէջ «հրաչքներ» գործեցիք:

Բայց, ինչ որ ալ ընէք, Անաթոլիան եւրոպայի չէք կրնար միացնել:

Աշխարհագրութեան օրէնքները չէք կրնար փոխել:

Այս բանը, ձեր վարժուած եաթաղանի բռնութեամբ կատարած գործերուն չի նմանիր՝ կարճ խօսքով ըսած:

Որչափ ալ բռնութիւն գործածէք՝ «Այս չըլլալիք աղօթքին ոչ մէկը «Ամէն» կ'ըսէ»:

Այնպէս յայտնի կ'ըլլայ, որ, յարգելի Թուֆան Թիւրենչին, ձախաւերութիւն կատարելը՝ իրեն սովորութիւն եղած է:

30-10-2002 թուակիր «HÜRRİYET»-ի գրութեան մէջ, ուսերուն տուած «NOTA»-ին բարկացած ըլլալուն, հազարաւոր հոգիներ ստոյգ մահէ ազատող նախագահ Փութինին դէմ, ձարոտուքներով լեցուն ամբաստանութիւններ կատարած էր:

Այս անգամ ալ «Թուրքիան երոպական չէ: Ասիական պետութիւն է: Այս պատճառաւ երոպական միութեան մէջ չի կրնար մտնել» ըսող Ֆրանսայի Հանրապետութեան նախկին նախագահ Ժիսքար Տ'էսթէնէն նեղուելով, անոր աշխարհագրական դասեր տուաւ, եւ Անաթոլիոյ երոպական ցամաքամասին կապուած ըլլալու ձարոտուքը մէջտեղ նետեց:

Յարգելի Թուֆան Թիւրենչ, մեր հասկցած չափով դուք, լրագրող մը ըլլալէ աւելի, շատ ճարտար աճպարար մը կրնաք ըլլալ:

Թերեւս այն ատեն, ձեռքի աճպարարութեամբ եւ ճարտար լեզուով, շատ մը միամիտներուն կրնաք հաւատացնել, թէ Անաթոլիան՝ երոպական ցամաքամասին մաս կը կազմէ:

Թիւ 49

«Նայիրի», 1 Յունուար 2003, Բացառիկ

**ԱՄԵՐԻԿԱՆ ԻՆՉՈՐԻ ԱՅՍՔԱՆ ՃՆՇՈՒՄ  
ԿԸ ԲԱՆԵՅՆԷ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ  
ՎՐԱՅ, ՈՐ ԱՆՈՆՔ ԹՈՒՐՔԻԱՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ  
ՍԻՈՒԹԵԱՆ ՍԷՉ ԱՌՆԵՆ:  
ԿԱՍԿԱԾ ԶՎԱՅ, ԹԷ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՍԵՒ ԱՉՔԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ ԶԷ**

Որովհետեւ Ամերիկան, 500 միլիոննոց Եւրոպական միութենէն վախճալ սկսած է Ամերիկային մրցակից պիտի ըլլան ըսելով:

Ամերիկան 1991-ին՝ Սովետական Միութիւնը, համայնավարութեան պատրուակով կործանեց:

Եւրոպական միութեան համար այս տեսակ պատրուակ մը չի կրնար գործածել:

Ամերիկայի նպատակը՝ թուրքերը Եւրոպական միութեան մէջ մտցնելով, անոնց TROIE-ի ձիին դերը կատարել տալ է, որ Եւրոպան ներսէն փլցնեն:

Թուրք ղեկավարները ճէնկիզ խանին, Թամերլանին եւ արիւնարբու օսմանեան սուլթաններուն շառաւիղներն են:

Ամերիկան շատ լաւ գիտէ, թէ՛ թուրքերը Եւրոպական միութեան մէջ մտնելէ յետոյ, քար քարի վրայ չեն ձգեր:

Այդ պատճառաւ է, որ Ամերիկան, ժամ առաջ, թուրքերուն Եւրոպական միութեան մէջ մտցնելը կ'ուզէ:

Մանաւանդ, Ֆրանսայի նախկին հանրապետութեան նախագահ՝ Վալերի Ժիսքար Տ'էսթէնին «Թուրքիան Եւրոպական միութեան մէջ չի կրնար մտնել» ըսելէն յետոյ, Ամերիկային «փէշերը բռնկեցան»:

Ամերիկայի պաշտպանութեան նախարարին առաջին օգնականը՝ Փօլ Վոլֆովից, Լոնտոնի մէջ իր տուած յայտարարութեամբ, Եւրոպացիներուն հրաման արձակել է՝

«Թուրքերը գրկաբաց ընդունեցէք»:

Յետոյ, երկարորէն թուրքերուն գովասանքները ըրէր է եւրոպացիներուն, եւ յետոյ Անգարա մեկներ է:

Գիտէ՞ք, որ Փետրուարը կը մօտենայ:

Իրաքի վրայ յարձակման թուականին շատ բան չմնաց:

Ան՝ Անգարայի մէջ, Իրաքի գրաւման պատրաստութեան վերջին մանրամասնութիւններուն շուրջ տեսակցութիւններ պիտի ունենայ:

Լոնտոնի մէջ, թուրքերը այնքան գովելէ ետք, ասոնք, Անգարայի մէջ, Վոլֆովիցին բոլոր ըսածները պիտի ընդունին:

Աշխարհն, ոչ մէկ ատեն, այս աստիճան «պոռնիկ» չըջան մը անցուցած է:

Կասկած չի վերցներ, որ բոլոր այս մաքիաւելական ծրագիրները պատրաստողները՝ մեծ դրամատէրերուն հիմնած անտեսանելի սարդոստայնի կազմակերպութիւններն են:

Այս սարդոստայնի կազմակերպութիւնները, աշխարհի ժողովուրդներուն արիւնը կը քամեն:

Տեսնեք, մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի այս ողբերգութիւնը:

Եթէ եւրոպացիները քիչ մը խելք ունին՝ իսկական եւրոպացիներ եղող՝ ոուսերուն կը միանան:

Եւ միայն այն ատեն է, որ իսկական Եւրոպական մեծ միութիւնը կը ծնի:

Եւ այն ատեն, կեղծ ազատութիւններու պետութեան՝ Ամերիկայի մենատիրութեան վերջը կու գայ:

Թիւ 50

«Նայիրի», 14 Յունուար 2003, Թիւ 185

## ՊԱՅԼ ԵՒ ՊԱՌՆՈՒԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Գայլ եւ գառնուկի պատմութիւնը գիտէ՞ք արդեօք:

Գայլը գառնուկին կ'ըսէ. «Ջուրս կը պղտորես»:

Գառնուկը կը պատասխանէ. «Պարո՛ն գայլ, ջուրդ ինչ-պէ՞ս կրնայ պղտորիլ, դուն ջուրին վերին կողմն ես. ես ալ վարի կողմը»:

Գայլը կ'ըսէ. «Պղտորես կամ չպղտորես ես քեզի պիտի ուտեմ»:

Ամերիկան, Իրաքի մէջ իբր թէ զանգուածային բնաջնջման զէնքեր կան պատրուակելով, Իրաքի վրայ յարձակելու կը պատրաստուի:

Իրաքի մէջ փնտռութիւններ կատարող քննիչներուն պետը HANS BLIX 10 Յունուար 2003-ին, Ապահովութեան խորհուրդին անդամներուն յայտարարութիւն մը կու տայ եւ կ'ըսէ թէ «Իրաքի մէջ զանգուածային բնաջնջման զէնքեր չգտանք»:

Ամերիկեան արտաքին գործոց նախարար COLIN POWELL այս մասին տուած պատասխանին մէջ կ'ըսէ թէ՛ «Իրաքը զարնելու համար՝ անպայման անոր յանցանքի վրայ բռնուիլը պայման չէ:

Իրաքին, յանցանքի վրայ չբռնուիլը ըսել չէ, թէ անիկա յանցաւոր չէ եւ իրեն պարտադրուած պայմանները չէ բռնաբարած»:

Այս խօսքերը ի՞նչ տարբերութիւն ունին «Գայլ եւ գառնուկի» պատմութեան մէջ գայլին ըսածներէն:

Ամերիկային նպատակը Իրաքը «ուտել» է: Իրաքը զանգուածային բնաջնջման զէնքեր ունենայ կամ չունենայ, տարբերութիւն չ'ընեն:

Ամերիկան Փետրուար ամսուն մէջ Իրաքի վրայ պիտի յարձակի:

Ամերիկան Իրաքի «PETROLE»-ին պէտք ունի:

11 Սեպտեմբեր 2001-ի Նիւ Եորքի մէջ կատարուած ողբերգութիւնէն յետոյ, Ամերիկան այլեւս, Սաուտի-Արաբիոյ վրայ չի կրնար վստահիլ:

Այդ պատճառաւ, աշխարհի երկրորդ մեծ PETROLE-ի պահեստները ունեցող Իրաքի վրայ Ամերիկան, յառաջիկայ շաբաթներուն, յարձակման կը պատրաստուի:



Ամերիկան «աշխարհին տէրը» ըլլալու հանգամանքը տեւականացնելու համար, Իրաքը ձեռք անցընելը պայման կը նկատէ:

Այս մտայնութեան անունը, պարզապէս մեր գիտցած չափերով՝ «Վայրենիներու անօրէնութիւն» է:

Այս առիթէն օգտուելով, Թուրքերը Իրաքէն գողօն կորզելու կը պատրաստուին:

Թուրքերը իրենց «Քերքիւկի բեթրոլի երազը» մէջտեղ նետեցին կրկին:

Բայց Ամերիկան երբեք չի թոյլատրեր:

Թուրքերուն «ուժի» տիրանալը Ամերիկային գործին չի գար: Թուրքերը միշտ Ամերիկային կարօտ մնալու են:

Եթէ Թուրքերը «ուժի» տիրանան, Ամերիկային հակակշռէն դուրս կ'ելեն.

Ամերիկացիները՝ Թուրքերուն ի՞նչ ըլլալը շատ լաւ գիտեն:

Այդ պատճառաւ, Թուրքերը «ո՛չ պիտի երկննան եւ ո՛չ ալ պիտի կարճնան»:

Թուրքե՛ր, սին երազներ մի տեսնէք: Յետոյ յուսախաբ կ'ըլլաք:

Թիւ 51

«Նայիրի», 28 Յունուար 2003, Թիւ 186

## ԱՍԵՐԻԿԵԱՆ «KURBAN»-Ի ՏՕՆԸ

Միւսլիմանները, յառաջիկայ Փետրուար ամսուն մէջ «KURBAN»-ի տօնին կը պատրաստուին. ոչխար պիտի զոհաբերեն:

Ամերիկան ալ Փետրուար ամսուան մէջ «KURBAN»-ի տօնին համար պատրաստութիւններ կը կատարէ՝

Իրաքի ժողովուրդը զոհաբերելու կը պատրաստուի:

Բայց, Ամերիկան ինչո՞ւ այսքան «Սատտամ, Սատտամ» կ'ըսէ ու կ'ըսէ տեւական:

Ո՞վ է Սատտամը. ամերիկեան CIA կազմակերպութեան մարդն է՝ Պէն Լատէնի նման, զօրավար՝ Նօիրէկայի նման:

1979-ին Ամերիկան, Սատտամը իշխանութեան բերաւ, Իրաքի մէջ գտնուող համայնավարները «մաքրէ» ըսելով:

Սատտամ 1979-ին, իշխանութեան գալէ յետոյ, Ամերիկայի հրամանով, տասնեակ հազարներով համայնավար սպաննեց: Յետոյ, կրկին Ամերիկայի հրամանով, Սատտամ Իրանի վրայ յարձակեցաւ:

Տարիներ տեւող այս պատերազմին՝ հարիւր հազարներով անմեղ մարդիկ մահացան:

Այս ալ Ամերիկային այն ատենուան «KURBAN»-ի տօնն է:

Այս միջոցին Ամերիկան, Փետրուար ամսուան մէջ իրենց մարդը եղող Սատտամը «զոհաբերելով», Իրաքի «բեթրուլը» ձեռք անցրնելու կը պատրաստուի:

Բոլոր այս պոչաւոր սուտերուն «Չէ, Սատտամը զանգուածային բնաջնջման զէնքեր ունի. Չէ, Սատտամը քիմիական զէնքեր ունի» - այս սուտ ամբաստանութիւններուն ետեւը թաքնուած Ամերիկային բուն նպատակն է՝

1.- Իրաքի քարիւղի հորերը ձեռք անցրնել:

2.- Իսրայէլի մահացու թշնամի վերջին արաբական պետութիւնը կործանել:

Ասկէ դուրս բոլոր ըսուածները ձարուտութիւններ են, բոլորն ալ սուտ պատճառաբանութիւններ են:

Դարերէ ի վեր շարունակուող, դրամատէրերուն խեղճ ժողովուրդներուն արիւնը քամող քաղաքականութիւնը նոյնութեամբ կը շարունակուի. փոխուողները միայն հագուստները, զէնքերը եւ խօսքերն են: Մեղք, շատ մեղք Իրաքի ժողովուրդին:

1990թ. ի վեր շարունակուող ամերիկեան չրջափակումին պատճառաւ, Իրաքի մէջ հարիւր հազարներով անմեղ մարդիկ մահացան:

Փետրուար 2003-ի «KURBAN»-ի տօնին ալ, կրկին Ամերիկային զոհը պիտի ըլլան:

Թիւ 52

«Նայիրի», 11 Փետրուար 2003, Թիւ 187

### Ո՞Վ Է ԹՈՒՐՔԸ

1919-ին Պոլսոյ օսմանեան Ազգային ժողովին մէջ յոյն երեսփոխան մը, Թուրքերուն ի՞նչ ըլլալը, հետեւեալ նախադասութիւններով բացատրած էր՝ «Գորչ գայլ, կամ սեւ գայլ: Գայլը գայլ է: Թուրքերուն ալ ի՞նչ ուզէ ըլլայ՝ Թուրքը՝ Թուրք է»:

1974-ին Թուրքիոյ վարչապետը՝ էճեւիտ, Կիպրոսի գրաման ողբերգութեան անունը՝ «Կիպրոսի խաղաղութեան գործողութիւն» տուած էր:

Երկու օր առաջ ալ, այսօրուան Թուրքիոյ վարչապետը Ապտուլլահ Կիլ՝ Փետրուարի վերջաւորութեան կատարուելիք Իրաքի գրաման գործողութեան համար ալ, սա բացատրութիւնը տուեր է՝ «Թրքական զինուորը, պատերազմի պիտի չմասնակցի»: Միայն Հիւսիսային Իրաքը պիտի գրաւէ մարդկայնական նպատակներով, ջարդ չըլլայ ըսելով:

Ապտուլլահ Կիլին այս խօսքերուն ազուաները անգամ կը խնդան:

Ըլլայ 1974 թուականի էճեւիտը, ըլլայ 2003 թուականի այսօրուան Ապտուլլահ Կիլը՝ նոյն Թուրքերն են, նոյն մտայնութիւնը, նոյն ձաբոտութիւնները:

1974-ի էճեւիտի «Կիպրական խաղաղութեան գործողութեան», տասնեակ հազարներով կիպրացի յոյն անմեղ ժողովուրդ սպաննուած էր:

Նայինք Ապտուլլահ Կիլին մարդկայնական նպատակներով Հիւսիսային Իրաքը գրաւելու գործողութեան որքա՞ն քիւրտ պիտի սպաննուին:

Թիւ 53

«Նայիրի», 25 Փետրուար 2003, Թիւ 188

### ՊԱՏԵՆԱՊԱՇՏ ԹՈՒՐՔԻԱ

Թուրքերուն, զիրենք ծանօթացնելու համար կարելի է տալ շատ մը ածականներ վայրենի, բարբարոս, յափշտակիչ, արինարբու:

Բայց, այս օրերուն Թուրքերուն ամէնէն շատ վայրող ածականը՝ «պատեհապաշտն» է:

Ասկէ մէկ ամիս առաջ Թուրքերը, Ամերիկային Թուրքիայէն անցնելով Իրաքի վրայ յարձակելու հրաման տալու համար, 40 միլիառ տոլար կը պահանջէին:

Ամերիկան ալ «միայն 6 միլիառ կու տամ» ըսած էր:

Մինչ այդ, Թուրքիոյ մէջ կառավարութիւնը փոխուեցաւ: Կրօնական կուսակցութիւնը իշխանութեան եկաւ: Սակերը բարձրացան, իսկ սակարկութիւնը խստացաւ:

Նոր վարչապետ Ապտուլլահ Կիլ «92 միլիառ տոլար կ'ուզենք, ապա թէ ոչ ձեզի Թուրքիայէն Իրաք մտնելու արտօնութիւն չենք տար» ըսեր է:

Պուչն ալ բարկացեր է, եւ «28 միլիառ տոլարէն աւելի չենք տար, եթէ չընդունիք, մեր նաւերը Կիպրոսէն ետ կը դառնան եւ Սուէզէն անցնելով Պասուրայի ծոցը կ'երթան: Թուրքիայէն Հիւսիսային Իրաքի վրայ յարձակելու ծրագիրն ալ կը ջնջենք» ըսեր է:

Բայց, Ամերիկայի համար, շատ դժուար կ'ըլլայ այն ատեն: Միայն հարաւի կողմէն Իրաքի վրայ յարձակելու պարագային, շատ ամերիկացիներ կրնան մահանալ:

Թուրքերն ալ այս վիճակին շատ լաւ տեղեակ են: Ճիշդ ատենն է. ասոր համար 92 միլիառ տոլարի վրայ կը պնդեն, կը կենան: «Կ'ուզենք ու կ'ուզենք»:

Յետոյ՝ «Հիւսիսային Իրաքի քիւրտերն ալ մաքրելու հարցը՝ մեզի ձգեցէք» կ'ըսեն ամերիկացիներուն:

Ամերիկյան դժուար վիճակի մատնուած է: Բայց, ի վերջոյ, թուրքերուն հետ սակարկութեան մէջ համաձայնելու ստիպուած պիտի ըլլայ: Կեցցէ պատեհապաշտ թուրքիան:

1915-ին Առաջին աշխարհամարտէն օգտուելով՝ թուրքերը հայերը ցեղասպանութեան ենթարկած էին: Հիմա ալ, ամերիկացիներուն Իրաքի վրայ յարձակումէն օգտուելով, Հիւսիսային Իրաքի քիւրտերը պիտի մաքրագործեն:

Թիւ 54

«Նայիրի», 11 Մարտ 2003, թիւ 189

### **NORTHERN IRAQ, FOR KURDS BIG MENACE IS AN INCURSION BY TURKS**

### **ԻՔԻՐՏԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ ԱՍԷՆԷՆ ՄԵԾ ՎՏԱՆՊԸ՝ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՔ ԱՐՇԱԿԷՆ ԷՒ**

7 Մարտ 2003 թուակիր «NEW YORK TIMES» թերթին թղթակիցին, Հիւսիսային Իրաքի էրպիլ քաղաքը բնակող քիւրտ NASREEN SIDEEK սա յայտարարութիւնը կատարած է. «Քիւրտերուն համար ամենամեծ վտանգը թուրքերուն Հիւսիսային Իրաք արշաւելն է»:

NASREEN SIDEEK մտահոգուելու շատ իրաւունք ունի:

Ան շատ լաւ գիտէ, որ թուրքերուն Հիւսիսային Իրաքը գրաւած օրը բոլոր քիւրտերը կ'սպաննուին:

Հիւսիսային Իրաքի բոլոր քիւրտերը գիտեն, որ թուրքերը Արեւելեան Անատոլիոյ քրտական գիւղերուն մէջ բնակող քիւրտերը, ինչպէ՞ս բոցարձակ մեքենաներով այրած են:

Մենք, հայ եւ մարդ ըլլալով, շատ կը ցաւինք քիւրտերուն, թուրքերու կողմէ ցեղասպանութեան ենթարկուելուն:

Բայց, կարգ մը պատմական իրականութիւնները քիւրտերուն տեղեկացնելը՝ պարտականութիւն կը նկատենք:

1995-ներուն P.K.K.-ի ղեկավար Ապտուլլահ Էօճալան, իր տուած յայտարարութիւններուն մէջ, պատմական իրականութիւնները ոտնակոխ ընելով, Արեւմտեան Հայաստանի քաղաքներէն Վանը, Մուշը, Կարսը, Երզնկան եւ այլն, Քիւրտիստանի մաս կազմելը կը պնդէր:

Քիւրտերը, իրենց հրատարակած քարտէսներուն մէջ Արեւմտեան Հայաստանի հողերը՝ Քիւրտիստան ըլլալով ցուցնելէ զատ, այսօրուան Հայաստանին մինչեւ Երեւան երկարող հողերն ալ իրենց սահմաններուն մէջ կը ներմուծէին: ...Քիւրտերուն, հետեւեալ իրականութիւնները գիտնալին կ'ուզենք.՝ մինչեւ 1890-ները, Արեւելեան Անաթոլիոյ Արեւմտեան Հայաստան կոչուող հայկական նահանգներուն մէջ բնաւ քիւրտ չկար:

Այն տարիներուն, սուլթան Ապտիլ Համիտ, ազատութեան համար ապստամբող Սասունի նահանգի հայերը ճզմելու նպատակով, Հիւսիսային Իրաքի մէջ ապրող քիւրտերէն՝ «համիտիյէյի» գունդեր կազմել կու տայ:

Եւ այս «համիտիյէյի» գունդերը՝ Սասուն նահանգի եւ չրջակայքի հայերը, մեծ ու պզտիկ բոլորն ալ կը ջարդեն:

Անկէ յետոյ է, որ հայերէն պարպուած հողերուն վրայ, Հիւսիսային Իրաքէն եկող քիւրտեր կը հաստատուէին:

1915-ին թուրքերը, Առաջին համաշխարհային պատերազմէն օգտուելով, հայ ազգը ցեղասպանութեան ենթարկել սկսան:

Եւ այս ցեղասպանութեան ընթացքին անոնք քիւրտերը իբր դահիճ գործածեցին:

Եւ 1915-ին, պատմութեան ոչ մէկ չրջանին չտեսնուած վայրագութեամբ թուրքերը քիւրտերուն հետ գործակցաբար, Անաթոլիոյ մէջ գտնուող բոլոր հայերը ջարդեցին:

Ով քիւրտեր, 1915-ին դուք բնաւ չմտածեցիք, որ այս Միջին Ասիայէն եկած թուրք կոչուող վայրենիները 4000 տարիներէ ի վեր այս հողերուն վրայ բնակող հայերը ցեղասպանութեան ենթարկելէ յետոյ, բնաջնջուելու կարգը ձեզի քիւրտերուն պիտի գար:

Եւ չմտածեցիք, որ թուրքերը, առաջին առիթով, ձեզ ալ ցեղասպանութեան պիտի ենթարկէին:

Եթէ 1915-ին դուք քիչ մը շրջահայեաց ըլլայիք եւ հայերը չջարդէիք, եւ այս հողերուն իսկական տէրերը եղող հայերը եւ քիւրտերը միանային, այն ատեն այս եկուոր բռնակալ թուրքերը, իրենց եկած տեղերնին՝ Միջին Ասիոյ տափաստանները կրնայիք քչել:

Շատ մեղք: Այն ատեն, այս առիթը փախցուցիք: Եւ հայերը ջարդեցիք: Հիմա ալ ջարդուելու կարգը ձեզի եկաւ: Խեղճ քիւրտեր...

Թիւ 55

«Նայիրի», 25 Մարտ 2003, թիւ 190

**ԹՈՒՐՔԵՐ...ՇԱ՛Տ ՄԵՂՔ ԵՂԱՒ...**

**ՁԵՐ ԱՆՈՒՇ ԵՐԱՁՆԵՐԸ «ԶՈՒՐԸ ԻՆԿԱՆ»**

**ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԸ ԹՐՔԱԿԱՆ ՉՕՐՔԵՐՈՒՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ**

**ԻՐԱՔ ՄՏՆԵԼՈՒՆ «ՈՉ» ԸՍԻՆ**

Մինչեւ վերջին վայրկեանը շարունակեցիք սակարկել:

Ամերիկեան ուժերուն, թրքական հողերէն Հիւսիսային Իրաք մտնելուն արտօնութիւն կու տանք «երկու պայմանաւ» ըսիք.

1.- Մեզի 92 միլիար տոլար կու տաք:

2.- Թրքական ուժերը (մարդկայնական նպատակներով) Հիւսիսային Իրաք կրնան մտնել...

Ամերիկացիները դրամական օգնութիւնը ընդունեցին: Բայց թրքական զօրքերուն Հիւսիսային Իրաք մտնելուն «ոչ» ըսին:

Դուք ալ ամերիկեան ուժերուն թրքական հողերէն Իրաք մտնելուն արտօնութիւն չտուիք:

Արդիւնքը ի՞նչ եղաւ: Վերջին լուրը սա է՝

ամերիկացիները թրքական հողերէն «Հիւսիսային Իրաքի վրայ արշաւանքի» ծրագիրը ջնջեցին:

Հրասայլերով լեցուն 25 ամերիկեան փոխադրանաւեր Կիպրոսէն բաժնուեցան, եւ Սուէզի ջրանցքի ճամբով Քուէյթ պիտի երթան...

Դուք ամերիկացիները կը կարծէիք այնքա՞ն «անխելք»: Դուք Հիւսիսային Իրաք պիտի մտնէիք, քիւրտերը պիտի մաքրագործէիք, եւ «petrole»-ի հանքերը պիտի գրաւէիք:

Մեղք... Ձեր անուշ երազները «ջուրը ինկան»: Բայց մեզի համար ամէնէն կարեւորը՝ դուք այլեւս Ամերիկային «անփոխարինելի» դաշնակիցը չէք:

Թիւ 56

«Նայիրի», 8 Ապրիլ 2003, Թիւ 191

### **ՉԸԼԼԱԽԷ ԲԱՆ**

**ԹՈՒՐԷ ՊՐՈՂ ՄԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ**

**ՄԱՍԻՆ, ԹՈՒՐՔԵՐԷՆ ԶԱՏ. ԲՈԼՈՐԻՆ ՀԱՄԱՐ՝ ՍԱՆՅՈՑ**

**ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿՈՂ ՊԻՐԷ ՄԸ ՊՐԵՐ Է**

Մեր մէկ հայ բարեկամը վերջերս մեզի թրքերէն գիրք մը դրկեց:

Քեմալ Եալչըն անունով Տենիզլիցի թուրք գրողի մը «Հոգիս քեզմով կը խայտայ» վերնագրով գիրք մըն էր այս: Եթէ մեր բարեկամին, այս գիրքին մասին յանձնարարութիւնը չըլլար (իբր թէ) Հայկական ցեղասպանութեան մասին թուրքերուն գրած գիրքը ձեռքերնիս չէինք առներ:

Որովհետեւ թուրքերուն այս հարցի մասին հրատարակած բոլոր գիրքերուն նպատակը Հայկական ցեղասպանութիւնը ըսուած բանի մը գոյութիւն չունենալը, ընդհակառակը՝ հայերուն թուրքերը սպաննած ըլլալը ապացուցանել էր:



Մենք այս անհեթեթ եւ անիմաստ թրքական պնդումներուն դէմ միշտ սապէս գրած էինք՝ «Եթէ Հայկական ցեղասպանութիւն չէ եղած եւ ընդհակառակը հայերը թուրքերը մեռցուցած են, ուրեմն ինչո՞ւ 3000 տարուան հայերուն հայրենիքը եղող Արեւելեան Անաթոլիոյ հողերուն վրայ մէկ հատ հայ չկայ, բայց թուրք կոչուող միլիոններով մարդիկ կան...»:

Պիտի խոստովանինք, թէ Քեմալ Եալչընին գիրքը սկիզբը չուզելով կարդալ սկսանք: Բայց բաւական կարդալէ յետոյ, գիրքը մեզի համար հետաքրքրական թուիլ սկսաւ: Եւ ամէնէն վերջ, մինչեւ որ աւարտեցաւ, ձեռքերնէս չձգեցինք: Քեմալ Եալչընը հայերուն մասին այս գիրքը գրած ըլլալուն համար, եւ մասնաւորապէս Հայկական ցեղասպանութեան զարհուրելի իրականութիւնները թրքերէն լեզուով լոյս աշխարհ բերած ըլլալուն համար սրտանց կը շնորհաւորենք:

Այս տեսակ գիրք մը, թուրք մը ըլլալով գրելը, մեծ քաջութիւն է: Աւելի ճիշդ հերոսութիւն է:

Այս իրականութիւններէն անջատ ըլլալով Քեմալ Եալչընին իր գիրքին մէջ, առաջին տողէն մինչեւ վերջին տողը յայտնած մարդկային մտածումներուն, եւ մարդոց միջեւ եղբայրութեան գաղափարներուն հիացանք:

Բայց յարգելի Քեմալ Եալչընին, կարգ մը հարցերու մասին մեր գաղափարները յայտնել կ'ուզենք:

Մարդոց միջեւ եղբայրութեան, բարեկամութեան եւ սիրոյ գաղափարները՝ շատ ճիշդ եւ ազնիւ մտածումներ են: Բայց, միայն անձերու միջեւ: Եւ երբեք ազգերու յարաբերութիւններուն մէջ:

Որովհետեւ մարդ մը, իր անձնական խնդիրներուն մէջ, ինք որոշելու ազատութիւնը ունի, եւ սիրոյ զգացումները՝ շատ անգամ շահու մտածումները կրնան յաղթել:

Բայց ազգերու միջեւ բարեկամութեան եւ եղբայրութեան գաղափարները խաբուսիկ են եւ սուտ են: Մանաւանդ՝ հայ եւ թուրք ազգերու պարագային:

Որովհետեւ ազգերու միջեւ, միակ վաւերական օրէնքը միայն շահու օրէնքն է:

Ազգերու միջեւ եղբայրութեան գաղափարներուն հաւատացող ազգերը, ի վերջոյ հիասթափութեան մատնուելու եւ բնաջնջուելու դատապարտուած են: Այս խնդրին ամէնէն մեծ օրինակը հայ ազգն է:

19-րդ դարուն Օսմանեան կայսրութեան մէջի գերի ազգերուն բոլորն ալ յոյները, պուլկարները, սերպերը եւ արաբները ապստամբելով իրենց անկախութեան տիրացան:

Միայն հայերն էին, որ օսմանցիներուն հաւատարիմ մնացին: Եւ այս պատճառաւ ալ սուլթան Ապտիւլ Համիտ հայերուն «MILLETİ SADIKAYI ERMENİYE» («Հաւատարիմ ազգ Հայոց») տիտղոսը տուաւ:

1908-ի «ազատութիւն» հռչակուած շրջանին, օսմանցիութեան գաղափարին ամէնէն սրտանց կապուող ազգը՝ հայերն էին: Եւ հայերը «İTTİHAT VE TERAKKİ» կուսակցութեան հետ եղբայրութիւն կնքեցին:

Բայց 1915-ին այդ եղբայր կարծուած «İTTİHAT VE TERAKKİ» կուսակցութիւնը Առաջին աշխարհամարտին խառնաշփոթութիւններէն օգտուելով՝ հայերը ցեղասպանութեան ենթարկեց:

1909-ին մօլլաներուն ապստամբութեան օրերուն, հայոց տունը պահուրտելով մահէն ազատող, Փարմասոններուն նախագահը եւ ներքին գործերու նախարար Թալեաթ փաշան Ապրիլ 1915-ին ամէնէն պզտիկէն մինչեւ ամէնէն տարեց հայուն սպանման հրամանը արձակեց:

Ահաւասիկ թուրքերուն տուած «Հաւատարիմ ազգ Հայոց» տիտղոսին վարձատրութիւնը:

24 Ապրիլ 1915-ի Հայկական ցեղասպանութեան ընթացքին էտիրնէէն մինչեւ Վան քաղաքը, բոլոր հայերը աքսորուեցան, եւ անոնց մեծ մասը սպաննուեցաւ: Այսօր՝ 1915-ի Հայկական ցեղասպանութենէն 88 տարի յետոյ, թուրքերը մինչեւ հիմա իրենց կատարած ոճիրը կ'ուրանան:

Վերջին շրջաններուն, ամերիկացիները հայերուն կ'ստիպեն, որ թուրքերուն հետ հաշտուին: Դուք ո՞ր հաշտութեան մասին կը խօսիք:

Ողջ մնացած ափ մը հայերուն դէմ կանգնած է 70 միլիոնի հասնող թուրք ըսուած զանգուած մը:

Այսօր Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ մէկ հատ հայ չկայ: Եւ թուրքիա ըսուած պետութեան բնակչութեան հարիւրին իննսունինը, ստորակէտ ինը՝ թուրք է:

Այս աստիճան արիւնարբու մաքրագործութիւն մը պատմութեան ոչ մէկ շրջանին, ոչ մէկ պետութիւն կատարած է:

Եթէ այս ափ մը հայերը, ամերիկացիներուն ծուղակը իյնալով թուրքերուն հետ հաշտուին եւ բարեկամանան, այն ատեն այս հայերը իրենց մահուան վճիռը իրենց ձեռքերովը ստորագրած պիտի ըլլան:

Թիւ 57

«Նայիրի», 15 Ապրիլ 2003, թիւ 192

**«ԹՈՒՐԷՐԸ ՀԱՅԵՐՈՒՆ ՀԵՏ ԴԱՐԵՐՈՎ ՄԻԱՍԻՆ  
ԱՊՐԵՐ ԵՆ, ԱՍԿԷ ԵՏԶ ԱԼ ՆՈՐԷՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ,  
ԹՈՂ ԲԱՐԵԿԱՍԱԲԱՐ ԱՊՐԻՆ»**

«Հոգիս քեզմով կը խայտայ» վերնագրով շատ արժէքաւոր գիրքին հեղինակը՝ Քեմալ Եալչընը, վերը նշուած խօսքերով, շատ սրտազին մաղթանքներ կը կատարէ:

Քեմալ Եալչընին անկեղծութեան կասկածելու իրաւունք չ'ունինք:

Բայց իր այս խաղաղութեան փափաքին հայկական հետեւեալ ասացուածքով պատասխան տալ կ'ուզենք.— «Գնա մեռիր՝ եկուր սիրեմ»: Այս հայկական ասոյթին մատնանշած գաղափարը հետեւեալն է. «Իմ մահանալէս յետոյ, զիս պիտի սիրես եղբր: Ինչի՞ կը ծառայէ»: Մեր նախկին գրութեան մէջ ալ մատնանշած էինք:

Թուրքերուն շովէն եւ Փաշիստ դեկավարները, մէկ քանի տարուան ընթացքին, հայերուն 3000 տարուան հայրենիքը եղող

Արեւելեան Անաթոլիոյ եւ ամբողջ Օսմանեան կայսրութեան տարածքին ապրող հայերը ցեղասպանութեան ենթարկեցին:

Կրկին «խաղաղութեան մէջ բարեկամաբար ապրելու մաղթանքներ» կ'ընէ: Բայց այսօր քանի՞ հայ մնաց, որ թուրքերուն հետ միասին պիտի ապրին:

«Դարերով միասին ապրեցանք» կ'ըսէք: Դարերով՝ ոչ: Քանի մը հարիւր տարի միայն:

Հայերը հազարաւոր տարիներէ ի վեր, Անաթոլիայի բնիկներն են:

Մինչդեռ թուրքերը «եկուորներ» են: Վայրենի, թափառական եւ բռնագրաւող ցեղախումբ ըլլալով՝ խուժել սկսաք Անաթոլիոյ հողերը:

11-րդ դարուն վերջերը, Մանազկերտի մէջ, բիւզանդացիներուն յաղթելով մտաք Անաթոլիա:

Թուրքերուն ազգային բանաստեղծը եղած NAMIK KEMAL-ին ըսածներուն ուշադրութիւն ըրէք:

«Աշխարհակալ պետութիւն մը մէջտեղ բերինք ցեղախումբէ մը»: Ցեղախումբ մըն էիք միայն: Եւ քանի մը դարեր յետոյ, «կայսրութեան» վերածուեցաք:

Ինչպէ՞ս կայսրութիւն եղաք, գիտէ՞ք: Սպաննելով, ջարդելով, կողոպտելով:

Բնիկ ժողովուրդները՝ յոյները եւ հայերը բռնի ուժով իսլամացնելով:

Այսօրուան թուրքերը, հին օսմանցիներէն տարբե՞ր են: Ո՛չ, ընդհակառակը, աւելի վատ են:

Ունեւորութեան տուրքը, 6-7 Սեպտեմբեր 1955-ի դէպքերը, 1974-ի Կիպրոսի գրաւման ողբերգութիւնը կատարողները՝ այս «քրավաղով թուրքերն» են:

Այս բարբարոսական մտայնութեան զոհերէն մէկն ալ դուք չէ՞ք, յարգելի՛ պրն. Քեմալ Եալչըն:

Միջոց մը առաջ, ձեր «Հոգիս քեզմով կը խայտայ» գիրքին հազարներով հատորները, Պոլսոյ մէջ վերէն եկած հրամանով, կտոր-կտոր ընել տուողը այս շովէն եւ Փաշիստ մտայնութիւնը չէ՞ր:

Մինչեւ այն ատենը, որ թուրքերը, հայերուն դէմ իրենց կատարած ցեղասպանութեան յանցանքով չպատժուին այսօրուան թուրքիա կոչուած պետութեան ֆաշիստական մտայնութիւնը երբեք պիտի չփոխուի:

Թիւ 58

«Նայիրի», 6 Մայիս 2003, Թիւ 193

### **«ՀՈԳԻՍ ԲԵՉՄՈՎ ԿԸ ԽԱՅՏԱՅ» ՎԵՐՆԱԳՐՈՎ ԳԻՐՔԻՆ ՇԵՂԻՆԱԿԸ՝ ՅԱՐԳԵԼԻ ԲԵՄԱԼ ԵԱԼՉԸՆԻՆ ՈՒՂՈՒՄԾ**

#### **ԲԱՅ ՆԱՄԱԿ**

#### **«ՈՒՂԻՐ ԵՒ ՊԱՏԻԺ»**

Յարգելի՛ Բենալ Եալչըն, մեր այս գրութեան նպատակը ձեզի Տոստոյեւքիին «Ոճիր եւ պատիժ» վէպին մասին խօսիլ չէ:

Բոլոր քաղաքակիրթ պետութիւններուն օրէնքներուն մէջ մատնանշուած ոճիրներ գործողները կը պատժուին: Եթէ պետութեան մը մէջ, ոճրագործները անպատիժ կը մնան, այդ պետութիւնը աւազակներու պետութիւն մըն է: Ահա, 1915-ի Մեծ եղեռնէն փրկուած հայերուն ցաւը, այստեղէն կը սկսի:

1915-ին հայերը ջարդող թուրքերը եւ հայ ազգը ցեղասպանութեան ենթարկող թուրք պետութիւնը, մինչեւ այսօր չեն պատժուած:

Յարգելի՛ Բենալ Եալչըն, ձեր մարդասիրական եւ եղբայրութեան գաղափարներուն համար ձեզի որքան ալ շնորհաւորենք, նորէն քիչ է:

Բայց անպայման սա մէկ ասացուածքը գիտէք. «Մէկ ծաղիկով ամառ չի գար»:

Ձեզ նման բարեսիրտ անձ մը, թուրքերուն մէջէն ոչ թէ հազարէն մէկ, այլ տասը հազարէն մէկ անգամ չ'ելլար: Եւ

ձեզի համար մեր ամենէն սրտանց մաղթանքը աղօթենք, որ Գերմանիոյ «Գորչ գայլերը» ձեզի գէշութիւն մը չընեն:

Այո՛, յարգելի՛ Քեմալ Եալչըն, դուք, թուրքերուն մէջ տասը հազարէն մէկ գտնուող բարի անձնաւորութիւններէն մէկն էք: Բայց դուք մտածեցի՞ք երբեք, մնացած 9999 հատ չարասիրտ թուրքերուն մասին:

Ահաւասիկ ասոնք, թուրքիա ըսուած աւազակներու պետութեան մէջ, Անաթոլիա մտած թուականներէն ի վեր տեղացի հայերը ջարդող եւ անպատիժ մնացած թուրքերուն շառաւիղներն են:

Այո՛, յարգելի՛ Քեմալ Եալչըն, թուրքիա ըսուած Փաշիստ պետութեան մէջ ապրող ժողովուրդին հարիւրին իննսուն ստորակէտ ինը, այս անպատիժ մնացած ոճրագործներուն շառաւիղներն են:

Եւ ասոնք ալ, իրենց մեծ հայրերը եւ հայրերը պատժած չըլլալնուն, եթէ առիթը գտնեն, նոյն ոճիրները կրկին կը գործեն:

Ահա, այս պատճառաւ աւազակ, Փաշիստ եւ ոճրագործներու պետութիւնը, թուրքիան ցեղասպանութեան յանցանքով պատժելը մարդկութեան պարտականութիւնն է:

Թիւ 59

«Նայիրի», 20 Մայիս 2003, թիւ 194

**ՊՈԼՍՈՅ ՄԷՅ ՊՏՆՈՒՈՂ  
ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ  
ԲԱՅ ՆԱՄՍԿ**

«14 Ապրիլ 2003 թուականին թուրք կրթական նախարարութիւնը, բոլոր թրքական վարժարաններուն եւ նաեւ Պոլսոյ հայկական վարժարաններուն չըջաբերական մը կ'ուղարկէ, եւ նիւթը «Հայկական ցեղասպանութեան պնդում»

ներուն անհիմն ըլլալը» եղող շարադրութեան մրցոյթներու կայացումը կը պահանջէ»:

(12 Մայիս 2003-«HÜRRİYET»)

Յարգարժան Պոլսոյ հայ ուսանողներու հայրերուն եւ մայրերուն՝

եթէ ձեր զաւակներուն, այս «Հայկական ցեղասպանութիւնը ժխտելու» շարադրութեան մրցոյթը չահիլնին կ'ուզէք, հետեւեալ գրութիւնը՝ ձեր զաւակներուն տալ կը յանձնարարենք՝

«Հայերուն, բոլոր ցեղասպանութեան պնդումները սուտ են: Հայկական ցեղասպանութիւն չէ եղած:

Ընդհակառակը՝ թրքական ցեղասպանութիւն եղած է: Հայերը ջարդած են թուրքերը:

Մենք՝ թուրքերս, Անատոլիայի 3000 տարիներէ ի վեր բնիկ ժողովուրդն ենք:

Հայերը, 11-րդ դարուն, ներխուժեցին Անատոլիա:

Այդ թուականէն ի վեր վայրենի հայերը թուրքերը սպաննեցին եւ հողերին ձեռքերնէն առին:

Հայերուն թուրքերուն դէմ կատարած այս վայրագութիւնը դարեր տեւեց:

Առաջին աշխարհամարտին թուրքերուն հայերը սպաննած ըլլալնին սուտ է:

1915-ին TEKİRDAĞ, EDİRNE, BANDIRMA, İZMİT, BURSA-ի եւ Անատոլիոյ բոլոր հայերը ուսերուն օգնելու համար ճամբայ ելան:

Եւ հայերը, ճամբուն վրայ, իրենց տեսած բոլոր թուրքերը սպաննեցին:

Գալով հայերէն մեռնողներուն՝ անոնք ճամբան հիւանդութենէ մեռան:

«Անկցին ստախոս հայերը»:

Թիւ 60

«Նայիրի», 3 Հունիս 2003, Թիւ 195

**«MINNESOTA»-Ի ՍԷՉ ՀՐԵԱՅ  
ՓՐՈՖԵՍՈՐՆԵՐՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՍԲ  
ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ «ՇԻՖԹԷ-ԹԵԼԼԻ»**

Հրէաները շա՞տ կը սիրեն հայերը, որ թուրքերուն եւ հայերուն հաշտուելուն համար կ'աշխատին:

Թէ ոչ, 24 Ապրիլ 1915-ի Հայկական ցեղասպանութեան մէջ սելանիկցի հրէաներուն խաղացած դերին մէջտեղ ելլալէ՞ն կը վախնան:

**ՄԻՆՆԷՍՈՒՅԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ «ՉԻՖԹԷ-ԹԵԼԼԻՆ»**

Տարիներէ ի վեր, ամերիկացիներու առաջնորդութեամբ, արեւմտեան պետութիւնները հայերը թուրքերուն հետ հաշտուելու ստիպողութեան կ'ենթարկեն:

Ինչո՞ւ արդեօք: Որովհետեւ արեւմտեան պետութիւնները շա՞տ կը սիրեն հայերը: Թէ ոչ, Հայկական ցեղասպանութեան իսկական պատճառին եւ իսկական պատասխանատուներուն մէջտեղ ելլալէն վախցող մութ ուժե՞ր կան:

Անպայման, այս գործին մէջ, առեղծուած մը կայ, որ ամերիկացիները այսքան կը ճնշեն հայերուն, որ համաձայնին թուրքերուն հետ:

Վերջին ամիսներուն, թուրքերը եւ հայերը, Ամերիկայի Միննեսոթա քաղաքին մէջ տեսակցեցան:

Բայց տեսակցողները թուրք եւ հայ պետութեանց դիւանագէտները չեն:

Շատերը պատմութեան փրոֆեսորներ են: Ինչո՞ւ: Որովհետեւ, այս պատմագէտները, իրենց միջեւ պիտի բանակցին եղեր ճշդելու համար, թէ 1915-ին թուրքերուն հայերուն դէմ կատարած սպանդը ցեղասպանութի՞ւն է, թէ՞ ցեղասպանութիւն չէ:



Մե'ղք, շատ մեղք: Այս փրոֆեսոր ըսուածները, եթէ իսկական պատմագէտներ են, շատ լաւ գիտեն ուրեմն, որ 1915-ին Պոլսոյ մէջ դեսպանատուն ունեցող բոլոր պետութիւններուն արխիւներուն մէջ, հազարներով տեղեկագիրներ կան, որոնք կը փաստեն, թէ 1915-ին կատարուածը, պատմութեան որեւէ շրջանին մէջ իր նմանը չունեցող զարհուրելի ցեղասպանութիւն մըն է:

Եւ այս իրականութիւնները թուրքերն ալ շատ լաւ գիտեն: Եւ ոչ միայն փրոֆեսոր թուրքերը: Բոլոր թուրք ժանտարմաները, բոլոր թուրք պետական պաշտօնէութիւնը գիտեն: Եւ մանավանդ թուրք ժողովուրդը գիտէ: Անոնք, իրարու հետ խօսած ատեն, հպարտութեամբ կը պատմեն, թէ ինչպէս ջարդած են հայ Gavur-ները:

Էֆենտինե'ր, ինչո՞ւ պատմագէտներով ատեն կը կորսնցընէք: Գացէք թուրք ժողովուրդին հարցուցէք: Անոնք շատ լաւ գիտեն իրենց կատարած ցեղասպանութիւնը:

Գալով թուրք պատմագէտներուն հայ պատմագէտներուն հետ կատարած բանակցութիւններուն ասոնց առաջնակարգ օգուտները ճշդելու ջանանք՝

1. Այս բանակցութիւնները շատ օգտակար են «հաւանի» մէջ (սանդ) ջուր ծեծելու համար:

2. Այս բանակցութիւնները շատ օգտակար են թուրքերուն ժամանակ շահեցնելու համար:

3. Այս բանակցութիւնները շատ օգտակար են՝ հայերը քնացնելու համար:



Բայց այս լուրերուն, հետեւեալ օրը, սուտ ըլլալը մէջտեղ ելաւ:

Որովհետեւ ո՛չ հաւաքական գերեզման գտնուեցաւ, ո՛չ ալ մեռել:

Բայց սուտ լուրը, որչափ ալ ըլլայ, խեղճ եւ տխմար ուղեղներուն վրայ հետք մը կը ձգէ:

Գիտէ՞ք այն ծանոթ ասացուածքը «Զրպարտէ ու կրկին զրպարտէ: Սուտին նոյնիսկ շատը երթայ՝ քիչը կը մնայ»:

Հիմա, դուք ալ, նոյն նորոյթ ըլլալէ դադրած սենարիօն, Իգտիրի մէջ կը խաղաք:

Փորեցէք նայիք, փորեցէք: Անպայման բան մը կը գտնէք: Մեռել չէ, բայց հայերուն հինգ հազար տարուան հայրենիքը եղած եւ 1915-ին թուրքերուն, հայերը ցեղասպանութեան ենթարկելէ յետոյ գողցած այս հողերուն վրայ, հայերուն քաղաքակրթութեան բեկորները կը գտնէք անպայման:

Թիւ 62

«Նայիրի», 1 Յուլիս 2003, Թիւ 197

**«ՀԱՄԱՔԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ»  
ԿՈՉՈՒԱԾ ԹԱՏՐՈՆԻ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՆ  
ՄԵՆԱՇՆՈՐԸ ԹՈՒՐԿԵՐՈՒՆ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ**

Ինչո՞ւ, գիտէ՞ք: Որովհետեւ 1976-ին թուրքերը, առաջին անգամ ըլլալով, այս հաւաքական գերեզմաններու ձարոտուքները, Կիպրոսի մէջ յոյներուն դէմ գործածեցին:

1974-ին, Մ. Նահանգներու արտաքին գործերու նախարարը Henry Kissinger-ն էր: Եւ Թուրքիոյ վարչապետն ալ, Ամերիկեան համալսարանին մէջ Քիսինճէրին աշակերտը եղած Bülent Ecevit-ն էր: Եւ Kissinger-ը 1974-ին, իր աշակերտը եղած Bülent Ecevit-ին Կիպրոսը գրաւելու հրամանը արձակեց:

Եւ Յուլիս 1974-ին, Թրքական զինուորական ուժերը, «խաղաղութեան գործողութիւն» ըսուած ծրագիրը գործադրեցին եւ Կիպրոսին մօտաւորապէս կէսը գրաւեցին:

Եւ Թրքական «խաղաղութեան գործողութեան» շնորհիւ Կիպրոսի մէջ հազարներով յոյն մեռան եւ կամ կորսուեցան:

Եւ այդ շրջանին, Թուրքերուն առաջնակարգ խորհրդատուները, Կիպրոսի կէսը կլլելնուն պատճառով, Թուրքերը անմարսողութեան խնդիր չունենան ըսելով հաւաքական գերեզմաններու բեմադրութիւնը մէջտեղ նետեցին:

Ինչպէս գիտէ՞ք: Բացատրելու ջանանք:

Թուրքերուն առաջնակարգ դաշնակիցը եղող աշխարհի մեծ դրամատէրերու կազմակերպութեան գործակալները Զուիցերիոյ մէջ քանի մը հեռատեսիլի պաշտօնեայ կաշառեցին, եւ մէջերնին կին ալ գտնուող զուիցերիական հեռատեսիլէն խումբ մը պաշտօնեաներ՝ Կիպրոսի Թուրքերու կողմէ գրաւուած մասը գացին:

Եւ հոն, առաջուրնէ պատրաստուած բեմադրութեամբ մը, զուիցերիացի ծախուած հեռատեսիլի պաշտօնեաները, իբր թէ յոյներուն մեռցուցած դիակներով լեցուն հաւաքական գերեզմաններ գտան եւ նկարեցին:

Եւ այս զուիցերիացի հեռատեսիլի պաշտօնեաները, Զուիցերիա վերադառնալէ յետոյ, Կիպրոսի մէջ նկարահանուած, «յունական վայրագութեան» գործը եղող «Թուրքերու պատկանող» դիակներով լեցուն հաւաքական գերեզմաններուն ֆիլմերը հեռատեսիլէն ցուցադրել սկսան:

1976-ին մենք ալ, դիպուածով Զուիցերիա կը գտնուէինք, եւ հեռատեսիլէն դիտեցինք Թրքական դիակներով լեցուն հաւաքական գերեզմանները եւ շատ ցաւ զգացինք:

Յունական պաշտօնական իշխանութիւնները, այս հաւաքական գերեզմաններուն պատճառաւ, շատ նեղ դրութեան մատնուեցան:

Եւ յունական պետական իշխանութիւնները, Միացեալ ազգերու կազմակերպութեան դիմեցին եւ միջազգային յանձնաժողովի մը այս հաւաքական գերեզմաններու հարցը քննե-

լու համար Կիպրոսի թրքական կողմը երթալու որոշումը առնել յաջողեցան:

Եւ հիմա, այս թատրոնին ինչպէս վերջացած ըլլալը լաւ մտիկ ըրէք:

Միջազգային քննիչ յանձնաժողովրի անդամները Կիպրոսի թրքական մասը գտնուող այդ հաւաքական գերեզմաններուն մէջի դիակները զննեցին եւ նկատեցին, թէ այր մարդոց դիակները չէին թլպատուած: Եւ շատերուն կուրծքին վրայ խաչեր կային:

Եւ միջազգային քննիչ յանձնաժողովը իր տեղեկագիրը յանձնեց Միացեալ ազգերու կեդրոնին:

«Այս դիակները թուրքերուն պատկանող դիակներ չեն: Այլ քրիստոնեայ յոյներու մեռելներ են»:

Հիմա հասկցա՞ք, թէ ինչո՞ւ հաւաքական գերեզմաններու թատրոնի բեմադրութեան մենաչնորհը թուրքերուն կը պատկանի՝ ըսինք:

Թիւ 63

«Նայիրի», 15 Յուլիս 2003, թիւ 198

**KILIS-Ի ՄԵՉ ՀԻՒՆԵԱ ԱԳԲԸՆԱՐ ԱՆՈՒՆՈՎ ԹՈՒՐԸ ՈՒՍՈՒՅՉՈՒՅԻ ՄԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՅՈՒՄ ՄԸ ՈՒՂՂԱԾ ԸԼԼԱԼՈՒՆ ՀԱՄԱՐ, ԹՈՒՐԸ ԴԱՏԱՆԱՃԻՆ ԿՈՂՄԷ ԵՐԵՔՈՒԿԵՍ ՏԱՐԻ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՀԱՆՑՈՎ ԴԱՏԱՐԱՆ ԿԸ ՅԱՆՁՆՈՒ**

Ի՞նչ հարցուցեր է այս ուսուցչուհին: Kilis-ի մէջ Հայկական ցեղասպանութեան պնդումները ջրելու համար կազմակերպուած բանախօսութեան մը ընթացքին, այս ուսուցիչ տիկինը, բանախօսին հետեւեալ հարցումը կ'ուղղէ՝

1. Հայկական ցեղասպանութեան պնդումներուն հետ առնչուող, յատուկ մէկ քաղաքականութիւն մը ունի՞ պետութիւնը:

2. Ութ հարիւր հազար հայեր սպաննուա՞ծ են:

Ուսուցի՛չ տիկին, դուն ալ շատ տգէտ ես եղեր: Չե՞ս գիտեր, հայերէն ոչ մեկը մեռաւ: Ընդհակառակը, հայերը սպաննեցին թուրքերը:

Բոլոր թրքական դպրոցներուն մէջ այս պոչաւոր սուտերուն քարոզութիւնը կատարուած չրջանին, դուն կ'ելլես եւ ութ հարիւր հազար հայերուն սպանութեան մասին հարցում կ'ուղղես:

Ի՞նչ իրաւունքով այս տեսակ խափանարարութիւն մը կ'ընես:

Kilis-ի դատախազը իրաւունք ունի քեզ, երեքուկէս տարի բանտարկութեան պահանջով, դատարան յանձնելու:

Բայց կատակը մէկ կողմ ձգենք:

Շատ յարգարժան ուսուցչուհի Հիւլեա Ագբընար, այս հարցումը ուղղելով քու ցուցաբերած քաջութեանդ համար, քեզի, մեր բոլոր սրտով, կը շնորհաւորենք:

Հոկտեմբեր 2000 թուականին, Տիգրանակերտի ասորի վարդապետ Եուսուֆ Աքպուլութ, «Հայկական ցեղասպանութիւնը եղած է» ըսելուն պատճառաւ, բանտարկուած էր:

Հիմա, կրկին հարաւէն՝ այս անգամ Kilis-էն՝ ուրիշ քաջ անձնաւորութիւն մը՝ ուսուցչուհի Հիւլեա Ագբընար, իրականութիւնները սորվիլ ուզելուն համար, դատախազին կողմէ երեքուկէս տարի բանտարկութեան պահանջով դատարան կը յանձնուի:

Բայց, իրականութիւնները ի վերջոյ լոյս աշխարհ կ'ելլեն:

Ո՛վ Փաշիստ գրաւման պետութիւն:

Երեսնիդ, ժողովրդավարի դիմակը դրած, թատրոն կը խաղաք:

Իրականութեան մէջ, աշխարհի ամէնէն սարսափելի բռնակալ պետութիւնն էք:

Ճենկիզ խանէն, Թամերլանէն գերազանց յելուզակ պետութիւն մը:

Ճենկիզ խանը եւ Թամերլանը շատ շուտ կործանեցան:

Ձեր Փաշիստ պետութիւնն ալ, մօտ պտենէն, պիտի կործանի:

Թիւ 64

«Նայիրի», 29 Յուլիս 2003, Թիւ 199

## ԹՈՒՐԷ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

15 Յուլիս 2003 թուակիր մեր գրութեան մէջ, Թուրքիոյ համար «Ո՛վ Փաշիստ թուրք գրաւման պետութիւն, երեսնուդ ժողովրդավարի դիմակ դրած, թատրոն կը խաղաք» ըսած էինք:

Թուրքիոյ համար մեր ըրած այս ախտաճանաչումը հաստատող Գերմանիոյ նախկին աշխատանքի նախարարը եւ նոյն ատեն Հելմութ Բոհլի աջ բազուկը համարուող Ն. Պլումին, Գերմանիոյ ամէնէն ծանօթ թերթերէն «DIE WELT»-ին տուած յայտարարութիւնը նոյնութեամբ տալու ջանանք:

Ն. Պլում, «DIE WELT»-ի մէջ ելած գրութեամբ, իր Թուրքիայէն Իրաք անցնելու արկածախնդրութիւնը կը պատմէ, եւ Թուրքիան երկերեսութեամբ կ'ամբաստանէ, եւ սա խօսքերով Թուրքիոյ իսկական երեսը մէջտեղ կը հանէ. «Թուրքիան, Պոլսոյ եւ գրօսաչրջական վայրերու մէջ բարեկամական եւ սիրալիր դէմք մը ցոյց կու տայ Եւրոպային: Բայց Թուրքիոյ արեւելեան կողմը, Սուրիոյ եւ Իրաքի մօտի լեռնային շրջաններու մէջ, այս դէմքը հրէշի մը կը վերածուի:

Եւ այս հրէշը, այդ շրջաններուն մէջ բռնատիրութիւնը, քառօսային կացութիւնը եւ կաշառակերութիւնը կը տարածէ»:

Եւ Ն. Պլում, իր խօսքերուն վերջաւորութեան, սա ախտաճանաչումը կ'ընէ՝ «Թուրքիա, Եւրոպական միութեան մէջ չի կրնար մտնել»:

Մենք ալ հիմա, պատասխան տանք Ն. Պլումին.

«Խեղճ պրն. Պլում, յայտնի է, որ Թուրքիոյ արեւելեան շրջաններուն մէջ, շատ տառապեր էք թրքական բարբարոսութենէն:

Բայց հիմա՞ հասկցաք, թուրքերուն ինչ ըլլալը:

100 տարիներէ ի վեր ո՞ւր էր ձեր խելքը, երբ հայերը, թուրքերուն կողմէ, ոչխարներու պէս կը մորթուէին:

Նոյնիսկ 1915-ին, թուրքերուն զինակիցն էիք:

Ձեր զօրավարները, սպաները, մասնաւորապէս ձեր VON DER GOLTZ փաշան, զօրավար LIMAN VON SANDERS-ը բոլորն ալ թուրքիա էին՝ Հայկական ցեղասպանութեան կատարուած ատեն:

Այդ ցեղասպանութեան օրերուն, մատերնիդ անզամ չչարթեցիք:

Ընդհակառակը, շատ գոհ էիք ուսերուն բարեկամ հայ ազգին մէջտեղէն վերնալուն եւ ձեր առջեւ Պաղտատի ճամբուն բացուելուն համար:

Եւ հիմա, քիչ մը ձեր սիրտը այրեցաւ ըսելով, սկսաք թուրքերուն հրէշութեան մասին խօսիլ:

Բայց սպասեցէք, դուք դեռ շատ տեսնելիք բաներ ունիք:

Այսօր, Գերմանիոյ մէջ, 7 միլիոն եղող թուրքերը, տասը տարի յետոյ, 20 միլիոն պիտի ըլլան:

Դուք, այն ատեն պիտի տեսնէք, թուրք ըսուած հրէշին ինչ ըլլալը»:

Թիւ 65

«Նայիրի», 12 Օգոստոս 2003, թիւ 200

## **A-ԷՆ ՄԻՆՉԵՒ Z ԲՈԼՈՐՈՎԻՆ ՍՈՒՏԵՐԻ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԸ ԹՈՒՐԶԻԱ**

Երբեմն կը մտածենք եւ մենք մեզի կը հարցնենք:

Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ A-էն մինչեւ Z բոլորովին սուտերու վրայ հիմնուած թրքական պետութիւնը՝ մինչեւ այսօր չկործանեցաւ եւ մինչեւ հիմա իր գոյութիւնը կրնայ շարունակել:

Ասոր պատճառը՝ եթէ քարտէսին վրայ նայելու ըլլանք, անմիջապէս կրնանք հասկնալ:



Տիամար արեւմտեան պետութիւններուն 200 տարիներէ ի վեր շարունակուող, Ռուսիոյ Միջերկրական իջնելուն արգելք ըլլալու քաղաքականութեան պատճառաւ:

Այս ցնդած արեւմտեան պետութիւնները, ի՞նչ շուտ մոռցան, 1683-ին Վիէննայի դռներուն առջեւ օսմանեան վայրենիներուն տարածած սարսափը:

Արեւմտեան պետութիւնները, այնքան շուտ մոռցան եղածները, որ 1918-ին կործանած օսմանեան մարդասպաններու պետութեան տեղը՝ շինծու թրքական պետութիւն մը ստեղծեցին:

Ինչո՞ւ:

Ռուսերուն դէմ՝ թուրքերը վահան ըլլան-ըսելով:

Վարագոյրին ետեւէն, ո՞վ թիկունք կը կանգնի այս շինծու թրքական պետութեան:

Միջազգային մեծ դրամատէրերու կազմակերպութիւնը: Եւ անոնց թիկունքով է, որ 1918-ի հոգեվարող օսմանեան պետութիւնը, այսօրուան 65 միլիոննոց Թուրքիոյ վերածուեցաւ:

Եւ օսմանեան մարդասպաններու պետութեան շարունակութիւնը եղող այսօրուան փողկապաւոր դահիճներու պետութիւնը այժմ Եւրոպական միութեան մէջ մտնելու կը պատրաստուի:

Կրկին միջազգային մեծ դրամատէրերու կազմակերպութեան ճնշումներուն շնորհիւ:

1683-ին, օսմանեան թալանող բանակները Վիէննան չէին կրցած ձեռք անցընել:

Քրիստոնեայ եւրոպական միացեալ բանակներուն պայքարին շնորհիւ:

Մինչդեռ այսօր, Եւրոպայի մէջ քրիստոնէական հաւատքը, եւրոպական «ոգին» գրեթէ մեռած է:

Ինչո՞ւ:

Կրկին, միջազգային մեծ դրամատէրերու կազմակերպութեան ծրագիրներուն հետեւանքով: Եւ օսմանցիներուն ուրուականը եղող այսօրուան դահիճներու պետութեան՝ Թուրքիոյ

զանգուածները, 50 տարիներ յետոյ, շատ դիւրութեամբ Եւրոպայան ձեռք պիտի անցընեն կրկին, միջազգային մեծ դրամատէրերու կազմակերպութեան ծրագիրներու հետեւանքով:

Թիւ 66

«Նայիրի», 26 Օգոստոս 2003, Թիւ 201

**ՔԵՄԱԼ ԵԱԼՉԸՆԻՆ «ՀՈԳԻՍ ՔԵՉՍՈՎ ԿԸ ԽԱՅՏԱՅ»  
ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ԹՐՔԵՐԷՆ ԳԻՐՔԻՆ  
ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ՝  
ԱՎԵԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ**

Այս գիրքին հայերէն թարգմանութեամբ, արդեօք հայերը ի՞նչ սորված պիտի ըլլան:

Ոչ մէկ բան:

Թուրքիայէ դուրս ապրող եւ աշխարհի չորս կողմերը գաղթելու ստիպուած հայերը, եւ մանաւանդ 1915-ին թուրքերուն կատարած զարհուրելի ցեղասպանութեան ենթարկուող հայերէն հրաչքի նման վերապրողները եւ անոնց ազգականները, Քեմալ Եալչընին գիրքին մէջ նշած հայկական ողբերգութեան հազարապատիկը գիտեն:

Այդ պատճառաւ հայերը այս գիրքէն սորվելիք ոչ մէկ բան ունին:

Այս գիրքը, միայն եւ միայն Թուրքիոյ մէջ թուրքերուն իրականութիւնները ըսելու տեսակէտով օգտակար է:

Բայց Քեմալ Եալչընին իր վկայութեամբ գրածին համեմատ, 2002թ. Պոլսոյ մէջ «Հոգիս քեզմով կը խայտայ» գիրքին հազարաւոր օրինակները, վերէն եկած, այսինքն՝ Փաշիստ թրքական պետութեան հրամանով կտրելու գործիքով փճացուցած են:

Քեմալ Եալչընը, իր այս գիրքին մէջ, թուրք մը ըլլալով (առանց «Ցեղասպանութիւն» բառը գործածելու), հայերուն ենթարկուած ջարդերուն պատճառաւ ներողութիւն կը խնդրէ:

Իրականութեան մէջ, միայն Քեմալ Եալչընին ներողութիւն խնդրելը (այն ալ առանց ցեղասպանութիւն բառը գործածելու) ինչի՞ կը ծառայէ:

Փաշիստ թրքական պետութիւնը, իրականութիւններուն միայն հազարէն մէկը նշող «Հոգիս քեզմով կը խայտայ» գիրքին անգամ չի հանդուրժեր, եւ սոյն գիրքերը կտոր-կտոր ընել կու տայ:

Եւ ընդհակառակը, Հայկական ցեղասպանութիւնը քողարկելու համար, Իգտիրի մէջ իբր թէ հաւաքական գերեզմաններ կը գտնէ, եւ հայերը 1917թ. թուրքերուն դէմ ջարդեր կազմակերպելու յանցանքով կ'ամբաստանէ:

Այս ուրացող մտայնութեան տէրը եղող Փաշիստ թրքական պետութեան հայրենակից՝ Քեմալ Եալչընին իր գիրքին մէջ յայտնած մարդասիրական գաղափարները ինչի՞ կը ծառայեն:

Բնական է, շնորհակալութիւն կը յայտնենք Քեմալ Եալչընին, իր գիրքին մէջ հայոց մասին նշած իրականութիւններուն եւ ըրած եղբայրութեան խօսքերուն համար:

Բայց թրքական պետութեան Հայկական ցեղասպանութիւնը ուրացող քաղաքականութիւնը, այնքան ատեն որ կը շարունակուի, Քեմալ Եալչընի պէս միլիոնէն մէկ գտնուող բարեսիրտ թուրքերուն անուշ խօսքերը, հայերը միայն քնացնելու կը ծառայեն:

Կակուղ սրտով տխմար հայերը, 1850թ. թուրքերուն «Թանգիմաթ» ըսուած խաբէութիւններուն հաւատացին, եւ օսմանցի թուրքերէն աւելի օսմանցի եղան:

1908թ. սելանիկցի «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան «Հիւրրիյէթ» («Ազատութիւն») ըսուած «մասալներուն», միամիտ տղոց նման հաւատացին հայերը:

Եւ հայ կրօնականները հոճաներուն հետ ողջագուրեցան, համբուրուեցան եւ «եղբայր» եղան:

Բայց 1915 թ., այս եղբայր կարծուած թուրքերը էտիրնէէն մինչեւ Վան, բոլոր հայերը ցեղասպանութեան ենթարկեցին:

Այսօր՝ 1915-16 թթ. ցեղասպանութենէն 88 տարիներ յետոյ, հայոց, թուրքերուն ձեռքով ենթարկուած այդքան ողբերգութիւններէն յետոյ, հայերը պատմութենէն բնաւ դաս չեն առած:

Եւ միջազգային դրամատէրերու կազմակերպութեան ճնշումներուն հետեւանքով, կարգ մը հայ առաջնորդներ, թուրքերուն հետ, հաշտութեան բանակցութիւններ կը կատարեն:

Եւ կարգ մը երախայամիտ ղեկավարներ, քանի մը բարեմիտ թուրքերուն անուշ խօսքերուն հաւատալով, թուրքերուն հետ կրկին եղբայրաբար ապրելու երազներ կը տեսնեն:

Հռչակաւոր ասացուածք է՝ «Փորձուածը կրկին փորձելը տխմարութիւն է»:

Մինչ այդ՝ շատ ծանօթ հայ երգիչ մը, իր հասակէն վեր խօսքեր ընել սկսաւ.

«Գերմանացիները հրէաներուն հետ ինչպէ՞ս հաշտուեցան, հայերն ալ թուրքերուն հետ այլեւս հաշտուելու են»:

Այս երգիչին յայտնենք.

Արդեօք հրէաները, գերմանացիներուն հետ, ի՞նչ պայմաններով հաշտուեցան: Ինք տեղեա՞կ է արդեօք՝

1. 1945 թ., «գամբերուն» մէջ հրէաներ սպաննուեցան ըսելով, նացի Գերմանիոյ բոլոր պետական պատասխանատուները պատժուեցան:

Մեծ ղեկավարները կախաղան հանուեցան:

2. Հրէաներուն դէմ կատարուած սպանութիւնները մարդկութեան դէմ ոճիր (HOLOCOSTE) ըլլալով ընդունեցան:

Եւ 1945 թ. մինչեւ այսօր, գրեթէ ամէն օր Գերմանիոյ տեղեկատուութեան աղբիւրները այս HOLOCOSTE-ի պատմութիւնը կը յիշատակեն:

3. Գերմանիան, հրէաներուն իբր հատուցում, 1945 թ. մինչեւ այսօր, ամէն տարի միլիառաւոր տոլար կը վճարէ:

Իսրայելը այս դրամներով հիմնուեցաւ: Եւ հրէաները այս միլիառաւոր տոլարներուն շնորհիւ բոլոր արարներուն դէմ կը դնէ:

Այս մեծ հայ երգիչին կրկին հարցնենք՝

Հայ ազգը ցեղասպանութեան ենթարկող եւ հայուն 3000 տարուան հայրենիքը գողցող «Թուրքերուն հետ, հրէաները ինչպէս որ գերմանացիներուն հետ հաշտուեցան, մենք ալ հաշտուինք» կ'ըսէք:

Արդեօք, հայերը թուրքերուն հետ համաձայնին ըսելով, հրէայ-գերմանական հաշտութեան պայմաններուն հազարէն մէկը թուրքերուն կրնա՞նք պարտադրել: Ո՛չ:

Թուրքերը Հայկական ցեղասպանութիւնը չեն ընդունիր, եւ ոչ մէկ ատեն ալ պիտի ընդունին:

Որովհետեւ, Հայկական ցեղասպանութիւնը ընդունած օրն իսկ, Թուրքիա ըսուած պետութիւնը, ուռեցուած գնդակի նման կը պայթի եւ կտոր-կտոր կ'ըլլայ:

Բայց, մէկ յոյս մը ունինք: Այն ալ ոուսերն են:

Միայն ոուսերն են, որ մարդկութեան մուրը եղող այս մարդասպաններու եւ աւազակներու պետութիւնը՝ Թուրքիան, կրնան կործանել:

Ուրեմն, սպասենք ու տեսնենք:

Թիւ 67

«Նայիրի», 9 Սեպտեմբեր 2003, Թիւ 202

### «ԹՈՒՐՔԻԱ ԸՍՈՒՄՍ ԱՌԵՂՍՈՒՄՍԸ»

Ամբողջ աշխարհի պետութիւններուն մէջ օրէնքի տեղ անցած է՝ ամէնէն ուշ յիսուն տարի յետոյ, պետական արխիւները, գաղտնիք ըլլալէ կը դադրին, եւ հանրութեան կը բացուին:

Բայց, մէկ բացառութեամբ:

Միայն Թուրքիոյ մէջ չեն բացուիր:

Թուրքիա ըսուած պետութեան արխիւները տեսնելը՝ արգիլուած է. ինչո՞ւ:

Որովհետեւ, եթէ արխիւները բացուին, Թուրքիա ըսուած 1923-ին ոչինչէն ստեղծուող շինծու պետութեան բոլոր գաղտնիքները մէջտեղ կ'ելլեն:

Որովհետեւ, եթէ արխիւները բացուին, 1915-ին Հայկական ցեղասպանութիւնը կատարողները եւ կատարել տուողները մէջտեղ կ'ելլեն:

Որովհետեւ, եթէ արխիւները բացուին, «Հիւանդ մարդ» ըսուած օսմանեան պետութիւնը մահէն ազատելով, անոր տեղ Թուրքիա ըսուած պետութիւն մը ստեղծողներուն ինքնութիւնը մէջտեղ կ'ելլէ:

Որովհետեւ, եթէ արխիւները բացուին, 1919-ին, Մուստաֆա Քեմալին, Սիվասի եւ Էրզրումի համաժողովներուն, հօճաներուն եւ շէյխերուն թիկունքովը իշխանութեան գալէ յետոյ, 1923-ին անոնց մէկ մասը սպաննելը, մէկ մասը աքսորելը եւ մէկ մասն ալ բանտարկելը մէջտեղ կ'ելլէ:

Որովհետեւ, եթէ արխիւները բացուին, Մուստաֆա Քեմալին 1919-ին, Սովետներուն, ինքզինքը Արեւմուտքին թշնամի եւ համայնավարներուն բարեկամ ըլլալը հաւատացնելով, Սովետներուն թիկունքը շահիլը եւ մեծ քանակութեամբ դրամ եւ զէնք առնելը, բայց 1923-ին յոյները ծով թափելէ յետոյ, Սովետներուն կոնակ դարձնելը եւ Անատոլիոյ մէջ գտնուող համայնավարները մաքրագործելը, նոյնիսկ, Սեւ ծովու շրջակայքի համայնավարներուն ձեռքերը եւ ոտքերը կապելով զանոնք ծով նետել տալը մէջտեղ կ'ելլէ:

Որովհետեւ, եթէ արխիւները բացուին, Մուստաֆա Քեմալին 19 Մայիս 1919-ին Սամսուն ելլելէն յետոյ, Սեւ ծովու շրջակայքին 3000 տարուան բնիկ ժողովուրդը եղող PONTUS-ցի յոյները ցեղասպանութեան ենթարկելով, բոլորովին մաքրագործել տալը մէջտեղ կ'ելլէ:

Որովհետեւ, եթէ արխիւները բացուին, Մուստաֆա Քեմալին 1921-ին Փրանսացիներուն հետ համաձայնելով անոնց

Ատանայէն եւ հարաւի նահանգներէն գաղտնաբար հեռանալը ապահովելէ յետոյ, հազարաւոր տարիներէ ի վեր Ատանա, Մարաշ, Անթէպ, Ուրֆա եւ Մարտինի մէջ ապրող հայերը եւ ասորիները ցեղասպանութեան ենթարկելը մէջտեղ կ'ելլէ:

Քաղաքակրթութիւններու եւ քրիստոնէութեան օրրանը եղող Անատոլիոյ 3000 տարուան բնիկ ժողովուրդները՝ միլիոնաւոր քրիստոնեայ յոյն, հայ եւ ասորի բնակիչները ցեղասպանութեան ենթարկելով, Անատոլիոյ մէջ հարիւրին հարիւր միլայիւման պետութիւն մը ստեղծող Մուստաֆա Քեմալին թուրքերը որքան ալ շնորհակալութիւն յայտնեն, նորէն քիչ է:

Բայց, մեզի համար, ամէնէն կարեւորը՝ ովքե՞ր կային Մուստաֆա Քեմալին ետեւը:

Թիւ 68

«Նայիրի», 23 Սեպտեմբեր 2003, թիւ 203

## ԽԵՂՃ ՉԵՐՄԱՆԻԱՆ

### ՉԵՐՄԱՆԻՈՅ ՊԱՎԱՐԻԱ ՆԱՀԱՆԳԻ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ (GÜNTER BECKSTEIN)

ԸՍԵՐ Է ԹԷ «21 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003-ԻՆ ԿԱՏԱՐՈՒԵԼԻՔ

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ,

ԹՈՒՐԿԵՐԸ ԻՆՍԻ ԶՈՒԷ ԿՈՒՏԱՆ» HÜRRİYET -19-9-2003

Գերմանիոյ Պալարիա նահանգի ներքին գործոց նախարարը եւ «Քրիստոնեայ ընկերային միութիւն» (C. S. U.) կուսակցութեան ղեկավարներէն GÜNTER BECKSTEIN, «Hürriyet» թերթին տնօրէնին կատարած յայտարարութեան մէջ սապէս ըսեր է՝

«Թուրքերը ինձի քուէ կուտան»:

Բայց Beckstein, ինչո՞ւ թուրքերուն իրեն քուէ տալերնուն պատճառը չէ ըսած:

Արդեօք իր անունին նայելով Beckstein-ը հրէայ պիտի կարծեն եւ թուրքերը, այդ պատճառաւ, իրեն քուէ պիտի տան:

Չենք գիտեր:

Բայց մեր հասկցած մէկ բանը կայ:

Այն է՝ Գերմանիոյ թուրքերուն քուէները՝ գերմանական ընտրութիւններուն մէջ, ազդեցիկ սկսած են ըլլալ:

Թուրքիոյ 68-րդ նահանգը նկատուող Պափարիոյ մէջ, այսօր միլիոնաւոր թուրք կայ:

Արդեօք թուրքիոյ 69-րդ նահանգը նկատուող Պերլինի մէջ որքա՞ն թուրք կայ:

Պերլինը բոլորովին թուրքերուն ձեռքն է: ...Դեռ այսօր, թուրքերը, գերմանական ընտրութիւններուն մէջ, առաջնակարգ դերակատարներէն մէկն են:

Կրնա՞ք երեւակայել, թէ 50 տարի յետոյ, վիճակը ի՞նչ պիտի ըլլայ:

Այն ժամանակ թուրքերը՝ Գերմանիոյ մէջ մեծամասնութիւն պիտի ըլլան:

Խեղճ Գերմանիա, խեղճ գերմանացիներ:

Բայց գերմանացիները 1941-45թթ. հրէաներուն դէմ իրենց կատարած չարիքներուն պատիժը կը կրեն այսօր...

Կը կարծէ՞ք, թէ այս վիճակը ինքնաբերաբար մէջտեղ եկաւ: Բացարձակապէս՝ ոչ:

Անտեսանելի ուժեր, 1941-45թթ. Գերմանիոյ մէջ սպաննուած հրէաներուն տեղը՝ թուրքերով լեցնել սկսան:

Հրէաները՝ 1941-45թթ. գերմանացիներուն եօթնուկէս միլիոն հրէայ սպաննած ըլլալնին կը պնդեն:

Այսօր, Գերմանիոյ մէջ, եօթնուկէս միլիոնէ աւելի թուրք կայ:

Գերմանիոյ մէջի այսօրուան վիճակը, աներեւոյթ ուժերուն կիրարկած ծրագրին արդիւնքն է:

Բայց ինչո՞ւ, գերմանացիներուն, միայն հրէաները սպաննած ըլլալնուն մասին կը խօսուի:



1915-ին Թուրքիոյ մէջ, Հայկական ցեղասպանութեան կատարուած միջոցին, Թուրքիոյ մեծ զինակիցը գերմանացիներն էին:

1915-ի Հայկական ցեղասպանութիւնը, գերմանացիներուն համաձայնութեամբ եւ անոնց աչքերուն առջեւ կատարուեցաւ:

1915-ի Հայկական ցեղասպանութեան մէջ, Թուրքերը դահիճի դերին մէջ էին:

1915-ի Հայկական ցեղասպանութեան հրամանը՝ մեծ դրամատէրերէն եկաւ:

Եթէ 1915-ի Հայկական ցեղասպանութեան յանցաւորները եղող Թուրքերը եւ մեծ դրամատէրերը պատժուէին, 1941-45թթ. միլիոնաւոր հրէաներ չէին սպաննուեր, եւ Գերմանիան ալ այսօրուան խղճալի վիճակին չէր ենթարկուեր:

Թիւ 69

«Նայիրի», 7 Հոկտեմբեր 2003, Թիւ 204

### «ԲՈՒՐ յՈՅՍԵՐՍ ԿՈՏՐՈՒԵՅԱՆ»

Մեր երիտասարդութեան տարիներուն, Պոլսոյ մէջ շատ ընդհանրացած երգ մը կար:

Շատ յուզիչ եւ ոռմանդիկ երգ մըն էր:

Այս երգը, ամէն անգամ որ մտիկ կ'ընէինք, կը յուզուէինք եւ աչքերնիս կ'արցունքոտէր:

Այս երգին անունը՝ «Բուր յոյսերս կոտրուեցան» էր:

3 Հոկտեմբեր 2003 թուակիր «MILLİYET» թերթին մէջ հրատարակուած, Ամերիկային Թուրքիոյ հետ DUBAI-ի մէջ ստորագրած ութուկէս միլիառ տոլարնոց ամերիկեան օգնութեան պայմանները երբ կարդացինք, այս երգը յիշեցինք:

Ամերիկան, Թուրքիոյ ութուկէս միլիառ տոլար օգնութիւն կատարելու համար, ալ ի՞նչ պայմաններ դրեր է, ի՞նչ պայմաններ:

Մեր գիտցածով՝ այս վիճակին կ'ըսեն՝ «աքցանի մէջ առնել»:

«MILLIYET» թերթը այս պայմաններուն ինը հատը շարեր է: Բայց, մեզի համար, ամէնէն կարելորը 6 թուակիր պայմանն է՝

«6.- Ամերիկեան ԱԳ նախարարութիւնը, եթէ ստուգէ, որ Թուրքիան Իրաքի մէջ չի գործակցիր, եւ կամ թուրք զինուորը «միակողմանի» Հիւսիսային Իրաք մտած է, եւ կամ մարդկային հարցերու մէջ պահանջուած փոխադարձ օժանդակութիւնը չէ ապահովուած, եւ ԱՄՆ-ի ԱԳ նախարարութիւնը այս պարագան տեղեկագրէ՝ օգնութիւնը չի տրուիր»:

Այս ըսել է թէ Թուրքիան ասկէ յետոյ (1974թ. Կիպրոսի մէջ ըրածին նման) պատրուակ մը գտնելով, Հիւսիսային Իրաքի մէջ կազմուած կէս պաշտօնական քրդական պետութեան վրայ յարձակելով, քիւրդերը պիտի չկարենայ մաքրագործել:

Երեւոյթներէն դատելով՝ այնպէս կը կարծենք, թէ Ամերիկան 11 Սեպտեմբեր 2001թ. NEW YORK-ի ողբերգութեան պատասխանատուները եղած Սաուտի Արապիոյ սիւննի միւսիւմանները պատժելու համար, չի միւսիւմանները զօրացնելու ռազմավարութիւնը կը գործադրէ:

Ամերիկան՝ Իրաքի մէջ, սիւննի եղող Սատտամ Հիւսէյնի իշխանութիւնը կործանեց եւ Իրաքի մեծամասնութիւն եղող չիիները իշխանութեան բերաւ:

Եւ նոյն ատեն, շատ շփացող եւ Իրաքի պատերազմին ամերիկացիներուն իր հողերէն դէպի Իրաք արշաւելու իրաւունք չտուող Թուրքիային ալ՝ պատժել սկսած է:

Հիւսիսային Իրաքի մէջ կազմուած քրդական պետութեան՝ Ամերիկան այսօր բացայայտօրէն թիկունք կը կանգնի:

Եւ Հիւսիսային Իրաքի մէջ քրդական անկախ պետութեան մը հռչակուիլը՝ այլեւս քանի մը տարւան հարց է:

Ամերիկային տուած ութուկէս միլիառ տոլարնոց օգնութեան դիմաց, Թուրքիոյ Հիւսիսային Իրաք չխուժելը ընդունիլը՝ քրդական պետութիւնը «DE FACTO» ճանչնալ ըսել է:

Մինչդեռ, Իրաքի պատերազմը չ'սկսած՝ Թուրքիա ի՛նչ երազներ կը տեսնէր:

Թուրքիան Քէրքիւկի քարիւղի հանքերը ձեռք պիտի անցընէր, եւ 1915թ. հայերը մաքրագործելուն նման, «պատերազմի ընթացքին այս տեսակ բաներ կ'ըլլան» ըսելով, Հիւսիսային Իրաքի մէջ գտնուող քիւրդերը պիտի մաքրագործէր:

Շատ մեղք եղաւ:

Եկուր, այս վիճակին մէջ, «Բոլոր յոյսերս կոտորուեցան» երգը մի՛ երգեր:

Թիւ 70

«Նայիրի», 21 Հոկտեմբեր 2003, Թիւ 205

**ԹՐՔԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԵՒ ԷՏՐԻՆԵԳԱՓՈՒԻ ՄԵՋ ՊԵՉՈՒՆԵՐՈՒ ԹԱՂԱՍԱՍԸ, ԴՐԱՄ ՏՐՈՒԵԼՈՎ ԿԱՏԱՐՈՒՈՂ ՊԵՉՈՒՆԵՐՈՒ ՇԻՆՏՈՒ ԿՈՒՒՆԵՐԸ**

Ի՞նչ է պատճառը, չենք գիտեր: Թրքերէն թերթերը եթէ կարդալու ըլլանք, մեր միտքը կու գայ՝ ժամանակ մը առաջ էտրինէգափուի գնչուներու թաղամասին մէջ կատարուող գնչուներուն շինծու կռիւները: Թրքական ժողովրդական թերթերուն ամէնօրուայ վերտառութիւնները 20 սանդիմնոց (PUNTO)-ներով է:

Եւ ի՛նչ գոեհիկ խօսքեր, եւ մանաւանդ՝ ի՛նչ պոռոտախօսութիւններ, ի՛նչ պոռչտութիւններ:

Եւ էտրինէգափուի գնչուներուն կռիւներուն մակարդակով գրութիւններ:

Բայց, երբեմն, թրքական թերթերուն մէջ, շատ լուրջ գրութիւններ ալ կը տեսնենք:

18 Հոկտեմբեր 2003 թուակիր «HÜRRİYET» թերթին, «Մամուլէ հատընտիրներ» էջին մէջ, İSMET BERKAN-ին «Իրաքի մէջի քառասուն աղուէսները» վերնագրով գրութիւնը, այս լուրջ գրութիւններէն մէկն է:

Իսմէթ Պերքանը, այս գրութեան մէջ, Իրաքի կացութիւնը շատ լաւ ախտաճանաչելով կ'ըսէ թէ «Ամերիկեան քաղաքականութեան նպատակը այսօր, սուննիները եւ շիիները իրարու դէմ հանելով, Իրաքի մէջ երկար ատեն մնալ է»:

Շատ ճիշդ է. ինչպէս որ գիտէք, ծանօթ կարգախօս է՝ «Բաժանէ եւ իշխէ»:

Աշխարհի իշխանութեան տէրերուն առաջնակարգ քաղաքականութիւնն է այս:

Վերջին շրջաններուն, Ամերիկային Եուկոսլաւիոյ միութիւնը քանդելով զայն մանր-մանր պետութիւններու վերածելը՝ այս քաղաքականութեան արդիւնքն է: Այս բաժանուած Պալքանեան երկիրներուն մէջ այսօր, ամերիկեան շատ մեծ զինուորական խարխիսներ կառուցուեցան:

Աշխարհ կը շարունակէ դառնալ, եւ տեւաբար փոփոխութիւններ կը կատարուին: Նոյնպէս՝ մեծ պետութիւններուն ռազմավարութիւններն ալ կը փոխուին:

Մեծ պետութիւնները, իրենց աշխարհակալ իշխանութիւնը կարենալ շարունակելու համար, ըստիպուած են՝ գլուխ վերցնողներուն, շատ ուժեղացողներուն եւ «չփացածներուն» գլխուն զարնել:

Ամերիկան «արթնցող» իսլամական վտանգը կանխելու համար Աֆղանիստանը զարկաւ, եւ Իրաքը կտոր-կտոր ըրաւ:

Վաղը, կարգը որո՞ւն պիտի գայ:

Մենք կը կարծենք, թէ կարգը Թուրքիոյ պիտի գայ:

Թուրքերը, միջոց մը յետոյ, 100 միլիոն ըլլալու երազը կը տեսնեն:

Թուրքերուն, թուրանական եւ իսլամական իտէալներն ալ՝ բոլորին ծանօթ են:

Ամերիկան, այս վտանգին դեմ, առաջին գործ ըլլալով, Հիւսիսային Իրաքի մէջ քրդական պետութիւն մը կազմելու վրայ է:

Յետո՞յ: Յետոյ ի՞նչ ըլլալիքը գիտնալու համար, «գուշակ» ըլլալու պէտք չկայ:

Կարգը, Թուրքիոյ մէջ գտնուող, քսան միլիոնէ աւելի եղող քիւրտերուն պիտի գայ:

Թիւ 71

«Նայիրի», 4 Նոյեմբեր 2003, Թիւ 206

**ՊՈԼՍՈՅ ԱՐՔԵՕԼՈՒԹԻ ՏՆՕՐԵՆԻՆ  
ԲԱՅ ՆԱՄԱԿ ՔԻՉԻՔՉԷՔՄԵՒՇԷԻ ԲԱՐՉՈՒՆՔՆԵՐՈՒՆ  
ՎՐԱՅ ՄԻՆՉԵԻ 1960-ՆԵՐԸ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՅՈՂ  
ՀԻՆ ՀՈՈՍԵԱՎԱՆ «RHEGIUM» ՔԱՂԱՔԻՆ  
ՓԼԱՏԱԿՆԵՐԸ ԻՆՉ ԵՂԱՆ**

Այսօր Քիւչիւքչէքմէճէ կոչուող քաղաքին տեղը՝ հինէն հռոմէացիներուն հիմնած «Rhegium» քաղաքը կար:

Հռոմէացիներէն յետոյ բիւզանդացիները Rhegium-ը պալատներով եւ եկեղեցիներով զարդարեցին:

Բայց յետոյ, օսմանցի կոչուած աւարառու աւազակները եկան եւ այն գեղեցիկ Rhegium քաղաքը հիմնայատակ քանդեցին:

1938-ին արքէօլօկ Mamboury-ի կողմէ Քիւչիւքչէքմէճէի բարձունքներուն վրայ պեղումներ կատարել տրուեցաւ եւ պատմական Rhegium-էն փլատակներու շրջան մէջտեղ հանուեցաւ:

Մենք, 1953թ. չատ մը անգամներ այս Rhegium քաղաքին յայտնաբերուած փլատակները այցելեցինք:

Փլատակ քաղաքին մուտքին, վրան Rhegium գրուած ցուցատախտակ մըն ալ դրուած էր:

Մեր այս այցելութեան օրերուն Rhegium քաղաքին փլատակներէն շատ մը լուսանկարներ քաշեցինք:

Հիմա, Պոլսոյ արքեօլոժի տնօրէնին կը հարցնենք՝

1938-ին արքեօլոկ Mamboury-ին մէջտեղ հանած, Հին Հռոմէացիներուն հիմնած Rhegium քաղաքին փլատակները ի՞նչ եղան:

Մենք, մեր ծանօթներուն հարցուցինք:

Քիւչիւքչէքմէճէի բարձունքներուն վրայ պատմական քաղաքի մը փլատակներուն գոյութենէն ոչ մէկը տեղեակ է:

Յարգելի պարոն Պոլսոյ արքեօլոժի տնօրէն՝

Ըսուածները իրականութի՞ւն են:

Պատմական Rhegium քաղաքին փլատակնե՞րն ալ քանդեցիք:

Խնդրենք պատասխան տուէք:

Յարգանքներով՝ Յ. Չ.

Թիւ 72

«Նայիրի», 18 Նոյեմբեր 2003, Թիւ 207

**«ԵԹԵ ԱՆՉԱՍ ՄԸ ՍԿՍԻ, ԱՆԿԷ ՅԵՏՈՅ,  
ԳՈՒՂԱՅԻ ՀԻՒՍԵԻ ՊԷՍ ԿԸ ՔԱԿՈՒԻ»**

15 Նոյեմբեր 2003 թուակիր «HÜRRİYET» թերթին «Մամուլէն հատրնտիրներն» էջին մէջ GÜNGÖR MENGİ-ին շատ կարեւոր գրութիւնը կարդացինք:

Կը հրատարակենք, նոյնութեամբ, Կիւնկօր Մէնկիին գրածները.

«Օրէնքին ուժին ականջ չկախող մեր ազգային նկարագրին պատճառաւ, մենք նոր եւ մեծ հարկային բեռի մը տակ պիտի մտնենք:

Կիպրացի յոյն TITIANA LOIZIDU-ն Կիրնէի մէջ իր ունեցած տունը եւ հողը գրաւուած է ըսելով, 1990թ., Եւրոպայի

մարդկային իրաւունքներու դատարանին առջեւ, Թուրքիան դատի տուաւ:

Եւ Թուրքիան հինգ տարի առաջ 650 հազար տոլար հատուցում վճարելու դատապարտուեցաւ:

Այս դատին տեսնուիլը՝ ԵՄԻԴ.-ին կողմէ, Թուրքիան «բռնագրաւիչ» նկատելուն մէկ նշանն էր:

Եթէ կանխելու միջոցներ չառնենք, ան, մեր գլխուն գալիք, մեծ հարուածին մունետիկն է:

Բայց DENKTAS եւ անոր խորհրդատուն MÜMTAZ SOY-SAL-ը դատարանի որոշումը լուրջի չառնելէն զատ, յունական կալուածները՝ Թուրքերուն կողմէ սեփականացուելուն գործողութիւնը չարունակեցին: Եւ նոյն մտայնութեամբ, Անգարայի կառավարութիւններուն տգիտութիւնը՝ այս պարտքը իր տոկոսներով, մէկ միլիոն տոլարի բարձրացուց:

Վերջապէս AKP-ի կառավարութիւնը, անցեալ Յուլիսին հասկցուց հատուցում վճարելու պատրաստ ըլլալը, բայց նաեւ պահանջեց, որ այս ու նման դատական դիմումներ օրինական չնկատուին այլեւս:

Բայց այս փափաքը չընդունուեցաւ: Եւ ինչ բանէ որ կը վախնայինք մեր գլխուն եկաւ:

Վերջնագիր ստացանք: Եւրոպական խորհուրդը LOIZIDU-ի հատուցման կապակցութեամբ տեղեկացուց, որ եթէ, մինչեւ 19 Նոյեմբեր, հատուցումը չվճարուի, Թուրքիոյ դէմ պատժական միջոցներ պիտի առնուին: Այս պատժական միջոցները՝ Եւրոպական խորհուրդին երեսփոխանական ժողովին մէջ Թուրք երեսփոխանները քուէարկելու իրաւունքէն զրկելէն սկսելով, մինչեւ Եւրոպական խորհուրդէն մեր արտաքսուելուն կրնայ հասնիլ:

Աւելի վատը մեր՝ Եւրոպական միութիւն մտնելու երազին վերջաւորութիւնը պիտի ըլլայ:

Ուրիշ վտանգ մը՝ LOIZIDU-ի դատը օրինակ վերցնելով, Թուրքիոյ վրայ դրամական մեծ ճնշում մը բանեցնելու հաւանականութիւն մը կը գոյանայ:

Որովհետեւ Թուրքիոյ Կիպրոս միջամտութենէն վերջ, 200 հազարի մօտ յոյներ գաղթելու ստիպողութեան ենթարկուած էին:

LOIZIDU-ի դատը եթէ օրինակ առնուի՝ կենթադրուի որ, այնուհետեւ, Թուրքիա 20-25 միլիառ տոլար հատուցում վճարելու ստիպողութեան մատնուի»:

«Հիւրընկէթ» թերթին մէջի Կիւնկօր Մէնկիի գրութեան մեզ հետաքրքրած մասը նոյնութեամբ հրատարակեցինք: Մեր այս գրութենէն հասկցածը այն է, որ Թուրքիա, ստիպողաբար, «Օրինաց պետութիւն» մը ըլլալու ճամբու մէջ է:

1974թ. Թուրքիոյ Կիպրոսի մօտաւորապէս կէսին չափ մաս մը գրաւելուն պատճառաւ 200 հազար յոյներ, իրենց հազարաւոր տարիներէ ի վեր սեփականութիւնը եղող հողերը, տուները եւ ամէն բանը լքելով, Կիպրոսի յունական մասը ապաստանած էին:

Եւ Կիւնկօր Մէնկիին գրածին համեմատ՝ Թուրքիա ի վերջոյ, այս յոյն գաղթականներուն ինչքերուն փոխարէն, նուազագոյն 25 միլիառ տոլար վճարելու պիտի ստիպուի:

Հիմա գանք Հայկական ցեղասպանութեան: Թուրքիոյ 1915թ. հանած «Աքսորի օրէնքով», էտիրնէէն մինչեւ Վան երկարող հողերուն վրայ հազարաւոր տարիներէ ի վեր ապրող նուազագոյն 3 միլիոն հայերը դէպի Սուրիական անապատները աքսորուեցան:

Այս աքսորի որոշումին ենթակայ հայերուն միայն 24 ժամ տրուեցաւ ճամբայ ելլելու համար:

Եւ անոնք, իրենց բոլոր ինչքերը լքելով, աքսորուեցան: Այս 3 միլիոն հայ աքսորեալներուն կէսը՝ ճամբան սպաննուեցան: Այս աքսորը, իրականութեան մէջ, սաղայէլական ձեւով ծրագրուած՝ զարհուրելի ցեղասպանութիւն մըն էր: Դուք, թուրքե՛ր, մինչեւ այսօր, Հայկական ցեղասպանութիւնը կ'ուրանաք:

Բայց ձեր հանած աքսորի օրէնքով, հայերը տարագրած ըլլալնիդ չէք կրնար ուրանալ:



Այս աքսորուած 3 միլիոն հայերուն հողերը, ապրանքները, ինչքերը, ունեցած ամէն բաները գրաւեցիք:

Եւ ձեր հանած նոր «EMVALI METRUKÉ» - «Լքեալ գոյքի» օրէնքով՝ ձեր աւարառութիւնը օրինականացուցիք: «EMVALI METRUKÉ» լքեալ գոյք ըսել է:

Բայց այս գոյքերը անտէր չէին: Խեղճ հայերը դուք աքսորեցիք:

Եւ անոնք չվերադարձան: Մեծ մասը սպաննուեցան: Բայց, եթէ նոյնիսկ ողջ մնային, իրենց երկիրը չէին կրնար վերադառնալ: Որովհետեւ ճամբաները գոցած էիք:

Որովհետեւ մինչեւ 1945 թուականը, Պոլսէն Քիւչիւքչէք-մէճէէն անդին եւ Գատը գիւղին կողմը, Գարթալէն անդին, կեաւուրները չէին կրնար անցնիլ:

Կեաւուրներուն արգիլուած էր: Հայերը՝ ոչ մէկ բան մոռցած են:

Եւ հայերը՝ կիպրացի յոյն TITIANA LOIZIDU-ի նման, Եւրոպայի մարդկային իրաւունքներու դատարանին առջեւ, իրենց իրաւունքները պիտի փնտռեն:

Մի՛ մոռնաք, որ ցեղասպանութեան ոճիրը՝ ժամանցման օրէնքին ենթակայ չէ:

Թիւ 73

«Նայիրի», 1 Յունուար 2003, Բացառիկ

**«ՈՒ Կ'ԻՅՆԱՅ ԱՅՆ, ՈՐ ԿԸ ԾՆԿԷ ՎԱԽՈՎ,  
ԶԻ ԹՈՒՐՆ ԱԻԵԼԻ ԱՐԴԱՐ Է ԽԱՉԷՆ,  
ԶԻ ԿԵԱՆՔԵՆ ԱՆՈՆՅ՝ Է ՄԻԱՅՆ, ՈՐ ՔԱՅ ԵՆ,  
ԱՆՈՆՅ՝, ՈՐ Կ'ԱՊՐԻՆ ՈՒՐԻՇԻՆ ՄԱՀՈՎ»:**

Լոզան 1909

ՈՌԻՔԷՆ ՍԵԻՍԿ

(ԲԱՆԱՍՏԵՂԾ-ԳՐՈՂ- 24 ԱՊՐԻԼ 1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐԷՆ)

Բանաստեղծ-գրող Ռուբէն Սեւակին այս քառեակը ինչո՞ւ  
նշեցինք:

Որովհետեւ հայերուն, 1915թ. Հայկական ցեղասպանու-  
թենէն 88 տարի յետոյ, մինչեւ այսօր խելքերնին գլուխնին  
չեկաւ: Եւ նոյնիսկ, մինչեւ հիմա, հայերը՝ ծաղիկ-թիթեռնիկ  
եւ ապրիմ-մեռնիմ-ի բանաստեղծութիւններով կը գինովնան  
եւ արդարութիւն, եղբայրութիւն եւ յաւիտենականութիւն  
կոչուած անիրական խօսքերով՝ երազներ կը հիւսեն:

Ասոր մեծագոյն ապացոյցը, հայերուն՝ միսթիք բանաս-  
տեղծ Գրիգոր Նարեկացիին հանդէպ ունեցած պաշտամունքն  
է: Ո՞վ է Գրիգոր Նարեկացին:

Հայերուն, միջնադարեան գրականութեան մեծագոյն  
միսթիք բանաստեղծը եւ Սուրբ կրօնականն է:

951-ին, Վանայ լիճին հարաւային ափերը գտնուած մէկ  
գիւղը ծնած է, եւ Վանայ լիճին եզերքի Կյավաչի (այսօրուան  
անունով՝ Կեվաչի) մօտերը գտնուող Նարեկ գիւղը, 10-րդ  
դարուն կառուցուած շատ հռչակաւոր Նարեկավանքի մէջ  
կրօնական դաստիարակութիւն ստացած եւ ամբողջ կեանքի  
տեսողութեան կրօնին եւ Աստուծոյ ծառայելէ յետոյ, 1003  
թուականին վախճանած է:

Իր ապրած շրջանին գրած կրոնական նիւթերով բանաստեղծութիւնները ոչ միայն հայկական գրականութեան, այլեւ քրիստոնեայ աշխարհին ամէնէն արժէքաւոր երկերուն մաս կը կազմեն:

Վախճանելէն յետոյ, հայկական եկեղեցին՝ Գրիգոր Նարեկացին Սուրբերու աստիճանին բարձրացուցած է:

Գրիգոր Նարեկացին դամբանը եւ իր ապաշխարած վայրը՝ Նարեկավանքը, հրաչքներ գործուած սրբատեղի ըլլալով, մինչեւ 1915-ի հայկական ցեղասպանութիւնը հայոց կողմէ միշտ այցելուած է:

Եւ հայերը, դարեր տեսողութեամբ, այս միսթիք բանաստեղծին, երկրային կեանքի հետ կապ չունեցած այս կղերականին գրութիւններուն եւ աղօթքներուն ազդեցութեան ենթարկուած ըլլալով՝ երեւակայութիւններով օրօրուած են, եւ իրականութիւնները չեն կրցած տեսնել:

\* \* \*

2003 թուականը, Գրիգոր Նարեկացին մահուան հազարամեակը ըլլալուն, այս տարի Հայ եկեղեցին, Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսին կարգադրութեամբ, Հայաստանի եւ նաեւ Սփիւռքի բոլոր կեդրոններուն մէջ, Գրիգոր Նարեկացին համար արարողութիւններ կատարուեցան:

Մինչ այդ, Թուրքիոյ մէջ (Երոպական միութեան մէջ մտնելու յոյսով), շատ դեմոկրատական անուշ «հով» մը փչել սկսած էր:

Այս անուշ գարնան մթնոլորտէն օգտուիլ ուզող Պոլսոյ հայերը Գրիգոր Նարեկացին դամբանին եւ վանքին գտնուած տեղը՝ Վանի շրջակայքի դէպի Նարեկ գիւղը, ուխտագնացութիւն մը կազմակերպել որոշեցին:

Նոյնիսկ այս ուխտագնացութեան լուրը առնող Ֆրանսահայերէն ալ երթալու որոշում տուողներ եղան:

Եւ Ֆրանսայէն Նարեկ երթալու որոշում տուողներէն մէկը մեր ընկերն էր:

Իրեն ըսինք. «Պարապ տեղը մի երթար: Ո՛չ Նարեկացիին դամբանը մնացած է հոն, ո՛չ ալ՝ Նարեկավանքը: Բոլորն ալ ուժանակով օդը հանուեցան: Հիմնայատակ կործանեցին»:

«Դուն կը սխալիս»,— ըսաւ մեր ընկերը: Մենք ալ իրեն՝ «գնա՛ եւ տես նայինք» ըսինք: Եւ մեր ընկերը գնաց:

Վերադարձին, մեզ պիտի փնտռէր:

Վրայէն ամիս մը անցաւ, եւ մեր ընկերը մեզ չփնտռեց: Միջոց մը յետոյ, մենք զինքը փնտռեցինք: Կինը եղաւ հեռաձայնէն պատասխանողը.

«Թուրքիայէն վերադառնալէն յետոյ, շատ յուսալքուած վիճակ մը ունի:

Ոչ մէկուն հետ տեսնուիլ կ'ուզէ»,— ըսաւ:

Եւ վերջապէս, օր մը մեր ընկերը եկաւ, եւ լալով մեզի փաթթուեցաւ, եւ ըսաւ, թէ «Շատ իրաւունք ունիս եղեր: Ո՛չ Նարեկացիին դամբանը կայ, ո՛չ ալ Նարեկավանքը: Նարեկ գիւղին անունը՝ հիմա «Եէմիչլիի» փոխեր են»:

Գիւղացիներուն հարցուցինք. «Նարեկավանքը ի՞նչ եղաւ: Նարեկացիին դամբանը ո՞ւր է»: Ոչ մէկը պատասխանեց: Իբր թէ բանէ մը տեղեակ չէին:

Միջոց մը ետք, գիւղացի մը մօտեցաւ եւ ըսաւ, թէ «Իմ հայրս իսլամացած հայ էր: Ես ձեզի պատմեմ եղածները: Շատ տարի առաջ էր: Օր մը, զինուորական մեծ բեռնակառքեր մեր գիւղը գալ սկսան: Առջեւէն JEEP-եր կուգային՝ մէջը սպաներով: Սպաները վար իջան եւ բեռնակառքերու մէջի զինուորներուն հրաման տուին, որ բեռները պարպեն:

Եւ բեռնակառքերուն մէջէն շուրջ հազար երիտասարդներ իջան: Այդ երիտասարդները շրջակայքի գիւղերէն հաւաքեր էին: Եւ անոնց ձեռքերուն բահ-բրիչներ տուին եւ երիտասարդները՝ սպաներուն եւ զինուորներուն հսկողութեան ներքեւ, վանքը եւ եկեղեցիները սկսան փլցնել:

Եւ այս փլուզումի գործողութիւնը գրեթէ չաբաթ մը տեւեց: Այն մասերը, որ չկրցան փլցնել, ուժանակով օդը հանեցին: Եւ այս ձեւով, ամէն բան, հիմնայատակ կործանեցին:

Վերջին չրջաններուն մեր գիւղը, ձեզ նման թուրիսթներ կու գան, եւ նարեկավանք կը հարցնեն: Մենք ալ չենք կրնար պատասխանել»:

Թիւ 74

«Նայիրի», 20 Յունուար 2004, Թիւ 208

### «ՀԱՅՐ ՈՒ ՉԱԿՎ՝ BUSH-ԵՐՆ ԱԼ ԴԱՏԱՐԱՆԻ ՅԱՆՁՆՈՒԵԼՈՒ ԵՆ»

18 Դեկտեմբեր 2003 թուակիր «HÜRRİYET» թերթին մեջ «YALÇIN BAYER»-ին «Հայր ու զաւակ BUSH-երն ալ դատարանի յանձնուելու են» վերտառութեամբ գրութիւնը կարդացած միջոցին, աչքերնուս չհաւատացինք:

Հայր BUSH-ին 1991-ին եւ զաւակ BUSH-ին 2003-ին Իրաքը անիրաւարար գրաւելնուն դէմ ելլելով «Հայր ու զաւակ BUSH-երուն՝ իբր պատերազմի յանցապարտ դատարան յանձնուելնին պէտք է»,— կ'ըսէր «Հիւրրիյէթ» թերթին յօդուածագիրը:

Աման էֆենտի: Այս ինչ մարդասիրական արտայայտութիւններ են: Ապրիք թուրքեր: Կարծենք, թէ դուք, վայրագութենէ դէպի մարդկութիւն յառաջանալ սկսած էք:

Բայց, ինչո՞ւ է այս 180 աստիճանի փոփոխութիւնը: 1974-ին Կիպրոսի վրայ յարձակելով՝ կիպրացի յոյները ջարդողները թուրքերը չէի՞ն:

Մինչեւ վերջին չրջանները, Արեւելեան Անաթոլիոյ մէջ քրդական գիւղերը բոցավառ մեքենաներով այրողները այս թուրքերը չէ՞ն:

Հիմա ի՞նչ եղաւ, որ թուրքերը Իրաքը գրաւող ամերիկացիները յանցաւոր կը նկատեն: Անպայման պատճառ մը ըլլալու է:

Բնաւ գայլը գառնուկի կը վերածուի՞: Այո՛, շատ կարեւոր պատճառ մը կայ:

Որովհետեւ Իրաքը գրաւող ամերիկացիներուն առաջնակարգ զինակիցը քիւրտերն են:

Ամերիկացիները, Հիւսիսային Իրաքի մէջ կեդրոնական քաղաք եղող Քերքիւկի (առժամաբար ոչ պաշտօնական) քրդական պետութեան հետ կը գործակցին:

Այս քրդական պետութիւնը՝ դեռ 1991-ին, հայր BUSH-ին առաջին Իրաքի պատերազմին, *DI FACTO* կազմուած էր արդէն:

Այդ օրէն ի վեր, այս քրդական պետութիւնը՝ իր բանակով, Ազգային ժողովով, կառավարութիւնով եւ իրեն յատուկ դրամով, իսկական պետութիւն ըլլալով գոյութիւն ունէր արդէն:

Եւ ամերիկացիները՝ Իրաքի մէջ տեւական կարենալ մնալու համար, ծանօթ օրէնքին հետեւելով «Բաժնէ եւ իշխէ», ստիպուած են Իրաքը բաժնելու:

Եւ Իրաքը իր զանազան ազգութիւններով եւ դաւանանքներով, բաժնուելու ամէնէն ատակ պետութիւնն է:

Եւ ամերիկացիները՝ այս գոյավիճակէն կ'օգտուին:

Միւսնի իրաքցիներու դէմ՝ չի իրաքցիները կը զօրացնեն:

Եւ չիիները եւ սիւննիները իրարու դէմ կը հանեն:

Մինչդեռ քիւրտերը ամերիկացիներուն առաջնակարգ բարեկամները եւ ամէնէն վստահելի ազգն է:

ԱՄՆ-ի արտաքին գործոց նախարար COLIN POWEL-ը «Թէեւ քրդական պետութեան մը արտօնութիւն չենք կրնար տալ եւ Թուրքիան մեր դէմը չենք հաներ» ըսեր է 7 Յունուար 2004-ին:

Բայց այս խօսքերը, միայն խօսք ըլլալով, այդպէս ալ կը մնան:

Այս տեսակ խօսքերը, դիւանագիտական լեզուին մէջ տեղւոյն եւ օրուան համեմատ կատարուած արտայայտութիւններ են:

Իրականութիւնն այն է, որ ամերիկացիներուն Իրաքի մէջ ունեցած ամէնէն զօրաւոր «զէնքը» քիւրտերն են, գործածելի թէ՛ իրաքցիներուն եւ թէ՛ մանաւանդ, թուրքերուն դէմ:

Որ թուրքերը շատ չչփանան, եւ շատ առաջ չերթան:  
Եթէ ոչ՝ ուշադրութիւն.—

«Քրդական պետութիւնը պաշտօնապէս կը ճանչնանք, հա՛»:

Թիւ 75

«Նայիրի», 3 Փետրուար 2004, թիւ 209

### ԿԻՊՐՈՍԻ ԻՍԿԱԿԱՆ «ՕՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»

Կիպրոսի խնդրին համար, երկար տարիներէ ի վեր, կը խաբեն թուրք հասարակութիւնը:

«Կիպրոսը՝ թուրքիոյ ապահովութեան համար, շատ կարեւոր է»:

«Կիպրոսը՝ թուրքիոյ օդանաւային զրահաւորն է»:

Բոլորովին սխալ եւ սուտ է:

Մինչեւ 1950 թուրքիոյ արտաքին գործերու նախարարը՝ Ֆուատ Քէօրրիկլիին պաշտօնապէս ըսածին համեմատ, թուրքիան՝ «Կիպրոս» ըսուած հարց մը չունէր:

Բայց յետոյ, կամուրջին տակէն շատ ջուրեր անցան:

Կիպրացի յոյներուն «ENOSIS»-ի փափաքը՝ անգլիացիները Կիպրոսը կորսնցնելու վտանգին հետ դէմ առ դէմ բերաւ:

Եւ անգլիացիները՝ առաջ քշեցին թուրքերը կիպրական հարցի մէջ:

Եւ շատ արիւնոտ օրեր, շատ ցաւոտ օրեր ապրուեցան:

Եւ ասոր «չնորհիւ», անգլիացիները կարողացան մնալ Կիպրոսի մէջ:

1973-ին Եգիպտոսի նախագահ Անուար Սատաթ, հրէաներուն տօն եղող «KIPPOUR»-ի օրը՝ յարձակեցաւ Իսրայէլի վրայ:

Եւ Իսրայէլ, պատերազմին սկիզբը, շատ դժուար օրեր անցուց, բայց, ի վերջոյ, պատերազմը Իսրայէլը շահեցաւ:

Եւ «KIPPOUR»-ի պատերազմի օրերուն մէջտեղ ելաւ, որ Կիպրոսի անգլիական խարխիսները շատ կարեւոր են՝ Իսրայէլի ապահովութեան համար:

Եւ ճիշդ տարի մը յետոյ՝ 1974-ին, Ամերիկայի արտաքին գործերու նախարար KISSINGER-ը, իր աչակերտը եղող BÜLENT ECEVİT-ին Կիպրոսը գրաւելու հրաման տուաւ:

Եւ ECEVİT Կիպրոսի կէսը գրաւեց:

Ինչո՞ւ: Ինչպէ՞ս: Ո՞ր իրաւունքով:

Կիպրոսի մէջ, հարիւրին միայն տասնըհինգը եղող (իբր թէ) թուրք ժողովուրդին վրայ յենելով, ինչպէ՞ս կրնաք Կիպրոսին կէսը գրաւել:

Այս խնդիրը KISSINGER-ին հարցուցէք:

Մինչ այդ, նոր տեղեկացանք՝ ILGAZ ZORLU-ին ըսածին համեմատ՝ ECEVİT-ին կինն ալ RAHŞAN ECEVİT-ը (սելանիկցի դաւանափոխ հրէայ) Սապաթայական է եղեր:

Բնաւ չեմ գարմանար: Ռահշան էճեւիտ, Պիւլենտ էճեւիտ եւ KISSINGER:

Հիմա հասկցա՞ք գործին նուրբ կէտը:

1974-էն ի վեր եւ մինչեւ այսօր, Կիպրոսի կէսը թուրքերուն ձեռքն է:

Այս պայմաններուն մէջ, յոյները Կիպրոսի անգլիական խարխիսներուն դէմ, բան մը չեն կրնար ընել: «Առնողը գոհ է, ծախողը՝ գոհ»:

Բայց սա միջոցին, գործը արողը Եւրոպական միութիւնը եղաւ:

Մայիս 2004-էն սկսեալ, Կիպրոսի յունական պետութիւնը, իսկական անդամ ըլլալով՝ Եւրոպական միութեան մաս պիտի կազմէ:



Այս վիճակին մէջ, Կիպրոսի թրքական մասը ի՞նչ պիտի ըլլայ... Եւ Կիպրոսի թուրք ժողովուրդը ճակատագրական դեր խաղաց:

Եւ թուրքիան ստիպուած եղաւ Կիպրոսի յունական պետութեան հետ բանակցութեան մօտենալու:

Եւ այս միջոցին, Կիպրոսի թրքական մասին մէջ, (իբր թէ) թրքական կառավարութեան վարչապետի պաշտօն ստանձնեց՝ յոյներուն հետ համաձայնելու կողմնակից թալաթը:

Ամէն բան լաւ: Բայց սա թալաթ անունը գործը կը խանգարէ:

Մեր հասկցածին չափ՝ այս թալաթին հայրը՝ 1915-ի Հայկական ցեղասպանութեան առաջնակարգ պատասխանատուն եղող թալեաթ փաշային հիացող անձ մըն է անպայման, որ իր տղուն անունը թալաթ կոչեր է:

Թալաթին անունը կրող մէկու մը խօսքին չի հաւատացուիր:

Որովհետեւ մինչեւ 1915-թուականը, թալեաթ փաշան հայերուն հետ «եղբայր» էր:

Բայց 1915-ին թալեաթ փաշան՝ իր հայ «եղբայրներուն» բոլորն ալ սպաննել տուաւ:

Այս կիպրացի թալաթը արդեօ՞ք, կիպրացի յոյներուն գլխուն ի՞նչ խաղեր պիտի խաղայ:

Թիւ 76

«Նայիրի», 17 Փետրուար 2004, թիւ 210

**ԿԻՊՐՈՍԻ ՀԱՐՅԻՆ ՍԷՉ՝**

**ՎԵՐՋԻՆ ԱՍԵՆԱՎԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԸ ԻՆՉ Է**

Կիպրոսի յոյն նախագահ Փափատօրուպի եւ Կիպրոսի թրքական կողմին «նախագահ» DENKTAS-ին, քանի մը օրէ ի

վեր Նիւ Եորքի մէջ կատարածը սակարկութեան տեսակցութիւններ են: Բացարձակապէս ո՛չ:

Ամէնէն կարելոր լուրը, Իսրայէլի նախկին արտաքին գործերու նախարար՝ Շիմոն Փերէզին առջի օր Անգարա ժամանելն է:

Ասկէ առաջուան մեր գրութեան մէջ ալ նշած եւ «1973-ին Իսրայէլի եւ Եգիպտոսի միջեւ կատարուած Քիրուրի պատերազմին, Կիպրոսին Իսրայէլի ապահովութեան համար շատ կարելոր եղած ըլլալը մէջտեղ ելաւ» գրած էինք:

Այդ պատճառաւ, Նիւ Եորքի մէջ կատարուած Փափառութեան եւ Տենքթաչի տեսակցութիւնները, բնաւ կարելոր չեն:

Վերջին որոշումը՝ Անգարա ժամանող Շիմոն Փերէզէն պիտի գայ:

Եւ Փերէզը ինչ որ ըսէ, անոր խօսքը իր տեղը պիտի բերուի:

Անկէ յետոյ, բոլոր ըսուածները, չաղակրատութիւն եւ ձարոտութիւն են:

Աւելի ճիշդ՝ թատրոն է: Թուրքիան, Կիպրական հարցին մէջ քչողը արեւմուտքցիներն են:

Արեւմուտքցիները կը վախնան, որ Կիպրացի յոյները «էնօսիս» հռչակելով անգլիական խարիսխները կը փակեն եւ զիրենք հոնկէ կը հեռացնեն:

Եւ այդ պարագային, Իսրայէլի ապահովութիւնն ալ վտանգի կ'ենթարկուի:

Թուրքե՛ր, դուք բնաւ մի՛ մտահոգուիք: Դուք, ուզէք կամ չուզէք, Կիպրոսի մէջ տեւական պիտի մնաք:

Որովհետեւ, թուրքերը Կիպրոսի մէջ յոյներուն դէմ հակակշռիչ ուժն են:

Յայտնի է, որ Կիպրոսի գրաւումը, ձեզի շատ սուղի կը նստի:

Ձեր պիւտճէին կարելոր մէկ մասը, Կիպրոսի ծախսերուն կ'երթայ:

Բայց, ի՞նչ կրնաք ընել: Ստիպուած էք հանդուրժել:

Հրամանը բարձր տեղէն կու գայ: Երբ Իսրայէլի ապահովութիւնը խնդրոյ առարկայ ըլլայ՝ «Բոլոր ջուրերը հոսելէ կը դադրին»: Որովհետեւ Իսրայէլ ըսել՝ «Համաշխարհայնացում» ըսել է:

Թիւ 77

«Նայիրի», 2 Մարտ 2004, Թիւ 211

## **ԱՆԹԵՊԻՆ, ՄԱՐԱՇԻՆ ԵՒ ՈՒՐՖԱՅԻՆ, ԻՐԵՆՅ՝ ԱՐՓԱՆԻ ԵՂՈՂ ԱՄԵՆԷՆ ՅԱՐՄԱՐ ԱՍՏՎԱՆ-ԱՆՈՒՆՆԵՐԸ ՈՐՈՂԵ ԵՆ**

### **1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ԵՂՈՂ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԲԱՅ ՆԱՄԱԿ**

Դուք՝ թուրքերդ, ձեր հարաւային նահանգներէն՝ Անթէպին, Մարաշին եւ Ուրֆային մէյմէկ ածական-անուն փակցուցեր էք:

Անթէպին՝ Կազի Անթէպ, Մարաշին՝ Քահրաման Մարաշ, Ուրֆային՝ Շանլը Ուրֆա - կ'ըսէք:

Մինչեւ 1915թ., Անթէպ, Մարաշ եւ Ուրֆա, հազարաւոր տարիներէ ի վեր, հայերուն կողմէ բնակուած եւ հայերուն հոն մեծամասնութիւն կազմած քաղաքներ էին:

1914-1918թթ. պատերազմին, դուք պարտուեցաք, եւ Անթէպը, Մարաշը եւ Ուրֆան՝ ֆրանսացիները գրաւեցին:

Եւ 1915թ. ցեղասպանութիւնէն ազատած, սուրի մնացորդ հայերուն մէկ մասը, ֆրանսացիներուն վստահելով, Անթէպ, Մարաշ եւ Ուրֆա վերադարձան:

Բայց 20 Հոկտեմբեր 1921-ին, ֆրանսացիները Անգարայի մէջ նորահաստատ թրքական կառավարութեան հետ, հաշտութեան համաձայնագիր ստորագրեցին:

Այս համաձայնութիւնէն յետոյ, Փրանսացիները, մէկ զիշերուան մէջ, Անթէպէն, Մարաչէն եւ Ուրֆայէն գաղտնաբար հեռացան:

Այն աստիճան գաղտնի հեռացան, որ Փրանսացի զինուորները իրենց կառքերուն անիւները՝ խոտերով փաթթեցին, որ ձայն չելլայ:

Եւ Փրանսացիները, նենգօրէն խոյս տուին, եւ այս ձեւով հայերը անպաշտպան ձգեցին:

Եւ դուք՝ թուրքերդ, պատրաստ կ'սպասէիք:

Փրանսացիներու քաշուելէն յետոյ, սոված գայլերու նման, հայերուն վրայ յարձակեցաք:

Եւ պզտիկ, մեծ, կին ու տղայ՝ առանց խնայելու, հայերուն մեծ մասը, ոչխարներու նման մորթեցիք:

Հայերուն մէկ մասն ալ, եկեղեցիները լեցուցիք, եկեղեցին կրակի տուիք եւ զանոնք ողջ-ողջ այրեցիք:

Մեր պատանեկան տարիներուն Պոլսոյ մէջ ջարդերէն հրաշքով ազատած ուրֆացի տարեց հայ կին մը մեզի պատմած էր, թուրքերուն Ուրֆայի մէջ հայերուն դէմ կատարած խժոժութիւնները:

Նոյնիսկ այսօր, ուրֆացի հայ կնոջ պատմած ջարդի զարհուրելի արհաւիրքները եթէ մտաբերենք՝ կը սարսափինք, եւ մեր մարմինը փուչ-փուչ կ'ըլլայ...

Եւ 1921-ին Անթէպի, Մարաչի եւ Ուրֆայի մէջ ձեր հայերուն դէմ կատարած վայրագութիւններուն «խորհրդանիշը» ըլլալով՝ Անթէպին՝ Կազի, Մարաչին՝ Քահրաման, Ուրֆային՝ Շանլը մակղիրները փակցուցիք:

Ո՛վ թուրքեր, եթէ ձեր մէջ մարդկային զգացում մը կայ, անպաշտպան հայերը ջարդեցիք ըսելով Անթէպին, Մարաչին եւ Ուրֆային ձեր տուած, մարդկութեան երեսին մուր եղող այդ մակղիրները փոխեցէք, եւ ահաւոր իրականութիւնը խորհրդանշող հետեւեալ անունները տուէք՝

Անթէպին՝ Գաթիլ Անթէպ (Ոճրագործ), Մարաչին՝ Քահրոլասը Մարաչ (Անիծեալ), Ուրֆային՝ Քանլը Ուրֆա (Արիւնոտ):

Թուրքերուն կատարած վայրագութիւններուն պատճառաւ՝ իբր մարդ ամոթ զգացող ՀԱՅ ՄԸ:

Թիւ 78

«Նայիրի», 16 Մարտ 2004, Թիւ 212

## 1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ԵՂՈՂ ԹՈՒՐԷՐՈՒՆ

### ԲԱՃ ՆԱՄԱԿ

### ԱՏԱՆԱՅԻ ՈՋՐԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ԻՐԱԽՈՒՆԸՆ ՄԻ ՈՒՏԵՔ

2 Մարտ 2004 թուակիր գրութեան մէջ նշած էինք՝

1915-էն մինչեւ 1922, հայերը ջարդեցիք ըսելով, Անթէպին՝ Կազիանթէպ, Մարաշին՝ Քահրաման Մարաշ, Ուրֆային՝ Շանլը Ուրֆա ըսելով մէյմէկ ածական-անուն փակցուցեր էիք:

Մենք՝ հայերս, անիրաւութեան եւ անարդարութեան չենք հանդուրժեր:

Ատանային՝ միւս քաղաքներուն ձեր ըրածին նման, ինչո՞ւ ածական-անուն մը չէք փակցուցած:

Այս ձեր ըրածը, Ատանայի ոճրագործներուն հանդէպ, շատ մեծ անիրաւութիւն է:

Մինչդեռ, Անթէպէն, Մարաշէն, Ուրֆայէն շատ աւելի Ատանային իրաւունքն է՝ այդ տեսակ «Արիւնոտ» անուն մը կրելը:

Սելանիկի մէջ տէօնմէներուն եւ ֆարմասոններուն հիմնած «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութիւնը՝ 1908-ին Պոլսոյ մէջ իշխանութեան զալէն տարի մը յետոյ, 1909-ին Ատանայի մէջ, 1915-ի Հայկական ցեղասպանութեան առաջին «փորձը» կատարել տուաւ:

1 Ապրիլ 1909-էն մինչեւ 14 Ապրիլ 1909-ը, 14 օրուան ընթացքին, Ատանայի հայ ժողովուրդը զարհուրելի եւ վայրագ ջարդերու ենթարկուեցաւ:

«Իթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան հրահանգով, Ատանայի կառավարական կազմակերպութիւնները, ջարդերուն իբր պատրաստութիւն՝ Ատանայի միւսիւման ժողովուրդին գաղտնաբար զէնք բաժնեցին եւ զինեցին:

Բանտին մէջ գտնուող 500-է աւելի ոճրագործները՝ այս ջարդերուն թո՛ղ «օգնեն» ըսելով, ազատ արձակուեցան...

Եւ 1908-ին «Ազատութեան» եկան ըսելով, ատանացի հայերը շատ գոհ էին: Ոչ մէկ բանէ լուր ունէին:

Եւ յանկարծ, 1 Ապրիլ 1909-ի օրը, ոճրագործներու եւ մարդասպաններու վոհմակները՝ հայոց թաղերուն վրայ յարձակեցան, եւ 14 օր տեւող զարհուրելի ջարդերու ընթացքին, Ատանայի եւ շրջակայքի հայերէն 30000 (երեսուն հազար) անմեղներ, ոչխարներու նման մորթուեցան:

Այդ օրերուն Եւրոպա հրատարակուած թերթերը՝ Ատանայի մէջ սպաննուած հայերուն իրարու վրայ դիզուած դիակներուն նկարներով լեցուն են:

Եւ ջարդերու շրջանին Սիհան գետը, մորթուած հայերուն արիւնով կաս-կարմիր գոյն առած էր:

Ո՛վ 1915-ի Հայկական ցեղասպանութեան պատասխանատու եղող թուրքեր.

1909-ին սպաննուած 30000 (երեսուն հազար) հայերուն մարդասպանները եղող Ատանայի ոճրագործներուն «Խրաւունքը» մի՛ ուտէք: Եւ Ատանային իրեն արժանի եղած անունը տուէք:

1909-ի Հայկական ջարդերու կեդրոն Ատանա քաղաքին ամէնէն աւելի «վայել» ածական-անունը՝ «ՀՐԷՇ ԱՏԱՆԱ» է:

Թուրքերուն կատարած վայրագութիւններուն պատճառաւ՝ իբր մարդ ամոթ զգացող ՀԱՅ ՄԸ:

Թիւ 79

«Նայիրի», 30 Մարտ 2004, Թիւ 213

**ԱԹԱԹԻՐՔԻՆ ՀՈԳԵՉԱԿԱԿԸ ԵՂՈՂ  
ՍԱՊԻՀԱ ԿԵՕԲՉԵՆԻՆ ՀԱՄԱՐ  
«ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱԳՈՒՄ ՈՒՆԻ»  
ԸՍԵԼ ՀԱՄԱՐՉԱԿՈՂ «ԱԿՕՍ»  
ԹԵՐԹԻՆ ՇԵՆՔԻՆ ԱՌՁԵԻ  
«ԳՈՐԸ ԳԱՅԼԵՐԸ» ՃՈՅՅ ԿԱՏԱՐԵՐ ԵՆ...**

...Ե՛լ թերթին, ե՛լ թերթին վարիչներուն դէմ սպառնալիքներ տեղացուցեր, պոռագեր կանչեր են:

Բայց՝ ա՛յդքան:

Թերթին շէնքէն ներս չեն մտեր, եւ չեն կոտրեր, եւ չեն կործաներ:

Ինչպէ՞ս եղեր է: Շատ զարմանալի բան է: Թուրքիան՝ իրապէս դէպի ժողովրդավարութի՞ւն կը յառաջանայ արդեօք:

Մենք, այդ «Գորշ գայլեր» ըսուած հրէշները՝ 1946թ. Պոլսոյ մէջ «TAN» լրագրատան առջեւ անձնապէս տեսած եւ անոնց «ինչ» ըլլալը հասկցած էինք:

Իբր թէ համալսարանական աշակերտներ եղած այս վայրենի գայլերու վոհմակր, ձախակողմեաններուն թերթը եղող «TAN» հրատարակչատան առջեւ, նախ՝ «Մա՛հ ձախակողմեաններուն»-ի նման լողունգներ արձակելով, պոռագին եւ կանչեցին, յետոյ, յարձակեցան թերթին շէնքին վրայ, եւ հրատարակչատունը եւ մանաւանդ տպարանը, կարճ միջոցի մը մէջ կոտրեցին, կործանեցին, եւ մեծ շէնքը աւերակի վերածեցին:

Այդ տարիներուն ամերիկեան CIA-ի հրամանով, «TAN» թերթին վրայ կատարուած այս յարձակումը՝ Թուրքիոյ ձախակողմեանները մաքրագործելու եւ Թուրքիան «NATO»-ի մէջ ներմուծելու համար կատարուած գործողութիւններէն մէկն էր:

«Ակօս» թերթը թո՛ղ աղօթէ՛, որ «Գորչ գայլերը» «TAN» թերթին ըրածնուն նման, «Ակօսն» ալ չկործանեցին: Բայց, Թուրքիոյ մէջ բոլոր ցոյցերը պետութեան հրամանով կը կատարուին:

Եւ «Գորչ գայլերը» կործանելու հրաման չէին ստացած: Միայն «Ակօս»-ին ազդարարութիւն մը տուին, որ ան չատ «առաջ» չերթայ:

Սա միջոցին, Թուրք պետութիւնը չատ ուշադիր է:

Ինչպէս որ գիտէք՝ Թուրքիան Եւրոպական միութեան մէջ մտնելու կը ջանայ:

Այդ պատճառաւ, այս շրջանին, անանկ՝ կոտորել - կործանել կ'ըլլա՞յ:

Ամէն բան իր կարգը եւ ժամանակը ունի:

Մինչ այդ՝ «Ակօս» թերթի խմբագրատունը այցելելով, «Գորչ գայլերուն» կատարած ցոյցին համար ներողութիւն խնդրող Թուրք անձնաւորութիւններուն թիւը չատ բարձր է:

Զարմանալի բան, Թուրքիոյ մէջ որքա՞ն «ժողովրդավարական» համոզումի տէր մարդ կայ եղեր, որուն մենք տեղեակ չէինք:

Բայց, այս օրերուն, Սապիհա Կէօքչէնին հայ ըլլալուն լուրը, չատ մը «TABOU»-ներու փլելուն պատճառ եղաւ:

Իբր թէ, «Սապիհա Կէօքչէնը հայ չէ» եղեր: Պոսնիաք է եղեր (այսինքն՝ սերպ է եղեր):

Եւ այս միջոցին փլած ամէնէն մեծ «TABOU»-ն եւ ամէնէն կարեւոր լուրը սա է՝

«Մուստաֆա Քեմալը՝ պոսնիաք է եղեր»:

Շնորհաւորութիւն ձեզի, Թուրքե՛ր:

Քի՛չ մըն ալ ջանք ըրէք:

Եւ Մուստաֆա Քեմալին բուն ծագումին ի՞նչ ըլլալը մէջտեղ հանեցէք:

Բայց, մենք ձեզի բան մը ըսե՞նք.-

Այսօր «ADN» կոչուած քննութեան միջոցաւ, հազարաւոր տարի առաջ ապրած մարդու մը ոսկորներէն՝ անոր ազգութիւնը եւ ծագումը՝ ճշգրտութեամբ մէջտեղ կը հանեն:



Ով «Գորշ գայլեր», եթէ քաջութիւնը ունիք, դուք ալ «ADN»-ի քննութիւն մը կատարել տուէք, որ ձեր ազգութիւնը եւ ծագումը մէջտեղ ելլէ:

Արդեօք, Միջին Ասիայէն եկող թաթարներու ցեղէն էք իրապէս:

Թէ ոչ՝ յունական կամ հայկական ծագում ունիք արդեօք:

Թիւ 80

«Նայիրի», 13 Ապրիլ 2004, թիւ 214

**ՖՐԱՆՍԱՅԻ ՉՐՈՂ PIERRE LOTI**

**ԻՆՉՈՒ ԹՐԵԱՍԵՐ ԷՐ:**

**ԵՒ ԻՆՉՈՒ ԹՈՒՐՔԵՐԸ ՆԱՏ ԿԸ ՉՈՎԱԲԱՍԵՐ**

Որովհետեւ Pierre Loti-ն բնտոֆիլ էր:

40 տարի ծովային սպայ ըլլալով, Ֆրանսական նաւատորմին մէջ ծառայած Pierre Loti, պաշտօնի բերմամբ Պոլիս ալ այցելած էր:

Իր ծանօթ վէպերէն՝ «AZIYADE»-ն եւ «DESENCHANTEES»-ն՝ Պոլիս այցելութեան տպաւորութեամբ գրուած են:

Pierre Loti-ն քանի մը անգամ Պոլիս այցելեց:

Եւ դուք՝ թուրքերդ, Pierre Loti-ին բնտոֆիլ ըլլալը տեղեկացած էիք:

Եւ Pierre Loti-ին վերջին Պոլիս այցելութեան օրերուն, անոր ամէնէն գեղեցիկ տղաքները «իբր նուէր» հրամցուցիք:

Եւ անկէ յետոյ, Pierre Loti-ն թուրքերը գովեց ու գովեց:

Բնական է՝ բերնին ջուրերը վազելով եւ գեղեցիկ տղոց սպասելով կատարեց այս գովասանքները:

Դուք՝ թուրքերդ, մարդ համոզելու մէջ մէկ հատիկ էք:

Դուք շատ լաւ կը հասկնաք ձեր դիմացինին «տկար կողմը»:

Մէկ մասը դրամով կը կաշառէք, մէկ մասին՝ կին կը հրամցնէք: Մէկ մասին ալ՝ Pierre Loti-ին ըրածնուդ պէս, գեղեցիկ տղաք կը հրամցնէք:

Եւ շատերն ալ՝ իրենց ստամոքսներէն «կ'որսաք»:

Եւ մանաւանդ լաւ թատրոն կը խաղաք: Ձեր երեսը գառնուկի մորթով «կը գոցէք» եւ ձեր վայրենի, կենդանական նկարագիրը կը ծածկէք:

Բայց, վերջին շրջաններուն, ձեր կատարած «թատրոնը» մէջտեղ ելաւ:

HELMUT KOHL-ին աջ բազուկը եղող եւ Գերմանիոյ նախկին աշխատանքի նախարար BLUM-ը՝ ձեր քողը պատուեց եւ ձեր իսկական «երեսը» մէջտեղ հանեց:

Եւ Գերմանիոյ այսօրուան վարչապետ SCHRÖEDER-ին ձեզ Եւրոպական միութեան մէջ առնել տալու համար կատարած ջանքերը, հակառակ ազդեցութիւն գործեցին:

Եւ այսօր Գերմանիոյ ժողովուրդին մեծամասնութիւնը թուրքերուն՝ Եւրոպական միութիւն մտնելուն հակառակ է:

Ֆրանսայի եւ միւս եւրոպական պետութիւններուն ժողովուրդներուն մեծամասնութիւնն ալ՝ ձեր՝ Եւրոպական միութիւն մտնելուն դէմ են:

Եւ ասկէ յետոյ, Ամերիկայի եւ աշխարհի մեծ դրամատէրերուն անտեսանելի կազմակերպութեան՝ թուրքերուն ի նպաստ եւրոպական պետութիւններուն վրայ կատարելիք ճնշումներն ալ օգուտ պիտի չունենան:

Որովհետեւ եւրոպական ժողովուրդները այլեւս հասկցան, թէ Ֆրանսայի նախկին հանրապետութեան նախագահ՝ VALÉRY GISCARD D'ESTAING-ին ալ ըսածին պէս՝ «Թուրքերուն Եւրոպական միութիւն մտած օրը՝ Եւրոպան կը փլչի»:

Թիւ 81

«Նայիրի», 27 Ապրիլ 2004, Թիւ 215

**24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԻՐԱԳՈՐԾԱԾ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
89-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ՊԱՏԵՂՈՒԹԵԱՄԲ**

**ԱՆԵՇՔԱԳԻՐ**

1945-ին Գերմանիոյ մէջ կատարուած հրէական ջարդերուն պատասխանատունն Հիթլերն էր:

1915-ին օսմանեան պետութեան մէջ թուրքերուն իրագործած Հայկական ցեղասպանութեան առաջնակարգ պատասխանատունն ո՞վ է:

1915-ին օսմանեան կառավարութեան ներքին գործոց նախարարը եղող Թալեաթ փաշան է:

1912-ին, Պոլսոյ Նուրուօսմանիյէ թաղը գտնուող «Իթթի-հատ եւ թերաքքի» կուսակցութեան ընդհանուր կեդրոնին մէջ տրուած հայ ազգը բնաջնջելու որոշումը ներքին գործոց նախարար Թալեաթ փաշան, Ապրիլ 1915 թուականէն գործադրել սկսաւ:

Թալեաթ փաշան, օսմանեան պետութեան բոլոր կուսակալներուն ուղարկած ծածկագիր հեռագիրներով՝ երեխայ կամ պատանի, կին կամ հրիկ մարդ, երիտասարդ կամ ծեր չնայած՝ բոլոր հայերը սպաննելու հրամանը ուղարկեց:

Ո՞վ էր Թալեաթ փաշան:

Էտիրնեցի, ծագումով գնչու, թղթատարութեան պաշտօնեայ մըն էր Սելանիկի մէջ: Բայց ժամանակ մը յետոյ, իր պաշտօնը բարձրացաւ:

1915-ին ներքին գործոց նախարար էր արդէն:

Բայց ամէնէն կարեւորը՝ Պոլսոյ ընդհանուր Փարմասոնական ժողովին մէջ ամենաբարձր աստիճանով, «բարձրագոյն

վարպետի» տիտղոսով, բոլոր Փարմասոններուն նախագահն էր: ... Եւ ծագումով գնչու Թալեաթը՝ իր ծնունդը չուրացաւ:

Գիտէք թէ, Պոլսոյ մէջ, մահապարտները կախաղան հանող դահիճները, գնչու ծագում ունէին:

Եւ գնչու Թալեաթը՝ հայ ազգին դահիճը եղաւ:

Եւ 24 Ապրիլ 1915-էն սկսեալ, հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեց:

**ՀԱՅ ԱԶԳԻՆ ԴԱՀԻՃԸ ԵՂԱԾ ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԻՆՉ ԵՂԱԻ:**

1914-1918 պատերազմին, օսմանցիները, գերմանացիներուն հետ զինակից ըլլալով պարտութեան մատնուեցան:

Եւ Հայկական ցեղասպանութեան առաջնակարգ պատասխանատուն Թալեաթ փաշան եւ միւս պատասխանատուները 1918-ին Պոլսէն, գերմանական ընդծովեայով մը, Գերմանիա փախան եւ հոն ապաստանեցան:

Թալեաթ փաշան Գերմանիոյ Պերլին քաղաքին մէջ ուրիշ անունի մը տակ կ'ապրէր:

Մինչ այդ, Պոլսոյ մէջ Պատերազմական ատեանը, Յուլիս 1919-ին Թալեաթ փաշան եւ միւս ղեկավարները Հայկական ցեղասպանութեան պատասխանատուները նկատելով զիրենք մահուան դատապարտեց:

Բայց յանցապարտներուն պատիժը կարելի չեղաւ գործադրել, որովհետեւ բոլորն ալ փախած էին:

Եւ Հայկական ցեղասպանութեան պատասխանատուները փնտռող «Նեմէսիս» կազմակերպութիւնը, Պերլինի մէջ Թալեաթ փաշային պահուրտած վայրը գտաւ:

Եւ 15 մարտ 1921-ին «Նեմէսիս» կազմակերպութեան անդամ Սողոմոն Թէհլիրեան՝ հայ ազգին դահիճը՝ մահապարտ Թալեաթ փաշան Պերլինի HARDENBERGSTRASSE կոչուած փողոցին մէջ ատրճանակով սպաննեց:

Եւ այս ձեւով Սողոմոն Թէհլիրեան, որուն ընտանեկան բոլոր անդամները թուրքերուն կողմէ սպաննուած էին 1915-ին էրզրումի մէջ, Թալեաթ փաշային մահուան վճիռը գործադրեց:

Թիւ 82

«Նայիրի», 11 Մայիս 2004, [Թիւ 216

## ԱՆԵՇՔԱԳԻՐ 2

Ձեր՝ [Թուրքերուդ ուշադրութիւնը, կէտի մը վրայ կը հրաւիրենք:

Ի՞նչ է Սելանիկ քաղաքին գաղտնիքը, որ վերջին շրջաններուն [Թուրք, յոյն եւ Հայկական խնդիրներուն մէջ, առաջնակարգ դերը խաղացած է:

Եթէ կ'ուզէք նշենք՝

1.- Մուստաֆա Քեմալը Սելանիկ ծնաւ:

2.- «Երիտ[Թուրքերու]» կազմակերպութիւնը, Սելանիկի մէջ հիմնուեցաւ:

3.- Հայկական ցեղասպանութիւնը իրագործող «Ի[թ]իհատ եւ [թերաքքի]» կուսակցութիւնը Սելանիկի մէջ կազմուեցաւ:

4.- Ապտիւլ Համիտը գահընկեց ընող, «Շարժում» անունը կրող բանակը՝ Սելանիկէն ճամբայ ելաւ:

5.- Ապտիւլ Համիտը գահընկեց ըլլալէ յետոյ, Սելանիկ արտորուեցաւ:

6.- 6-7 Սեպտեմբեր 1955 [Թուականին Պոլսոյ կործանման դրդապատճառը՝ Մուստաֆա Քեմալին Սելանիկի ծննդավայր տան պարտէզին մէջ, [Թուրքերուն կողմէ պայթեցուածը, կեղծ ուումը մըն էր:

7.- Եւ մեր այսօրուան գրութեան նիւթը եղող՝ 1915-ի Հայկական ցեղասպանութեան առաջնակարգ պատասխանատուն եւ յանցապարտը ծագումով գնչու Թալեաթ փաշան՝ 1900թ. Սելանիկի մէջ, [Թղթատարական պաշտօնեայ մըն էր:

Ինչպէ՞ս եղաւ, որ Սելանիկի մէջ պարզ [Թղթատարական պաշտօնեայ մը եղող Թալեաթը՝ քանի մը տարիներ յետոյ, «Ի[թ]իհատ եւ [թերաքքի]» կուսակցութեան առաջնակարգ ղեկավարը եղաւ եւ միջոց մը ետք ալ ներքին գործոց նախարարութեան աթոռը բազմեցաւ:

Եւ ամէնէն կարելորը՝ Պոլսոյ Փարմասոնական ժողովին նախագահը եղաւ եւ «Բարձրագոյն վարպետի» տիտղոսը ստացաւ:

Այսքան արագ պաշտօնի բարձրացումը՝ միայն հէքիաթներու մէջ կը տեսնուի:

Ոչ, ո՛րք, այս արագ բարձրացման պատճառը՝ հէքիաթի հետ կապ չունի:

Մեզի համար եղածը շատ պարզ է:

Թալեաթ, Սելանիկի մէջ թղթատարական պաշտօնեայ մը եղած միջոցին՝ միջազգային դրամատէրերուն գաղտնի կազմակերպութեան ուշադրութիւնը գրաւեց՝

1.- Թալեաթը՝ գնչու մըն էր:

2.- Արիւնարբու եւ աղուէսի նման խորամանկ էր:

3.- Եւ մանաւանդ՝ երկերես եւ նենգամիտ էր:

Այսքան «բարձր կարողութիւններու» տէր Թալեաթը, միջազգային դրամատէրերու գաղտնի կազմակերպութիւնը՝ բարձրացուց ու բարձրացուց:

Եւ նախկին թղթատարական պաշտօնեայ, գնչու Թալեաթը, այս ձեւով ներքին գործոց նախարար «Թալեաթ փաշայի» վերածուեցաւ:

Եւ այսպէս՝ գնչու, արիւնարբու աղուէսի նման խորամանկ, երկերես եւ նենգամիտ Թալեաթը՝ 24 Ապրիլ 1915-ին, բոլոր հայերը ցեղասպանութեան ենթարկելու հրամանը արձակեց:

Թիւ 83

«Նայիրի», 25 Մայիս 2004, Թիւ 217

### ԱՆԵՇՔԱԳԻՐ 3

Յուլիս 1919-ին, Պոլսոյ մէջ օսմանեան Պատերազմական ատեանին տուած մահուան վճիռը՝ Սողոմոն Թէհլիրեան 15

մարտ 1921-ին, Պերլինի մէջ գործադրեց եւ Թալեաթ փաշան սպաննեց:

Այս ձեռով, Հայկական ցեղասպանութեան առաջին պատասխանատուն պատիժը կրած եղաւ:

Եւ Թալեաթը Պերլինի մէջ թաղուեցաւ... Մուստաֆա Քեմալին հանրապետութեան նախագահ եղած տարիներուն՝ մենք Պոլսոյ մէջ աշակերտ էինք:

Դպրոցը մեր կարդացած պատմութեան գիրքերուն մէջ Մուստաֆա Քեմալին «մեծ ճառէն» մասեր կային:

Եւ «Իթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան ղեկավարները եղող Թալեաթ, էնվեր եւ ճեմալ փաշաները օսմանեան պետութիւնը 1914-1918-ի պատերազմին մտցնելով, կայսրութեան փլուզման պատճառ եղած ըլլալնուն համար գետնէ գետին կը զարնուէին:

1938-ին Մուստաֆա Քեմալի մահանալէ յետոյ, Իսմէթ Ինէօնիւն հանրապետութեան նախագահ եղաւ:

Մուստաֆա Քեմալը՝ անգլիացիներուն եւ Ֆրանսացիներուն համակիր քաղաքականութիւն կը վարէր:

Այդ պատճառաւ անգլիացիները անոր «ՍԱՎԱՐՕՆԱ» զբօսանաւը նուէր տուին:

Ֆրանսացիներն ալ «ՀԱԹԱՅ» կոչուած հողամասը նուիրեցին Մուստաֆա Քեմալին, որ պատերազմի մը պարագային թուրքերն իրենց միանան... ..Մինչդեռ, Իսմէթ Ինէօնիւն, երկդիմի քաղաքականութիւն մը կը վարէր:

Թէ՛ անգլիացիներուն եւ թէ՛ ֆրանսացիներուն հետ կը սիրաբանէր, եւ նոյն ատեն՝ գերմանացիներուն:

Եւ 1939-ին պատերազմի պայթելէն յետոյ, երբ գերմանական բանակները կայծակի արագութեամբ եւրոպական երկիրները գրաւել սկսան, Իսմէթ Ինէօնիւն աւելի շատ գերմանացիներուն մօտենալ սկսաւ:

1941-ին էր՝ գերմանացիներուն յաղթանակէ յաղթանակ վազած տարին էր:

Այդ օրերուն, թերթերէն տեղեկացանք, թէ գերմանացիները՝ Թալեաթ փաշային դազաղը Պոլիս պիտի ղրկեն:

Մեզի ծանօթ չէ, թէ գերմանացիները որոշեցին թալեաթ փաշային դազադը Պոլիս ղրկելը, որ թուրքերը իրենց կողմը քաշեն, թէ՞ ոչ, Իսմէթ Ինէօնիւն գերմաններէն պահանջեց, որ թալեաթին դազադը Պոլիս ղրկուի: Չենք գիտեր, բայց գիտենք, որ Իսմէթ Ինէօնիւն կինը՝ թալեաթ փաշային կնոջ ազգականն էր:

Հաւանական է, որ թալեաթին կինը Ինէօնիւն խնդրած ըլլայ:

Բայց այս մանրամասնութիւնը այնքան ալ կարեւոր չէ:

Կարեւորը՝ թալեաթին դազադին Պոլիս փոխադրուիլն է:

Կրնա՞ք երեւակայել, որ եթէ Հիթլերին դազադը հանդիսութիւններով Պերլին փոխադրէին ի՞նչ կը պատահէր:

Ամբողջ աշխարհ ոտքի կ'ելլէր:

Հրէաներուն համար՝ Հիթլերը ինչ որ է, հայերուն համար ալ թալեաթը նոյն բանն է:

Այսինքն՝ հայերուն Հիթլերը թալեաթ փաշան է:

Եւ մենք 1941-ին, հայոց Հիթլերը եղող թալեաթ փաշային թաղման թափօրը Պոլսոյ մէջ տեսանք եւ ընկճուեցանք:

Արեւոտ օր մըն էր: Ժամը 4-ի շուրջ դպրոցէն ելած եւ Կալաթայի կամուրջէն էմինէօնիւ հասած էինք:

Ահա այդ միջոցին, թալեաթին դազադը փոխադրող կառքը եւ անոր հետեւող կառքերը մեր առջեւէն անցան եւ դէպի Կալաթայի կողմը գացին:

Յետոյ տեղեկացանք, որ թալեաթին դազադը *HÜRRİYET TEPEŚİ*-ն (Ազատութեան բլուրը), «Իթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան միւս ղեկավարներուն գտնուած տեղը թաղեր են:

Իսմէթ Ինէօնիւն թալեաթին դազադը Պոլիս բերել տալով, ապացուցած եղաւ, որ ինքն ալ «Իթիհատ եւ թերաքքի» կուսակցութիւն կոչուած մարդասպաններու եւ դահիճներու կազմակերպութեան մաս կը կազմէր, եւ անոնց արիւնարբու մտայնութեան գործադրիչն էր:

Եւ ապացոյցն ալ մէջտեղ է՝



1941-ին էր: Պոլսոյ մէջ 25 տարեկանէն մինչեւ 45 տարեկան բոլոր էրիկմարդ «GAVUR»-ները Անաթոլիոյ խորերը աքսորողը՝ նոյն Իսմէթ Ինէօնիւն էր:

Նոյնպէս 1941-ին, Պոլսոյ բոլոր «GAVUR»-ներուն, VAR-LIK VERGİSİ (Ունեւորութեան տուրք) կոչուած թալանը գործադրել տալով, Պոլսոյ «GAVUR»-ները տնտեսապէս սպաննել ուզողը նոյն Իսմէթ Ինէօնիւն էր:

Այս անմարդկային արարքներուն պատասխանատուն եղող Իսմէթ Ինէօնիւն, այս ձեւով ապացուցած եղաւ, որ ինք ոչ միայն Թալեաթին ազգականն է, այլ՝ նոյն ատեն Թալեաթին վերակենդանացած արիւնարբու ուրուականն է:

Թիւ 84

«Նայիրի», 8 Յունիս 2004, Թիւ 218.

#### ԱՆԵԾՔԱԳԻՐ 4

Իսմէթ Ինէօնիւնի համար «Լոզանի հերոս» է կ'ըսեն: Մեզի համար բուն Լոզանի հերոսը՝ Թալեաթ փաշան է: 1915-ին Թալեաթին հրամանով իրագործուած Հայկական ցեղասպանութիւնով՝ թուրքերը ոչ միայն հայ ազգը բնաջնջեցին, այլ նոյն ատեն, պատմութեան ծանօթ թուականներէն ի վեր հայ ազգին հայրենիքը եղող Հայաստանը գողցան եւ թրքացուցին:

Եւ պատմութեան ոչ մէկ շրջանին չտեսնուած ցեղային մաքրագործումը՝ հայ ազգը բնաջնջելով իրագործող Թալեաթ փաշային Լոզանի յաղթանակին մէջ ունեցած դերը՝ Իսմէթ Ինէօնիւնի դերէն չատ աւելի մեծ է:

24 Յուլիս 1923-ի Լոզանի համաձայնութեան մէջ Իսմէթ Ինէօնիւն ունեցած յաջողութիւնը՝ աղուէսի խորամանկ ռազմավարութեամբ մը, իր բոլոր ուզածները համաձայնականներուն ընդունիլ տալուն մէջ կը կայանայ:

Լոզանի մէջ, Իսմէթ Ինէօնիւին Հայկական խնդրին ի վնաս, բռնած դիրքը՝ իր նենգ ու դաժան նկարագիրը կը բացայայտէ:

Լոզանի բանակցութիւններու ընթացքին քանի մը խղճամիտ պատգամաւորներ՝ Ինէօնիւին Հայկական խնդրին մասին խօսիլ կ'առաջարկեն: Իսմէթ Ինէօնիւին իրենց տուած պատասխանը շատ անգութ եւ խրոխտ եղած է:

«Եթէ դուք Հայկական խնդիրը պիտի քննէք, ես սրահը կը լքեմ: Դուք ձեր միջեւ քննեցէք Հայկական հարցը», — կը յարէ:

Հայկական խնդիրը քննելիք ի՞նչ ունէր որ: Հայկական հողերուն վրայի հայ բնակչութիւնը բոլորովին մաքրագործուած եւ հայերուն հայրենիքը ամբողջովին թրքացուած էր: Ահա այս Հայկական ցեղասպանութեան «չնորհիւ», Իսմէթ Ինէօնիւն Լոզանի հերոս եղաւ...

Թալեաթ փաշան 1915-ին, հայ ազգը ցեղասպանութեան ենթարկած էր: Եւ Իսմէթ Ինէօնիւն ալ 24 Յուլիս 1923-ին, Լոզանի մէջ, հայ ազգին «Յուղարկաւորութեան արարողութիւնը» կատարեց, եւ Հայկական խնդիրը Լոզանի մէջ թաղեց:

Իսմէթ Ինէօնիւ, 1923-էն մինչեւ 1937, Թուրքիոյ վարչապետը եղաւ եւ Մուստաֆա Քեմալին աջ բազուկն էր: Բայց 1937-ին Մուստաֆա Քեմալի եւ Իսմէթ Ինէօնիւի միջեւ «սեւ կատու» մտաւ: Եւ Ինէօնիւն վարչապետի պաշտօնէն քաշուեցաւ:

Այս խնդրին մասին շատ մը զրոյցներ կան: Կ'ըսուի, թէ Մուստաֆա Քեմալ Ինէօնիւէն կը զայրանայ եւ անոր մեղացուիլը կը հրամայէ: Այդ շրջանին Մուստաֆա Քեմալ հիւանդ էր արդէն: Եւ Մուստաֆա Քեմալին շուրջիները իրեն սուտ կը խօսին, եւ Մուստաֆա Քեմալը՝ Ինէօնիւին մեռած ըլլալուն կը հաւատայ:

Այդպէս ըլլալու է: Քանի որ Մուստաֆա Քեմալին 1938-ին մահանալէն յետոյ, տեղեկացուած էր իր կտակին մէջ՝ Իսմէթ Ինէօնիւին զաւակներուն՝ էրտալին եւ էօմերին ամսական կապած ըլլալը մէջտեղ ելաւ:

Մուստաֆա Քեմալէն յետոյ, մարաջախտ Ֆելզի Չաքմաքին փափաքովը՝ Իսմէթ Ինէօնիւն հանրապետութեան նախագահ եղաւ...

Մեր աշակերտ եղած տարիներուն, հայկական դպրոցին մէջ դասարաններուն պատերուն վրայ «Յաւիտենական ղեկավար» Մուստաֆա Քեմալին եւ «Ազգային ղեկավար» Իսմէթ Ինէօնիւն պատգամները քով քովի կախուած էին: Եւ մեզի «Յաւիտենական ղեկավարին» եւ «Ազգային ղեկավարին» պատգամները գոց սորվիլ կու տային:

1945-ին, պատերազմին վերջաւորութիւնէն յետոյ, այս յաւիտենական ղեկավար եւ ազգային ղեկավար կոչուածին ձաբոտուքները մէջտեղէն վերցուեցան:

Բայց մեր «կեապուրներուս» մտքին մէջ քսան դասակարգի աքսորին եւ ունեւորութեան տուրք կոչուած ողբերգութեան ցաւերը քանդակուած էին:

Իսմէթ Ինէօնիւն ինքնութեան մասին շատ մը գրոյցներ կը պատմուէր: Իր ընտանիքին մալաթիացի ըլլալուն պատճառաւ՝ անոր քրդական ծագում ունենալը կը շեշտուէր: Ինէօնիւն եղբայրը, Պոլսոյ «Գազլըչեչմէ» թաղին մէջ, գործարան մը ունէր: Կ'ըսուէր մանաւանդ, թէ այս գործարանը ունեւորութեան տուրքէն օգտուելով առած է:

Եւ Ինէօնիւն այս եղբորը «Պոչաւոր քիւրտ» ածականը տրուած էր շուրջիներուն կողմէ:

Մէկ մասն ալ, Իսմէթ Ինէօնիւն հայկական ծագում ունենալը կը պնդէին: Անպայման այս գրոյցները Իսմէթ Ինէօնիւն ականջին հասած ըլլալու էին, որ ան այս մասին սա պատասխանը տուած էր. «Եթէ թեւիս մէջ մէկ կաթիլ հայկական արեան գոյութիւնը գիտնամ՝ այդ թեւս կը կտրեմ կը նետեմ»:

... 1948-ին Անգարայի մէջ, զինուոր էինք: Կիրակի օր մը, մեծ թատրոնին մէջ տրուող դասական երաժշտութեան նուագահանդէսին գացինք:

Թատրոնին մուտքին, տոմսակ առնելու համար, կարգի մտած էինք: Մէկէն իրարանցում եղաւ, ե՛ւ ոստիկանները, ե՛ւ

սպաները թատրոնին ամէն կողմը հսկողութեան տակ առին: Եւ քիչ ետք, Իսմէթ Ինէօնիւն սրահ մտաւ:

Անոր սրահ մտնելէն յետոյ, մեզի հետ տոմսակ գնելու համար կարգ սպասող երիտասարդ մը, ամէնուն կողմէ լսելի ձայնով մը սապէս ըսաւ՝ «Ինէօնի՛ւ, մի՛ վախնար, քեզ չենք մեռցներ: Քու արիւնովդ մեր ձեռքերը չենք աղտոտեր»:

Այս խօսքերը ըսողները՝ մեր հասկցածին համեմատ, ձախակողմեան երիտասարդներ էին... ..Մենք, Իսմէթ Ինէօնիւին ծագումով քիւրտ կամ հայ ըլլալը չենք կրնար գիտնալ:

Բայց, Ինէօնիւին մեռնելէն յետոյ, անոր մօտ բարեկամը եղող Ատանայի «HALK» կուսակցութեան նախագահը KEMAL SATIR-ին յուշերը, Պոլսոյ մեծ տպաքանակ ունեցող օրաթերթերէն մէկուն մէջ հրատարակուեցան:

Այս յուշերուն մեզ շատ տպաւորած մէկ մասը, ձեր ուշադրութեան կը յանձնենք՝

«Ինէօնիւին մահանալէն քանի մը շաբաթ առաջ էր: Ինէօնիւին տան մէջ, հիւրասրահը նստած իրարու հետ օրուան խնդիրներուն մասին կը խօսէինք:

Մէկէն, Ինէօնիւն նիւթը փոխեց, եւ ինծի սա հարցումը ուղղեց՝ «Քեմա՛ւ, հայկական այբուբենին մէջ քանի տառ ըլլալը գիտե՛ս»:

Ես շուարած էի երկինքէն ինկած այս հարցումին պատճառաւ:

Ես ո՞ւրկէ գիտնայի հայկական այբուբենին մէջ քանի տառ ըլլալը:

«Ներողութիւն, փաշա՛ս, չեմ գիտեր»,—ըսի:

«Այն ատեն, ես ըսեմ,—ըսաւ Ինէօնիւն եւ աւելցուց: — Հայկական այբուբենին մէջ 38 տառ կայ»...

Իսմէթ Ինէօնիւին, հայ լեզուի մասին այս խոր հմտութիւնը ուրկէ՞ կու գայ արդեօք:

Այս հարցին մեկնաբանութիւնը ձեզի կը ձգենք:

Թիւ 85

«Նայիրի», 22 Յունիս 2004, Թիւ 219

## ԱՆԵՇՔԱԳԻՐ 5

Մեր այս գրութեան մէջ, Իսմէթ Ինէօնիւին հայ լեզուի մասին ունեցած խոր հմտութեան ուրկէ գալուն շուրջ, մեր գիտցածները յայտնելու պիտի ջանանք:

Ինէօնիւին ընտանիքը մալաթիացի էր: Մալաթիան (բուն անունով Մելիտինէ) հնադարեան շրջաններէն ի վեր, շատ կարեւոր առեւտրական կեդրոն մը եղած էր:

Մինչեւ 19-րդ դարուն սկիզբները, Մալաթիայի մէջ շատ քիչ թուրք կար:

Բնակչութեան մեծամասնութիւնը հայ եւ յոյն էին:

1850թ. յետոյ, թուրքերը եւ քիւրտերը մասնաւորապէս Մալաթիա տեղաւորուեցան:

1915-ին Մալաթիայի բնակչութեան կէսէն աւելին հայ էր, մինչեւ 1915 թուականը Մալաթիոյ մէջ 30 հազար հայեր կ'ապրէին:

1915-ի Հայկական ցեղասպանութեան ընթացքին, դուք՝ թուրքերդ, Մալաթիայի հայերուն մեծ մասը ջարդեցիք:

Շատ քիչ թիւով հայեր ազատեցան. փոապան կամ ջաղացպանի նման հայ արհեստաւորներ միայն փրկուեցան ջարդէն:

Ինէօնիւին մալաթիացի ընտանիքը՝ հայկական ծագում կրնայ ունեցած ըլլալ:

Մեծ հաւանականութեամբ՝ 19-րդ դարուն սկսող ջարդերուն ընթացքին, ստիպողաբար մահմետականացած հայերէն կրնայ ըլլալ:

Բայց Ինէօնիւին հայ լեզուին ծանօթութիւնը չենք կարծեր որ իր ընտանիքէն եկած ըլլայ:

Ինէօնիւին ընտանիքը շատոնց թրքացած ըլլալուն, իր հայկական ծագումը, շատ հաւանաբար, մոռցած է:

Ինչօնիւին հայ լեզուի մասին ունեցած խոր հմտութիւնը՝ անոր իր մանկութեան, Իզմիրի մէջ, հայկական դպրոց մը յաճախած ըլլալուն պատճառաւ է, կը կարծենք:

Որովհետեւ, այդ տարիներուն Իզմիրի մէջ, միայն յոյներու եւ հայերու դպրոցներ կային:

Թրքական վարժարան չատ չկար: Թրքական վարժարան ըլլալով՝ միայն «Գուրան» կարդալ սորվեցնող դպրոցներ կային:

Իզմիրի մէջի հայկական դպրոցները շատ համբաւ ունէին: Աշակերտները շատ լաւ կը դաստիարակուէին:

Այս տեսակէտով՝ Ինչօնիւին ընտանիքը, փոքրիկ Իսմէթ Ինչօնիւին Իզմիրի մէջ գտնուող հայկական վարժարան մը դրկած է հաւանաբար:

Եւ Ինչօնիւին հայ լեզուի մասին հմտութիւնը՝ Իզմիրի հայկական վարժարանէն կրնայ եկած ըլլալ... Մեր երիտասարդութեան տարիներուն, մինչեւ 1945թ., Մաքրգիւղի մէջ (բուն անունով՝ «Մաքրի Խորիս» -յունարէն՝ հեռաւոր գիւղ ըսել է) Թրքական «Լիսէ» չկար, միայն միջնակարգ վարժարան կար:

Եւ Մաքրգիւղի հայկական «Պեղազեան Լիսէն»՝ թուրք աշակերտներ ալ կը յաճախէին: Եւ մեր դասարանի թուրք աշակերտները շատ լաւ հայերէն կը խօսէին:

Իզմիրի մէջ, 1915-ին, 40 հազար հայեր կ'ապրէին: 1922-ին դուք, Իզմիրի հայկական եւ յունական թաղերը կրակի տուիք:

Եւ հայերը եւ յոյները դէպի ծով փախչիլ սկսան:

Անոնց մէկ մասը, նաւահանգիստը գտնուող յունական շոգենաւերուն կողմէ ազատուեցան:

Քարափը մնացող եւ փախչիլ չկրցող բոլոր յոյները եւ հայերը սպաննեցիք:

1923-ին Իզմիրի մէջ, մէկ հատ յոյն եւ հայ չէր մնացած...

Մինչեւ 1915թ., Անաթոլիոյ մէջ ապրող բնակչութեան մեծամասնութիւնը քրիստոնեայ՝ յոյն եւ հայեր էին:

1915-էն մինչեւ 1923թ. Անաթոլիոյ քրիստոնեայ բնակչութեան ամբողջութիւնը մաքրագործեցիք: Մեծամասնութիւնը սպաննեցիք: Միայն մէկ փոքր մասը կրցաւ փախչիլ:

Եւ ձեր զարհուրելի վայրագութեան «չնորհիւ», այդ մեծամասնութիւն կազմող ժողովուրդէն հայերէն եւ յոյներէն այսօր մնացած է միայն Պոլսոյ մէջ, սուրի մնացորդ 50 հազար հայ եւ շուրջ 1000 յոյն:

Եւ Պոլսոյ մէջ գտնուող այս 50 հազար հայերը, դուք իբր պատանդ բռնած էք, որ Սփիւռքի հայերը «չատ յառաջ չերթան», եւ Թուրքիոյ դէմ միացեալ շարժումներ չկատարեն:

Պոլսոյ մէջ ազգականներ ունեցող Սփիւռքի հայերը շատուշաղիր են:

Անոնք Թուրքիոյ դէմ ցոյցերու եւ որեւէ շարժումի չեն մասնակցիր:

Որովհետեւ անոնք գիտեն, որ այդ ցոյցերուն եւ արարքներուն «պատիժը» պոլսահայերը կը կրեն:

Երբեմն – երբեմն Սփիւռքի մէջ կատարուած հայկական ցոյցերուն դէմ, Պոլսոյ հայերը անմիջապէս կ'սկսին հառաչել. –

«Այս ցուցարար հայերը, մեր վիճակը այստեղ ի՞նչ կ'ըլլայ ըսելով՝ բնաւ չեն մտածեր»:

Պոլսեցի հայեր՝ դուք բնաւ մի՛ մտահոգուիք. Թուրք կառավարութիւնը չի թոյլատրեր, որ մէկը ձեզի դաչի:

Որովհետեւ դուք՝ պատանդ հայերդ, այնքան ատեն որ Պոլսոյ մէջ էք՝ Սփիւռքի հայերը միանալով, Թուրքերուն դէմ ազդու արարքներ չեն կրնար գործել:

Թիւ 86

«Նայիրի», 6 Յուլիս 2004, Թիւ 220

**ԱՆՀԱՄՏԱԼԻ ԲԱՆ  
ԹՈՒՐՔԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ  
ԻՍՐԱՅԷԼԻ ԴԵՄ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ  
ՊԱՇՏՊԱՆՈՂ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ**

Թուրքիոյ վարչապետը Թ. Էրտողան, առջի ամիս Ամերիկա չմեկնած, յայտարարութիւն մը կատարեր եւ ըսեր է թէ՛ «ԻՍՐԱՅԷԼԻՆ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԴԵՄ ԿԱՏԱՐԱԾԸ՝ ՊԵՏԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ Է»:

Ի՞նչ պատահեր է, որ թուրքերը, մէկէն պաղեստինեան ժողովուրդին մեղքնալ սկսեր են:

Անհաւատայի բան: Տարիներէ ի վեր Իսրայէլին, Պաղեստինեան ժողովուրդին դէմ կատարած ջարդերուն, թուրքերը ձայն չէին հաներ:

Ընդհակառակը: Թուրքերուն առաջնակարգ բարեկամը եւ դաշնակիցը՝ Իսրայէլն էր:

Թուրք պետական անձնաւորութիւնները եւ մանաւանդ թուրք զօրավարները, յաճախ Իսրայէլ կ'երթային: Եւ թրքական եւ Իսրայէլեան բանակները տեւաբար, իրարու հետ ուղմափորձեր կը կատարէին:

Հիմա, ի՞նչ պատահեր է, որ յանկարծ, թուրքերուն եւ Իսրայէլի միջեւ, սեւ կատու անցեր է:

Ասոր պատճառը՝ քանի մը օրեր առաջ մէջտեղ ելաւ:

Ամերիկացի լրագրող Ս. Հերչին «Նիւ Եորքըրը» թերթին մէջ հրապարակածին համաձայն՝ Իսրայէլեան մասնագէտներ, միջոցէ մը ի վեր, Հիւսիսային Իրաքի մէջի քրտական զինեալները մարզել սկսեր են: Իսրայէլը քիւրտերուն մեծ վարկեր բացեր է, եւ քիւրտերը սկսեր են, Հիւսիսային Իրաքի մէջ, արաբներուն կալուածները զնել:



Այնպէս կ'երեւի, թէ ինչպէս որ 1923-ին հրէաները «Թուրքիա» ըստած պետութիւն մը ստեղծեցին, հիմա ալ՝ Իրաքի, Իրանի եւ Սուրիոյ մէջ 10 միլիոնէ աւելի եղող քիւրտերու, նոր քրտական պետութիւն մը պիտի ստեղծեն:

Այս քրտական պետութիւնը՝ Իրաքի, Իրանի եւ Սուրիոյ կոնակը, Իսրայէլին դաշնակիցը ըլլալով, անոնց գլխուն տեւաբար փորձանք պիտի ըլլայ:

Իրաքի մէջ քրտական պետութեան մը հիմնուելու հաւանականութիւնը, շատ տարիներէ ի վեր յայտնի էր արդէն: Թերեւս կը յիշէք: Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ Ֆ. Միթերանին կնոջ տեւաբար Իրաքի քիւրտերուն թիկունք կանգնիլը եւ Փարիզի մէջ քրտական մշակոյթի կեդրոնի մը բացուիլը՝ քրտական պետութեան մը ստեղծումին առաջին նշաններն էին:

Ասկէ յետոյ՝ նախատեսուած ծրագիրը կամաց-կամաց պիտի իրագործուի:

Աւելի ետք ըլլալիքը գիտնալու համար՝ մարգարէ ըլլալու պէտք չկայ:

Այս նոր՝ քրտական պետութեան մէջ գտնուող արաբ ժողովուրդը, կամաց-կամաց վոնտուիլ պիտի սկսի:

Արդէն, Հիւսիսային Իրաքի մէջ գտնուող արաբ ժողովուրդը, քիւրտերու կողմէ դէպի հարաւ սկսեր են քշուիլ:

Բոլորին ծանօթ է, որ քիւրտերը շատ անգութ ժողովուրդ են:

Թուրքերը, 19-րդ դարէն սկսեալ մինչեւ 1923, Արեւմտեան Հայաստանի եւ Անատոլիոյ մէջ գտնուող հայ ժողովուրդը մաքրագործելու ծրագիրը՝ քիւրտերուն «չնորհիւ» իրագործեցին:

Եւ 1915-ի Հայկական ցեղասպանութեան շրջանին, թուրքերուն հրահանգով հայ ազգը բնաջնջելու համար, քիւրտերը՝ դահիճի «պաշտոն» կատարեցին:

Այս պարագային հարց մը կը գոյանայ:

Իսրայէլի թիկունքով Իրաքի մէջ քրտական պետութեան մը մէջտեղ գալէն եւ զօրանալէն յետոյ քիւրտերը, Թուրքիոյ

մէջ գտնուող 10 միլիոնէ աւելի եղող քիւրտերուն հանդէպ, ի՞նչ դիրքորոշում պիտի որդեգրեն:

Շատ մի աճապարէք: Անոր ալ կարգը պիտի գայ:

Անպայման, Իրաքի մէջ հիմնուած քրտական պետութեան մէջէն, Թալեաթ փաշայի նման նենգամիտ, խորամանկ եւ արիւնարբու քիւրտ ղեկավար մը պիտի ելլէ, եւ ճար մը պիտի գտնէ ու, պատեհ առիթով, 1915-ին ինչպէս որ հայերուն մաքրագործեցին, այնպէս ալ քիւրտերը՝ թուրքերուն հաշիւը պիտի մաքրեն:

Թիւ 87

«Նայիրի», 10 Օգոստոս 2004, [Թիւ 221

## **ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԵՑ ԹԱՏՐՈՆԻ ԱՐՈՒԵՍՏԱՊԵՏՆԵՐԸ ԹՈՒՐԷ ՊԵՏԱՎԱՆ ԱՆՁՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ**

Թուրքիոյ վարչապետ Թայիպ էրտողան, Յուլիս ամսուան մէջ Ֆրանսա տուած այցի օրերուն, մամլոյ ասուլիս մը կու տայ եւ լրագրողներուն հարցումներուն շատ հանդարտ եւ անուշ լեզուով կը պատասխանէ:

Նոյնիսկ, լրագրողներուն Հայկական ցեղասպանութեան մասին ուղղած հարցումներուն, առանց բարկանալու եւ առանց ջղայնանալու պատասխաներ է:

Թայիպ էրտողան այս մամլոյ ասուլիսին, շատ պատշաճ ձեւով տուած պատասխաններով, լրագրողներուն հաւատացուցեր է, որ Թուրքիան Եւրոպական միութիւն մտնելու արժանի պետութիւն է:

Եկուր տես, որ նոյն Թայիպ էրտողանը 1996-ին, կրօնամոլ կուսակցութեան ղեկավար ըլլալով «նետած ճառերուն» մէջ, եւրոպացիներուն դէմ կրակ ժայթքած էր, եւ «մեր մզկիթները վահան, իսկ մինարէները սուրին են ձեզի դէմ» ըսած:

Այս՝ 180 աստիճանի փոփոխութիւնը միայն թուրք պետական անձնաւորութիւններուն յատուկ «կարողութիւն» մըն է:

Այս՝ դիմափոխուելու կարողութիւններուն պատճառաւ, թուրք պետական անձնաւորութիւնները աշխարհի մեծագոյն «[Ժատրոնի արուեստագէտներն» կը նկատուին:

Նոյնպէս՝ նոյն «Թատրոնը» 1915-ին, օսմանեան ներքին գործերու նախարարը եւ Փարմասոն «մեծ վարպետ» Թալեաթ փաշան՝ հայերուն գլխուն խաղացած էր:

Ցերեկը, հայ առաջնորդներէն փաստաբան եւ երեսփոխան ու նոյն ատեն Թալեաթին Փարմասոն ըլլալով «եղբայրը» եղող Զօհրապին հետ ճաշող եւ նարտ խաղացող Թալեաթ փաշան, նոյն գիշերը Զօհրապը ձերբակալել կուտայ եւ Ատանա կ'աքսորէ, եւ հայ ազգին դէմ գործադրած ցեղասպանութեան օրերուն, Զօհրապը սպաննել կու տայ:

Այս պատճառաւ, թուրք պետական անձնաւորութիւններուն ի'նչ «[Ժատրոն» խաղալը, բնաւ յայտնի չըլլար:

Թուրք բանաստեղծ Թիւվֆիկ Ֆիգրէթին բանաստեղծութիւնը, քիչ մը փոխելով՝ հոս նշենք.

«Թուրքը ծովու կը նմանի: Բնաւ իրեն հաւատք չէք կրնար ընծայել»:

Թայիպ էրտողանի՝ Փարիզի մամլոյ ասուլիսին ընթացքին, Հայկական ցեղասպանութեան մասին տուած պատասխաններուն մէջ նորութիւն մը կայ:

Մինչեւ երէկ, «Հայկական ցեղասպանութիւն» չէ եղած կ'ըսէին:

Վերջին շրջաններուն, «Այս գործը՝ պատմագէտներուն ձգենք» սկսան ըսել:

Թայիպ էրտողանն ալ նոյն բանը ըսած է, բայց քիչ մը տարբեր ձեւով:

Թայիպ էրտողանը Հայկական ցեղասպանութեան մասին հետեւեալ խօսքերը ըսեր է՝

«Ասիկա պատմական դէպք մըն է. այս պատճառաւ, անոր քննութիւնը պատմագէտներուն ձգենք»:

Թայիպ էրտողան այս խօսքերով ըսել կ'ուզէ, թէ՛ «Այս դէպքին վրայէն, գրեթէ 100 տարի անցեր է: Ո՛չ վկայ մնացեր է եւ ո՛չ ալ փաստ: Դէպքը մոռցուեր գացեր է, պատմութեան անցեր է:

Ինչո՞ւ կը խառնչտկէք, կը կենաք»:

Թայիպ էրտողան կրօնամոլ մըն է, բայց շատ լաւ կը խաղայ իր դերը:

Հայկական ցեղասպանութեան ողբերգութեան մէջ՝ իր դերը շատ յաջողութեամբ կը կատարէ:

Թայիպ էրտողանի 180 աստիճան գաղափարի փոփոխութիւն կատարելը բոլորին ծանօթ է:

Այնպէս որ Թայիպ էրտողան, Հայկական ցեղասպանութեան ողբերգութեան մէջ իր դերը, ուզած ատեն, խեղկատակութեան կրնայ փոխել:

Եւ Հայկական ցեղասպանութեան թուականէն ետք, այսքան երկար տարիներ անցնելէ յետոյ, Թայիպ էրտողան՝ մզկիթներու վահաններէն եւ մինարէներու սուրհներէն ուժ առնելով հետեւեալ թրքական ասացուածքները մեր երեսին կրնայ զարնել՝ «Անցեալը՝ մոռցուկ է», «Օղին մէջ ամպ է-: Այդ տեսածդ երազ է»: «Զին առնողը՝ Իսկիւտարը անցաւ»: «Անցաւ Պորին Պազարը: Նիչտէ քչէ էչը»:

Խեղճ յիմար եւ յամառ հայեր:

Կարծեցիք, թէ ամէն տարի 24 Ապրիլ 1915-ին համար լալով, արդարութիւն պիտի գայ. եւ թուրքերը՝ հայերուն դէմ իրենց կատարած ցեղասպանութեան պատիժը պիտի կրեն:

Խեղճ յիմար եւ յամառ հայեր:

Թիւ 88

«Նայիրի», 24 Օգոստոս 2004, թիւ 222

Վատիկանի ամէնէն առաջնակարգ ղեկավարներէն՝ Կաթոլիկ Հաւատոյ ժողովի նախագահ եւ «JEAN PAUL II»

Պապին աջ բազուկը նկատուած գերմանացի կարտինալ ժողէֆ Ռացինկէր, 13 Օգոստոս 2004թ., Փրանսական «Ֆիկարո» թերթին մէջ հրատարակուած յայտարարութեամբ Թուրքիոյ Երոպական միութեան մէջ մտնելուն դէմ ելած է:

Կարտինալ Ռացինկէրին կատարած յայտարարութեան ամէնէն կարելոր մասերը տալու ջանանք՝

Կարտինալին, Թուրքիոյ մասին գաղափարները՝ շատ վճռական են:

«Թուրքիան՝ երբեք Երոպական միութիւն չի կրնար մտնել», — կ'ըսէ, եւ կը շարունակէ.

«Երոպան՝ միայն աշխարհագրական ցամաքամաս մը չէ, այլ՝ նոյն ատեն, քրիստոնէական մշակոյթին ցամաքամասն է:

Մինչդեռ Թուրքիան, ուրիշ մէկ մշակոյթին՝ իսլամութեան ցամաքամասին մէջ է: Եւ այս իսլամ Թուրքիան, դարեր տեւողութեամբ, Երոպական քրիստոնէական մշակոյթին դէմ պայքարած է, եւ քրիստոնէական մշակոյթը քանդելու աշխատած է:

Արեւելեան Հռոմէական կայսրութիւնը, Բիւզանդիոնը կործանողը՝ Թուրքիան է:

Պալքանեան քրիստոնեայ ազգերը ճզմելով՝ մինչեւ Վիէննայի դռները յառաջացողը այս իսլամ Թուրքիան է:

Աւստրիային եւ Երոպային դարեր տեւողութեամբ սպառնացողը եւ վտանգի ենթարկողը այս իսլամ Թուրքիան է:

Այսօր, Թուրքիոյ Երոպական միութեան մէջ մտնելը՝ անոր 1683թ. Վիէննայի դռներուն առջեւ չիրականացած Երոպան քանդելու եւ իսլամացնելու փափաքները կրկին պիտի վերստեղծէ»:

Շատ ապրիք, յարգարժան, վսեմափա՛յլ կարտինալ:

Այս ի՞նչ իրապաշտ խոսքեր են, եւ ի՞նչ կատարեալ ախտաճանաչում:

Յայտնի է, որ Թուրքերուն ի՞նչ ըլլալնուն շատ լավ տեղեակ էք:

Թուրքերուն, Անաթոլիայէն սկսելով մինչեւ Վիէննայի դռներու առջեւ հասած չրջաններուն, քրիստոնեայ ժողո՛-

վուրդներուն դէմ կատարած վայրագութեան զարհուրելի պատմութիւններն ալ գիտէք:

Լաւ, բայց վսեմափայլ կարտինալ, դուք այս իրականութիւնները նո՛ր ըսել սկսաք:

Թրքական վտանգը կրկին ձեր դռներուն առջեւ գալէն յետոյ խօսիլ սկսաք:

1453թ. թուրքերուն՝ Պոլիսը պաշարած տարիներուն, Բիւզանդիոնի կայսրէն օգնութիւն ուզող աղաչանքներուն դէմ, կաթողիկէները ի՞նչ ըրին:

Ոչ մէկ բան. մատերնին անգամ չչարժեցին:

Ընդհակառակը: Կաթողիկէներուն մրցակիցները եղող ուղղափառ Բիւզանդիոնին կործանումէն՝ շատ գոհ էին:

Նոյնիսկ թուրքերուն՝ Պալքաններու մէջի ուղղափառ ազգերը սուրէ անցնելու ատեն ալ բնաւ ձայն չհանեցին:

Եւ կաթողիկէներուն այս անմարդկային կեցուածքը՝ թուրքերուն մինչեւ Վիէննայի դռներուն առջեւ յառաջանալը թոյլատրեց:

Եւ հոն, այլեւս «ղանակը՝ ոսկորին հասած էր»:

Եւ վերջապէս, կաթողիկէները վտանգը տեսան:

Եւ Վիէննայի կաթողիկէներուն օգնութեան հասնող Լեհաստանի թագաւոր Ժան Սոպիէսկիի բանակը՝ թուրքերը պարտութեան մատնեց:

Եւ Եւրոպան, այս ձեւով, թրքական վտանգէն ազատեցաւ...

Այդ թուականներէն մինչեւ 19-րդ դարուն վերջերը՝ ուղղափառ ռուսերը թուրքերուն դէմ պայքարեցան:

Եւ ռուսերը թուրքերուն պիտի քչէին մինչեւ Միջին Ասիոյ տափաստանները ուրկէ եկած էին անոնք: Եւ Պոլիսը գրաւելով Բիւզանդական կայսրութիւնը կրկին պիտի վերստեղծէին:

Բայց, ուղղափառ ռուսերուն Միջերկրական իջնելով զօրանալը՝ կաթողիկէներուն գործին չեկաւ:

Եւ կաթողիկէները, անգլիացիներուն հետ գործակցելով, ստիպեցին ռուսերուն, որ Պոլիսէն հեռանան:

Ե՛լ կաթոլիկները, ե՛լ անոնց դաշնակիցները այն տարիներուն «հիւանդ մարդ» կոչուող թուրքերուն կրկին ոտքի հանեցին...

Վսեմափա՛յլ կարտինալ, ձեր ցեղակիցները եղող գերմանացիները, 1914-1918թթ. աշխարհամարտին, թուրքերուն զինակիցներն էին:

Եւ թուրքերը, 1915թ., Առաջին աշխարհամարտի խառնաչփոթութիւններէն օգտուելով, հազարաւոր տարիներէ ի վեր Արեւելեան Անաթոլիոյ իրենց հայրենիքին մէջ ապրող հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին:

Եւ գերմանացիները, իրենց զինակիցը եղող թուրքերուն՝ հայերը ցեղասպանութեան ենթարկելնուն դէմ բնաւ ձայն չհանեցին:

Ընդհակառակը, գերմանացիները՝ Հայկական ցեղասպանութեան ընթացքին, թուրքերուն թիկունք կանգնեցան:

Եթէ 1915թ. գերմանացիները՝ թուրքերուն հայ ազգը ցեղասպանութեան ենթարկելնուն արգելք ըլլային, այսօր Թուրքիա ըսուած պետութիւն մը գոյութիւն պիտի չունենար:

Որովհետեւ, այսօրուան Թուրքիան՝ հայերէն եւ յոյներէն «մաքրագործուած» հողերուն վրայ հիմնուած է:

Ահա այսպէս՝ վսեմափայլ կարտինալ:

Այսօր կաթոլիկները քրիստոնեաներուն դէմ իրենց գործած «մեղքերուն» պատիժը պիտի կրեն:

Ամերիկացիներուն եւ անոնց դաշնակիցը եղող միջազգային դրամատէրերու կազմակերպութեան ծրագիրներուն համեմատ՝ Թուրքիան անպայման Եւրոպական միութիւն պիտի մտնէ:

Եւ այն ատեն, քաղաքակրթութիւններուն եւ քրիստոնէութեան օրրան Եւրոպան՝ քիչ միջոց մը յետոյ, թուրքերուն եւ իսլամ ծայրայեղականներուն զոհը պիտի ըլլայ:

Թիւ 89

«Նայիրի», 7 Սեպտեմբեր 2004, Թիւ 223

**«HÜRRİYET» ԹԵՐԹԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ**

**ՔԱՅ ՆԱՄԱԿ**

**«ԱՅՍՔԱՆ ՍՈՒՏ ԽՕՍԵԼՈՒ  
ՉԱՏՉՅՈՂՆ ԱԼ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԱՐԱԾՆ Է»**

(ԹՐԲԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԾ)

3 Սեպտեմբեր 2004թ., չէչէններուն Օսեթիոյ մէկ դպրոցին մէջ կատարած սարսափելի ջարդին համար, 4 Սեպտեմբեր 2004 թուակիր «Hürriyet» թերթը վերնագիր դրեր է՝ «Ռուսերուն երկրորդ ազատագրութեան ջարդը»:

Այսինքն՝ «Hürriyet» թերթը ըսել կ'ուզէ թէ՛

1.- 2002 թուականին Մոսկուայի թատրոնին մէջ չէչէններուն ահաբեկչական գործունէութեան ընթացքին մահացած հարիւրաւոր մարդկանց սպաննիչը ռուսերն են:

2.- 3 Սեպտեմբեր 2004 թուականին, Օսեթիոյ մէկ դպրոցին մէջ չէչէններուն ահաբեկչական գործունէութեան ընթացքին մահացող 300- է աւելի զոհերուն սպաննիչը կրկին՝ ռուսերն են:

Յարգարժան «Հիւրիյէթ» թերթի պատասխանատու: Այս անիրաւ վերնագիր-գրութիւնը ինչի կը նմանի՝ գիտէ՞ք:

Դուք՝ թուրքերդ, պետութիւն եւ ազգ ըլլալով, ձեր միասնաբար գործադրած 1915-ի Հայկական ցեղասպանութիւնը մինչեւ այսօր ո'չ միայն կ'ուրանաք, այլեւ ընդհակառակը՝ «հայերը ջարդեցին թուրքերը» կ'ըսէք:

Այսօր, չէչէններուն Ռուսիոյ մէջ կատարած անմարդկային եւ զարհուրելի ոճիրներուն պատասխանատուութիւնը



ուսերուն վրայ նետելով, դուք, իրականութեան մէջ ձեր կատարած ոճիրները քողարկելու կ'աշխատիք:

2 Սեպտեմբեր 2004 թուակիր Փրանսական «FIGARO» թերթը, հետեւեալ տեղեկութիւնը տուած է.

«Չէչէններուն թիկունք կանգնող թրքական կազմակերպութիւնները՝ ցոյցեր կը նախատեսեն Պոլսոյ եւ Անգարայի ուսական դիւանագիտական շէնքերուն առջեւ, նախօրէին Ռուսիոյ նախագահին այցելութեան որ, սկզբունքով, վաղը տեղի պիտի ունենայ»:

Ո՞վքեր են արդեօք այս չէչէններուն թիկունք կանգնող թրքական կազմակերպութիւնները:

Եթէ դուք չէք գիտեր, մենք ըսենք ձեզի՝

Ռուսիայէն փախչելով Թուրքիա ապաստանած հազարաւոր չէչէններուն՝ ուսերուն դէմ պայքարելու համար ստեղծած կազմակերպութիւններն են ասոնք:

Դուք, այս չէչէններուն մէջէն, տեռորիստ ըլլալու ամէնէն աւելի ատակները զատեցիք, զանոնք ձեր զինուորական կեդրոններուն մէջ մարզեցիք եւ յետոյ, Վրաստանի ճամբով, գաղտնաբար Ռուսիա դրկեցիք:

Եւ Ռուսիոյ մէջ, տարիներէ ի վեր, ամէնէն սարսափելի տեռորիստական գործողութիւնները կատարողները՝ ձեր զինուորական կեդրոններուն մէջ մարզուած չէչէններն են:

Յարգարժան «Hürriyet» թերթի պատասխանատու: Ձեր 4 Սեպտեմբեր 2004 թուակիր թերթը՝ առաջին էջէն մինչեւ վերջին էջը կարդացինք:

Բայց աշխարհի բոլոր լրատուական հաստատութիւններուն կողմէ տրուած եւ բոլոր թերթերուն մէջ գրուած լուրը ձեր 4 Սեպտեմբեր 2004 թուակիր «Hürriyet» թերթին մէջ չգտանք:

Եթէ այս լուրին ինչ ըլլալը չէք գիտեր, մենք ըսենք ձեզի:

Վերջին օրերուն Ռուսիոյ մէջ կատարուած ահաբեկչութիւններէն...

1.- Մոսկուայի մեթրոյին մուտքի դրան առջև կատարուած եւ 50-է աւելի մարդկանց մահուան պատճառ եղած տեռորիստական գործողութիւնը...

2.- Ռուսական երկու ճամբորդատար օդանաւերուն անկումին հետեւանքով 100-ի մօտ մարդկանց մահուան պատճառ եղած տեռորիստական գործողութիւնը...

3.- 3 Սեպտեմբեր 2004-ին, Օսեթիոյ մէկ դպրոցին մէջ կատարուած եւ 300-է աւելի անմեղներուն մահուան եւ 1000-ի շուրջ ալ վիրաւորեալներու պատճառ եղած զարհուրելի տեռորիստական գործողութիւնը...

... Այս երեք տեռորիստական գործողութիւններուն պատասխանատուութիւնը ստանձնեց՝ «GROUPE ISLAMIQUE-BRIGADES ISTAMBOULI» կազմակերպութիւնը:

Այսքան կարեւոր լուրի մը ձեր թերթին մէջ հրատարակուած չլլալը...

Ձեր՝ թուրքերուդ այս տեռորիստական գործողութիւններուն ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ըլլալը ապացուցանող փաստերէն մէկը չէ՝ արդեօք:

Թիւ 90

«Նայիրի», 21 Սեպտեմբեր 2004, թիւ 224

### ՉԻՉԼՆԱՃԻ ՏԵՌՈՐԻՍՏՆԵՐՈՒՆ ԹԱՏՐՈՆԸ

Տեռորիստին ալ թատրոնը կ'ըլլա՞յ եղեր: Մինչդեռ կայ եղեր: Ինչպէ՞ս կ'ըլլայ: Բացատրելու ջանանք:

3 Սեպտեմբեր 2004թ. Օսեթիոյ դպրոցին մէջ չէչէն ահաբեկիչներուն կատարած զարհուրելի ջարդը կատարուելէ անմիջապէս յետոյ, այս արարքներուն պատասխանատուութիւնը ստանձնեց «BRIGADES ISTAMBOULI» անունով խումբ մը: Ո՞վ էր այս «BRIGADES ISTAMBOULI»-ի խումբը:

Անունը վրան՝ պոլսեցի տեռորիստներ էին: Այսինքն՝ Թուրքիոյ մէջ մարդուած չէչէնական տեռորիստական խմբակցութիւն մը:

Այս «BRIGADES ISTAMBOULI» խումբին պատասխանատուն ալ, շատ անխելք մարդ է եղեր:

Վերջին ատեններուն Ռուսիոյ մէջ կատարուած բոլոր տեռորիստական արարքներուն պատասխանատուներուն՝ պոլսեցի չէչէններ ըլլալը կը խոստովանի այս ղեկավարը:

Բայց այս ահաբեկչական արարքներէն 15 օր յետոյ, նոր «Թատրոն մը բեմադրուեցաւ»:

Չէչէնացի տեռորիստ ղեկավարներէն «CHAMIL BASSAEV» վերջին ահաբեկչական արարքներուն (Մոսկուայի մեթրոյին առջեւ կատարուած ահաբեկչութեան, ռուսական 2 ճամբորդատար օդանաւերը վար առնելու արարքներուն, եւ Օսէթիոյ դպրոցին մէջ կատարուած ջարդին) պատասխանատուն ես եմ ըսելով զեկոյց հրապարակեց:

Եւ չըլլալիք բան՝ BASSAEV, դպրոցին մէջ կատարուած ջարդին մասին մանրամասնութիւններ կու տար:

Հիմա եկուր եւ մի ըսեր՝ BASSAEV-ին այս ըրածին՝ մեր գիւղը «Թատրոն խաղալ» կ'ըսեն:

Յայտնի է, որ Թուրքիայէն եկած հրահանգով, «BRIGADES ISTAMBOUL»-ի խոստովանութիւնը մոռցնել կ'ուզէ տալ BASSAEV: Եւ դեռ ինչե՛ր եւ ինչե՛ր: Խեղճ մարդ: BASSAEV-ը դրամ չունի եղեր:

Այդ պատճառաւ Մոսկուայի մէջ ահաբեկչական արարքներ չի կրնար կատարել եղեր: Պէն Լատէնին չի ճանչնար եղեր: Բայց Պէն Լատէնը, եթէ դրամ ղրկէ, ինք գոհ կը մնայ եղեր:

Հիմա CHAMIL BASSAEV-ին այս ըսածներուն սուտ ըլլալը, Թատրոն ըլլալը 18-9-2004 թուակիր «MILLIYET» թերթին 20-րդ էջին վրայ հրատարակուած գրութիւնով փաստենք: «MILLIYET» թերթին գրածին համեմատ՝ չէչէնացի արմատականներուն (այսինքն՝ տեռորիստներուն) միայն 2002թ., Թուրքիայէն 10 միլիոն տոլար ղրկուեր է: Այս 10

միլիոն տոլարը՝ պաշտօնապէս յայտարարուածն է: Բայց ո՞ւր են գաղտնապէս դրկուած դրամներուն եւ գէնքերուն հաշիւը:

CHAMIL BASSAEV, 3 Սեպտեմբեր 2004-ին, Բեսլանի մէջ կատարուած ահաբեկչութեան արարքները պատմած ատեն, ան շատ աղուոր «MASAL» կը կարդայ:

CHAMIL BASSAEV-ի Բեսլանի դպրոցին մէջ կատարուած ահաբեկչական արարքներուն շուրջ, 18 Սեպտեմբեր 2004 թուակիր «MILLIYET» թերթին 20-րդ էջին մէջ հրատարակուած խօսքերը, նոյնութեամբ տալու ջանանք:

«Ռուսական զինուորները», եթէ սկսէին քաշուիլ, պատանդ տղոցը ջուր եւ ուտելիք պիտի տրուէր:

«Ռուսական զինուորները», եթէ Չէչէնիոյ լեռնային շրջանները լքէին, նախ՝ մինչեւ 10 տարեկան տղաքը ազատ պիտի արձակուէին: Իսկ մնացեալ ռուսական զինուորներուն Չէչէնիայէն ելլելու պարագային, մնացեալ տղաքն ալ ազատ պիտի արձակուէին:

Եւ ամէնէն վերջ, եթէ մեր բոլոր առաջարկները իրագործուէին, մենք, խումբ մը պատանդներու հետ, Չէչէնիա պիտի քաշուէինք: Այս էր ծրագիրը»:

CHAMIL BASSAEV-ին այս զարհուրելի ծրագիրը կարդալու միջոցին, պիտի խոստովանինք, որ սոսկացինք: Բայց այս ծրագիրը՝ «ամբողջութեամբ թատրոն» է, ճիւղային սուտ մըն է:

BASSAEV-ն ալ շատ լաւ գիտէ, որ ռուսերը՝ ոչ մէկ սպառնալիքով, Չէչէնիայէն չեն քաշուիր...

Հիմա ալ մենք, Բեսլանի դպրոցին մէջ չէչէն ահաբեկիչներուն «իրագործած» զարհուրելի ողբերգութեան մասին, մեր գիտցածները պատմելու ջանանք:

Չէչէն տեռորիստները, Բեսլանի դպրոցին մէջ, 1200-էն աւելի դպրոցականներ եւ անոնց հարազատները, դպրոցին մէջ հաւաքեցին: Այս պատանդներէն ոչ մէկուն ջուր եւ ուտելիք տրուեցաւ:

Որովհետեւ տեռորիստները գիտէին, որ այս պատանդները պիտի մեռնէին:

Եւ ահաբեկիչները, մարզասրահին սիւները ուումբերով պատեցին: Տեռորիստներուն այս աշխատանքները, իրենց նկարած VIDEO-ով հեռատեսիլէն ցուցադրեցին:

Եւ տեռորիստները, իրենց համար ամէնէն յարմար ատենին պայթեցուցին ուումբերը, եւ մարզասրահին տանիքը՝ խեղճ պատանդներուն գլխուն վրայ կքեցաւ:

Ռումբերուն պայթումով եւ տանիքին կքելովը՝ հարիւրաւոր պատանդներ այրուելով եւ ճգմուելով մահացան: Եւ տեռորիստները՝ այս քառսային վիճակէն օգտուելով, իրենց գլուխներուն վրայ անցուցած դիմակները նետեցին եւ փախուատ տուին: Քանի մը տեռորիստներ՝ ուսական զինուորներուն կողմէ սպաննուեցան: Բայց ահաբեկիչներուն մեծ մասը յաջողեցան փախուատ տալ:

4 Սեպտեմբեր 2004 թուակիր «Hürriyet» թերթին գրածին համեմատ, 15 տեռորիստներ փախուատ տուած են:

Չէչէն ահաբեկիչներուն, Օսէթիայի դպրոցին մէջ կատարած ահաբեկչութեան նպատակը՝ կարելի եղածին չափ մեծ թիւով ուսեր սպաննել եւ յետոյ փախուատ տալ էր:

Անոնք, 2002թ. Մոսկուայի թատրոնին մէջ իրենց ենթարկուած պարտութիւնը չէին մոռցած:

Այդ պատճառաւ, այս անգամ Օսէթիայի դպրոցին մէջ, ուսերուն հետ բանակցութեան չմտան:

Եւ ուումբերը պայթեցնելով՝ փախուատ տուին...

Չէչէն ահաբեկիչները՝ Օսէթիոյ Բեսլան քաղաքի դպրոցին մէջ, 350-ի շուրջ մեծ ու պզտիկ անմեղներ սպաննելով, կրկին ապացուցանեցին, թէ չէչէնները ի՞նչ վայրագ մարդասպաններ են:

Որովհետեւ հայերը շատ լավ գիտէն չէչէններուն ի՞նչ անխիղճ եւ վայրենի ցեղախումբ մը ըլլալնին:

1915-ին թուրքերուն իրականացուցած Հայկական ցեղասպանութեան շրջանին, արսորեալ հայերու կարաւաններուն վրայ յարձակելով, անպաշտպան հայերը վայրագօրէն սպաննող-ջարդողները քրդական եւ, մասնաւորաբար, չէչէն հրոսակներն էին:

Թիւ 91

«Նայիրի», 5 Հոկտեմբեր 2004, Թիւ 225

### «ԹՈՒՐԵՒԱՆ ԱՅԼԵՍ ԶԿԱՅ՝ ԻՐԱՔԻ ՄԷՉ»

1 Հոկտեմբեր 2004 Թուակիր «Hürriyet» Թերթին, «Մամուլէն ընտրուած գրութիւններ» բաժնին մէջ, M. ALI BİRAN-ին «Թուրքիան այլեւ չկայ՝ Իրաքի մէջ» վերնագրով գրութիւնը կարդացինք:

Այս գրութեան մէջ, պրն. Ալի Պիրանտ, Ամերիկային՝ Սատտամի իրաքեան վարչաձեւը տապալելէն յետոյ այսօր ստեղծուած կացութիւնը, բաւական իրատեսութեամբ կը ներկայացնէ:

Բայց, գրութեան վերջաւորութեան, պրն. Ալի Պիրանտ, իր անհաւատալի առաջարկներով կ'ապացուցանէ, թէ ինքը Թրքական բռնակալ մտայնութեան ներկայացուցիչն է:

Հիմա, պրն. Ալի Պիրանտին գրութեան վերջաւորութեան ըսուածները նշելու ջանանք:

«Իրաքի քիւրտերը, առանց Թուրքիոյ նեցուկին, իրենց անվտանգութիւնը իսկապէ՛ս չեն կրնար ապահովել: Այս իրականութիւնը քիւրտերը գիտնալու են:

Եթէ օր մը Իրաքի մէջ կռիւ սկսի, քիւրտերուն միայն Թուրքիան կրնայ պաշտպանել»:

Սիրե՛ր են քեզ, պրն. Ալի Պիրանտ: Թուրքիան՝ քիւրտերը պիտի պաշտպանէ եղեր:

Յարգելի Պիրանտ, դուն «ամէն ոք ապո՞ւշ, ժողովուրդն ալ ցնդա՞ծ կը կարծես»:

Թուրքերուն՝ Արեւելեան Անաթոլիոյ մէջ քիւրտերը ինչպէ՞ս սպաննելը, քրդական գիւղերը բոցարձակ մեքենաներով ինչպէ՞ս այրելն եւ պուլտոզերներով ինչպէ՞ս քանդելն ամէն մարդ գիտէ:

Եւ հիմա ելեր ես, քիւրտերը պաշտպանելու մասին կը խօսիս:

«Դուն տղա՞յ կը խաբես»:

Եւ կամ՝ Իրաքի այսօրուան կացութիւնը չգիտնա՞լ կը ձեւացնես:

Այսօր Իրաքի մէջ, ամերիկացիներուն ամենամեծ օգնականները քիւրտերն են:

Եւ քիւրտերը՝ Հիւսիսային Իրաքին տէրը դարձած են:

Հիւսիսային Իրաքի մէջ, քրդական պետութիւնը շատո՞նց հիմնուած է իր բանակով, իր Ազգային ժողովով, իր կառավարութեամբ եւ իր դրամով իսկական պետութեան մը վերածուած է:

Միայն թէ, տակաւին պաշտօնապէս չէ հռչակուած:

«Դե՛ռ ատենը չէ», — կ'ըսեն քիւրտերը: Բայց ասոր ալ կարգը պիտի գայ:

Պրն. Ալի Պիրանտ իր գրութեան մէջ կ'ըսէ, թէ՝ «Իրանը, Իրաքի կացութեան մէջ այսօր, առաջնակարգ դեր կը կատարէ»:

Շատ ճիշդ ախտաճանաչում է:

Բայց պրն. Ալի Պիրանտ քիւրտերուն՝ պարսիկներուն արիւնի եղբայրները ըլլալը չի՞ գիտեր, որ «Առանց Թուրքիոյ՝ քիւրտերը իրենց անվտանգութիւնը չեն կրնար ապահովել» կ'ըսէ:

Քիւրտերը, իրենց արիւնի եղբայրները եղող պարսիկներուն տեղ, ինչո՞ւ թուրքերէն յոյսփրկութիւն սպասեն:

Կարելի՞ Բան է, որ քիւրտերը, «ողջ-ողջ իրենց գլուխը առիւծին բերանը խոթեն»:

Յարգելի՛ Պիրանտ, դուք հիմա, Իրաքի քիւրտերը ձգեցէք, եւ Թուրքիա ըսուած հողերուն վրայ ապրող քիւրտերուն մասին մտածեցէք:

Իրաքի քրդական պետութեան պաշտօնապէս հռչակուելէն յետոյ, կարգը՝ Թուրքիոյ մէջ գտնուող 20 միլիոնէ աւելի քիւրտերուն պիտի գայ:

Եւ Թուրքիոյ քիւրտերը, Իրաքի քրդական պետութեան հետ միանալու համար, պիտի պայքարին:

Եւ նայինք, թէ այն ատեն, թուրքերուն վիճակը ի՞նչ պիտի ըլլայ:

Թիւ 92

«Նայիրի», 19 Հոկտեմբեր 2004, Թիւ 226

**ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ  
ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՕՏԱՐ ՈՒԺԵՐ  
ԿԸ ՃՆՇԵՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ**

Եւրոպայի ժողովուրդներուն հարիւրին եօթանասունհինգը՝ Թուրքիոյ Եւրոպական միութեան մէջ մտնելուն հակառակ է:

Ուրեմն, ուզողներն ովքե՞ր են:

Ուզողները՝ ամերիկացիները եւ միջազգային մեծ դրամատէրերու կազմակերպութիւնը:

Թուրքիոյ՝ «Տրովադայի ձիին» դերը կատարել պիտի տան: Որ Եւրոպան ներսէն փլցնեն:

Այս իրականութիւնը բոլորին ծանօթ է: Բայց ոչ մէկը խօսելու համարձակութիւնը ունի:

Սօսողներուն ալ ձայնը՝ ո՛չ մէկը կ'իմանայ:

Որովհետեւ, միջազգային մամուլը՝ մեծ դրամատէրերուն ձեռքն է:

Եւրոպական պետութիւնները մեծ ճնշումի ենթարկուած են:

Ամերիկացիներուն եւ միջազգային մեծ դրամատէրերու՝ տնտեսական «պոյքոթ», գործադուլ եւ ժողովրդային ապրտամբութիւններ կատարել տալու սպառնալիքներուն ենթակայ Եւրոպական պետութիւնները, շատ դժուար վիճակի մատնուած են:

Կարծէք թէ, Եւրոպական պետութիւնները ուրիշ հարցեր չունին զբաղելու համար: Եւրոպական թերթերը եւ հեռատեսիլները տեւաբար, Թուրքիոյ Եւրոպական միութեան անդամակցութեան հարցը առաջնակարգ նիւթ կ'ընեն:

Բնական է՝ կրկին մեծ դրամատէրերու ճնշումով:

Մինչ այդ, վարագոյրին ետեւէն, նոր սաղրանքներ կատարուիլ սկսան:



Միջազգային դրամատերերուն «աւանդական» գործակատարները սկսեր են աշխատիլ:

Եւրոպական պառլամենտին երեսփոխաններ եղող այս գործակատարները՝ Թուրքիոյ Եւրոպական միութեան մէջ առնուելուն համար ստորագրութիւն հաւաքելու արչաւի սկսեր են:

Եւ ովքե՞ր են այս գործակատարները:

Ասոնցմէ երեք երեսփոխաններ Փրանսացի նախկին անիշխանականներ են:

Ասոնք 1968թ., միջազգային մեծ դրամատէրերու հրահանգով, Փրանսայի Հանրապետութեան նախագահը՝ զօր. Տր Կոլը իշխանութենէն վար առնելու համար շղթայազերծուած (Մայիս 1968թ.) աշակերտական ծանօթ ապստամբութիւններուն առաջնորդներն էին:

Եւ Ֆրանսան՝ Մայիս 68-ի աշակերտական ապստամբութիւններով, կործանումի սեմին հասած էր:

Այս հին անիշխանականներուն հիմա ալ նպատակը՝ Թուրքիան, Եւրոպական միութեան մէջ առնել տալով, Եւրոպան կործանել է:

Մինչ այդ, թրքական թերթերուն բովանդակութիւնը մեր ուշադրութիւնը գրաւեց:

Ռամազանի ամիսը սկսելուն պատճառաւ, թրքական թերթերուն գրեթէ տասը էջը՝ կրօնական նիւթերու վերաբերեալ գրութիւններու յատկացուած են:

Մինչդեռ, Եւրոպայի մէջ քրիստոնէական տօներու օրերուն, թերթերուն մէջի կրօնական նիւթերու մասին գրութիւնները՝ ընդամէնը տասը տողի շուրջ կ'ըլլան...

Թուրքիոյ համար, ութսուն տարի է, որ «LAIC» պետութիւն մըն է», — կ'ըսուի: Բայց, ձեր ո՞ր կողմը «LAIC» է:

Մեր գիտցածը՝ Թուրքիան այսօր իր Ազգային ժողովով, կառավարութեամբ ու փողոցի մարդոցմով կրօնամոլ պետութիւն մըն է:

Եւ Եւրոպական ժողովուրդները իրաւունք ունին Թուրքիոյ Եւրոպական միութիւն մտնելուն հակառակելու:

Որովհետև, դուք ձեր կրօնամոլ մտայնութեամբ, եթէ եւրոպական միութեան մէջ մտնէք, միջոց մը ետք, եւրոպական ժողովուրդներուն կը պարտադրէք իսլամանալ:

Ճիշդ, քրիստոնէութեան օրրանը եղած Անաթոլիոյ մէջ քրիստոնեայ ժողովուրդները բոլորովին մաքրագործելնուդ նման:

Ամենակարճ միջոցի մէջ բոլորովին իսլամացած ուրուական եւրոպա մը մէջտեղ կը բերէք:

Թիւ 93

«Նայիրի», 2 Նոյեմբեր 2004, Թիւ 227

**ՄԱՅԻՍ 1968Թ. ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՊՍՏԱՍԲՈՒԹԻՒՆՈՎ  
ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԶՕՐԱՎԱՐ  
DE GAULLE-Ը ՔԱՆՂՈՂ ԿԱՐՄԻՐ DANY-Ն ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ**

19 Հոկտեմբեր 2004 Թուակիր «Hürriyet» Թերթին առաջին էջին վերնագիր լուրը, եւ ներքին էջերուն մէջ 5 հրապարակագիրներու յօդուածներուն նիւթը Կարմիր DANY-ին Թուրքիա այցելութեան մասին է:

Ո՞վ է եղեր այս Կարմիր DANY-ն, որ անոր Թուրքիա այցելութեան այսքան կարեւորութիւն տրուեր է:

Կարմիր DANY-ին բուն անունը՝ DANIEL BENDIT է: Մայրը գերմանացի հրէայ է: Հօրը ով ըլլալը յայտնի չէ: Եւ DANIEL COHN-BENDIT ասով կը հպարտանայ. «Ես աշխարհի քաղաքացի եմ»,— կ'ըսէ: DANIEL COHN-BENDIT-ին ինչո՞ւ կարմիր DANY ըսեր են:

Անունը վրան է՝ Կարմիր է: Այսինքն՝ համայնավա՞ր է:

Ո՛չ, ծայրայեղ ձախ TROTSKISTE է: Ծանօթ իրականութիւն է, որ TROTSKISTE-ները շատ թշնամի են համայնավարներուն: Ի՞նչ ըրեր է այս կարմիր DANY-ն:

Մայիս 1968-ին, Փարիզի համալսարանական ուսանողները, ապստամբութեան մղած առաջնորդն է: Ինչո՞ւ:

Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ DE GAULLE-ը քանդելու համար: Յաջողեցա՞վ:

Այո՛: Այս ուսանողական ապստամբութեամբ, Ֆրանսան փլուզման վտանգ անցուց:

Փարիզը եւ Ֆրանսայի մեծ քաղաքները շատ վնասուեցան:

Եւ զօր. DE GAULLE-ը, տարի մը վերջ, ստիպուեցալ հրաժարիլ:

Ֆրանսայի արդարութիւնը, այս աղէտին պատասխանատուները դատարանի յանձնեց:

Յանցաւոր նկատուողները՝ դատապարտուեցան:

Կարմիր DANY-ն ալ դատապարտուեցաւ, բայց, իր մայրը գերմանացի հրէայ ըլլալուն՝ Գերմանիա ապաստանեցաւ:

Եւ ֆրանսական դատարանը Կարմիր DANY-ին Ֆրանսա մուտքը բաւական տարիներ արգիլած էր: Կարմիր DANY-ն Գերմանիոյ մէջ գոյն փոխեց:

Ծայրայեղ ձախակողմեան DANY, Կարմիր DANY-ն՝ Գերմանիոյ մէջ «Կանանչներուն» կուսակցութեան մէջ մտաւ, «կանանչացաւ»:

Եւ մեծ ճարպիկութեամբ կանանչացած Կարմիր DANY-ն՝ քանի մը տարիներ յետոյ, «Կանանչներուն» առաջնորդը ըլլալով, Ֆրանքֆուրդ քաղաքին փոխքաղաքապետ ընտրուեցաւ:

Եւ Կարմիր DANY-ն՝ Եւրոպական միութեան ընտրութիւններուն մասնակցեցաւ: Եւ Գերմանիոյ «Կանանչներուն» ներկայացուցիչը ըլլալով՝ Եւրոպական միութեան երեսփոխան ընտրուեցաւ: Եւ այսքանով ալ չգոհացաւ:

Եւրոպական խորհրդարանին մէջ, բոլոր «Կանանչ» երեսփոխաններուն նախագահ ալ ընտրուեցաւ:

Եւ հին կարմիր - նոր կանանչ DANY-ն, Եւրոպական խորհրդարանին բանակցութիւններուն ընթացքին եւ առ-

նուած որոշումներուն մէջ՝ առաջնակարգ ձայն ունեցող ղեկավարներէն մէկը եղաւ:

Եւ Եւրոպական խորհրդարանին այս նոր առաջնորդներէն կարմիր-կանանչ DANY-ն, խորհրդարանի նիստերուն «նետած» ճառերուն մէջ, մինչեւ երէկ, Թուրքիոյ Եւրոպական միութեան մէջ մտնելուն դէմ կ'ելլէր:

Բայց անցեալները լուր մը տարածուեցաւ: Կարմիր-կանանչ DANY-ն, Եւրոպական խորհրդարանին նիստերուն «նետած» ճառերուն մէջ, այս անգամ ալ բոլորովին հակառակը՝ Թուրքիոյ Եւրոպական միութեան մէջ առնուիլը պահանջեր է:

Բնական է՝ Թրքական կառավարութիւնը այս առիթը կը փախցնէ՞:

Կարմիր-կանանչ DANY-ն, Թուրքիա հրաւիրուեր է: Հիմա Տենին, Թրքական շատ ծանօթ ձեռով, Թուրքիոյ մէջ պիտի հիւրասիրուի եւ պիտի փառաբանուի... վերջը ի՞նչ ըլլալիքը ծանօթ է:

Մինչ այդ, մեր միտքը, հարցումով մը չարչարուիլ սկսաւ:

Այս վերջին՝ 180 աստիճան գաղափար փոխելէն յետոյ, DANY-ին ի՞նչ անուն պիտի տան:

Առաջ DANIEL COHN-BENDIT-ին Կարմիր DANY կ'ըսէին:

Յետոյ, անոր Կանանչ DANY կոչել սկսան:

Բայց հիմա, DANY-ին ի՞նչ անուն պիտի տան:

Եթէ մեզի հարցնէք, հիմա ալ կարմիր-կանանչ DANY-ին ամէնէն աւելի վայրող անունը

«ԳՈՐՇ - ԳԱՅԼ DANY» է:

Թիւ 94

«Նայիրի», 16 Նոյեմբեր 2004, Թիւ 228

**«ՊԻՐ ԼԱՀՉԱԻ ԹԵԱՀՈՒՐ»  
 («ՄԷԿ ԱԿՆԹԱՐԹԻ ՅԱՊԱՂՈՒՄ»)**

Յարգելի՛ երիտասարդ թուրքեր (չրլլա՛յ, որ կարծէք, թէ ժէօն թուրքեր ըսել կ'ուզենք):

Թուրք մեծ բանաստեղծ Թեվֆիք Ֆիքրէթին 1905թ. գրած «Պիր Լահզաի Թէահուր» («Մէկ ակնթարթի յապաղում») բանաստեղծութիւնը գիտէ՞ք արդեօք:

Այս բանաստեղծութեան վերնագիրը եղող «Մէկ ակնթարթի յապաղումով» Թեվֆիք Ֆիքրէթը, ի՞նչ յապաղման մասին կ'արտայայտուի, գիտէ՞ք արդեօք:

Եթէ չէք գիտեր, մենք ըսենք:

1905թ. հայ Փետայիները, կարմիր սուլթան Ապտիւլ Համիտէն վրէժ լուծելու համար, անոր դէմ մահափորձ մը պատրաստած էին:

Ինչո՞ւ:

Որովհետեւ Ապտիւլ Համիտը, 1894-1896 տարիներուն, Արեւմտեան Հայաստանի մէջ, (այսօր քիւրտերուն Քիւրտիստան ըսած եւ ձեր ալ Արեւելեան Անաթոլիա որակած հայկական նահանգներուն մէջ) պատմութեան ծանօթ թուականներէն ի վեր, այդ հողերուն վրայ բնակող հայերը ազգովին մաքրագործած էր:

Ապտիւլ Համիտ, իրաքէն բերել տուած քիւրտերով, «Համիտիէի զօրագունդեր» կազմած էր: Եւ այդ զօրագունդերը՝ Ապտիւլ Համիտին տուած հրահանգով, պզտիկ-մեծ չնայած՝ բոլոր հայերը սուրէ անցուցած էին:

Եւ Ապտիւլ Համիտին «կարմիր սուլթան» մակդիրը՝ իր հայոց մաքրագործման առաջնակարգ պատասխանատուն ըլլալուն համար տրուած էր...

...1900թ. Ապտիլ Համիտէն գոհ չեղող հրէաները՝ Սելանիկի մէջ «Ժէօն թուրքեր» («Երիտասարդ թուրքեր») կազմակերպութիւնը հիմնեցին:

Նպատակնին՝ Ապտիլ Համիտը գահէն վար առնել էր:

Եւ Եւրոպայի մէջ, հայկական կազմակերպութիւնները «Ժէօն թուրքերուն» հետ, գործակցութեան մէջ էին:

Եւ Զուլիցերիոյ ժրնել քաղաքին մէջ կատարուած ժողովներու ընթացքին, «Ժէօն թուրքերը», հրէաները, դաւանափոխ հրէաները եւ հայերը՝ Ապտիլ Համիտէն ինչպէս կրնան ձերբազատուիլ ըսելով կը խորհրդակցէին...

...Եւ Սօֆիայի մէջ, հրէաներուն աջակցութեամբ, հայերը ումբերով լեցուած կառք մը պատրաստեցին:

Եւ հայ Փետայիները՝ այս կառքը Պոլիս տարին:

Ծրագիրը հետեւեալ ձեւով էր՝

1905թ. Ապտիլ Համիտ, «էրլտրզի» պալատէն ելլելով դէպի Ուրբաթ օրուան կրօնական արարողութեան գացած միջոցին, ումբով լեցուն կառքը պիտի պայթեցնէին...

Եւ հայերը, «Ժէօն թուրքերը», հրէաները եւ բոլոր օսմանեան ժողովուրդները, կարմիր սուլթան Ապտիլ Համիտէն պիտի փրկուէին:

Բայց, ումբերով լեցուն կառքը, Ապտիլ Համիտի անցնելէն քիչ յետո՛յ պայթեցաւ, եւ Ապտիլ Համիտ ազատեցաւ, չմեռա՛ւ:

Եւ օսմանեան պետութեան մէջ ապրող ազատատենչ ժողովուրդները սուգի մատնուեցան:

Ահա, Թեվֆիք Ֆիքրէթին («Մէկ ականթարթի յապաղում») բանաստեղծութիւնը՝ որ կարմիր սուլթան Ապտիլ Համիտին մէկ ականթարթի յապաղումով մահէն ազատուելուն պատճառած խոր ափսոսանքով եւ ընդվզման զգացումներով գրուած է:

Թիւ 95

«Նայիրի», 1 Յունուար 2005, Բացառիկ

## ՄԵՍ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

### ՎԵՐՉԱՊԷՍ ՄԵՉԵՐՆԵՂ «ՄԱՐԴ» ՄԸ ԵՆԱԻ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՐՅԱԻ ԸՍԵԼ

«HÜRRİYET» [Թերթին 31-10-2004 թիւին մէջ, երիտասարդ գրող Օրհան Բամուքին հետ եղած հարցազրոյց մը հրատարակուեցաւ:

Եւ Օրհան Բամուք, այս հարցազրոյցին մէջ, 1915-էն մինչեւ այսօր «TABOU» եղող «իրականութիւնը» հրապարակեց:

«1915-ին այս երկրին մէջ ապրող ժողովուրդին առնուազն կէսը՝ քրիստոնեայ էր: Անոնք այս երկրէն վոնտուեցան եւ բնաջնջուեցան»:

ՕՐՀԱՆ ԲԱՄՈՒՔ այս իրականութիւնը, շատ չէ՛ եթէ տարի մը առաջ ըսած ըլլար, հայրենիքի դէմ դաւաճանութեամբ կը ձերբակալուէր եւ կը դատուէր:

Բայց, գիտէք թէ հիմա, ձեր պետութիւնը ժողովրդավարութեան թատրոն կը խաղայ, Եւրոպական միութեան մէջ մտնելու համար:

Ձեր պետութիւնը, 1915-ի նախընթաց տարիներուն, նոյն թատրոնը խաղացած էր՝ հայերը քնացնելու համար:

1908թ. (իբր թէ) «Hürriyet»-ին, հայերը իրենց ուրախութենէն կը թռչին՝ «Ազատութիւն» եկաւ ըսելով:

Նոյնիսկ 1910-ներուն ձեր թատրոնի «մեծ վարպետը»՝ Թալեաթ փաշան, հայկական տառերու ստեղծումին 1500-ամեակի տարեդարձին՝ Պոլսոյ հայոց պատրիարքարանին առջեւ կատարուած հանդիսութեան մասնակցած էր: Եւ այդտեղ, իր «նետած» ճառին մէջ գոված եւ գոված, մինչեւ երկինք հանած էր հայերը:

Այլ՝ եղբայրութեան ի՛նչ արտայայտութիւններ: Եւ «Hürriyet»-ի մէջ միասնաբար ապրելու խոստումներ:

Բայց, նույն Թալեաթ փաշան, քանի մը տարի յետոյ, Առաջին աշխարհամարտէն օգտուելով, 24 Ապրիլ 1915-ին՝ պզտիկ, մեծ, կին, էրիկմարդ չնայած ու չհաշուած, բոլոր հայերը սպաննելու հրամանը արձակած էր:

Ահա՛ւասիկ յարգելի ORHAN PAMUK-ը, այս իրականութիւնը ըսելու քաջութիւնը ունեցաւ:

Աշխարհի մէջ ո՛չ մէկ տեղ, եւ պատմութեան ո՛չ մէկ շրջանին, 1915-էն մինչեւ 1923թ., Անաթոլիոյ մէջ ձեր իրագործած ցեղասպանութեան նմանը կրնաք գտնել:

Ահաւասիկ՝ յարգելի ORHAN PAMUK-ին մատնանշած «1915-ին այս երկրին մէջ ապրող ժողովուրդին առնուազն կէսը՝ քրիստոնեայ էր» ըսած ժողովուրդը, Փարմասոն մեծ վարպետ Թալեաթ փաշային հրամանով սպաննուած ժողովուրդն է:

Եւ դուք, սարսափելի իրականութիւն մը եղող Հայկական ցեղասպանութիւնը կ'ուրանաք եւ՝ «իբր թէ ցեղասպանութիւն», «կարծեցեալ ցեղասպանութիւն» կ'ըսէք:

Դուք (կարծեցեալ թուրքերդ) շատ գեղեցիկ ասացուածքներ ունիք: Այս ասացուածքները ո՞րմէ առնելնիդ ուրիշ հարց է: Գիտցէք միայն, թէ միջին Անաթոլիոյ մէջ, Քոնիայի շուրջի նահանգներու մէջ թրքերէն չխօսողին լեզուն կը կտրէիք:

Այդ պատճառաւ Քոնիայի եւ շրջակայքի նահանգներուն մէջ յոյները եւ հայերը (ձեր վայրագութեան պատճառաւ) թրքերէն կը խօսէին: Եւ շատ մեծ իրականութիւն է, որ դուք, ամէն բան, այդ թրքախօս բնիկ քրիստոնեաներէն սորվեցաք: Բնական է՝ այդ ասացուածքներն ալ քրիստոնեաներէն առիք:

Մեր ըսել ուզած ասացուածքը հետեւեալն է՝ «Ըսողին չէ, ըսել տուողին նայէ»:

\* \* \*

Այո՛, այդ սարսափելի իրականութիւն մըն է:

Մինչեւ 1915-ը՝ առնուազն կէսը քրիստոնեայ եղող Անաթոլիոյ բնակչութեան, 1923-ին հարիւրէն հարիւր թուրքերէ բաղկացած ըլլալը՝ 1915-էն մինչեւ 1923 Անաթոլիոյ մէջ



պատմութեան մեծագոյն ցեղասպանութեան եւ ազգագրական մաքրագործումին կատարուելուն ապացոյցն է:

Դուք այս իրականութիւնը այսօր կ'ուրանա՛ք:

Բնական է, ձեր այս գործած ցեղասպանութիւնը ընդունած օրը, գալիք հատուցումներուն եւ պատիժներուն մասին ալ պիտի մտածէք, եւ այդ պատճառաւ կը մերժէք ճանչնալ ցեղասպանութիւնը:

Բայց, մարդասէր կարծուող եւ իբր թէ մարդկային իրավունքները պաշտպանող արեւմտեան պետութիւններուն մեծամասնութիւնը (ներառեալ Ամերիկան) ինչո՞ւ այս սարսափելի իրականութիւնը՝ Հայկական ցեղասպանութիւնը ցարդ չեն ընդունած:

Ահա՛ւասիկ՝ խնդրին ամէնէն հետաքրքրական ու փափուկ կէտը այս է:

Որովհետեւ, 1789թ. Ֆրանսական յեղափոխութենէն ի վեր, աշխարհն մեծ դրամատէրերուն կողմէ կը կառավարուի:

Եւ ամէն տեղ, անոնց աշխարհը կառավարելու ծրագիրները կը գործադրուին:

Այդ պատճառաւ կ'ըսենք, թէ՛ «Ըսողին չէ, ըսել տուողին նայէ»:

Թիւ 96

«Նայիրի», 25 Յունուար 2005, թիւ 229

### «ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿՐԿՆՈՒԹԻՒՆ Է»

Այսօրուան Թուրքիոյ վարչապետ TAYYİP ERDOĞAN-ը ի՞նչ տարբերութիւն ունի 1915թ. օսմանցի եպարքոս TALÂT PACHA-էն:

Ոչ մէկ տարբերութիւն ունի: «Կա՛մ ALİ, VELİ եւ կամ VELİ, ALİ», «Այվազ, Քասաբ, հեր պիր հէսապ»:

Այսօրուան Թուրքիոյ վարչապետը, 5 Դեկտեմբեր 2004թ. Պոլսոյ Ետիգուլէի Սուրբ Փրկիչ հայկական հիւանդանոցին վարչութեան շէնքին 2 յարկին մէջի թանգարանին բացումը կատարեր է:

Այսօր, այս պատճառաւ, Պոլսոյ հայերը ուրախութենէն կը խայտան:

Ի՞նչ եղեր է: Թուրքիոյ վարչապետը հայոց հիւանդանոցը եկեր է եւ ճառ մը «նետեր» է, եւ ըսեր է, թէ՛ «Ձեր իրաւունքները պաշտպանելը, ինձի համար, պարտականութիւն կը նկատեմ»:

«Նայիրի»-ի 2005թ. Բացառիկին մէջ ալ գրած էինք. 1910թ., օսմանեան եպարքոսը՝ Թալեաթ փաշան, Պոլսոյ հայկական պատրիարքարանը եկած էր, եւ հայկական գիրերու գիւտին 1500-ամեակին՝ հայերուն «ազատութեան եւ եղբայրութեան» խոստումներ տուած էր: Յետոյ, ինչ պատահած ըլլալը, բոլորին ծանօթ է:

Թալեաթ փաշան 1915թ., հայոց տրուած ազատութեան եւ եղբայրութեան խոստումներուն տեղ աքսորի, ցեղասպանութեան եւ մահուան ծրագիրը գործադրած էր:

Թալեաթ փաշաէն 100 տարիներ ետք, այսօրուան Թուրքիոյ վարչապետը՝ Թայիպ էրտողան տարբեր «թատրոն» մը կը խաղայ:

1910թ. Թալեաթ փաշան՝ «Հայերը քնացնելու» թատրոնը խաղացած էր:

Մինչդեռ այսօր, Թայիպ էրտողանը եւրոպացիները «խաբելու» թատրոնը, «Ժողովրդավարութեան» թատրոնը կը խաղայ՝ Եւրոպական միութեան մէջ մտնելու համար:

Ձեռքին կրօնական կանանչ դրօշակը բռնած «Գորշ գայլերու» այս զինուորը, հիմա, զառնուկի մորթ հագած, եւրոպացիները կը խաբէ՝ Եւրոպական միութեան մէջ մտնելու համար:

Բայց, մեր անցեալ գրութեան մէջ ալ նշած էինք՝ «Ըսողին չէ, ըսել տուողին նայէ»:

Երկու հարիւր տարիներէ ի վեր միջազգային դրամատէրերու գաղտնի կազմակերպութիւնը՝ Թուրքերը իբր «PION» կը գործածէ:

19-րդ դարուն կործանող Օսմանեան կայսրութիւնը ոտքի հանեցին, եւ ռուսերուն դէմ զինք իբր վահան գործածեցին: Եւ նոր եւ երիտասարդ Թուրքիա մը ստեղծեցին:

Այս միջազգային դրամատէրերու գաղտնի կազմակերպութիւնը, 1917թ. Ռուսիոյ մէջ, պոլշեւիկեան յեղափոխութիւնը հրահրելով Ռուսիան ներսէն կործանեցին:

Եւ ռուս օրթոտոքս եկեղեցին քանդելով՝ Ռուսիան հոգեպէս սպաննեցին: Այս ձեւով ռուսերուն հաշիւը տեսան:

Եւ այսօր Ռուսիան միջազգային դրամատէրերու գաղտնի կազմակերպութեան համար վտանգ մը ըլլալէ դադրած է:

Որովհետեւ այսօր, Ռուսիոյ գրեթէ ամբողջ հարստութիւնը միջազգային դրամատէրերու ձեռքն է:

Հիմա փլուզման վտանգը Եւրոպային եկած է:

Եւրոպացի ժողովուրդը, Թուրքերուն Եւրոպական միութիւն մտած օրը, իր գլխուն գալիքը շատ լաւ գիտէ: Եւ Եւրոպական բոլոր ժողովուրդները Թուրքերուն Եւրոպական միութիւն մտնելուն դէմ են:

Բայց Եւրոպայի մէջ ժողովուրդը մտիկ ընողը ո՞վ է:

Ամբողջ աշխարհի մէջ եղածին նման՝ Եւրոպայի մէջ ալ, ուժը միջազգային դրամատէրերու գաղտնի կազմակերպութեան ձեռքն է:

Արդէն Եւրոպայի մէջի (իբր Թէ) սոցիալիստներուն, համայնավարներուն եւ կանանչներուն կուսակցութիւնները, մանաւա՛նդ (իբր Թէ) ծայրայեղ ձախակողմեան նկատուած տրոցկիստները՝ մեծ մասամբ միջազգային դրամատէրերու գաղտնի կազմակերպութեան գործակատարներն են:

Բոլորին ծանօթ է, որ «Անուշ Զուրի» աջակողմեան կուսակցութիւնները մեծ դրամատէրերու ձեռքը խամաճիկ են: Ո՞վ մնաց ուրեմն: Իսկական ազգասէր-հայրենասէր կուսակցութիւնները:

Անոնց վրայ ալ՝ «Հիթլերական», «Փաշիստ» ըլլալու մուրը կը նետեն, եւ անոնց բոլոր աշխատանքներուն արգելք կ'ըլլան:

Այս վիճակին մէջ Եւրոպան՝ ձեռքը, ոտքը կապուած, եւ բերանը չխօսի ըսելով՝ գոցուած կալանաւորի մը կը նմանի:

Մինչ այդ, եւրոպական երկիրները՝ մարդկային իրաւունքներու պատրուակով, միլիոններով եւ միլիոններով խափշիկ, արար, քիւրտ, թուրք, իսլամ զանգուածներով կը լէցուին:

Եւ Թուրքիոյ Եւրոպական միութեան մէջ մտնելովը՝ Եւրոպային վերջին մահացու հարուածը պիտի տրուի:

Ահա, այս ձեւով, միջազգային դրամատէրերուն զաղտնի կազմակերպութեան երկու հարիւր տարիներէ ի վեր կիրարկած՝ ճերմակ ցեղը, քրիստոնէութիւնը եւ յունա-եւրոպական քաղաքակրթութիւնը բնաջնջելու ծրագիրները, բոլորովին պիտի իրագործուին:

Թիւ 97

«Նայիրի», 8 Փետրուար 2005, Թիւ 230

**ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**

**ՆԱԽԱԳԱՆՆ ԵԱՆ-ԼՈՒԻՍ ԴԵԲՐԵ-ԻՆ,**

**2-ԷՆ 4 ՓԵՏՐՈՒԱՐ 2005 Թ-ԻՆ**

**ԱՆԳԱՐԱ ԵՐԿՕՐԵԱՅ ԱՅՅԷՆ ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

5 Փետրուար 2005 թուակիր «HÜRRİYET» թերթը՝ առաջին էջին վրայ մեծ վերնագիրով սապէս գրած է «Մէսսիէօին հակազդեցութիւն» - J. L. DEBRE-ին (իբր թէ) Հայկական ցեղասպանութեան հարցը օրակարգի վրայ բերելուն պատճառաւ, վարչապետ TAYYİP ERDOĞAN, անոր դաս մը տուաւ եւ ըսաւ, թէ՛ (Բերնի ծամոցի վերածուած թրքական ձաբտուքները նոյնութեամբ կը հրատարակենք) — «Այս հարցը պատմութեան վերաբերեալ նիւթ մըն է, մենք կ'ուզենք, որ

այս հարցը պատմաբանները վիճարկեն: Ասոր պատրաստ ենք: Մեր արխիվներն ալ փափաքողներուն բացինք, ուզողը կրնայ գալ եւ պրպտել: Բայց հայերը իրենց արխիվները չեն բացած»:

Յարգելի պարոն TAYYIP ERDOĞAN, դուն տղա՞յ կը խաբես:

90 տարիներէ ի վեր, ձեր արխիվներուն մէջ գտնուող Հայկական ցեղասպանութեան հետ առնչութիւն ունեցող բոլոր վաւերագիրները մաքրագործած ըլլալնիդ՝ խուլ սուլթանն անգամ իմացաւ: Ամէն մարդ գիտէ:

Յետոյ, կ'ըսես, որ «Հայերը իրենց արխիվները չեն բացած»:

Ո՞ր Հայկական արխիւն է եղեր անիկա: Քիչ մը պատմութիւն կարդայ եւ սորվէ:

1915թ. Հայաստան անունով պետութիւն մը գոյութիւն չ'ունէր, որ արխիւ ունենայ:

Որովհետեւ 5000 տարուան Հայկական Հայրենիքը՝ հարիւրաւոր տարիներէ ի վեր թուրք ըսուած վայրենիներուն լուծին տակ կը չարչարուէր:

Եւ դուք՝ 5000 տարիներէ ի վեր իր Հայրենի հողերուն վրայ ապրող Հայ ազգը 1915թ. ցեղասպանութեան ենթարկեցիք:

Եւ ամբողջ աշխարհի քարտէսներուն վրայ «Հայաստան» ըլլալով արձանագրուած Արեւելեան Անաթոլիայի Հայկական Հայրենիքին հողերուն վրայ, «Թուրքիա» ըսուած ուրուական պետութիւն մը ստեղծեցիք...

Բայց, ուչադրութիւն ըրէք, թուրքե՛ր:

Դուք դեռ Հայկական ցեղասպանութիւնը կ'ուրանաք:

Բայց ձեր շուրջի օղակը երթալով կը սեղմուի:

Իտալիան, Ֆրանսան, Պելճիքան, Զուիցերիան, Սլովենիան եւ նաեւ շատ մը պետութիւններ Հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ընդունեցին:

Եւ ամէնէն կարեւորը՝ Եւրոպական խորհրդարանը, Թուրքիոյ Եւրոպական միութեան մէջ մտնելուն համար, Հայկական ցեղասպանութիւնը ընդունիլը պայման դրաւ:

Եւ աւելի կարեւոր պարագայ մը կայ՝ գերմանացիներուն Երկրորդ աշխարհամարտին, հրէաներուն դէմ իրենց կատարած սպանդներուն պատիժը՝ ինչպէս հատուցանելին կը տեսնէք:

Ահա, մօտ ատենէն, պատժուելու կարգը ձեզի պիտի գայ:

Ասկէ զատ, գերմանացիներուն հրէաներուն դէմ կատարած անմարդկային բարբարոսութիւնները, սպանդները անհերքելի են բնական է:

Բայց գերմանացիները՝ հրէաներուն հայրենիքը չգողցան:

Մինչդեռ դուք հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցիք:

Եւ հայերուն հինգ հազար տարուան հայրենիքը՝ Հայաստանը, գողցաք:

Ահա, ասոր պատիժը՝ պիտի հատուցանէք:

Թիւ 98

«Նայիրի», 22 Փետրուար 2005, Թիւ 231

### **ԻՐԱՏԵՍ զՐՈՂ ORHAN PAMUK-Ը ԹՈՒՐքԻՈՅ ՄԵՉ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՄԱՃԱՆ ՀՈՉԱԿՈՒԵՐ Է**

1 Յունուար 2005-ի մեր գրութեան մէջ, ORHAN PAMUK-ին Հայկական ցեղասպանութեան մասին կատարած իրատես խօսքերուն համար ըսած էինք, «եթէ ORHAN PAMUK-ը, իր այս խօսքերը տարի մը առաջ ըսած ըլլար, հայրենիքի դէմ դաւաճանութեամբ կը ձերբակալուէր»:

Բայց, ասոր վրայէն դեռ հազիւ քանի մը ամիս անցած՝ թրքական մամուլը ORHAN PAMUK-ին դէմ «համազարկ» բացաւ:

Եւ թրքական ամբողջ մամուլը, Օրհան Բամուքը հայրենիքի դաւաճան հռչակեց:

Ի՞նչ պատահեցաւ: Քանի մը ամիս առաջ Թուրքիոյ մէջ փչել սկսած ժողովրդավարութեան անուշ հովը կեցաւ, եւ հին՝ «Փաշիստական վայրագ» փոթորիկը սկսաւ:

Թուրք բանաստեղծ TEVFİK FİKRET-ի հետեւողութեամբ կրկին ըսենք. «Թուրքերը՝ ծովու կը նմանին: Անոնց բնաւ չէք կրնար վստահիլ»: Թուրքիոյ մէջ իշխանութիւնը որո՞ւ ձեռքն է: Իբր թէ ժողովրդավար եղող Թուրքիոյ մէջ, ո՞վ է երկիրը ղեկավարողը: ...Ա՞զգը, ...Բանա՞կը, թէ՞ Ազգային ապահովութեան խորհուրդը:

Թուրքիոյ մէջ այս բոլորին սանձերը իր ձեռքին ունեցող ուժ մը կայ, այն է՝ Աշխարհի մեծ դրամատէրերու անտեսանելի կազմակերպութիւնը:

1923-ի, այսպէս կոչուած, Հանրապետական Թուրքիոյ կազմութենէն ի վեր, ուժը անոնց ձեռքն էր: Այսօր ալ:

Մինչեւ 17 Դեկտեմբեր 2004-ի՝ Պրիւքսէլի Եւրոպական միութեան ժողովը, Թուրքիոյ մէջ ժողովրդավարական թափրոն խաղացուեցաւ: Եւ 17 Դեկտեմբեր 2004-ին Պրիւքսէլի մէջ, ի նպաստ Թուրքիոյ որոշումի մը առնուելէն յետոյ, Թուրքիոյ մէջ ժողովրդավարական իրավիճակը դադրեցաւ, եւ կրկին հին TERREUR-ի, սարսափի մթնոլորտը վերսկսաւ:

Արդեօ՞ք դուք ալ հաւատացած էիք, որ Թուրքիոյ մէջ ժողովրդավարութիւն սկսած էր:

Օրհան Բամուրի եւ նմաններուն իրականութիւններ ըսելուն վրայ, մինչեւ 17 Դեկտեմբեր 2004 թուականը «Աչք գոցուեցաւ»: Բայց, անկէ աւելին, չէր թոյլատրուեր: Որովհետեւ, իրականութիւններուն ծանրութեան տակ, ի վերջոյ Թուրքիան կը կործանէր, կտոր-կտոր կ'ըլլար:

Գիտէ՞ք արդեօք, թէ 1970թ. Թուրքիոյ մէջ, յառաջդիմական երիտասարդ ուժերը, Թուրքիոյ մէջ ժողովրդավարութիւն բերելու համար կը պայքարէին, եւ Անաթոլիոյ ժողովուրդները՝ թրքական բռնատիրութենէն ազատիլ կ'ուզէին: Եւ Անաթոլիոյ ժողովուրդներէն ամէն մէկուն, ազգային անկախութիւն պիտի տրուէր: Յառաջդիմական ուժերուն ծրագիր-

ներուն համեմատ, Արեւելեան Անաթոլիոյ մէջ, Հայաստան մը եւ Քրդաստան մը պիտի կազմուէր:

Սեւ ծովի եզերքը՝ Լազիստան եւ Հարաւային Անաթոլիոյ մէջ ալ՝ Ասորի արաբական միութիւն մը պիտի ստեղծուէր: Եգէականի շուրջ պիտի հիմնուէր Եգէական Հանրապետութիւն մը, իսկ Թրակիոյ մէջ ալ՝ Թրակիական Հանրապետութիւն մը պիտի կազմուէր:

Այս ձեւով՝ դարերէ ի վեր Անաթոլիան գրաւած թուրանականները, պիտի վճնտուէին եւ անաթոլիական ժողովուրդները իրենց անկախութեան պիտի տիրանային:

Բայց, այս արդար լուծման՝ Աշխարհի մեծ դրամատէրերու կազմակերպութիւնը համաձայն չեղաւ:

Թէեւ անոնք Թուրքիոյ շատ մեծնայլը չեն ուզեր: Եւ թուրքերուն «1918-էն առաջ եղածին պէս», Միջին Արեւելքի քարիւղի շրջանները իջնելնուն ալ հակառակ են: Բայց անոնք, Թուրքիոյ կտոր-կտոր ըլլալն ալ չեն ուզեր: Անաթոլիոյ մէջ, զօրաւոր Թուրքիոյ մը գոյութիւնը՝ Աշխարհի մեծ դրամատէրերու կազմակերպութեան համար, շատ նպաստաւոր է:

Մանաւանդ անոնց, սա միջոցին, Ռուսիոյ շուրջի օղակը սեղմել սկսած շրջանին:

Աշխարհի մեծ դրամատէրերու կազմակերպութիւնը իրենց ծրագիրները ժամացոյցի ճշգրտութեամբ կը գործադրեն: Անոնք 1990-ին, Սովետական Միութիւնը կործանեցին: Մինչեւ 1999՝ Եուկոսլաւիան բաժանեցին: 2001-ին՝ Աֆղանիստանը գրաւեցին: 2004-ին Վրաստանը ձեռք անցուցին: 2005-ին սկիզբներն ալ՝ Ուրբանիան ներսէն փլցուցին:

Հիմա, միլիառատէր Սորոսը, իր դրամին ուժովը, Խրիմի թաթարները ոռւսերուն դէմ պայքարելու կը պատրաստէ: Այս Սորոսը ի՞նչ շուտ մոռցեր է, թաթարներուն 1942- եւ 1943-ին, Խրիմի մէջ գերմանացիներուն միանալով, ոռւս ժողովուրդը եւ նոյն ատեն հրէաները ջարդի ենթարկած ըլլալնին:



Բայց միլիառատէր Սորոսին համար, Աշխարհի մեծ դրամատէրերու կազմակերպութեան ծրագիրները իրականացնելը՝ աւելի կարեւոր է:

Հիմա Ուրբանիոյ մէջ, միլիառատէր Սորոսը եւ Kissinger-ի աջ բազուկը եղած Ամերիկայի արտաքին գործոց նախարար Madeleine Albright-ը, նաեւ Jimmy Carter-ի խորհրդական լեհ Brzezinski-ն միասնաբար կ'աշխատին, որ Ռուսաստանը կտորկտոր ընեն:

Այդ տեսակէտով, այս տարիներուն Անաթոլիոյ մէջ, զօրաւոր Թուրքիոյ մը ներկայութիւնը, Աշխարհի մեծ դրամատէրերու կազմակերպութեան համար, շատ օգտակար է:

Աւելի ետք ի՞նչ պիտի ըլլայ: Այս հարցումը դուք, Աշխարհի մեծ դրամատէրերու կազմակերպութեան նախագահ Kissinger-ին հարցուցէք:

Թիւ 99

«Նայիրի», 8 Մարտ 2005, Թիւ 232

### **ԻՐ ՀՈՒՔԷՆ ՎԱՍՅՈՂ ԹՈՒՐԵՒԱՆ, ԱԻԵԼԻ ՃԻՇՊ՝ ԻՐ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ ՎԱՍՅՈՂ ԹՈՒՐԵՒԱՆ**

Շարաթ, 5 Մարտ 2005 Թուակիր «Hürriyet» Թերթին առաջին էջին վրայ, «Աղուէսի պատերազմը» շատ մեծ վերնագրով տրուած այս լուրը, նոյնութեամբ կը հրատարակենք:

«Միջավայրի եւ անտառի» նախարարութիւնը, Թուրքիոյ միասնական կառոյցին խանգարումին առաջքը առնելու կեղծ պատճառաբանութեամբ՝ իրենց մէջ Kurdistan եւ Armenia անուններ ունեցող կենդանիներուն մակդիրները փոխեց:

**ՆԱՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ**

Անունը «VULPUS VULPUS KURDISTANICA» եղող «չէկ աղուէսին» նոր անունը եղաւ «VULPES VULPES»

«OVIS ARMENIANA» եղող վայրի ոչխարին նոր անունը եղաւ «ORIS ORIEN ANATOLICUS», եւ «CAPREOLUS CAPRE-OLUS ARMENIUS» եղող այծեամին անունն ալ՝ «CAPREOLUS CAPROLUS CAPREOLUS»-ի փոխուեցաւ:

Կենսոլորտի եւ անտառի նախարարութեան պատասխանատուները այս կենդանիներու անուններու փոփոխութեան իրր պատճառաբանութիւն հետեւեալը ըսին՝ այս անուններուն վրայ յենելով «Այստեղ քիւրտ կար, հայ կար» համոզումը տարածելու համար նման անուններ կը գործածեն:

Միացեալ ազգերու վերականգնումի ծրագրին պատասխանատուն՝ «Թրքական կառավարութիւնը անուններ փոխելու իրաւունք չունի» յայտարարեց:

Թրքական կառավարութեան տուած այս անօրէն որոշումէն ալ յայտնի կ'ըլլայ, որ թուրքերը վերջին շրջաններուն ինչ ընելիքին չեն գիտեր, եւ շուար վիճակ մը ունին:

Եւրոպական պետութիւններուն թրքական կառավարութեան Հայկական ցեղասպանութիւնը ընդունիլ պարտադրելուն հետեւանքով՝ թուրքերը այս տեսակի տարօրինակ որոշումներ առնելու սկսան:

Ձեզի բան մը ըսենք, թուրքեր՝ դուք ինչի՞ կը նմանիք, գիտէ՞ք: Ջայլամի կը նմանիք: Գլուխնիդ աւազի մէջ մխրճած, իրականութիւնները տեսնել չէք ուզեր: Աւելի ճիշդ՝ դուք ինքզինքնիդ դեռ «օսմանեան շրջանը» կը կարծէք: «Ուզածնուդ պէս կախելու եւ սպաննելու»- օսմանեան յափշտակիչներու ձեր շրջանը:

Այն շրջաններուն, ձեզի համար, հայերը ջարդելը հաւ մորթելու պէս պարզ բան մըն էր:

Հայերը ջարդելու վարժուած էիք: Խեղճ հայերն ալ ոչխարներու պէս մորթուելու վարժուած էին:

Որովհետեւ հայերը պաշտպանող չկար: Հինգ հազար տարիներէ ի վեր հայերուն հայրենիքը եղած Արեւելեան Անաթոլիոյ մէջ ապրող հայերը՝ դուք, 11-րդ դարուն Անաթոլիա ձեր մտած օրէն, ջարդել սկսաք: ... Եւ 1915թ. բոլոր հայերը ցեղասպանութեան ենթարկեցիք:

Եւ պարպուած «Հայաստան» հայրենիքը՝ վայրենի թուրքերով եւ վայրենի քիւրտերով լեցուցիք:

Եւ Հայաստանի մէջի բոլոր հայկական կոթողներն եւ եկեղեցիները՝ «հայերէն հետք չմնայ» ըսելով կործանեցիք:

Եւ այս զարհուրելի ցեղասպանական ծրագիրները գործադրեցին ձեր նոր դարերու փողկապաւոր «timurienk»-ները՝ Թալեաթ փաշան, Մուստաֆա Քեմալը, Իսմէթ Ինէօնիւն եւ իրենց գործակալները:

Բոլոր քարտէսներուն վրայ «Հայաստան» անունով նշուած հայերուն հայրենիքին մէջ, այսօր մէկ հատ հայ չէ մնացած:

Եւ Հայաստանի բազմահազար հայկական եկեղեցիներէն ոչ մէկուն հետքը մնացած է այսօր:

Եւ այժմ եւրոպական պետութիւնները, հայկական ցեղասպանութիւնը ընդունիլ տալու համար ձեզ կը ճնշեն:

Եւ դուք, սեփական շուքէն վախցող, աւելի ճիշդ՝ իր պատմութենէն վախցողին պէս, հայերէն վերջին յիշատակ մնացած՝ խեղճ կենդանիներով բնորոշուած հայկական անունները կը փոխէք:

Ուրիշ շատ ճարպիկութիւններ ալ ունիք: Եւրոպական բոլոր գրադարաններուն մէջ գտնուող հայկական ցեղասպանութեան մասին գիրքերը կը գողնաք:

Եւ հայկական ցեղասպանութեան մէջ ձեր մեղսակիցները եղող, աշխարհատարած ծանօթ կազմակերպութեան հետ գործակցաբար, պատմական իրականութիւնները փոխելով, բոլորովին սուտերու վրայ հիմնուած պատմական գիրքեր հրատարակել կուտաք: Զեր նորագոյն ճարպիկութիւններէն մէկն ալ հետեւեալն է: Internet-ի կայքէջերը ձեր սուտ պատմութիւններով կը լեցնէք, եւ հայկական ցեղասպանութեան մասին եղած բոլոր գրութիւնները կը խափանէք:

Բայց ինչ ալ ընէք՝ անօգուտ է: Որովհետեւ եւրոպական ժողովուրդները ձեր ինչ ըլլալը այլեւս հասկցան:

Մանաւանդ գերմանացիները՝ դառն իրականութեան մը հետ դէմ դիմաց մնացին:

Հինգ միլիոնէ աւելի թուրք ունեցող այսօրուան Գերմանիոյ մէջ, թուրքերուն դէմ թշնամութիւնը օրէ օր կ'աւելնայ: Եւ յառաջիկայ ընտրութիւններուն հարիւր առ հարիւր իշխանութեան գալու հաւանականութիւն ներկայացնող C.D.U.-ն՝ «Քրիստոնեայ ժողովրդավարական միութիւն» կուսակցութիւնը, թուրքերուն Եւրոպական միութեան մէջ մտնելը չ'ուզեր:

Եւ մեզի համար, ամէնէն կարելորը՝ C.D.U. կուսակցութիւնը Հայկական ցեղասպանութիւնը ճանչնալու կը պատրաստուի:

Այն ատեն պիտի տեսնենք... թէ կրկին «իբր թէ Հայկական ցեղասպանութիւն» պիտի կրնա՞ք ըսել արդեօք:

Թիւ 100

«Նայիրի», 22 Մարտ 2005, թիւ 233

### **ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐՈՒՆ, ԹՐՔԱԿԱՆ ՇԵՆՍԵՍԻԼՆԵՐՈՒՆ ԵՒ ԹԵՐԹԵՐՈՒՆ ՄԵՉ, ԱՄԷԼԷՆ ՇԱՏ ԽՕՍՈՒԱԾ ՆԻԻԹԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆ Է**

Թուրքե՛ր, ձեզի ի՞նչ եղաւ մէկէն: Հայեր... միշտ հայեր... Հայկական ցեղասպանութիւն չէ եղած եղեր: Այսինքն՝ ի՞նչ եղեր է: Հայե՛րը թուրքերը ջարդեր են:

Հեռատեսիլներուն եւ թերթերուն մէջ, այս «Հինցած, մաշած» թրքական մասալը կը կրկնեն ու կը կենան:

Բայց, մինչ այդ, իրականութիւնները ըսելու համարձակութիւնը ունեցողներ ալ կան:

«ORHAN PAMUK» «Հայկական ցեղասպանութիւն եղաւ», — ըսաւ... եւ հայրենադաւ հռչակուեցաւ: «SABANCI» համալսարանի փրոֆեսորներէն HALİL BEKTAY-ն ալ «հայոց դէմ կատարուածը՝ ETHNIQUE մաքրագործում էր», — ըսաւ:

Տեսնենք, թե փրոֆեսոր HALİL BEKTAY-ին վերջը ի՞նչ պիտի ըլլայ:

Մինչ այդ՝ Թուրքիոյ մեծագոյն գործարանատէրը, «Հոչակաւոր» հրէայ ժազ Քամհին ալ խօսքի խառնուեցաւ եւ «ՀԱՅԵՐՈՒՆ ԴԷՄ ԿԱՏԱՐՈՒԱԾԸ՝ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՉԷ», — ըսաւ:


Հայրենասէր հայերը այս ժազ Քամհին շատ չեն սիրեր: Ինչո՞ւ համար, բացատրելու ջանանք:

Քոչարեանէն առաջ Հայաստանի Հանրապետութեան նախագահ եղած Լեւոն Տէր-Պետրոսեանին կինը՝ սիոնիստ հրէայ մըն է:

Եւ ժազ Քամհին թելադրեց Լեւոն Տէր-Պետրոսեանին (ասոր հրէայ կնոջը ճամբով), որ բարեկամանայ թուրքերուն հետ:

Լեւոն Տէր-Պետրոսեան, Հանրապետութեան նախագահ եղած շրջանին (1991-1997), Հայաստանի մէջ, 1915-ի Մեծ եղեռնը մոռցնել տալու համար ամէն բան ըրաւ: Նոյնիսկ Հայաստանի դպրոցներուն պատմութեան դասագիրքերուն մէջէն ուզեց վերցնել տալ Հայկական ցեղասպանութեան վերաբերեալ յիշատակութիւնները: Եւ ջանաց, ամէն գնով, թուրքերուն հետ բարեկամութիւն հաստատել:

Այդ «բարեկամական շրջանէն» նկար մը կը հրատարակենք ստորեւ: Նկարը 1997 Յունուար տարեթիւը կը կըրէ: Հոն կը տեսնուին, ձախէն աջ՝ «Գորշ գայլեր» կուսակցութեան նախագահ՝ Ալիասլան Թիւրքէշի գաւակը՝ Թուրքուլ Թիւրքէշ, ժազ Քամհի, Լեւոն Տէր-Պետրոսեանի եղբայրը - նկարուած իրենց շատ մտերմիկ եւ զուարթ պահուն:



Բայց մեզի համար, Ժազ Քամհիին «PLATIN» թերթին տուած յայտարարութեան մէջ ամէնէն կարեւոր խօսքը, հետեւեալն է՝

**«ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀՐԷԱՆԵՐԸ, ՄԻՆՉԵԻ ԱՅՍՕՐ, ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵ-  
ԼՈՒՆ՝ ԱՐԳԵԼՔ ԵՂԱՆ»:**

Այս՝ շատ կարեւոր խոստովանութիւն մըն է:

Ամերիկայի հրէաները, Հայկական ցեղասպանութեան ճանաչումէն ինչո՞ւ այսքան կը վախնան արդեօք...

Եւ սա, վերջին օրերուն Պոլսոյ մէջ ամէնէն կարեւոր դէպքը՝ 12 մարտ 2005-ի գիշերը, «Ֆլաշ թիվի» կայանէն տրուած յայտագիրն էր: Եւ այս յայտագրին՝ հայեր ալ մասնակցեցան:

Եւ մանաւանդ՝ հայ բողոքական եկեղեցիի պատուելիին՝ Գրիգոր Աղապալօղլուին ըսած խօսքերուն եւ տուած պատասխաններուն հիացանք:

Գրիգոր Աղապալօղլուն մեծ համարձակութեամբ, մասնաւորապէս հետեւեալ խօսքերը ըսաւ՝

**«ԵՍ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՄ: ՍՏԻՊՈՒԱԾ ԵՄ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՍԵԼՈՒ: ԱՅՈ՛, ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՂԱԾ Է. ԵԻ ԱՆԱԹՈԼԻՈՅ ԲՈԼՈՐ ԹՈՒՐՔԵՐԸ ԳԻՏԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒ-  
ԹԻՒՆԸ»:**

Հայ բողոքական պատուելի Գրիգոր Աղապալօղլուին յայտնած այս իրականութիւնները՝ «Ասիկա պատմական խնդիր մըն է: Անոր քննութիւնը պատմութեան փրոֆեսորներուն ձգենք» - ըսող թուրք պետական պատասխանատուներուն երեսին տրուած շատ ծանր ապտակ մըն է:

Այս հարցին հետ կապ ունեցող 3 Յունիս 2003 թուակիր «Նայիրի»-ի մէջ հրատարակուած մեր գրութիւնը նշելը՝ «յանուն արդարութեան» օգտակար կը նկատենք:

«...Թուրք եւ հայ փրոֆեսորներն իրենց միջեւ պիտի բանակցին եղեր՝ ճշդելու համար, թէ 1915թ. թուրքերուն հայերուն դէմ կատարած սպանդը ցեղասպանութի՞ւնն է, թէ՞ ցեղասպանութիւն չէ:

Մեղք, չատ մեղք: Այս փրոֆեսորները, եթէ իսկական պատմագետներ են, չատ լաւ գիտեն ուրեմն, որ 1915թ. Պոլսոյ մէջ դեսպանատուն ունեցող բոլոր պետութիւններուն արխիւներուն մէջ հազարներով տեղեկագիրներ կան, որոնք կը փաստեն, թէ 1915թ. կատարուածը, պատմութեան որեւէ չրջանի մէջ իր նմանը չունեցող զարհուրելի ցեղասպանութիւն մըն է:

...Եւ այս իրականութիւնները թուրքերն ալ չատ լաւ գիտեն: Եւ ոչ միայն փրոֆեսոր թուրքերը: Բոլոր թուրք ժամտարմաները, բոլոր թուրք պետական պաշտօնէութիւնը գիտեն:

Եւ մանաւանդ՝ թուրք ժողովուրդը գիտէ: Անոնք, իրարու հետ խօսած ատեն, հպարտութեամբ կը պատմեն, թէ ինչպէս ջարդած են հայ GAVUR-ները:

Էֆենտինե՛ր, ինչո՞ւ պատմագետներով ատեն կը կորսնցրնէք:

Գացեք թուրք ժողովուրդին հարցուցէք:

Անոնք չատ լաւ գիտեն իրենց կատարած ցեղասպանութիւնը...»:

Թիւ 101

«Նայիրի», 5 Ապրիլ 2005, թիւ 234

**24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
90-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ ՊԱՏԵՂՈՒԹԵԱՄԲ**

**ԱՆԵՇՔԱԳԻՐ-ԹԻԻ 1**

Կործանած օսմանեան պետութեան փլատակներուն վրայ, 1923թ. յոյներէն, հայերէն ու քուրտերէն գողցուած հողերուն վրայ, մինչ այդ ժամանակը անձանօթ եղող եւ

Թուրքիա անունով պետութիւն մը (աճպարարութեամբ) հիմնուեցաւ:

Ովքե՞ր էին այս պետութեան հիմնադրութեան պատճառ եղողները - «Արեւմտեան կայսերապաշտ մեծ դրամատէրերու կազմակերպութիւնն» էր:

Եւ Թուրքիա կոչուած այս նորաստեղծ պետութիւնը, արտաքուստ եւրոպականանալու ջանքեր կատարող եւ Եւրոպայէն փոխ առնուած օրէնքներով կառավարուող երկիր մըն էր: Բայց այս երեւոյթը՝ խարուսիկ էր միայն: Իրականութեան մէջ այս պետութիւնը ծայր աստիճան ցեղապաշտ եւ բռնակալներու պետութիւն մըն էր: «Կախածը՝ կախած, մորթածը՝ մորթած» մտայնութեամբ Փաշիստ պետութիւն մը: Եւ այս պետութեան մէջ, ամէն բան ոչինչէն մէջտեղ բերուեցաւ: Եւ մասնաւորապէս՝ նոր երիտասարդ սերունդ մը ստեղծուեցաւ:

Ասոր փաստն ալ՝ այս նոր պետութեան տասներորդ տարեդարձի քայլերգն է, որ կ'ըսէ. «Տասը տարուան մէջ, ամէն տարիքէ 15 միլիոն երիտասարդներ ստեղծեցինք»:

Մենք մեր ուսումը Պոլսոյ մէջ ստացանք: Եւ պաքալորէայի քննութիւնը հոն անցուցինք: Այնպէս որ գիտենք, թէ ինչպէ՛ս ստեղծուած է այս 15 միլիոննոց երիտասարդութիւնը... Ամէն բան սուտերու վրայ հիմնուած էր, մանաւանդ՝ պատմութեան դասաւանդումը, որ կը սորվեցնէր՝ «Աշխարհի մէջ ամէն բան թուրքերէն սերած էր: Հիթիթները (թրքերէնով՝ էթիներ) թուրք էին: Սիւմէրները՝ թուրք էին: Բոլոր ազգերուն արմատները՝ Միջին Ասիայէն ամէն կողմ տարածուած թուրքերէն սերած էին»:

...Այսօր, այս ձարուտութիւններուն եւ սուտերուն այլեւս հաւատացող չկայ:

Բայց 1923թ. մինչեւ 1975-ը՝ 50 տարիներու ընթացքին, այս ձարուտութիւններով եւ այս սուտերով քանի մը սերունդ ուսանեցան: Եւ այս երիտասարդներուն ուղեղներն այս ձարուտութիւններով, այս սուտերով սնուեցան: Այդ պատճառաւ մենք, հետեւեալ իրականութեան կը հաւատանք. «Հանրապետութեան երիտասարդութիւն» ըսուած նոր սերունդներուն



մեծամասնութիւնը, տրամաբանութեան հետ կապ չունեցող եւ ռոպոտական ուղեղ ունեցողներ են:

Այս պատճառաւ ալ այս նոր սերունդներուն մարդիկը, եթէ նոյնիսկ համալսարան աւարտած կամ «տօքթորախ» տէր եղած ըլլան, նորէն նոյն քեմալիստ-ցեղապաշտ ուղեղներով ռոպոտներ են:

Մեր այս վարկածին մէկ նոր ապացոյցը՝ 2 Ապրիլ 2005 թուակիր «HÜRRİYET» թերթին մէջ, բարձր տիտղոսներու տէր այս ռոպոտ ուղեղ ունեցողներէն մէկուն գրած յօդուածին մէջ տեսանք:

Նայեցէք, թէ այս պատմութենէն լուր չունեցող, միայն իրեն թելադրուած սուտերը կրկնող, այս բարձր տիտղոսներու տէր գրողը ինչե՛ր կ'ըսէ. «Օսմանեան պետութեան տկարացած չրջաններուն փոքրամասնութիւնները՝ սերպերը, յոյները, ռումէնները եւ պուլկարները ապստամբեցան...»

Այսօր Գերմանիա, Անգլիա, Ռուսիա եւ կամ Ֆրանսա՝ իրենց սահմաններուն մէջի փոքրամասնութիւններուն կը թոյլատրե՞ն որ պետութիւն կազմեն, արտօնութիւն կու տա՞ն:

Մենք ալ, օսմանեան սահմաններուն մեջ հայերուն, պետութիւն կազմելու արտօնութիւն չտուինք: Այս պատճառաւ ալ ընդհարեցանք անոնց հետ»:

Ահա, հանրապետութեան չրջանին, ուղեղը թրքական սուտերով լուացուած ռոպոտներէն մէկուն ձաբոտութենէրը: Այս ռոպոտային ուղեղ ունեցող գրողին հետեւեալ թելադրութիւնը պիտի ընենք.— Յարգարժան եւ բարձր տիտղոսներ ունեցող գրո՛ղ, քիչ մը պատմութիւն սորվէ, մանաւանդ՝ օսմանեան պատմութիւնը կարդայ: Ամէնէն կարեւորը՝ ձեր «Ազգային բանաստեղծին»՝ Նամըք Քեմալին սա խօսքերը լաւ միտքդ պահէ՝ «ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՍՏԵՂԾԵՑԻՆՔ՝ ՑԵՂԱԽՈՒՄԲԷ ՄԸ»:

Դուք ձենկիզ խաններու, թամերլաններու նման վայրենի ցեղախումբ մը ըլլալով, Միջին Ասիայէն եկաք եւ 11-րդ դարու վերջաւորութեան միայն Անաթոլիա ոտք կոխեցիք: Այսինքն՝ դուք վերջին պահու եկուորներ էք: Մինչդեռ սերպերը, յոյ-

ները, ռուսները, պուլկարները եւ հայերը՝ իրենց բնօրրանին մէջ, հազարաւոր տարիներէ ի վեր ապրող տեղացիներ են: Անոնք փոքրամասնութիւն չեն: Մինչդեռ դուք՝ օսմանցիներդ, վերջէն եկող փոքրամասնութիւն էիք: Նամքք Քեմալին ըսածին պէս՝ ցեղախումբ մ'ըլլալով խուժեցիք Անաթոլիոյ հողերուն վրայ, եւ ձեր սարսափելի վայրագութեամբ ջարդելով, թալանելով մինչեւ Վիէննայի դռները յառաջացաք: Բայց Վիէննայի դռներուն առջեւ, Լեհաստանի թագաւորը՝ Ժան Սոպիէսքին, ձեզ պարտութեան մատնեց: Եւ անկէ յետոյ, սկսաք ետ երթալ, եւ տեւաբար ետ քաշուեցաք:

1876թ. ռուսական բանակները, պալքանեան ազգերը, ձեր վայրագութիւններէն ազատագրելով, մինչեւ Պոլսոյ դռներուն առջեւ հասան: Եւ այլեւս՝ ձեր վերջը եկած էր:

Անաթոլիոյ ժողովուրդներն ալ ձեր բարբարոսութիւններէն պիտի ազատագրուէին: Եւ դուք, ձեր արիւնի եղբայրները եղող ճինկիզխաններու, թամբուլաններու նման, եկած տեղերնիդ՝ Միջին Ասիոյ տափաստանները պիտի վերադառնայիք:

Բայց աղօթեցէք Անգլիոյ հրէայ վարչապետ Պենժամէն Տ'Իսրայէլիին: Ան ազատեց ձեզ: Եւ ան, ռուսերուն դէմ կատարած սպառնալիքներով, ասոնց ետ քաշուիլ պարտադրեց: Եւ անկէ յետոյ, դուք աղուէսային քաղաքականութիւն մը գործադրեցիք: Եւ հայերը՝ «թուրքերուն հետ եղբայրութեան» սուտերով քնացուցիք:

1908թ., «Ազատութիւն» (HÜRRİYET) ըսուած յեղաշրջումը կատարած եւ իշխանութիւնը ձեռք առած İTTİHAT VE TERAKKİ կուսակցութեան ղեկավարները, բոլորն ալ Փարմաստոններ էին:

Եւ İTTİHAT VE TERAKKİ կուսակցութեան ղեկավարները, հայ ղեկավարներուն հետ «եղբայրութեան» դաշինք կնքեցին:

Եւ հայերը թուրքերուն այս՝ եղբայրութեան խօսքերուն եւ միասին խաղաղութեան մէջ ապրելու խոստումներուն հաւատացին: Եւ հայերը, այս երազներով, անուշ-անուշ քնացան:

1908թ. մինչեւ 1915թ. հայերը՝ թուրքերուն դէմ փամփուշտ մ'անգամ չնետեցին եւ ոչ մէկ ապստամբական արարք

կատարեցին: Եւ երբ 1914թ., Առաջին աշխարհամարտը սկսաւ, հայերը զինուորագրուեցան: Բայց այս հայ զինուորներով միայն «AMELE TABURU» կոչուած գործաւորներու գումարտակներ կազմուեցան: Եւ միջոց մը ետք, այս գործաւորներու գումարտակներուն մէջի բոլոր հայ զինուորները սպաննուեցան:

24 Ապրիլ 1915թ., Վանէն մինչեւ Էտիրնէ ապրող բոլոր հայերը (բացառելով Պոլսոյ եւ Իզմիրի հայերը) տեղահանութեանի օրէնքով աքսորուեցան եւ Սուրիոյ անապատները դրկուեցան:

Նոյն ժամանակ Թալեաթ փաշան, բոլոր կուսակալներուն դրկած գաղտնի հեռագիրներով, բոլոր հայերուն՝ պզտիկ կամ մեծ, կին կամ այրմարդ՝ առանց խտրութեան բոլորն ալ սպաննելու հրամանը արձակեց: Այս տեղահանութեան եւ ջարդի հրամանագրով, հայերը իրենց 5000 տարուան հայրենիքէն աքսորուեցան եւ շատ շատերը, գաղթի ճամբուն վրայ, իրենց դրացի թուրքերուն կողմէ սպաննուեցան: Եւ հայերուն 5000 տարուան հայրենիքը եղող Հայաստանը, վայրագ թուրքերուն եւ քիւրտերուն ձեռքը անցաւ...

Յարգարժան, մեծ տիտղոսներ ունեցող «HÜRRİYET» թերթի գրո՛ղ, «Հայերուն օսմանեան սահմաններուն մէջ պետութիւն կազմելու արտօնութիւն չտուինք: Այդ պատճառաւ ալ ընդհարեցանք անոնց հետ», — կ'ըսէք: Այս մէկը բոլորովին սուտ է:

Հայերու «24 Ապրիլ 1915 Հայկական ցեղասպանութիւն» կոչուած ողբերգութեան ընթացքին հայերը, Էտիրնէէն մինչեւ Վան, աքսորի հանուած թուականներուն, թուրքերուն դէմ ոչ մէկ ապստամբական շարժում կատարեցին, ոչ մէկ դիմադրութիւն ըրին: Ընդհակառակը. հայերը՝ ժանտարմաներուն հսկողութեան տակ, անօթի ու ծարաւ քայեցին հարկադրաբար:

Եւ դուք հայերը, ոչխար մորթելու պէս, առանց մեղքանալու անոնց, սպաննեցի՛ք:

Եւ այս սարսափելի ցեղասպանութեան պատասխանատուները եղող թուրքերուն մինչեւ այսօր անպատիժ մնալուն դէմ վրդոված, խղճամիտ քաղաքակիրթ աշխարհը արդարութիւն պահանջել սկսաւ:

Ահա թէ ինչու Հայկական ցեղասպանութեան պատիժը պիտի կրէ՛ք:

Թիւ 102

«Նայիրի», 19 Ապրիլ, 2005, թիւ 235

## ԱՆԵՇՔԱԳԻՐ-ԹԻՒ 2 ՎԵՐՁԻՆ ԿԱՆԳԱՈՐԸ ԱՆԱԹՈՒԽԱՆ

«HÜRRİYET» թերթին առաջին էջին վրայ, տեւաբար հրատարակուող վերտառութիւն մը կայ-թրքական դրօշակը եւ անմիջապէս տակը՝ գրութիւն մը՝ «Թուրքիան՝ թուրքերունն է»:

Այս գրութիւնն ալ կ'ապացուցանէ, որ Թուրքիա ըսուած եւ 1923-ին ոչինչէն ստեղծուած այս պետութեան, ձեզի պատկանելուն մասին կասկած ունիք:

Իրապէս ալ, այսօր Թուրքիա ըսուած հողերը գողցուած հողեր են: Եւ մենք, ձեզի բան մը ըսե՞նք: Դուք, ձեր պատմութիւնն ալ չէք գիտեր: Այդ պատճառաւ, մենք թուանշաններով ձեզի պիտի սորվեցնենք ձեր պատմութիւնը: Ահաւասիկ-11-րդ դարուն վերջաւորութեան, Միջին Ասիոյ տափաստաններէն թաթարներու-մոնկոլներու խառնուրդ, վայրենի ցեղախումբ մը ըլլալով մտաք Անաթոլիոյ հողերը:

Եւ քաղաքակրթութիւններուն եւ քրիստոնէութեան օրրանը եղած Անաթոլիոյ ժողովուրդները, ձեր սարսափելի վայրագութեամբ, նուաստացուցիք եւ զանոնք ստրուկներու վերածեցիք:

1453թ. Պոլիսը գրաւեցիք, եւ Բիւզանդական կայսրութեան վերջ տուիք: Մինչեւ 1683թ. Վիէննա քաղաքին դռնե-

րուն առջեւ կը գտնուէիք: Այդ թուականէն յետոյ՝ սկսաք նահանջել:

1876թ. ռուսական բանակները ձեզ հալածեցին եւ հասցուցին մինչեւ Պոլսոյ դռներուն առջեւը: 1876 թուականը ձեզ համար շատ կարեւոր թուական մըն է: 1876-ին ձեր ձեռքը մնացած էին միայն Անաթոլիոյ հողերը: Եւ Անաթոլիան այլեւս ձեզի համար վերջին կանգառն էր: Անկէ յետոյ, Միջին Ասիոյ տափաստանները պիտի վերադառնայիք:

Եւ 1876-էն սկսեալ ձեր ճակատագիրը՝ մեծ դրամատէրերուն ձեռքը անցաւ: Եւ անոնք ձեզ կրկին «ողջնացուցին»: Որովհետեւ, մեծ դրամատէրերու ծրագրին համեմատ, դուք Անաթոլիոյ մէջ պէտք էր մնայիք եւ հոն դուք, ռուսերուն Միջերկրական իջնելուն դէմ, վահանի դեր պիտի կատարէիք:

Անկէ յետոյ, մեծ դրամատէրերուն ծրագիրները ժամացոյցի մը ճշգրտութեամբ սկսան գործի դրուիլ:

Անոնք նախ, Անաթոլիոյ ժողովուրդները քնացնելու համար, որոշումներ հրատարակեցին՝ «Քրիստոնեաները, մահմետականներուն հետ նոյն իրաւունքներն ունին: Ամէն հպատակ օսմանցի է» հռչակեցին:

Բայց միւս կողմէն, այս մեծ դրամատէրերը, իրենց գիտնականներու ճամբով, թուրանականութիւն քարոզել սկսան եւ թուրքերուդ ցեղասպանական բնազդը քաջալերեցին:

Այս մեծ դրամատէրերուն ծրագիրներուն կեդրոնը Սելանիկ քաղաքն էր: Բոլոր գործունէութիւնները Սելանիկէն կը ղեկավարէին:

19-րդ դարու վերջաւորութեան, մեծ դրամատէրերը Սելանիկի մէջ «Jeunes Turcs» կոչուած զաղտնի կազմակերպութիւնը կազմեցին: Նպատակնին՝ Ապտիւլ Համիտը վար առնել եւ իշխանութիւնը ձեռք անցընել էր:

Եւ 1908թ. երիտթուրքերուն կազմած «Իթթիհատ եւ թէրաքքի» կուսակցութիւնը Ապտիւլ Համիտի ձեռքէն իշխանութիւնը խլեց:

Իթթիհատականները իշխանութեան գալէ յետոյ, շատ խորամանկ եւ երկդիմի քաղաքականութիւն մը կը կիրարկէին: Մէկ կողմէ՝ Անաթոլիոյ ժողովուրդներուն, իբր թէ ազատութիւն եւ հաւասարութիւն կը խոստանային: Բայց միւս կողմէ՝ իրենց վերջին կանգաւոր եղող Անաթոլիայէն Միջին Ասիոյ տափաստանները չվերադառնալու համար գաղտնաբար ծրագիրներ կը պատրաստէին:

Եւ Անաթոլիայէն ետ՝ դէպի Միջին Ասիոյ տափաստանները չբերթալու համար, միակ միջոց կար, այն ալ՝ Արեւելեան Անաթոլիոյ մէջ Հայաստան կոչուող հողերուն 5000 տարիներէ ի վեր սեփականատէր ժողովուրդը եղող հայերը մաքրագործել պէտք էր:

Այսպէս, իթթիհատականները 1908-ին, իշխանութեան գլուխ իրենց եկած սկսեալ՝ հայերը ինչպէս պիտի մաքրագործեն ըսելով ծրագիրներ կը պատրաստէին:

Միւս կողմէ ալ հայերուն՝ եղբայրութեան, հաւասարութեան եւ օսմանցիութեան սուտերով կը խաբէին:

Եւ այդ տարիներուն հայերուն գլխաւոր կուսակցութիւնը եղող Դաշնակցութեան հետ, իթթիհատականները շատ բարեկամական կապեր հաստատած էին:

Եւ մտածեցէք, որ 1912-ին, իթթիհատ կուսակցութեան կազմած օսմանեան կառավարութեան արտաքին գործերուն նախարարը՝ Նորատունկեանն էր: Եւ նոյնպէս, այն տարիներուն, օսմանեան կառավարութեան թղթատարական նախարարը Ոսկան Մարտիկեանն էր:

Իթթիհատականներն իրենց ծրագիրները ամենայնտին մանրամասնութիւններով պատրաստած էին: Եւ յարմար առիթի մը կ'ըսպասէին իրենց ծրագիրները գործադրութեան դնելու համար: Եւ յարմար առիթը 1914-ին՝ Առաջին աշխարհամարտին սկսելովը, անցաւ իթթիհատականներուն ձեռքը: Եւ 24 Ապրիլ 1915-ին, իթթիհատականները աշխարհի ամենասարսափելի ցեղասպանութիւնը գործել սկսան:

Իթթիհատականներուն ծրագիրները շատ սաղայէլական ձեւով պատրաստուած էին:

24 Ապրիլ 1915-ի օրը, Պոլսոյ մէջ հայերուն ամէնէն ծանօթ մտաւորականները, գրողները, կրօնականները եւ բոլոր առաջնակարգ հայ անձնաւորութիւնները ձերբակալեցին եւ Անատոլիոյ խորերը՝ Չանղըրը եւ Այաչ աքսորեցին: Եւ հոն, գրեթէ բոլորը, սպաննուեցան: Անկէ ետք կարգը եկաւ «անգլուխ» մնացած ժողովուրդին: Եւ էտիրնէէն մինչեւ Վան, բոլոր հայերը՝ մեծ կամ պզտիկ, կին, էրիկմարդ եւ ծերունի, բոլոր հայերը անխտիր տուններէն հաւաքեցին եւ դէպի Սուրիոյ անապատները քչեցին: Անօթի, ծարաւ, հիւանդ եւ անպաշտպան ժողովուրդին բռնութեամբ քալել ստիպեցին եւ դէպի մահ առաջնորդեցին:

Պատմութեան ոչ մէկ շրջանին, այսքան սարսափելի եւ այսքան սրտաճմլիկ ողբերգութիւն չէ տեսնուած:

Ահա, թէ ինչպէս, այսօրուան Թուրքիա ըսուած պետութիւնը, վերջին կանգառ եղած Անատոլիոյ մէջ, միլիոնաւոր անմեղ հայերուն դիակներուն վրայ հիմնուած է:

Աշխարհի ամենազարհուրելի ցեղասպանութիւնը գործած դահիճ թուրքեր՝ ձեր սպաննած միլիոնաւոր հայերուն անէծքը՝ ձերին, ձեր ամբողջ գերդաստանին, տոհմերուն եւ ձեր ապագայ սերունդներուն գլխուն թո՛ղ տեղայ:

Թիւ 103

«Նայիրի», 3 Մայիս 2005, Թիւ 236

## 24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ, ԹՈՒՐԶԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ ՊԱՏԵՂՈՒԹԵԱՍԲ

### ԱՆԵՇԸԱԳԻՐ-ԹԻՒ 3

Մեր այս գրութեան մէջ թուրքերուն 1915թ. հայոց դէմ գործադրած աքսոր եւ ջարդին ցեղասպանութենէ մը շատ

աւելի ահաւոր, ծրագրուած ցեղային մէկ մաքրագործում մը ըլլալը բացատրելու պիտի ջանանք:

Մեր այս գրութեան մէջ, թուրքերուն 1915թ. հայոց դէմ գործադրած աքսոր եւ ջարդին բուն նպատակին՝ հայոց 5000 տարուան հայրենիքին գողութիւնը ըլլալը, բացատրելու պիտի ջանանք:

1948թ. ժընեւի մէջ ընդունուած «CONVENTION»-ի համաձայն, ցեղասպանութիւնը սապէս բացատրուած է. «ԱԶԳԻ ՄԸ, ՅԵՂԻ ՄԸ ԵՒ ԿԱՄ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱԻԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՄԲՈՂՁՈՎԻՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ՝ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ Է, ԵՒ ԱՆ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԳՈՐԾՈՒԱԾ ՈՃԻՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻ: ԵՒ ԱՅՍ ՈՃԻՐԸ ԺԱՄԱՆՑՄԱՆ ՕՐԷՆՔԻՆ ԵՆԹԱԿԱՅ ԶԷ»:

Ֆրանսական «LAROUSSE» համայնագիտարանին մէջ իբր ցեղասպանութիւն նշուած ողբերգութիւնները հետեւեալներն են.

- 1944թ., գերմանացիներու կողմէ, հրէաներու եւ գնչուներու բնաջնջումը:

- 1915թ., թուրքերու կողմէ, հայերու բնաջնջումը:

- 15-րդ դարէն սկսեալ գաղութատէր եւրոպացիներու կողմէ Ամերիկայի կարմրամորթներու բնաջնջումը:

- Աւելի վերջերը՝ 1970թ., Գամպոճիոյ եւ 1990թ. Ռուանտայի մէջ կատարուած ջարդերն ալ ցեղասպանութիւն ըլլալով ընդունուեցան:

Ժընեւի «CONVENTION»-ին մէջ նշուած այս վեց ցեղասպանութիւնները 3 մասերու կրնանք բաժնել.

1.-Հրէաներու եւ գնչուներու դէմ կատարուած ցեղասպանութիւնները:

Հրէաները եւ գնչուները իրենց բուն հայրենիքը չեղող հողերուն վրայ՝ Գերմանիոյ, Լեհաստան եւ եւրոպական միւս երկիրներուն մէջ ապրած միջոցին, նացի գերմանացիներու կողմէ ցեղասպանութեան ենթարկուեցան:



Այս տեսակի ցեղասպանութեան մը մէջ ժողովուրդ մը բնաջնջուած կը նկատուի, բայց՝ հայրենիքի կորուստ չունենար:

2- Փամպոճի եւ Ռուանտայի ցեղասպանութիւններուն մէջ, բնաջնջումը իրենց մայր հայրենիքին մէջ եւ իրենց ցեղակիցներուն կողմէ իրագործուած է: Այս տեսակ ցեղասպանութիւններուն մէջ ժողովուրդի կորուստ թէպէտ կայ, բայց բուն՝ մայր հայրենիքի կորուստ չկայ:

Փամպոճիները եւ ռուանտացիները իրենց մայր հայրենիքէն մէկ սանթիմ հող չկորսնցուցին:

Փամպոճի եւ Ռուանտայի պետութիւնները նոյնութեամբ գոյութիւն ունին այսօր:

3.- Մինչդեռ Ամերիկայի կարմրամորթներուն եւ Հայկական ցեղասպանութեանց մէջ, կարմրամորթներն ու հայերը թէ՛ ցեղասպանութեան ենթարկուեցան եւ թէ՛ ալ զրկուեցան իրենց անյիշատակ ժամանակներէն մայր հայրենիքը եղող բնօրրաններէն, որոնք գողցուեցան օտար ներխուժողներուն կողմէ: Եւ կարմրամորթներն ու հայերը առանց հայրենիքի մնացին:

Թուրքերը 1915թ., իրենց հայ ազգին դէմ իրագործած ցեղասպանութեան համար, իբր պատրուակ առաջ կը քշեն որ՝ «Հայերը ազատութիւն կ'ուզէին եւ ապստամբած էին: Այդ պատճառաւ, Առաջին աշխարհամարտին, հայերուն տեղահան ըրինք»: Թուրքերուն հայոց մասին այս ըսածները, բոլորովին սուտ են, եւ պատմական իրականութիւններուն բնա՛ւ չեն համապատասխաներ:

19-րդ դարուն, Օսմանեան կայսրութեան անկման շրջանին, օսմանցիներուն բարբարոսութիւններէն փրկուելու համար, բոլոր գերի ազգերը՝ յոյները, սերպերը, ռումանացիները, պուլկարները, ալպանացիները եւ արաբները - բոլորն ալ ապստամբեցան: Միայն մէկ ազգ մը չապստամբեցաւ՝ հայերը: Եւ դուք՝ թուրքերդ, իբր գնահատանք հայերուն, անոնց սատիտղոսը տուիք՝ «ՀԱԻԱՏԱՐԻՄ ԱԶԳ՝ ՀԱՅՈՑ»...

Գալով կարմիր սուլթան Ապտիլ Համիտի բռնակալութեան տարիներուն՝ Ապտիլ Համիտին վայրագութիւններուն դէմ, Սելանիկի մէջ հրէաները եւ դաւանափոխ հրէաները գաղտնի «JEUNES-TURCS»-երու կազմակերպութիւնը մէջտեղ բերին: Եւ «ժէօն թիւրքերը» ժընեւի մէջ, Ապտիլ Համիտի իշխանութեան դէմ եղող բոլոր օսմանեան ժողովուրդներու ներկայացուցիչներուն հետ ժողովներ կը գումարէին եւ Ապտիլ Համիտէն փրկուելու միջոցներու մասին կը խորհէին:

Այս ժողովներուն հայերն ալ մասնակցեցան: Եւ «ժէօն թիւրքերուն» հետ, Ապտիլ Համիտին բռնակալութեան դէմ պայքարիլ սկսան: Նոյնիսկ 1905թ. հրէաները եւ հայերը, Պուլկարիոյ մէջ, Ապտիլ Համիտին դէմ մահափորձ մը կազմակերպեցին:

Եւ հայ ֆէտայիները, ուսմբերով լեցուն կառքը Պոլիս տարին: Նպատակնին՝ այս կառքը, Ապտիլ Համիտին ուրբաթ օրուան կրօնական արարողութեան գացած միջոցին, պայթեցնել էր: Բայց ուսմբերը քիչ մը ուշ պայթեցան: Եւ Ապտիլ Համիտ ազատեցաւ:

Եւ TEVFIK FIKRET, իր հռչակաւոր բանաստեղծութիւնը՝ «Մէկ ակնթարթի յապաղումը» այս ոմբատար կառքին ուշ պայթելուն պատճառաւ Ապտիլ Համիտին ազատած ըլլալուն «ցաւովը» գրած է:

Այս դէպքը պատմելնուս նպատակը՝ Ապտիլ Համիտի սարսափելի իշխանութեան դէմ մղուած պայքարին մէջ «ժէօն թիւրքերուն», հրէաներուն, հայերուն եւ բոլոր ազատատենչ կազմակերպութիւններուն ձեռք ձեռքի եւ կողք կողքի գործած ըլլալը ցոյց տալու համար է: Եւ «ժէօն թիւրքերուն» կազմած «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան 1908թ., Ապտիլ Համիտին բռնակալ իշխանութիւնը կործանելով (իբր թե) ազատութիւն հռչակած օրը թուրքերը, հայերուն հետ, իրենց հրճուանքէն վեր-վեր կը ցատկէին:

Եւ հայերը, 1908թ. մինչեւ 1915 թուականը, «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութիւնը «ազատութիւն» բերող կու-

սակցութիւն մը նկատեցին, եւ մինչեւ 1915 թուականը թուրքերուն հետ միասնաբար, օսմանցի ըլլալով, «ազատութեան մէջ ապրելու» մասին ըրած սուտերուն հաւատացին:

Եւ հայ կարգ մը առաջնորդներ եւ ղեկավարներ, «Իթթի-հատ եւ թերաքքի» կուսակցութեան եւ Թալեաթ փաշային այն աստիճան հաւատացած էին, որ 24 Ապրիլ 1915թ., աքսորի տարուելու օրը, սապէս կ'ըսէին. «ԱՆԿԱՐԵԼԻ Է: ԱՅՍ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ ՍԽԱԼՄՈՒՆՔ ՄԸ ԿԱՅ: ԴԵՌ ԵՐԷԿ, ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻՆ ՀԵՏ ՃԱՇԵՑԻՆՔ ԵՒ ՆԱՐՏ ԽԱՂԱՅԻՆՔ: ՀԻՄԱ ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻՆ ՀԵՌԱԳԻՐ ՄԸ ՔԱՇԵՆՔ, ԵՒ ԱՆ ՄԵՋ Կ'ԱԶԱՏԵ ԵՒ ՍԽԱԼԸ ԿԸ ՃՇԴՈՒԻ»:

Եւ այս միամիտ հայ առաջնորդները չէին հասկցած, որ իրենց դէմ ձերբակալութեան հրամանը արձակողը՝ նոյնինքն՝ Թալեաթ փաշան էր: Եւ Թալեաթ փաշան 1908թ. ի վեր, Պոլսոյ ֆարմասոնական օթեակներուն մէջ, հայ առաջնորդները իբր «եղբայր» կը համբուրէր, եւ հայերուն իր շուայած ճառերովն հայ ժողովուրդը «ազատութեան, եղբայրութեան եւ օսմանցի ըլլալով միասնաբար ապրելու» սուտերով կը քնացնէր:

Բայց Թալեաթ փաշան, նոյն ատեն՝ 1908թ. ի վեր, իր մեղսակիցներուն հետ զաղտնի ժողովներ կը կատարէր եւ հայ ազգին դէմ կատարուելիք ցեղասպանութեան ծրագիրները կը պատրաստէր:

Եւ հայ ազգը, մինչեւ վերջին վայրկեանը, թուրքերուն հաւատաց: Եւ թուրքերը հայ ազգին եւ հայ առաջնորդներուն միամտութենէն օգտուելով, 1915թ. հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին եւ անոր 5000 տարուան հայրենիքը գողցան:

\* \* \*

Հայկական ցեղասպանութիւնը աշխարհի մէջ, իր նմանը չունեցող ցեղասպանութիւն մըն է: Միայն Ամերիկայի կարմրամորթներուն ցեղասպանութիւնը հայոց դէմ կատարուածին կը նմանի: Որովհետեւ, կարմրամորթները, թէ՛ ցեղաս-

պանութեան ենթարկուեցան եւ թէ՛ իրենց հայրենիքը գող-  
ցուեցաւ:

Բայց կարմրամորթներուն ցեղասպանութիւնը որոշուած-  
ծրագրուած ցեղասպանութիւն չէր: Անոնց «մաքրագոր-  
ծումը» երկար տարիներ տեւեց:

Մինչդեռ հայերը, 11-րդ դարէն սկսեալ տեւարար ջարդե-  
րու ենթարկուելէ յետոյ, 24 Ապրիլ 1915թ. սկսեալ, մինչեւ  
ամենայետին մանրամասնութեամբ ծրագրուած եւ պատ-  
րաստուած չա՛տ սարսափելի ցեղասպանութեան մը ենթար-  
կուեցան: Եւ հայոց 5000 տարուան հայրենիքին մէջ, բոլոր  
հայերը մաքրագործուեցան, եւ հայերէն պարպուած հողերուն  
վրայ, այսօրուան Թուրքիան կառուցուեցաւ: Եւ Թալեաթ  
փաշային հայ ազգը աշխարհի երեսէն սրբելու ծրագիրը այս  
ձեւով իրագործուեցաւ:

Թիւ 104

«Նայիրի», 17 Մայիս, 2005, Թիւ 237

## **24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ, ԹՈՒՐԷՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ ՊԱՏԵՂՈՒԹԵԱՄԲ**

### **ԱՆԵՇԵԱԳԻՐ-ԹԻԻ 4**

Ճինկիզ խանին եւ Թամերլանի շառաւիղը եղող Թուրքե՛ր,  
դուք ճինկիզ խանէն ալ, Թամերլանէն ալ աւելի վայրագ,  
արիւնարբու մարդասպաններ էք: Որովհետեւ դուք, մինչեւ  
այսօր, ձեր գործած վայրագութիւններուն պատիժը չկրեցիք:  
Անպատիժ մնացած մարդասպանները իրենց վայրագութիւն-  
ները կը շարունակեն գործել: Նախ՝ փաթթոցաւոր, յետոյ՝  
Ֆէսաւոր, եւ հիմա ալ գլխարկաւոր Թուրքեր՝ դուք, հինէն ի  
վեր ինչ որ էիք, այսօր ալ նոյն վայրագ Թուրքերն էք: Յանուն

մարդկութեան, յանուն քաղաքակրթութեան եւ յանուն արդարութեան՝ թուրք Փաշիստ պետութեան սանձերը իրենց ձեռքին ունեցող բուն պարագլուխները, «Նիւրընպերկեան դատարանի» մը մէջ մարդկութեան դէմ իրենց գործած ոճիրներուն համար դատուելու են:

Ֆաշիստ եւ ծայրայեղ ցեղապաշտ թուրք պետութեան պատասխանատուները եղող այս պարագլուխները, օսմանեան պետութեան եւ այսօրուան թրքական պետութեան 20-րդ դարէն սկսեալ մինչեւ այսօր գործած ցեղասպանութիւններուն եւ ողբերգութիւններուն համար ստիպողական է, որ հաշիւ տան եւ պատժուին:

Որովհետեւ ցեղասպանութեան ոճիրը, 1948թ. ժընեւի “CONVENTION”-ով, ժամանցման օրէնքին ենթակայ չէ: Այստեղ կը թուենք թուրքերուն կատարած ցեղասպանութիւններուն եւ ողբերգութիւններուն մէկ մասը՝

1.- 1909թ. թուրքերուն Կիլիկիոյ մէջ (Ատանայ եւ չրջակայքը), հայերուն դէմ կատարած ցեղասպանութիւնը:

2.- 24 Ապրիլ 1915թ. սկսեալ մինչեւ 1923, Արեւմտեան Հայաստանի, Անաթոլիոյ եւ Արեւելեան Թրակիոյ մէջ բնակող բոլոր հայերուն թուրքերուն կողմէ ցեղասպանութեան ենթարկուիլը եւ հայերուն 5000 տարուան հայրենիքին գողցուիլը:

3.- 20-րդ դարու սկիզբէն մինչեւ 1918թ. թուրքերուն, իրենց գրաւած Արաբիոյ հողերուն վրայ, մահմետական եւ քրիստոնեայ արաբ ժողովուրդները ցեղասպանութեան ենթարկելը:

4.- 1915թ. մինչեւ 1923 թուականը թուրքերու կողմէ՝ Անաթոլիոյ սեւծովեան եզերքի բնիկ ժողովուրդը եղող PONTUS-ցի յոյներուն ցեղասպանութեան ենթարկուիլը:

Մասնաւորապէս՝ 19 Մայիս 1919թ., Մուստաֆա Քեմալին Սամսոն ոտք կոխելէն յետոյ, Սամսոն քաղաքին մէջ յոյն ժողովուրդին ցեղասպանութեան ենթարկուիլը (Սեւ Սամսոնի ողբերգութիւնը):

5.- 1915թ. մինչեւ 1923 թուականը, Անաթոլիոյ բնիկ ժողովուրդը եղող յոյներուն թուրքերուն կողմէ ցեղասպանութեան ենթարկուիլը:

6.- 1915թ. մինչև 1923 թուականը, Հարաւարեւելեան Անաթոլիոյ մէջ բնակող քրիստոնեայ ասորի ժողովուրդին թուրքերուն կողմէ ցեղասպանութեան ենթարկուիլը:

7.- 1923թ. մինչև այսօր, Արեւելեան Անաթոլիոյ մէջ քիւրտ ժողովուրդին թուրքերուն կողմէ ցեղասպանութեան ենթարկուիլը:

8.- 1941թ. թուրքերուն Պոլսոյ մէջ սարքած ոչ իսլամ ժողովուրդը (Հայ, յոյն, հրէայ) նիւթապէս եւ հոգեպէս քանդող «Ունեւորութեան տուրք» կոչուած ողբերգութիւնը:

9.- 1941թ. Պոլսոյ մէջ թուրքերուն կատարած «20 դասակարգ» կոչուած ողբերգութիւնը:

1941թ. թուրքերը Պոլսոյ մէջ ոչ իսլամ ժողովուրդին (Հայ, յոյն, հրէայ) 25 տարեկանէն մինչև 45 տարեկան բոլոր էրիկմարդիկը (իբր թէ) իբր զինուոր հաւաքեցին եւ Անաթոլիոյ խորերը աքսորեցին: Եւ հոն, այս զինուորներուն, իբր գերի քար կոտրել տուին:

Եթէ Սթալինկրատի մէջ, ոուսերուն յաղթանակը չըլլար՝ այս գերիներուն բոլորն ալ պիտի սպաննուէին:

10.- 6-7 Սեպտեմբեր 1955թ. ողբերգութիւնը՝ ուր թուրքերը, 6-7 Սեպտեմբեր 1955թ. գիշերը, Կիպրոսի պատրուակով, Պոլսոյ մէջ յոյներուն, հայերուն եւ միւս քրիստոնեաներուն եկեղեցիները, գերեզմանները եւ խանութները թալանեցին, այրեցին եւ Պոլիսը աւերակի վերածեցին:

Եւ 6-7 Սեպտեմբերի ողբերգութեան պատճառաւ, 1955թ. յետոյ, հարիւր հազարներով յոյն եւ հայ վախերնէն Պոլիսը լքեցին եւ արտասահման հաստատուեցան:

6-7 Սեպտեմբեր 1955թ. յետոյ՝ Պոլիսը բոլորովին թրքական քաղաքի մը վերածուեցաւ:

11.- 1974թ. թուրքերը, իրենց տարիներ առաջ ծրագրած Կիպրոսի գրաւումը իրականացուցին:

Եւ Կիպրոսին հարիւրին քառասունը գրաւեցին ու հազարներով կիպրացի յոյն սպաննեցին:

1974թ. մինչև այսօր Կիպրոս, թրքական գրաւման ենթարկուած է:

12. - 1915թ. մինչև 1923թ. թուրքերու կողմէ ցեղասպանութեան ենթարկուած հայերուն Արեւմտեան Հայաստանի, Անատոլիոյ եւ Արեւելեան Թրակիոյ մէջ անտէր մնացած հարստութիւնները՝ հողերը, տուները, գոյքերը եւ ամբողջ ունեցածը, թուրքերուն հնարած իբր թէ «լքեալ գոյքի» օրէնքով սեփականացուեցան: Աւելի ճիշդ՝ թուրքերը հայերուն բոլոր ինչքերը (իբր թէ՛ օրէնքով) գողցան:

13.- Թուրքերու կողմէ ցեղասպանութեան ենթարկուած հայ հզգին մայր հայրենիքը եղող հողերուն վրայի պատմական հայկական յուշարձանները, եկեղեցիները, վանքերը քանդուեցան թուրքերուն կողմէ, որպէսզի հայերէն հետք չմնայ:

Ահա ներկայացուցինք ձեզի, թուրքերուն կատարած անվերջանալի բարբարոսութիւններուն մէկ մասը:

Եւ այս բարբարոսութիւններուն հետեւանքով, մինչև 1915 թուականը, մեծամասնութեամբ յոյներուն եւ հայերուն կողմէ բնակուած Անատոլիան՝ 1923թ. հարիւր առ հարիւր թուրքերու կողմէ բնակուած երկիր մը եղաւ:

Ուշադրութիւն ըրէք, եւրոպացի ազգեր՝ եթէ այս ֆաշիստ եւ ցեղապաշտ թուրք պետութեան պարագլուխները, նացիներուն նման ցեղասպանութեան յանցանքով չպատժուին՝ դուք ալ Անատոլիոյ յոյն եւ հայ ժողովուրդներուն նման, քսան-երեսուն տարի յետոյ, թուրքերուն կողմէ ցեղասպանութեան պիտի ենթարկուիք:

Մի՛ մոռնաք, որ այսօր շատ մը եւրոպական երկիրներուն մէջ միլիոններու հասնող ափրիկեցիներ եւ թուրքեր կան: Միայն Ֆրանսայի մէջ այսօր վեց միլիոն ափրիկեցի եւ թուրք կան: Եւ ասոնք, 20-30 տարի յետոյ, 20 միլիոն պիտի ըլլան: Գերմանիոյ մէջ ալ այսօր վեց միլիոն թուրք կայ: 20-30 տարի յետոյ Գերմանիոյ մէջ նուազագոյն քսան միլիոն թուրք պիտի բնակի: Զեզի յիշեցնենք, որ 1933թ. Թուրքիոյ բնակչութեան թիւը 15 միլիոն էր: Այսօր, 2005թ., Թուրքիոյ բնակչութիւնը 75 միլիոնի հասած է...

...Եւ ամէնէն կարեւորը՝ ամերիկացիները եւ Աշխարհի մեծ դրամատէրերու կազմակերպութիւնը տարիներէ ի վեր կ'աշխատին, որ Թուրքիան Եւրոպական միութեան մէջ ներմուծեն:

Եւ ամերիկացիներն ու մեծ դրամատէրերը, Թուրքիան «Եւրոպացի» ընելու համար, զանազան նենգութիւններով, սպառնալիքներով եւ տնտեսական խաղերով ճնշում կը բանեցնեն Եւրոպական պետութիւններուն վրայ: Այս ճնշումներուն բուն նպատակը այսօր, շատերուն ծանօթ է՝ «Եւրոպական միութիւնը ներսէն խորտակել»:

Եւ Ֆրանսայի Հանրապետութեան նախկին նախագահ GISCARD D'ESTAING-ին ըսածին պէս՝ «Թուրքերուն Եւրոպական միութեան մէջ մտած օրը՝ Եւրոպան կը քանդուի» ...որովհետեւ այսօրուան Եւրոպացիները ոչ 732թ. POITIERS-ի մէջ արաբական յառաջխաղացումը կեցնող Ֆրանսացիներուն ղեկավար CHARLE MARTEL-ի ունեցած քրիստոնէական ոգին ունին, ոչ ալ 1683թ. Վիէնայի դռներուն առջեւ օսմանեան բանակը խորտակող բոլոնացի JEAN SOBIESKY-ին պայքարելու կամքը:

Ամերիկայի պաշտպանութեան նախարար DONALD RUMS-FELD-ին ըսածին պէս՝ «Խեղճ, ծեր եւ հնացած Եւրոպայ»:

Բայց հրէայ PROFESSEUR (Թուրքերուն մեծ բարեկամը) BERNARD LEWIS, աւելի հեռուն կը տեսնէ եւ կ'ըսէ՝ «21-րդ դարու վերջաւորութեան, Եւրոպան մահմետական պիտի դառնայ»: Բնական է, որ հրէայ, PROF. BERNARD LEWIS-ը, Աշխարհի մեծ դրամատէրերու կազմակերպութեան ծրագիրները շատ լաւ գիտէ:

Այս տեսակէտով BERNARD LEWIS-ին ըսած «21-րդ դարու վերջաւորութեան, Եւրոպան մահմետական պիտի դառնայ» խօսքերը՝ մարգարէութիւն մը չեն, այլ միայն՝ Աշխարհի մեծ դրամատէրերուն աշխարհը կառավարելու ծրագիրներուն քողազերծումը:



Այս իրականութիւններուն լոյսին տակ կրկին պիտի ըսենք՝

1.- Անաթոլիոյ մէջ որպէսզի հայերուն եւ յոյներուն նման եւրոպացիներն ալ թուրքերուն կողմէ ցեղասպանութեան չենթարկուին,

2.- Եւ որպէսզի Եւրոպային, 21-րդ դարու վերջաւորութեան, մահմետական դառնալուն արգելք կարելի ըլլայ կենալ՝ Փաշիստ եւ ցեղապաշտ թուրք պետութեան պարագլուխները, նացի դեկավարներուն նման, ցեղասպանութեան յանցանքով, Նիւրընպէրկեան դատարանի մը տուէք, եւ յանցապարտ թուրքերը պատժեցէք:

Թիւ 105

«Նայիրի», 14 Յունիս, 2005, թիւ 238

## 24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ, ԹՈՒՐԷՐՈՒՆ ՉՈՐՏԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ ՊԱՏԵՂՈՒԹԵԱՄԲ

### ԱՆԵՇՔԱԳԻՐ-ԹԻՒ 5 ՈՎԷՒՐ ԵՆ ՅԱՆՑԱԴՈՐՆԵՐԸ

1948թ. Ժընևի “Convention”-ի համաձայն, ցեղասպանութեան յանցանքները ժամանցման օրէնքին ենթակայ չեն:

Այս տուեալին համեմատ, առաջին յանցաւորը՝ Հայկական ցեղասպանութիւնը իրագործող, «Իթթիհատ եւ թէրաքքի» կուսակցութեան կողմէ կազմուած 1915-ի թրքական կառավարութիւնն է:

Բայց նկատելով, որ Ժընևի “Convention”-ին ցեղասպանութեան յանցանքները ժամանցման օրէնքին ենթակայ չեն, եւ 1915-էն այսօր, 90 տարիներ յետոյ, «Իթթիհատ եւ թէրաքքի» կուսակցութեան յանցաւորներէն ոչ մէկը գոյութիւն ունի, ուրեմն 1915թ. Հայկական ցեղասպանութեան այսօրուան յանցաւորները ովքե՞ր են:

Անկասկած, որ այսօրուան պատասխանատուները՝ 1915-ի «Իթթիհատ եւ Թէրաքքի» կուսակցութեան (հոգեպէս, բարոյապէս եւ մարմնապէս) ժառանգորդները՝ այսօրուան Թրքական պետութեան իսկական պարագլուխներն են:

24 Ապրիլ 1915-ի Հայկական ցեղասպանութեան յանցաւորները եղած իթթիհատական ղեկավարներուն մեծ մասը (առաջին յանցաւոր Թալեաթ փաշայի առաջնորդութեամբ) որոնք, 1918-ի պարտութենէն յետոյ, գերմանական ընդծովեայով մը Պոլսէն փախան եւ Գերմանիա ապաստանեցան:

Իթթիհատականներուն յաջորդած օսմանեան նոր կառավարութիւնը, 1915-ի Հայկական ցեղասպանութեան բուն յանցաւորները եղող Թալեաթը, էնվերը, Ճեմալը եւ միւս իթթիհատական պարագլուխները մահուան դատապարտեց:

Բայց, բուն յանցաւորները փախած էին: Միայն երկրորդ աստիճանի կարգ մը ոճրապարտներ պատժեցան:

Մինչ այդ, պատերազմէն յետոյ, մեծ պետութիւններու միջեւ, մրցակցութիւն սկսաւ: Արեւմտեան պետութիւնները չէին ուզեր, որ Անատոլիան ռուսերուն ձեռքը անցնի: Եւ արեւմտեան պետութիւնները Անատոլիոյ մէջ յոյներուն իբր թէ կ'օգնէին երեւութապէս, բայց, իրականութեան մէջ գաղտնաբար սելանիկցի Մուստաֆա Քեմալին թիկունք կը կանգնէին:

Եւ սելանիկցի Փարմասոն Մուստաֆա Քեմալ (Թալեաթ փաշայի նման) շատ լաւ «Թատրոն» կը խաղար:

Ան, մէկ կողմէ, Սովետներուն՝ «ես սոցիալիստ եմ, ձեզի հետ եմ» կ'ըսէր, միւս կողմէ ալ Փրանսացիներուն եւ անգլիացիներուն հետ համաձայնութիւններ կը կնքէր:

Եւ Պոլսոյ օսմանեան կառավարութիւնը 23 Ապրիլ 1920-ին Անգարայի մէջ կազմուած Մուստաֆա Քեմալին «ժողովական կառավարութիւնը» կը կոչէր «Աւազակներու հրոսախումբ»:

Պոլսոյ օսմանեան կառավարութեան ախտաճանաչումը շատ ճիշդ էր:

Որովհետեւ, 24 Ապրիլ 1915-ի Հայկական ցեղասպանութեան բոլոր դահիճները, հրոսախմբական աւազակները, բոլոր մարդասպաններու եւ գողերու խմբակները եւ «Իթթիհատ եւ թէրաքքի» կուսակցութեան բոլոր ղեկավարները, մեծէն մինչեւ պզտիկը, Մուստաֆա Քեմալին հրամանին ենթարկուած էին:

Անաթոլիական բոլոր քաղաքներուն, գիւղաքաղաքներուն եւ գիւղերուն մէջ 24 Ապրիլ 1915-ին սկսած Հայկական ցեղասպանութեան գործադրիչները, այսինքն՝ հայ ազգին ցեղասպանութեան անպատիժ մնացած դահիճները կրկին «գործի» սկսան:

Եւ Անգարայի Մուստաֆա Քեմալի կառավարութեան այս դահիճներու բանակը, Անաթոլիոյ մէջ ջարդէն վերապրող հայերը եւ յոյները վայրագօրէն սպաննեցին:

Եւ Թալեաթ փաշայով սկսած Անաթոլիան հայերէն մաքրագործելու ծրագիրը, աւելի մեծ չափով, Մուստաֆա Քեմալին աւազակներու հրոսախումբերը իրագործեցին:

Եւ այսօր, աւելի շատ Թալեաթ փաշային անունը կը տրուի իբր ցեղասպանութեան պարագլուխ:

Իրականութեան մէջ, Մուստաֆա Քեմալին գործադրած ցեղասպանութիւնը եւ ցեղային մաքրագործումը՝ Թալեաթ փաշայինէն աւելի մեծ եւ շատ աւելի սարսափելի է:

Եւ այսօր մեր տրամաբանութիւնը, մեր խիղճը հարց մը՝ կայ որ չի կրնար ըմբռնել եւ չի կրնար ընդունիլ. «Ինչո՞ւ, այսքան մեծ, այսքան սարսափելի ցեղասպանութիւններ եւ ցեղային մաքրագործումներ, մինչեւ այսօր անպատիժ մնացած են»:

Իբր թէ արդարութեան կառոյցը, մէկ հոգի մեռցնող մարդասպանը մահուան կը դատապարտէ, եւ կամ՝ ցկեանս բանտարկութեան:

Ինչպէ՞ս կարելի է, որ քսաներորդ դարուն եւ ամբողջ աշխարհի աչքին առջեւ, հայ ազգը ցեղասպանութեան ենթարկուի, Անաթոլիոյ մէջ յոյները ցեղասպանութեան ենթարկուին, Անաթոլիոյ ժողովուրդը ցեղային մաքրագործման ենթարկուի, Անաթոլիան յոյներէն եւ հայերէն բոլորովին մաքրագործուի եւ

այս ցեղասպանութիւններն ու ցեղային մաքրագործումները կատարողները մինչեւ այսօր պատժած չըլլան:

Այս անհրաւութիւնն ու այս անարդարութիւնը, «Մարդ» ըլլալով, չենք կրնար ընդունիլ:

Մէկ կողմէ՝ Գերմանիոյ մէջ սպաննուած հրէաներուն համար գերմանացիները մինչեւ այսօր կը պատժւին, բայց 1915-էն մինչեւ 1923 միլիոնաւոր եւ միլիոնաւոր հայ, յոյն եւ ասորի սպաննող թուրքերը անպատիժ կը մնան:

Մենք կը հաւատանք, որ մարդկութիւնը «Մարդ» ըլլալով կարենալ ապրելու համար ստիպուած է ԹՈՒՐԻՔ ԸՍՈՒԱԾ ԴԱՀԻՃՆԵՐՈՒ ՑԵՂԱՆՈՒՄԲԸ, ՅԱՆՈՒՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԺԵԼ:

Միայն այս ձեւով, թուրքերուն վայրագութիւններուն վերջ կրնայ տրուիլ:

Թիւ 106

«Նայիրի», 28 Յունիս, 2005, Թիւ 239

## **24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ, ԹՈՒՐԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ ՀԱՅՎԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՊԱՏԵՀՈՒԹԵԱՄԲ**

### **ԱՆԵՏՔԱԳԻՐ-ԹԻՒ 6 ԹՈՒՐԵ ԿՈՉՈՒԱԾ ՄԱՐԴԱՍՊԱՆՆԵՐՈՒ ՇԱՌԱԻՂՆԵՐՈՒՆ ՇԵՏ ԶՐՈՅՅ**

Ֆրանսայի մէջ, փողոցը քալած միջոցիս, եթէ դէմս թրքերէն խօսող մը ելլէ, կը գանհմ:

Ինչո՞ւ: Որովհետեւ, իմ ազգս, հայ ազգը, ցեղասպանութեան ենթարկող եւ անպատիժ մնացած մարդասպաններէն մէկը տեսած ըլլալու տպաւորութիւնը կ'ունենամ: Պժգանք կ'զգամ եւ սիրտս կը խառնուի: Եւ ինքզինքիս կը հարցնեմ. «Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ այս վայրագ ազգին մարդասպանները, Ֆրանսայի փողոցներուն մէջ, ազատօրէն կրնան պտտիլ»:

Կրնաք ըսել. «Այդ մարդուն յանցանքը ի՞նչ է, եթէ իր մեծ հայրը եւ կամ հայրը մարդասպան էր»:

Էֆենտի՛, իմ կեանքս Պոլիս անցաւ: 50 տարի հոն ապրեցայ: Եւ շատ լաւ գիտեմ, ձեր ինչ «ապրանք» ըլլալը:

Կարելի է դուք՝ միամիտ եւրոպացիներդ, ձեր կեղծ հիւրասիրութիւններով կրնաք խաբել: Բայց ես ձեր սրտին մէջ ապրող վայրագ հոգին կը ճանչնամ:

Միայն ձեր էրիկ մարդիկը չէ, որ գազան են, այլ ձեր կիներն ալ գազանաբարոյ են:

Շատ, անգամ, իրենց տղաքը յանդիմանող թուրք կիներ տեսած եմ, որոնք իրենց տղոցը «քեզ կը կտրեմ հա»-ըսելով կը վախցնէին:

Որովհետեւ, անոնց համար, հայ կեալուր «կտրելը» շատ բնական բան մըն էր:

Եւ իրարու միջեւ «քեզ կը կտրեմ» խօսքը միշտ կը կրկնէին:

\* \* \*

1974թ. Կիպրոսի (իբր թէ), «Նաղաղութեան արշաւանքը» կը յիշէ՞ք:

Այդ թուականէն «Նաղաղութեան արշաւանք» ըսելով, հազարաւոր յոյն սպաննեցիք եւ Կիպրոսին կէսը գրաւեցիք:

Այդ տարիներուն Պոլսոյ մէջ (իբր թէ), թուրք լաւ կին դրացի մը ունէինք:

Այդ կնոջ տղան, այդ օրերուն, գինուոր ըլլալով, Կիպրոս դրկուած էր:

Մեր դրացի թուրք կնկան հարցուցի.- Հալիտէ հանրմ, անպայման շատ յուզուած ես՝ տղուդ Կիպրոս երթալուն:

Տեսէք, թէ ինչ պատասխանեց.- Ի՞նչ կ'ըսես... ինչո՞ւ պիտի յուզուիմ եղեր: Տղուս ըսի, որ «Չըլլայ, թէ հինգ-տասը հատ կեալուր չկտրած տուն վերադառնաս»:

Ահա այդ կինը՝ մեր լաւ թուրք դրացին էր:

\* \* \*

1974թ. Կիպրոսի «Նաղաղութեան արչաւանքի» օրերուն, մեր գործատեղին թուրք աշխատողներէն մէկ քանի հոգի ալ որպէս զինուոր Կիպրոս դրկուեցան:

Այս զինուորներէն մէկը, տարի մը ետք, արձակուրդով Պոլիս եկեր է:

Մեր գործատեղին ալ եկաւ, իր ընկերները տեսնելու:

Եւ ինձի ալ հանդիպեցաւ՝ ի յարգանս...

Ես ալ զինք հիւրասիրեցի՝ զինուոր ըլլալուն, եւ գրասենեակս նստեցուցի:

Ասկէ, անկէ խօսեցանք: Եւ ան, Կիպրոսի մէջ, իբր զինուոր, իր տեսածները ինձի պատմեց:

Եւ ես հիմա, 1974թ. Կիպրոսի «Նաղաղութեան արչաւանքին» այս զինուորին պատկանած գումարտակին կատարած «քաջագործութիւններէն» մէկ հատը, նոյնութեամբ պիտի ջանամ ձեզի պատմել.—

«Իմ գումարտակս, Կիպրոսի մէջ վերջապահի պաշտօն կը կատարէր:

Պատերազմի ճակատին ետեւը մնացող թշնամի ուժերը մաքրագործելու պարտականութիւնը ունէինք:

Օր մը, մեր գումարտակին հրամանատար հարիւրապետին առաջնորդութեամբ, եկեղեցի մը մտանք:

Եկեղեցին մէկը չկար: Պարապ էր:

Բայց մեր հարիւրապետը փորձառութիւն ունէր անպայման, իր ձեռքը սուր մը բռնած, դէպի եկեղեցիին խորանը յառաջացաւ:

Եւ խորանէն ներս մտաւ...

Եւ միջոց մը ետք, սեւեր հագած կրօնականի մը երկար մազերէն քաշկոտելով, զայն մինչեւ եկեղեցիին մէջտեղը բերաւ:

Եւ կրօնականին ստիպեց, որ ոտքի ելլէ:

Կրօնականը տեւաբար խաչ կը հանէր եւ կ'աղօթէր:

Եւ մեր հարիւրապետը, սուրի մէկ հարուածով, կրօնականին գլուխը թոցուց»:

Ահա թուրքերուն կիպրոսի մէջ (իրը թէ) «Նաղաղութեան արշաւանքին» կատարած վայրագութիւնները:

Դուք, փաթթոցով կամ փողկապով թուրքե՛ր, դուք, ինչ որ էիք երէկ, այսօր ալ նոյն գազաններն էք:

Թիւ 107

«Նայիրի», 12 Յուլիս, 2005, Թիւ 240

## **24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ, ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ ՊԱՏԵՆՈՒԹԵԱՄԲ**

### **ԱՆԵՇՔԱԳԻՐ-ԹԻ 7**

### **ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ**

### **ՈՒՐԱՅՈՂ ԹՈՒՐՔԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐՏՈՂԱՆԻՆ**

### **ԲԱՅ ՆԱՄԱԿ**

Յարգարժան վարչապետ, եթէ ձեր հոգւոյն իրական երեսուր տեսնել կ'ուզէք կարդացէք այս գրութիւնը.

3 Յունիս 2003թ. «Նայիրի»-ի մէջ հրատարակուած մեր գրութիւնը նչելը՝ յանուն արդարութեան օգտակար կը նկատենք:

«Թուրք եւ հայ փրոֆեսորները իրենց միջեւ պիտի բանակցին եղեր, ճշդելու համար, թէ 1915թ. թուրքերուն հայերուն դէմ կատարած սպանողը ցեղասպանութիւնն է, թէ՞ ցեղասպանութիւն չէ:

Մեղք, չատ մեղք: Եթէ այդ փրոֆեսորները իսկական պատմագէտներ էն, չատ լաւ գիտեն ուրեմն, որ 1915թ. Պոլսոյ մէջ դեսպանատուն ունեցող բոլոր պետութիւններուն արխիւներուն մէջ, հազարներով տեղեկագիրներ կան, որոնք կը փաստեն, թէ 1915թ. կատարուածը, պատմութեան որեւէ

ըրջանի մէջ իր նմանը չունեցող զարհուրելի ցեղասպանութիւն մըն է:

...Եւ այս իրականութիւնները թուրքերն ալ շատ լաւ գիտեն, եւ ոչ միայն փրոֆեսոր թուրքերը: Բոլոր թուրք ժամտարմաները, բոլոր թուրք պետական պաշտօնէութիւնը գիտեն: Եւ մանաւանդ՝ թուրք ժողովուրդը գիտէ: Անոնք, իրարու հետ խօսած ատեն, հպարտութեամբ կը պատմեն, թէ ինչպէս ջարդած են հայ GAVUR-ները: Էֆենտինե՛ր, ինչո՞ւ պատմագէտներով ատեն կը կորսնցնէք: Գացէք թուրք ժողովուրդին հարցուցէք: Անոնք շատ լաւ գիտեն իրենց կատարած ցեղասպանութիւնը...»:

\* \* \*

3 Յունիս 2003 թուակիր մեր գրութեան մէջ «Թուրք ժողովուրդին հարցուցէք: Անոնք շատ լաւ գիտեն իրենց կատարած ցեղասպանութիւնը, հայ կեաւորները ինչպէս ջարդած ըլլալնին» ըսած էինք:

Հիմա, այս մեր ըսածներուն հարիւրին հարիւր իրականութիւն եղած ըլլալը փաստող մէկ գրութիւնը ձեր ուշադրութեան կը յանձնենք:

Այս գրութիւնը, ձեր մէջ շատ հազուագիւտ խղճամիտ եւ արդարասէր ÖMER ELAÇMAZ անունով թուրքի մը կողմէ գրուած եւ 11 Մայիս 2005թ. ալ Պոլսոյ «Ակօս» թերթին մէջ հրատարակուած է:

Հիմա, ÖMER ELAÇMAZ-ին գրածները յապաւումներով տալու պիտի ջանանք՝

«1970թ. Նեվէհիւրի մէջ, ուսուցիչի գաւակ ըլլալով աշխարհ եկեր եմ: Ամառուան երկար արձակուրդները՝ մեծով պզտիկով Կեսարիոյ GESI գիւղաքաղաքը կ'անցրնէինք...»

Մեծ հայրս գիւղաքաղաքին գրեթէ կէս դարու պայտահարն էր: Գիւղաքաղաքին բոլոր էջերն եւ ձիերը, տարիներ առաջ իր վարպետէն սորված ձեւով, շատ վարպետօրէն կը պայտէր:



Մեծ հօրս հետ մինակ մնացած, բոլոր միւս մարդոցմէն հեռու գտնուած մէկ օրիս իրեն հարցուցի, թէ էչերը եւ ձիերը պայտելը ո՞րմէ սորված է: Տարիներ առաջ իր GÁVUR վարպետէն սորված ըլլալը պատմեց:

Ցնցուած էի. «Կեաւուրի» մը մէկուն բան մը սորվեցուցած ըլլալու իրողութիւնը գլուխս չէր մտած:

Իմ գիտցած «Կեաւուրը»՝ հայհոյել, անարգանք ըսել էր. մանաւանդ GESÍ-ի մէջ կեաւուրները ի՞նչ գործ ունէին:

Շուարումս փարատել ուզող մեծ հայրս սկսաւ պատմել՝ շրջակայքը գտնուող մեծ եւ պզտիկ գիւղ եւ գիւղաքաղաքներու շարքին GESÍ, EFKERE, BLYSÍN, ÍSPÍDÍN, BÜRÜNGÜZ եւ հիմա անունները անյայտ շատ մը բնակավայրերու, իրականութեան մէջ հայերուն կողմէ հիմնուած ըլլալը եւ այդ վայրերուն մէջ ատենօք անոնց մեծամասնութիւն կազմած ըլլալնին պատմած միջոցին, ես կարծէք թէ «պզտիկ լեզուս» կլլած ըլլայի: Այս պատմածները մէջս, աւելի մեծ ցնցում մը ստեղծեցին:

Մեծ հայրս «ERMENÍ» ըսած էր: Ասիկա «մանկութեան բառարանիս» մէջ ալ աւելի վատ, բերան չառնուելիք հայհոյանք մըն էր: GESÍ-ի բնակիչները, իրարու հետ կռուած միջոցին, իրարու՝ «ERMENÍ» ըսելով կը հայհոյէին: Մանաւանդ «Հայու զաւակ» կամ «Հայու սերմ» ըսելու տեղ, միայն «Հայ» ըսելը՝ մէկը անարգելու համար բաւարար էր: Կարծես, թէ «Աշխարհն գլխուս փլած» էր:

Մեծ հայրս, պայտահարութիւնը հայէ մը սորված ըլլալը ըսած էր:

Ինքզինքս քիչ մը ամփոփելէ յետոյ, մտահոգութեամբ մեծ հօրս հարցուցի. «Հայը, ինչպիսի՞ մարդ մըն էր»: Առած պատասխանս մէջս, ընկերային իմաստով, կեանքիս առաջին հակասական վիճակը ստեղծեց.

«Հողը թեթեւ ըլլայ, աղէկ մարդ էր», — ըսած էր մեծ հայրս:

Այդ օրէն յետոյ, տեւաբար մեծ հօրս, մեծ մօրս, հօրս, գիւղաքաղաքին գործաւորներուն, մամիկներուն, քեռիներուն, մօրեղբայրներուն, զիս ճանչցող ու ինձմով հետաքրքրուող

բոլոր անձերուն՝ հայոց մասին հարցումներ ուղղել սկսայ...  
 Բոլոր պատմուածներէն սորվածներս՝ սարսափեցուցիչ էին:  
 Սոսկացած էի: Բայց, նոյն ատեն ալ՝ շատ շուարած:

«ERMENI» բառը՝ իբր անարգալից մակղիր գործածող  
 հաւաքականութիւն մը կարծէք, թէ «խօսքը մէկ» ըրածի  
 պէս, GESI-ի մէջ հայերու դէմ սարսափելի ջարդ մը կատարու-  
 ած ըլլալը կը հաստատէր:

Անոնց, այս մէկը վկայած ըլլալնուն, նոյնիսկ մինչեւ այսօր,  
 մեկնաբանութիւն չեմ կրցած տալ:

Անոնք, այս ողբերգութիւնը պատմած միջոցին, հաստատ  
 վիճակ մը չունէին, բայց փոխակերպուած հոգեկան վիճակի  
 մէջ ալ չէին: Կարծէք, իրենք իրենցմէ բոլորովին դուրս, տար-  
 բեր վայրի մը մէջ, եւ ժամանակաշրջան մը կատարուած  
 ողբերգական տրամա մը պատմելու կերպարանք ունէին:

Հակառակ այս վիճակին, բացէն խօսելով հանդերձ, իրենց  
 պատմած տխուր Փիլմին գէշ մարդիկները թուրք, իսկ լաւերն  
 ալ՝ հայ կը ներկայացնէին կարծէք թէ:

Գիւղաքաղաքի մուտքին, DERİNDERE գետակէն ալիք,  
 ալիք հայկական արիւն վազցուած ըլլալնին խոստովանելով,  
 կարծէք թէ նզովելու պէս, հայ հարսին «ես հանեմ տամ»  
 ըսող բոլոր աղաչանքներուն հակառակ, թուրքերուն այդ  
 հարսին դաստակները կտրելով ոսկի ապարանջանները  
 առնելը նախընտրած ըլլալնին պատմելը, GESI-ցիներուն  
 գաղտնիք մը պահած ըլլալը կը բացայայտէր...

Անցեալ շաբաթ, «METİS» հրատարակչութենէն նոր ելած  
 գիրք մը աչքիս զարկաւ. FETHİYE ÇETİN-ի «Մեծ մայրս»...  
 Այս գիրքը, առաջին առիթով, գնել եւ կարդալ կ'ուզեմ:

Յետոյ, ո՞վ գիտէ, կարելի է FETHİYE ÇETİN-ին մեծ  
 մօրը համար... Մեծ հօրս՝ պայտահար վարպետին համար...  
 NAZİRE TEYZE-ին, եւ կամ բուն անունը ինչ որ է՝ անոր  
 համար... DERİNDERE-ի գետակէն ալիք, ալիք արիւնը  
 թափուողներուն համար... Ոսկի ապարանջանները՝ դաստակ-  
 ներուն հետ միասին կորսնցնող հայ հարսին համար... Տարօ-  
 րինակ GESI-ցիներուն համար...

Լեզուն, կրօնը, անունը եւ իրենց անցեալէն ինչ որ մնացած է, ամէն բաներնին մոռնալու ստիպողութեան տակ մնացող բոլորին համար...»:

Յարգարժան վարչապետ՝ ÖMER ELAÇMAZ-ին պատմած այս սարսափելի «իրականութիւնը» մեզ շատ յուզեց, եւ լացի՛նք:

Ձեզի ալ պիտի յուզէ՞ արդեօք:

Թիւ 108

«Նայիրի», 26 Յուլիս, 2005, Թիւ 241

## 24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ, ԹՈՒՐԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՉԻՆ ՊԱՏԵՂՈՒԹԵԱՄԲ

### ԱՆԷՇՔԱԳԻՐ-ԹԻԻ 8

ՊՈԼՍՈՅ «ԱԿՈՍ» ԹԵՐԹԻՆ ՄԷՋ, 11 ՄԱՅԻՍ 2005-ԻՆ ԿԵՍԱՐԻՈՅ «GESİ» ԳԻՒՂԱՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՏԵՍՈՒԹԵԱՄԲ ՊԱՏՄՈՂ ÖMER ELAÇMAZ-ԻՆ, ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿ

Յարգարժան ÖMER ELAÇMAZ

11 Մայիս 2005 Թուականին, «Ակօս» Թերթին մէջ հրատարակուած Ձեր յուշերը սարսուռով կրկին ու կրկին կարդացինք: Եւ ամէն անգամ, որ կարդացինք, լացինք: Մեր աչքերուն չէինք կրնար հաւատալ.

1.- Թուրքիոյ մէջ ապրող երիտասարդի մը՝ իրականութիւնները իրենց ամբողջ զարհուրանքով պատմելու համարձակութեան:

2.- Իր ապարանջանները՝ «ես հանեմ տամ» ըսող հայ հարսին բոլոր աղաչանքներուն հակառակ, Թուրքերուն անոր

դաստակները կտրելով ոսկի ապարանջանները խլել նախընտրած ըլլալնուն... եւ մարդ ըսուած արարածին այս աստիճան գազանանալուն չէինք ուզեր հաւատալ:

Յարգարժա՛ն ÖMER ELAÇMAZ

Զեր յուշերուն մէջ (Անաթոլիոյ ամբողջ տարածքին 1915թ. կատարուած հայկական ողբերգութիւնը պատմող բազմաթիւ հատորներէն աւելի) ճշմարտութիւն եւ անկեղծութիւն կայ:

Զեզի, մեր ամբողջ սրտով, մեր երախտագիտութիւնը կը յայտնենք: Մինչ այդ, մենք ալ ձեզի «GESİ» գիւղաքաղաքին մօտ, Կեսարիոյ “EFKERE” գիւղը մեր այցելութեան յուշերը պատմելու պիտի ջանանք:

1975-տարուան Սեպտ. ամսուն մէջ, երեք ընկերներ, մեր տիկիններով, Պոլիսէն ինքնաշարժով Կեսարիա եւ GÖREME երթալու համար, ճամբայ ելանք: Կեսարիա հասնելէ յետոյ, GÖREME-ի ժայռերուն մէջ փորուած բիւզանդական եկեղեցիները այցելեցինք: Հազար տարուան որմնանկարներով (FRESQUE) այս եկեղեցիները աշխարհի հրաշալիքներէն են: Բայց որմնանկարներուն վրայի Քրիստոսի եւ միւս սուրբերէն շատերուն աչքերը մոլեռանդ մօլլաներու անիծեալ ձեռքերովը փորուած էին...

GÖREME-ի մէջ Փրանսացի Touriste-ներու հանդիպեցանք: GÖREME-ի այս եկեղեցիները տեսնելու համար՝ այս մէկը իրենց երրորդ այցելութիւնն է եղեր:

«Այս հրաշալիքները տեսնելու համար, կրկին պիտի գանք»,— ըսին Փրանսացիները: ...Հետեւեալ օրը, Taxi մը կանչեցինք պանդոկ եւ վարորդին ըսինք, որ մեզ Կեսարիոյ հայկական եկեղեցին տանի:

Կեսարիոյ հայկական եկեղեցին, մինչեւ 1915 թուականը գոյութիւն ունեցող Անաթոլիոյ հազարաւոր հայկական եկեղեցիներէն դե՛ռ կանգուն մնացածներէն մէկն էր:

Taxi-ի տարեց վարորդը, տակաւին եկեղեցի չհասած, ինքնաշարժը կեցուց մեծ շէնքի մը առջեւ եւ մեզի սա բացատրութիւնը տուաւ. «Այս շէնքը Կեսարիոյ ամէնէն հարուստ

անձերէն՝ Զամպագճեանին շէնքն էր: 1915թ. ջարդերուն թուրքերը, Զամպագճեանը իր շենքին պատշգամէն կախելով մեռցուցին»...

Մինչեւ այսօր անգամ, Taxi-ի վարորդին այս ցաւալի եղելութիւնը մեզի, հայերուս ինչո՞ւ պատմած ըլլալուն պատճառը, մենք մեզի կը հարցնենք...

Մեր ընկերներէն մէկուն հայրը, Կեսարիոյ «EFKERE» գիւղը ծներ է: 1915թ. հայկական ցեղասպանութեան օրերուն, ամբողջ Անաթոլիոյ մէջ եղածին նման, «EFKERE»-ի մէջ ալ գիւղին տղամարդիկը կրտսերէն մինչեւ ամէնէն մեծը (իբր թէ) զինուոր պիտի տարուին ըսելով կը հաւաքեն: Մեր ընկերօջը հայրը, 1915թ., 14 տարեկան է եղեր: Անոր մայրը, իր զաւակին զինուոր չտանին ըսելով՝ աղջկայ հագուստ կը հագցնէ եւ տունին վերնայարկը, առաստաղին վրայի խուցին մէջ կը պահէ... եւ (իբր թէ) զինուոր տանելու համար ճամբայ հանուած «EFKERE»-ի հայ տղամարդոց, քանի մը ժամ քալել տալէ յետոյ, շուրջի գիւղերէն եկող թուրքերը եւ հրոսակները անոնց վրայ կը յարձակին եւ բոլորին ալ կ'սպաննեն...

Եւ միջոց մը յետոյ, «EFKERE» գիւղին հայ ժողովուրդը, մեծ ու պզտիկ, կին կամ այր՝ բոլորն ալ կ'աքսորուին: Խեղճ աքսորեալներուն շատը, ճամբան կ'սպաննուին, մաս մըն ալ անօթութենէ կը մահանան: Միայն քանի մը հոգի ողջ կը մնան: Անոնք ալ, պատերազմէն յետոյ, Պոլիս կը հաստատուին... Մեր ընկերը, հօրը ծննդավայրը եղող «EFKERE» գիւղը տեսնել փափաքեցաւ:

Կեսարիոյ մէջ Պոլսէն իրեն հետ առեւտուր ըրած թուրք վաճառական մը կը ճանչնայինք:

Անոր խնդրեցինք եւ ան, մեզի ճամբան ցոյց տալու համար, ուղեցոյց եղաւ: Իր ինքնաշարժը առջեւէն կ'երթար: Մենք ալ իրեն կը հետեւէինք: «EFKERE» չհասած՝ կեսարացի մեր թուրք ուղեցոյցը իր ինքնաշարժը կեցուց: Մենք ալ կեցանք: Եւ ան մեզի, ճամբէն բաւական հեռու գտնուող եւ փլատակ կարգ մը շէնքեր ցոյց տուաւ: Եւ մեզի սա բացատրութիւնը տուաւ. - «Այս փլատակ կառոյցները՝ մինչեւ 1915

Թուականը, շատ համբաւ ունեցող Կեսարիոյ Սուրբ Կարապետ վանքն է: Հիմա, աւերակ վիճակի մէջ է, եւ որպէս զինուորական մթերանոց կը գործածուի»...

Յետոյ, մեր ճամբան շարունակեցինք դէպի «EFKERE» գիւղը: Ներկայ «EFKERE»-ն 40-50 տուն ունեցող գիւղ մըն էր: Եւ տուներուն շատերը հին էին, հազիւ քանի մը հատ նորակառոյց բնակարաններ տեսանք: Կեսարացի մեր Թուրք ուղեցոյցը «Ձեզի HİLMİ BEY-ին ծանօթացնեմ: Շատ հետաքրքրական մարդ մըն է»,— ըսաւ:

Եւ գիւղին մէջ նոր կառուցուած, բաւական մեծ շէնքի մը առջեւ կենալով մուտքի դուռը զարկաւ:

Տարիքոտ, բայց առոյգ կեցուածքով մարդ մը բացաւ դուռը: Կեսարացի մեր ուղեցոյցը. «HİLMİ BEY, այս հիւրերը Պոլսէն եկող հայ բարեկամներս են: Ասոնցմէ մէկուն հայրը «EFKERE»-ցի է եղեր»,— ըսաւ անոր: Այդ վայրկեանին HİLMİ BEY-ին տուած պատասխանը, մինչեւ կեանքերնուս վերջը չենք կրնար մոռնալ: Եւ Հիլմի Պէյը, կատարեալ հայերէնով մը մեզի. «Բարի եկաք, շատ գոհ մնացի: Ներս հրամանեցէք»,— ըսաւ: Մենք, բոլորս ալ, «ապուշ» կտրած էինք: «EFKERE» գիւղին մէջ Հիլմի Պէյը հայերէն պիտի գիտնար: Եւ մեզի հետ հայերէն պիտի խօսէր...

Մեր շփոթութիւնը տեսնող Հիլմի Պէյը բացատրեց. «Ես, 1895թ., «EFKERE» ծներ եմ: Այդ Թուականներուն 200 բնակարանով մեծ եւ ծաղկած գիւղ մըն էր: Եւ բնակչութեան մեծամասնութիւնը հայ էին: Միայն քանի մը Թուրք ընտանիքներ կային:

Եւ «EFKERE»-ի մէջ հայկական վարժարանէն ուրիշ կրթարան չըլլալուն, ես ալ հայկական դպրոց գացի: Շատ յաջող աշակերտ մըն էի: Եւ հայկական դպրոցի մէջ ուսումս աւարտեցի...

1914թ., պատերազմէն առաջ, Ամերիկա գացի: Եւ հոն 50 տարի աշխատեցայ: Եւ ամերիկացի կնոջ մը հետ ամուսնացայ... Եւ Ամերիկայի մէջ հանգստեան կոչուեցայ... Կնոջս մահանալէն ետք, հինգ տարի առաջ ալ «EFKERE» վերադարձայ: Եւ

ամերիկեան պետութենէն ստացած հանգստեան թոշակովս հոս, Պէյի պէս կ'ապրիմ»: Եւ յետոյ, պահարանէն շիշ մը whisky բերաւ եւ կրկին հայերէնով. «Այստեղ ժողովուրդը էշ է. ոչ whisky-ն գիտեն, ոչ ալ ապրիլը: Եւ եկէք միասին կենաց խմենք»,— ըսաւ... Եւ HİLMİ BEY-ին տունէն բաժնուած միջոցին, շատ մօտիկ ազգականի մը հրաժեշտ տալու պէս յուզուած էինք...

Կեսարացի մեր ուղեցոյցը, մեզի վերջին անակնկալ մըն ալ ըրաւ:

Եւ «հիմա ձեզի «EFKERE»-ի հայկական եկեղեցին պիտի տանիմ» ըսաւ:

Բայց եթէ չտանէր՝ շատ աւելի լաւ ըրած պիտի ըլլար: Որովհետեւ, երբ եկեղեցին տեսանք, շատ ցաւ զգացինք: Եկեղեցիէն միայն չորս պատ մնացած էր: Գմբեթին մեծ մասը փլած էր: Եւ եկեղեցիին մէջ կով մը, էշ մը, վեց հատ ոչխար, երկու շուն եւ հաւեր կային: Այսինքն՝ եկեղեցին ախոռի վերածուած էր... Եւ եկեղեցիին մէկ անկիւնը, գնչուի երեւոյթով կին մը կրակ վառած, կ'աշխատէր ճաշ եփել: Եւ չորս երախաներ իրենց մօր քով կը խաղային: Եւ ախոռի վերածուած այս եկեղեցիէն, փախչելու պէս հեռացանք:

Ահաւասիկ, յարգարժան ӨMER ELAÇMAZ, մեր կողմէ ձեզի նուէր՝ էֆքերէի պատմութիւնը: Զեր ցուցաբերած քաղաքացիական բացառիկ քաջութեան եւ արդարասիրութեան համար՝ կրկին ու կրկին շնորհաւորութիւններ:

Սրտաբուխ շնորհակալութիւններով՝ Յ. Չ.

Թիւ 109

«Նայիրի», 9 Օգոստոս, 2005, Թիւ 242

## 24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ, ԹՈՒՐԷՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՊԱՏԵՂՈՒԹԵԱՄԲ

### ԱՆԵՇՔԱԳԻՐ-ԹԻ 9 ԹՈՒՐԷՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԴԵ՞՞Ռ Կ՛ՈՒՐԱՆԱՆ

Աշխարհի բոլոր հայերը եւ աշխարհի արդարասէր ժողովուրդները նողկանքով կը նային Թուրքերուն եւ անոնց անէծք կու տան:

Որովհետեւ ամբողջ աշխարհին գիտցած Հայկական ցեղասպանութիւնը Թուրքերը դե՛ռ կ'ուրանան...

Մենք Թուրքերուն Հայկական ցեղասպանութիւնը ուրանալուն բնաւ չենք զարմանար: Ո՞ր յանցաւորը իր յանցանքը կ'ընդունի, «Ես յանցաւոր եմ» կ'ըսէ: Հազարէն մէկ կ'ելլէ այս տեսակ յանցաւոր:

Մանաւանդ Թուրքերը՝ անոնք շատ լաւ գիտեն, որ Հայկական ցեղասպանութիւնը բացայայտօրէն ընդունած օրերնին՝ բոլոր իրականութիւնները, արեւուն լոյսին պէս, մէջտեղ կ'ելլեն:

Եւ այն ատեն, Թուրքիա կոչուած շինծու պետութիւնը, կտոր-կտոր կ'ըլլայ եւ կը կործանի:

Եւ այսօր, «Թրքական Փաշիստ» պետութեան ահաբեկչութեան պատճառաւ, իրենց ինքնութիւնը կորսնցուցած կարծուած Անաթոլիոյ ժողովուրդները, Թուրքերուն Հայկական ցեղասպանութիւնը ընդունած օրը, զսպանակէ արձակուածի նման կ'ապստամբին եւ ազատութիւն կը հռչակեն:

Իրականութեան մէջ, այսօրուան Թրքական պետութիւնը, օսմանեան պետութեան հիմնումէն ի վեր նոյն «ահաբեկչական պետութիւնն է»:



1299թ., Միջին Ասիայէն եկած թաթար ցեղախումբի պետը եղող Օսման պէյը հիմնեց օսմանեան պետութիւնը: Էսգիչեհիրի եւ Գոնիայի միջեւ տեղաւորուած Օսման պէյին ցեղախումբը իր սարսափելի վայրագութեամբ՝ Անաթոլիոյ քրիստոնեայ ժողովուրդը սմբեցուց: Բայց, Օսման պէյ, բոլոր քրիստոնեաները չսպաննեց: Քրիստոնեաներուն՝ օսմանցիներուն համար աշխատիլը պէտք էր: Եւ խեղճ Անաթոլիոյ քրիստոնեայ ժողովուրդը, սպաննուելու վախով, տեւաբար օսմանցիներուն համար աշխատեցան:

Դարերու ընթացքին, օսմանցիները քրիստոնեայ ժողովուրդին հանդէպ կիրարկեցին սա քաղաքականութիւնը. «Կա՛մ մեզի համար կ'աշխատիք, կա՛մ կ'սպաննենք ձեզ»:

Ահա, մահու եւ կեանքի վրայ հիմնուած սպառնական այս քաղաքականութեան շնորհիւ, մահ ու սարսափ տարածելով, օսմանցիները մինչեւ Վիէնայի դռները յառաջացան... Քանի մը շարաթներ առաջ էր: Ֆրանսական հեռատեսիլի կայանը՝ օսմանցիներուն 1683թ. Վիէնան պաշարելուն պատմութիւնը ներկայացնող Փիլմ մը ցուցադրեց:

Մենք այս Փիլմը օսմանցիներուն եւ թուրքերուն մտայնութիւնը բացայայտելու տեսակէտէն, շատ օգտակար նկատեցինք:

1683թ. Վիէնայի պաշարման օրերուն, օսմանեան բանակներուն հրամանատարը եղող «KARA MUSTAFA PAŞA»-ն Վիէնայի ժողովուրդին հետեւեալ պատգամը կ'ուղարկէ. «Ո՛վ Վիէնայի ժողովուրդ, եկէք յանձնուեցէք, եթէ յանձնուիք՝ սպաննուելէ կ'ազատիք. բայց եթէ չյանձնուիք, գիտցէք, որ ամբողջ Վիէնայի ժողովուրդը, փոքրագոյնէն մինչեւ ամէնէն մեծը՝ բոլորդ ալ սուրէ պիտի անցընենք»...

Փառք տանք Աստուծոյ, որ «KARA MUSTAFA PAŞA»-ն Վիէնան չկրցաւ գրաւել: Եւ Վիէնայի ժողովուրդը չկրցաւ սուրէ անցընել:

Որովհետեւ Եւրոպայի կաթողիկէ պետութիւնները, վերջապէս տեսած էին Վիէնայի դռներուն առջեւ թրքական վտանգին ահաւորութիւնը եւ միացեալ բանակ կազմած էին:

Եւ 12 Սեպտեմբեր 1683թ. միացեալ կաթողիկէ բանակները, Վիէննայի դռներուն առջեւ, օսմանեան բանակը պարտութեան մատնեցին:

\* \* \*

Այս վիէննական պաշարման առնչութեամբ, հարցում մը կը ծնի մեր մէջ. «Արդեօք 1683թ. Վիէննայի ժողովուրդը, «KARA MUSTAFA PAŞA»-ի խօսքերուն հաւատարմով եթէ յանձնուէր՝ «KARA MUSTAFA PAŞA»-ն Վիէննայի ժողովուրդը ողջ պիտի ձգէ՞ր»:

Այս հարցման պատասխանը, հայկական պատմութենէն առնուած եւ թուրքերուն իրենց տուած խոստումը ինչ աստիճան յարգելին, բացարձակ իրական մէկ եղելութեամբ մը տալու պիտի ջանանք:

1923թ. կազմուած եւ Այբ-էն մինչեւ Ֆ (ամէն բանը) սուտերու վրայ հիմնուած թրքական հանրապետութիւն ըսուած ֆաշական բռնակալութեան շրջանին (մինչեւ այսօր ալ նոյն ֆաշական թուրք բռնակալութիւնը կը շարունակէ գոյատեւել), թուրքիոյ բոլոր լիսէներուն մէջ դասաւանդուած եւ 1931 թուականին հրատարակուած «Պատմութիւն II – միջին դարեր» գիրքին 319 էջին մէջ հայոց մասին գրուած հետեւեալ տողերը նոյնութեամբ տալու պիտի ջանանք:

Հանրապետական թուրքիոյ մէջ, թուրքերուն հայոց հանդէպ վարած քաղաքականութիւնը հետեւեալ ռազմավարութեան վրայ հիմնուած էր՝

1.- Հայոց մասին բոլոր հարցերը ուրանալ: 2.- Պատմական առաջին շրջաններէն մինչեւ 1923թ. աշխարհի բոլոր քարտէսներուն վրայ, Արեւելեան Անաթոլիոյ մէջ “ARMENIA”-ը լրջալով նշուած երկիրը ուրանալ: 3.- Հայկական պատմութիւնը ուրանալ: 4.- Հայ թագաւորները ուրանալ: 5.- Հայկական պատմական քաղաքները, յուշարձանները եւ եկեղեցիները ուրանալ: (Արդէն հարիւրին ինիսունըինը քանդեցին):

Թուրքերը այս ուրացումներուն մէջ երբեմն այնքան առաջ կ'երթային, որ այլեւս ծիծաղելի եւ զաւելտական կը դառնային:

Հայոց թագաւորութեան մայրաքաղաքը եղող եւ հազար ու մէկ եկեղեցիներու քաղաք հազարաւոր տարուան Անիին անունը (իբր թէ) կը թրքացնէին եւ «ANI»-էի (թրքերէն յիշատակ ըսել է) կը վերածէին:

Վանայ լիճին մէջ գտնուող Ախթամար կղզին եւ այնտեղի հազար տարուան եկեղեցիին անունը (իբր թէ) կը թրքացնէին «AKDAMAR»-ի (թրքերէն՝ ճերմակ աղիք ըսել է) վերածելով...

Թուրքիոյ պատմութեան գիրքին 319 էջին մէջի հայերու մասին գրութիւնը, թուրքերուն ուրանալու ռազմավարութեան շատ լաւ մէկ օրինակն է: Ահա թրքական պատմութեան գիրքին մէջ հայոց մասին գրուած տողերը. - «1400 թուականին Թիմուրին բանակը Սիվասը գրաւելով, հոն ձեռք անցուցած 4000 հայ ձիաւորները Սիվասի շուրջի խրամներուն մէջ թաղեց»:

Հիմա մենք, այս 4000 հայ ձիաւորներուն իսկական պատմութիւնը՝ «Հայկական սովետական հանրագիտարանի» մէջ Սերաստիոյ (SIVAS) մասին տրուած տեղեկութիւններուն վրայ յենելով պիտի տանք:

1400 թուականին Սերաստիա քաղաքը ամբողջովին հայոց կողմէ բնակուած բերդաքաղաք մըն էր:

Թամերլանը, ամբողջ Անաթոլիան այրելով եւ քանդելով, Սերաստիոյ բերդաքաղաքին առջեւ կը հասնի:

Եւ Սերաստիոյ հայ ժողովուրդը կ'որոշէ չյանձնուիլ եւ մինչեւ վերջ պաշտպանել իրենց քաղաքը: Եւ հայերը, տասնհինգ օր տեւողութեամբ եւ մեծ քաջութեամբ կը դիմադրեն եւ ետ կը մղեն՝ Թամերլանի զինուորներուն բոլոր յարձակումները: 15-րդ օրը Թամերլան Սերաստիան պաշտպանող հայոց լուր կ'ուղարկէ. «Հայե՛ր, եթէ յանձնուիք, երդում կ'ընեմ, որ ձեզ սուրէ պիտի չանցնեմ»: Տասնհինգ օրուան պատերազմէն յետոյ շատ տկարացած Սերաստիոյ հայերը, հաւատալով

Թամերլանին երդումին, յանձնուելու որոշում կու տան... եւ Թամերլան (իբր թէ) իր ըրած երդումը կը յարգէ: Բայց ան, հայ զինուորները շատ աւելի զարհուրելի մահով մը կը մեռցնէ:

Սեբաստիան պաշտպանող 4000 հայ զինուորները ողջ- ողջ խրամներու մէջ թաղելով կ'սպաննէ:

Ահա՛ թուրքին խօսքին, ահա՛ թուրքին երդումին, ահա՛ թուրքին վայրագութեան ամէնէն պերճախօս օրինակներէն մէկը:

Թիւ 110

«Նայիրի», 23 Օգոստոս, 2005, թիւ 243

**ԴԱԻՍՆԱՓՈԽ ՀԱՅ ԳՍԼԼՍ YAKUP-ԻՆ ՏԱՂԱՆԴԸ՝  
ՆԱԽ ԻՐ ՏՂՈՒՆ՝ NECIP AŞKIN-ԻՆ,  
ԱՆԿԷ ԱԼ ԻՐ ԹՈՌԱՆԸ՝  
ՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «RECTEUR»  
YÜCEL AŞKIN-ԻՆ ԱՆՃԵՐ Է:**

**Չուիցերիական ասացվածք.-  
«ՄԵԿ ՀՐԷԱՅ ԵՐԵՔ ՉՈՒՅԵՐԻԱՅԻ ՓՈՒՍԱՐԺԵՔ Է,  
ԻՍԿ ՄԵԿ ՀԱՅ՝ ԵՐԵՔ ՀՐԷԱՅԻ»**

Պոլիս հրատարակուող, եւ 10 Յունիս 2005 թուակիր «VAKIT» թերթը, ազգայնամոլ մտայնութեամբ՝ Վանի համալսարանի Recteur-ը եղող Prof. Yücel Aşkin-ին դաւանափոխ հայ Güllü Yakup-ին թողը ըլլալը կը հրապարակէ:

«Yakit» թերթը այս լուրը մեծ վերտառութեամբ կուտայ: Կարծէք, թէ դաւանափոխ հայու թող ըլլալը՝ յանցանք է:

Յարգելի «Yakit» թերթի պատասխանատու՝ ձեզի բան մը ըսենք:

Թուրքիա ըսուած շինծու պետութեան մէջ, Միջին Ասիայէն եկած թուրանական թուրքերուն թիւը հարիւրին մէկը չ'անցնիր:

Այդ իբր թէ թուրք ըսուած, իսլամացած ժողովուրդին 95 առ հարիւրը ծագումով յոյն, հայ, քիւրտ, սերպ, պուլկար, ալպանացի եւ չէրքէզ են: Եթէ քաջութիւնը ունիք՝ ձեր A.D.N.- ի քննութիւնը կատարել տուէք: Այն ատեն, ձեր նախնիներուն ինչ ազգ ըլլալը մէջտեղ կ'ելլէ:

\* \* \*

Վերադառնանք Güllü Yakup-ին: Güllü Yakup-ը, բուն անունով Յակոբ Վարդովեան, 1840 թուականին Պոլիս է ծնած: Ան օսմանեան պետութեան մէջ, առաջին թատրոնը մէջտեղ բերող արուեստագէտն է:

Յակոբ Վարդովեանին (իր նախնիներէն ժառանգած տաղանդին շնորհիւ), կազմած այս թատրոնի խումբը եւրոպական ամենաառաջնակարգ թատրերգութիւնները ներկայացնել կը սկսի եւ, կարճ ժամանակի մէջ, մեծ համբաւ կը չահի:

Օսմանեան պետութեան առաջին թատրոնը եղող՝ Պոլսոյ Կետիկփաշայի սրահին մէջ, 1873-ին Յակոբ Վարդովեան, Namik Kemal "Vatan Veyahut Silistre" թատրերգութիւնը կը բեմադրէ:

Ներկայացումէն յետոյ, բոլոր հանդիսատեսները, շատ ոգեւորուած, փողոց կը խուժեն:

Այն ատենուան սուլթանը՝ Ապտիլ Համիտը, ժողովուրդին ցուցաբերած խանդավառութենէն շատ կը վախնայ: Եւ Namik Kemal-ը Կիպրոս՝ Փամակուսդա կ'աքսորէ: Եւ Յակոբ Վարդովեանն ալ ձերբակալել տալով զինք կը բանտարկէ:

\* \* \*

Այդ տարիները՝ Ապտիլ Համիտին բռնակալութեան ամէնէն սարսափելի շրջանն էր:

Եւ ոստիկանները Յակոբ Վարդովեանին սա առաջարկը կրնեն «Կա՛մ միւսլիման կըլլաս, կա՛մ ալ գլուխդ կը կտրուի»:

Եւ Յակոբ Վարդովեան «միւսլիման ըլլալը կ'ընդունի» եւ “Güllü Yakup” անունը կ'առնէ: Եւ Թուրք կնոջ մը հետ կ'ամուսնանայ:

Եւ Güllü Yakup-ին տաղանդաշատ աշխատանքներուն շնորհիւ օսմանեան Թատրոնը, ամբողջ Մերձաւոր Արեւելքի ամէնէն հռչակաւոր եւ ամէնէն բարձր մակարդակը ունեցող արուեստի կեդրոնի կը վերածուի:

\* \* \*

Güllü Yakup-ին տղան՝ Necip Aşkin-ը Թուրքիոյ հանրապետական չրջանի ամենաարժէքաւոր երաժիշտներէն մէկն էր:

Necip Aşkin-ի ղեկավարութեամբ կատարուած Անգարայի ձայնասփիւռի նուագախումբին երաժշտահանդէսները, Թուրքիոյ ժողովուրդը շատ սիրով մտիկ կ'ընէր:

Բայց 1940թ. Necip Aşkin-ին դաւանափոխ հայ Güllü Yakup-ին տղան ըլլալուն ոչ մէկը տեղեակ էր: Մենք ալ, շատ տարիներ յետոյ, տեղեակ եղանք այս իրականութեան:

Necip Aşkin-ը քանի մը անգամ ամուսնացած էր: Իր կողակիցներէն մէկը աւատրիացի կին մըն էր: Եւ Necip Aşkin-ը աւատրիացի կնոջմէն աղջիկ զաւակ մը ունէր: Մենք այս աղջիկը, շատ մօտէն ճանչցանք: Բայց այս աղջիկը ո'չ հայութեան եւ ոչ ալ Թրքութեան հետ կապ ունէր:

Necip Aşkin-ը ուրիշ մէկ կողակիցէ՝ Halûk Aşkin անունով մանչ զաւակ մը ունէր:

Եւ Halûk-ը Պոլսոյ ծանօթ դրամատուներէն մէկուն տնօրէնն էր:

Եւ Halûk-ը մեր մօտ բարեկամն էր:

Մինչդեռ Halûk-ը հայութեան հետ կապ չունեցող իսկական Թուրք մըն էր:

Բայց Halûk-ին Թրքական ինքնութեան Թուղթին (Niifus)-ին մէջ հօրը՝ դաւանափոխ հայ ըլլալը գրուած ըլլալուն, Թուրք իշխանութիւնները Halûk-ին Թուրք ըլլալը չէին ընդունիր եւ անոր դժուարութիւններ կը պատճառէին:

Եւ ինքզինքը իսկական թուրքի տեղ ղնող Halûk-ը՝ այս պատճառաւ շատ կը տառապէր:

\* \* \*

Necip Aşkin-ին Yücel Aşkin անունով ուրիշ մէկ մանչ գաւակ մ'ունենալուն մենք տեղեակ չէինք:

Halûk մեզի ուրիշ եղբայր մը ունենալը չէր ըսած:

Մենք ալ, ամէնուն պէս, թերթերէն տեղեակ եղանք, որ Յակոբ Վարդովեանին (նոր անունով՝ Güllü Yakup-ին) թողը՝ Վանի Համալսարանին Recteur-ն է:

Եւ հիմա մտածեցէք՝ Güllü Yakup-ին ծիներուն մէջ գտնուող հայկական տաղանդը նախ իր տղուն՝ երաժիշտ Necip Aşkin-ին անցեր է: Եւ անկէ ալ անոր տղուն՝ Yücel Aşkin-ին կ'անցնի:

Եւ Yücel Aşkin-ը Վանի Համալսարանին Recteur-ի աստիճանին կը բարձրանայ:

Բայց մեզի համար, ամէնէն կարելորդ՝ Güllü Yakup-ին թողան Yücel Aşkin-ին, Արեւմտեան Հայաստանի մայրաքաղաքը եղող Վանի Համալսարանին Recteur-ը ըլլալն է:

Արդեօ՞ք այս իրավիճակին «Հրաչք» ըսելու ենք: Եւ կամ թէ «Աստուծոյ զնահատանքը» ըլլալուն պիտի հաւատանք: Չենք գիտեր:

Բայց հետեւեալ իրականութիւնը ուրանալը անկարելի է - թուրքերը հայ ազգը 1915-ին, ցեղասպանութեան ենթարկեցին: Բայց, հակառակ այս ցեղասպանութեան, հայկական տաղանդը մինչեւ այսօր կը շարունակէ գոյատեւել սերունդէ-սերունդ անցնելով, եւ ահա, Արեւմտեան Հայաստանի մայրաքաղաքը եղող Վանի մէջ, օր մը երեւան կ'ելլէ: Փառք Աստուծոյ:

Թիւ 111

«Նախիրի», 6 Սեպտեմբեր 2005, Թիւ 244

### **ՅԻՍՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ**

**6-7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1955 = 6-7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2005**

**ԱՅՍՈՐ, 6-7 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ 50-ՐԴ ՏԱՐԵԼԻՅՆ**

**Է-ՓՈՂՎԱՊՈՎ, ԲԱՅՅ ՓԱԹԹՈՅԱՒՈՐ ԲԱՐԲԱՐՈՍ ՕՍՍԱՆՅԻԻ**

**ՄՏԱՅՆՈՒԹԵԱՄԲ ԹՈՒՐՔԵՐ,**

**6-7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1955-ԻՆ, ՊՈԼՍՈՅ ՄԷՉ**

**ՁԵՐ ԿԱՏԱՐԱԾ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ 50-ՐԴ ՏԱՐԵԼԻՅՆ Է**

**ԱՅՍՈՐ**

Փողկապով, բայց փաթթոցաւոր բարբարոս օսմանցիի մտայնութեամբ թուրքե՛ր, ձեր կատարած վայրագութիւններուն պատիժը մինչեւ որ չկրէք, եթէ նոյնիսկ հազար տարի անցնի, դուք նո՛յն՝ «Վայրագ թուրքերը» պիտի մնաք:

2002 թուականին «Նախիրի» թերթին մէջ եւ 2003 թուականին ԹՈՒՐ-ՔԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՅԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ խորագրով գիրքին մէջ, 6-7 Սեպտեմբեր 1955-ին Պոլսոյ մէջ կատարուած ողբերգութեան բոլոր իրականութիւնները, իբր ականատես վկայ, բացայայտած էինք: Այսօր՝ 6-7 Սեպտեմբեր 2005: Այս սարսափելի ողբերգութեան 50-րդ տարելիցն է:

6-7 Սեպտեմբեր 1955-ի ողբերգութիւնը, գիշերուան ժամը իննէն մինչեւ հետեւեալ առաւօտեան ժամը 3-ը՝ բոլոր պատահածները, վայրկեան առ վայրկեան, վերապրեցա՛նք:

Եւ դեռ այսօր, երբ կը մտածենք 6-7 Սեպտեմբերի ողբերգութեան մասին, կը սարսափինք կրկի՛ն:

Մենք, մեր ցեղակիցներուն ենթարկուած 1915-ի Հայկական ցեղասպանութիւնը չապրեցանք: Բայց 6-7 Սեպտեմբեր 1955-ին, քրիստոնեայ Պոլիսը կործանող ողբերգութիւնը մեր աչքերովը տեսանք:



«Լաւ ընկեր» կարծուած թուրքերուն, 6-7 Սեպտեմբերի գիշերը՝ վայրագացած հոգեվիճակի մէջ ինչպէս եկեղեցիները քանդելն եւ այրելը տեսանք:

Եւ այն օրը հասկցանք, որ թուրքերը վայրագ եւ գիշատիչ կենդանիէ մը տարբերութիւն չունին:

\* \* \*

Այսօր՝ 6-7 Սեպտեմբեր 1955-ի ողբերգութենէն՝ յիսուն տարի ետք, Պոլսէն եկող թերթերուն մէջ, 6-7 Սեպտեմբեր 1955-ի հետ կապուած գրութիւնները կարդալէ յետոյ, կրկին ու ամբողջ սրտով հաւատացինք, որ թուրքերը, մինչեւ որ իրենց կատարած վայրագութիւններուն պատիժը չկրեն, անոնք պիտի շարունակեն նոր բարբարոսութիւններ գործել:

Այստեղ, Պոլսոյ թերթերուն մէջ մեր կարդացած անհաւատալի եղելութիւնը պատմելու պիտի ջանանք:

Պոլսոյ «Պատմութեան վագրֆ» կոչուած հաստատութիւնը՝ 6-7 Սեպտեմբերի դէպքերուն մասին նկարներու ցուցահանդէս մը եւ այդ դէպքերուն մասին աշխատաժողով մը կազմակերպել կ'որոշէ:

Այս լուրը հաղորդող «Թուրքիչ հասարակական կազմակերպութիւններու միութեան» ընդհանուր քարտուղարը, այս նկարներու ցուցահանդէսին եւ աշխատաժողովին դէմ, բոլորովին սուտերով եւ սպառնալիքներով լեցուն հաղորդագրութիւն մը կը հրատարակէ:

Այստեղ, այս հաղորդագրութեան ամէնէն կարեւոր մասերը կը հրատարակենք.

«6-7 Սեպտեմբերի դէպքերը՝ Կիպրոսի մէջ յոյներուն գործած ոճիրներուն դէմ, թուրք ժողովուրդին հակազդեցութիւնն էին: «Պատմական վագրֆը»՝ այս դէպքը քրքրելու չէ: Հակառակ պարագային մեր ժողովուրդը, շատ խիստ հակազդեցութիւն ցոյց կրնայ տալ: Եւ 6-7 Սեպտեմբերէն շատ աւելի ծանր դէպքեր կրնան մէջտեղ գալ»:

Այս հաղորդագրութիւնը հրատարակող միութիւնը կասկած չկայ, թէ Փաշիստ "ՍԼԿՄՍ"-ներուն կապուած միութիւն մըն է:

Որովհետեւ, օսմանցի բարբարոսներուն եւ ցեղասպան իթթիհատականներուն շառաւիղը եղող թուրք Փաշիստներ միայն՝ այսքան սուտեր կրնան խօսիլ, եւ այսքան ծանր սպառնալիքներ կրնան կատարել:

«6-7 Սեպտեմբերի դէպքերը. Կիպրոսի մէջ յոյներուն գործած ոճիրներուն դէմ թուրք ժողովուրդին հակազդեցութիւնն է» եղեր:

Ամբողջ աշխարհը գիտէ, թէ 6-7 Սեպտեմբերի դէպքերուն որդապատճառը Սելանիկի մէջ Մուստաֆա Քեմալին ծնած տան դէմ [իրը թէ] ուումբի մը նետուած ըլլալուն լուրն է:

Այս ուումբի դէպքին՝ 1960-ին Պոլսոյ YASSIADA-ի մէջ դատուող Ատնան Մենտերեսի եւ Ֆաթին Ռիչտիւ Զորլուի կողմէ պատրաստուած դաւադրութիւնի մը «միզանսէնը» եղած ըլլալը, Եասասատայի դատարանին մէջ իր բովանդակ իրականութեամբ մէջտեղ ելաւ: Եւ այս դատավարութեան արձանագրութիւնները Պոլսոյ մէջ գիրքի ձեւով հրատարակուեցաւ: Այս իրականութիւնները բոլորին պէս, այս սուտերը ըսող ընդհանուր քարտուղարն ալ գիտէ: Սակայն, այս Փաշիստ քարտուղարը, իրականութիւնները չի կրնար ըսել: Բայց, մեզի համար ամէնէն կարելորդ՝ այս ընդհանուր քարտուղարին հրատարակած հաղորդագրութեան մէջ կատարած սպառնալիքներն են:

«6-7 Սեպտեմբերէն շատ աւելի ծանր դէպքեր կրնան մէջտեղ գալ»: Այս սպառնալիքները անպատիժ մնացած ոճրագործ թուրքի մը հակազդեցութիւններն են: Թուրք գազանը պիտի չարունակէ վայրագութիւններ գործել: Ոճրագործ մը, եթէ չպատժուի՝ կը չարունակէ նորանոր ոճիրներ գործել: Աշխարհի բոլոր դատարանները, յանցաւորը պատժելու սկզբունքի վրայ հիմնուած են:

Յանցաւորները կը պատժուին, եւ այս ձեւով անոնց իրենց ոճիրը կրկնելուն արգելք կ'ըլլան:

...Իբր վերջաբան՝ կրկին ու կրկին պիտի ըսենք.- Թուրք ցեղասպանները, թուրք մարդասպանները, թուրք գազանները եթէ հայ ազգին եւ Անաթոլիոյ ժողովուրդներուն դէմ իրենց կատարած ցեղասպանութեան ոճիրով չպատժուին, թուրքերը նոյն վայրագութիւնները պիտի շարունակեն:

Թիւ 112

«Նայիրի», 20 Սեպտեմբեր 2005, Թիւ 245

**ԹՈՒՐՔԵՐԸ՝ 1915-ԻՆ ՀԱՅԵՐԸ ՉԱՐԴԵԼՈՎ ՖԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՆԹԱՐԿԵԼՆՈՒՎ ՀԱՍԱՐ ՇԱՏ ՊԻՏԻ ՉՂՉԱՔ,  
ՈՐՈՎԷՏԵՏԻ ՉԵՐ ՉԱՐԴԱԾ ՀԱՅԵՐՈՒՆ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ  
ԱՅՍՕՐ 20 ՄԻԼԻՈՆԷ ՄԵԼԻ ՔԻՐՎ ԿԱՅ,  
ԵՒ ԴՈՒՔ ԱՅՍՕՐ, ԱՅՎ ՔԻՐՎԵՐԸ ՉԷՔ ԿՐՆԱՐ ՉԱՐԴԵԼ:  
ԸՆԴՀԱՎԱՈՒՄԸ՝ ԱՅՎ ՔԻՐՎԵՐԸ ՉԵՉ ԲՉԻԿ-ԲՉԻԿ ՊԻՏԻ ՉԱՐ-  
ՎԵՆ**

Վերջին շրջաններուն Թուրքիոյ ամէնէն կարեւոր հարցը ինչ է, գիտէ՞ք արդեօք:

1.- Թուրքիոյ Եւրոպական միութիւն մտնելն է,

2.- Հայկական ցեղասպանութեան Ամերիկայի կողմէ ճանաչումն է: Ո՛չ:

Այսօր Թուրքիոյ համար ամէնէն կարեւոր հարցը՝ Իրաքի մէջ պաշտօնապէս քրդական պետութեան մը ստեղծումն է:

Նոր իրաքեան սահմանադրութեան մէջ Իրաքի հիւսիսը՝ քրդական պետութեան մը ստեղծումը պաշտօնապէս ընդունուեցաւ: Այս քրդական պետութիւնը 1991-ին, ամերիկացիներուն Իրաքի դէմ շղթայագերծած պատերազմին՝ արդէն կազմուած էր: Եւ այս՝ առաջին քայլն էր:

Երկրորդ քայլը՝ իրաքեան սահմանադրութեան մէջ քրդական պետութեան մը գոյութեան պաշտօնական ճանաչումն է:

Երրորդ քայլը ինչ է, գիտե՞ք- Թուրքիա ըստած շինծու պետութեան արեւելեան մասին մէջ գտնուող 20 միլիոնէ աւելի քիւրդերուն տարիներէ ի վեր ազատութեան համար մղած պայքարը, ասկէ յետոյ աւելի պիտի սաստկանայ:

Թուրքիոյ մէջ գտնուող քիւրդերուն նպատակը՝ Արեւելեան Անաթոլիոյ մէջ քրդական պետութիւն մը հիմնել եւ յետոյ Իրաքի քրդական պետութեան հետ միանալ է: Այդ պատճառաւ կ'ըսենք, որ Թուրքիոյ մէջ ամէնէն կարեւոր հարցը այսօր քիւրդերն են: Եւ այս վիճակին դուք՝ Թուրքերդ, պատճառ եղաք:

1890թ. Ապտիւլ Համիտ, արեւելեան նահանգներուն մէջի հայերը զսպելու համար, հարաւէն քիւրդերը բերել տուաւ, եւ անոնք հայերը ջարդեցին:

Եւ 1915-ին դուք, քիւրդերուն օգնութեամբ, հայերը ցեղասպանութեան ենթարկեցիք:

Ի՞նչ եղաւ: Հայերը մաքրագործեցիք եւ քիւրդերը տեղաւորեցիք հայերուն տեղը:

Հայերը քաղաքակրթուած եւ շատ աշխատասէր մարդիկ էին: Մինչդեռ քիւրդերը՝ ձեզի պէս վայրագ եւ անգութ են: Եւ ամէնէն կարեւորը՝ քիւրդերը ձեզ նման միւսլիման ըլլալնուն՝ Թուրքիոյ ամէն կողմերը տարածուած են: Եւ այսօր չէք կրնար գիտնալ, թէ ո՞վ Թուրք է եւ ո՞վ քիւրդ:

Այսօր, ձեր Անգարայի Ազգային ժողովին մէջ, 200 քիւրդ երեսփոխան կայ կ'ըսեն:

Ճիշդ թիւը չէք կրնար գիտնալ: Բայց վաղը, այս քիւրդերը արեւելեան նահանգներուն մէջ պետութիւն մը հիմնելէ յետոյ, հերթը ձեր մէջ խառնուած միլիոն եւ միլիոն քիւրդերուն պիտի գայ: Մասնաւորապէս՝ Պոլսոյ քիւրդերուն:

Այսօր, 15 միլիոն հաշուող Պոլսոյ բնակչութեան՝ 10 միլիոնը քիւրդ է կ'ըսուի: Եւ վաղը այս քիւրդերը պիտի սկսին ապստամբիլ եւ Թուրքիա ըստած պետութիւնը ներսէն՝ կամաց-կամաց պիտի քանդեն:

Ասոր համար կ'ըսենք, որ դուք, շատ պիտի զղջաք՝ հայերը ցեղասպանութեան ենթարկած ըլլալնուդ համար:

\* \* \*

15 Սեպտեմբեր 2005 թուակիր «Հիւրրիյէթ» թերթին մէջ շատ կարեւոր նկար մը տեսանք: Քիւրդ ղեկավար Թալապանին Ուաշինկթընի Սպիտակ պալատին մէջ Պուշի կողմէ կ'ընդունուի:

Եւ Թալապանին՝ Պուշին զինուորական բարեւ մը կուտայ, ըսել կ'ուզէ՝ «Ձեր հրամանքը գլխուս վրայ է, նախագահ Պուշ»:

Եւ քրդական ղեկավար Թալապանին Սպիտակ պալատին մէջ կը գտնուի իբր Իրաքեան Հանրապետութեան նախագահ:

Այս նկարը՝ Իրաքի պատերազմին պատճառը բացատրող շատ կարեւոր ապացոյց մըն է:

Ծանօթ ասացուածք է՝ «Բաժանէ եւ իշխէ»: Սատտամ Հիւսէյն՝ «Շատ առաջ գացած» ըլլալով դարձած էր վտանգաւոր: Այդ պատճառով ամերիկացիները Իրաքը բաժանեցին:

Այսօր Իրաքի հիւսիսը՝ քրդական մեծ պետութիւն մը կազմուած է: Եւ մանաւանդ ան՝ Քերքուկի քարիւղին տէրն է: Եւ այս քրդական պետութիւնը՝ ամերիկացիներուն ձեռքը "Pion" է: Ամերիկան ինչ որ հրամայէ, ան պիտի գործադրէ:

Ահաւասիկ Սպիտակ պալատին մէջ Պուշին առջեւ բարեւի կեցող եւ «գլխուս վրայ» ըսող Թալապանին նկարը ասոր ամէնէն մեծ ապացոյցն է:

Այս նկարը, մեզի համար, ուրիշ շատ կարեւոր նշանակութիւն մըն ալ ունի:

Կայսերապաշտները, ամբողջ աշխարհին որպէսզի կարենան իշխել, ստիպուած են իրենց մրցակից ըլլալ յաւակնող պետութիւնները կտոր-կտոր ընել:

Թուրքիա ըսուած պետութիւնը՝ այսօր 75 միլիոն է: Վաղը՝ 90 միլիոնի պիտի հասնի: Ասկէ բացի, թուրքերը «երազներ» ալ ունին: Թուրանական երազներ:

Թուրքերը Միջին Ասիոյ թաթարական պետութիւններուն հետ միանալ եւ մեծնալ կ'ուզեն:

Եւ մեծ Թուրքիան Միջին Արեւելքի քարիւղի հանքերով հարուստ պետութիւններուն դրացին է: Եւ այս կացութիւնը, Ամերիկայի համար, ամենամեծ վտանգը կը ներկայացնէ:

Իրաքի մէջ նոր կազմուած քրդական պետութիւնը, շատ զօրացող Թուրքիան պիտի բաժնէ: Եւ Թուրքիոյ արեւելեան մասին մէջ քրդական պետութիւն մը պիտի հիմնուի:

Այս նկարին մէջ Թալապանին Պուշին առջեւ բարեւի կենալը, Թուրքիոյ դէմ ամերիկեան-քրդական գործակցութեան մեծագոյն ապացոյցն է:

Թիւ 113

«Նայիրի», 4 Հոկտեմբեր 2005, Թիւ 246

### **6-7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1955-Ի ՊՈԼՍՈՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ 50-ՐԴ ՍԱՐԵԳՐԱՐՁԻՆ ԱՌԹԻՒՄ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԿԱՅ ԸԼԼԱԼՈՎ, ՄԵՐ ՎԵՐՅԻՇՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԸ**

[Մէր ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՕՆԵՆՔԻ ՊՈԼՍՈՅ ՄԷՁ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՈՂ «ԱԿՕՍ» ԹԵՐԹԻՆ]:

Այս ի՛նչ դիպուած է՝ չենք գիտեր: «Նայիրի» թերթին նախորդ թիւին հրատարակութեան թուականը՝ 6-7 Սեպտեմբերի Պոլսոյ ողբերգութեան 50-րդ տարեդարձին զուգահիւսեցաւ:

Եւ մենք, «Նայիրի»-ի 6 Սեպտեմբեր 2005-ի թիւին մէջ այս ողբերգութեան իբր ականատես վկայ՝ մեր տպաւորութիւնները յայտնած էինք:

Պոլսոյ թերթերը, 6-7 Սեպտեմբերի ողբերգութեան կապակցութեամբ, դեռ գրութիւններ կը շարունակեն հրատարակել:

Բայց, ոչ մէկ թրքական թերթ, այս ողբերգութեան իսկական պատճառները կրցաւ հրապարակել եւ իրականութիւնները կրցաւ ըսել:

Միայն Պոլսոյ մէջ հայերու կողմէ թրքերէն լեզուով հրատարակուող «Ակօս» թերթը, այս ողբերգութեան նկարները հրատարակեց եւ ողբերգութեան արմատները իջաւ: Եւ իրականութիւնները կրցաւ ըսել:

Մանաւանդ «Ակօսի» կողմէ հրատարակուած հարցազրոյցի մը մէջ, երիտասարդ կին գրող մը շատ հետաքրքրական գաղափարներ յայտնեց: Ասոնցմէ մէկը՝ հետեւեալ գրութիւնն է՝

«Հարցում: 6-7 Սեպտեմբերի դէպքերը որքանո՞վ Կիպրոսի հարցին հետ կապ ունին, որքանո՞վ ուրիշ պատճառներով են:

Պատասխան.- 6-7 Սեպտեմբերի դէպքերուն Կիպրոսի հետ կապ ունենալը հարկա՛ւ, որ սխալ չէ: Այո՛, Կիպրոսի հետ ալ փոքր կապ մը ունէին:

Բայց բուն հարցը՝ Թուրքիոյ կիրարկած փոքրամասնութեանց վերաբերող քաղաքականութիւնն է»:

Այս կին գրողին ախտաճանաչումը շատ ճիշդ է:

Նաե՛ւ մենք, 7 տարի առաջ՝ 31-1-1998-ին, «Նայիրի»-ի հայերէն բաժնին, իսկ երեք տարի առաջ ալ՝ Սեպտեմբեր 2002թ. «Նայիրիի» թրքերէն բաժնին մէջ հրատարակած «6-7 Սեպտեմբերի ողբերգութիւն» վերնագրով յօդուածաչարքին մէջ իբր ականատես-վկայ, նոյն ախտաճանաչումը կատարելով, գրած էինք.

«Թուրքերը՝ քրիստոնեայ Պոլիսը 1453-ին գրաւեցին:

Բայց, միայն 500 տարի յետոյ՝ 1955-ին, 6-7 Սեպտեմբերի գիշերը, քրիստոնեայ Պոլիսը քանդելով զայն յաջողեցան թրքացնել:

6-7 Սեպտեմբերի դէպքերուն պատճառը կը կարծուի, որ Կիպրոսի խնդրին է:

Բայց այս մէկը՝ դէպքերուն միայն արտաքին երեւոյթն է:

Բուն պատճառը՝ անտեսանելի բարձրագոյն ուժերուն երկու դարէ ի վեր գործադրուող ծրագիրն է...

6-7 Սեպտեմբեր 1955-ին ալ, այս ծրագրին վերջին մասը գործադրուիլ սկսաւ:

Եւ Պոլիսն ալ «Կեալուրներէն» մաքրագործուեցաւ...

\* \* \*

Սեպտեմբեր 2002-ին հրատարակուած եւ 6-7 Սեպտեմբերի ողբերգութեան իրական պատմութիւնը ներկայացնող յօդուածաշարքը կրկին լոյս ընծայելը, յանուն ճշմարտութեան, շատ օգտակար կը նկատենք: Ահաւասիկ...

**ՍԵԼԱՆԻԿԻ ՄԷՋ ՍԿՍՈՂ ԵՒ ԹՈՒՐՔ, ՀԱՅ ԵՎ ՅՈՅՆ ԱԶԳԵՐՈՒՆ ՃԱԿԱՏԱԳԻՐՆԵՐԸ ՓՈԽՈՂ ԵՐԵՔ ԿԱՐԵՒՈՐ ԴԷՊՔԵՐ ԵՐՐՈՐԴ ԴԷՊՔ.-**

**6-7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1955-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊՈԼՍՈՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ**

**ԱՌԱՋԻՆ ԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՅԻՐԻ», ԹԻԻ 175, 16.7. 2002**

Յարգելի՛ պոլսաբնակ երիտասարդներ, դուք 6-7 Սեպտեմբեր 1955-ին տեղի ունեցած Պոլսոյ ողբերգութիւնը գիտէ՞ք արդեօք:

Չէք գիտե՞ր, իրաւունք ունիք.

Այդ թուականէն ի վեր, գրեթէ 50 տարիներ անցեր են. դուք, այդ թուականին, չէիք ծնած անգամ, բայց դուք, այս մասին, բնաւ չկարդացի՞ք, բնաւ չհետաքրքրուեցա՞ք.

«Չլսեցի», «չտեսայ», «չեմ գիտեր»\_ իրաւունք ունիք, դուք, Հայկական ցեղասպանութիւնն ալ, բնաւ չէք գիտեր, դուք, միայն ձեզի սորվեցուցածնին գիտէք:

«Հայերը՝ թուրքերը ջարդեր են»: Խեղճեր: Անոր համար է, որ հայերուն հայրենիքը եղող Արեւելեան Անաթոլիոյ մէջ, այսօր մէկ հատ հայ չկայ:

Բայց՝ միլիոնաւոր թուրքեր կան:

Եթէ հայերը ջարդեցին թուրքերը, ուրկէ՞ ելան Անաթոլիոյ մէջի միլիոնաւոր թուրքերը: Ինչպէ՞ս կը հաւատաք ձեր առաջնորդներուն յերիւրածոյ ցաբոտուքներուն:

Աւելի ճիշդ՝ հաւատալ կը ձեւացնէք:

Որովհետեւ դուք, իրականութիւնը ուրիշներէն աւելի լաւ գիտէք: Հայերը ջարդած ձեր մեծ հայրերը՝ ձեզի պատմած են իրենց «քաջագործութիւնները»:



Վերադառնանք 6-7 Սեպտեմբեր 1955-ի Պոլսոյ ողբերգութեան:

Մենք, 6-7 Սեպտեմբերի գիշերը, այս ողբերգութիւնը՝ առաջին վայրկեանէն մինչեւ վերջին վայրկեանը «ապրեցանք»:

Տեսանք ժողովուրդ ըսուած թուրք խուժանին կատղիլը:

Ամէն բան, 6-7 Սեպտեմբերի գիշերը “İSTANBUL EKSPRES” թերթին հրատարակած երկրորդ տպագրութեան մէջ, մեծ տառերով տրուած գրգռիչ լուրով սկսաւ՝ «Սելանիկի մէջ Աթաթիւրքին ծնած տունը ումբակոծուեցաւ»:

Այս թերթին տուած լուրը՝ ազդանշան մըն էր: Այս՝ դէպքերուն սկսելու համար տրուած հրաման մըն էր:

Կէս ժամ չանցած՝ Պոլսոյ յոյներուն եւ հայերուն խանութներուն, տուններուն, եկեղեցիներուն վրայ յարձակումը սկսաւ:

Պատճառը: Յոյները, Սելանիկի մէջ, Աթաթիւրքին տունը ումբակոծեր են:

Իբր թէ, ասոր վրէժը պիտի լուծէին:

Բայց այս՝ առաջուրնէ, ժամացոյցի ճշդապահութեամբ, ծրագրուած էր:

Եւ կասկած չկայ, որ Պոլսոյ «կեափուրներուն» վրայ յարձակման ծրագիրը՝ “MIT” [Թրքական հետախուզական-տեղեկատուութեան կազմակերպութիւն] սպայակոյտին կողմէ, պատերազմական ծրագրի մը նման, շատ առաջուրնէ պատրաստուած էր:

Պոլսոյ «կեափուրներուն» թաղամասերուն վրայ յարձակումը՝ ամէն կողմ նոյն ատեն, ժամը 21-ին սկսաւ:

«Կիպրոսը՝ թուրք է», «Դրօշակ կախեցէք» վայնասուններով եկող հազարաւոր թալանողներ՝ առաջուրնէ ճշդուած «կեափուրներուն» խանութները, չտեսնուած վայրագութեամբ քանդելով եւ թալանելով կը յառաջանային:

Եւ այս վայրենիներուն արգելք ըլլալու համար, մէջտեղները ոչ մէկ ոստիկան եւ ոչ ալ զինուոր մը կար:

Թիւ 114

«Նայիրի», 8 Նոյեմբեր 2005, Թիւ 247

**ՍԵԼԱՆԻԿԻ ՄԷՅ ՍԿՍՈՂ ԵՒ ԹՈՒՐՔ, ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ ԱՉԳԵՐՈՒՆ  
ՃԱԿԱՏԱԳԻՐՆԵՐԸ ՓՈԽՈՂ ԵՐԵՔ ԿԱՐԵՒՈՐ ԴԷՊՔԵՐ**

**ԵՐՐՈՐԴ ԴԷՊՔ.-**

**6-7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1955-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ ՊՈԼՍՈՅ ՈՂԲԵՐԳՈՒ-  
ԹԻՒՆԸ**

**ԵՐԿՐՈՐԴ ԳՐՈՒԹԻՒՆ [«ՆԱՅԻՐԻ», ԹԻՒ 175, 30.7.2002]**

6-7 Սեպտեմբեր 1955-ի գիշերը ժամը 21-ին սկսող դէպքերուն ընթացքին, ինչո՞ւ մէկ հատ ոստիկան եւ ոչ ալ մէկ հատ զինուոր չտեսնուեցաւ:

Պոլսոյ ապահովութեան ուժերը բոլորովին մէջտեղէն վերցուած եւ կարծէք գետնին տակը մտած էին:

Որովհետեւ այս վիճակն ալ, պատրաստուած յայտագրին մաս կը կազմէր:

Որովհետեւ այն օրուան վարչապետը Ատնան Մենտերըն՝ «Զգեցէք, տղաքը՝ քիչ մը զուարճանան» ըսած էր:

Այդ պատճառաւ ոստիկանները եւ ապահովութեան ուժերը բնաւ չմիջամտեցին: Եւ այդ տղաքը՝ շատ լաւ զուարճացան:

Եւ քանի մը ժամուան ընթացքին բոլոր յոյներուն եւ հայերուն խանութները եւ եկեղեցիները թալանեցին:

6-7 Սեպտեմբեր 1955-ի գիշերը Պոլսոյ փողոցներուն միակ «տէրը»՝ այս թալանող խումբերն էին:

Բայց անկազմակերպ կարծուած այս թալանող խումբանին՝ եթէ քիչ մը ուշադրութեամբ նայուէր, անոնց շատ մեծ կարգապահութեամբ աշխատանք մը տանիլը յայտնի կ'ըլլար:

Ամէն մէկ խումբին գլուխը ղեկավար մը կար, եւ այս ղեկավարը կը հրամայէր, ցոյց կու տար քանդուելիք խանութը:

Ընդհանուր առմամբ, 6-7 Սեպտեմբեր 1955-ի գիշերը, բնակարաններու վրայ յարձակում չեղաւ:

Բնակարաններու վրայ կատարուած յարձակումները՝ խանութներու վրայ կատարուածներու հետ բաղդատաբար, շատ քիչ էին:

Որովհետեւ 6-7 Սեպտեմբերի յայտագրին մէջ՝ ջարդի հրաման չէր տրուած:

Միայն խանութները եւ եկեղեցիները պիտի թալանուէին:

Այս յայտագիրը՝ շատ ուշադրութեամբ հաշուած եւ ծրագրուած էր: Եւ յայտագիրը շատ կանոնաւոր ձեւով գործադրուեցաւ:

Մենք, դէպքերուն սկսած ժամերուն, Քուրթուլուչ-էրկենեզոն պողոտայի մեր բնակարանը կը գտնուէինք:

Ժամը 21-ին թալանողներու խուժանը՝ Բանկալթի գտնուող շատ ծանոթ «HAYLAYF» ծաղարանը թալանելով սկսաւ:

Եւ միայն այն ատեն, հեռաձայնով տրուած այս լուրէն յետոյ, դէպքին տեղեակ եղանք:

«HAYLAYF»-ը փլատակի վերածելէ յետոյ, թալանողներուն մէկ խումբը դէպի Օսմանպէյ յառաջանալ սկսաւ, ուրիշ մէկ թալանողներու խումբ մըն ալ էրկենեզոն պողոտայէն վեր ելլելով, դէպի Քուրթուլուչի կողմը յառաջացան եւ այդ ճամբուն վրայ գտնուող «Կեալուրներուն» խանութները խորտակել սկսան:

Եւ այդ վայրկեանէն սկսեալ, մեր աչքերովը հետեւեցանք դէպքերուն:

Խուժանին առջեւ գտնուող ղեկավարին ցուցմունքով, այդ՝ մարդկութենէ ելած եւ գաղտնի վիճակ առած թալանողները, քանի մը վայրկեանի մէջ խանութին փեղկերը խորտակելով ներս կը մտնէին եւ խանութը ամբողջութեամբ կը կողոպտէն:

Եւ կարճ ժամանակի մը մէջ, այդ խանութը աւերակի վերածելէ յետոյ, ղեկավարին ցոյց տուած մէկ ուրիշ խանութը կը սկսէին խորտակել:

**ԵՐՐՈՐԳ ՎՐՈՒԹԻՒՆ «ՆԱՅԻՐԻ», ԹԻ 177, 13.8.2002**

Բանկայլթին Քուրթուլուչի կապող էրկենեգոն պողոտային վրայ գտնուող մեր տունին շարքին՝ շատը կեավուրներուն պատկանող նպարավաճառի, աղանդերի, պողավաճառի, մսավաճառի, ծաղկավաճառի, հագուստեղէնի եւ նաեւ տեսակ-տեսակ ապրանք ծախող խանութներ կային:

Եւ թալանողները, խանութներուն վրայ յարձակելով, ներսը գտնուող ապրանքները կոտրել թափելէ յետոյ, կտորկտոր եղած ապրանքները փողոց կը նետէին:

Այս ձեւով փողոցները հազար ու մէկ տեսակ ապրանքներով լեցուն աղբանոցի վիճակ մը առած էին:

Եւ այս խանութներուն մէջ գտնուող զանազան ապրանքներուն՝ քացախ, գինի, օղի, քարիւղ, ալիւր, շաքար եւ նաեւ ուրիշ շատ մը նիւթերուն կոտորուելէն, թափուելէն եւ խառնուելէն յառաջ եկող հոտ մը, մինչեւ այդ մեր չգիտցած, տարօրինակ հոտ մը տուններէն ներս կը թափանցէր եւ մեր կոկորդները կ'այրէր...

Եւ մենք, մինչ այդ, այս խանութները կոտորող թափող մարդոց երեսները նայելու կը ջանայինք:

Ասոնց մէջ գողութիւն ընողներ ալ կային, բայց խուժանին մէջ գտնուող մարդոց մեծամասնութիւնը՝ քանդելու համար, կոտրելու համար, մեծ կատաղութեամբ կը յարձակէին խանութներուն վրայ:

Եւ այդ վայրկեանին այս մարդիկը իսկական գազանի մը հոգեվիճակին մէջ մտած էին:

Աւելի ճիշդը՝ իրենց երեսին կեղծ դիմակը վար առած եւ իսկական կործանարար «օսմանցիի» վերածուած էին:

...Եւ այս կոտրել-թափելը եւ թալանը, կէս գիշերէն յետոյ մինչեւ ժամը մէկը տեսց:

Եւ ճիշդ ժամը մէկին, Բանկայլթին դէպի Քուրթուլուչ «jeep» մը երեւցաւ:

Եւ jeep-ին վրայ քանի մը զինուոր, եւ վարորդին քովն ալ ոտքի կեցած սպայ մը կար:

Եւ այս յօր-ին վրայի սպան, մէկ կողմէ բերանը սուլիչ մը, անդադար կը սուլէր, իսկ միւս կողմէ ալ կը պոռար՝ «կորսուեցէք, հեռացէք»:

Եւ այս սպային մէկ սուլիչի ձայնը, եւ անոր պոռալ-կանչելը բաւարար եղան՝ այս թալանող խուժանին քանի մը վայրկեանի մէջ ցրուելուն եւ մէջտեղէն կորսուելուն:

Եւ մեզի մնաց՝ աւերակի վերածուած խանութները, աղբանոցի երեւոյթով փողոցները, եւ այդ գարշելի եւ անտանելի հոտը:

Բայց, այս ողբերգութիւնը ապրող մեր՝ «կեաւուրներուն» հոգիներուն մէջ, յաւետ մտաւ սարսափի, վախի եւ բարկութեան զգացումն ու յոյզը՝ 6-7 Սեպտեմբեր 1955-ի գիշերը:

### **ՉՈՐՐՈՐԳ ԳՐՈՒԹԻՒՆ [«ՆԱՅԻՐԻ», ԹԻ 178, 27.8.2002]**

Կէս գիշերէն յետոյ՝ ժամը մէկին, փողոցներուն մէջ ոչ մէկ թալլող մնացած էր:

Բայց անոնց տեղը, բոլորովին ուրիշ, տարօրինակ ժողովուրդ մը եկաւ:

Փլատակի վերածուած «կեաւուրներուն» խանութները տեսնելու եկած մարդոցմով լեցուած էին փողոցները:

Եւ անոնք, թատրոն մը, շարժանկար մը դիտելու նման, հաճոյքով կը նայէին այս փլատակներուն:

Այդ վայրկեանէն սկսեալ, մենք ալ խառնուեցանք ժողովուրդին եւ դէպի Բանկալթի քալել սկսանք:

Բանկալթիի ճոխ խանութները եւ մանաւանդ տեղւոյն գեղեցիկ «Հայլայֆ» ծաղարանը անճանաչելի դառնալու աստիճան քանդուած էր:

Անկէ դէպի Հարպիյէ յառաջացանք:

Այստեղ բազմութիւնը երթալով շատցաւ:

Մասնաւորապէս՝ ինքնաշարժերուն ետեւի կողմը, «պակաժէն» կախուած կերպասէ շատ երկայն պոչեր կային:

Եւ այս ինքնաշարժերուն տէրերը՝ «կեաւուրներուն» պատկանող կերպասի խանութները թալանի տուած միջոցին,

շատ մը կերպասի ծրարները իրենց ինքնաշարժին մէջ կը փոխադրեն: Եւ յետոյ, զուարճանալու համար քանի մը կերպասի ծրարներ ինքնաշարժին ետեւը կը կապեն եւ ճամբայ ելլելէ յետոյ, այս ծրարները գետին գլորելով տարօրինակ եւ երկար պոչեր կը կազմեն:

Չորս-հինգ պոչ ունեցող եւ հրէշի մը նմանող այս ինքնաշարժերուն զուարճանալու համար Պոլսոյ փողոցներուն մէջ շրջագայիլը, այդ գիշերուան սարսափելի յիշատակներէն մէկը ըլլալով, միշտ մեր աչքերուն առջեւ կը մնայ:

Եւ մենք, այս ինքնաշարժերուն քովէն քալելով, Հայպիյէէն Թաքսիմ հասանք:

Թաքսիմի հրապարակին վրայ գտնուող եւ խուժանին կողմէ կրակի տրուած մեծ «Այտթրիատ» եկեղեցին, դեռ բոցերու մէջ կ'այրէր ու կ'այրէր:

Մինչեւ 1923 Constantinople կոչուած քաղաքին հպարտութիւնը եւ Պոլսոյ հարուստ դասակարգին կեդրոնը եղած Rue De Pera-ն, ներկայիս Պէյօղլու կոչուած պողոտան՝ ումբակոծումի ենթարկուածի տեսարան մը կը պարզէր:

Աչքերնուս հաւատալ չէինք ուզեր:

Պէյօղլուի պողոտայ ըսուած տեղ մը չէր մնացած:

Եւ պողոտան խանութներուն կողոպուտի ենթարկման ընթացքին չորսդի նետուած ապրանքներով բոլորովին գոցուած էր: Եւ տեղ-տեղ ալ մէկ մեթր բարձրութեամբ բլրակներ կազմուած էին:

Եւ մենք, պարզուած այս սարսափելի երեւոյթը տեսնելով, չկրցանք դիմանալ եւ լացինք՝ մարդ ըսուած վայրենի արարածին բարբարոսութեան խորհրդանիշը եղող փլատակներուն առջեւ:

Թիւ 115

«Նայիրի», 1 Յունուար 2006, Բացառիկ

## 6-7-ՍԵՊՏԵՄԲԵՐ 1955-Ի ՊՈԼՍՈՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԻՆ ՍԱԼԵՐԸ

«Նայիրի»-ի վերջին թիւերուն մէջ, 6-7 Սեպտեմբեր կոչուած ողբերգութեան իբր ականատես վկայ, մեր տեսածները պատմել ջանացինք:

Մեր գրութիւններուն հետեւողները նկատած են անպայման, որ 6-7 Սեպտեմբերի դէպքերը ժողովրդային պարզ պոռթկում մը չէին:

Վարի սիւնակներուն մէջ ալ, 6-7 Սեպտեմբերի ողբերգութեան «ովքե՞ր եւ ինչո՞ւ պատճառ եղած էին»-ը բացատրելու ջանացինք:

\* \* \*

Եւ այս ողբերգութեան պատճառ եղողները՝ իրենց ծրագիրներուն գործադրութիւնը կը շարունակեն:

Պոլսոյ մէջ այս ողբերգութեան շարունակութիւնը եղող նոր դաւադրութիւն մը պատրաստելու վրայ են:

Բիւզանդական կայսրութեան վերջին, «ողջ-յիշատակը» եղող Պոլսոյ Փանարի Յոյն ուղղափառ տիեզերական պատրիարքութիւնը մէջտեղէն վերցնել կ'ուզեն:

Պոռոտախօս թրքական թերթերը՝ պատրիարքարանին դէմ համազարկ բացած են՝ «Յունաց պատրիարքարանը՝ Յունաստան թո՛ղ երթայ գրելով»:

Մտածեցէք անգամ մը՝ Վատիկանը որքան որ կարելոր է կաթողիկէներուն համար, Պոլսոյ ուղղափառ պատրիարքութիւնն ալ նոյնքան նուիրական է արեւելեան քրիստոնեաներուն, ուղղափառներուն համար:

Եւ հիմա, մաքրագործուելու կարգը, Պոլսոյ ուղղափառ պատրիարքութեան եկաւ:

Յետոյ՝ կարգը որո՞ւն պիտի գայ:

Անգլիոյ եւ Ֆրանսայի ողբերգութիւնները չէ՞ք տեսներ:

Աստուած պահպանէ Եւրոպան:

### **ՀԻՆՔԵՐՈՐԴ ԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՅԻՐԻ» ԹԻՒ 179, 10.9.2002I**

«ՆԱՅԻՐԻ»-ի սիւնակներուն մէջ, 4 թիւերէ ի վեր, 6-7 Սեպտեմբեր 1955-ի Պոլսոյ ողբերգութեան ընթացքին մեր ապրած, մեր տեսած սարսափելի դէպքերը պատմելու ջանացինք:

Եւ հիմա ալ, այս ողբերգութեան կատարուելուն պատճառ եղող ազդակները պատմելու պիտի ջանանք:

1951-ին Թուրքիոյ արտաքին գործերու նախարարը՝ *Fuat Köprülü* յայտարարութիւն տուած էր եւ, պաշտօնապէս, «Մենք Կիպրոս ըսուած հարց մը չունինք» ըսած էր:

Բայց, աւելի վերջ, անգլիացիներուն աւանդական պոռնիկ քաղաքականութիւնը աշխատիլ սկսաւ, եւ Կիպրոսը չկորսնցնելու եւ տեւական Կիպրոս մնալու համար Թուրքերուն գրգռել սկսան:

Անգլիական գաղտնի սպասարկութիւնը այս պարտականութիւնը Պոլսոյ «*Hürriyet*» թերթի տէր եւ ծագումով կիպրացի «*Sedat Simavi*»-ին տուաւ:

Կիպրոսի հետ կապ ունեցող բոլոր ցաւալի դէպքերուն առաջին պատասխանատուն՝ այս «*Hürriyet*» ըսուած թերթն է:

Ես այս «*Hürriyet*» թերթը, 1951-ի տարիներէն սկսեալ տուած անիրական լուրերով եւ հրատարակած գրգռիչ գրութիւններով, Թուրք ժողովուրդին ուղեղին մէջ կիպրական հարցը ներմուծեց:

«Կիպրոսը Թուրք է» լողունգը ստեղծողը «*Hürriyet*» թերթն է:

Եւ այս թերթին գրգռութիւնները տարիներ տեւեցին:



Եւ քիչ միջոց մը յետոյ, անգլիական գրգռիչ քաղաքականութիւնը իր արդիւնքը տուաւ, եւ թրքական կառավարութիւնը կիպրական հարցին տէր ելլելով, սկսաւ շատ յարձակողական քաղաքականութիւն մը կիրարկել:

Օգոստոս 1955-ին Լոնտոնի մէջ սկսելիք կիպրական բանակցութիւններէն երեք ամիսներ առաջ, Թուրքիոյ արտաքին գործերու նախարար *Fatin Rüştü Zorlu*-ին հետ տեսնուող Անգլիոյ արտաքին գործերու նախարարը՝ *Zorlu*-ին սա թելադրանքները կը կատարէ.

«Յոյները, Կիպրոսի համար, տեւական ցոյցեր կը կատարեն, դուք, ինչո՞ւ անչարժ կը կենաք:

Դուք ալ, Կիպրոսի համար, ցոյցեր կատարեցէք, եւ Կիպրոսի համար իրաւունք պահանջեցէք»:

Եւ անգլիացիներուն այս գրգռիչ թելադրանքներն են՝ 6-7 Սեպտեմբեր 1955-ի Պոլսոյ ողբերգութեան առաջին պատասխանատուն:

Եւ անկէ յետոյ, ամէն բան՝ *Fatin Rüştü Zorlu*-էն, վարչապետ Ատնան Մենտերեսէն եւ թրքական հետախուզութեան (MIT)-ի նախագահէն բաղկացած երրորդութեան կողմէ կազմակերպուեցան:

Եւ շատ մաքիաւելական սենարիօ մը պատրաստուեցաւ եւ այս սենարիօն Սելանիկ ուղարկուեցաւ:

Եւ այս սենարիօյին 4 առաջնակարգ դերակատարները հետեւեալ անձերն էին՝

1. Սելանիկի բարձր հիւպատոսը՝ *Mehmet Ali Balin*:

2. Սելանիկի բարձր հիւպատոսի օգնականը՝ *Mehmet Ali Tetikalp*:

3. «MIT»-ի գործակալ, եւ իբր թէ Սելանիկի մէջ իրաւաբանութեան ուսանող *Oktay Engin*:

4. Սելանիկի բարձր հիւպատոսութեան դռնապան՝ *Hasan Uçar*:

Եւ այս սենարիօյին բեմադրութիւնն ալ, սապէս որոշուած էր՝

Սելանիկ գտնուող Մուստաֆա Քեմալին ծնած տան պարտէզին մէջ, Պոլսէն բերուած ումբ մը պիտի պայթեցուէր: Եւ այս դէպքը Պոլիս պիտի տեղեկացուէր հետեւեալ ձեւով.

«Յոյները, Աթաթիւրքին տունը ոմբակոծեցին»:

Ահա, Սելանիկի մէջ կիրարկուած այս սենարիօն է, որ 6-7 Սեպտեմբեր 1955-ի գիշերը՝ Պոլիսին աւերակի վերածուելուն պատճառ եղաւ:

### **ՎԵՅԵՐՈՐԴ ԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՅԻՐԻ» ԹԻ 180, 24. 9. 2002I**

6-7 Սեպտեմբեր 1955-ի Պոլսոյ ողբերգութեան մասին պաշտօնական իշխանութիւններուն տուած վնասներու թուանշանները հետեւեալներն են՝

«3 հոգի մեռած եւ 30 հոգի վիրաւորուած են. 73 եկեղեցի, 8 Այազմա, 2 վանք եւ միայն մէկ սինակոկ քանդուած են:

Յոյներու պատկանող 3584 խանութներ եւ հայերու եւ ոչ իսլամներու պատկանող 1954 խանութներ քանդուած են»:

Հիմա ալ, այս մասին մեր գիտցածները նշենք՝

6-7 Սեպտեմբեր 1955-ի օրը, յոյներու պատկանող բոլոր եկեղեցիները [ի բացառեալ «Փեների» յոյն պատրիարքանիստ եկեղեցին] քանդուած եւ թալանուած են:

Հայերու եւ միւս քրիստոնեաներու պատկանող եկեղեցիներուն շատերը քանդուած են:

Հրէաներու պատկանող միայն մէկ սինակոկ, ան ալ՝ սխալմամբ քանդուած է:

Յոյներու պատկանող բոլոր խանութները քանդուեցան:

Հայերու եւ միւս քրիստոնեաներու պատկանող խանութներուն մեծ մասը քանդուեցան:

6-7 Սեպտեմբեր 1955-ի Պոլսոյ ողբերգութեան ընթացքին պատահած զարհուրելի դէպքերէն միայն մէկ-քանին նշելու ջանանք:

Այն օրը դիպուածով, թալանող խուժանին քովէն անցնող յոյն քահանայ մը՝ մօրէ մերկ կը հանուեցնեն եւ ամորձիքներէն կախելով կ'սպաննեն:

«Պալլբլրի» յունական գերեզմանատան մէջ գտնուող յոյն պատրիարքներուն պատմական դամբարանները կը խորտակեն եւ պատրիարքներուն ոսկորները անոնցմէ հանելով, ոտքերու տակ կը ճգմեն:

Բայց ամէնէն ցաւալին՝ նոյն օրը, Պոլսոյ մէջ միջազգային ժողովի մը մասնակցող ամերիկեան CIA կազմակերպութեան նախագահ ALLEN DALLE, Սեպտեմբեր 1955-ի դէպքերուն պատասխանատուութիւնը համայնավարներուն վրայ կը նետէ:

Նոյն՝ միջազգային ժողովին մասնակցող Ֆրանսայի վարչապետ, հրէայ MENDES-FRANCE, Ֆրանսա վերադառնալէ յետոյ, 6-7 Սեպտեմբերի դէպքերուն մասին, ականատես եղած ըլլալուն հակառակ, բնաւ չ'արտայայտուիր:

Բայց 6-7 Սեպտեմբերի ողբերգութեան մէջ, Պոլսոյ աւերակի վերածուելէն զատ, մէջտեղ ելած ամենակարեւոր դէպքը հետեւեալն է.-

1923-էն յետոյ, Թուրքերը քաղաքին անունը փոխեցին, եւ CONSTANTINOPOLE անունը ISTAMBUL-ի վերածեցին:

Հակառակ այս փոփոխութեան, Պոլիսը մինչեւ 1955, քաղաքը ապրող 100.000 յոյն ժողովուրդով իր CONSTANTINOPLE-ի յատուկ նկարագիրը չփոխեց:

Բայց 6-7 Սեպտեմբերի ողբերգութենէն յետոյ, յոյները Պոլսէն արտագաղթել սկսան եւ շատերը Յունաստան հաստատուեցան:

Այսօր, Պոլսոյ մէջ ապրող յոյներուն թիւը, քանի մը հարիւրը չ'անցնիր:

Իրականութեան մէջ, Թուրքիան կառավարող անտեսանելի ուժերուն ուզածն էլ այս էր: Անոնք, մինչեւ 1923թ., Անաթոլիան կեաւուրներէն մաքրագործած էին:

6-7 Սեպտեմբերի ողբերգութեամբ ալ, անոնք Պոլիսը կեաւուրներէն մաքրագործեցին:

Այս հարցին վերաբերող՝ Թուրքիոյ նախկին արտաքին գործոց նախարար Ֆուաթ Բոփրուլուին ըսածները շատ կարեւոր են.- «1957-ին, հանրապետութեան նախագահ

CELAL BAYAR-ին 6-7 Սեպտեմբերի դեպքերուն մասին հարցուցի: Ան ինձի սա պատասխանը տուաւ.- «Ամէն պարագայի, այս դեպքերուն մէջտեղ գալը լաւ եղաւ. մեր ընկերներն ալ այսպէս կը մտածեն»:

### **ԵՐԹԵՐՈՐԳ ԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՅԻՐԻ» ԹԻ 181, 8. 10. 2002I**

#### **6-7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1955-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ**

#### **ՊՈԼՍՈՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ**

#### **ՂԵՊԵՐՈՒՆ ԱՎԱՆԱՏԵՍ ՎՎԱՅ ԸԼԼԱԼՈՎ՝**

#### **ՍԵՐ ՅԱՆՎԱԾ ԵՉՐԱՎԱՅՈՒԹԻՒՆԸ**

Թուրքերը քրիստոնեայ Պոլիսը գրաւեցին 1453-ին:

Բայց, միայն 500 տարիներ յետոյ, 1955-ի 6-7 Սեպտեմբերի գիշերը, քրիստոնեայ Պոլիսը քանդելով՝ զայն կրցան թրջացնել:

6-7 Սեպտեմբերի դեպքերուն ղրղապատճառը կը կարծուի, որ Կիպրոսի հարցն է:

Բայց այս՝ դեպքերուն միայն արտաքին երեւոյթն է:

Բուն պատճառը՝ անտեսանելի բարձրագոյն ուժերուն երկու դարէ ի վեր գործադրուող ծրագիրն է:

1850թ. սկսեալ, անտեսանելի բարձրագոյն ուժերը, «հիւանդ մարդ» կոչուած օսմանեան պետութիւնը ողջնցնելու աշխատեցան:

Անոնք՝ 1915-ին, հայ ազգին դէմ գործադրած ցեղասպանութեամբ, Անատոլիան հայերէն մաքրագործեցին:

1919թ. մինչեւ 1923-ալ՝ Անատոլիայի պոնտոսցիները եւ յոյները ցեղասպանութեան ենթարկեցին:

Եւ այս ձեւով Անատոլիան՝ բոլորովին «կեափուրներէն» մաքրագործուած եղաւ:

6-7 Սեպտեմբեր 1955-ին ալ, ծրագրին վերջին մասը գործադրուիլ սկսաւ:

Եւ Պոլիսն ալ «կեափուրներէն» մաքրագործուեցաւ:

1960թ. սկսեալ, Անտեսանելի բարձրագոյն ուժերուն գործակալը՝ Փարմասոն Սուլէյման Տէմիրէլ, «Մեծն Թուրքիա» ծրագիրը մէջտեղ նետեց՝ 1.-1974-ին Կիպրոսին գրաւումը, 2.-1992-ին Պոսնիոյ իսլամացուիլը, 1998-ին ալ Քոսովոյին բոլորովին միւսիւման այլպանացիներուն յանձնուիլը՝ «Մեծն Թուրքիոյ» ծրագրին գործադրութեան հետեւանքներն են:

Վերջին շաբաթներուն, Թուրքիան ուրիշ «երազ» մը տեսնել սկսած է՝ քարիւղի երազը:

Անտեսանելի բարձրագոյն ուժերը, աւելի ճիշդը՝ այլեւ լոյս աշխարհ ելլող «Ամերիկա-Իսրայէլ-Թուրքիա» միութիւնը, Իրաքի վրայ յարձակելու կը պատրաստուի:

Եւ Թուրքիոյ աչքը՝ Քերքուկի քարիւղին վրայ է:

Բայց, ուշադրութիւն ըրէք թուրքեր՝ «Տիմյաթ՝ բրինձ առնելու գացած միջոցին, տունը գտնուող կորկոտէն չզրկուիք»:

Թիւ 116

«Նայիրի», 24 Յունուար 2006, Թիւ 248

**ԹՈՒՐՔԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԸ՝  
ԱՊՏՈՒԼԼԱՅ ԿԻԼԸ, ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐՈՒՆ  
ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ ՏՈՒԱԾ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԵՉ,  
ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԷՆ ՇԱՏ ՎՇՏԱՅԱԾ ԸԼԼԱԸ ՅԱՅՏՆԵՐ Է:  
ԻՆՉՈՒՒ. ՈՐՈՎԶԵՏԵԻ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԸ,  
Ք.Կ.Կ-Ի ԶԻՒՐՏԵՐՈՒՆ ԴԵՄ, ԹՈՒՐՔԵՐՈՒՆ  
ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ՉԵՆ ԳՈՐԾԱԴՐԵՐ ԵՂԵՐ**

Խեղճ Ապտուլլահ Կիւլ:

Դուն, աշխարհէն լուր չունիս:

Այլեւ Ք.Կ.Կ-ն ալ, Պարզանին ալ, Թալապանին ալ, բոլորն ալ ամերիկացիներուն իշխանութեան ենթարկուեցան:

Եւ քիւրտերը, վերջին տարիներուն, գաղափարի մեծ յեղաշրջում մը կատարեցին:

Քիւրտերը՝ իրենց միջեւ եղած անհամաձայնութիւններուն վերջ մը տուին:

Եւ բոլոր քիւրտերը՝ Պարզանին, Թալապանին եւ P.K.K-ն ալ, քիւրտ ազգին բարձրագոյն իտէալներուն շուրջ միացան:

Եւ դուն, Ապտուլլա՛հ Կիւլ, ասկէ յետոյ, այս միացեալ քիւրտերուն մէջտեղ բերած ուժէն վախնալ պիտի սկսիս:

Այսօր քիւրտերը, Իրաքի հիւսիսը, ձեր ճիշդ քիթին տակ՝ քրտական պետութիւն մը հիմնեցին...

Յետոյ, կարգը ձեզի պիտի գայ՝ Թուրքիա ըսուած շինծու պետութեան մէջ գտնուող քիւրտերուն:

Բնաւ, մտածա՞ծ էք արդեօք.

Ձեր՝ Արեւելեան Անատոլու ըսած հողերուն [հայերէն գողցուած] վրայ [Թուրք ըսուած արարած մը գոյութիւն չունի:

Հոն ապրող ժողովուրդը ամբողջութեամբ քիւրտ է:

Եւ դուք, ի՞նչ պիտի կարենաք ընել, այս քիւրտերուն դէմ:

1915-ին հայերը ցեղասպանութեան ենթարկելնուդ նման՝ այդ քիւրտերն ալ չէք կրնար ջարդել:

Կը մնայ՝ մէկ հաւանականութիւն:

Ժամանակ չահելու համար, քիւրտերուն դէմ «քնացնողական» քաղաքականութիւն մը կիրարկել:

Բայց արդէն դուք, այս քաղաքականութիւնը գործադրել սկսեք էք:

Թրքական հեռատեսիլներու եւ ձայնասփիւռներու մէջ քրտերէն լեզուով յայտագիրներ պիտի ներկայացնէք եղեր:

Այսինքն՝ Իմրալը կղզիին մէջ բանտարկուած Ապտուլլահ Օճալանին ուզած ձեւով՝ Թուրք-քիւրտ եղբայրութիւնը պիտի ստեղծէք:

Ապրիք: Շատ փայլուն գաղափար է:

Արդէն դուք այս սատանայական քաղաքականութեան վարպետն էք:

1908թ. ալ ձեր մէջտեղ բերած [իբր [թէ] HÜRRİYET-ի օրերուն, «հայերուն հետ եղբայրութիւն» հռչակած էիք:

Եւ տխմար հայերը՝ ինկան ձեր այս եղբայրութիւն ըսած թակարդին մէջ:

Եւ 1915թ., Առաջին աշխարհամարտին խառնաշփոթութենէն օգտուելով, ամբողջ հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցիք; եւ չորս հազար տարուան հայուն հայրենիքը գողցաք:

Հիմա նայինք, թէ քիւրտերուն դէմ նոյն թատրոնը պիտի կրնա՞ք խաղալ:

Բայց, ուշադրութիւն ըրէք:

Քիւրտերը՝ հայերուն նման միամիտ եւ տխմար չեն:

Քիւրտերը՝ ձեզ նման նենգամիտ եւ խորամանկ են:

Պիտի տեսնենք, թէ թուրքերը եւ քիւրտերը՝ երկու լարախաղացները նոյն չուանին վրայ ի՞նչպէս պիտի կարենան խաղալ:

Բայց, այս երկու լարախաղացներուն միջեւ՝ նա՛խ հայ ազգը զոհուեցաւ:

Դուք՝ թուրքերդ, կեղծ եղբայրութեան քաղաքականութեամբ, հայերուն միամտութենէն եւ տխմարութենէն օգտուելով, զիրենք էչերուն դրախտը ուղարկեցիք:

Թիւ 117

«Նայիրի», 7 Փետրուար 2006, թիւ 249

**3 ՓԵՏՐՈՒԱՐ 2006 ԹՈՒԱԿԻՐ “HÜRRİYET” ԹԵՐԹԻՆ  
8-ՐԴ ԷԶԻՆ ՄԷԶ, ԻՆՉ ԸԼԼԱԸ ՅԱՅՏԵԻ ԳԵՂՈՂ  
ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԸ ՄԱՍԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՏՐՈՒԱԾ Է**

Այս փաստաբանին հայրը՝ քիւրտ է եղեր, մայրը՝ արաբ, բայց ինքը՝ թուրք:

Երբ որ այս գրութիւնը կարդացիք՝ “HÜRRİYET” թերթին առաջին էջին վրայ թրքական դրօշակով, Աթաթիւրքին նկարով ամէն օր հրատարակուող գրութիւնը յիշեցիք.—

«Թուրքիան՝ թուրքերունն է»:

Այո՛, հայրը՝ քիւրտ, մայրը՝ արաբ եղող փաստաբանը, ինչ աստիճան որ թուրք է, ձեր «թուրքիան թուրքերունն է» ըսած երկիրն ալ այդ աստիճան թուրք է: Արդէն ձեր մեծաւոր «Հայրը» ատենին ըսած էր՝ «Ի՛նչ երջանիկ է այն, որ թուրք եմ կըսէ»:

Այս փաստաբանն ալ Աթաթիւրքին ստեղծած թուրքերուն մաս կը կազմէ:

Կը յիշէ՞ք արդեօք, որ դուք 10-րդ տարեդարձի քայլերդ մը ունէիք:

«Տասը տարուան մէջ, ամէն տարիքէ 15 միլիոն երիտասարդ ստեղծեցիք»:

Այս փաստաբանն ալ այդ ստեղծուած թուրքերուն մաս կը կազմէ: Այսինքն՝ շինծու թուրք է:

\* \* \*

3 Փետրուար 2006 թուակիր "HÜRRİYET" թերթին մէջ մեր կարդացած մէկ գրութիւնը մեզ շատ խնդացուց:

Այս գրութիւնը պատմելու ջանանք:

T.R.T.-ի Անգարայի ձայնասփիւռին բազմաձայն երգչախումբը՝ Յունաստանի մէջ համերգներ տալէ ետք, օթոպիւսով Անգարայ կը վերադառնայ:

Օթոպիւսը Անգարայի մօտեցած է: Եւ CD-երգասալիկը կը տարածէ՝ PAVAROTTI-ի նաբոլիթէն երգերը:

Ամէն մարդ գոհ՝ մտիկ կ'ընէ PAVAROTTI-ն:

Բայց միջոց մը յետոյ, օթոպիւսին ետեւի կողմէն մէկը պոռալ կը սկսի. «Այսքան կեաւուրի երաժշտութիւնը կը բաւէ: Գոցէ ծօ, սա կեաւուրին երաժշտութիւնը»:

Եւ ասիկա ըսողը, ով է գիտէ՞ք... բազմաձայն երգչախումբին տնօրէնն է:

Խնդա՛լ, թէ՞ լա՛լ:

Բայց ինչո՞ւ կը զարմանանք: Երբ թուրք պետութեան վարչապետը՝ Թայիպ էրտողանի պէս կրօնամոլ մըն է, ինչո՞ւ բազմաձայն երգչախումբին տնօրէնը՝ անտաչ կրօնամոլ մը չըլլայ:



Ձեր վարչապետը՝ Թայիպ էրտողանը չէ՞ր, որ քանի մը տարի առաջ, Եւրոպայի կեաՎուրներուն հետեւեալ սպառնալիքները կատարած էր.—

«Մինարէները՝ մեր սուիններն են, գմբէթները՝ մեր վահանները, մզկիթները՝ մեր զօրանոցները:

Եւ հաւատացեալները՝ մեր զինուորները»:

Այս տեսակ կրօնամոլ վարչապետին՝ այս տեսակ անտաշ կրօնամոլ երգչախումբի տնօրէն կը վայելէ:

Եկէք, հիմա, ձեր գեղեցիկ ասացուածքներէն մէկ հատը այստեղ մի՛ ըսէք.

Շինծու պետութեան՝ շինծու վարչապետ եւ շինծու երգչախումբի տնօրէն:

«Այս գլխուն՝ ա՛ս տեսակ ածելի»:

Թիւ 118

«Նայիրի», 21 Փետրուար 2006, Թիւ 250

**ԴՈՒՔ, ԹՈՒՐՔ ԸՍՈՒԱԾ ԱԻԱՉԱԿՆԵՐՈՒ ՀՐՈՍԱԽՈՒՄԲԵՐ.  
ԴՈՒՔ ՄԻՆՉԵՒ ՈՐ ՀԱՅ ԱԶԳԸ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՆԹԱՐԿԱԾ ԸԼԼԱԼՈՒ ՅԱՆՃԱՆՔՈՎ ԶՊԱՏԺՈՒԻՔ՝  
ԴՈՒՔ, ԴԱՐԵՐԷ Ի ՎԵՐ ԱՐԻԻՆԱՐԲՈՒ ԻՆՉ ՕՍՄԱՆՅԻ  
ԱԻԱՉԱԿՆԵՐ ՈՐ ԷԻՔ, ՆՈՅՆ ՈՃՐԱԳՈՐԾ ԹՈՒՐՔԵՐԸ ՊԻՏԻ  
ՄՆԱՔ՝ ԱՄԲՈՂՁ ԱՇԽԱՐՀԻՆ ՉԼԽՈՒՆ ՓՈՐՁԱՆՔ**

Գերմանիոյ վարչապետ ANGELA MERKEL, դեռ իշխանութեան չեկած, իր կուսակցութեան յայտագրին մէջ, «Հայկական ցեղասպանութիւնը ընդունելու» ծրագիրը առած էր արդէն:

Եւ ANGELA MERKEL, վարչապետ ըլլալէ յետոյ, Հայկական ցեղասպանութիւնը ճանչնալու ծրագիրը՝ գերմանական Ազգային ժողովին ներկայացուց:

Եւ դուք, գերմանական Ազգային ժողովին կողմէ Հայկական ցեղասպանութիւնը ճանչնալուն արգելք ըլլալու համար, Եւրոպայի մէջ բնակութիւն հաստատող թուրքերը, 18 Մարտ 2006-ի համար, Պերլինի մէջ, փողոցային ցոյցի հրաւիրեցիք:

Պերլին եկած թուրքերը՝

1.- Աշխարհի ամենամեծ մարդասպանը, Հայկական ցեղասպանութեան առաջնակարգ պատասխանատուն եղող Թալեաթին սպաննուած փողոցը պիտի երթան ի յարգանք անոր:

2.- Հայկական ցեղասպանութեան «սուտ» ըլլալը պոռալով, Պերլինի պողոտաներուն վրայ ցոյց պիտի կատարեն:

Եւ դուք, Եւրոպա գտնուող թուրքերը ցոյցի հրաւիրող ձեր կոչին մէջ, Եւրոպացիներուն դէմ հետեւեալ սպառնալիքները կատարեցիք.-

«Եթէ Եւրոպական մայրաքաղաքներուն, Նոյեմբեր 2005-ին Փարիզի մէջ եղածին նման այրիլը չէք ուզեր, թուրքերուն դէմ սուտ ամբաստանութիւններուն վերջ կու տաք»:

[Այսինքն՝ գերմանական կառավարութիւնը, Ազգային ժողովին ներկայացուած Հայկական ցեղասպանութիւնը ճանչնալու առաջարկը ետ առնելու է]:

Մեր գիտցածին համաձայն՝ ձեր այս կատարած սպառնալիքներուն՝

«Աւազակի շանթաժ կ'ըսեն»:

Արդեօ՞ք ուշադրութիւն ըրիք:

Ձեր կատարած այս սպառնալիքներով, Նոյեմբեր 2005-ին Փարիզի եւ Փրանսական շատ մը քաղաքներուն մէջ հրկիզուած հազարաւոր կռուքերուն եւ կրակի տրուած շէնքերուն առաջնակարգ պատասխանատուն եղած ըլլալնիդ խոստովանած եղաք:

Զմոռնանք, որ դուք՝ այսօրուան թուրքերդ, 6-7 Սեպտեմբեր 1955-ին Պոլիսը այրող եւ Թալանող թուրքերուն զաւակներն էք:

Բայց, ամէնէն կարելորդ՝ ամբողջ Եւրոպական մայրաքաղաքները կրակի տալու սպառնալիքներ կատարող այսօրուան

Թուրքերը, 11-րդ դարուն Անաթոլիոյ հողերուն ոտք կոխելով զանոնք աղտոտող Թաթար-մոնղոլներուն շառաւիղները չե՞ն:

Այս վայրենի աւազակները չէի՞ն, Անաթոլիոյ տեղացի ժողովուրդին հետեւեալ սպառնալիքները կատարողները՝ «Կա՛մ միւսլիման կ'ըլլաք, եւ կամ գլուխնիդ կը կտրենք»:

Դուք երէկ, ինչ վայրենի աւազակներ որ էիք, այսօր ալ նոյն գազան եւ սպառնալիքներ կատարող Թուրքերն էք:

Այդ պատճառաւ կրկին պիտի ըսենք.

Դուք, Թուրք ըսուած աւազակներու հրոսախումբե՛ր, դուք մինչեւ որ հայ ազգը ցեղասպանութեան ենթարկած ըլլալու յանցանքով չպատժուիք, դուք դարերէ ի վեր ի՛նչ արիւնարբու օսմանցի աւազակներ որ էիք, նոյն՝ ոճրագործ Թուրքերը ըլլալով, պիտի մնաք ամբողջ աշխարհին գլխուն փորձանք:

Թիւ 119

«Նայիրի», 7 Մարտ 2006, Թիւ 251

## DOĞU PERİNÇEK ԸՍՈՒՄՍ ԱՌԵՂՏՈՒՄՏԸ Ո՛ՎԷ DOĞU PERİNÇEK-Ը

Մեր Պոլսոյ մէջ ապրած տարիներուն գիտցածնուս համեմատ, DOĞU PERİNÇEK-ը՝ ձախակողմեան առաջնորդներէն մէկն էր:

Վերջին ծայր Լենինին, Սթալինին, եւ MAO TSE-TOUNG-ին հիացող համայնավար ըլլալով ծանօթ էր:

Եւ տարիներով համայնավար ըլլալու «յանցանքով» բանտարկուեցաւ:

Յետոյ, ազատ արձակուիլը իմացանք:

Աւելի ետք Թերթերը գրեցին, թէ DOĞU PERİNÇEK-ը Թուրքիոյ «Գործաւորական» կուսակցութեան պետը եղեր է:

Վերջին տարիներուն DOĞU PERİNÇEK-ի մասին շատ խօսուիլ սկսաւ:

Բայց, այստեղ մեզ հետաքրքրող հարցը՝ DOĞU PERİNÇEK-ին հայերու եւ թուրքերու մասին ըսածները եւ գրածներն են:

DOĞU PERİNÇEK-ը Յուլիս 2005-ին, Զուիցերիա գացեր եւ Յուլիս 1923-ին Լոզանի մէջ ստորագրուած Լոզանի դաշնագրին 92-րդ տարելիցին համար կատարուած հանդիսութիւններուն մասնակցեր է:

[Յուլիս 1923-ին արեւմտեան պետութիւնները հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին ըսելով՝ թուրքերը Լոզանի դաշնագրով «վարձատրեցին» եւ Հայկական հարցը՝ 1923-ին Լոզանի մէջ թաղեցին]:

Ահա, DOĞU PERİNÇEK-ը, 1915-ի թուրք ցեղասպաններուն մէկ շառաւիղը ըլլալով, այս ցեղասպանութիւնը «տօնելու» եկեր է Լոզան:

Եւ 22 Յուլիսին ZÜRICH-ի մէջ մամուլոյ հաւաքոյթի մը ընթացքին ալ, հետեւեալ խօսքերը ըսեր է՝ «Հայկական ցեղասպանութիւն ըսուած բան մը չէ եղած: Հայկական ցեղասպանութիւնը՝ կայսերապաշտ պետութիւններուն յարմարցուցած մէկ սուտն է»:

Բայց, նոյն DOĞU PERİNÇEK-ը, տարիներ առաջ իր գրած «Ինքնապաշտպանութիւն» վերտառութեամբ գիրքին 240 եւ 241 էջերուն մէջ, Հայկական ցեղասպանութեան մասին հետեւեալ տողերը գրած էր.— «Պուրժուայական մեծ գործատէրերու իշխանութեան ենթարկուած «Իթթիհատ վէ թէրաքքին»՝ գործաւորները, գիւղացիները եւ զանազան փոքրամասնութեան ազգերը ճգմելէ զատ, իր մէջէն ելած պուրժուա դասն ալ ճնշումի տակ առնող բռնակալական վարչաձեւ մը կազմեց:

Թուրանականութեան գաղափարախօսութեամբ՝ գերմանական կայսերապաշտութեան Ասիոյ մէջ ընդլայնման քաղաքականութեան ծառայեց [...]:

Աւատապետական մեծ գործատէրերու բռնակալութիւնը՝ ազգային փոքրամասնութիւններու վրայ ալ՝ ճնշումի եւ կոտորածներու քաղաքականութիւն մը որդեգրեց:

Արեւելքի մէջ հարիւր հազարներով հայեր սպաննեց, մնացեալներն ալ երկրէն դուրս աքսորեց»:

Մեր տրամաբանութեան անհասկնալի մնացած խնդիրը հետեւեալն է՝ հայերուն համար իրականութիւնները գրող DOĞU PERİNÇEK-ը ինչպէս կ'ըլլայ, որ քանի մը տարիներ յետոյ.— «Հայկական ցեղասպանութիւնը սուտ է» կրնայ ըսել:

\* \* \*

Բայց, վերջին շրջաններուն DOĞU PERİNÇEK-ի մասին թերթերու մէջ մեր կարդացած գրութիւնները մեզի երկարօրէն մտածել տուին:

DOĞU PERİNÇEK-ը, Փետրուար 2006-ին Պոլսոյ BAHÇEŞEHİR համալսարանին մէջ «Քաղաքականութեան դպրոց» յայտագրին մասնակցեր է եւ այս յայտագրին ընթացքին հետեւեալ գաղափարները յայտներ է՝

«Թուրքերը, քիչ մը իրանցի են, իրանցիներն ալ՝ քիչ մը թուրք ... Արդէն թուրք կոչուած ցեղ մը չկայ, թուրքը՝ կայսերական մշակոյթի մը անունն է: Յետոյ դարձած է՝ հանրապետական մշակոյթի մը անունը: Թուրքը զանազան ցեղերու խառնուրդէն կազմուած ազգ մըն է»:

\* \* \*

DOĞU PERİNÇEK-ի վերը նշուած, բազմաթիւ տարիներու ընթացքին յայտնած գաղափարներուն մասին մտածեցինք: Եւ DOĞU PERİNÇEK-ի առեղծուածը լուծել ջանացինք:

Եւ ամէնէն վերջ՝ այս մասին հետեւեալ եզրակացութեան յանգեցանք:

DOĞU PERİNÇEK անունէն հասկնալի է, որ ան բնիկ Արեւելեան Անաթոլիայէն է, եւ շատ հաւանաբար՝ ծագումով քիւրտ:

Եւ դաստիարակութիւն ստացած շատ մը քիւրտ երիտասարդներուն նման՝ ձախակողմեան գաղափարախօսութեան հաւատացած, համայնավար կուսակցութեան քարոզչութիւն

կատարած եւ, ի վերջոյ, համայնավար կուսակցութեան առաջնորդներէն մէկը եղած է:

Եւ DOĞU PERİNÇEK, այդ տարիներուն համայնավարներուն համամարդկային գաղափարներով՝ իր «Ինքնապաշտպանութիւն» գիրքին մէջ, Հայկական ցեղասպանութեան մասին իրականութիւնները կրցած է գրել:

Բայց 1980թ. յետոյ, DOĞU PERİNÇEK-ի մէջ քրտական գոյութիւնը ծանր կշռել սկսած է:

Եւ մանաւանդ՝ Ապտուլլահ Օճալանին ազդեցութեան ենթարկուելով, քրտական ազգայնականութեան յարած է...

Այսօր այլեւս, անհերքելի իրականութիւն մըն է, որ քիւրտները 1915թ. թուրքերուն հրամանին ենթարկուած գործակալներ ըլլալով՝ Հայկական ցեղասպանութիւնը կատարող դահիճներ եղած են:

Եւ 1915թ. հայերէն պարպուած Արեւմտահայաստանի հողերուն տէր եւ տիրականը դարձան...

Եւ Ապտուլլահ Օճալանը, իր ձերբակալութենէն առաջ, յաղթանակի տարիներուն, թուրքերուն նման Հայկական ցեղասպանութիւնը կ'ուրանար, եւ Արեւմտեան Հայաստան կոչուած Արեւելեան Անաթոլիոյ հողերուն «Քիւրտիստան» ըլլալը կը պնդէր:

DOĞU PERİNÇEK-ին Յուլիս 2005թ. Զուլիցերիոյ մէջ «Հայկական ցեղասպանութեան համար սուտ է» ըսելը՝ Օճալանին գաղափարներուն կրկնութիւնն է:

DOĞU PERİNÇEK-ին Փետրուար 2006թ. BAHÇEŞEHİR-ի համալսարանին մէջ ըսած խօսքերը՝ Ապտուլլահ Օճալանին Իմրալի բանտին մէջ «Թուրքերուն հետ եղբայրութեան գաղափարներուն» շարունակութիւնն է:

DOĞU PERİNÇEK-ին Փետրուար 2006թ. համալսարանին մէջ ըսած սա խօսքերուն վրայ, ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք. - «Թուրքերը, քիչ մը իրանցի են, իրանցիներն ալ՝ քիչ մը թուրք»:

Պատմական իրականութիւն է, որ քիւրտները, ցեղ ըլլալով, իրանցիներուն մէկ թեւն են:

Եւ *DOĞU PERİNÇEK*-ը.— «Թուրքերը քիչ մը քիւրտ են, քիւրտերն ալ քիչ մը [թուրք]» չէր կրնար ըսել այսօր: Այդ պատճառաւ քիւրտերուն եղբայրները եղող իրանցիներուն անունը գործածեց...

Եւ հիմա մեր խօսքը ձեզի կ'ուղղենք, [թուրքե'ր...]

Հայկական ցեղասպանութեան պատասխանատու՝ [թուրքեր.— Այսօր Իրաքին հիւսիսը քրտական պետութիւն մը հիմնուած է: Վաղը կարգը Արեւմտեան Հայաստան կոչուած ձեր՝ հայերէն գողցած Արեւելեան Անաթոլիոյ հողերուն պիտի գայ: Եւ այդ հողերն ալ Քիւրտիստան պիտի ըլլան: Յետոյ՝ ինչե՞ր պիտի կատարուին- [թուրքերուն [իրը [թէ] եղբայրները ըսուած քիւրտերը, ձեր հաշիւը պիտի տեսնեն՝ եւ Թուրքիան՝ Քիւրտիստանի պիտի վերածուի:

Թիւ 120

«Նայիրի», 21 Մարտ 2006, [թիւ 252

**ԹՈՒՐԷՒՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ TAYYİP ERDOĞAN-Ը  
ՏՐԱՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՅՈՂ ԱՆՉ ՄԸՆ Է:  
ԱՅՍ ՏՐԱՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՅՈՂ ՄԱՐԴԸ՝ ԹՈՒՐԷՒՈՅ  
ԵՒ ԱՄԲՈՂՁ ԱՇԽԱՐՀԻ ԳԼՈՒԽԸ ՓՈՐՉԱՆՔԻ ԿԸ ՄԱՏՆԷ:  
ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՐԷՔ ԱՅՍ ՄԱՐԴՈՒՆ**

Թուրքիոյ վարչապետ *TAYYİP ERDOĞAN*-ը 26 Փետրուար 2006-ին կատարած յայտարարութեան մէջ, եւրոպացիներուն շատ բարկացեր է եւ եւրոպական ներկայացուցիչները մեղադրեր ու հետեւեալ խօսքերը ըսեր է.

«Եւրոպական ներկայացուցիչները, Եւրոպա ապրող մեր [թուրք հայրենակիցներուն իրենց լեզուն խօսելուն արգելք կ'ըլլան:

Ասոր փոխարէն՝ հոս կու գան ու Թուրքիոյ փոքրամասնութիւններուն համար լեզուական ազատութիւն կը պահանջեն:

Չափդ գիտցիր այ՛ մարդ: Դուն նոյն վերաբերումը ցոյց կուտա՞ս Եւրոպայի իմ հայրենակիցներուս»:

Յարգելի վարչապետ TAYYIP ERDOĞAN, դուն, Թուրքիոյ մէջ ապրող փոքրամասնութիւններ ըսած ժողովուրդները՝ վերջին տարիներուն դրամ չահելու համար Եւրոպա գացող եւ Եւրոպա հաստատուիլ ջանացող Թուրքերուն հետ կը բաղդատես:

Մինչդեռ «Թուրքիոյ փոքրամասնութիւններ» կոչուած ժողովուրդները այս երկրին տեղացիներն են, հազարաւոր տարիներէ ի վեր այս հողերուն վրայ ապրող մարդիկ են:

Բայց դուն եւ քու շառաւիղներդ վերջէն եկած օտարներ էք:

Մեզի այստեղ կրկին կ'ստիպես՝ որ քեզի պատմութեան դաս տանք:

NAMIK KEMAL-ին խօսքերը կը կրկնենք՝

«Աշխարհակալ պետութիւն մը մէջտեղ բերինք՝ ցեղախումբէ մը»:

11-րդ դարուն ցեղախումբ մը ըլլալով ոտք կոխեցիք Անատոլիոյ հողերուն վրայ:

Եւ այդ թուականէն սկսեալ բնիկ ժողովուրդները՝ բռնի թրքացնելու աշխատեցաք:

Եւ նոյնիսկ, կեդրոնական Անատոլիոյ մէջ, Կեսարիոյ, Գոնիայի եւ չրջակայքը բնակող ժողովուրդներէն, թրքերէն չխօսողներուն լեզուները կտրեցիք:

Ահա, ձեր այս բարբարոսութիւններուն պատճառաւ, «ցեղախումբէ մը՝ աշխարհակալ պետութիւն» մը մէջտեղ բերիք:

Բայց, հակառակ ձեր բարբարոսութիւններուն, մինչեւ 1915 թուականը, Անատոլիոյ վերջին չրջաններու բնակչութեան [ORHAN PAMUK-ին ալ ըսածին պէս] նուազագոյն կէսը՝ քրիստոնեայ էր:

Մինչդեռ 1923-ին, Անատոլիոյ ժողովուրդին հարիւրին հարիւրը իսլամ եղաւ:

1915-էն մինչեւ 1923 ի՞նչ եկաւ - անցաւ:



Հայերը, յոյները եւ ասորիները կ'ըսեն, որ «Թուրքերը մեզ ջարդեցին, ցեղասպանութեան ենթարկեցին»:

Մինչդեռ դուք՝ Թուրքերդ, ամէն բան կ'ուրանաք, եւ Հայկական ցեղասպանութեան համար՝ «Իբր թէ ցեղասպանութիւն» կ'ըսէք:

Բայց, «Արեւուն ճառագայթները ծեփելով չեն գոցուիր»:

Ի վերջոյ, ստիպուած պիտի ըլլաք՝ Հայկական ցեղասպանութիւնը ընդունելու:

Եւ հայ ազգէն ձեր բոլոր գողցածները ետ պիտի վերադարձնէք:

Բայց սա միջոցին ձեզի ամէնէն շատ վախցնող հարցը քրտական խնդիրն է:

Եւ այսօր Թուրքիա ըսուած հողերուն վրայ նուազագոյն 30 միլիոն քիւրտ կայ...

Եւ TAYYİP ERDOĞAN-ին վախ պատճառողը՝ 1915-ի ցեղասպանութեան նուրի մնացորդ Պոլսոյ 50 հազարի շուրջ հայերը եւ հազարի շուրջ յոյները չեն:

[Արդէն Պոլսոյ հայերը եւ յոյները, 1923-ի Լոզանի դաշնագրին համաձայն, իրենց լեզուն սորվելու իրաւունքը ունին]:

TAYYİP ERDOĞAN-ին բուն վախը, 30 միլիոննոց քիւրտ ազգն է:

Եւ քիւրտ ազգը՝ Թրքական ճնշումով, քրդական լեզուն սորվելու եւ քրդական լեզուն խօսելու իրաւունքը չունի:

Ահա եւրոպական ներկայացուցիչները՝ այս 30 միլիոննոց քիւրտ ազգին իրաւունքը կը փնտռեն:

Եւ ERDOĞAN այս քրդական խնդիրէն խուսափելու համար՝ անտրամաբանական նմանութիւններ կը կատարէ, եւ Անաթոլիոյ տեղացի ժողովուրդները եղող հայերը, յոյները եւ քիւրտները՝ վերջին տարիներուն դրամ չահելու համար Եւրոպա գացող Թուրքերուն կը նմանցնէ...

Արդէն եւրոպացիները, Եւրոպա ապրող Թուրքերուն՝ «Թրքերէն մի խօսիր չեն ըսեր»:

Միայն եւրոպացիները, Եւրոպա բնակող Թուրքերուն կ'ըսեն թէ՛

«Եթէ հոս պիտի ապրիս՝ ստիպուած ես տեղւոյն լեզուն սորվիլ»:

Բայց TAYYİP ERDOĞAN, այս իրողութիւնը կը փոխէ եւ «Եւրոպացիները՝ թուրքերուն իրենց լեզուն խօսելուն արգելք կ'ըլլան»-ի կը վերածէ:

Այս տրամաբանութենէ զուրկ վարչապետը կ'ուզէ, որ Եւրոպա գտնուող թուրք կիները, իր կնոջ նման, գլուխնին լաչակով ծածկեն:

Ան կ'ուզէ նախ, որ Եւրոպա բնակող բոլոր թուրքերը՝ իսլամական օրէնքներուն համեմատ ապրին, Եւրոպական լեզուն չսորվին, Եւրոպացիներուն չխառնուին եւ անոնցմէ հեռու կենան:

Այդ պատճառաւ կ'ըսենք, որ այս տրամաբանութեամբ տկար վարչապետը, Թուրքիոյ եւ նոյնիսկ աշխարհի գլուխը փորձանքի կը մատնէ:

Թիւ 121

«Նայիրի», 11 Ապրիլ 2006, Թիւ 253

### **ԹՈՒՐԷՒՈՅ ՄԷՅ**

**«ՔՐՏԱԿԱՆ ՀՐԱԲՈՒԽԸ» ԺԱՅԹՔԵԼ ՍԿՍԱԻ**

**ԹՈՒՐԷՒԱՆ ԶԻՐՏԻՍՏԱՆԻ ՊԻՏԻ ՎԵՐԱՇՈՒԻ**

7 Մարտ 2006 թուակիր «Նայիրի»-ի մէջ «Թուրքիան՝ Քիւրտիստանի պիտի վերածուի» ըսած էինք:

21 Մարտ 2006-ի՝ Ներուզի տօնէն ի վեր Թուրքիոյ հարաւարեւելեան նահանգներուն մէջ կատարուած եղելութիւնները, Թուրքիոյ Քիւրտիստանի վերածուիլ սկսելուն ազդանշանները կազմող TAM-TAM-ի ձայներն են:

Մեր այսօրուան գրութեամբ, վերջին օրերուն “Hürriyet” թերթին մէջ հրատարակուած եւ քիւրտերու հետ առնչութիւն

ունեցող գրութիւններուն մասին, մեր տպաւորութիւնները պիտի ջանանք տալ:

Մեր հասկցածը այն է, որ Թուրքիան «եռալ» սկսած է:

Եւ թրքական կառավարութիւնը չի գիտեր ի՞նչ ընել: Անորոշութեան մատնուած է:

Տիարպէքիրն ու ասոր շրջակայքը ապստամբական վիճակի մէջ են: Բազմաթիւ մահեր կան:

Բայց թրքական կառավարութիւնը, քրտական լայն խաւերուն մէջ հակազդեցութիւններ որպէսզի չստեղծուին, այս լուրերու հրատարակման արգելք դրած է:

Եթէ «Թրքական հին բռնակալութեան» շրջանը ըլլար, թրքական կառավարութիւնը, հայոց դէմ ըրածին պէս, քիւրտերուն ամբողջութեամբ կը ջարդէր: Եւ քրտական հարցը կը դադրէր գոյութիւն ունենալէ:

Բայց այսօր՝ վիճակները փոխուած են:

Առաջին պատճառը՝ ո՞վ է քիւրտն եւ ո՞վ է թուրքը-յայտնի չէ: Քիւրտերը, թուրքերուն նման, իսլամ են:

Երկրորդ՝ այսօր, թուրքերուն ձեռքը, 1915-ի նման, Առաջին համաշխարհային պատերազմին յատուկ պայմանները չկան:

Այդ պատճառաւ Թուրքիոյ վարչապետ Թայիպ Էրտողանը, ժամանակ չահելու համար, օր մը մեղմ եւ օր մըն ալ կարծր յայտարարութիւններ կը կատարէ:

Անցեալները Թ. Էրտողան կը յայտարարէր, թէ՛ «Մեր երկրին մէջ 30-ի մօտ ազգային ինքնութիւններ կան»: Այս ձեւով՝ թուրք վարչապետը [անհաւատալիօրէն] իրականութիւնները ըսած էր:

Բայց, քանի մը օր յետոյ, նոյն Էրտողանը «Մէկ դրօշակ, մէկ պետութիւն եւ մէկ ազգ» ըսելով Մուստաֆա Քեմալին ձարուութները կրկնեց:

Սակայն Էրտողանին 6 Ապրիլ 2006-ին քիւրտերուն ուղարկած պատգամը՝ շատ մեծ խաբէութիւն է:

Նայեցէք, թէ թուրք վարչապետը ի՞նչ ըսած է քիւրտերուն.—

«Զէնքը կը ձգես, կուգաս եւ սեղանի շուրջ կը խօսիս»:

Եթէ քիւրտերը սեղան գան, էրտողանը արդեօք ի՞նչ պիտի ըսէ անոնց:

Քիւրտերուն՝ քրտերէն խօսելու, քրտերէն հրատարակութիւն կատարելու եւ քրտերէն դաստիարակութիւն ջամբելու իրաւունք պիտի տա՞յ:

Քիւրտերուն՝ իբր ուրոյն ազգ ապրելու իրաւունքը պիտի ճանչնա՞յ: Թէ՞, 1908թ. Թալեաթ փաշային հայերուն ըրածին նման՝ քիւրտերը պիտի քնացնէ:

Վերջին օրերուն Թուրքիոյ մէջ կատարուած դէպքերը կ'ապացուցանեն, որ քիւրտերը, դիւրահաւատ հայերուն պէս, դիւրութեամբ խաբուելու նպատակ չունին:

Քանի մը օրեր առաջ քիւրտերը, իրենց «Գոգթէյլ Մոլոթոֆներով» Պոլսոյ մէջ սարսափի մատնեցին ժողովուրդը:

Նոյն այդ օրերուն՝ քիւրտերու կողմէ Տիարպէքիւրի մէջ կատարուած արիւնոտ ցոյցերը նախանշաններ են, որ այդ չրջանը Անատոլիոյ մէջի Քիւրտիստանին մայրաքաղաքը կրնայ դառնալ:

Բայց, 5 Ապրիլ 2006 թուակիր «Հիւրրիյէթի» մէջ հրատարակուած սա լուրը, շատ խոր նշանակութիւն ունի:

Այս թերթին 5 Ապրիլ 2006 թուակիրին 10-րդ էջին վրայ հրատարակուած լուրը նոյնութեամբ կը ներկայացնենք.-

«Atatürk-ը մահապատիժի ենթարկեցին»:

«Առջի օր, Մարտինի NUSAYBİN գաւառակին մէջ P.K.K.-ի կողմնակիցները Atatürk-ի կիսանդրին վիզէն պարան անցընելով, գայն մահապատիժի ենթարկելու նման, Ենի Շէհիւրի թաղին մէջէն անցնող "Çağdaş" գետակի վրայի "Alman" կամուրջէն վար կախած են»:

Կրնա՞ք պատկերացնել- թուրք պետութեան հիմնադիրը, Թուրքիոյ «Յաւիտենական դեկավար» Աթաթիւրքը, քիւրտերուն դէմ իր կատարած ջարդերուն համար, իբր խորհրդանշական պատիժ, գինք այսօրուան Թուրքիոյ հողերուն վրայ մահապատիժի կ'ենթարկեն, կամուրջէն վար «կախելով»:

Դուք՝ թուրքերդ, 1915-ին հայ ազգը ցեղասպանութեան ենթարկող Թալեաթ փաշան Պերլինի մէջ, հայերուն կողմէ մահապատիժի ենթարկուելուն դէմ բողոքելու համար, Մարտ 2006-ին Պերլինի մէջ ցոյցեր կազմակերպեցիք:

Արդեօք դուք, Մարտ 2006-ին Nusaybin-ի մէջ, քիւրտ ազգին դէմ կատարուած ջարդերուն իբր փոխադարձութիւն, Աթաթիւրքը խորհրդանշաբար մահապատիժի ենթարկող քիւրտերուն դէմ ի՞նչ պիտի կարենաք ընել:

Թիւ 122

«Նայիրի», 25 Ապրիլ 2006, թիւ 254

## 24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ՝

### ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

### 91-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ ՊԱՏԵՂՈՒԹԵԱՄԲ

## ԱՆԵՇՔԱԳԻՐ - ԹԻՒ 1

### ԳՈՂՅՈՒԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Դուք՝ թուրքերդ, 1915-էն առաջուան տարիներուն, հայերուն մասին «Յամառ եւ տխմար հայեր» ասացուածքը կը գործածէիք:

Իրապէս ալ, հայերը շատ անխելք մարդիկ են:

Հայկական ցեղասպանութեան համար 91 տարիէ ի վեր նոյն լոգունգը կը գործածեն ու կը կենան.

«24 Ապրիլ 1915-ի ցեղասպանութեան ընթացքին, թուրքերը մէկուկէս միլիոն հայեր սպաննեցին»:

Հայերը, արդեօք, ո՞ր վիճակագրութեան վրայ յենելով, այս թուանշանը գրեր են:

Ասկէ 2050 տարիներ առաջ Հայաստանի բնակչութիւնը, Մեծն Տիգրանի չրջանին, երեք միլիոն էր:

Այս թուականներուն երեք միլիոնէ աւելի բնակչութիւն ունեցող պետութիւնները, մատի վրայ կը համրուէին:

2000 տարիներ յետոյ, 1915 թուականին, Արեւելեան Անաթոլիոյ մէջ Հայաստան ըսուած հողերուն վրայ ապրող հայերուն թիւը [եթէ հայերը, 11-րդ դարէն սկսեալ, թուրքերուն խժոժութեանց եւ ջարդերուն չենթարկուէին] նուազագոյն 30 միլիոնի պիտի հասնէր:

Եւ մասնաւորապէս, դարեր տեւողութեամբ շարունակուող թրքական վայրագութիւնները՝ մաս մը հայերուն իրենք հայրենիքը լքելով գաղթելուն պատճառ եղան:

Բայց այս գաղթող հայերը, աւելի շատ քաղաքները բնակողներ էին:

Գիւղերուն մէջ բնակող հայերուն մեծ մասը, հակառակ թրքական ջարդերուն, հաստատ մնացին, եւ իրենց հողերը չլքեցին:

Այդ պատճառաւ կ'ըսենք, որ 1915-ի ցեղասպանութեան ընթացքին թուրքերուն միայն մէկուկէս միլիոն հայեր սպաննած ըլլալը ըսելը՝ շատ պակասաւոր թուանշան-գնահատական մըն է:

Թուրքերը 1915-ի ցեղասպանութեան շրջանին, պատմութեան ծանօթ թուականներէն ի վեր իրենց հայրենիքը եղող Արեւելեան Անաթոլիոյ մէջ, Հայաստանի հողերուն վրայ ապրող հայ բնակչութեան առ նուազն երեք միլիոնը սպաննեցին:

\* \* \*

Բայց, մեր համոզումով, հայերը սպաննուողներուն թիւը նուազ յայտարարելէ աւելի կարեւոր սխալ մը կը գործեն, որովհետեւ թուրքերը, 1915-ի ցեղասպանութեան ընթացքին, միայն երեք միլիոն հայեր սպաննելով չգոհացան:

Թուրքերը՝ Արեւելեան Անաթոլիոյ մէջ, 4000 տարուան հայկական հողերուն վրայ ապրող բոլոր հայերը սպաննեցին [այսօրուան բնորոշումով՝ ցեղաբանական մաքրագործում կատարե-

ցին]: Բայց ամէնէն կարելորը՝ թուրքերը, հայերէն մաքրագործուած հողերուն վրայ, նոր թուրքիա մը ստեղծեցին:

Այսինքն՝ աւելի պարզ խօսքով՝ «թուրքերը հայերուն հայրենիքը գողցան»:

Եւ, յամառ եւ տխմար հայերը, 91 տարիներէ ի վեր՝ «թուրքերը մէկուկէս միլիոն հայեր սպաննեցին» լողունգը կը հառաչեն տեւարար:

Բայց, իրենց գողցուած հայրենիքի մասին չեն արտայայտուիր:

Մարդիկ կը մեռնին, բայց իրենց տեղը նոր սերունդներ կը հասնին:

Բայց եթէ հայրենիքը կորսուի՝ ազգը բոլորովին կը մեռնի:

Որովհետեւ, առանց հայրենի հողի՝ ազգ մը չի կրնար գոյատեւել:

Սփիւռքի մէջ ապրող, հայրենիք չունեցող ազգերը, ի վերջոյ կորսուելու դատապարտուած են:

Ահա՛, այս իրականութիւնը, չհասկցա՛ն...

Յամառ եւ տխմար հայերը:

Թիւ 123

«Նայիրի», 9 Մայիս 2006, Թիւ 255

## 24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ ԹՈՒՐԷՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 91-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՊԱՏԵՇՈՒԹԵԱՄԲ

### ԱՆԵՇՔԱԳԻՐ - ԹԻՒ 2

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԸՐԵ՛Ք ՃԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐԷՐ - ԱՍԿԷ ՅԵՏՈՅ ԵՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԵՋ

### ԵԹԷ DOĞU PERİNÇEK-Ի ՆՄԱՆ

### «ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՏ Է» ԸՍԵՔ՝ ԲԱՆՏ ԿԸ ՄՏԵՔ

Ծագումով քիւրտ, թուրք կամ հայ ըլլալը անյայտ, բայց թրքական գաղտնի կազմակերպութեան MIT-ին մէկ գործակալը ըլլալը կասկած չվերցնող Doğu Perinçek-ը, Լոզանի դաշնագրին 82-րդ տարեդարձին պատեհութեամբ Զուլիցերիա գացած էր եւ Յուլիս 2005-ին, Լոզանի մէջ կատարած յայտարարութեան ընթացքին, «Հայկական ցեղասպանութիւնը սուտ է» ըսած էր:

Եւ զուլիցերիական պետութիւնը, Հայկական ցեղասպանութիւնը ճանչցած երկիր մ'ըլլալով, զուլիցերիական դատարանը 30 Ապրիլ 2006-ին, Doğu Perinçek-ը 6 ամիս բանտարկութեան դատապարտեց:

Ասկէ յետոյ, եթէ Տոզու Փերինչէքը Զուլիցերիա գայ՝ կը բանտարկուի:

Ֆրանսական զոյգ խորհրդարաններն [Օերակոյտ եւ Երեսփոխանական ժողով], 18 Մայիս 2006-ին որոշում պիտի տան, եւ Հայկական ցեղասպանութիւնը ուրացողները պատիժի պիտի ենթարկուին:

Այս «Վտանգին» դէմ, "HÜRRİYET" թերթի յօդուածագիրներէն M. Ali Birand, 5 Մայիս 2006 թուակիր իր յօդուածին



մէջ Ֆրանսայի դէմ դասականացած թրքական սպառնալիքներ կ'արձակէ գրելով.

«Եթէ Ֆրանսան այս օրէնքը վաւերացնէ՝ միլիառաւոր EUROS, կը կորսնցնէ եղեր»:

Եւ *M. Ali Birand* իր գրութեան մէջ հաշիւներ ընելով կ'ըսէ. «Թուրքիան՝ Ֆրանսայէն ապրանք գնելը պիտի դադրեցնէ, եւ Ֆրանսան այս պատճառաւ 9 միլիառ Euroս վնաս պիտի ընէ»:

Արդարութիւն ըսուած «բանը» լսած էինք, որ դրամով կրնայ գնուիլ:

Բայց առաջին անգամ ըլլալով թերթի մը մէջ, այն ալ թրքական թերթի մը մէջ կը տեսնենք, թէ արդարութիւնը ծախու առնելու համար, միլիառաւոր EUROS-ներով սպառնալիքներ կը կատարուին:

... Թուրքեր, յայտնի է, որ եւրոպական պետութիւններուն այս օրէնքներով «չատ գէջ ծուղակը ինկաք»:

Բայց յարգելի *M. Ali Birand*, դուն քիթիդ տակի իրականութիւնները անգամ կարող չես տեսնելու:

Ֆրանսայի դէմ սպառնալիքները կատարած "Hürriyet" թերթին 5 Մայիս թիւին 11-րդ էջին մէջ քու աշխատակիցդ՝ *Tufan Türenç*-ը թուանշաններով կ'ապացուցանէ, թէ Թուրքիան այսօր սնանկութեան մատնուած է:

*Tufan Türenç*-ին գրածին համեմատ «Թուրքիոյ արտաքին պարտքը, 3 նոյեմբեր 2003-ին՝ 90 միլիառ տոլար էր»:

«Մինչդեռ այսօր, Թուրքիոյ արտաքին պարտքը՝ 200 միլիառ տոլարի բարձրացած է»:

«Եւ աղքատութեան սահմանը երեք տարուան ընթացքին՝ հարիւրին 49-ը աւելցած է»:

Յարգելի *M. Ali Birand*, դուն, Ֆրանսայի դէմ, միլիառաւոր տոլարներու սպառնալիքներ կատարելու տեղ, գնայ եւ քիչ մը Թուրքիոյ պարտքերուն նայէ:

Անպայման թրքերէն լեզուին շատ ծանօթ ասացուածքը գիտես՝

«Ինքը օգնութեան կարօտ ծեր մըն է, ալ ո՛ր մնաց, որ երթայ ուրիշին օգնէ»:

Թիւ 124

«Նայիրի», 23 Մայիս 2006, Թիւ 256

**24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ՝**

**ԹՈՒՐԷՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ ՀԱՅՎԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
91-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՊԱՏԵՂՈՒԹԵԱՄԲ**

**ԱՆԵՇՔԱԳԻՐ - ԹԻՒ 3**

**ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԷՐՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ**

**ՇԱ՛Տ ԱՊՐԻ ՆՈՐ ՄԻԱՅԵԱԼ ՔՐՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ**

Ինչե՛ր կը պատահին Թուրքիոյ մէջ: Անգարայի պետական ատեանը արիւնով ողողուեցաւ:

“Cumhuriyet” Թերթը 3 անգամ ուսմբային յարձակման ենթարկուեցաւ:

Դե՛՛ն՝ սպասեցէք... Այս՝ տակաւին «գործին» սկզբնաւորութիւնն է...

19 Մայիս 2006 Թուակիր Թրքական Թերթերուն վերնագիրները՝ 2 օր առաջ սպաննուած պետական ատեանի դատաւոր Mustafa Yücel Özbilgin-ին յուղարկաւորութեան մասին գրութիւններ են...

18 Մայիս 2006-ին, Փրանսական Ազգ. Ժողովին մէջ, Հայկական ցեղասպանութիւնը ուրացողները պատժելու օրինագիծին քննարկման յետաձգուած ըլլալու լուրը, Թրքական Թերթերուն մէջ իբր երկրորդական եղելութիւն տրուեցաւ:

19 Մայիս 2006 Թուակիր «Hürriyet» Թերթը, այս լուրը իր առաջին էջին ամէնէն վարի մասին մէջ փոքր վերտառութեամբ տուած է՝ «Փարիզը՝ օրէնքը «մթերանոց» դրաւ» ըսելով:

Շատ մի՛ ուրախանաք, Թուրքե՛ր...

2001 Թուականին Զուլիցերիոյ Ազգային Ժողովը, զուլիցերիացի երեսփոխան Josef Zisyadis-ին առաջարկած Հայկական

ցեղասպանութիւնը ճանչնալու օրինագիծը, միայն քանի մը քուէի տարբերութեամբ մերժած էր:

Բայց միջոց մը ետք, զուիցերիական Ազգային ժողովը, Հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանչցաւ: Այդ պատճառաւ կ'ըսենք, որ շատ չուրախանաք, ցեղասպան թուրքեր: Ֆրանսան ալ, միջոց մը ետք, Հայկական ցեղասպանութիւնը ուրացողները պատժող օրէնքը պիտի ընդունի:

Այս պարագան դուք ալ գիտէք արդէն...

Բայց, ձեզի համար, ներկայի ամէնէն կարելոր հարցը այսօր, քրտական խնդիրն է:

1990-ի իրաքեան պատերազմէն ի վեր, Միացեալ ազգերու որոշումով, Հիւսիսային Իրաքի մէջ քրտական պետութիւն մը հիմնուած է: Եւ այս՝ իրաքեան Գիւրտիստանը՝ այսօրուան իրաքեան պատերազմին մէջ ամերիկացիներուն ամենաչատ վստահած դաշնակիցն է...

Եւ դուք՝ թուրքերդ, շատ փորձեցիք, որ այս քրտական պետութիւնը մէջտեղէն վերցնէք:

Եւ Հիւսիսային Իրաք մտնել աշխատեցաք՝ իբր թէ այդ տեղի թուրքամէնները պաշտպանելու համար:

Բայց, ամէն անգամուան պէս ալ, ամերիկացիները արգելք եղան ձեզի...

... Մինչդեռ այսօր, թուրքիոյ ներքին վիճակը շատ խառնակ է:

Արեւելքի մէջ քիւրտ մարտիկները, թրքական ուժերուն վրայ տեւական յարձակումներ կը գործեն, եւ ամէն օր մեծ թիւով թուրք զինուորներ զոհ կ'երթան քրտական փամփուշտներուն եւ ականներուն:

Հարաւարեւելեան Անաթոլիոյ քաղաքներուն մէջ, ժողովուրդը յարատեւ խռով վիճակի մէջ է:

Եւ Անգարայի կեդրոնը, իսլամական մարտիկներ, պետական ատեանին վրայ յարձակում կը գործեն: Դատաւոր մը կ'սպաննուի: Չորս դատաւորներ ալ ծանր կը վիրաւորուին:

Աթաթիւրքեան *Laïque*-ութեան խորհրդանիշը եղող Պոլսոյ «*Cumhuriyet*» թերթին վրայ, երեք անգամ ումբերով յար-

ձակում կը գործուի: Այս դէպքերը պատրուակելով, *A.K.P.*-ի *Tayyip Erdogan*-ի կառավարութիւնը վար առնել ուզողներ կան:

19 Մայիս 2006 թուակիր «*Hürriyet*» թերթի յօդուածագիր *Tufan Türenç*-ի վերնագիրը կը ծանուցանէ. «Թուրքիան, այս իշխանութենէն ձերբազատուելու ստիպողութեան տակ է»:

Բայց՝ ինչպէ՞ս: *Tayyip Erdoğan*-ի *A.K.P.* կուսակցութիւնը, ժողովուրդին քուէներով իշխանութեան եկաւ:

Հիմա, *Democrate* ձեւացող Թուրքիոյ մէջ *Tayyip Erdoğan*-ին *A.K.P.*-ի իշխանութիւնը զինուորական հարուածով վար առնելը, շատ դժուար հարց է: Որովհետեւ Ամերիկան չի ձգեր:

50 տարիներէ ի վեր Թուրքիոյ մէջ զինուորական պետական հարուածներ կատարել տուողները ամերիկեան Սի. Այ. էյ. կազմակերպութիւնն էր: 27 Մայիս 1960-ի յեղափոխութիւնը, Քենան էվրէնի զինուորական հարուածը, բոլորովին Սի. Այ. էյ.-ի ստեղծագործութիւնն էր: Մինչդեռ այսօր Ամերիկան, Թուրքիոյ մէջ զինուորականներուն իշխանութեան գալը չ'ուզեր: Ինչո՞ւ՝ կը հարցնէք:

Որովհետեւ ներկայ Թուրքիան, Ամերիկայի անփոխարինելի դաշնակիցը չէ այլեւս: Եւ Ամերիկան Թուրքիոյ նախա-յարձակ եւ ծաւալապաշտ միտումներուն տեղեակ է: Ծանօթ ասացուածքը կ'ըսէ. «Աշխարհակալ իշխանութիւններն իրենց մրցակից ըլլալու հակամէտ պետութիւնները կը բաժանեն, որ անոնք, ապագային, վտանգաւոր չըլլան իրենց համար»: Այսօրուան կացութեան մէջ Թուրքիոյ ապագան շատ փայլուն չէ: Թուրքիան «ներսէն եւ դուրսէն», ծայրայեղ իսլամականներուն, քիւրտերուն ու ինչ ըլլալը անծանօթ ուժերուն տեւական յարձակումներուն պիտի ենթարկուի:

Այդ պատճառաւ կ'ըսենք.— «Ողորմութիւն՝ Թուրքիոյ Հանրապետութեան: Շատ ապրի նոր Միացեալ Քրտական Հանրապետութիւնը»:

Թիւ 125

«Նայիրի», 6 Յունիս 2006, Թիւ 257

## 24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ՝

### ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 91-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՊԱՏԵՇՈՒԹԵԱՄԲ

#### ԱՆԵՇՔԱԳԻՐ - ԹԻՒ 4

#### ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԿԻՐԱՐԿԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՐԵՆՑ ՆԵՐԿԱՅԻ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՐՅԸ ԵՂՈՂ ՔՐՏԱԿԱՆ ԽՆԴՐԻՆ ՀԱՆՂԵՊ

Անհերքելի իրականութիւն մըն է, որ 1915-ի Հայկական ցեղասպանութեան մէջ թուրքերը՝ քիւրտերուն դահիճի պարտականութիւն կատարել տուին:

Այսինքն՝ 1915-ի Հայկական ցեղասպանութեան որոշումը տուողը՝ օսմանեան պետութեան մէջ իշխանութիւնը ձեռք անցուցած «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան կառավարութեան ներքին գործոց նախարար Թալեաթ փաշան էր:

Բայց Անաթոլիոյ քաղաքներուն եւ գիւղաքաղաքներուն մէջ աքսորի համար ճամբայ հանուած խեղճ հայերու կարաւաններուն վրայ յարձակելով զանոնք սպաննողները՝ մեծամասնութեամբ քիւրտեր էին:

1915-ին Անաթոլիոյ հողերուն վրայ սպաննուած հայերուն հարստութիւնները սեփականացնողները, մեծամասնութեամբ քիւրտեր էին:

Արեւմտեան Հայաստան կոչուող Արեւելեան Անաթոլիոյ նահանգներուն մէջ, 1915-ին սպաննուած հայերուն հողերուն վրայ տեղաւորուողները՝ ամբողջութեամբ քիւրտեր էին:

Այս իրականութիւնները գիտցող այսօրուան թրքական պետութեան ղեկավարները, շատ վտանգաւոր ըլլալ սկսող քրտական հարցին դէմ, հայկական «քարտը» խաղալ կը ջանան:

Եւ թուրքերը, ատենէ մը ի վեր, հայերուն դէմ շատ բարեացական քաղաքականութիւն մը վարել սկսան:

Թուրքերը, վերջին շրջաններուն, Սփիւռքի հայերուն իրենց հայրենիքը եղող Արեւմտեան Անաթոլիա այցելութիւնը՝ զանազան ձեւերով քաջալերել սկսան:

Հազար ու մէկ եկեղեցիներու քաղաք, հայոց պատմական մայրաքաղաքը եղող Անին՝ թուրքերը վերջերս [իբր թէ] նորոգել սկսան:

Վանայ լիճին վրայ գտնուող Ախթամար կղզիին մէջի հայկական եկեղեցին պոլսահայ ճարտարապետները վերանորոգել սկսան:

Թուրքիոյ վարչապետ TAYYIP ERDOĞAN հայաստանի նախագահ Քոչարեանին պաշտօնական նամակ մը կ'ուղարկէ եւ համաձայնելու համար բանակցութիւններու սկսիլ կ'առաջարկէ:

Թուրքերուն, հայոց դէմ վերջին «բարեկամական» արտայայտութիւնը՝ 2006-ի Eurovision-ի երգի մրցումին թուրքերու կողմէ հայաստանը ներկայացնող հայ երգիչ Անտրէյին 10 կէտ տուած ըլլալնին է:

Թուրքերուն հայոց դէմ գործադրած այս «բարեկամական» քաղաքականութեան բուն պատճառը՝ հայերը քիւրտերուն դէմ հանելու հեռանկարն է:

Այսինքն՝ Արեւելեան Անաթոլիոյ հայկական հողերուն վրայ քրտական պետութիւն մը ստեղծել ուզող քիւրտերուն դէմ հայերը գրգռել:

Եւ թուրք-քրտական պայքարը՝ քիւրտ-հայկական պայքարի վերածել:

Թուրքերուն այս նենգամիտ քաղաքականութիւնը կը յաջողի՞ արդեօք: Չենք կրնար գիտնալ:

Շատ բնական է, որ թուրքերը, քիւրտերուն Արեւելեան Անաթոլիոյ մէջ քրտական պետութիւն մը ստեղծելուն արգելք ըլլալու համար, բոլոր միջոցներու պիտի դիմեն:

Բայց, ի վերջոյ, քիւրտերը յաղթական պիտի ելլեն:

Որովհետեւ Արեւմտեան Հայաստան կոչուող Արեւելեան Անաթոլիոյ հողերուն վրայ այսօր ապրող ժողովուրդին մեծամասնութիւնը քիւրտերն են:

Եւ այսօրուան աշխարհի քաղաքական իրավիճակներուն համեմատ՝ երկրի մը տէրը՝ այդ երկրին հողերուն վրայ ապրող ժողովուրդն է:

Այդ պատճառաւ կ'ըսենք, որ Արեւելեան Անաթոլիոյ մէջ ապրող քիւրտերը, ի վերջոյ այդտեղ քրտական պետութիւն մը պիտի հիմնեն...

...Ո՛վ ցեղասպան թուրքեր, եթէ 1915-ին հայերը ցեղասպանութեան չենթարկէիք՝ հայոց շնորհիւ Արեւելեան Անաթոլիոյ մէջ օսմանեան պետութիւնը կրնար գոյատեւել:

Բայց դուք հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցիք:

Եւ ձեր կատարած ցեղասպանութեան պատիժը պիտի կրէք:

Այդ պատճառաւ կ'ըսենք. «Ողորմեցէ՛ք թուրքիոյ Հանրապետութեան: Շահ ապրի նոր Միացեալ Քրտական Հանրապետութիւնը»:

Թիւ 126

«Նայիրի», 20 Յունիս 2006, թիւ 258

## **ՄԻՋԻՆ ԱՐԵՒԷԼԻ ՄԷՅ ՓԱՅԼՈՂ ՆՈՐ ԱՍՏՂ ՄԸ՝ ԻՐԱՔԻ ՀԻՄՆՍԸ ՉՏՆՈՒՈՂ ՔՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ**

Ամերիկացիներուն 1990-ին շղթայագերծած Իրաքի առաջին պատերազմին, Իրաքի հիւսիսային մասին մէջ [իբր թէ] Միացեալ ազգերու որոշումով [իրականութեան մէջ սիոնիստներուն փափաքովը] քրտական չրջան մը ստեղծուած էր:

Սատտամ Հիւսէյնի կառավարութեան այս չրջանը մտնելուն առջեւ արգելք դրուած էր:

Միացեալ ազգերուն այս որոշումը՝ իրականութեան մէջ Հիւսիսային Իրաքի մէջ քրտական պետութիւն մը ստեղծելու առաջին քայլն էր...

1990 թ. մինչեւ այսօր՝ 2006 թ., իրաքեան Քիւրտիստանի շրջանին մէջ ի՞նչ է կացութիւնը: Այսօր՝ 16 տարիներ յետոյ, իրաքեան քրտական շրջանը ամէն օր աւելի բարգաւաճող քրտական իսկական պետութեան մը վերածուեցաւ:

Քրտական Ազգային ժողովը, քրտական կառավարութիւնով, քրտական բանակով եւ քրտական դրամով իսկական պետութիւն մը եղաւ:

\* \* \*

Այսօր, Իրաքի այս քրտական պետութիւնը՝ Քարիւղի օրը կը տօնէ: Ինչո՞ւ:

Որովհետեւ իրաքեան Քիւրտիստանի մէջ [Թրքական սահմանէն 15 քլմ. հեռաւորութեան վրայ] TAVKE-ի շրջանը, նոր-վեգական D.N.O. քարիւղի ընկերութիւնը հարիւր միլիոն տակառ [պահեստի քանակութեամբ] քարիւղ գտած եւ արդէն արտադրել սկսած է:

Քիւրտերը ահա՛, այս քարիւղին արտադրութիւնը կը տօնեն:

Քիւրտիստանի քարիւղի նախարարը՝ DR. HAVRAMI-ն, քրտական քարիւղի եկամուտին քրտական կառավարութեան կողմէ չահագործուիլը յայտարարեց:

Եւ Քիւրտիստանի մէջ, քարիւղի նոր հորեր գտնելու համար, եւրոպական քարիւղի ընկերութիւններուն հետ նոր պայմանագրութիւններու ստորագրուած ըլլալուն լուրը տուաւ:

Այս որոշումները իրաքեան Քիւրտիստանին դէպի ինքնավարութիւն յառաջանալուն փաստերն են:

Բոլորին ծանօթ է, թէ քարիւղի եկամուտը պետութեան մը տնտեսական ինքնավարութիւնը ըսել է:

Եւ իրաքեան Քիւրտիստանին իր ինքնավարութիւնը հռչակելը, ասկէ յետոյ, պարզ ձեւակերպութեան հարց մը կը դառնայ:



Տեսնուած իրականութիւնը այն է, որ ամերիկացիներուն [աւելի ճիշդ ամերիկեան-սիոնական լօպիին] նոր Միջին Արեւելք մը ստեղծելու ծրագիրը՝ ժամացոյցի ճշգրտութեամբ կը յառաջանայ:

Այդ պատճառաւ կ'ըսենք, թէ՛ Միջին Արեւելքի մէջ նոր աստղ մը կը ծնի՝ Իրաքին հիւսիսը, քրտական պետութիւնը նոր գտնուող քարիւղի իր հանքերով, Միջին Արեւելքի մէջ մեծ դեր մը պիտի սկսի խաղալ:

Եւ իրաքեան Քիւրտիստանի հողերը՝ աշխարհի քարիւղի ամենամեծ պահեստներուն շրջանը եղող՝ MOUSUL - KERKUK - TAVKE-ի եռանկիւնին մէջ կը գտնուին:

Եւ քարիւղով հարուստ այս հանքերուն տեղը եղող իրաքեան Քիւրտիստանը՝ արարներուն եւ թուրքերուն կռնակը գտնուող, ամերիկեան գործակալ պետութեան մը դերը պիտի կատարէ:

Ահա, Ամերիկայի հրէական-սիոնական լօպիին, Միջին Արեւելքի ծրագիրներուն մէջ, թրքական եւ արաբական վտանգին դէմ ստեղծուող նոր զէնքը՝ Միջին Արեւելքի նոր աստղը, միացեալ եւ հարուստ քրտական պետութիւնը:

Թիւ 127

«Նայիրի», 4 Յուլիս 2006, թիւ 259

## **ՄԵՐ ԱՅՍ ՎՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՉՕՆԵՆՔ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՔԻՒՐՏ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԻ ՄԸ ՀԵՏ ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ**

Վերջին տարիներուն Փարիզի մէջ քիւրտ հայրենասէրի մը ծանօթացանք:

Պոլսոյ ճարտարագիտական վարժարանէն շրջանաւարտ մըն էր: Եւ հիմա Փարիզի մէջ կ'ապրէր ուրիշ գործով մը:

Պոլսոյ մէջ ձախակողմեան երիտասարդներուն կատարած շարժումներուն մասնակից էր... Եւ իսկական ձախակողմեան մարտիկ մը:

Բայց յետոյ, թրքական ոստիկանութեան վայրագութեան ենթարկուած ըլլալուն՝ ստիպողաբար Պոլսէն հեռացեր եւ Ֆրանսա ապաստաներ է:

Պոլիս ապրած տարիներուն, հայ ձախակողմեան երիտասարդներուն հետ սերտ կապեր հաստատեր է: Ձախակողմեան հայ մարտիկ՝ Կարալիս Ալթընօղլուին եւ անոր ընկերներուն շատ լաւ ծանօթ էր:

Պոլսոյ գրողներէն Մկրտիչ Մարկոսեանին հիացող մըն էր, եւ անոր գիրքերէն «GÁVUR MAHALLESİ» եւ «SÖYLE MARGOS NERELİSEN» մէջ գրուածները գոց գիտէր:

Բայց նոյն ատեն տեղեակ էր՝ 1915թ. քիւրտերուն, թուրքերուն գործիքը ըլլալով՝ հայոց դէմ կատարած վայրագութեան:

Այս խօսակցութեան ընթացքին ան մեզի հետեւեալը ըսաւ.

«Դարերէ ի վեր յոյները, հայերը եւ քիւրտերը խճանկար կառոյց մը գոյացուցած ըլլալով, միասին կ'ապրէին: Յետոյ թուրքերը, մեր միջեւ երկպառակութիւն մուծեցին...

Այս խճանկար կառոյցին խորտակման պատճառ եղողներուն Աստուած պատիժը տայ»:

\* \* \*

Ասկէ քանի մը ամիս առաջ էր: Այս քիւրտ հայրենասէրը մեզի ըսաւ, թէ՛ իրաքեան Քիւրտիստանը տեսնելու պիտի երթայ... վերադարձին զինք տեսանք:

Ճամբորդութենէն շատ գոհ մնացած էր... եւ մեզի երկարօրէն պատմեց Քիւրտիստանի մէջ իր տեսածները. «Փարիզէն Գերմանիա գացի: Գերմանական քաղաքներէն դէպի իրաքեան Քիւրտիստան մեկնող օդանաւային ուղիղ թռիչքներ կան:

Գերմանիոյ մէջ վեց միլիոն թուրք կայ կ'ըսեն: Բայց այս վեց միլիոն թուրք ըսուած մարդոց կէսը քիւրտ է:

Այդ պատճառաւ Գերմանիայէն դէպի իրաքեան Քիւրտիստան ճամբորդող շատ քիւրտեր կան:

Ես այլ Միւնիխէն մեկնող օդանաւը նստայ: Եւ օդանաւը դէպի իրաքեան Քիւրտիստանի «SÜLEYMANIYE» քաղաքը իջաւ:

Օդանաւէն իջնելէ քիչ յետոյ իսկական Քիւրտիստան եկած ըլլալս հասկցայ:

Ամէն բան քիւրտերուն ձեռքն էր: Եւ քրտական պետութիւնը «DE FACTO» կազմուած էր:

Ջինուորները, ոստիկանները, պաշտօնեաները եւ մանաւանդ ժողովուրդը - բոլորն այլ քիւրտ էին:

Եւ շատ մեծ թիւով շինարարական աշխատանք կը կատարուէր:

Կրնամ ըսել, որ ամբողջ իրաքեան Քիւրտիստանը շինարարական հրապարակի մը վերածուած է:

Եւ մօտ ատենէն պիտի տեսնէք՝ բոլորովին արդիական Քիւրտիստան մը պիտի հիմնուի:

Եւ զիս ամէնէն շատ տպաւորող երեւոյթը՝ Քիւրտիստանի մէջ տիրող կարգապահութիւնը եղաւ:

Ամբողջ Քիւրտիստանի ժողովուրդը, իրենց հայրենիքին ապահովութեան համար կ'աշխատի: Ամէն մէկ քիւրտ, զինուորի մը, ապահովութեան պաշտօնեայի պարտականութիւնը կը կատարէ:

Եւ մանաւանդ ուշադրութիւնս գրաւեց երեւոյթ մը: Ամերիկացիները Քիւրտիստանի մէջ, ամէն կողմ, առանց զէնքի կը պտըտէին:

Ամերիկացիները, Քիւրտիստանի մէջ, ինքզինքնին բոլորովին ապահովութեան մէջ կ'զգան:

Եւ ամէնէն կարեւորը՝ քիւրտ զինուորները, որոնք ամերիկացիներու պէս հազած են, իսրայէլացի սպաներու կողմէ կը մարզուին:

Իսրայէլին Քիւրտիստանի թիկունք կանգնելը զիս շատ ուրախացուց:

Եւ իսկապէս հաւատացի, որ ասկէ յետոյ, թուրքերը Քիւրտիստանի վրայ չեն կրնար արշաւել... Եւ որոշում տուի՝ պիտի

մեկնիմ Ֆրանսայէն եւ իրաքեան Քիւրտիստան պիտի երթամ: Եւ, վերջնականապէս, հոն պիտի հաստատուիմ:

Եւ քիւրտ մը ըլլալով, քիւրտ ճարտարագէտ մը ըլլալով, հայրենիքիս վերականգնումին օգնելը, ինծի համար պարտականութիւն եւ, նոյն ատեն, հաճոյք մը կը նկատեմ»:

Թիւ 128

«Նայիրի», 18 Յուլիս 2006, Թիւ 260

### **ՀԱՅ ԱՉՓԻՆ ՅԵՂԱՍՊԱՆԸ ԵՂՈՂ ԹՈՒՐԷՐՈՒՆ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՉ ՀԱՄԱՏԱՐՄԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՂ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊԷՅ ՏԱՏԵԱՆԻՆ ԱՐԺԱՆԻ ԵՂԱԾ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ**

Թուրքիոյ մէջ առաջին վառօդի գործարանը հիմնող Առաքել Տատեան ընտանիքի երրորդ զաւակը եղող Յովհաննէս Տատեանը ո՞վ է:

Յովհաննէս Տատեանը՝ 1798թ., Պոլսոյ մաս կազմող «Քիւչիւք Չէքմէճէ» լիճին հիւսիսային ափին վրայի Այա-Եօրկի գիւղին մօտ, վառօդի գործարանին տնօրէնը եղող Տատեաններուն ապարանքին մէջ ծնաւ:

Առաջին ուսումը՝ Այա-Եօրկի գիւղի Յունական վարժարանին մէջ կ'ստանայ:

Յետոյ, Տատեան ընտանիքին անձնական ուսուցիչներով, չարունակեց ուսումը: Փոքր տարիքէն մեքենաներ կազմելու մեծ յատկութիւն ունէր:

1832թ. մահացող եղբորը՝ Սիմոն Տատեանին տեղը՝ սուլթան Մահմուդ II-ի հրովարտակով, Այա-Եօրկի վառօդի գործարանին տնօրէնութեան կը նշանակուի:

Յովհաննէս Պէյ Տատեանին կեանքը, օսմանեան պետութեան արդիականացման ծառայելով անցած է:

1840թ. Պուրսայի մէջ մետաքսի գործարանը կը հիմնէ:

1842թ. Պէյքոզի մէջ՝ կաշիի գործարանը:

1843թ. Նիկոմիտիոյ [Իզմիր] մէջ՝ չուխայի գործարանը:

1844թ. Զէյթինպուրնուի մէջ՝ մետաղ ձուլելու գործարանը:

1845թ. Հէրէքէի մէջ բամպակեղէն արտադրելու գործարան կը հիմնէ:

Եւ 1846թ. ալ բամպակէն վառօղ պատրաստելու գիտը կ'ընէ:

Օսմանեան սուլթանները Յովհաննէս Պէյ Տատեանը՝ օսմանեան պետութեան կատարած շատ օգտակար աշխատանքներուն համար ամենաբարձր՝ օսմանեան նշաններով կը պարգեւատրեն:

Եւ անոր Մաքրիգիւղէն մինչեւ Քիւչիւք Չէքմէճէ լիճը հասնող հողեր կը նուիրեն:

\* \* \*

Ծայր աստիճան հաւատարմութեամբ աշխատելով, օսմանեան պետութեան արդիականացման շատ նպաստող Յովհաննէս Պէյ Տատեանի դէմ՝ նոր Թուրքիոյ հանրապետական կառավարութիւններուն վարմունքը ի՞նչ եղած է:

1.- Տատեան ընտանիքին բոլոր հողերը՝ 1923թ. յետոյ հանուած «Լքեալ գոյքի» օրէնքով, Տատեան ընտանիքի ժառանգորդներուն ձեռքէն օրէնքի ճամբով առնուած, այսինքն՝ պաշտօնապէս գողցուած է:

Այսօր, Տատեան ընտանիքին պատկանող այս գողցուած հողերուն վրայ, Եչիլ գիւղի հսկայ օղակայանները հիմնուած են:

2.- Յովհաննէս Պէյ Տատեանին հիմնած մեծ թիւով գործարաններուն վրայ՝ այսօր այս գործարաններուն Յովհաննէս Տատեանին կողմէ հիմնուած ըլլալուն մասին ոչ մէկ արձանագրութիւն կայ:

3.- Մաքրիգիւղի մէջ, Յովհաննէս Պէյ Տատեանին կառուցանել տուած հայկական եկեղեցիին ու ասոր քովի վարժարանին ետեւի փողոցը, առ ի յարգանք հիմնադիրին կ'ուզուի,

որ անոր անունով կոչուի: Ասոր համար կը դիմուի Մաքրի-  
գիւղի քաղաքապետութեան:

Մաքրիգիւղի քաղաքապետութիւնը այս առաջարկը կ'ըն-  
դունի:

Եւ փողոցը «Տատեան» կ'անուանուի:

Բայց, միջոց մը յետոյ, Պոլսոյ մեծ քաղաքապետութիւնը  
այս որոշումը կը ջնջէ:

Եւ այս փողոցին պաշտօնապէս Տատեան կոչուելուն  
արգելք կ'ըլլայ:

\* \* \*

Երբ վերջերս, մենք այս լուրը պոլսական թերթերուն մէջ  
կարդացինք, բնաւ չզարմացանք:

Հայ ազգը ցեղասպանութեան ենթարկող եւ պարպուած  
Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ այսօրուան Թուր-  
քիան հիմնող պետութենէ մը ի՞նչ կ'սպասուէր որ...

Եւ յետոյ մտածեցինք... Յովհաննէս Պէյ Տատեանը՝ այս  
գործարանները Հայաստանի հողերուն վրայ հիմնելու էր:

Իր ազգին օգտակար ըլլալու տեղ, դարերէ ի վեր Հայ  
ազգը չարչարած թուրքերուն ծառայելու հետեւանքը, բնա-  
կան է, որ այս պիտի ըլլար:

Հայոց հաւատարմութեան դէմ՝ թուրքերուն ապերախ-  
տութիւնը:

Այս իրականութիւնը հայերը, մինչեւ այսօր, չե'ն հասկցած:

Եւ... անոնք դե՛ռ կը շարունակեն ծառայել թուրքերուն:

Խեղճ, յամառ եւ տխմար հայեր...

Թիւ 129

«Նայիրի», 29 Օգոստոս 2006, [Թիւ 261

**ԱՅՍ ՕՐԵՐՈՒ ԹՐՔԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ  
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՆԻԹԸ ԹՈՒՐՔԻՈՅ  
ԼԻԲԱՆԱՆ ԶԻՆՈՒՈՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅՆ Է**

Թրքական աջակողմեան թերթերուն մեծամասնութիւնը՝ Լիբանան գինուոր ուղարկելուն դէմ են:

Մինչդեռ SABETAY-ականներուն [այսինքն՝ դաւանափոխ հրէաներուն] հրամանին տակ եղող թերթերուն մեծամասնութիւնը Լիբանան գինուոր ուղարկուելուն կողմնակից են: Բնական է՝ Սապաթայական թերթերուն MAS-MEDIA-ներու վրայ ունեցած ազդեցութիւնը շատ աւելի է, որովհետեւ անոնց տպաքանակը շատ բարձր է:

Սապաթայականները պետութեան մէջ պետութիւն են:

Ծանօթ է, որ գրող YALÇIN KÜÇÜK-ին մատնանշածին համեմատ՝ թրքական բոլոր հաստատութիւնները, պաշտօնապէս կամ անպաշտօն ճամբաներով, Սապաթայականներու կողմէ կը ղեկավարուին:

25 Օգոստոս 2006 [թուակիր “Hürriyet” թերթին մէջ հրապարակագրողներուն մեծամասնութիւնը, Լիբանան գինուոր ուղարկելու հարցը ձեռք առած են:

Կարծէք թէ Թուրքիան ուրիշ հոգեր չունի եղեր: Մինչդեռ Թուրքիոյ մէջ անգործութիւնը աւելցած է: Եւ դրամական արժեզրկումը՝ բարձրացած:

Մանաւանդ՝ Թուրքիոյ գրօսաչրջական վայրերուն մէջ ահաբեկչութիւններ կը կատարուին:

Եւ արեւելեան նահանգներուն մէջ ալ P.K.K.-ական քիւրտերը, ամէն օր, թուրք գինուորներ կ'սպաննեն:

Արդեօ՞ք ասոնք մեծ հարցեր չեն, որ թրքական թերթերը զանոնք մէկդի ձգած, Լիբանան գինուոր ուղարկելու հարցը առաջնակարգ նիւթ կ'ընեն:

Որովհետեւ հրամանը բարձր տեղէ կուգայ: Իսրայէլ թրքական զինուորներուն Լիբանան երթալը կ'ուզէ: Իսրայէլին, Ամերիկայէն յետոյ՝ մեծագոյն դաշնակիցը, Թուրքիան է:

Իսրայէլ եւ Թուրքիա, պաշտօնական եւ գաղտնի համաձայնութիւններով, իրարու շատ կապուած են:

Իսրայէլը Յուլիս 2006-ին, Լիբանանի մէջ, օդանաւերով եւ հրասայլերով «Հրգպալան», ամբողջ ամիս մը եւ աւելի, ումբակոծե'ց:

Բայց չկրցաւ «մաքրագործել» լիբանանեան դիմադրութիւնը:

Հիմա ալ Իսրայէլ կ'ուզէ, որ թրքական զինուորները եւրոպական խաղաղութեան ուժերուն միանան եւ Լիբանան մտնեն:

Թրքական զինուորները, եթէ անգամ մը Լիբանան մտնեն, անկէ յետոյ դիւրին է...

Թուրքերուն մարդ «Ջարդելու» մէջ որքա՛ն ճարտար ըլլալնին ամէն մարդ գիտէ:

Իսրայէլի կամակատարը ըլլալով՝ Թուրք զինուորները շատ շուտ կը մաքրագործեն «Հրգպալաները»:

\* \* \*

Թուրքեր, դուք Լիբանանին հարցուցի՞ք, թէ լիբանանցիները ձեզ կ'ուզե՞ն արդեօք:

Դուք ձեր գործին չեկած եղելութիւնները կա'մ չգիտնալու կուգաք, կա'մ ալ բոլորովին կ'ուրանաք:

Բայց արարները, դարեր տելոդութեամբ եւ մինչեւ 1918 թուականը, արաբական հողերուն վրայ ձեր կատարած ջարդերը չեն մոռցած:

Այստեղ ձեզի, Արապիստանի մէջ իր գործած ողբերգութիւններէն միայն մէկ հատը պատմելու պիտի ջանանք:

Այսօր Պէյրութի մեծագոյն հրապարակին անունն է՝ «PLACE DES MARTYRES» [Նահատակներու հրապարակ]:

1916 թուականին, բոլոր արաբական հողերուն պէս, Լիբանանն ալ դեռ թրքական գրաւման տակ էր:



Եւ 1916 թուականին Լիբանանի ժողովուրդը, թուրքերուն դէմ ազատագրական պայքար կ'սկսի:

Եւ այն տարիներուն, արաբական գրաւեալ հողամասերուն թուրք ընդհանուր հրամանատարը՝ CEMAL PACHA- [որ Հայկական ցեղասպանութեան երեք յանցաւոր փաշաներէն [Թալեաթ, Էնվէր, Ճեմալ] մէկն էր, այս՝ լիբանանեան հայրենասէրներէն աւելի քան քսան հատը [միւսլիման եւ քրիստոնեայ] Պէյրութի ամենամեծ հրապարակին վրայ կախաղան հանել կուտայ:

1918-ին, թրքական պարտութենէն տարիներ յետոյ, լիբանանցիները, իրենց այն հրապարակը, ուր հայրենասէրները կախաղան հանուելով սպաննուեցան, ի յիշատակ քաջարի զոհերուն, վայրը կ'անուանեն՝ PLACE DES MARTYRES [Լիբանանի Նահատակներու հրապարակ]:

Եւ աւելի վերջ ալ, այս հրապարակին վրայ, թուրքերուն իրագործած ողբերգութիւնը խորհրդանշող Նահատակներու յուշարձան մը կը գետեղուի:

\* \* \*

Ով թուրքեր:- Դարեր տեսողութեամբ, ձեր բռնագրաւած հողերուն՝ Անաթոլիոյ, Պալքաններու եւ Արաբական տարածքներուն վրայ, ձեր կատարած ցեղասպանութիւններով եւ ջարդերով պատմութեան անցած պետութեան մը ներկայացուցիչներն էք:

Եւ ձեր Լիբանան [իբր թէ] խաղաղարար ուժ որպէս զինուոր ուղարկելուն դէմ, [դեռ այժմէն] բողոքներ տեղալ սկսան:

Մանաւանդ, 1915-ի ցեղասպանութեան սուրի մնացորդները եղող Լիբանանի հայութիւնը, ձեր Լիբանան զինուոր ուղարկելուն արգելք ըլլալու համար, Լիբանանի պետութեան մօտ հաւատարմագրուած դեսպանատուներուն, թրքական վայրագութիւնները մատնանշող փաստաթուղթեր յանձնեցին:

Կը յուսանք, որ նոր ողբերգութեան մը արգելք ըլլալու համար, թրքական զինուորներուն Լիբանան մտնելուն հրաման չի տրուիր:

Թիւ 130

«Նայիրի», 19 Սեպտեմբեր 2006, Թիւ 262

**ՊԵՆԵՏԻԿՏՈՍ ԺԶ. ՊԱՊԻՆ  
ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԵԿ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԵՉ  
ԸՍԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Պենետիկտոս ԺԶ. պապին Գերմանիոյ Ratisbornne քաղաքի Համալսարանին մէջ, 12 Սեպտեմբեր 2006-ին կատարած բանախօսութեան ընթացքին ըսած խօսքերը՝ Թուրքիոյ իսլամական թերթերը զանոնք պապին կողմէ իսլամական կրօնին ուղղուած քննադատութիւն եւ անարգանք մեկնաբանեցին եւ առ այդ՝ գրգռիչ գրութիւններ հրատարակեցին:

Մինչդեռ Սապաթայական թերթերը, պապին ըսածները «թեթեցնելով», վէճ հրահրելէ խուսափեցան:

Յայտնի է, թէ սիոնիստ ամերիկացիներուն ծրագրով՝ Թուրքիան Եւրոպական միութիւն պէտք է մտնէ:

16 Սեպտեմբեր 2006 թուակիր «Hürriyet» թերթը, պապին ըսածները առաջին էջին ամէնէն վարի մասին մէջ իբր երրորդ աստիճանի կարեւորութեամբ լուր հրատարակեց:

Նոյն թուակիր «Hürriyet» թերթին մէջ հրապարակագիրներէն ոչ մէկը, իրենց յօդուածներուն մէջ, պապին ըսածները խորհրդածութեան նիւթ ըրած են:

Միայն «Hürriyet»-ի 7-րդ էջին վրայ, հրապարակագիր Mahmut Yilmaz «Պապին խօսակցութիւնը սխալ հասկցուեցաւ» ըսելով, շատ իրատես մեկնաբանութիւն մը կատարեց...

Նոյն՝ 16 Սեպտեմբեր 2006 թուակիր «Hürriyet» թերթին 12-րդ էջին վրայ, գերմանական «Կանանչներու» կուսակցութեան երկրորդ նախագահը՝ Claudia Roth-ին, պապին բանախօսութեան եւ անոր գլխաւոր մտքերուն տեղ տրուած է:

Այս գերմանացի կանանչագլուխը՝ այսինքն՝ գերմանացի «Կանանչներուն» նախագահը եղող՝ ատենօք «կարմրագլուխ», յետոյ «կանանչագլուխ», եւ աւելի վերջ՝ «Գորշ գայլ»

գլուխի վերածուած, թուրքի բարեկամ Գոն Պենտիթին բարեկամը *Claudia Roth*-ը «*Hürriyet*» թերթին մէջ հրատարակած ելոյթին մէջ, պապին դաս կու տայ եւ կ'ըսէ թէ՛ «Թուրքիա գնա՛ եւ իրականութիւնները սորվէ»:

Բայց կը կարծենք, որ նախ եւ առաջ ա՛յս «կանանչագլուխ» *Claudia Roth*-ը քիչ մը պատմութեան դաս առնելով իրականութիւնները պէտք է սորվի:

Ահա, այս կանանչ գլուխ *Claudia Roth*-ի ձարոտութիւններէն, երկու օրինակ.

«Պապը, Թուրքիոյ մէջ Եփեսոս (*EFES*) երթալու է. եւ հոն, Աստուածամօր ուր ծնած ըլլալը տեսնէ»:

Իրականութիւնն այն է, թէ՛ Եփեսոսի մէջ, «Աստուածամօր տուն» կոչուող փոքր տունը, որ 1950թ. նորոգուած էր, Աստուածամօր ծնած տունը չէ:

Ամէն ոք գիտէ, թէ Աստուածամայրը Պաղեստին ծնած է:

Քրիստոսի՝ հրէաներու կողմէ խաչուելով սպաննուելէն յետոյ, Աստուածամայրը, կարգ մը գրոյցներու եւ ենթադրութիւններու համաձայն, Սուրբ Յովհաննէսի հետ Եփեսոս կ'երթայ եւ չրջանի լեռներուն վրայ, փոքր տան մը մէջ կ'ապրի... Կրկին այս կանանչագլուխ *Claudia Roth*-ը կ'ըսէ.—

«Պապը՝ միասնաբար տարուած պատմական վայրերը պէտք է երթայ»:

Այս խօսքն ալ պոչաւոր սուտ մըն է:

Անաթոլիոյ պատմական վայրերէն ոչ մէկուն մէջ թուրքեր ապրած են:

Թուրքերը, 11-րդ դարու վերջաւորութեան միայն վայրի ցեղախումբեր ըլլալով, Անաթոլիա խուժել սկսան: Պատմական բնակավայրերը այրելով եւ կործանելով՝ Անաթոլիան թալանեցին:

Եւ թուրքերուն Անաթոլիան թալանելը՝ գրեթէ չորս դար տեւեց:

Եւ միայն 1453թ. է, որ Կ. Պոլիսը կրցան գրաւել... ...Եւ պապ Պենետիկտոս այս իրականութիւնները շատ լաւ գիտէ:

2004թ. ան, դեռ պապ չընտրուած, Կարտինալ Ռաթցինկէր ըլլալով, Թուրքիոյ Երոպական միութիւն մտնելուն դէմ ելած եւ սապէս ըսած էր.

«Այս իսլամ Թուրքիան, դարեր տեւողութեամբ, երոպական քրիստոնէական մշակոյթին դէմ պայքարած է, եւ քրիստոնէական մշակոյթը քանդելու աշխատած է:

Արեւելեան Հռոմէական կայսրութիւնը, Բիւզանդիոնը կործանողը՝ Թուրքիան է:

Պալքանեան քրիստոնեայ ազգերը ճգմելով, մինչեւ Վիէննայի դռները յառաջացողը՝ այս իսլամ Թուրքիան է: Աւստրիային եւ Երոպային դարեր տեւողութեամբ սպառնացողը եւ զանոնք վտանգի ենթարկողը՝ այս իսլամ Թուրքիան է:

Այսօր, Թուրքիոյ Երոպական միութիւն մտնելը, անոր 1683 թուականին Վիէննայի դռներուն առջեւ չիրականացած Երոպան քանդելու եւ իսլամացնելու փափաքները պիտի վերստեղծէ:

\* \* \*

Թրքական բոլոր թերթերը, Պենետիկտոս ԺԶ. պապին 12 Սեպտեմբեր 2006-ին Գերմանիոյ մէջ կատարած բանախօսութեան ընթացքին իսլամ կրօնին դէմ խօսած ըլլալուն մասին գրեցին:

Բայց ոչ մէկ թրքական թերթ, պապին իսլամական կրօնին դէմ ըսած խօսքերուն բովանդակութիւնը հրատարակեց:

Իրականութեան մէջ պապը, բիւզանդական վերջին կայսրերէն՝ Մանուէլ Բ. PALEOLOGUE-ին 1391թ. ըսած խօսքերը նոյնութեամբ կրկնած էր:

Եւ ո՞վ էր այս բիւզանդական կայսրը: MANUEL II PALEOLOGUE-ը, երկար տարիներէ ի վեր, օսմանեան թուրքերուն շարունակական յարձակումներուն ենթակայ կայսր մըն էր:

Եւ օսմանական թուրքերը 11-րդ դարու վերջաւորութենէն սկսեալ, նպատակ դարձուցած էին Բիւզանդական կայս-

րութեան կործանումը, եւ 14-րդ դարու վերջաւորութեան,  
Կ. Պոլսոյ դռներուն առջեւ հասնելով, քաղաքը պաշարած էին:

Եւ բիւզանդացիները, անհաւատալի հերոսութեամբ,  
Կ. Պոլիսը կը պաշտպանէին:

Ահա, բիւզանդական այս կայսրը, MANUEL II PALEOLOGUE-ն էր, որ օսմանցի թուրքերուն վայրագութեան ենթարկուած գահակալ մը ըլլալով, 1391թ., պարսիկ կրօնական գիտնականի մը իր տառապանքը յայտնած էր:

Պենետիկտոս 16-րդ պապն ալ, բիւզանդական կայսրին խօսքերը կրկնելով, իբր պատասխանատու կրօնական առաջնորդ մը՝ իսլամ թուրքերուն Եւրոպական միութեան մէջ մտնելէ յետոյ, Եւրոպայի քրիստոնեայ ժողովուրդներուն ենթարկուելիք վտանգները մատնանչել ուզած էր... ...Ահա, թրքական թերթերը, այս մեծ իրականութիւնը անգիտանալ ձեւացուցին...

Թուրքերուն ամենամեծ վարպետութիւններէն մէկը՝ իրականութիւնները ուրանալն է: Եւ թուրքերուն ուրացած ամենասարսափազդու իրականութիւնն ալ՝ Հայկական ցեղասպանութիւնն է:

Թիւ 131

«Նայիրի», 10 Հոկտեմբեր 2006, Թիւ 263

**ԻՔՐ ԹԵՎ ԹՈՒՐԷՒԱ**

**ԴՈՒՔ ԹՈՒՐԷՐՈՂ, ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ Կ՛ՈՒՐԱՆԱՔ  
ԵՒ ԻՔՐ ԹԵՎ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ Կ՛ԸՍԷՔ:**

**ՄԵՆՔ՝ ՀԱՅԵՐՍ ԱԼ Կ՛ԸՍԵՆՔ, ԹԵ ԹՈՒՐԷՒԱ ԸՍՈՒԱԾ**

**ԵՐԿԻՐ ՄԸ ՓՈՅՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻ:**

**ԱՅՍՕՐ, ԹՈՒՐԷՒԱ ԸՍՈՒԱԾԸ՝ ԵՒՆՏՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է:**

**ԻՔՐ ԹԵՎ ԹՈՒՐԷՒԱ Է**

Այսօրուան Թուրքիան օղով լեցուած «պալոնի» մը կը նմանի: Եւ եթէ մեծ դրամատէրերու կազմակերպութեան եւ Ամերիկայի Թիկունքը դադրի՝ Թուրքիա, «պալոնի» մը նման, կը սմքի եւ կտոր-կտոր կ'ըլլայ:

Օսմանեան կայսրութիւն ըստած աւազակներու խուժանին ժառանգորդները եղող այսօրուան Թուրքեր:

Ձեր նախահայրերը մինչեւ Վիէնայի դռներուն առջեւ յառաջացած էին:

Եւ այդ բոլոր գրաւուած հողերը, ամէն կողմ ձեզ համար՝ Թուրքիա էր:

...Եւ 1683-ին Վիէնայի պարիսպներուն առջեւ, Լեհաստանի թագաւոր՝ Ժան Սոպիէսքին ձեր աւարառու ենիչէրիներու բանակները խորտակեց... Եւ անկէ յետոյ սկսաք նահանջել:

Օսմանեան կայսրութիւն կոչուած աւազակներու պետութիւնը, դեռ 19-րդ դարուն պիտի կործանէր եւ «պալոնի» մը նման պիտի սմքէր: Բայց 19-րդ դարուն մէջտեղ ելող մեծ դրամատէրերու կազմակերպութիւնը, սմքող օսմանեան «պալոնը» ուռեցնել սկսաւ:

Այս կազմակերպութիւնը, նախ, օսմանցիներուն մէջ՝ միւսլիման օսմանցի ըլլալու գաղափարախօսութիւնը «նե-րարկել» սկսաւ:

Ձեր բանաստեղծը՝ *NAMIK KEMAL*-ը, միևսլիման օսմանցիի մտայնութեան ներկայացուցիչն է:

Անոր 1873-ին գրած թատրերգութիւնը՝ «Հայրենիք եւ Սիլիստրէն»՝ օսմանեան ազգայնամոլական առաջին թատրերկն է:

Երեւակայեցէք՝ շատ հին եւ պատմական քաղաք մը եղող պուլկարական Սիլիստրէն [այսօրուան անունով՝ *SLIVEN*] ի՞նչ կապ ունի օսմանեան ազգայնամոլութեան հետ:

Եւ այդ տարիներուն Պուլկարիան, օսմանականի վերածելու համար, շատ պուլկար ջարդեցիք:

Բայց, «Փառք Աստուծոյ», որ ռուսական բանակները պուլկարներուն օգնութեան հասան, եւ պուլկար ազգը ցեղասպանութեան ենթարկուելէ փրկեցին:

\* \* \*

Կրէտէ կղզին գիտէ՞ք արդեօք:

Մինչեւ 1913, Կրէտէն պաշտօնապէս օսմանեան կայսրութեան մաս կը կազմէր:

Բայց օսմանցիները ի՞նչ գործ ունէին Կրէտէ կղզիին մէջ:

Միջերկրական ծովը ձեր իշխած տարիներուն, գրաւած էիք Կրէտէն, շատ արիւնոտ կռիւներ մղելէ ետք:

Կրէտէն աշխարհի հնագոյն քաղաքակրթութիւններէն մէկը եղող *"MINOENNE"* թագաւորութեան կղզին է, աշխարհահռչակ *"CNOSSOS"* պատմական պալատին գտնուած կղզին:

Մինչեւ 1913 թուականը Կրէտէն չկորսնցնելու համար, շատ մեծ թիւով յոյներ ջարդեցիք:

Թերեւա չէք գիտեր, ձեզի յիշեցնենք:

Այն տարիներուն տեւաբար կը կրկնէիք հետեւեալ խօսքերը.

«Կրէտէն մեր հոգին է, մեր արիւնը կը զոհենք՝ Կրէտէի համար»:

Եթէ կրէտէի մէջ ձեր կատարած ջարդերը տեսնել կ'ուզէք՝ հռչակաւոր Կրէտէցի գրող *NIKOS KAZANTZAKIS*-էն

«Վերախաչուած Քրիստոսը» անունով վէպին շարժանկարը դիտեցէք:

\* \* \*

Հայերը մասնաւորապէս 1915թ. թուրքերու կողմէ ցեղապանութեան ենթարկուած ըլլանին կը հառաչեն:

Իրականութեան մէջ հայերը, թուրքերուն Անաթոլիա ոտք կոխած՝ 1071 թուականէն մինչեւ 1923թ., տեւաբար թրքական ջարդերուն ենթարկուեցան:

Անաթոլիոյ մէջ թրքական ջարդերը՝ ամէնէն իրատես դէպքերով եւ անմոռանալի ձեւով նկարագրող պատմութեան անցուցած աշխարհահռչակ գրող եւ «CINEASTE», 1909թ. Պոլիս ծնած ELIA KAZAN-ն է:

Էլիա Քազանին գրած եւ յետոյ իր կողմէ ֆիլմի վերածուած՝ «AMERICA-AMERICA» ստեղծագործութեան մէջ, Էլիա Քազանը Կեսարիոյ քաղաքի յոյներուն թուրքերուն բարբարոսութեան ենթարկուելուն պատմութիւնը կը ներկայացնէ: Բայց նոյն ատեն, Կեսարիոյ հայերուն թուրքերուն կողմէ զարհուրելիօրէն ջարդի ենթարկուիլը կը պատկերացնէ:

«Ամերիկա-Ամերիկա» ֆիլմին մէջ, մեր տեսած հայերու ջարդի տեսարանները, մեր կեանքին մինչեւ վերջը պիտի չմոռնանք. «Թուրքերը Կեսարիոյ հայերը, մեծ ու պզտիկ, կին եւ այր, եկեղեցիի մը մէջ հաւաքեցին եւ յետոյ եկեղեցին կրակի տուին»:

Ո՛վ թուրքեր, եթէ ձեր նախահայրերուն ի՛նչ աստիճան բարբարոս ըլլալը տեսնել կ'ուզէք, գացէք եւ դիտեցէք «AMERICA-AMERICA» ֆիլմը:

Եթէ մենք թուրք ըլլայինք, 1914թ. SARAEVO-ի մէջ աւստրիական գահաժառանգը սպաննելով՝ Առաջին համաշխարհային պատերազմին բռնկումին պատճառ եղած սերպ տեռորիստ G. PRINCIP-ին յիշատակին, Պոլսոյ Ազատութեան բլուրին վրայի Թալեաթին դամբարանին ճիշդ քովը, PRINCIP-ին շատ մեծ մէկ արձանը կը կանգնէինք:



Որովհետև այս սերպ տեռորիստին մահափորձին հետևանքով Առաջին աշխարհամարտը սկսաւ: Եւ դուք, այս պատերազմէն օգտուելով, 1915թ. հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցիք:

Ահա թէ ինչու այսօր, ձեր Թուրքիա կոչած շինծու պետութիւնը, իր գոյութիւնը կը պարտի՝

Առաջին աշխարհամարտէն օգտուելով ձեր իրագործած Հայկական ցեղասպանութեան:

Թիւ 132

«Նայիրի», 31 Հոկտեմբեր 2006, Թիւ 264

**ԻԲՐ ԹԷՆ ԹՈՒՐԲԻԱ**

**ՍՈՒՏԵՐՈՒ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ ԹՈՒՐԲԻԱ ԿՈՉՈՒՈՂ**

**ՇԻՆՏՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՈՏԵՒ ՊԱՀՈՂԸ ՈՐ ՈՒԺԵՐՆ ԵՆ**

**...ԵՒ ԱՅՍ ՇԻՆՏՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ**

**ԻՆՉՊԷ՛Ս ԿՐՅԱՒ ԿԱՆԳՈՒՆ ՄՆԱԼ**

Թուրքիան կանգուն պահող ամենամեծ ուժը YALÇIN KÜÇÜK-ին ալ ըսածին պէս՝ Թուրքիա ըսուած պետութեան հիմնարկութեան մէջ մեծագոյն դեր կատարողը Համաշխարհային դրամատէրերու կազմակերպութիւնն է:

Այս Համաշխարհային դրամատէրերու կազմակերպութիւնը Թուրքիան հետեւեալ երկու ուժերուն շնորհիւ կը ղեկավարէ.

- 1.- Թրքական բանակը,
- 2.- Թրքական մամուլը:

1.- Թրքական բանակը իրականութեան մէջ "İTTİHAT VE TERAKKİ" կուսակցութեան շարունակութիւնը եղող Աթաթիւրքին գաղափարախօսութեան գործակատարն է:

Եւ ամթաթիրքեան գաղափարախօսութիւնը՝ գերմանական NAZI-ներէն աւելի ծայրայեղ-ցեղապաշտ մտայնութիւն մըն է:

2.- Թրքական մամուլը- թրքական թերթերուն մէջ հրատարակուող կանխամտածուած եւ կաղապարուած լուրերու կողքին՝ ամէն մէկ թերթի մէջ քսանէ աւելի հրապարակագիրներ, ժողովուրդին մէջ հասարակաց կարծիք կը ձեւաւորէ:

Եւ այս հրապարակագիրներուն վերջին տարիներուն առաջնակարգ նիւթն է՝

1.- Հայկական հարցը:

2.- Քրտական հարցը:

1.- Հայկական հարցը- իրականութեան մէջ, Թուրքիոյ տարածքին, Հայկական հարց մը պէտք չէր որ ըլլար: Որովհետեւ թուրքերը, 1915-ին հայերը ցեղասպանութեան ենթարկելով՝ Հայկական հարցը հիմնովին «լուծեցին»:

Եւ թուրքերը՝ Արեւելեան "ANADOLU" կոչուող եւ մինչեւ 1915 թուականը բոլոր քարտէսներուն մէջ «Արեւմտեան Հայաստան» ըլլալով ցուցադրուող հողերուն վրայ, ցեղային ամբողջական մաքրագործում կատարելով, բոլոր հայերը բնաջնջեցին:

Եւ պարպուած Հայկական հողերուն վրայ, այսօրուան շինծու թրքական պետութիւնը ստեղծեցին:

Եւ 1915-ի Հայկական ցեղասպանութեան թուականէն ի վեր, մինչեւ այսօր, 91 տարիներ անցան...

...Եւ վերջերս արեւմտեան պետութիւնները, Հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանչնալ սկսան:

Արեւմտեան պետութիւններուն Հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանչնալը՝ թուրքերը շատ դժուար վիճակի մատնեց:

Թրքական պաշտօնական հաստատութիւնները եւ պոռոտախօս թրքական մամուլը, Հայկական ցեղասպանութեան հարցը յետաձգելու եւ մոռցնելու համար, «Այս հարցը պատմաբանները թող ուսումնասիրեն» ըսել սկսան:

Իբր թէ իրականութիւնները՝ պատմաբանները մէջտեղ պիտի հանեն եղեր:

Բայց իրականութիւնները ինչպէ՞ս մէջտեղ կրնան ելլել, երբ դուք «Հայկական ցեղասպանութիւն եղած է» ըսել համարձակող ORHAN PAMUK-ի եւ Հրանդ Տինքի նման գրողները դաւաճանութեան յանցանքով բանտարկութեան կը դատապարտէք:

Այս վիճակին մէջ ո՞ր մէկ թուրք պատմաբանը թրքական պաշտօնական տեսակէտին դէմ կրնայ ելլել եւ «ցեղասպանութիւն եղած է» ըսել:

Ձեր Հայկական ցեղասպանութիւնը ուրանալուն եւ «Հայկական ցեղասպանութիւն չէ եղածի» նման սուտ յայտարարութիւններուն դէմ՝ մեր միշտ տուած պատասխանը ջանանք կրկնել՝

«Ձեր Արեւելեան “ANADOLU” ըսած, բայց բոլոր քարտէսներով մինչեւ 1915 թուականը «Արեւմտեան Հայաստան» ըլլալով ներկայացուած հողերուն վրայ, չորս հազար տարիներէ ի վեր եւ մինչեւ 1915 թուականը, մեծամասնութեամբ հայեր կ'ապրէին:

Այսօր, այդ հողերուն վրայ, մէկ հատ հայ չկայ:

Ի՞նչ եղան Արեւմտեան Հայաստանի մէջ ապրող հայերը:

Չորս հազար տարուան ազգ մը, իր երկու հարիւր հազար քառ. քիլոմեթր տարածքով հայրենիքին մէջ ցեղասպանութեան ենթարկող եւ այդ հողերուն վրայ ամբողջական ցեղային մաքրագործում կատարող թրքական վայրագութեան նմանը՝ աշխարհի պատմութեան ոչ մէկ շրջանի մէջ կրնաք գտնել:

Եւ դուք «Ամբարտաւան գողը՝ տանտէրը կը վախցնէ» մտայնութեամբ, այս բոլոր իրականութիւնները կ'ուրանաք:

Եւ մինչեւ վերջ ալ պիտի ուրանաք... մինչեւ ե՞րբ...

Վերջին շրջաններուն, չինծու Թուրքիոյ հողերուն շուրջ մեծ փոփոխութիւններ կատարուիլ սկսան:

Ձեր հարաւարեւելեան սահմանին վրայ, Իրաքի հիւսիսային մասին մէջ, մեծ Քիւրտիստան մը կազմուեցաւ:

Եւ այս քրտական պետութիւնը ովքե՞ր հիմնեցին, գիտէ՞ք:

Ձեր շինծու թրքական պետութիւնը ստեղծող Համաշխարհային դրամատէրերու կազմակերպութիւնը:

Այսինքն՝ ձեզ մինչեւ հիմա ոտքի բռնող եւ բոլոր վտանգներուն դէմ պաշտպանող կազմակերպութիւնը:

Եւ միջոց մը յետոյ, այս նոր կազմուած քրտական պետութիւնը՝ ձեր Թուրքիա կոչուած շինծու պետութեան մէջ ապրող 30 միլիոնէ աւելի քիւրտերուն պիտի միանայ:

Եւ Թուրքիան կտոր-կտոր պիտի ըլլայ:

Ինչո՞ւ, գիտէ՞ք:

Որովհետեւ դուք, բնաւ չէք փոխուած: Դուք, նոյնիսկ այսօր, մինչեւ Վիէննայի դռներուն առջեւ յառաջացող, թալանող եւ բարբարոս օսմանցիներն էք:

Եւ եթէ առիթ գտնէք, Օսմանեան կայսրութեան առաջին օրերէն սկսեալ մինչեւ 1915 եւ 1923 թուականները ձեր կատարած ցեղասպանութիւններով յառաջացած ծաւալողական քաղաքականութիւնը կը շարունակէք:

Որովհետեւ դուք, մինչեւ այսօր, ձեր գործած բարբարոսութիւններուն պատիժը չէք կրած:

Այո՛, Համաշխարհային դրամատէրերու կազմակերպութիւնը՝ այդ շինծու թրքական պետութիւնը ստեղծեց:

Բայց, նոյն Համաշխարհային դրամատէրերու կազմակերպութիւնը շատ մեծցող եւ օսմանեան ծաւալման երազներ տեսնող Թուրքիան պիտի պատժէ:

Այսինքն՝ Թուրքիա կոչուող շինծու պետութիւնը կտոր-կտոր պիտի ըլլայ:

Թիւ 24

«Նայիրի», 1 Յունուար 2007, Բացառիկ

**ԵՐԵՔ ԱՆՈՒՆ ԵՒ ԵՐԵՔ ՇՐՉԱՆ**

**«ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿՐԿՆՈՒԹԻՒՆ Է» ԿՂՍԵՆ- ՈՉ:**

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԱՇԽԱՐՀԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՈՒԺԵՐՈՒՆ, ԻՐԵՆՅ՝  
ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՏԵԻԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐԱԾ  
ԱՆԻՐԱԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ, ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ  
ՂԱԽԱՂՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆ Է**

**ՏԱՐԻ 1876**

19-րդ դարուն աշխարհը կառավարող ուժը՝ Անգլիան էր:  
[Կրնա՞ք մտածել, թէ ինչպէս, փոքր կղզի մը աշխարհը կը  
կառավարէ]:

1850թ. Անգլիոյ մրցակիցը Ռուսիան էր:

1876թ. ուսերը, քիչ մնաց, որ Պոլիսը գրաւէին: Եւ օսմա-  
նեան կայսրութիւնը պիտի կործանէր:

Բայց անգլիական պոռնիկ քաղաքականութիւնը գործի  
լծուեցաւ: Եւ որոշ հայերու դաւաճանութենէն ալ օգտուելով՝  
անգլիացիները ստիպեցին ուսերուն, զէնքի սպառնալիքով,  
որ քաշուին Պոլսոյ արուարձանէն:

Եւ անգլիացիները, իբր վարձատրութիւն, Ապտիւլ Համի-  
տէն Կիպրոս կղզին նուէր ստացան:

Եւ ո՞վ էր այն ատենուան Անգլիոյ վարչապետը- BENJA-  
MIN D'ISRAELI անունով հրէայ մը:

\* \* \*

**ՏԱՐԻ 1918**

Տարի 1918: Օսմանեան կայսրութիւնը պարտուած է, իսկ Պոլիսը՝ անգլիացիներուն, ֆրանսացիներուն եւ իտալացիներուն կողմէ գրաւուած:

Օսմանեան կայսրութիւնը՝ կտոր-կտոր եղած ու կործանած է:

Արաբները անջատ պետութիւն մը կազմելու աշխատանքին լծուած են:

Յոյները Թրակիան եւ Անատոլիոյ արեւմտեան մասը գրաւեր են:

Պոլիսը՝ միջազգային, բաց քաղաքի է վերածուած:

Արեւելքի կողմը՝ Բիւրտիստան մը հիմնուած է:

Նոյնպէս՝ Արեւելքի պատմական Հայաստանի հողերուն վրայ՝ Հայկական պետութիւն մը:

Պոլսոյ մէջ օսմանեան զինուորական ատեանը, Հայերուն դէմ ցեղասպանութիւն գործած ըլլալու յանցանքով՝ Թալեաթը, ճեմալը եւ էնվերը մահուան դատապարտած է:

Այս ձեւով արդարութիւնը կատարուած պիտի ըլլայ: Եւ Օսմանեան կայսրութիւնը պատմութեան պիտի անցնի:

Բայց... ո՛չ...

Կրկին անգլիական պոռնիկ քաղաքականութիւնը գործի կ'անցնի... Անգլիացիները դեռ 1917թ., Պալֆուրի յայտարարութեամբ, հրէաներուն իսրայէլական պետութիւն կազմել խոստացած էին արդէն:

Արաբական միացեալ եւ հզօր պետութիւն մը՝ իսրայէլական պետութեան մը կազմութեան հաւանութիւն չէր տար:

Այդ պատճառաւ Արաբիոյ մէջ, մէկ պետութեան տեղ, շատ մը արաբական պետութիւններ ստեղծուեցան «Առ ի չգոյէ»- [ծանօթ է կարգախօսը՝ «Բաժանէ եւ իշխէ»]:

Անատոլիոյ մէջ ալ, ուսերուն բարեկամ մեծ Հայաստանի մը կազմութիւնը, անգլիական քաղաքականութեան միտումներուն հակառակ էր:

Եւ անգլիական նենգ քաղաքականութիւնը հոս եւս գործի լծուեցաւ:

19 Մայիս 1919թ., Սելանիկ ծնած Փարմասոն եւ իթթիհատական Մուստաֆա Քեմալը, Անաթոլիա դրկուեցաւ... ուր Մուստաֆա Քեմալ շատ խորամանկ՝ «Մաքիաւելական» քաղաքականութիւն մը կիրարկեց:

Բոլոր նախկին իթթիհատականները, թուրանականները, իսլամականները [այսինքն՝ բոլոր մարդասպաններու կազմակերպութիւնները իր կառավարութեան մէջ առաւ]:

Ամէնէն կարելորդ՝ ինքզինք համայնավար ոուսերուն համակիր ներկայացուց: Եւ ոուսերուն թիկունքը շահեցաւ:

... Եւ նախ՝ երկրին արեւելեան շրջանին մէջ հայերը «մաքրագործեց»:

Յետոյ՝ Արեւմուտք դարձաւ եւ յոյներուն դէմ պատերազմեցաւ:

Եւ մինչեւ 1923 թուականը Անաթոլիոյ մէջի բոլոր հայերը եւ յոյները «մաքրագործելով» Մեծ Թուրքիա մը մէջտեղ բերաւ:

\* \* \*

## SURF 2006

Տարի 2006: Այսօր՝ 1683թ. մինչեւ Վիէննայի դռները յառաջացած վայրենի, բարբարոս օսմանցիները եւ 1915թ. հայոց դէմ ցեղասպանութիւն կատարած թուրքերը յիշող կա՞յ: Ընդհակառակը...

Այդ ցեղասպան թուրքերը, իբր թէ այսօր... քաղաքակրթուեր եւ մարդացեր են:

Եւ Եւրոպական միութիւն մտնելու արժանի պետութիւն եղեր են:

Իսկ այս վայրենի եւ ցեղասպան թուրքերը Եւրոպական միութեան անդամ դարձնելու համար աշխատողը ո՞ր պետութիւնն է:

Նո՛յն պոռնիկ անգլիացիները... Եւ Անգլիոյ այսօրուան վարչապետը: «Ամերիկային “FINO” շունը» նկատուող եւ տեւական կեղծ ժպիտ մը պտըտցնող Թոնի Պլերը:

Եւ այս Թոնի Պլերը, Եւրոպական միութեան՝ Թուրքիոյ թեկնածութիւնը առժամաբար յետաձգող որոշման դէմ գալով սապէս կ'ըսէ՝

«ԹՈՒՐՔԻՈՅ՝ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՍ ԿԱԶՄԵԼԸ՝ ՇԱՏ ՕԳՏԱԿԱՐ Է»:

«Միացեալ Նահանգներուն “FINO” շունը» իր տիրոջ ձայնը՝ “HIS MASTER'S VOICE”-ը կը կրկնէ:

Այսինքն՝ «Աշխարհի հրէական վեհաժողովին» խամաճիկը, նախկին «ալքոհոլիք», այժմ ալ աղանդաւոր, բայց Իրաքի ժողովուրդին բուն ցեղասպանը եղող Ճորճ Պուչին հրահանգները կը գործադրէ:

\* \* \*

Երեք չրջան՝ 1876-1918-2006.

Երեք վարչապետ՝ BENJAMIN D'ISRAELI, LLOYD GEORGE, TONY BLAIR.

Երեք տարբեր չրջաններ,  
Երեք տարբեր անուններ.

ԲԱՅՑ ՄԻՇՏ ՆՈՅՆ ՊՈՌՆԻԿ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆԱԹԻԻՆԸ:



Թիւ 134

«Նայիրի», 30 Յունուար 2007, Թիւ 265

**ՄԵՐ ԱՅՍ ՉՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՉՕՆԵՆԸ՝  
19 ՅՈՒՆՈՒԱՐ 2007-ԻՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ  
ԿՈՂՄԵ ՄՊԱՆՆՈՒԱԾ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻՆ ԱՆՄԵՂ ՅԻՇԱՏԱԿԻՆ  
ԱՆՊԱՏԻԺ ՄԵԱՅԱԾ ՄԱՐԴԱՄՊԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՃԵՂԱՄՊԱՆՆԵՐՈՒ  
ՊԵՏՈՒԹԻՒՆԸ՝ ԹՈՒՐՔԻԱ**

19 Յունուար 2007-ի Ուրբաթ օր, Պոլսոյ մէջ, «Ակօս» Թերթի խմբագրապետ Հրանդ Տինք, խմբագրատան չէնքին առջեւ սպաննուեցաւ:

48 ժամ յետոյ, 17 տարեկան մարդասպանը, Տրապիզոնի մէջ ձերբակալուեցաւ:

Ոճրագործը՝ «Գործած արարքիս համար չեմ գղջար, ան Թրքութիւնը անարգեց» ըսաւ: Մինչդեռ Հրանդ Տինքին միակ յանցանքը՝ «Հայկական ցեղասպանութիւն եղած է» ըսելն է:

Տարիներէ ի վեր կը գրենք, որ Թուրքիան՝ անպատիժ մնացած մարդասպաններու եւ ցեղասպաններու պետութիւն է:

Եւ Թուրքիան այնքան ատեն, որ Հայկական ցեղասպանութիւնը կատարած ըլլալու յանցանքով չպատժուի, պիտի չարունակէ ցեղասպանութիւններ եւ ջարդեր գործել:

Մինչդեռ Աշխարհի մեծ դրամատէրերու կազմակերպութիւնը եւ անոնց գործակալը եղող Ամերիկան, փոխանակ ցեղասպան Թուրքիան պատժելու, Եւրոպան ներսէն քանդելու նպատակով, զայն Եւրոպական միութիւն կը ջանան մտցնել:

Եւ իրենց կատարած քարոզչութիւններով Փաշիստ, ցեղապաշտ եւ կրօնամոլ Թուրքիոյ իբր Թէ ժողովրդավար պետութիւն մը ըլլալուն մասին սուտեր կը տարածեն:

\* \* \*

Թուրքիոյ ժողովրդավար պետութիւն մը դառնալու կարելիութեան, դժբախտաբար, Պոլսոյ մէջ ապրող եւ յառաջդիմական-ձախակողմեան գաղափարներով սնած կարգ մը հայ մտաւորականներ ալ կը հաւատան:

Եւ այս յառաջդիմական-ձախակողմեան գլխաւոր մտաւորականներէն մէկը [դժբախտաբար], «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանդ Տինքն էր:

1954թ., Արեւմտեան Հայաստանի [այսօր Թրքական գրաման տակ եղող] Մալաթիայի մէջ ծնած Հրանդ Տինքը, փոքր տարիքին ընտանեօք, Մալաթիայէն Պոլիս կը գաղթեն:

Պոլսոյ Սկիւտարի «Դպրեվանք» կոչուող "Lycee"-ին մէջ հայկական մշակոյթով եւ նաեւ յառաջդիմական-ձախակողմեան գաղափարներով թրծուած Հրանդ Տինքը, աւելի ետք Պոլսոյ համալսարանի փիլիսոփայական բաժինին կը հետեւի:

Այդ տարիներէն սկսեալ Հրանդ Տինք, այլեւս միջազգային եղբայրութեան հաւատացող մարդասիրական աշխարհայեացեացքին մէկ ներկայացուցիչը կը դառնայ: Արդար աշխարհի մը մէջ զանազան ազգերուն խաղաղութեամբ եւ եղբայրաբար ապրելու կարելիութեան հաւատացող մը:

Հայ ազգին 1915թ. ենթարկուած ցեղասպանութեան լաւ ծանօթ Հրանդ՝ հայ ազգին ապագայ բարօրութիւնը թուրք պետութեան Եւրոպական միութիւն մտնելուն մէջ կը տեսնէր:

Իր համոզումով՝ եթէ Թուրքիա Եւրոպական միութեան անդամ ըլլայ՝ պիտի «մարդկայնանայ» եւ Եւրոպական օրէնքներուն պատշաճելով, արդարութեան եւ իրաւունքի սկզբունքներով կառավարուող պետութեան մը պիտի վերածուի:

Եւ Թուրքիան, Եւրոպական օրէնքներուն ենթարկուելով, իր գործած պատմական անիրաւութիւնները պիտի ընդունի:

Այսինքն՝ «Եւրոպականացած» Թուրքիան 1915թ. հայ ազգին դէմ իր գործած ցեղասպանական ոճիրը պաշտօնապէս պիտի խոստովանի ու ճանչնայ, եւ [զերմանացիներուն հրէաներուն համար ըրածին պէս] հայերուն պատճառուած բոլոր կորուստները պիտի հատուցանէ:

Եւ այս մարզի մէջ Հրանդ Տինքի մեծագոյն յոյսը այն էր, որ եթէ Թուրքիան, Եւրոպական միութեան մէջ մտնելով, իրապէս «Եւրոպականանայ» եւ «մարդկայնանայ», Անաթոլիոյ մէջ 1915թ. ջարդէ փրկուելու համար իսլամութիւն ընդունած եւ [իբր թէ] թրքացած միլիոնաւոր հայերը, իրենց իրաւունքներուն տէր կենալով, իրենց արմատներուն՝ հայութեան պիտի վերադառնան:

\* \* \*

Հրանդ Տինքի այս շատ մարդկային, անկեղծ, բայց դժբախտաբար միամիտ մտածումները «Ակօս» թերթին մէջ կը կարդայինք եւ Սփիւռքի մէջ ապրող հայ մը ըլլալով, կը զարմանայինք, թէ ինչպէս աննման յոյս-զաղափարներուն կրնար հաւատալ:

Յաւելուած՝ Հրանդ Տինքը, իր այս զաղափարները Սփիւռքի հայութեան մէջ տարածելու համար, Եւրոպայի եւ Ամերիկայի հայ համայնքներուն մէջ դասախօսութիւններ կը կատարէր: Եւ այս դասախօսութիւններու ընթացքին ան Թուրքիոյ՝ Եւրոպական միութեան մաս կազմելուն «առաւելութիւնները» երկար ու երկար կը բացատրէր:

Եւ ամէնէն կարեւորը՝ Սփիւռքի հայերուն կը յանձնարարէր, որ Թուրքիոյ Եւրոպական միութեան անդամակցութեան դէմ չըլլան, ցոյցեր չընեն, եւ մանաւանդ՝ «Գործը չխանգարեն»:

\* \* \*

Տինքի այս պատրանալից զաղափարներուն դէմ՝ 15 Մայիս 2005-ին, Պոլսոյ «Ակօս» թերթին նամակ մը ուղարկեցինք, հետեւեալ տողերով.

«Եթէ Թուրքիոյ մէջ այսօր, ժողովրդավարութեան գոյութեան կը հաւատաք, 3 Մայիս 2005-ի «Նայիրի»-ին գրութիւնը «Ակօսին» մէջ հրատարակեցէք»:

Հրանդ Տինքին սպանութեան այս օրերուն, մեր «Ակօս»-ին ուղղած նամակը եւ նաեւ «Նայիրի»-ի մէջի 3 Մայիս 2005

Թուակիր գրութիւնը այստեղ մէջքերելը յանուն ճշմարտութեան, յանուն ցաւալի իրականութեան մը հաստատումին՝ օգտակար կը նկատենք:

Յարգարժան «Ակօս» թերթի խմբագրութեան, Պոլիս

Տեղեակ ենք, թէ Թուրքիոյ Եւրոպական միութիւն մտնելուն համար շատ ջանք կը թափէք:

Սա ըսել է, որ այսօրուան Թուրքիոյ՝ Եւրոպական միութիւն մտնելու արժանի ըլլալուն կը հաւատար:

Եթէ, հակառակ ձեր դէմ յարուցուած դատերուն, Թուրքիոյ մէջ «Ազատութիւն»-ի գոյութեան դեռ կը հաւատար, «Նայիրի»-ի մէջի 3 Մայիս 2005-ի գրութիւնը արտատպեցէք:

Բայց մենք կը հաւատանք, որ Թուրքիոյ մէջի այսօրուան «Ազատութիւնը»՝ 1908-1915թթ. «Թալեաթ փաշայական» ազատութիւն է:

\* \* \*

### **24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ, ԹՈՒՐԷՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՃԻՆ ՊԱՏԵՀՈՒԹԵԱՄԲ ԱՆԵՇՔԱԳԻՐ - ԹԻՒ 3**

Մեր այս գրութեան մէջ, Թուրքերուն 1915թ. հայոց դէմ գործադրած աքսոր եւ ջարդին ցեղասպանութենէ մը շատ աւելի ահաւոր, ծրագրուած ցեղային մէկ մաքրագործում մը ըլլալը բացատրելու պիտի ջանանք:

Մեր այս գրութեան մէջ, Թուրքերուն 1915թ. հայոց դէմ գործադրած աքսոր եւ ջարդին բուն նպատակին, հայոց 5000 տարուան հայրենիքին գողութիւնը ըլլալը, բացատրելու պիտի ջանանք:

1948թ. Ժրնեի մէջ ընդունուած “CONVENTION”-ի համաձայն, ցեղասպանութիւնը սապէս բացատրուած է. «ԱԶԳԻ ՄԸ, ՅԵՂԻ ՄԸ ԵՒ ԿԱՄ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱԻԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ԲՆԱԶՆՋՈՒՄԸ՝ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ Է, ԵՒ ՈՐԵՒԷ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՈՃԻՐ ԿԸ

ՆԿԱՏՈՒԻ: ԵՒ ԱՅՍ ՈՃԻՐԸ ԺԱՄԱՆՑՄԱՆ ՕՐԷՆՔԻՆ ԵՆԹԱԿԱՅ ՉԷ»:

Ֆրանսական «LAROUSSE» համայնագիտարանին մէջ իբր ցեղասպանութիւն նշուած ողբերգութիւնները հետեւեալներն են.

- 1944թ., գերմանացիներու կողմէ, հրէաներու եւ գնչուներու բնաջնջումը:

- 1915թ., թուրքերու կողմէ, հայերու բնաջնջումը:

- 15-րդ դարէն սկսեալ գաղութատէր եւրոպացիներու կողմէ Ամերիկայի կարմրամորթներու բնաջնջումը:

- Աւելի վերջերը՝ 1970թ., Գամպոճիոյ եւ 1990թ. Ռուանտայի մէջ կատարուած ջարդերն ալ ցեղասպանութիւն ըլլալով ընդունուեցան:

Ժընեւի «CONVENTION»-ին մէջ նշուած այս վեց ցեղասպանութիւնները 3 մասերու կրնանք բաժնել.

1.- Հրէաներու եւ գնչուներու դէմ կատարուած ցեղասպանութիւնները:

Հրէաները եւ գնչուները իրենց բուն հայրենիքը չեղող հողերուն վրայ՝ Գերմանիոյ, Լեհաստան եւ եւրոպական միւս երկիրներուն մէջ ապրած միջոցին, նացի գերմանացիներու կողմէ ցեղասպանութեան ենթարկուեցան:

Այս տեսակի ցեղասպանութեան մը մէջ ժողովուրդ մը բնաջնջուած կը նկատուի, բայց՝ հայրենիքի կորուստ չունենար:

2.- Գամպոճի եւ Ռուանտայի ցեղասպանութիւններուն մէջ բնաջնջումը իրենց մայր հայրենիքին մէջ եւ իրենց ցեղակիցներուն կողմէ իրագործուած է: Այս տեսակ ցեղասպանութիւններուն մէջ ժողովուրդի կորուստ թէպէտ կայ, բայց բուն՝ մայր հայրենիքի կորուստ չկայ:

Գամպոճիները եւ Ռուանտացիները իրենց մայր հայրենիքէն մէկ սանթիմ հող չկորսնցուցին:

Գամպոճի եւ Ռուանտայի պետութիւնները նոյնութեամբ գոյութիւն ունին այսօր:

3.- Մինչդեռ Ամերիկայի կարմրամորթներուն եւ Հայկական ցեղասպանութեանց մէջ, կարմրամորթներն ու Հայերը թէ՛ ցեղասպանութեան ենթարկուեցան եւ թէ՛ ալ զրկուեցան իրենց անյիշատակ ժամանակներէն մայր Հայրենիքը եղող բնօրրաններէն, որոնք գողցուեցան օտար ներխուժողներուն կողմէ: Եւ կարմրամորթներն ու Հայերը առանց Հայրենիքի մնացին:

Թուրքերը 1915թ., իրենց Հայ ազգին դէմ իրագործած ցեղասպանութեան համար, իբր պատրուակ առաջ կը քշեն որ՝ «Հայերը ազատութիւն կ'ուզէին եւ ապստամբած էին: Այդ պատճառաւ, Առաջին աշխարհամարտին, Հայերուն տեղահան ըրինք»: Թուրքերուն Հայոց մասին այս ըսածները, բոլորովին սուտ են, եւ պատմական իրականութիւններուն բնա՛ւ չեն համապատասխաներ:

19-րդ դարուն, Օսմանեան կայսրութեան անկման շրջանին, օսմանցիներուն բարբարոսութիւններէն փրկուելու համար, բոլոր գերի ազգերը՝ յոյները, սերպերը, ռումանացիները, պուլկարները, ալպանացիները եւ արաբները - բոլորն ալ ապստամբեցան: Միայն մէկ ազգ մը չապստամբեցաւ՝ Հայերը: Եւ դուք՝ թուրքերդ, իբր գնահատանք Հայերուն, անոնց սատիտողոսը տուիք՝ «ՀԱԻԱՏԱՐԻՄ ԱԶԳ՝ ՀԱՅՈՑ»...

Գալով Ապտիւլ Համիտի բռնակալութեան տարիներուն՝ Ապտիւլ Համիտին վայրագութիւններուն դէմ, Սելանիկի մէջ հրէաները եւ դաւանափոխ հրէաները գաղտնի «JEUNES-TURCS»-երու կազմակերպութիւնը մէջտեղ բերին: Եւ «Ժէօն թիւրքերը» ժընեւի մէջ, Ապտիւլ Համիտի իշխանութեան դէմ եղող բոլոր օսմանեան ժողովուրդներու ներկայացուցիչներուն հետ ժողովներ կը գումարէին եւ Ապտիւլ Համիտէն փրկուելու միջոցներու մասին կը խորհէին:

Այս ժողովներուն Հայերն ալ մասնակցեցան: Եւ «Ժէօն թիւրքերուն» հետ, Ապտիւլ Համիտին բռնակալութեան դէմ պայքարիլ սկսան: Նոյնիսկ 1905թ. հրէաները եւ Հայերը, Պուլկարիոյ մէջ, Ապտիւլ Համիտին դէմ մահափորձ մը կազմակերպեցին:

Եւ հայ ֆէտայիները, ումբերով լեցուն կառքը Պոլիս տարին: Նպատակնին՝ այս կառքը, Ապտիւլ Համիտին ուրբաթ օրուան կրօնական արարողութեան գացած միջոցին, պայթեցնելն էր: Բայց ումբերը քիչ մը ուշ պայթեցան: Եւ Ապտիւլ Համիտ ազատեցաւ:

Եւ TEVFİK FİKRET, իր հռչակաւոր բանաստեղծութիւնը՝ «Մէկ ականթարթի յապաղումը», այս ոմբատար կառքին ուշ պայթելուն պատճառաւ Ապտիւլ Համիտին ազատած ըլլալուն «ցաւովը» գրած է:

Այս դէպքը պատմելնուս նպատակը՝ Ապտիւլ Համիտի սարսափելի իշխանութեան դէմ մղուած պայքարին մէջ «Ժէօն թիւրքերուն», հրէաներուն, հայերուն եւ բոլոր ազատատենչ կազմակերպութիւններուն ձեռք ձեռքի եւ կողք կողքի գործած ըլլալը ցոյց տալու համար է: Եւ «Ժէօն թիւրքերուն» կազմած «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան 1908թ., Ապտիւլ Համիտին բռնակալ իշխանութիւնը կործանելով [իբր թէ] ազատութիւն հռչակած օրը թուրքերը, հայերուն հետ, իրենց հրճուանքէն վեր-վեր կը ցատկէին:

Եւ հայերը, 1908թ. մինչեւ 1915 թուականը, «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութիւնը «ազատութիւն» բերող կուսակցութիւն մը նկատեցին, եւ մինչեւ 1915 թուականը թուրքերուն հետ միասնաբար, օսմանցի ըլլալով, «ազատութեան մէջ ապրելու» մասին ըրած սուտերուն հաւատացին:

Եւ հայ կարգ մը առաջնորդներ եւ ղեկավարներ, «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան եւ Թալեաթ փաշային այն աստիճան հաւատացած էին, որ 24 Ապրիլ 1915թ., արսուրի տարուելու օրը, սապէս կ'ըսէին. «ԱՆԿԱՐԵԼԻ Է: ԱՅՍ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ ՍԽԱԼՄՈՒՆՔ ՄԸ ԿԱՅ: ԴԵՌ ԵՐԷԿ, ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻՆ ՀԵՏ ՃԱՇԵՑԻՆՔ ԵՒ ՆԱՐՏ ԽԱՂԱՑԻՆՔ: ՀԻՄԱ ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻՆ ՀԵՌԱԳԻՐ ՄԸ ՔԱՇԵՆՔ, ԵՒ ԱՆ ՄԵՋ Կ'ԱԶԱՏԷ ԵՒ ՍԽԱԼԸ ԿԸ ՃՇԴՈՒԻ»:

Եւ այս միամիտ հայ առաջնորդները չէին հասկցած, որ իրենց դէմ ձերբակալութեան հրամանը արձակողը՝ նոյնինքն՝ Թալեաթ փաշան էր: Եւ Թալեաթ փաշան 1908թ. ի վեր, Պոլսոյ

Փարմասոնական օթեակներուն մէջ, հայ առաջնորդները իբր «եղբայր» կը համբուրէր, եւ հայերուն իր շոայած ճառերով հայ ժողովուրդը «Ազատութեան, եղբայրութեան եւ օսմանցի ըլլալով միասնաբար ապրելու» սուտերով կը քնացնէր:

Բայց Թալեաթ փաշան, նոյն ատեն՝ 1908թ. ի վեր, իր մեղսակիցներուն հետ զաղտնի ժողովներ կը կատարէր եւ հայ ազգին դէմ կատարուելիք ցեղասպանութեան ծրագիրները կը պատրաստէր:

Եւ հայ ազգը, մինչեւ վերջին վայրկեանը, թուրքերուն հաւատաց: Եւ թուրքերը հայ ազգին եւ հայ առաջնորդներուն միամտութենէն օգտուելով, 1915թ. հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին եւ անոր 5000 տարուան հայրենիքը գողցան:

\* \* \*

Հայկական ցեղասպանութիւնը աշխարհի մէջ, իր նմանը չունեցող ցեղասպանութիւն մըն է: Միայն Ամերիկայի կարմրամորթներուն ցեղասպանութիւնը՝ հայոց դէմ կատարուածին կը նմանի: Որովհետեւ, կարմրամորթները, թէ՛ ցեղասպանութեան ենթարկուեցան եւ թէ՛ իրենց հայրենիքը գողցուեցաւ:

Բայց կարմրամորթներուն ցեղասպանութիւնը որոշուած-ծրագրուած ցեղասպանութիւն չէր:

Անոնց «մաքրագործումը» երկար տարիներ տեւեց:

Մինչդեռ հայերը, 11-րդ դարէն սկսեալ տեւաբար ջարդերու ենթարկուելէ յետոյ, 24 Ապրիլ 1915թ. սկսեալ, մինչեւ ամենայետին մանրամասնութեամբ ծրագրուած եւ պատրաստուած շահ սարսափելի ցեղասպանութեան մը ենթարկուեցան: Եւ հայոց 5000 տարուան հայրենիքին մէջ, բոլոր հայերը մաքրագործուեցան, եւ հայերէն պարպուած հողերուն վրայ, այսօրուան Թուրքիան կառուցուեցաւ: Եւ Թալեաթ փաշային հայ ազգը աշխարհի երեսէն սրբելու ծրագիրը, այս ձեւով, իրագործուեցաւ:



\* \* \*

Դժբախտաբար «Ակոս» թերթը, 3 Մայիս 2005-ի «Նայիրի»-ի այս գրութիւնը՝ չհրատարակեց: Եւ արդէն չէր ալ կրնար հրատարակել: Որովհետեւ այսօրուան Թուրքիան, ցեղասպան Թալեաթ փաշային 1915թ. պետութենէն աւելի ցեղասպան եւ բռնակալ է:

Եւ այսօրուան Թուրքիոյ մէջ, իրականութիւնները չեն կրնար բացէն ըսուիլ:

Եւ եթէ անձ մը իրականութիւնները ըսելու համարձակութիւնը ունենայ, Հրանդ Տինքի նման կ'սպաննուի:

\* \* \*

### «ԳՆԱ ՄԵՌԻՐ՝ ԵԿՈՒՐ ՍԻՐԵՄ»

Այսօր՝ 23 Յունուար 2007, Երեքշաբթի առտուան ժամերէն սկսեալ, թրքական հեռատեսիլը Հրանդի յուղարկաւորութիւնը կը ցուցադրէ:

Տասնեակ հազարաւոր մարդիկ «Ակոս»-ի շէնքին առջեւ հաւաքուած են:

Շատերուն ձեռքերուն կան ազդագիրներ (PANCARTE) ըսող. —

«Բոլորս ալ Հրանտ Տինք ենք», «Բոլորս ալ հայ ենք»:

Եւ ժողովուրդը, խուռներամ, կը դիմէ Գում-Գափուի պատրիարքարանին դիմացը գտնուող մայր եկեղեցին, ուր տեղի պիտի ունենայ յուղարկաւորութեան պաշտօնը:

Եկեղեցիին մէջ՝ պաշտօնական անձնաւորութիւններ, դեսպաններ, թուրք պետութեան առաջնակարգ ներկայացուցիչներ: Եւ մանաւանդ՝ զինուորական համազգեստով բարձրաստիճան թուրք սպաներուն ներկայութիւնը ուշադրութիւն կը գրաւէ:

Հայ ժողովուրդը, շատ իմաստալից կարգախօս մ'ունի.

«ԳՆԱ ՄԵՌԻՐ՝ ԵԿՈՒՐ ՍԻՐԵՄ»:

\* \* \*

Թրքական պետութիւնը, Հրանդ Տինքը դատարան յանձնելով, զայն բանտարկութեան դատապարտեց, քանի որ ան ունեցած էր համարձակութիւնը ըսելու, որ «Ցեղասպանութիւն եղած է»:

Բայց Տինք չլռեց:

Վերջին շրջաններուն Հրանդ Տինքը Պոլսոյ կուսակալութեան կողմէ կանչուեցաւ:

Եւ Պոլսոյ կուսակալի օգնականին ներկայութեան՝ սպառնալիքներու ենթարկուեցաւ՝ «Հրանդ Տինք, բնաւ յայտնի չըլլար... փողոցը գլխուդ փորձանք մը կրնայ գալ»... Իբր թէ «բարեկամական» խորհուրդ տուին իրեն...

Բայց Հրանդ չարունակեց գրել իրականութիւնը:

... Եւ, «ի վերջոյ»... 19 Յունուար 2007-ին, Ուրբաթ օր, «Ակօս»-ի շէնքին առջեւ, Հրանդը սպաննելով զինք լռեցուցին:

\* \* \*

24 Ապրիլ 1915-ին Պոլսոյ մէջ բոլոր հայ մտաւորականները ձերբակալուեցան եւ Չանդրըր ու Այաչ արքսորուեցան: Այնտեղ, եղերարախտ մեր մտաւորականներուն մեծամասնութիւնը նահատակուեցան:

Եւ անկէ յետոյ, թուրքերուն համար «Առանց առաջնորդի» մնացած հայ ազգը ցեղասպանութեան ենթարկելը շատ հեշտ եղաւ... Եւ 1915-էն 2007թ. 92 տարիներ անցան:

Եւ դեռ, մինչեւ այսօր, 1915թ. Հայկական ցեղասպանութիւնը գործած թուրքերը չպատժուեցան:

Եւ ցեղասպան թուրքերը, մինչեւ այսօր պատժուած չըլլանուն պատճառով, եթէ առիթը գտնեն, կրկին ցեղասպանութիւններ ու ջարդեր կը կատարեն:

Հրանդ Տինքին սպանութիւնը ասոր նորագոյն օրինակն է: ՌՎ արդարասէր ազգեր...

Յանուն ազատութեան, յանուն մարդկութեան, յանուն արդարութեան՝ այս ցեղասպան թուրքիան պատժեցէք:

Հակառակ պարագային՝ օր մը դուք ալ, թուրքերուն կողմէ, ցեղասպանութեան կրնաք ենթարկուիլ:

Թիւ 135

«Նայիրի», 13 Փետրուար 2007, Թիւ 266

**ԹՈՒՐՔԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ՝ ԱՊՏՈՒԼԼԱԶ ԿԻԼ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՇՈՒԿԱՅԻՆ ՄԷՉ...**

**ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ, ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ, ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ...**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ, ԹԵ՛ ԻՐԱՔԻ ՄԷՉ ԱՏԵՂԾՈՒԱԾ ԶՐՏԱԿԱՆ ՆՈՐ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ...**

**ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՍԱՐ ԱԻԵԼԻ ԿԱՐԵՒՈՐ Է...**

**ԸՆՏՐԵ՛ ՈՒՉԱԾՊ, ԱՊՏՈՒԼԼԱԶ ԿԻԼ**

Մեր այսօրուան գրութեան նպատակը 1960թ. Պոլսոյ մէջ երեւցած «Ամերիկեան շուկայ» կոչուող խանութներու մասին խօսիլ չէ:

1960թ. Պոլսոյ ամերիկեան շուկաները՝ նոյն թուականներուն թուրքիոյ մէջ բացուած ամերիկեան կայաններու զինուորներուն աւելցուքները ծախող խանութներ էին:

Մինչդեռ այսօրուան ամերիկեան շուկան թուրքիոյ համար «Մահու եւ կենաց» հարց է:

Ամերիկան թուրքիոյ կ'սպառնայ.-

«Եթէ Իրաքի մէջի քրտական պետութիւնը չընդունիք՝ ձեր դէմը Հայկական ցեղասպանութեան հարցը կը հանենք»:

Զեզի «չիտակը ըսե՞նք»- երկու հարցերն ալ, իրենց վերջաւորութեան, նոյն ձեւով կ'աւարտին.

1.- Իրաքի քրտական պետութիւնը ի վերջոյ թուրքիոյ մէջ գտնուող 30 միլիոննոց քիւրտերուն պիտի միանայ, եւ թուրքիա կոչուող շինծու պետութիւնը պիտի կործանէ:

2.- Հայկական ցեղասպանութեան ոճիրը գործող թուրքերը՝ ի վերջոյ պիտի պատժուին, եւ թուրքերուն գողցած հայոց հայրենիքը հայերուն պիտի վերադարձուի:

\* \* \*

... Բայց Ապտուլլահ Կիլը՝ իր յոյսը Ամերիկայի հրէական LOBY-ին վրայ դրած է:

Շատ զարմանալի է: 7 Փետրուար 2007թ. Ապտուլլահ Կիլը, Ամերիկայի ԱԳ նախարար Գ. Ռայսի հետ միայն կէս ժամ կը տեսակցի: Յետոյ կ'երթայ հրէական LOBY-ին: Անոնց հետ մէկուկէս ժամ կը բանակցի:

Այսինքն՝ Ամերիկայի հրէական LOBY-ն պետութեան մէջ պետութի՞ւն է:

Արդէն վերջերս, Ամերիկայի Հարվըրտ Համալսարանին կողմէ հրատարակուած գիրքին մէջ գրուած էր, թէ «Ամերիկան ղեկավարողը հրէական LOBY-ն է»:

Ապտուլլահ Կիլ՝ խելացի մարդ է: Ան շատ լաւ գիտէ, թէ «ո՞ր դուռը պէտք է զարնել»:

Բայց եկէք-տեսէք, որ Իրաքի քրտական պետութեան հիմնադիրները եւ անոր ամէնէն շատ թիկունք կանգնողները՝ Համաշխարհային հրէական կազմակերպութիւնն է:

Համաշխարհային սիոնիստական կազմակերպութեան ծրագիրները գործադրող Ֆրանսայի հրէաները 1981թ., քիւրտերուն ի նպաստ աշխատանքներ սկսած էին տանիլ արդէն:

Այդ ժամանակներու Ֆրանսայի նախագահ FRANCOIS MITTERAND-ին կինը՝ DANIELLE MITTERAND-ը, քիւրտերուն մեծագոյն պաշտպանը եւ զիրենք հովանաւորողն էր:

Փարիզի մէջ հիմնուած քրտական մշակոյթի կեդրոնը՝ Տանիէլ Միթթերանին ստեղծագործութիւնն է:

Տիկին Միթթերան քանի մը անգամներ Քիւրտիստան գնաց եւ քիւրտերուն շատ օգնեց:

Այս օգնութիւնները ապագային կազմուելիք քրտական պետութեան շատ ծառայեցին:

Եւ 1990թ. հայր BUSH-ին Իրաքի դէմ սկսած պատերազմին, Հիւսիսային Իրաքի մէջ “DE FACTO” քրտական չրջան մը ստեղծուեցաւ:

2003թ. ալ այսօրուան Պուշին Սատտամը տապալելու համար սկսած Իրաքի պատերազմին, իրաքեան Քիւրտիստանը

վերածուեցաւ իսկական պետութեան՝ իր բանակով, Ազգային ժողովով եւ ամէն ինչով...

Եւ ամէնէն կարելորդ՝ քրտական բանակը մարզողները ամերիկեան համազգեստ հագած հրէայ զինուորական մասնազէտներ էին:

Այս մասին տեղեկացած թուրքերը բողոքեցին՝ բայց հրէական պետութիւնը հերքեց իրեն «վերագրուածը»:

Ամերիկեան համազգեստ հագած հրէայ սպաներուն ինքնութիւնը ո՞վ կրնար հարցնել:

Եւ այսօր իրաքեան Քիւրտիստանը յառաջացման ճամբու մէջ է: Հոն, ամէն կողմ, շինարարութիւն կը տեսնուի: Շէնքեր եւ մանաւանդ գործարաններ կը հիմնուին:

Եւ այս աշխատանքները կառավարողներն ալ՝ քողարկուած հրէաներ են:

Եւ այս իրականութիւններուն մասին թուրքերն ալ լա՛ւ տեղեակ են:

Եւ թուրքերը P.K.K-ի «տեռորիստները» ձերբակալելու պատրուակով Իրաք մտնել կ'ուզեն:

Բայց ամերիկացիները այս մէկը չեն թոյլատրեր:

Եւ իրենց գլխուն գալիք վտանգներուն գիտակից ազգայնամոլ թուրքեր, բացէ ի բաց նոր հիմնուած Քիւրտիստանը կործանելու համար, Իրաքի վրայ յարձակիլ կ'առաջարկեն, եւ իրենց այս նպատակը թրքական թերթերուն մէջ կը հրատարակեն:

Եւ թուրքերուն արգելք եղող ամերիկացիներուն դէմ թերթերուն մէջ, ի՛նչ անարգանքներ ու նաեւ ի՛նչ սպառնալիքներ չեն կատարուիր:

\* \* \*

Ո՞վ մարդասպան, աւարառու եւ ցեղասպան թուրքեր.

Ասկէ առաջ ալ գրած էինք: Դուք այլեւս, ամերիկացիներուն անփոխարինելի դաշնակիցը չէք: Անցան այդ ժամանակները, այն ժամանակները, երբ Ամերիկայի ԱԳ նախարար Հենրի Քիսինճըրին հրամանով ձեր վարչապետը՝ Պիլէնտ

էճեւիտ 1974թ. Կիպրոսի վրայ կը յարձակէր եւ զայն կը թալանէր:

Եթէ առիթը գտնէք՝ կրկին նոյն վայրագութիւնները կրնաք գործել:

Բայց այլեւս ձեզի չեն թոյլատրեր: Դուք միայն անմեղները, Հրանդ Տինքը եւ իր նմանները կրնաք սպաննել:

Ձեր նկարագիրն է այս: Դուք երբեք չէք փոխուիր:

Դուք նոյն վայրենի թուրքերն էք:

Թիւ 136

«Նայիրի», 27 Փետրուար 2007, Թիւ 267

**ԹՐԷԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ  
ԱՍԵՐԻԿԱ ՓՈԽԱԴՐՈՒԵՐ ԵՆ, ԱՊՏՈՒԼԱՅ ԿԻԼԸ ԱՍԵՐԻԿԱ  
ԳԱՅԵՐ Է, ՄԵՍ ԹԻՒՈՎ ԱՉԳԵՅԻԿ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐ  
ԱՍԵՐԻԿԱ ԳԱՅԵՐ ԵՆ, ԵՒ ԱՄԵՆԵՆ ԿԱՐԵՒՈՐԸ՝  
ՄՊԱՅԱԿՈՅՏԻ ՆԱԽԱԳԱՆ, ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ԶՕՐԱՎԱՐ  
YAŞAR BUYUKANIT ԱՍԵՐԻԿԱ ԳԱՅԵՐ Է -  
ԻՆՉ ՊԱՏՃԱՌԱԷ.**

**ԱՍԵՐԻԿԵԱՆ CONGRESS-ԻՆ ՀԱՅՎԱԿԱՆ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ  
ԾՐԱԳԻՐԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՆ ԱՐԳԵԼԸ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՍԱՐ**

Մեր նախկին գրութեան մէջ ալ բացատրել ջանացած էինք՝ թէ այսօր թուրքիոյ ամենակարեւոր հարցը ի՞նչ է: Հայկական ցեղասպանութիւնը, թէ՞ քրդական հարցն է:

Եղելութիւններու վրայ հիմնուելով՝ կրնանք ըսել, որ այսօր թրքական պետութեան ամենակարեւոր հարցը՝ Հայկական ցեղասպանութիւնն է:

Ամերիկա գացող Ապտուլլահ Կիլն ալ, թուրք երեսփոխաններն ալ, սպայակոյտի նախագահ բարձրագոյն զօրա-

վար *YAŞAR BÜYÜKANIT*-ն ալ Ամերիկայի դէմ հետեւեալ սպառնալիքը կը կատարեն՝

«Եթէ Հայկական ցեղասպանութիւնը ճանչնաք՝ իրաքեան Քիւրտիստանի վրայ կը յարձակինք»:

Եւ իրենց այս սպառնալիքներուն մէջ այն աստիճան առաջ կ'երթան, որ Հարաւարեւելեան Անաթոլիոյ մէջ գտնուող թրքական բանակը՝ իրաքեան սահմանի վրայ կը համախմբեն:

Այս գինուորական շարժումներուն իմաստը հետեւեալն է.-

«Չըլլայ որ Հայկական ցեղասպանութեան ծրագիրը ընդունիք: Հակառակ պարագային Իրաք կը մտնենք, քիւրտերը կը մաքրագործենք եւ *KERKÜK*-ը կը գրաւենք»:

Բոլորին ծանօթ է, որ Իրաքի քիւրտերը այսօր, Իրաքի մէջ ամերիկացիներուն վստահութիւնը վայելող միակ դաշնակիցներն են:

Մասնաւորապէս՝ *KERKÜK*-ը:

*PETROL*-ի կեդրոն ըլլալով՝ ամերիկացիներուն համար «Մայր երակ» մըն է:

Եւ թրքական այս սպառնալիքներուն քիւրտերուն համար շատ մտահոգիչ ըլլալը նկատող թրքական Քիւրտիստանի մայրաքաղաք՝ Տիգրանակերտի *D.T.* կուսակցութեան նախագահը՝ *HİLMİ AYDOĞDU*-ն հետեւեալ յայտարարութիւնը կը կատարէ.- «*KERKÜK*-ի վրայ կատարուելիք յարձակումը՝ Տիգրանակերտի վրայ յարձակում կը նկատենք»:

Կրնա՞ք մտածել՝ թրքական Քիւրտիստանի նախագահ նկատուած Տիգրանակերտի *D. T.* կուսակցութեան պատասխանատուն, *HİLMİ AYDOĞDU*-ն, առաջին անգամ ըլլալով, Թուրքիոյ քիւրտերուն եւ Իրաքի քիւրտերուն միութիւնը կը պաշտպանէ:

Այս յայտարարութեան պատճառաւ *HİLMİ AYDOĞDU*-ն «Ատելութիւն եւ թշնամութիւն ստեղծել-գրգռելու յանցանքով» կ'ամբաստանուի հարցաքննիչ դատաւորին կողմէ եւ կը բանտարկուի:

D. T. կուսակցութեան Տիգրանակերտի նախագահ HILMI AYDOĞDU-ն, իր կատարած այս յայտարարութեամբ, միացեալ Քիւրտիստանի ազատութեան դրօշակը պարզած եղաւ:

\* \* \*

Վերադառնանք թրքական սպառնալիքներուն՝ Ամերիկայի կողմէ Հայկական ցեղասպանութեան ճանաչման պարագային, թուրքերը կրնա՞ն յարձակիլ իրաքեան Քիւրտիստանի վրայ:

Բնաւ յայտնի չըլլար՝ թուրքերուն ի՞նչ ընելիքը: Անոնք առիթի մը կ'սպասեն, ազուէսներու պէս:

Օրերը՝ շատ մը նորութիւններով «յղի» են:

«Ամերիկացիները եւ Իսրայէլը՝ Իրանի աթոմական կեդրոններուն վրայ յարձակման կը պատրաստուին», — կը գրեն թերթերը:

Զրո՞յց է, թէ իրականութիւն է: Չենք գիտեր: Բայց կարգ մը նախանշաններ կան:

Գիտէք, թէ դրամի շուկան շատ «զգայուն» է:

Մեծ դրամատէրերու կազմակերպութիւնը, ապագայ եղելութիւններու մասին, շատ առաջուց տեղեկութիւններ կ'ստանայ:

Աւելի ճիշդը ըսե՞նք:

Աշխարհը կառավարողները՝ այս մեծ դրամատէրերու կազմակերպութիւնն է:

Աշխարհի վրայ պատահած բոլոր եղելութիւններուն «ետեւ» այս մեծ դրամատէրերու կազմակերպութիւնը կայ:

Եւ աշխարհի քաղաքական ջերմաչափը ոսկիի գիներն են:

Այս շաբթու մէջ, ոսկիին ONCE-ը 600- տոլարէն 700 տոլարի բարձրացաւ:

Ոսկիի գիներուն մէկ անգամէն այսքան բարձրանալը բնաւ լաւ նշան չէ:

Աստուած մարդկութեանը նոր պատերազմի մը աղէտէն պաշտպանէ:



Թիւ 137

«Նայիրի», 13 Մարտ 2007, Թիւ 268

**«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՃԻՆ ՀԵՏԵԿԱՔՈՎ ՄԵՉ ԱՆԱԹՈՒԻԱՅԵՆ ԿԸ  
ՎՈՆՏԵՆ»**

5.3.2007

ՓՐՈՓ. OMER TURAN

**ԱՆԳԱՐԱՅԻ ՄԻՋԻՆ ԱՐԵԿԵԼԻ ԹԵՔՆԻՔ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԵՆՆ  
ՇԱՏ ՃԻՇՂ ԸՍԵՐ ԷՔ, ՅԱՐԳԱՐԺԱՆ ՓՐՈՓԵՍՈՐ՝  
«ՊԻՏԻ ԵՐԹԱՔ ԷՖԵՆՏԻՆԵՐ, ԱՆՊԱՅՄԱՆ ՊԻՏԻ ԵՐԹԱՔ  
ՄԻՋԻՆ ԱՍԻՈՅ ՏԱՓԱՏԱՆՆԵՐԸ՝ ՈՒՐԿԷ ԵՎԱՔ»**

«ՆԱՅԻՐԻ» 19.6.2001

Անգարայի Միջին Արեւելքի Թեքնիք համալսարանի պատմութեան բաժնի ուսուցիչներէն՝ փրոֆ. դոկտ. OMER TURAN, ամբողջ Թուրքիոյ ուղղուած ազդարարութիւն մը կատարեց եւ ըսաւ, թէ՛ «Այս հարցը կարողութեան հարց է: Որքան տկար ըլլանք՝ մինչեւ հոն կ'երթայ եւ... Անաթոլիայէն մեր վոնտուելուն կը հասնի»:

Եւ փրոֆեսորը չարունակեց. «Թուրքերը՝ իրենց մեծ հայրերուն ցեղասպանութիւն գործած ազգ մը ըլլալով յիշուելու վտանգին հետ դէմ դիմաց են: Ինչո՞ւ այս տեսակ նուաստացում մը ընդունինք»:

«Հայերը՝ Օսմանեան կայսրութեան կազմին մէջ «քրիստոնեայ թուրքեր» որակուելու աստիճան թրքացած էին, եւ թրքերէն լեզուն՝ հայերէնէ աւելի շատ կը գործածէին»:

Յարգարժան փրոֆեսոր՝ հոն կեցիր: Հայերուն՝ թրքացած ըլլալը ըսելով յայտնի ըրիր, որ դուն նոյն պոռոտախօս, ստախօս ու վայրագ օսմանցիներուն չառաւիղն ես:

Եթէ պատմութեան փրոֆեսոր ես, անպայման գիտես որ... 13-րդ դարուն վերջաւորութեան, Միջին Ասիայէն «OĞUZ-KAYI» կոչուող ցեղախումբը, Հիւսիսային Անաթոլիա մտաւ: Եւ այս «OĞUZ» ցեղախումբը Անաթոլիոյ մէջ յառաջանալով «ESKİŞEHİR-SÖĞÜT»-ի շրջակայքը հաստատուեցաւ:

1299թ. էրթողրուլին մանչը՝ Օսմանը, իր անկախութիւնը հռչակեց: Եւ այս ձեւով Օսմանեան կայսրութեան հիմերը նետած եղաւ:

Այս ցեղախումբին պետ արիւնարբու Օսմանը՝ տեղւոյն բնիկ ժողովուրդները, այսինքն՝ յոյներուն եւ հայերուն ստիպեց, որ թրքերէն խօսին: Եւ թրքերէն չխօսողին լեզուն կտրել տուաւ:

Այդ պատճառաւ այս վայրագ Օսմանին իչխած վայրերուն մէջ՝ Էսքիշեհիր, Քոնիա, Կեսարիա եւ Եոզկատի շրջակայքը բնակող յոյները՝ եւ հայերը օսմանեան վայրագութեան վախով, ստիպողաբար թրքերէն կը խօսէին: Բայց ո՛չ յոյները եւ ո՛չ ալ հայերը, հակառակ որ մեծ մասամբ թրքերէն կը խօսէին՝ իրենց կրօնը եւ ազգութիւնը լքեցին:

Յարգարժան փրոֆեսոր՝ կ'ըսէք, թէ «Թուրքերը՝ իրենց մեծ հայրերուն ցեղասպանութիւն գործած ազգ մը ըլլալով յիշուելու վտանգին հետ դէմ դիմաց են: Ինչո՞ւ այս տեսակ նուաստացում մը ընդունինք»:

Բնաւ մտածած է՞ք արդեօք, որ 1071թ. Մանազկերտի մէջ բիւզանդացիներուն ձեր դէմ մղած պատերազմէն յետոյ, առաջին անգամ ըլլալով, թուրք ցեղախումբերը Անաթոլիա ոտք կոխեցին:

Մինչեւ 1071թ. Մանազկերտի պատերազմը՝ Անաթոլիոյ մէջ մէկ հատ թուրք չկար: Պատմութեան ծանօթ թուականներէն ի վեր, Անաթոլիոյ բնիկ ժողովուրդները՝ յոյներն ու հայերը էին:

Այսօր Անաթոլիոյ մէջ ապրող ժողովուրդը հարիւր առ հարիւր իսլամ է: Ի՞նչ եղան պատմութեան ծանօթ թուականներէն ի վեր Անաթոլիոյ բնիկ ժողովուրդները եղող յոյները եւ հայերը:

Յարգարժան փրոֆեսոր, եթէ [իր [թէ] չէք գիտեր՝ մենք ըսենք. «Զեր Անաթոլիա ոտք կոխած թուականէն [1071] սկսեալ, բնիկ ժողովուրդները՝ յոյները եւ հայերը, ձեր թրքական վայրագութեամբ ջարդել սկսաք: Շատեր, սպաննուելէ ազատելու համար, իսլամացան: Մէկ մասն ալ, ձեր վայրագութիւններէն փրկուելու համար, աւելի ապահով կարծուած տեղեր գաղթեցին...»:

Մինչեւ 1915թ., Անաթոլիոյ ժողովուրդին յիսուն առ հարիւրը իսլամացուցած էիք: Բայց մնացեալ յիսուն առ հարիւրը դեռ քրիստոնեայ էին:

1915թ., երիտթուրք «Իթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան ծրագիրը գործադրութեան դրիք: Եւ քրիստոնեաները Անաթոլիայէն մաքրագործել սկսաք: Իսկ 1915թ. ալ հայերը ցեղասպանութեան ենթարկեցիք:

1919թ. մինչեւ 1923թ., ձեր «նախահայրերը» Անաթոլիոյ մէջի յոյները եւ 1915թ. ցեղասպանութենէն ողջ մնացած հայերը մաքրագործեցին:

Եւ ձեր այս վայրագութեան «չնորհիւ», այսօր՝ Անաթոլիոյ ժողովուրդը հարիւր առ հարիւր իսլամ է...

Յարգարժան փրոֆեսոր՝ դուք [իր [թէ] այս իրականութիւններուն տեղեակ չէք: Բայց դուք, այս իրականութիւնները, շատ լաւ գիտէք: Եւ շատ լաւ գիտնալնուդ համար ալ կը վախնաք: Եւ այդ պատճառաւ ալ կ'ըսէք՝ «Հայկական հարցին հետեւանքով մեզ Անաթոլիայէն կը վռնտեն»:

Այո՛, յարգարժան փրոֆեսոր՝ «Պիտի երթաք էֆենտիներ, անպայման պիտի երթաք Միջին Ասիոյ տափաստանները՝ ուրկէ եկաք»:

Թիւ 138

«Նայիրի», 27 Մարտ 2007, Թիւ 269

**«ԼԵՈՆԷՆ ԵԿԱԻ - ԱՅԳԵՊԱՆԻՆ ՎՈՆՏԵՅՑ»,  
«ՔԱՅ ԳՈՂԸ՝ ՏԱՆՏԵՐԸ ԿԸ ԶՍՊԷ»,  
«ՄԻՆԱՐԷՆ ԳՈՂՅՈՂԸ՝ ՊԱՏԵԱՆԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ»**

Յարգելի օսմանցի թալլողներուն շառաւիղ՝ Թուրքե՛ր,

Յարգելի ցեղասպանութիւն կատարած իթթիհատական-ներուն թոռները եղող Թուրքե՛ր,

Այսօրուան մեր գրութեան մէջ, ձեր կարգախօսներուն աջակցութեամբ, ձեր ի՞նչ ըլլալը պիտի ջանանք պատմել:

Վերջին շրջաններուն, ձեր պետական անձնաւորութիւններուն առաջին պարտականութիւնը՝ Հայկական ցեղասպանութիւնը ուրանալու համար սուտեր հնարել է. իբր թէ «հայերը՝ ուսներուն կ'օգնեն» եղեր, իբր թէ «հայերն ալ շատ թուրք ջարդեր են»:

Այս ձարտութիւններուն մարդ չի՛ հաւատար:

Հարցը սա է՝ Թուրքերը, Հայկական ցեղասպանութեան կապակցութեամբ անկիւնի մէջ սեղմուածի վիճակ ունին: Ի՞նչ ընելիքնին, ի՞նչ ըսելիքնին չեն գիտեր:

Թուրքերը, գերմանացիներուն պէս, հրէաներէն ներողութիւն խնդրելով եւ անոնց հատուցում տալով չեն կրնար ազատիլ:

Գերմանացիները հրէաներուն մեռցուցին, բայց գերմանացիները հրէաներուն հայրենիքը չգողցան:

Այդ հայրենիքը գերմանացիներուն կը պատկանէր: Մինչդեռ դուք՝ նաե՛ւ հայերուն հայրենիքը գողցաք: Եւ հայերուն հայրենիքը գողնալու համար ալ՝ հայերը ցեղասպանութեան ենթարկեցիք: Այսինքն՝ ձեր կարգախօսին իմաստին շատ լաւ բացատրութեամբ՝ «Լեոնէն եկաք ու այգեպանը վոնտեցիք»:

Դուք, քանի մը դար առաջ Միջին Ասիոյ լեռներէն Անաթոլիա եկաք: Եւ Անաթոլիոյ այգիներուն հազարաւոր

տարիներէ ի վեր բնիկ ժողովուրդը եղող հայերը, քանի մը դար յետոյ, ցեղասպանութեան ենթարկեցիք:

Այս պատճառաւ, գերմանացիներուն հրէաներուն ըրածին պէս՝ ներողութիւն խնդրելով կամ հատուցում տալով չէք կրնար ազատիլ: Ձեր գողցածը՝ հայոց հայրենիքը հայոց պիտի վերադարձնէք:

\* \* \*

Փետրուար ամսուան մէջ, ամենաառաջնակարգ թուրք պետական անձնաւորութիւնները Ամերիկա գացած են:

Արտաքին գործոց նախարար Ապտուլլահ Կիլը, ծանօթ երեսփոխաններ եւ մանաւանդ՝ սպայակոյտի պետ, բարձրաստիճան զօրավար Եաչար Պիլիքքանըթին Ամերիկա եղած ըլլալը ուշադրութիւն կը գրաւէր:

Սպայակոյտի նախագահը Ամերիկայի մէջ, Իրաքի պատերազմին, Իրաքի մէջի քրտական պետութեան եւ մանաւանդ P.K.K. պատկանող քիւրտներուն մասին պիտի խօսի կը կարծէինք:

Մինչդեռ բարձրաստիճան զօրավար Եաչար Պիլիքքանըթ, Ամերիկայի CONGRESS-ին մէջ, Հայկական ցեղասպանութեան իրողութեան «ընդունման վտանգով» շատ «հետաքրքրուեր» է:

Եւ թուրք զօրավարը Ամերիկա ապրող թուրքերուն հետ, շատ երկար խօսակցութիւններ ունեցեր է եւ այս զրոյցի ընթացքին, ամերիկացի թուրքերուն սա յանձնառարութիւնները կատարեր է.

«ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՒ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ ՄԵԾ ԹԻՒՈՎ ԹՈՒՐՔԵՐ ԿԱՆ:

ԴՈՒՔԻ ԹՈՒՐՔԵՐԴ, ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻԼ ՏԱԼՈՒ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ԴԷՄ ՀԱՐԿ Է ՈՐ ՊԱՅՔԱՐԻՔ»:

Մենք կը կարծէինք, թէ զօրավարները միայն զինուորական հարցերով կ'զբաղին:

Բայց, մեր այս ըսածը, միայն արեւմտեան պետութիւններուն զօրավարներուն համար ճիշդ է:

Եւրոպայի մէջ զօրավարները միայն զինուորական հարցերով կ'զբաղին:

Բայց շատեր ալ լաւ գիտեն, որ Թուրքիան ղեկավարող ուժը [Ազգային ժողովին եւ կառավարութեան վրայ ալ իշխող] բարձրաստիճան զօրավարներէ բաղկացած ազգային ապահովութեան կազմակերպութիւնն է:

Այս մեր ըսածին հարիւր առ հարիւր իրականութիւն ըլլալը, վերջին օրերուն Ադրբեջանի մայրաքաղաք, Բաքուի մէջ աշխարհատարած թրքական սփիւռքի ներկայացուցիչներու մասնակցութեամբ համաժողովի մը գումարումով մէջտեղ եկաւ:

Բաքուի մէջ կայացած այս համագումարին ընթացքին, 48 երկիրներէ եկած թուրք պատուիրակներ հետեւեալ որոշումը տուին.- «ԱՐՏԱՇԽԱՐՀԻ ԹՈՒՐԲ ԵՒ ԱԶԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՀԱՅԿԱԿԱՆ «ԼՕՊԻՒՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ԴԷՄ ՄԻԱՑԵԱԼ ՊԱՅՔԱՐ ՊԻՏԻ ՏԱՆԻՆ»:

ԱՅՍ ԸՍՏԵԼ Է ԹԷ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՕՍՄԱՆՅԻ ԹՈՒՐԲԵՐՆ ՈՒ ԱԶԵՐԻՆԵՐԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՊԻՏԻ ՅԱՐՁԱԿԻՆ ԵՒ ՊԻՏԻ ԶԱՆԱՆ ՀԱՅԵՐԸ ՍԱՐՍԱՓԵՑՆԵԼ ՈՒ ՎԱՒՅՆԵԼ:

Ասոր կ'ըսեն [ձեր կարգախօսը կրկին նշենք]. «Քաջ գողը՝ տանուտէրը կը զսպէ» ու անոր յանցաւոր կը հանէ:

«Մինարէն գողցողը՝ պատեանը կը պատրաստէ»:

Թուրքե'ր, ձեզի բան մը ըսենք՝ ձեր այս վայրագութիւնները Թուրքիոյ մէջ կը քալեն, բայց Եւրոպայի մէջ եւ մանաւանդ Ամերիկայի մէջ՝ չեն ... անցնիր:

Ասոր համար կ'ըսենք.- Թուրքե'ր, թալանի ու քանդումի օսմանական շրջանը անցաւ: Ի՞նչ ալ ընէք՝ օգուտ չունի: ԶԵՐ ԳՈՐԾԱԾ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԺԸ ՊԻՏԻ ԿՐԷՔ:

Թիւ 139

«Նայիրի», 24 Ապրիլ 2007, Թիւ 270

## **24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ ԹՈՒՐԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ ԳՈՐԾԱԳՐՈՒԻԼ ՍԿՍԱԾ ՀԱՅ ԱԶԳԻՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 92-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՊԱՏԵՇՈՒԹԵԱՄԲ՝**

### **ԱՆԵՇԵԱԳԻՐ ԹԻ 1**

18 Ապրիլ 2007-ին, Մալաթիոյ մէջ քրիստոնէական քարոզչութիւն ընելնուն համար՝ մէկ գերմանացիի եւ երկու թուրքերու կոկորդները կտրելով սպաննեցին:

Տարիներէ ի վեր կը գրենք.

«Թուրքերը Հայկական ցեղասպանութիւն կատարած ըլլալու յանցանքով մինչեւ որ չպատժուին, անոնք պիտի շարունակեն նոր ցեղասպանութիւններ, նոր ջարդեր կատարել»:

Եւ կրկին կ'ըսենք՝ ո՛վ քրիստոնեայ եւրոպացի ազգեր, 1915-ին հայ ազգը, թուրքերուն կողմէ ցեղասպանութեան ենթարկուած միջոցին, ձեր մատն անգամ չչարժեցիք:

Ասոր պատիժը պիտի կրէք: Եւ ձեր՝ Եւրոպական միութիւն մտնել ջանացող Թուրքիան, առաջին առիթով, Եւրոպայի քրիստոնեաները ցեղասպանութեան պիտի ուզեն ենթարկել:

Վերջին օրերուն, Մալաթիոյ մէջ կատարուած սպանդին առնչութեամբ, թուրք պետական անձնաւորութիւններ՝ կոկորդիլոսի արցունքներ կը թափեն:

Վարչապետ Էրտողան՝ «Կատարուած ղէպքը՝ վայրագութիւն է» ըսեր է:

Մինչդեռ միջոց մ'առաջ, վարչապետ Էրտողանին կառավարութեան անդամ պատասխանատուները՝ «Ջախջախիչ մեծամասնութեամբ իսլամ եղող Թուրքիոյ մէջ միսիոներնեւրուն տարած աշխատանքներուն համար զանգատ յայտնած էին»:

Ասկէ զատ՝ քիչ մ'առաջ Տրապիզոնի մէջ սպաննուած կաթողիկէ վարդապետ SANTORO-ին եւ Պոլսոյ մէջ սպաննուած հայ լրագրող Հրանդ Տինքին մարդասպաններուն դատավարութիւնը առեղծուածի վերածուած էր:

Այսօր ամէն մարդ տեղեակ է, որ այս սպանութիւններուն ետեւ, Թուրքիան կառավարող գաղտնի ուժերուն ձեռքը կայ:

Բայց այս վիճակը, Թուրքիոյ մէջ, առաջի՛ն օրէն այդպէս էր:

Աւելի ճիշդ... 1908-ին, երիտթուրք իթթիհատականներուն իշխանութիւնը ձեռք անցուցած օրէն ի վեր, Թուրքիոյ սանձերը գաղտնի ուժերուն ձեռքն էր:

1923-ին՝ հանրապետութեան հռչակումէն մինչեւ այսօր ալ, Թուրքիան կառավարողները նոյն գաղտնի ուժերն են:

Եւ մինչեւ որ այս գաղտնի ուժերը չպատժուին՝ Թուրքիան պիտի չարունակէ ըլլալ ջարդերու եւ ցեղասպանութիւններու պետութիւն:



Թիւ 140

«Նայիրի», 15 Մայիս 2007, Թիւ 271

**ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՅԸ` NICOLAS SARKOZY**

**ՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ ՀՐԵՇՏԱԿ Է,  
ԹՈՒՐԷՐՈՒՆ ՀԱՍԱՐ` ՍԱՏԱՆԱՅ:**

**ԻՆՉՈՒՒՑ:**

**ՈՐՈՎԷՏԵՏԷ NICOLAS SARKOZY-ԻՆ 2 ՄԱՅԻՍ 2007-ԻՆ, ԻՐ ՍՐՅԱԿԻՅԻՆ` SEGOLENE ROYAL-ԻՆ ՇԵՏ ՇԵՌԱՏԵՍԻԼԵՆ ՈՒՆԵՅԱՄ ԲԱՆԱԿԵՃԻ ԸՆԹԱՅՔԻՆ, 20 ՄԻԼԻՈՆ ՖՐԱՆՍԱՅԻ ԴԻՏՈՂՆԵՐՈՒՆ ԱՉՔԻՆ ԱՈՋԵՒ ԲԱՅԱՅԱՅՏՕՐԵՆ ԸՍԱԲ «ԹՈՒՐԷՐԱՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԶԻ ԿՐՆԱՐ ՄՏՆԵԼ, ՈՐՈՎԷՏԵՏԷ ԹՐԷԱԿԱՆ ՀՈՂԵՐԸ ՓՈՔՐ ԱՍԻՈՅ ՄԵՉ ԿԸ ՉՏՆՈՒՄ»:**

Ֆրանսայի նախագահական ընտրութիւններէն 4 օր առաջ՝ 2 Մայիս 2007-ին, Ֆրանսական հեռատեսիլներուն վրայ՝ DE GAULLE-ի U.M.P. կուսակցութեան թեկնածու NICOLAS SARKOZY եւ Ընկերվարական կուսակցութեան թեկնածու SEGOLENE ROYAL 20 միլիոն ֆրանսացի հեռուատաղի-տողներու առջեւ բանավէճ մը ունեցան:

SEGOLENE ROYAL իր կուսակցութեան գաղափարները արտայայտեց եւ ըսաւ թէ՛ «Թուրքիոյ հետ կը բանակցինք: Եթէ Թուրքիա Եւրոպայի անդամակցութեան պայմանները լրացնէ՛ կրնայ Եւրոպական միութեան մէջ մտնել»:

Բայց Նիգոլայ Սարքոզի բացայայտօրէն եւ վճռականապէս ըսաւ. «Թուրքիա Եւրոպական միութեան մէջ չի կրնար մտնել, որովհետեւ Թուրքիոյ հողերը Եւրոպայի մէջ չեն գտնուիր, Փոքր Ասիոյ մէջ են: Թուրքիան Եւրոպական միութեան մէջ ներմուծել ուզողները Եւրոպան ներսէն քանդել ուզողներն են: Անոնք Եւրոպայի թշնամիներն են:

Ես, դպրոցներուն մէջ, աշակերտներուն՝ Եւրոպայի սահմանները Սուրիայէն եւ Պարսկաստանէն կ'սկսին չեմ կրնար ըսել:

Թուրքիան “CAPPADOCE” է: Թուրքիա գտնուող յարգելի աշակերտներ՝ Կապադովկիային ուր ըլլալը գիտէ՞ք: Կապադովկիան այսօր ձեր KAYSERİ- կոչուած շրջանին պատմական անունն է: Կապադովկիան ժայռերու մէջ փորուած, հրաշակերտ եկեղեցիներ ունեցող շրջան մըն է: Քրիստոնեաներուն օրրանն էր CAPPADOCE-ն:

Բայց այսօր, այնտեղ, մէկ հատ իսկ քրիստոնեայ չկայ:

Կրնա՞ք երեւակայել՝ 11-րդ դարուն վերջաւորութեան Միջին Ասիայէն Անաթոլիա խուժող օսմանցի ըսուած ձեր նախնիներուն կատարած ցեղասպանութեան ահաւորութիւնը:

Բայց ձեր առաջնորդներուն մտայնութեան մէջ, մինչեւ այսօր ոչ մէկ փոփոխութիւն կատարուած է:

19 Յունուար 2007-ին, Պոլսոյ մէջ Հրանդ Տինքը սպաննել տուող ձեր առաջնորդները, 18 Ապրիլ 2007-ին, Մալաթիոյ մէջ, 3 երիտասարդներ ոչխարներու նման մորթեցին այն պատրուակով, որ անոնք քրիստոնէական քարոզչութիւն կ'ընեն:

Ֆրանսայի նոր նախագահը՝ Նիգոլա Սարքոզի «Թուրքիան Եւրոպական միութեան մէջ չի կրնար մտնել... Որովհետեւ Թուրքիան Փոքր Ասիոյ մէջ կը գտնուի» ըսած ատեն, ան շատ լաւ գիտէր, թէ այսօրուան Թուրքիան ոչ միայն մշակոյթով եւրոպական չէ, այլ՝ մտայնութեամբ եւ վարք ու բարքով ալ վայրենի, անգութ եւ թալանող՝ Միջին Ասիայէն եկած օսմանցի ցեղախումբին ժառանգորդն է:

Որովհետեւ Նիգոլա Սարքոզիին հայրը հունգարացի էր: Եւ անոր նախնիները, 17-րդ դարու սկիզբներուն, Հունգարիան թալանող եւ զայն ահ ու սարսափի մատնող օսմանցիներուն դէմ պայքարած էին:

Եւ Հունգարիոյ թագաւոր Ֆերտինանտ Երկրորդը՝ Սարքոզիներուն ցուցաբերած հերոսութիւններուն համար, անոնց

ազնուականութեան տիտղոս, Ասպետի աստիճան եւ դղեակ մը նուիրած էր:

Այս տեղեկութիւնները տուող 11 Ապրիլ 2007 թուակիր թրքական "Hürriyet" թերթին վերնագիրը կը հրատարակենք առ ի տեղեկութիւն:

Կը յուսանք, որ Նիզոյա Սարքոզի չի մոռնար իր նախնիներուն օսմանցիներէն տեսած վայրագութիւնները, եւ հանրապետութեան նախագահ ընտրուելէ առաջ տուած խոստումները կը յարգէ:

Որովհետեւ Ամերիկայի մէջ նախագահներ՝ Ռիկըն, Քլինթըն եւ Պուշ նախագահ ընտրուելէ առաջ, քուէ կորզելու համար «Հայկական ցեղասպանութիւնը պիտի ընդունինք» ըսած էին: Բայց նախագահ ընտրուելէ յետոյ՝ իրենց խոստումը դրժեցին:

Բայց մենք կը սիրենք հաւատալ, որ Նիզոյա Սարքոզի իր խօսքին տէր նախագահ մըն է. ուստի... «ԹՈՒՐ-ՔԻԱՆ ԵՒՐՈ-ՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՉԻ՝ ԿՐՆԱՐ ՄՏՆԵԼ»:

11 Ապրիլ 2007 թուակիր «Հուրրիեթ» թերթի 20-րդ էջի վերնագիրին եւ ենթախորագիրին թրքերէնէ հայերէն թարգմանութիւնը...

**ՍԱՐՔՈԶԻ ԳԱՂՏՆԻՔԸ...  
ԻՐ ՆԱԽՆԻՆԵՐԸ ՕՍՍԱՆՅՈՒՆԵՐՈՒՆ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՍԵՐ ԵՆ**

Ֆրանսայի Հանրապետութեան նախագահութեան արչաւին մէջ, առաջին շարքի վրայ գտնուող (U.M. P.- UNION POUR UN MOUVEMENT POPULAIRE) «Ժողովրդական շարժման միութիւն» կուսակցութեան թեկնածուն NICOLAS SARKOZY-ին թուրքերուն դէմ ըլլալուն պատճառը հասկցուեցաւ:

Հունգարացի պատմագէտ SANDOR MOSONY-ին համաձայն՝ 17-րդ դարուն սկիզբները, Հունգարիոյ թագաւոր FERDINAND Երկրորդի շրջանին, օսմանցիներուն դէմ պատերազմող եւ մեծ հերոսութիւններ գործած «SARKOZY»-ի ընտա-

նիքը ազնուականութեան տիտղոսով, Ասպետի զինանշանով եւ դղեակով պարզեւատրուեցաւ:

Թիւ 141

«Նայիրի», 29 Մայիս 2007, Թիւ 272

**ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ 19 ՄԱՅԻՍ 1919 ՏԱՐԵԹԻԸ  
ՍՈՒՏԱՅԱ ՔԵՄԱԼԻՆ ՍԱՍՍՈՆ ՈՏՔ ԿՈՒՍԱԾ ՕՐՆ Է:  
ԵՒ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ «19 ՄԱՅԻՍԸ» ՏՕՆԻ ՕՐ Է:  
ԲԱՅՑ ՊԵՏԻՔ ԱՐԴԵՕՔ, ԹԷ 19 ՄԱՅԻՍԸ  
ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՍԷՉ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՍՈՒԳԻ ՕՐ Է:**

1994թ. Յունաստանի մէջ հանրապետութեան նախագահը՝ Կոստանդին Գարամանլիս, 19 Մայիս տարեթիւր, Պոնտոսի յոյներուն 1916-1923 տարիներուն թուրքերուն կողմէ ցեղասպանութեան ենթարկուելուն հիշատակին, պետական օրէնքով «Սուգի օր» հռչակեց:

Այսինքն՝ յոյներուն համար «Սուգի օր» եղող «19 Մայիսը», թուրքերը զայն որպէս տօնական, խնդութեան օր կը յիշատակեն: Կրնա՞ք երեւակայել, որ հրէաներուն 1943թ. ցեղասպանութեան օրը, գերմանացիները զայն իբր տօնական օր յիշատակեն: Ահա, դուք՝ թուրքերդ, ձեր իրագործած ցեղասպանութիւնները հրճուանքով տօնախմբող վայրի ազգաբնակչութիւն մըն էք:

Մինչեւ 1914թ. Սեւ ծովի եզերքի չրջանին մէջ, նուազագոյն՝ մէկ միլիոնէ աւելի պոնտոսցի յոյներ կ'ապրէին:

Այս պոնտոսցիները, 4000 տարիներէ ի վեր, Սեւ ծովի չրջակայքը ապրող տեղացի ժողովուրդն էին:

11-րդ դարուն վերջաւորութեան, թուրքերուն Անաթոլիա ոտք կոխելէն քանի մը դար յետոյ, սևծովեան եզերքները օսմանցիներուն կողմէ գրաւուեցան:

Եւ օսմանցիներուն «տխրահոչակ» բարբարոսական արարքին՝ բնիկները իսլամացնելու քաղաքականութեան հետեւանքով, պոնտոսցի յոյներուն մէկ մասը դարձան կրօնափոխ եւ իսլամացան:

«Լազ» կոչուած Սեւ ծովի ժողովուրդը՝ իրականութեան մէջ իսլամացած պոնտոսցի յոյներ են:

Այս լազերը թէեւ իրենց կրօնը փոխեցին, բայց իրենց լեզուն, այսինքն՝ յունարէնը, մինչեւ ետք, պահպանեցին:

Եւ նոյնիսկ մինչեւ այսօր, լազերուն իրենց միջեւ խօսած լեզուն, իրականութեան մէջ յունարէնն է:

Ճիշդ՝ «համչենցիներուն» նման:

Համչենցիները՝ Սեւ ծովու լեռնային շրջաններուն մէջ, հազարաւոր տարիներէ ի վեր ապրող տեղացի ժողովուրդ մըն են եւ հայ են:

Եւ համչենցիներուն հայերէն անունը՝ «Համաչէն» է:

Հայաստանի մէջ համչենցիներուն պատմութեան մասին չատ մը գիրքեր հրատարակուած են:

Համչենցիներն ալ, պոնտոսցիներուն նման, իրենց մէկ մասով իսլամացած են: Միւսները, մերժելով իսլամութիւնը ընդունիլ՝ սպաննուած: Իսկ մէկ մասն ալ յաջողած է գաղթել: Եւ հաստատուած են Կովկասի հիւսիսային շրջակայքը, նոյնիսկ մինչեւ այսօր, իսլամացած համչենցիներ կ'ապրին: Եւ ասոնք, պոնտոսցիներուն նման, իրենց նախնիներուն լեզուն կը խօսին:

Այսինքն՝ դեռ մինչեւ այսօր, սևծովեան լեռնային շրջակայքը ապրող համչենցիները իրարու հետ հայերէն կը խօսին:

\* \* \*

Բնիկ սամսոնցիները գիտեն, որ Սամսոնի մէջ «Սեւ Սամսոն» կոչուած շրջան մը կայ:

Այս շրջանին ինչո՞ւ Սեւ Սամսոն անունը տուեր են՝ գիտէ՞ք արդեօք:

... Մուստաֆա Քեմալին Սամսոն ոտք կոխած՝ 19 Մայիս 1919-ի օրը, Սամսոնի մէջ բնակող բոլոր յոյները, այս Սեւ Սամսոնի շրջանը կը կեդրոնացնեն:

... Եւ հոն, բոլոր յոյներուն կ'սպաննեն:

Այս պատճառաւ այս շրջանը՝ Սեւ Սամսոն կոչուեր է:

... Մուստաֆա Քեմալին Սամսոն ոտք կոխած օրը, այնտեղ կատարուած ջարդերը՝ սևծովեան բոլոր շրջաններուն մէջ բնակող յոյներուն դէմ ալ գործադրուեցան:

Եւ այս սելով, սևծովեան շրջանը ապրող մէկ միլիոնէ աւելի յոյներուն մեծամասնութիւնը՝ ցեղասպանութեան ենթարկուեցան:

Եւ այնտեղ ու մօտակայքը բնակող քրիստոնեաները «մաքրագործուեցան»:

Ահա՛ թէ ինչու դուք, վայրենի՛ թուրքեր, 19 Մայիսին ձեր իրագործած պոնտոսցի յոյներուն բնաջնջման թուականը իբր տօնական օր կը յիշատակէք:

Եւ յոյներն ալ, Յունաստան եւ աշխարհի բոլոր կողմերը բնակող՝ 19 Մայիսի օրը, թրքական վայրագութեան զոհ եղած հարիւր հազարներով պոնտոսցի յոյներուն յիշատակին ի յարգանս՝ կ'աղօթեն:

Ահա, Միջին Ասիայէն եկած վայրենի թուրքերուն եւ աշխարհի քաղաքակրթութեան հիմնադիրներէն եղող յոյներուն տարբերութիւնը:

Թիւ 142

«Նայիրի», 12 Յունիս 2007, Թիւ 273

**ԻՆՉԵ՛Ր ԿԸ ՊԱՏԱՀԻՆ ՀԱՐԱՒԱՐԵԻԷԼԵԱՆ ԱՆԱԹՈՒՒՅՑ ՄԵՉ:  
ԱԲԵԼԻ ՃԻՇԳ՝ ԶԻՐՏԻՍՍԱՆԻ ՄԵՉ ԻՆՉԵ՛Ր ԿԸ ՊԱՏԱՀԻՆ:  
ԲԱՅՅ Ո՛Ր ԶԻՐՏԻՍՍԱՆԻ ՄԵՉ: ՀԱՐԱՒԱՐԵԻԷԼԵԱՆ  
ԶԻՐՏԻՍՍԱՆԻ ՄԵՉ, ԹԵ՛ ԻՐԱՔԻ ՀԻՒՍԻՍԸ:  
1990-ԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ (ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ)  
ՀՐԷԱՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ ՀԻՄՆՈՒԱԾ ԶԻՐՏԻՍՍԱՆԻ՝ ՄԵՉ:  
ՄԵՐ ՀԱՍԿՅԱԾԻՆ ՀԱՄԱՉԱՅՆ՝ ԹՈՒՐԵՒԱՆ, ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒՆ  
ԻՐԱՔԻ ՄԵՉ ՄԱՏՆՈՒԱԾ՝ ԳԺՈՒՄՐ ՎԻՃԱԿԵՆ ՕԳՏՈՒԵԼՈՎ,  
[ԻՐՐ ԹԵ] P.K.K.-ԱԿԱՆ ԱՀԱՐԵԿԻՉՆԵՐԸ ՄԱՔՐԱԳՈՐԾԵԼՈՒ  
ՊԱՏՐՈՒԱԿՈՎ, ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՔԻ  
ՔՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԿՈՐԾԱՆԵԼ Կ՛ՈՒՅԷ:**

Թուրքիան երկար ժամանակէ ի վեր, իրաքեան Քիւրտիստանը մաքրագործելու կը պատրաստուէր, եւ ասոր համար ալ առիթ մը կը փնտռէր:

Թրքական սպայակոյտի նախագահութիւնը, ամերիկացիներուն Իրաքի մէջ վերջ չունեցող պատերազմի անելէն օգտուելով, իրաքեան Քիւրտիստանի վրայ յարձակելու համար ծրագիրներ պատրաստած էր:

Բայց *Tayyip Erdoğan*-ի կառավարութիւնը այս տեսակի յարձակում սկսելու համար տատամսոտ էր:

Ասկէ զատ՝ ամերիկացիները, թուրքերուն իրաքեան Քիւրտիստանի վրայ որեւէ մէկ շարժում կատարելու բացարձակապէս արտօնութիւն չէին տար:

Մինչ այդ՝ «Կամուրջին տակէն շատ ջուրեր անցան»:

Եւ Թուրքիան նոր ընտրութիւններ կայացնելու որոշում տուաւ:

Վարչապետ *Tayyip Erdoğan*-ի եւ սպայակոյտի նախագահ *YASAR BÜYÜKANIT*-ի միջեւ կատարուած սակարկութենէն յետոյ, *Tayyip Erdoğan*-ը սպայակոյտին իրաքեան Քիւրտիս-

տանի վրայ կատարուելիք յարձակման ծրագիրը ստիպուեցաւ ընդունիլ:

Եւ անկէ յետոյ՝ դէպքերը իրար յաջորդեցին:

Յունիսի առաջին օրերուն, Տերսիմի ոստիկանական պահականոցին վրայ յարձակում գործող P.K.K. քիւրտ ահաբեկիչները 8 զինուոր սպաննեցին:

Այս դէպքէն յետոյ, Թրքական զինուորական ուժերը իրաքեան սահմանին վրայ իրենց կուտակումները արագացուցին:

Եւ 7 Յունիս 2007 Թուականին, ամերիկեան "Associated Press" լրատու գործակալութիւնը Թրքական զինուորական ուժերուն իրաք մտած ըլլալու լուրը հրապարակեց:

Այս լուրը աշխարհի մէջ նոր պատերազմի մը սկզբնաւորութիւն նկատուած ըլլալով՝ մեծ վրդովում ստեղծեց:

Քարիւղի գիները սակարաններու մէջ բարձրացան:

Բայց աւելի վերջ հասկցուեցաւ, որ լուրը չափազանցուած էր:

Թրքական ուժերը ոմբակոծումներ կատարած էին, բայց մեծ տարողութեամբ զինուորական յարձակում մը չէր կատարուած:

Այնպէս կը հասկցուէր, որ Թուրքերուն կատարածը փորձ մը, ազդարարական գործողութիւն մըն էր:

Բուն յարձակումը, վիճակին համեմատ, աւելի վերջ պիտի կատարուէր:

Բայց, սա որոշ էր, որ Թրքական զինուորական ուժերը իրաքեան սահմանին վրայ կազմ ու պատրաստ վիճակով ահազանգի մէջ էին եւ յարմար առիթի կը սպասէին:

Եւ այդ վիճակին մէջ, իրաքեան Քիւրտիստանի կառավարութեան գլխուն վրայ, տեւական դամոկլեան սուրը կախուած կեցած էր:

Բայց այս զինուորական գործողութիւնը Թուրքերուն համար չատ նպաստաւոր չեղաւ:

1.- Իրաքի կառավարութիւնը իրաքեան հողերուն ոմբակոծման համար Թուրքիոյ բողոքի ծանուցագիր մը ուղարկեց:



2.- Եւրոպական միութիւնը Թուրքիոյ հետ սկսած բանակցութիւնները կեցուց:

3.- ՆԱԹՕ-ի ընդհանուր քարտուղարը Անգարա եկաւ:

Այս ժամանման իմաստը հետեւեալն էր.— ՆԱԹՕ-ին տուած զէնքերը Թուրքիան ուրիշ նպատակներու չի կրնար գործածել:

\* \* \*

Այնպէս յայտնի կ'ըլլայ, որ քրտական հարցին պատճառաւ, Թուրքիոյ «գլուխը շատ փորձանքներու մէջ է»:

Այս քրտական հարցը շատ լաւ բացատրող, 10-6-2007 թուակիր "HÜRRİYET" թերթի մէջ տրուած լուրը նոյնութեամբ կը հրատարակենք:

**«ԱՀԱԲԵԿԶՈՒԹԻՒՆԸ ՄԷԿ ԱՄՍՈՒԱՆ ՄԷՋ 42 ԶՈՀԵՐՈՒ ՊԱՏՃԱՌ ԵՂԱԻ**

Թուրքիոյ մէջ ահաբեկչական յարձակումները, վերջին մէկ ամսուան ընթացքին, 42 հոգիի մահուան պատճառ եղան:

9 Մայիսէն 9 Յունիսի ընթացքին ահաբեկչական յարձակումներուն պատճառաւ 26 ապահովութեան պաշտօնեայ նահատակուեցան: Եւ վիրաւորներուն թիւը 60-ի բարձրացաւ: Եւ 16 հայրենակիցներ ալ ահաբեկչութեան պատճառաւ իրենց կեանքերը կորսնցուցին:

Սահմանային գործողութեան հարցերու եւ սպայակոյտի նախագահութեան ահաբեկչութեան դէմ ժողովրդային բողոքներու հրաւերներուն արձագանգները շարունակած միջոցին, "GÜÇLÜKONAK"-ի մէջ հետուէն ղեկավարուող «Թակարդի» մը պատճառաւ 1 գնդապետ, 1 հազարապետ եւ 1 տասնապետ, կեանքերնին կորսնցուցին:

Տրուած տեղեկութիւններու համաձայն՝ 9 Մայիսէն 9 Յունիսի ընթացքին, 25 զինուոր եւ 1 պահակ նահատակուեցան:

Իզմիրի շուկային մէջ պայթեցուած ումբի եւ Անգարայի Ուլսա թաղամասին մէջ կատարուած ինքնասպանական

դէպքերուն հետեւանքով, այս ամսուան մէջ սպաննուած հայ-  
րենակիցներուն թիւը 16-ի բարձրացաւ:

Կատարուած գործողութիւններու ընթացքին յառաջա-  
ցած բախումներուն պատճառաւ եւ լարուած ծուղակներու  
հետեւանքով 60 ապահովութեան պաշտօնեայ վիրաւորուե-  
ցան եւ մէկ ամսուան ահաբեկչութեան պատճառաւ եղած  
զոհներուն թիւը 42 -ի բարձրացաւ»:

“HÜRRİYET” 10-6-2007

\* \* \*

24 Ապրիլ 1915 թուականին, թուրքերուն կողմէ գործուած  
Հայկական ցեղասպանութեան ատեն խեղճ անզէն հայերը  
էտիրնէէն մինչեւ Վան ոչ մէկ դիմադրութիւն ցոյց տալով  
հանդերձ, անոնք թուրքերուն կողմէ հաւաքուեցան եւ բնա-  
ջնջուեցան:

Բայց այսօր, քիւրտերուն դէմ, արդեօք ի՞նչ պիտի կարե-  
նաք ընել:

Այսօր, միլիոնաւոր եւ միլիոնաւոր քիւրտեր ձեր մէջն են:

Ո՞վ քիւրտ է: Ո՞վ թուրք է- յայտնի չէ:

Եւ հայերէն գողցուած Անաթոլիոյ հողերուն վրայ քիւր-  
տերը, ամէնէն կատարելագործուած զէնքերով եւ կազմած-  
ներով ձեզի դէմ պատերազմ կը մղեն:

Եւ դուք հարուածին որ կողմէ գալը չէք կրնաք գիտնալ:

Եւ շատ անգամ քիւրտերուն պատրաստած ծուղակներուն  
զոհը կ'ըլլաք:

10 Յունիս 2007-ին “HÜRRİYET”-ի մէջ հրատարակուած  
գրութիւնը, այս կացութիւնը շատ լաւ կը բացատրէ:

Ասկէ առաջ ալ ըսած էինք. «Մի առնէր անմեղին անէծքը:  
Ան կ'իրականանայ կամաց-կամաց»:

Թիւ 143

«Նայիրի», 26 Յունիս 2007, Թիւ 274

**ՄԵՂՔ ԵՂԱԿ ՀԱՅ ԱԶԳԻՆ:**

**ՀԱՅ ԱԶԳԻՆ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ:**

**ԿՈՐԾԱՆՈՂ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՉՈՂԸ՝  
ՀԱՅԵՐԸ ԵՂԱՆ:**

**ՈՐՈՎԶԵՏԵՒ ՕՍՄԱՆՅԻՆԵՐՈՒՆ ՔՐԱԿԱԾ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ  
ՓՏՆՈՒՈՂ ԲՈԼՈՐ ԲՆԻԿ ԱԶԳԵՐԸ՝ ԻՐԵՆՅ՝ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ  
ՏԻՐԱՅԱՆ՝ ՍԵՐՊԵՐԸ, ԱԼՊԱՆԱՅԻՆԵՐԸ, ՊՈՒԿԱՐՆԵՐԸ,  
ՀՈՒՆՔԱՐՆԵՐԸ, ՌՈՒՄԱՆԱՅԻՆԵՐԸ, ՅՈՅՆԵՐԸ ԵՒ ԲՈԼՈՐ  
ԱՐԱՔ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՄԷՅՄԷԿ ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՂԱՆ:**

**ՄԻԱՅՆ ՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ՕՍՄԱՆՅԻՆԵՐՈՒՆ  
ԿՈՂՄԷ ՔՈՂՅՈՒԹԵՅԱՒ:**

**ԵՒ ՀԱՅ ԱԶԳԸ՝ ՕՍՄԱՆՅԻՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԹԵՅԱՒ:**

**ԵՒ 4000 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ,  
ԹՈՒՐԷՒԱ ԿՈՉՈՒՈՂ ՆՈՐ ԵՒ ԵՒՆԾՈՒ ԹՈՒՐԷ  
ՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԻՄՆՈՒԹԵՅԱՒ:**

**ԱՀԱ, ՄԷԿ ՔԱՆԻ ՆԱԽԱՂԱՍՈՒԹԵԱՄԲ, ՀԱՅՈՅ ԵՒ  
ՕՍՄԱՆՅԻՆԵՐՈՒՆ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ**

1908թ. սելանիկցի հրէաներու եւ դաւանափոխ հրէանե-  
րու կողմէ հիմնուած İTTİHAT VE TERAKKİ կուսակցութիւնը,  
Ապտիլ չամիտը գահընկեց ընելով Պոլսոյ մէջ իշխանու-  
թիւնը ձեռք անցուց:

Հրէայ եւ դաւանափոխ հրէայ ըլլալով հանդերձ՝ այս  
իթթիհատականները ծայրայեղ թրքամոլ եւ թուրանական  
էին:

Եւ Օսմանեան կայսրութեան կործանման արգելք ըլլալու  
համար անոնք ծրագիրներ պատրաստեցին:

Այս ծրագիրներուն համաձայն՝ իթթիհատականները  
իրենց բոլոր ուժերը Անաթոլիոյ մէջ պիտի կեդրոնացնէին եւ

հոն միայն, իսլամներէ կազմուած, նոր պետութիւն մը պիտի ստեղծէին: Եւ դաւանափոխ հրէաներուն իշխանութեան ներքեւ, Օսմանեան կայսրութեան մէջ ապրող բոլոր իսլամ ժողովուրդները՝ ալպան, բոմակ, պոչնակ, չէրքէզ, լազ, քիւրտ եւ թաթարները այս նոր պետութեան հիմները պիտի կազմէին:

Ահա՛ թէ ինչու, Հայկական ցեղասպանութիւնը այս սելանիկցի դաւանափոխ հրէաներուն կողմէ կազմուած "İTTİHAT VE TERAKKİ" կուսակցութեան, Անաթոլիոյ մէջ միայն իսլամներէ կազմուած նոր պետութիւն մը ստեղծելու ծրագրին բնական հետեւանքն էր:

Եւ այս ծրագիրը, 1914թ. համաշխարհային պատերազմին խառնաշփոթութենէն օգտուելով, իթթիհատականներուն կողմէ ահռելի վայրագութեամբ իրագործուեցաւ:

Եւ Անաթոլիոյ բոլոր հայերը, իրենց 4000 տարուան հայրենիքէն արտորուեցան եւ ցեղասպանութեան ենթարկուեցան:

Եւ «չնորհիւ» այս Հայկական ցեղասպանութեան, Անաթոլիոյ մէջ միայն իսլամներէ կազմուած եւ Թուրքիա կոչուած եւ մինչեւ այսօր ալ իր ի՞նչ ըլլալը անորոշ եղող պետութիւն մը ստեղծուեցաւ:

\* \* \*

Եւ այսօրուան Թուրքիոյ [իբր թէ] Թուրք կոչուող պետական իշխանաւորները այս իրականութիւնները կ'ուրանան, եւ «Հայկական ցեղասպանութիւն չէ եղած» կ'ըսեն:

Որովհետեւ Թուրքերը շատ լաւ գիտեն, որ եթէ ցեղասպանութիւնը ընդունին, ասոր հետեւանքները ինչե՛ր պիտի ըլլան:

Որովհետեւ Թուրքերը շատ լաւ գիտեն, որ եթէ ցեղասպանութիւնը ընդունին, Անաթոլիան ձեռքերնէն պիտի երթայ եւ Թուրքիան խաղաթուղթէ աշտարակի նման փուլ պիտի գայ:

Այս անխուսափելի իրականութեան այլեւս ոչ միայն Թուրք պետական իշխանաւորները տեղեակ են, այլեւ՝ քիչ թէ շատ գիտակից Թրքամոլ-Թուրանականներն անգամ գիտեն:

Այս պատճառաւ, վերջին չրջաններուն, այս թրքամու-  
թուրանականները իրար անցած, ահազանգ կը հնչեցնեն:

Անգարայի Միջին Արեւելքի թեքնիք համալսարանի  
պատմութեան ուսուցիչ փրոֆ. ÖMER TURAN նայեցէք, թէ  
ի՛նչ կ'ըսէ. «Այս՝ զօրութեան հարց է: Եթէ տկար ըլլանք՝ մեզ  
Անատոլիայէն դուրս կը նետեն»:

Այս յարգարժան փրոֆեսորը «Այս՝ զօրութեան հարց է»  
ըսելով, հետեւեալ գաղափարները կը յայտնէ.

«Զըլլայ, թէ խղճահարութեան գալով Հայկական ցեղա-  
սպանութիւնը ընդունիք: Զըլլայ, թէ իրականութիւնները մէջ-  
տեղ հանէք: Այն ատեն մեզ, Անատոլիայէն դուրս կը նետեն:  
Ուրացէ՛ք: Ուրացէ՛ք: Տեւաբար ուրացէ՛ք: Զօրաւոր կեցէ՛ք»:

\* \* \*

Վերջին չրջաններուն, թուրքերուն մէջ, Հայկական ցեղա-  
սպանութեան մասին մտածելակերպի փոփոխութիւններ կը  
տեսնուին: Ասկէ առաջ թուրքերը, Հայկական ցեղասպանու-  
թեան մասին սապէս կ'ըսէին. — «Թուրքերը չէ, որ հայերուն  
ջարդեցին: Հայերն են, որ թուրքեր ջարդած են»:

Իրականութեան մէջ՝ այս ձաբուտութիւններուն թուրքերն ալ  
չէին հաւատար:

Մինչդեռ հիմա կացութիւնը փոխուած է:

Այսօր աշխարհի մէջ 18 պետութիւն, Հայկական ցեղա-  
սպանութիւնը պաշտօնապէս ճանչցած են.

Ռուսիա, Տրանսսա, Գերմանիա, Իտալիա, Լեհաստան, Հոլ-  
լանդա, Պելճիքա, Գանատա- եւ այլն՝ աւելի քան 18 պետու-  
թիւններ:

Եւ աւելին՝ շատ մը եւրոպական պետութիւններ, Թուրքիոյ  
Եւրոպական միութեան անդամակցութեան համար, Հայկա-  
կան ցեղասպանութեան անոր կողմէ ընդունուիլը պայման  
դրած են:

Եւրոպական պետութիւններուն կողմէ Հայկական ցեղա-  
սպանութիւնը ճանչնալու հարցին մէջ, շատ կարեւոր իրավի-  
ճակ մը կայ: Հայկական ցեղասպանութիւնը ճանչցող 9

պետութիւններ, Թուրքիոյ կողմէ Եւրոպական միութեան անդամակցելու դիմումի ներկայացումէն յետոյ է, որ Հայկական ցեղասպանութիւնը ճանչցած են: Այս իրավիճակը սապէս կը բացատրուի:

Եթէ Թուրքիոյ Եւրոպական միութեան անդամակցութեան հարցը սեղանի վրայ գայ, Թուրքերուն Եւրոպական միութեան մէջ մտնելուն հակառակ եղող պետութիւնները, Թուրքերուն Հայկական ցեղասպանութիւնը ընդունիլը պիտի պահանջեն:

Թուրքիոյ համար դժուարութիւնը այս կէտէն կ'սկսի:

Թուրքիան Եւրոպական միութեան մէջ մտնել կ'ուզէ: Բայց Հայկական ցեղասպանութիւնը ընդունիլ չուզեր: [Որովհետեւ Թուրքիա գիտէ, որ եթէ Հայկական ցեղասպանութիւնը ընդունի, իրենց համար ի՞նչ մեծ վտանգներ կրնան ստեղծուիլ]:

Եւ Եւրոպական պետութիւնները այս կացութենէն տեղեակ են, եւ Թուրքիան Եւրոպական միութեան մէջ չառնելու համար, Թուրքիոյ կողմէ Հայկական ցեղասպանութեան ընդունուիլը պայման կը դնեն:

\* \* \*

Թուրքիոյ մէջ շատ մը լուսամիտ անձեր, Թուրքիան յետամնաց եւ մոլեռանդ կրօնականներու վտանգէն ազատելու համար, Թուրքիոյ Եւրոպական պետութիւն մը դառնալը կը փափաքին:

Այս հեռանկարով շատ մը Թուրք մտաւորականներ, Թուրքիոյ իրականութիւնները այլեւս ճանչնալը եւ Հայկական ցեղասպանութիւնը ընդունիլը կը պահանջեն:

Բայց ուրիշ թրքամոլ Թուրանականներ եւ ուրիշներ ալ, «Երկիրը մեր ձեռքէն կ'երթայ, մեզ Անաթոլիայէն կը վճռտեն» ըսելով, Հայկական ցեղասպանութիւնը ընդունելուն բացարձակապէս հակառակ են:

Մենք ալ կը հաւատանք, որ Թուրքիան, ի վերջոյ, այս իրականութիւնները պիտի ստիպուի ընդունիլ:

Թիւ 144

«Նայիրի», 24 Յուլիս 2007, Թիւ 275

**ԱՅՍՕՐ՝ 22 ՅՈՒԼԻՍ 2007, ԿԻՐԱԿԻ: ԹՈՒՐԵՒՈՅ ԺԱՍՈՎ՝ 21-ԷՆ  
ՍԿՍԵԱԼ ՇԵՌԱՏԵՍԻԼՆԵՐԸ ԹՐԲԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ  
ԱՌԱՅԻՆ ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ ՀԱՂՈՐԴԵԼ ՍԿՍԱՆ:  
ՎԱՐՉԱՊԵՏ TAYYIP ERDOĞAN-ԻՆ A. K. ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆԸ  
ՔՈՒԷՆԵՐՈՒՆ 46 ԱՌ ՀԱՐԻՐԸ ՇԱՀԵՐ Է:  
ԲԱՅՅ, ՄԵՉ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԷՆ ԿԱՐԵՒՈՐԸ՝ M.H.P. ԸՍՈՒԱԾ  
ԹՈՒՐԱՆԱԿԱՆ, ՖԱՇԻՍ ԵՒ ՄԱՐԴԱՍՊԱՆՆԵՐՈՒ  
ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՏԱՅԱԾ ՔՈՒԷՆԵՐՈՒՆ ԳՐԵԹԷ  
ԿՐԿԵԱՊԱՏԿՈՒԻՆ Է, 14 ԱՌ ՀԱՐԻՐՈՎ ԲԱՐՉՐԱՆԱԸ**

Վարչապետ *Tayyip Erdoğan*-ին կուսակցութիւնը եղող *A.K.P.*-ին [«Արդարութիւն եւ վերականգնում» կուսակցութիւն] ընտրութիւններէն յաղթական դուրս գալը արդէն կ'սպասուէր: Այս պատճառաւ *A.K.P.*-ին ընտրութիւնը անակնկալ մը չէ: *A.K.P.*-էն քուէներուն 46 առ հարիւրը ստացեր է: Այսինքն՝ 16 միլիոն քուէով՝ առաջին կուսակցութիւնը եղեր է: Եւ յաջորդ կառավարութիւնը ինք կրնայ առանձին կազմել:

Երկրորդ յաղթական կուսակցութիւնը *C.H.P.*-ն է:

Մուստաֆա Քեմալին կազմած այս կուսակցութիւնը [իրը թէ] ժողովրդային կուսակցութիւն է [մինչդեռ *C.H.P.* կուսակցութիւնը 1923-էն մինչեւ 1949թ. Թուրքիան միահեծանօրէն կառավարող *İsmet İnönü*-ին թուրք ազգայնական կուսակցութիւնն է]:

Եւ բոլոր ձախակողմեաններն ալ *C.H.P.*-ին հետ միացեր են:

Այս կուսակցութեան առած քուէներու համեմատութիւնը 20 առ հարիւրի չուրջ է: Այսինքն՝ 7 միլիոն քուէ ստացեր է: [Այս *C.H.P.* կոչուած կուսակցութիւնը առանց ամչնալու միջազգային Սոսիալիստ միջազգայնականի համախմբումի անդամ եղեր է: Բայց վերջերս, Սոսիալիստ միջազգայնականի կազմակերպութիւնը *C.H.P.*-էն իրմէ դուրս դնելու որոշում առեր է]:

22-7-2007-ին կատարուած թրքական ընտրութիւններուն մեծագոյն անակնկալը՝ M.H.P.-ին (*Milliyetçi Hareket Partisi*) – «Ազգային շարժում» կուսակցութեան նախատեսուածէն աւելի քուէ ստանալն է: 2002 թուականին կայացած ընտրութիւններուն M.H.P.-ին ստացած քուէները, այս անգամ կրկնապատկուեր են: Այսինքն՝ 14 առ հարիւր քուէ ստացեր է:

Հինգ միլիոն թուրքեր M.H.P. ըսուած *Bozkurt*-ական, թուրանական կուսակցութեան քուէ տուեր են: Եւ այս կուսակցութիւնը թուրքիոյ երրորդ կուսակցութիւնը եղեր է:

Ո՞վ է, ի՞նչ է այս կուսակցութիւնը:

*Alpaslan Türkeş*-ին հիմնած թուրանական, ցեղապաշտ, ֆաշիստ կուսակցութիւնն է:

Այս կուսակցութեան մաս կազմողները «*Bozkurt*», «Գորշ գայլեր» կ'անուանուին:

Արդէն «Գորշ գայլեր» անունը շատ բան կը բացատրէ:

\* \* \*

Մենք, այս «Գորշ գայլերը», 60 տարիներէ առաջ ճանչցանք: 1947թ. էր. Պոլսոյ ձախակողմեան «*Tan*» թերթին առջեւ, այս «Գորշ գայլերէն» հազարներով հաւաքուած էին եւ միաբերան կը պոռային՝ «ՄԱ՛Հ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐՈՒՆ, ՄԱ՛Հ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐՈՒՆ»:

Եւ միջոց մը յետոյ, այս ոռնացող-հաչող «գայլերը» «*Tan*» թերթին շէնքին վրայ յարձակեցան եւ տպագրական մեքենաները ջարդուփշուր ըրին, եւ շէնքը փլատակի վերածեցին:

Անոնց նպատակը ձախակողմեան «*Tan*» թերթին ձայնը լռեցնելն էր:

«Գորշ գայլերը» յաջողեցան: Եւ «*Tan*» թերթը այդ թուականէն յետոյ լոյս չտեսաւ:

\* \* \*

Կրկին՝ Պոլսոյ մէջ. 6 Սեպտեմբեր 1955-ի գիշերն էր: Յանկարծ, հեռաձայնով մեզի տեղեկացուցին եւ ըսին, թէ՛



«ԲԱՑԱՐՁԱ՛Կ՝ ՏՈՒՆԷՆ ԴՈՒՐՍ ՄԻ ԵԼԼԷՔ: ԹԱԼԱՆՈՂ-  
ՆԵՐՈՒ ԽՈՒԺԱՆԸ ՅՈՅՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՅԵՐՈՒՆ ԽԱՆՈՒԹ-  
ՆԵՐԸ ԿՈՏՐԵԼ-ԹԱՓԵԼ ՍԿՍԱԻ, ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԿՐԱԿԻ ԿՈՒ-  
ՏԱՆ»:

Իրապէս ալ, քիչ յետոյ, հազարաւոր թալանողներ մեր տան փողոցը եկան եւ "Gâvur"-ներու խանութներուն վրայ յարձակեցան, եւ ամէն բան խորտակեցին, աւերակի վերածեցին:

Այս թալանողները մէկ կողմէն ալ կը պոռային՝ «ԿԻՊ-ՐՈՍԸ ԹՐՔԱԿԱՆ Է, ԿԻՊՐՈՍԸ ՄԵՐՆ Է, ԴՐՕՇԱԿ ԿԱՆԵՑԷՔ: ՄԱՀ ՅՈՅՆԵՐՈՒՆ»:

Եւ այս թալանը եւ քանդումը՝ մինչեւ կէս զիչեր տեւեցին: Եւ հետեւեալ առաւօտ, մեր աչքերով տեսանք կատարուած ողբերգութիւնը:

Այս թալանող խուժանները, քանի մը ժամուան ընթացքին, քրիստոնեայ Պոլիսը աւերակի վերածած էին...

«Փա՛ռք Աստուծոյ», որ այսօր, այս թրքական վայրագութիւններէն եւ թուրք ըսուած վայրենիներէն հեռու կ'ապրինք:

Բայց, լուրեր կ'ստանանք եւ կը համոզուինք, որ թուրքերը իրենց «թրքութիւնը» կը շարունակեն:

Հրանդ Տինքը սպաննողները՝ այս «Գորչ գայլեր» թուրքերն են:

Տրապիզոնի մէջ իտալացի կաթողիկէ կրօնաւորը սպաննողները՝ այս «Գորչ գայլեր» թուրքերն են:

Մալաթիոյ մէջ «Քրիստոնէական քարոզչութիւն կ'ընեն» ըսելով երեք թուրքերուն վիզը կտրող-սպաննողները՝ այս «Գորչ գայլեր» թուրքերն են:

Եւ երէկ զիչեր, ամերիկեան C.N.N. հեռատեսիլը՝ թրքական ընտրութիւններուն վերաբերող յայտագիրը սփռելու ընթացքին ցուցադրեց M.H.K. կուսակցութեան Պոլսոյ մէջ կատարած ցոյցերը:

Եւ այդ ցոյցերուն ընթացքին տեսանք, թրքական արիւնաթաթախ դրօշակները ձեռքերնին՝ հազարաւոր «Գորչ գայլեր»:

Ասոնք, կոկորդնին պատռելու աստիճան կը պոռային, աւելին՝ ճիշդ գայլերու նման կ'ոռնային:

Եւ մենք 1947-ին, Պոլսոյ մէջ “Tan” թերթին խմբագրատան առջեւ «Մա՛հ համայնավարներուն» գոռացող «Գորշ գայլերը», եւ 6 Սեպտեմբեր 1955-ի գիշերը «Կիպրոսը թրքական է» պոռալով քրիստոնեաներուն խանութները թալանող - հրդեհող «Գորշ գայլերը» տեսանք այս ցուցարար վոհմակին մէջ:

\* \* \*

Եւ այս հրէջ «Գորշ գայլերն» էին 1915-ի ցեղասպանութենէն՝ սուրի մնացորդ Պոլսոյ հայերուն, Կ. Պոլսոյ պատրիարք Մեսրոպ Մութաֆեանին, Պոլսոյ հայկական վարժարաններուն տնօրէններուն եւ Պոլսոյ ծանօթ հայ հարուստներուն «Զեջ ՊիՏի ԳԼԽԱՏԵՆՔ» ԸՍԵԼՈՎ ՍՊԱՌՆԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՈՒՂԱՐԿՈՂՆԵՐԸ:

Կրկին ու կրկին կ'ըսենք.

«Մինչեւ այն օրը, որ թուրք պետութիւնը չպատժուի Հայկական ցեղասպանութիւն կատարելու յանցանքով, թուրք «Գորշ գայլերը» պիտի շարունակեն նոր ցեղասպանութիւններ գործել:

Թիւ 145

«Նայիրի», 7 Օգոստոս 2007, Թիւ 276

**ԽՂՃԱՄԻՏ ԼԵԹԷ ՓՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ  
ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԵՆՔ:**

**2 ՕԳՈՍՏՈՍ 2007 ԹՈՒԱԿԱՆԻՆ- ՇԻՄԻՍԱՅԻՆ ԲԵԷՌԻՆ  
ՎՐԱՅԷՆ 4261 ՄԷԹՐ ՈՎԿԻԱՆՈՍԻՆ ԽՈՐԸ ԻԶՆԵԼՈՎ.  
ՈՌԻՍԱԿԱՆ ԳՐՕՇԸ ՈՎԿԻԱՆՈՍԻՆ ՅԱՏԱԿԸ ՉԵՏԵՂՈՂ  
ՈՌԻՍԱԿԱՆ ՇԵՏԱԽՈՅՉՆԵՐՈՒՆ ԴԵՎԱՎԱՐԸ՝ ԱՐԹԻՐ  
ՉԻԼԻՆԿԱՐՈՎԻՆ Ո՛Վ ԸԼԼԱԼԸ ՊԻՏԷ՞Ք ԱՐԴԵՕՔ**

2 Օգոստոս 2007-ին բոլոր հեռատեսիլները եւ թերթերը շատ կարեւոր լուր մը տուին:

Աշխարհի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով ոռւսական երկրախոյզներու խումբը, երկու փոքր ընդծովեաներով Հիւսիսային բեւեռէն 4261 մէթր խորութեամբ օվկիանոսի յատակը կ'իջնեն եւ հոն ոռւսական դրօշակ կը գետեղեն:

Այս բացառիկ յաջողութիւնը իրագործող ոռւսական հետախոյզներու խումբին ղեկավարը՝ Արթիւր Չիլինկարով անունով օվկիանոսներու հետախոյզ գիտնական մըն է:

Ո՞վ խղճամիտ թուրքեր:

1985-ին Սովետական միութեան հերոսի չքանչան ստացած եւ ներկայ ոռւսական Ազգային ժողովին՝ «Տումային» փոխնախագահը եղող Արթիւր Չիլինկարովին բուն ինքնութիւնը գիտնալ կուզէ՞ք:

Կարելի է, որ չհաւատաք ... բայց ըսենք.

Արթիւր Չիլինկարովը՝ իսկական հայ մըն է:

Եթէ կ'ուզէք՝ ձեզի ցուցնենք Չիլինկարովին 4 տարիներ առաջ Երեւանի 1915-ի ցեղասպանութեան յուշակոթողին առջեւ, նահատակաց առ ի յարգանք անշարժ կենալուն նկարը:

Եւ կամ՝ Չիլինկարովին Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ին հետ նկարուած յիշատակի նկարը կրնաք դիտել:

Եթէ աւելին կ'ուզէք՝ ձեզի կրնանք ցուցնել Չիլինկարովին ծննդեան վաւերագիրը, որուն մէջ հայ ըլլալը գրուած է:

Բայց, այս բոլորին պէտք չկայ: Արթիւր Չիլինկարովը, իր հայ ըլլալը չի պահեր որ...

Եւ ամբողջ ուսւ ժողովուրդը գիտէ, թէ Արթիւր Չիլինկարովը հայ է:

Միայն ձեր Թուրքիա ըսուած ֆաշիստ, բարբարոս պետութեան մէջ է որ հայերը իրենց հայութիւնը որքան կարելի է ծածկել կը ջանան:

Մանաւանդ՝ 1915-ի ցեղասպանութենէն ողջ մնացած հայերը, որոնք իրենց ապրած Արեւելեան Անաթոլիոյ նահանգներուն մէջ վայրենի թուրքերու կողմէ սպաննուելու վախէն, պարտադրաբար իրենց անունները փոխած եւ թրքական անուններ առած են:

Այսօր, այդ ցեղասպանութենէն ողջ մնացած հայերուն մեծամասնութիւնը՝ իրենց Արեւելեան Անաթոլիոյ ծննդավայրը լքած են: Եւ անոնց մէկ մասը Պոլիս գաղթած է, իսկ մէկ մասն ալ՝ արտասահման ապաստանած:

Գացէք, նայեցէք Պոլիս հաստատուող Արեւելեան Անաթոլիայէն եկող հայերուն:

Այս գաղթական հայերուն մեծամասնութեան անունները թրքական են:

Կրնա՞ք երեւակայել արդեօք: 4000 տարուան իրենց հայրենիքին մէջ ցեղասպանութեան ենթարկուած հայերուն ողջ մնացածներն անգամ հայ ըլլալով ապրելու իրաւունք չունին: Անոնք կա՛մ պիտի թրքանան, կա՛մ ալ պիտի սպաննուին:

Ահաւասիկ, ա՛յս է թրքական մտայնութիւնը:

Դուք, այս մտայնութեամբ է, որ Անաթոլիոյ քրիստոնեայ բնիկ ժողովուրդը, քանի մը դարերու ընթացքին, թրքացուցիք:

Դուք, ա՛յս մտայնութեան, ի՞նչ անուն ուզէք տուէք՝ բարբարոս, թալանող, կողոպտող եւ կամ ֆաշիստ, եւ կամ՝ թուրանական - բոլորն ալ մէկ բառի մէջ կը խտանան ու անով կը խորհրդանշուին՝ թրքական մտայնութիւն:

Որովհետեւ «Թրքական մտայնութիւնը» բոլոր վայրագութիւններուն խորհրդանիշն է:

Եւ այս Թրքական մտայնութիւն, Թրքական վայրագութիւն ըսուածը, 1071 թուականէն ի վեր իր կատարած ցեղասպանութիւններուն ու ոճիրներուն պատիժը, մինչեւ այսօր, չկրեց:

Այդ պատճառաւ ալ կրկին պիտի ըսենք.— Թրքական պետութեան այսօրուան պատասխանատուները, թուրքերուն մինչեւ հիմա կատարած ցեղասպանութիւններուն եւ մանաւանդ՝ 1915թ. Հայկական ցեղասպանութեան յանցանքով այնքան ատեն որ չեն պատժուած, «Թրքական մտայնութիւնը» նոր ցեղասպանութիւններ, նոր ոճիրներ պիտի շարունակէ գործել:

«Իմ այս ըսածներս 1500 թուականէն ի վեր պետական արխիւներուն մէջ գտնուող փաստաթուղթերով կրնամ ապացուցանել»:

Թուրքիոյ մէջ, առաջին անգամ ըլլալով, այս իրականութիւնները այսքան բարձր գիտական կեդրոնի մը կողմէ պաշտօնապէս յայտարարուեցան:

... Եւ այս խոստովանութիւնը ինչո՞ւ այսքան ուշ կատարուեցաւ:

Ինչո՞ւ այսքան տարիներ յետոյ եւ այսօ՛ր կատարուեցաւ:

Որովհետեւ քրտական վտանգը շատ մեծ է եւ շատ մօտ:

Ո՛վ թուրքեր, դուք հայերը ցեղասպանութեան ենթարկած ըլլալնուդ համար պիտի զղջաք: Բայց, այլեւ, ձեր զղջումը անօգուտ է:

Հայկական ցեղասպանութիւնը՝ քրտերուն օգտին ծառայեց:

Ո՛վ թուրքեր, հայերը ցեղասպանութեան ենթարկեցիք եւ այսօրուան Արեւելեան Անաթոլիոյ մէջի «Քիւրտիստանը» դո՛ւք ստեղծեցիք:

Թիւ 147

«Նայիրի», 18 Սեպտեմբեր 2007, թիւ 278

### **ՅԵՂԱՍՊԱՆՆԵՐՈՒ, ՄԱՐԴԱՍՊԱՆՆԵՐՈՒ, ԳՈՂԵՐՈՒ ԵՒ ԱՏԱՆՕՍՆԵՐՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՍԸ` ԹՈՒՐԷԻԱ**

9 Սեպտեմբեր 2007-ին, այսօրուան Թուրքիոյ վարիչները, 13-րդ դարու վերջաւորութեան Միջին Ասիայէն դէպի Անաթոլիա խուժող "KAYI" ցեղախումբին պետ՝ Ertugrul-ին Söğüt-ի մէջ գտնուող դամբարանին առջեւ իրենց կատարած ելոյթներով ապացուցանեցին, որ իրենք օսմանցի կոչուող բարբարոս եւ թալանող պետութեան իսկական ժառանգորդներն են:

Վարչապետ Թ. Էրտողանին *Söğüt*-ի մէջ, *Ertuğrul*-ի դամբարանին առջեւ կատարուած արարողութեան ընթացքին ունեցած ելոյթին ամէնէն կարեւոր մասերը պիտի ջանանք տալ ստորեւ:

Նախ՝ ըսենք, որ մեր նպատակը Էրտողանին ի՛նչ աստիճան ծայրայեղ իսլամ կրօնամոլ մը, թուրանական մը, եւ արեան ծարաւի եւ աւարառու օսմանեան շրջանի մտայնութեան ներկայացուցիչ ըլլալը ապացուցանել է:

Ահաւասիկ Էրտողանին *Söğüt*-ի մէջ ըսած խօսքերը.

«Այս հողերուն վրայ, 726 տարի առաջ աշխարհի վրայ գոյութիւն ունեցած ամէնէն պատկառազդու մէկ պետութեան կողքին, հոյակապ քաղաքակրթութիւններէն մէկուն հիմերը նետուեցան:

Օսմանցիներուն քաղաքակրթութիւնը ուրիշներուն ունեցածէն տարբերած է անով, որ ան ո՛չ թէ քանդած է այլոց ունեցածը, այլ՝ զայն ներմուծած է իրենիցին, իւրացուցած եւ ծնունդ տուած աւելի փառաւոր նորի մը:

Այս արմատական քաղաքակրթութիւնը այնքան ատեն, որ մնայ առոյգ եւ ծառայէ յենարան մեզի, կը մնանք տէր այդ քաղաքակրթական ժառանգին ու բնաւ չենք ընկճուիր:

Ահա այսօր, շնորհալի *RAMAZAN*-ամսուն սեմին, կը սպասենք մահիկին ըսելով՝ մենք հոս ենք, մեր նախնիներուն առջեւ ենք:

726 տարի առաջ, այս հողերուն վրայ, անմիաբանութենէ տառապող փոքր աւատապետութիւնները միացնելով աշխարհակալ պետութիւն մը մէջտեղ բերելէս քաղելիք օգտակար դասեր կան մեզի եւ ուրիշներուն համար:

Թուրքիոյ մէջ *Saray Bosna*-ին, *Mostar*-ին, *Manastır*-ին, *Kırcalı*-ին, *Dobruca*-ին, *Sancak*-ին, *Piristine*-ին, աւանդները կան:

Թուրքիան՝ *Iskece*-ին, *Girne*-ին, *Gazi Magusa*-ին *Yemen*-ին, *Trablus*-ին աւանդները իր սրտին վրայ կ'զգայ:

Այստեղ *Baku*-ին եղբայրութիւնն ալ կ'զգանք:

*Karabağ*-ին ցաւն ալ մեր սրտին վրայ կ'զգանք:

Ամէն մարդ պատասխանատուութեան զգացումով հարկ է որ մտածէ եւ դատէ:

Այս առիթով պիտի ըսեմ, որ մէկ ըլլանք, խոչոր ըլլանք, ողջ ըլլանք»:

\* \* \*

Վարչապետ էրտողանին դեռ 1996-ին խօսած ընտրական մէկ ճառին մէջ, երոպացիներուն դէմ կրակ ժայթքելով՝

«Մեր մզկիթները՝ վահան, մեր Minare-ները՝ սուին» ըսելը չէինք մոռցած: Եւ լաւ գիտենք, որ այդ խօսքին տէրը ծայրայեղ իսլամ կրօնամոլ մըն է:

Բայց, 9 Սեպտեմբեր 2007-ին, Söğüt-ի մէջ Ertuğrul-ին դամբարանին առջեւ կատարուած կրօնական ծիսակատարութեան ատեն ըրած խօսքերուն մէջ տեսանք, որ ան միայն ծայրայեղ իսլամ կրօնամոլ մը չէ, այլ նոյն ատեն սիրտ մը որ օսմանեան թալանող եւ կողոպտող արշաւանքներուն կարօտովը բռնկած է, բարբարոս մըն է, NİHAL ATSIZԷՆ ALPASLAN TÜRKEŞ-էն աւելի կատաղի թուրանական մըն է...

...T. Erdoğan-ին համար մեր ախտաճանաչումը նաեւ հետեւեալն է.— Թ. էրտողան շատ վտանգաւոր «Mythomane» մը եւ «Megalomane» մըն է:

\* \* \*

Թ. էրտողան իր Söğüt-ի մէջ ունեցած ելոյթին ընթացքին, օսմանցիներուն հիմնած պետութեան համար կ'ըսէ, որ ան իւրացուցած եւ ժառանգած արժէքներով հոյակապ քաղաքակրթութիւն ստեղծած պետութիւնն է:

Բայց, ամբողջ աշխարհ գիտէ, որ օսմանցիները կողոպտող, ուրիշին ունեցածը յափշտակելու համար պատերազմող, բարբարոս, անգուլթ եւ արիւնարբու ազգաբնակչութիւն մըն է:

Իրենց անցած տեղերուն վրայ քար քարի վրայ չձգող օսմանցիները՝ «Հոյակապ քաղաքակրթութիւն մը ստեղծեցին» կարենալ ըսելու համար, հարկ է ըլլալ ստախօս եւ անխիղճ: Մէկ խօսքով՝ թուրք ըլլալ պէտք է:



\* \* \*

Վարչապետ Թայիպ Էրտողան եւ իր համախոհները, 9 Սեպտեմբեր 2007-ին, Söğüt-ի մէջ, Ertuğrul-ին դամբարանին առջեւ մեծարանքի ցոյց կատարեր են:

Ինչո՞ւ Ertuğrul-ին դամբարանին առջեւ հանդիսութիւն կը կատարեն:

Ertuğrul-ը չէր օսմանեան պետութեան հիմնադիրը:

Օսմանեան պետութեան հիմնադիրը՝ Ertoğrul-ին տղան՝ Օսմանն էր, որ Թրքական ցեղախումբի մը պետն էր:

Ertuğrul-ին կեանքին պատմութեան կարգ մը մասերը մութ կը մնան: Թրքական համայնագիտարաններն անգամ "Ertuğrul"-ին մասին շատ տեղեկութիւններ չեն պարունակեր: "Ertuğrul"-ին մասին այնտեղ ըսուածը հետեւեալն է՝

«Ertuğrul-ը, 13-րդ դարուն վերջաւորութեան, Միջին Ասիայէն մեկնող եւ «Kayı» անունը կրող իր ցեղախումբին գլուխն անցնելով, Անաթոլիա կը մտնէ եւ սելջուկ սուլթաններուն արտօնութեամբ Bilecik-ի շրջանը, Söğüt-ի բերդաքաղաքին մօտերը կը հաստատուի:

Եւ Söğüt-ի շրջանին աւատապետը կ'ըլլայ»: Այսքանը միայն:

Վարչապետ Թ. Էրտողան, Սօկիլիթ կատարած իր ելոյթին մէջ կ'սէ, թէ «Էրթողրուլը 726 տարի առաջ, այս հողերուն վրայ, իրարու հետ անհամաձայն եղած աւատապետները կը միացնէ եւ անոնց աշխարհակալ պետութեան վերածուելուն հիմնը կը դնէ»:

Էրտողանի այս խօսքերը բացարձակապէս սուտ եւ սխալ են:

Ertuğrul-ը Söğüt-ի շուրջ փոքր աւատապետ մըն էր միայն:

726 տարի առաջուան թուականը 1281-է:

Եւ 1281 թուականին Էրթողրուլ կը մահանայ եւ իր տղան՝ Օսմանը ցեղախումբին պետը կը դառնայ:

Թրքական պաշտօնական պատմութեան կեդրոնին կողմէ, Օսմանին մասին սա տեղեկութիւնները կը տրուին.

«Օսմանը, աւատապետ ըլլալէ յետոյ *Söğüt*-ի բերդը, *Eskişehir*-ը, *İnegöl*-ը, *Bilecik*-ը, *Karacahisar*-ի բիւզանդացիներուն դէմ մղած պատերազմներով այս քաղաքները կը գրաւէ:

Եւ 1299թ. սելջուկներուն դէմ իր անկախութիւնը կը հռչակէ»:

Եւ 1299թ. կ'սկսի օսմանցիներուն սարսափազդու, վայրագութիւններով լեցուն պատմութիւնը:

\* \* \*

Թ. Էրտողանը արդեօք ինչո՞ւ օսմանեան պետութեան հիմնադիրը եղող Օսմանին դամբարանը չ'երթար, եւ Էրթողրուլին դամբարանը կ'այցելէ:

Արդեօք օսմանցիներուն իրագործած ցեղասպանութիւններուն եւ մանաւանդ Հայկական ցեղասպանութեան իբր բարոյական պատասխանատու, եւ անոնց իբր ժառանգորդը չմեղադրելու համար է:

...Կրնայ ըլլալ...

\* \* \*

Բայց, Թ. Էրտողանը Սօկիւթի մէջ ունեցած ելոյթի ընթացքին, օսմանեան անգութ բանակներուն արիւնոտ հետքերը դեռ իրենց վրայ կրող կարգ մը քաղաքներուն եւ շրջաններուն անունները կարօտով կը յիշատակէ:

Օրինակ՝ *Saray Bosna, Mostar, Manastir, Kircali, Dobruca, Piristine, İskeçe*-ին անունները կուտայ:

Վարչապետ Էրտողանին յիշատակած քաղաքներէն եւ շրջաններէն ոչ մէկը թուրքերուն պատմական հայրենիքին մաս կը կազմէ:

Ընդհակառակը՝ բոլորն ալ օսմանեան բանակ կոչուողին հուրին, սուրին, աւերումին ու չարչարանքներուն ենթարկուած քրիստոնեայ քաղաքներ եւ շրջաններ են:

Այս քրիստոնեայ քաղաքները գրաւող օսմանցի խուժանները ժողովուրդին սպառնացեր են ըսելով՝

«Կա'մ իսլամութիւնը կ'ընդունիս, կա'մ գլուխդ կը թոցնենք»:

Այս սպառնալիքներուն ենթարկուած քրիստոնեայ ժողովուրդին մէկ մասը, քաջաբար կը մերժեն դաւանափոխ ըլլալը: Եւ ասոնց գլուխները կը կտրուին: Բայց ժողովուրդին մէկ մասն ալ զգացած վախէն կը համակերպի ու կ'ընդունին իսլամութիւնը:

Ահա՛, էրտողանին քաղաքներէն աւանդներ ունինք ակնարկութիւնը՝ սպառնալիքով իսլամացած ժողովուրդին կ'երթայ:

Եւ օսմանեան մտայնութեան ու նկարագրին մէկ նորագոյն ժառանգորդը եղող Թ. էրտողան եւ իր նմանները, եթէ առիթը ներկայանայ, կրկին կը գրաւեն այս քրիստոնեայ քաղաքները, նոյն՝ օսմանեան վայրագութեամբ:

Այս պատճառաւ կրկին ու կրկին պիտի ըսենք, որ թրքական պետութեան այսօրուան պատասխանատուները թուրքերուն ցարդ գործած սպանդ, թալան ու յափշտակութիւններուն, բայց մանաւանդ 1915թ. Հայկական ցեղասպանութեան ոճրագործութեան համար այնքան ատեն որ չեն պատժուած, «թրքական մտայնութիւնը» նոր ցեղասպանութիւններ ու նոր ոճիրներ պիտի շարունակէ գործել:

Թիւ 148

«Նայիրի», 9 Հոկտեմբեր 2007, Թիւ 279

**ԹՐՔԱԿԱՆ ՃԱՄԱՔԱՅԻՆ ՈՒԺԵՐՈՒ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԶՕՐԱՎԱՐ ԻԼՔԷՐ ՊԱՇՏՊՈՒԴԻՆ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007-ԻՆ, ՃԱՄԱՔԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻՈՅ ՆՈՐ ԴԱՍԱՇՐՋԱՆԻՆ ԲԱՅՄԱՆ ԱՌԹԻԿԱՏԱՐԱԾ ԵԼՈՅԹԻՆ ԸՆԹԱՅՔԻՆ, ՀԵՏԵԿԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻԿԵ ԿԸ ԿԱՏԱՐԷ.**

**«ԹՈՒՐՔԻՈՅ ԲՈՒՆ ՀԱՐՅՈՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՔԻ ՔԻՒՐՏԵՐՆ ԵՆ»:**

**ԶՕՐԱՎԱՐ ՊԱՇՏՊՈՒԴԸ ՇԱՏ ՃԻՇԴ ԸՍԱԾ Է:**

**ՅԱՅՏՆԻ Է, ՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻԿԵՆՆԵՐԸ ՏԵՍՆՈՂ ՍՊԱՅ ՍԸՆ Է:**

**ԲԱՅՅՑ ԱՅՆՊԵՍ ԿԸ ԿԱՐԾԵՆՔ, ՈՐ ԶՕՐԱՎԱՐ ՊԱՇՏՊՈՒԴԸ՝ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՔԻ ՎՏԱՆԳԸ ՏԵՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՔԻՉ ՍԸ ՈՒՇ ՄՆԱՅԱԾ Է:**

**ԽՕՍՔԻ ԲԵՐՍԱՄԲ Է, ՈՐ «ՔԻՉ ՍԸ ՈՒՇ ՄՆԱՅԵՐ Է» ԿՂՍԵՆՔ:**

**ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՉ ԶՕՐԱՎԱՐԸ, ԻՐԱՔԻ ՔՐՏԱԿԱՆ ՎՏԱՆԳԸ ՏԵՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, 16 ՏԱՐԻ ՈՒՇ ՄՆԱՅԱԾ Է:**

**ՈՐՈՎՀԵՏԵԻ ՀԱՅՐ ՊՈՒՇԻՆ 1991-ԻՆ ՀՈՉԱԿԱԾ ԻՐԱՔԻ**

**ՊԱՏԵՐԱԶՄԵՆ Ի ՎԵՐ, ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՔԻ ՄԷՉ ԱՐԴԵՆ**

**ՔՐՏԱԿԱՆ ԱԶԱՏ ՇՐՋԱՆ ՍԸ ՍՏԵՂԾՈՒԱԾ ԷՐ**

*Տարիներէ ի վեր, Թուրքիոյ մէջ, քրտական հարցը անգիտանալ ձեւացուցիք:*

*Քիւրտերուն համար «Լեոնական Թուրքեր են» ըսիք:*

*Արեւելեան Անաթոլիոյ մէջ քիւրտերուն ազատութեան համար պատերազմող քիւրտ հայրենասէրները՝ ահաբեկիչ որակեցիք:*

*Եւ P.K.K.-ի հարցը մէջտեղէն վերցնելու համար, հոչակաւոր թրքական վայրագութիւնը գործադրեցիք, քրտական բոլոր գիւղերը այրեցիք:*

Բայց P.K.K.-ին վերջը չեկաւ: Ընդհակառակը՝ ան աւելի զօրացաւ:

1991 տարին՝ թուրք-քրտական պատերազմին մէջ նոր շրջանի մը սկզբնաւորութիւնն էր:

1991-ին ամերիկացիները, Սատտամ Հիւսէյնի իշխանութիւնը քանդելու համար, Իրաքի դէմ պատերազմ հռչակեցիք:

Եւ այս պատերազմին վերջաւորութեան ամերիկացիները Հիւսիսային Իրաքի մէջ ազատ քրտական շրջան մը ստեղծեցին:

Եւ այս ձեւով, քիւրտերուն համար, «Ազատութեան ճամբան» բացուած եղաւ...

Եւ անկէ յետոյ քիւրտերը Հիւսիսային Իրաքի մէջ իսկական քրտական պետութիւն մը ստեղծեցին:

... Եւ դուք՝ թուրքերդ, այս քրտական պետութիւնը քանդելու համար շատ ու շատ աշխատեցաք:

Բայց ամերիկացիները չթոյլատրեցին... Եւ երբեք ալ պիտի չթոյլատրեն:

Որովհետեւ ամերիկացիները գիտեն թուրքերուն «ինչ ըլլալը»:

Որովհետեւ դուք՝ թուրքերդ, եթէ առիթը գտնէք, ո՛չ միայն Հիւսիսային Իրաքը, այլ, «այս հողերը հինէն, մերն են ըսելով», արաբական բոլոր հողերը կը գրաւէք եւ քարիւղի հարստութիւններուն վրայ ձեռք կը դնէք:

Որովհետեւ դուք՝ թուրքերդ, վայրագ, թալանող, արչաւող օսմանցիներուն շառաւիղը, արինարբու ցեղախումբ մըն էք:

Եւ դուք բնաւ չէք փոխուիր: Որովհետեւ դուք, մինչեւ հիմա, բնաւ չպատժուեցաք:

\* \* \*

Թուրքիոյ վարչապետ Թայիպ Էրտողան 28-9-2007-ին, Ուաշինկթընի մէջ կատարած յայտարարութեան ընթացքին, հետեւեալ խօսքերը ըսեր է.

«Ք.Կ.Կ.-ական բանակատեղիներուն մէջ դժբախտաբար ամերիկացիներուն պատկանող թնդանօթ, հրասայլ եւ նման ծանր զէնքեր տեսնուեցան»:

Այնպէս կը կարծենք, որ Թայիպ էրտողանը կա'մ իրականութիւններուն տեղեակ չէ, եւ կա'մ ալ չգիտնալ կը ձեւացնէ:

Հիւսիսային Իրաքի մէջ ամերիկացիները իսկական քրտական պետութիւն մը ստեղծեցին:

Այսօր այս Քիւրտիստանը իր Ազգային ժողովը, կառավարութիւնը եւ ամէնէն կարեւորը՝ իր բանակը ունի:

Եւ քրտական այդ բանակը, ամերիկեան համազգեստ հագած իսրայելացի սպաներն են մարզողները...

Ի՞նչ կարծեցիք, թուրքեր'ր...

Հիւսիսային Իրաք մտնելով՝ [1974-ին Կիպրոսի մէջ քանի մը օրուան ընթացքին յոյները մաքրագործելով, Կիպրոսին կէսը ձեռք անցընելու նման] քիւրտերն ալ մէջտեղէն պիտի վերցնէ՞ք կարծեցիք:

Եւ կամ 1915-ին անտէր, անպաշտպան խեղճ հայերը, առանց կիներ ու մանուկը, երիտասարդն կամ ծերը նկատի առնելու, իրենց 4000 տարուան հայրենիքին մէջ ջարդելնուղ նման, քիւրտե՞րն ալ կրնաք ջարդել կարծեցիք:

Այո՛, էրտողան պէյ, Հիւսիսային Իրաքի քրտական պետութիւնը հրասայլ ունի, թնդանօթ ալ:

Եւ ամէնէն կարեւորը՝ իրենց հայրենիքը պաշտպանելու համար երգում ըրած քրտական բանակը կայ:

Ձեզի բան մը ըսենք՝ էրտողան պէյ... Հիւսիսային Իրաք մտնելով քրտական պետութիւնը քանդելու ձեր «Մեծ փափաքը» մոռցէք:

Որովհետեւ քիւրտերը, ձեր բանակները կը փճացնեն:

Դուք ձգեցէք Իրաքի քիւրտերը եւ Թուրքիա ըսուած շինծու պետութեան մէջ 30 միլիոնէ աւելի եղող քիւրտերուն մասին մտածեցէք:

Որովհետեւ Իրաքի քրտական պետութենէն յետոյ, կարգը Անաթոլիոյ մէջ գտնուող քիւրտերուն պիտի գայ:

Եւ քիւրտերը՝ հայ ազգը ցեղասպանութեան ենթարկող թուրքերը պիտի պատժեն: Եւ քիւրտերը՝ թուրքիա ըսուած շինծու պետութիւնը «կտոր-կտոր» պիտի ընեն:

Թիւ 149

«Նայիրի», 30 Հոկտեմբեր 2007, Թիւ 280

**ԹՈՒՐԲԵՐՈՒՆ ՄԵՇԱԳՈՅՆ ՉԷՆՔԸ՝**

**ՄՊԱՌՆԱԼԻՔ, ՄՊԱՌՆԱԼԻՔ, ՄՊԱՌՆԱԼԻՔ...**

**«ԿԱ՛Մ ԻՍԼԱՄ Կ՛ԸԼԼԱՔ, ԿԱ՛Մ՝ ՂԼՈՒՆՆԻԳ ԿԸ ԹՈՒ՛»**

Այս սպառնալիքներով յաջողեցաք քրիստոնեայ Անաթոլիան, քանի մը դարուան ընթացքին՝ թրքացնել:

Հիմա ալ՝ ամերիկացիներուն կ'սպառնաք ըսելով.- «Հայկական ցեղասպանութիւնը մի՛ ընդունիք: Այլապէս՝ իրաքեան քիւրտերուն վրայ կը յարձակինք»:

Ձեր այս սպառնալիքը «յաջողեցաւ»: Եւ ամերիկացիները Հայկական ցեղասպանութեան ճանաչումը յետաձգեցին:

Ձեր այս յաջողութենէն քաջալերուելով՝ շարունակեցիք սպառնալիքներ կատարել մեզի ըսելով.-

«Հիւսիսային Իրաքի մէջ P.K.K.-ն մաքրելու մեր գործողութեան արգելք մի ըլլաք: Այլապէս՝ Անաթոլիոյ ամերիկեան զինուորական խարիսխները կը փակենք»:

Թուրքերուն կատարած այս սպառնալիքները՝ ամերիկացիներուն Իրաքի մէջ, շատ վտանգաւոր վիճակի կը մատնեն:

Որովհետեւ Իրաքի մէջ, արդէն շատ դժուար վիճակի ենթարկուած ամերիկեան բանակներուն պէտք ունեցած բոլոր նիւթերը՝ Ատանայի "Incirlik" օդակայանին նման թուրքիոյ մէջ գտնուող ամերիկեան խարիսխներէն ճամբայ ելլող օդանաւերով կը հայթայթուին:

Թուրքերը աշխարհի մէջ, շատ ծանօթ են արդէն, իբր սպառնալիքներ կատարող եւ պատեհապաշտներ:

1915թ.՝ Առաջին աշխարհամարտէն օգտուելով, հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին:

1974թ.՝ Կիպրոսի մէջ նախագահ «Makarios»-ի դէմ մահափորձի մը կատարուիլը պատճառակելով, Կիպրոսի վրայ յարձակեցան եւ կղզիին կէսը գրաւեցին:

Հիմա ալ ամերիկացիներուն կ'սպառնան՝ «Մի՛ ճանչնաք Հայկական ցեղասպանութիւնը, այլապէս՝ Հիւսիսային Իրաք կը մտնենք»:

Եւ ամերիկացիները, այս սպառնալիքին հետեւանքով՝ Հայկական ցեղասպանութեան բանաձեւի որդեգրումը յետաձգեցին:

Բայց, թրքական սպառնալիքներուն վերջը չի՛ գար:

Հիմա, կրկին ամերիկացիներուն կ'սպառնան եւ կ'ըսեն թէ՛ «Այլեւս P.K.K.-ի ահաբեկիչները մաքրագործելու համար, մեր Հիւսիսային Իրաք մուտքին արգելք մի՛ ըլլաք:

Ապա թէ ոչ՝ մենք ալ, "Incirlik"-ի եւ Անաթոլիոյ մէջ գտնուող միւս օդակայաններուն՝ ձեր կողմէ օգտագործուելուն արգելք կ'ըլլանք»:

Ամերիկացիները, 1945թ. ի վեր, իրենց ամէնէն աւելի վստահելի դաշնակիցը եղող Թուրքերուն կատարած այս սպառնալիքներուն պատճառաւ, շատ դժուարութեան մատնուեցան:

Ամերիկայի արտաքին գործոց նախարարուհի Քոնստոլիզա Ռայս, Միջին Արեւելքի եւ Թուրքիոյ մէջ, այս հարցով շփումներ կ'ունենայ:

Թուրքիոյ վարչապետ Թայիպ էրտողան, քանի մը շաբաթ առաջ, Ամերիկա գացած էր:

Թ. էրտողան գալ շաբաթ, կրկին Ամերիկա պիտի երթայ:

Եւ սակարկութիւն, սակարկութիւն եւ սակարկութիւններ պիտի կատարուին...

Իրաքի արտաքին գործոց նախարարը, քանի մը օր առաջ Անգարա կը գտնուէր:

Այս միջոցին Թուրքիոյ ԱԳ նախարար Ալի Պապաճան, Թեհրան կը գտնուի եւ հոն բանակցութիւններ կը վարէ:



Իրանի նախագահ Ահմետինեժատը Թուրքիոյ ԱԳ նախարարը ընդունած է: Եւ Ալի Պապաճանին ըսածին համեմատ՝ «Իրանը P.K.K.-ի դէմ պայքարի հարցին մէջ, Թուրքիոյ թիկունք պիտի կանգնի»:

Եւ Իրանի ԱԳ նախարարը վաղը Սուրիա պիտի երթայ:

Այս ամբողջ եռուզեօին մէջ, Թուրքերուն նպատակը հետեւեալն է.

«Թուրքիոյ, Իրաքի, Իրանի եւ Սուրիոյ մէջ գտնուող քիւրտերուն դէմ հասարակաց քաղաքականութիւն մը վարելու որոշումի մը յանգիլ»:

Իրաքի մէջ 7 միլիոն քիւրտ կայ, Իրանի մէջ՝ 4 միլիոն, Սուրիոյ մէջ՝ 3 միլիոն, իսկ Թուրքիոյ մէջ՝ 20 միլիոնէ աւելի քիւրտ կայ: [Կարգ մը աղբիւրներ՝ Թուրքիոյ քիւրտերուն թիւը 30 միլիոն է կ'ըսեն: Իրականութեան մէջ, անոնց իսկական թիւը ոչ ոք գիտէ: Որովհետեւ քիւրտերը այնքա՛ն Թուրքերուն հետ խառնուած են, որ Թուրքն ու քիւրտը իրարմէ զանազանելը շատ դժուար է:

\* \* \*

Այս 4 երկիրներէն միայն Թուրքիոյ մէջ է, որ քիւրտերը իբր քիւրտ չեն ճանչցուիր:

Եւ Թուրքիոյ մէջ քիւրտերը՝ իբր քիւրտ ապրելու իրաւունք չունին:

Կրնա՞ք երեւակայել: Թուրքիոյ մէջ, 21-րդ դարուն, 20 միլիոնէ աւելի թիւ կազմող քիւրտերուն ինքնութիւնը՝ թրքական պետութեան կողմէ կ'ուրացուի:

1990թ. ամերիկացիները, իրաքեան առաջին պատերազմին, Միջին Արեւելքի մէջ իրենց իշխանութիւնը տեւականացնելու նպատակաւ, Հիւսիսային Իրաքի մէջի քիւրտերուն համար, քրտական ինքնավար շրջան մը ստեղծեցին:

Եւ այս ինքնավար քրտական շրջանը այսօր ինքնավար քրտական պետութիւնի մը վերածուեցաւ:

Եւ նոր քրտական պետութիւնէն ամէնէն շատ վախցողներն ալ Թուրքերն են:

Որովհետեւ Իրաքի քրտական պետութենէն յետոյ, կարգը Թուրքիոյ մէջ ապրող քիւրտերուն պիտի գայ՝ սեփական պետութիւն կերտելու: Եւ Թուրքերը լա՛ւ գիտեն այս մէկը:

Եւ Թուրքերը 2003-ին, իրաքեան Բ. պատերազմին առաջին օրերէն սկսեալ, P.K.K.-ն ճգմելու պատրուակով, Իրաք մտնելով քրտական «Նոր պետութիւնը» քանդել ուղեցին: Բայց, մինչեւ այսօր, ամերիկացիները իրենց արգելք եղան:

Սա վերջին օրերուն Թուրքերը, ամերիկացիներուն Իրաքի մէջ մատնուած դժուար եւ տկար վիճակէն օգտուելով, կրկին սպառնալ սկսան: Եւ Թրքական բանակները Հիւսիսային Իրաքի սահմանին վրայ համախմբեցին: Եւ Թուրքիոյ Ազգային ժողովը, P.K.K.-ն մաքրագործելու համար, Թրքական կառավարութեան Հիւսիսային Իրաք մտնելու իրաւասութիւն տուաւ:

Բնական է, որ Թուրքերուն բուն նպատակը [Թուրքերուն համար մահ ու կենաց խնդիր եղող], Հիւսիսային Իրաքի քրտական պետութիւնը եւ քիւրտերը մաքրագործել է:

Մինչ այդ՝ Թուրքերուն ախորժակը շատ բացուած է: Թուրքերուն ուրիշ մէկ նպատակն ալ՝ Քերքուկի քարիւղի հարուստ չրջաններուն տիրանալն է...

Մենք ալ Թուրքերուն կ'ըսենք, թէ՛ «Ուշադրութիւն ըրէք, Թուրքե՛ր: Բրինձի համար Տիմեաթ գացած միջոցին, տունին ձաւարէն չզրկուիք»:

Արդէն, սա վերջին օրերուն, Թրքական թերթերուն մէջ շատ գրիչներ, Իրաք ներխուժման փորձին վտանգալից ըլլալը կը մատնանշեն, եւ իբր եզրակացութիւն կը զգուշացնեն.

«Ուշադրութի՛ւն, զօրավարնե՛ր, այս արկածախնդրութեան մի՛ դիմէք: Ամերիկացիներուն նման, Իրաքի մէջ դժուարութիւններու կը մատնուիք: Եւ ձեր դէմ, նախ, ամերիկացիները պիտի գտնէք: Որովհետեւ անոնք ձեզ, Իրաքի քարիւղի չրջաններուն չեն մօտեցնէր:

Ասկէ գատ՝ Թուրքիոյ մէջ գտնուող քիւրտերն ալ մի՛ մոռնաք...

Ասիկա մեզ մինչեւ եղբայրասպան պատերազմի կը տանի»:

Թիւ 150

«Նայիրի», 1 Յունուար 2008

**ԱՇԽԱՐՀԻ... «ՈՒԹԵՐՈՐԴ ՀՐԱՇԱԽԲԸ»****ԹՈՒՐԲԻԱՆ****ՄԻՆՉԵՒ 1915 ԹՈՒԿԱՆԸ ԱՆԱԹՈՒՈՅ****ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՄԵՍԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ ԲՐԻՍՏՈՆԵԱՅ ԷՐ:****8 ՏԱՐԻ ՅԵՏՈՅ՝ 1923-ԻՆ, ԱՆԱԹՈՒՈՅ ՄԷՉ,****ՄԷԿ ՀԱՏ ԲՐԻՍՏՈՆԵԱՅ ՉՄՆԱՅ: ԵՒ 1923-ԻՆ****ՃԻՒՂ ԹՈՒՐԲԻԱՆ ԱՏԵՂՈՒԵՃԱԲ**

Հին՝ պատմական շրջաններուն իրագործուած «Աշխարհի եօթը հրաշալիքները» համաշխարհային հռչակ ունին.

1.- Եգիպտոսի Քեոփսի (Մեծ) բուրգը:

2.- Բաբելոնի [Իրաք] Շամիրամի առկախ պարտէզները:

3.- Յունաստանի *Olimpie* վայրին մէջ արձանագործ *Phidias*-ի կողմէ ստեղծուած ոսկեայ եւ փղոսկրեայ *Zeus*-ի արձանը:

4.- Եփեսոսի *Artemis*-ի տաճարը:

5.- *Halicarnasse*-ի (*Bodrum*) *Mausolee*-ն [Հայիկառնասի յուշադամբանը]:

6.- *Rhodos*-ի *Colosse*-ը [Հռոդոսի Հելիոս աստծո հսկա արձանը]:

7.- Աղեքսանդրիոյ [Եգիպտոս] փարոսը:

Աշխարհի եօթը հրաշալիքներէն հինգ հատը, պատմական շրջաններուն յունաց կողմէ շինուած են:

Եւ յոյներուն ստեղծագործած այս հինգ հրաշալիքներէն երկու հատը այսօր, Թուրքիա ըստած կայանողներու եւ մարդասպաններու պետութեան գրաւման տակ գտնուող Անաթոլիոյ մէջ են:

1.- Եփեսոսի (այսօր՝ *Selçuk-Izmir*) *Artemis*-ի տաճարը:

2.- *Halicarnasse*-ի (այսօր՝ *Bodrum*) *Mausolee*-ն [յուշադամբանը]:

\* \* \*

Այսօր մեր նպատակը՝ այս «Աշխարհի հրաշալիքներուն» մասին խօսիլ չէ: Ընդհակառակը, մարդկային տաղանդին ստեղծագործած այս հրաշալիքներուն քով մարդկութեան ճակտին մուրը եղող՝ թրքական ցեղախումբերուն, 11-րդ դարու վերջաւորութեան, Միջին Ասիոյ խորերէն գալով Անաթոլիոյ քրիստոնեայ ժողովուրդները քանի մը դարեր տեւողութեամբ կատարուած ջարդերով տկարացնելէ յետոյ, 1915-էն մինչեւ 1923, 8 տարիներու ընթացքին, ահռելի ցեղասպանութեան ենթարկուելով Անաթոլիան բոլորովին թրքացնող «հրաշալիքի» մասին ալ բացատրութիւն պիտի ջանանք տալ:

Մտածենք ակնթարթ մը՝ Անաթոլիոյ տարածքը Ֆրանսայի տարածքէն աւելի է: 550 հազար քառ. քլ. մեթր տարածք ունեցող Ֆրանսայի բնիկ ժողովուրդը, 8 տարուան ընթացքին, բոլորովին բնաջնջուի... Անհաւատալի բան է ասիկա:

Մարդկային խելքէն, միտքէն չանցնելիք, աներեւակայելի ըլլալու աստիճան սարսափելի այս ցեղասպանութիւնները կատարող և մարդու կերպարով «Գորչ գայլերու» սա վոհմակաները, ինչպէ՞ս կրցան այս «հրաշալիքները» իրականագործել:

\* \* \*

Ամէն բան 1789-1794թթ. Ֆրանսական մեծ յեղափոխութեամբ սկսաւ: Երբ Ֆրանսայի մէջ ֆարմասոնները իշխանութիւնը ձեռք անցուցին...

Եւ ֆարմասոնները նոր «Աշխարհ» մը կազմելու իրենց ծրագիրները գործադրել սկսան:

Այն տարիներուն օսմանեան կայսրութիւնը, ռուսական բանակներուն յառաջացման պատճառաւ, կործանման ճամբուն մէջ էր... Բայց ֆարմասոնները, օսմանեան կայսրութեան կործանման արգելք եղան:

... Ֆրանսայի ըմբոստները Պոլիս սպաներ ուղարկեցին: Եւ այս սպաները օսմանեան սուլթան Մահմուտ Երկրորդին թիկունք կանգնեցան:

Եւ Մահմուտ Երկրորդը՝ «ենիչերիները» մէջտեղէն վերցուց:

Եւ Ֆրանսական սպաները Պոլսոյ մէջ (Nizami-Cedit) անունով նոր զինուորական կարգ մը ստեղծեցին... Օսմանեան կայսրութեան մէջ, թրքական ազգայնամոլ հոսանքը՝ Ֆրանսական ֆարմասոններու կողմէ, Մահմուտ 2-րդի չրջանին, առաջին քայլերը նետեց:

Օսմանեան կայսրութեան մէջ, վերակազմութեան չրջան մը սկսած էր:

Իրականութեան մէջ, ֆարմասոններուն նպատակը՝ Օսմանեան կայսրութիւնը վերականգնելով, ուսերուն Միջերկրական իջնելուն արգելք ըլլալ էր:

Եւ ֆարմասոնները 1878թ., Պերլինի դաշնագրով, ուսերուն Պոլիսը գրաւելուն արգելք եղան...

Այս՝ առաջին հանգրուանն էր:

Այդ թուականէն յետոյ, Օսմանեան կայսրութեան մէջ, թուրք ազգայնամոլութիւնը զօրանալ սկսաւ... Այս ալ՝ երկրորդ հանգրուանն էր:

1870թ. Budapest-ի -Հունգարիա- մէջ, հրէայ Armin Vambery-ն եղաւ թրքական ազգայնամոլութեան սկզբունքները պատրաստող առաջին անձը:

«Թուրանականութիւն» կոչուած ծայրայեղ ցեղապաշտական շարժումը, Vambery-ի յարատեւ աշխատանքներուն շնորհիւ, օսմանեան չրջանակներուն մէջ տարածուիլ սկսաւ:

Ziya Gökalp-ը, Vambery-ին աշակերտը ըլլալով, Օսմանեան կայսրութեան մէջ թուրանական մտածելակերպին առաջնորդն եղաւ:

Ziya Gökalp-ի տիգրանակերտցի ըլլալուն պատճառաւ կը կարծուի, որ ան ծագումով քիւրտ է: Մինչդեռ իրականութեան մէջ սելանիկցի պետական պաշտօնեայի մը զաւակն է ան, այսինքն՝ հրէայ է...

Երրորդ հանգրուանը՝ 1900թ. Սելանիկի մէջ դաւանափոխ հրէաներու եւ նաեւ հրէաներու կողմէ հիմնուած գաղտնի «Jeunes-Türks» կազմակերպութեան հիմնուելովը կ'սկսի:

Այն տարիներուն Զուիցերիոյ *Bâle* քաղաքին մէջ, Theodor Herzl-ը սիոնիզմ ըսուած և աշխարհի բոլոր հրէաներու տեսլականը իրականացնել ծրագրող կազմակերպութիւնը ստեղծեց:

Սիոնիզմի առաջնակարգ նպատակներէն մէկը՝ հրէաներուն «հայրենիքը» եղող Պաղեստինի մէջ իսրայէլական պետութիւն մը հիմնել էր:

... Բայց այդ տարիներուն, Պաղեստինը Օսմանեան կայսրութեան տարածքին մաս կը կազմէր...

Այս պատճառաւ սիոնիստները հետեւեալ որոշումը տուին՝ Իսրայէլեան պետութիւնը հիմնելու համար, Օսմանեան կայսրութեան մէջ իշխանութիւնը ձեռք առնել ամէն գնով...

Սելանիկի մէջ “Jeunes Turcs”-երու կազմակերպութեան հիմնուիլը և աւելի ետք, կրկին դաւանափոխ հրէաներու եւ նաեւ հրէաներու կողմէ Սելանիկի մէջ “İttihat ve Terakki” կուսակցութեան կազմուիլը՝ սիոնիստներուն Պաղեստինի մէջ Իսրայէլի պետութիւն մը կազմելու ծրագրին անմիջական հետեւանքն էր:

Անկէ յետոյ, սիոնիստական ծրագիրը բառ առ բառ գործադրուեցաւ...

1908թ. “İttihat ve Terakki” կուսակցութիւնը, Պոլսոյ մէջ իշխանութիւնը ձեռք անցուց...

Բայց Պաղեստինի մէջ արաբներէ բնակուած եւ չրջապատուած տարածքի մը վրայ հրէական պետութիւն հիմնելը շատ դժուար էր:

Այդ պատճառաւ, արաբներուն դրկից օսմանեան զօրաւոր պետութեան մը գոյութիւնը անհրաժեշտ էր, որ արաբները հրէական պետութեան վնաս չկարենան հասցնել:

Բայց Օսմանեան կայսրութեան, մանաւանդ՝ Անաթոլիոյ մէջի ժողովուրդին մեծամասնութեան քրիստոնեայ ըլլալուն պատճառաւ, ի վերջոյ օր մը, անպայման, ոուսերը Անաթոլիան

կը գրաւէին եւ Միջերկրական կ'իջնէին: Այս ալ՝ Օսմանեան կայսրութեան վերջը ըսել էր:

Ասոր համար կը մնար միայն մէկ միջոց՝ «հայերը եւ յոյները մաքրագործել»: Եւ այս ծրագիրը գործադրութեան դրուեցաւ:

1915թ. «İttihat ve Terakki» կուսակցութեան կառավարութեան ներքին գործոց նախարարը՝ մասոններուն նախագահը եղող Թալեաթ փաշային հրամանաւ [Առաջին աշխարհամարտին խառն վիճակէն օգտուելով], էտիրնէէն մինչեւ Վան՝ բոլոր հայերը, իբր թէ աքսորի ուղարկելու պատրուակով տեղահանեցին, եւ հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին...

1919-էն մինչեւ 1923-ալ Անաթոլիոյ մէջ նոր կազմուող թրքական պետութեան ղեկավարը, սելանիկցի ֆարմասոն [ազգութեամբ ի՞նչ ըլլալը յայտնի չեղող] Մուստաֆա Քեմալի կողմէ՝ 1915թ. Անաթոլիոյ մէջ «Սուրի մնացորդ» բոլոր հայերը եւ նոյնպէս՝ Անաթոլիոյ բոլոր յոյները ցեղային մաքրագործումի ենթարկուեցան...

Եւ 1923թ., միայն մահմետականներէ կազմուած Թուրքիա մը ստեղծուեցաւ:

Աշխարհի մէջ, ոչ մէկ ատեն, ոչ մէկ տեղ՝ այսքան զարհուրելի վայրագութիւն մը չէ գործուած:

Այդ պատճառաւ կ'ըսենք, որ Թուրք կոչուածներուն իրագործած այս ցեղասպանութիւնները, մարդկութեան ճակտին վրայ սեւ մուր մ'ըլլալով... թրքական վայրագութեան ամէնէն արիւնարբու օրինակը ըլլալով... եւ թրքական զազանութեան ամէնազարհուրելի «հրաշալիքը» ըլլալով՝ աշխարհի եօթը հրաշալիքներուն նման ու կարգին՝ յաւիտեանս յիշուի՛ն:

Թիւ 151

«Նայիրի», 29 Յունուար 2008, Թիւ 281

**ԱՅՍՕՐ, ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻՆ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑՆ Է:  
ՊՈԼՍՈՅ ՄԷՉ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ Ի ՅԱՐԳԱՆՍ,  
ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ՀՈԳԻ ՃՈՅՅ ԿԱՏԱՐԱԾ ԵՆ:  
ԵՒ ՄԻԱԲԵՐԱՆ ԿՐԿԻՆ ՊՈՌԱՅԵՐ ԵՆ`  
«ԲՈԼՈՐՍ ԱՆ ՀՐԱՆԴ ՏԻՆՔ ԵՆՔ: ԲՈԼՈՐՍ ԱՆ ՀԱՅ ԵՆՔ»:  
ԽԵ՛ՂՃ ՀՐԱՆԴ ՏԻՆՔ: ԽԵ՛ՂՃ ՀԱՅԵՐ:  
ՉԵՐ ԴԻՄԱՅԸ ՈՎՔԵ՛Ր ԿԱՆ: ՏԵՂԵԱԿ Է՛Ք ԱՐԴԵՕՔ,  
ՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՉ «ԲՈԼՈՐՍ ԱՆ ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱ ԵՆՔ»:  
«ԲՈԼՈՐՍ ԱՆ ԹՈՒՐՔ ԵՆՔ» ԳՈՌԱՅՈՂ «ԳՈՐԸ ԳԱՅԼԵՐՈՒ»  
ԽՈՒԺԱՆԸ ԿԱՅ**

Թալեաթ փաշա ըսուած՝ 1915թ. Հայկական ցեղասպանութեան գլխաւոր պատասխանատուն, 1921թ. Պերլինի մէջ Սողոմոն Թէհլիրեանի կողմէ զգետնուելով իր պատիժը կրեց:

Բայց, ի՛նչ օգուտ: Որովհետեւ Թալեաթ փաշայական ցեղասպան մտայնութիւնը Թուրքիոյ մէջ չպատժուեցաւ:

Եւ Թուրք ըսուած մարդասպաններու խուժանները, 1915թ. ետք ալ, շարունակեցին ցեղասպանութիւններ կատարել:

Մուստաֆա Քեմալ եւ Իսմէթ Ինէօնիլ կոչուող Թալեաթ փաշայի ուրուականները ամէնէն սարսափազդու ցեղասպանութիւններու յանցապարտներն են...

... Եւ 1915թ. մինչեւ այսօր, Թուրքիա ըսուած մարդասպաններու եւ աւազակներու պետութեան մէջ փոխուած բան մը չկայ:

... Հրանդ Տինքի մարդասպաններուն դատաւարութիւնը, մէկ տարիէ ի վեր, դե՛ռ կը շարունակուի:

Անդին, Մալաթիոյ մէջ, քրիստոնեաները ոչխարներու պէս մորթելով սպաննողներուն դատաւարութիւնը վերջ չէ գտած:



Մեր համոզումով՝ այս դատավարութիւնները «ի ցոյց մարդկանց» դատավարութիւններ են:

Այսինքն՝ թուրքերը «Թատրոն կը խաղան»:

Որովհետեւ ամէն մարդ գիտէ, թէ այս ոճիրները կատարել տուողները պետութեան մէջ պետութիւն եղող թրքական «MIT» կազմակերպութիւնն է...

Մինչ այդ՝ կը շարունակուին նոր ոճիրներ գործուիլ:

Սամսունի, Տրապիզոնի, Իզմիրի մէջ կաթողիկէ վարդապետներ դաշունահարուեցան եւ սպաննուեցան...

Այս՝ օսմանեան տիպի վայրագութիւնները միայն թուրքիոյ մէջ չէ, որ կը կատարուին:

Թուրքերը այսօր, Եւրոպայի մէջ ալ, քրիստոնեաները սարսափի կը մատնեն:

1950թ. ի վեր, մեծ թիւով թուրքեր, իբր գործարար զանազան եւրոպական երկիրները տեղաւորուեցան:

Այսօր, եւրոպական երկիրներուն մէջ, տասը միլիոնի մօտ թուրքեր կան:

Եւրոպական երկիրներուն մէջ այս մեծ թիւով թուրքերուն ներկայութիւնը, Եւրոպան ներսէն քանդելու ծրագրին գործադրութեան հետեւանքն է:

Եւ այսօր Եւրոպայի մէջ, թրքական «MIT» կազմակերպութեան աջ բազուկը եղող Փաշիստ ցեղապաշտ M.H.P. կուսակցութեան «Գորշ գայլերու» վոհմակները, Եւրոպա ապրող հայ, ասորի եւ քրտական համայնքներուն վրայ, ամէն օր հալածանքի, վախցնելու եւ ահաբեկելու գործողութիւններ կը կատարեն: Եւ թուրքերուն այս տեղորիստական շարժումներուն դէմ, եւրոպական պետութիւնները մարդկային իրաւունք ըսուած ձաբոտութիւն պատճառաւ, արգելիչ լուրջ միջոցներ չեն կրցած առնել...

Այս միջոցին Պոլսոյ մէջ ապրող, 1915թ. ցեղասպանութենէն ողջ մնացած, ջարդի մնացորդ յիսուն հազարի շուրջ հայերը՝ Հրանդ Տինքի սպանութենէն եւ Մալաթիոյ բողոքական քարոզիչներուն ջարդի ենթարկուելէն յետոյ, իրենց «Անոյշ քունէն» արթնցան: Եւ հասկցան, որ թուրքերուն ըսած՝



կանը մեծամասնութեամբ քրիստոնեայ եղող, քաղաքակրթութիւններու եւ քրիստոնէութեան օրրանը կազմած Կոստանդնուպոլսոյ եւ Անաթոլիոյ մէջ, այս հողերուն 5000 տարուան բնիկ ազգերը եղող յոյներէն եւ հայերէն ոչ մէկ հետք պիտի մնայ:

Թիւ 152

«Նայիրի», 12 Փետրուար 2008, Թիւ 282

**ՔԸՐԳԵՇԻՐՅԻ 20 ԼԻՍԷԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐ ԻՐԵՆՅՆ ԱՐԻԻՆՈՎ  
ՆԵՐԿՈՒՄԾ ԹՐՔԱԿԱՆ ԴՐՕՇԱԿ ՍԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԵՆ:  
ԵՒ ԱՅՍ ԱՐԻԻՆՈՏ ԴՐՕՇԱԿԸ ԻԲՐ ՆՈՒԷՐ Կ՛ՈՒՂԱՐԿԵՆ ԹՐՔԱ-  
ԿԱՆ ՍՊԱՅԱԿՈՅՏԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՉՕՐԱՎԱՐ ԵԱՇԱՐ ՊԻԵԻԻՔՔԱՆԸԹԻՆ:  
ԵՒ ՉՕՐԱՎԱՐ ՊԻԵԻԻՔՔԱՆԸԹԸ ԱՅՍ ԱՐԻԻՆՈՏ ՆՈՒԷՐԵՆ  
ՇԱՏ ԳՈՀ ԿԸ ՄՆԱՅ**

Արդեօք, այս արիւնոտ դրօշակը պատրաստող երիտասարդները տեղեա՞կ են, թէ իրենց ապրած Քրրչեհիրը՝ պատմական բիւզանդական քաղաք մըն էր, եւ Բիւզանդիոնի կայսր Justinianus-ի կողմէ 536 թուականին Justinianopolis ըլլալով անուանուած էր:

Արդեօք այս երիտասարդները, Justinianopolis-ին [ներկայի անունով՝ Քրրչեհիր] 1076 թուականին Միջին Ասիայէն գալով Անաթոլիա խուժող սելջուկներու կողմէ քանդուելով աւերակի վերածուելուն եւ այդ պատճառաւ ալ Քրրչեհիրի մէջ հին բիւզանդական քաղաքէն ոչ մէկ հետք մնացած ըլլալուն տեղեա՞կ են:

Ամէնէն կարելորդ՝ այս երիտասարդները նախկին թրքական դրօշակին կանանչ գոյն ունենալուն, բայց յետոյ Անաթոլիոյ բնիկ ժողովուրդներուն թրքական խուժաններու կողմէ տեւաբար ջարդերու ենթարկուելնուն պատճառաւ տեղացի

ժողովուրդներուն արիւնին գոյնով Կարմիրի վերածուած ըլլալուն տեղեա՞կ են արդեօք:

Արդեօ՞ք այս երիտասարդները տեղեակ են, որ Հակառակ դարեր տելոդութեամբ ջարդերու ենթարկուած ըլլալնուն, Անաթոլիոյ տեղացի ժողովուրդները նոյնիսկ, մինչեւ 1915 թուականը, մեծամասնութեամբ քրիստոնեաներ էին:

Բայց 1915-էն մինչեւ 1923 թուականը, Անաթոլիոյ բնիկ ժողովուրդները եղող հայերը, յոյները եւ ասորիները՝ Թալեաթ փաշայի, Մուստաֆա Քեմալ փաշայի, Իսմէթ փաշայի, Քազըմ Քարապեքիր փաշայի եւ անոնց մեղսակիցներուն հրամանով եւ կարգադրութեամբ՝ մեծ մասամբ ցեղասպանութեան ենթարկուեցան: Արդեօք այս զարհուրելի իրականութեան տեղեա՞կ են այս երիտասարդները...

Ուրիշ հարց մը կայ՝ Թրքական ջարդերու եւ ցեղասպանութիւններու շրջանին Անաթոլիոյ բնիկ քրիստոնեայ ժողովուրդներուն մէկ մասը, սպանդէ փրկուելու համար՝ իսլամութիւնը ընդունեցին:

Իրենց արիւնի գոյնով, Թրքական դրօշակ պատրաստող այս երիտասարդները վստա՞հ են, որ իրենք իսկական թուրքեր են: Այս պատճառաւ ալ այս երիտասարդներուն կը յանձնարարենք.—

Գացէք, եւ ձեր արիւնը քննել տուէք: A. D. N.-ի քննութիւնը ձեր իսկական ազգութիւնը մէջտեղ կը հանէ:

Բայց եթէ, արեան քննութեան արդիւնքով հաստատուի ձեր նախնիներուն հայ ըլլալը, ճշմարտութիւնը մէջտեղ ելլէ՝ ի՞նչ կ'ընէք:

Որովհետեւ Թրքական պատմութեան հիմնարկին նախագահը՝ Yusuf Halacoglu պաշտօնապէս յայտարարեց թէ՝

«Ալեւիներուն եւ քիւրտերուն մեծամասնութիւնը ծագումով հայ են»:

Բայց մանաւանդ՝ եթէ ձեր արիւնը հայկական ծագում ունենայ, ձեր արիւնով ներկուած եւ սպայակոյտի նախագահ զօրավար Եաչար Պիւելքքանըթի նուիրած ու զօրավարին

գրասենեակը զարդարող հայկական արիւնով ներկուած դրօշակը ի՞նչ պիտի ըլլայ...

Թիւ 153

«Նայիրի», 4 Մարտ 2008, [Թիւ 283

### ԺԱՌԱՆԳԻ ԿՈՒՒ ԹՈՒՐԷ-ՔՐՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՉՍԸ

Թրքական զինեալ ուժերը, 22 Փետրուար 2008թ., տասը հազար զինուորներով, հրասայլերով, օդանաւերով եւ ուղղաթիռներով Իրաք մտան:

Պաշտօնապէս յայտարարուած նպատակը՝ [իբր [ԹԷ] P.K.K.-ի քրտական բանակատեղիները զարնել էր: Բայց բուն հեռանկարը՝ իրաքեան Քիւրտիստանը քանդել:

Թուրքերուն իրաքեան Քիւրտիստան ներխուժելը՝ ամէն կողմ մեծ մտահոգութիւններու պատճառ եղաւ: Միջին Արեւելքի մէջ նոր պատերազմի մը սկզբնաւորութիւնը ան կրնայ-ըլլալ ըսելով...

28 Փետրուար 2008թ., Թուրքիոյ վարչապետ TAYYİP ERDOĞAN-ը դեռ տեղեակ չեղած՝ [Թրքական զինեալ ուժերը Իրաքէն քաշուեցան:

Ի՞նչ եղաւ [Թրքական ուժերուն: Սպայակոյտի նախագահ զօրավար Եաշար Պիւեիլքքանըթ կ'ըսէ [ԹԷ՝ «[Թրքական ուժերն իրենց տրուած ծրագիրը գործադրեցին»:

Բայց զօրավարը կ'աւելցնէ՝ «[Թրքական ուժերուն Իրաքի մէջ աւելի երկար մնալը՝ վտանգաւոր կրնար ըլլալ»:

Ինչո՞ւ արդեօք. ի՞նչ էր վտանգը:

Մինչ այդ, սա վերջին օրերուն, Ամերիկայի պաշտպանութեան նախարար PAUL GATES-ը Անգարա կու գայ, եւ քրդական սպայակոյտի նախագահութեան կեդրոնը տեղի ունեցած հաւաքոյթին, [Թուրքերուն խստութեամբ կը յայտարարէ՝ «Անմիջապէս քաշուեցէք Իրաքէն»: Նոյն օրը G. W. BUSH-ն ալ [Թուրքերուն կ'ազդարարէ՝ «Շուտով հեռացէք Իրաքէն»:

[Շատերուն ծանօթ է, որ Իրաքի մէջ ամերիկացիներուն միակ դաշնակիցը՝ քիւրտերն են: Այդ պատճառաւ [Թուրքերը Իրաքի մէջ շատ առաջ չեն կրնար երթալ] ...Զօրավար Եաշար Պիւեիւքքանը[Թը՝ ամերիկացիներուն հրամանով Իրաքէն քաշուած ըլլանին չէ ընդունած:

Եւ կ'ըսէ, [Թէ՝ «Մենք արդէն սկսած էինք քաշուիլ...»:

Թուրքիոյ վարչապետ Թայիպ Էրտողանը այս վերջին եղելութիւններէն լուր չէ ունեցած: Եւ [Թրքական զինեալ ուժերուն Իրաքէն քաշուած օրը, յայտարարութիւն մը կու տայ եւ կ'ըսէ [Թէ՝

«Թրքական զինեալ ուժերը, Իրաքի մէջ իրենց գործունէութիւնը յաջողութեամբ կը շարունակեն»:

Խեղճ վարչապետ Թայիպ Էրտողան... Թուրք լրագրող մը վարչապետ Էրտողանը ծաղրելու համար, Աթաթիւրքին հռչակաւոր մէկ խօսքը չըջելով կ'ըսէ՝

«Գերիշխանութիւնը՝ առանց պայմանի ժողովուրդինն է»: Այս խօսքը պոչաւոր սուտ մըն է: Զեզի իրականութիւնը ըսենք. «Գերիշխանութիւնը՝ առանց պայմանի բանակին ձեռքն է»:

P.K.K.-ի՝ քրդական ուժերու հրամանատարը մինչդեռ յաղթանակի յայտարարութիւններ կ'ընէ. «Թրքական «Արեւ գործողութիւնը» առանց արեւ տեսնելու վերջ գտաւ: 120 [Թուրք զինուոր մեռան: Եթէ [Թուրքերը, Իրաքի մէջ աւելի մնային՝ բոլորն ալ կ'սպաննէինք»:

Այս օրերուն Վանի, Տիգրանակերտի, Հաքքարիի եւ Պոլսոյ, նաեւ մեծամասնութեամբ քիւրտերէ բնակուած քաղաքներուն մէջ, քիւրտերը իրաքեան Քիւրտիստանի վրայ կատարուած [Թրքական յարձակումներուն դէմ բողոքի ցոյցեր կը կատարեն, եւ [Թուրք ոստիկաններուն հետ բախումներ կ'ունենան:

Թուրքիոյ շատ մը քաղաքներուն մէջ ալ ինքնաշարժները կրակի կը տրուին...

Այսօր՝ 2 մարտ 2008[թ. վերջին լուրերը.—

«Պոլսոյ շատ մը վայրերու մէջ ուումբեր պայթած են...»:

Պոլսոյ մէջ բնակող մեր մէկ ազգականը երէկ մեզի հեռա-  
ձայնեց եւ ըսաւ, թէ՛ «Պոլսոյ մէջ վիճակը շատ գէշ է: Շատ  
լաւ ըրեր էք, որ այս վտանգաւոր երկրէն հեռացեր էք»:

Եւրոպայի շատ մը քաղաքներուն մէջ ալ քիւրտերը, թուր-  
քերուն իրաքեան Քիւրտիստանի վրայ յարձակման դէմ,  
բողոքի ցոյցեր կը կատարեն...

Մենք ալ կ'ըսենք թէ՛ "THIS IS THE BEGINNING".

Դեռ այս՝ սկզբնաւորութիւնն է:

Տակաւին ինչէր պիտի ըլլան, ինչէր եւ ինչէր:

Դուք՝ թուրքերդ, 1915թ. հայ ազգը ցեղասպանութեան  
ենթարկելով անոնց ժառանգութեան տիրացածներդ,  
Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ հանգիստ պիտի  
չկրնաք ընել:

Որովհետեւ Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ  
այսօր բնակութիւն հաստատած քիւրտերը այս հողերը ձեր  
ձեռքէն պիտի առնեն:

Ինչպէ՞ս, գիտէ՞ք՝ ձեզի դէմ պատերազմելով:

Քիւրտերը հայերէն ձեզի ժառանգ մնացած [աւելի ճիշդ՝  
ձեր կողմէ գողցուած] այս հողերը ձեզի պիտի չձգեն:

Ասոր կ'ըսեն ժառանգի կոխ:

Աւելի ճիշդ՝ Արեւմտեան Հայաստանի հողերուն տիրանա-  
լու համար՝

«Թուրք-քրտական պատերազմ»:

Բոլոր այս խնդիրներուն մէջ այս հողերուն տէրերը եղող  
հայերը ի՞նչ դիրք պիտի բռնեն:

21-րդ դարը՝ վերջաւորութիւնը անյայտ՝ շատ մը  
եղելութիւններով յղի է:

Թիւ 154

«Նայիրի», 18 Մարտ 2008, Թիւ 284

### ԿՐԿԻՆ ՊԱՏԵՀԱՊԱՇՏ ԹՈՒՐՔԵՐԸ

Թուրքերուն անմարդկային նկարագիրը՝ ամբողջ աշխարհին ծանօթ է:

Թուրք ըսուած ատեն միտք եղող առաջին ածականները՝ անխիղճ, անգուլթ եւ վայրագ մակդիրներն են:

Բայց այսօր, ձեր այս բարձր «յատկանիչներէն» անջատաբար, մեզի համար շատ կարեւոր եղող ձեր մէկ ուրիշ յատկանիչին մասին կ'ուզենք խօսիլ:

Աղուէսի նման խորամանկ ու պատեհապաշտ թուրքեր՝ ձեր ամենավերջին հնարամտութիւնը՝ սիոնական ամերիկացիներուն կովկասը ձեռք անցընելով Ռուսիան կոնակէն հարուածելու ծրագրին մէկ հանգրուանը՝ ոուսերը Հայաստանէն վռնտել է:

Այսօր բոլոր հայրենասէր հայերը գիտեն, որ եթէ ոուսերը հեռանան Հայաստանէն, միջոց մը յետոյ թուրքերը, պատրուակ մը գտնելով, Հայաստանը կը գրաւեն:

Եւ նման դրութեան մը գոյացումը՝ Հայաստանը բնաջնջել ըսել է...

Սիոնիստ ամերիկացիները վերջին տարիներուն, Ուքրանիոյ եւ Վրաստանի մէջ ըրածնուն նման, Հայաստանի մէջ ժողովուրդը ըմբոստութեան մղելով՝ ոուսերուն բարեկամ այսօրուան Հայաստանի կառավարութիւնը տապալելու ծրագիրը կիրարկել սկսան:

Եւ այս պատճառաւ ալ ամերիկամէտ թուրքերուն բարեկամ մը եղող Լեւոն Տէր-Պետրոսեանին Հայաստանի ժողովուրդը ըմբոստութեան մղելու պաշտօն տուին:

Եւ այս նպատակաւ ալ կ'ըսուի, թէ Լեւոն Տէր-Պետրոսեանին միլիոններով տոլար վճարեցին...



Եւ այս վերջինն ալ, Փետրուար 2008-ին, Հայաստանի նախագահական ընտրութեան մէջ «խարդախութիւն ըրին» պատրուակով, «մոլորուած» ժողովուրդը ոտքի հանեց:

Եւ այս ցոյցերը միջոց մը յետոյ, Երեւանի մէջ խանութներ եւ ինքնաշարժներ այրելու եւ ոստիկանական ուժերուն հետ արիւնալի բախումներու յանգեցան:

Բաւական մեծ թիւով մեռեալ եւ վիրաւորներու գոյացումով, Հայաստանի մէջ գրեթէ քաղաքացիական պատերազմի վիճակ ստեղծուեցաւ:

Բարեբախտաբար, որ Հայաստանի կառավարութիւնը արտակարգ վիճակ հռչակեց...

Եւ Հայաստանի մէջ [առայժմ] խաղաղութիւն կը տիրէ:

...Բայց Հայաստանի այս խառնաչփոթ վիճակէն ազերիները օգտուիլ ուզեցին...

Եւ ազերիական զօրքը հրասայլերով հայկական դիրքերուն վրայ յարձակեցաւ:

Բարեբախտաբար, որ հայկական ուժերը, ազերիներուն առիթէն օգտուելով յարձակումի անցնելու հաւանականութիւնը նախատեսած էին...

Եւ հայկական ուժերը հակայարձակումի անցան եւ ետ մղեցին ազերիները...

Բայց աղուէս թուրքերը՝ համբերութեամբ, ուրիշ յարմար առիթներու պիտի սպասեն:

\* \* \*

Պատմութեան էջերը՝ թուրքերուն այս պատեհապաշտ մտայնութեան արդիւնքը եղող ողբերգութիւններով լեցուն են:

Յառաջիկայ տողերուն մէջ, թուրքերուն միայն 20-րդ դարու մէջ եւ առիթէն օգտուելով գործադրած ողբերգութիւններուն մէկ քանին նշելու պիտի ջանանք.-

1914-1918-ի համաշխարհային պատերազմին խառնաչփոթութենէն օգտուելով թուրքերը 1915-ին հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին...

... 1920թ. Քազրմ Քարապեքիրը, առիթէն օգտուելով, վերապրած հայերն ալ ցեղասպանութեան պիտի ենթարկէր: Բարեբախտաբար, սովետական բանակը թուրքերուն արգելք եղաւ...

1941թ. թուրքերը, Երկրորդ համաշխարհային պատերազմէն օգտուելով, Պոլսոյ մէջ գտնուող 20-էն մինչեւ 45 տարեկան ոչ իսլամ այր մարդիկը Անաթոլիոյ խորերը աքսորեցին...

Եւ եթէ գերմանացիները Stalingrad-ի պատերազմէն յաղթական ելլէին՝ այս աքսորուած բոլոր ոչ իսլամ այր մարդիկը պիտի սպաննուէին:

Եւ թրքական բանակները, առիթէն օգտուելով, Հայաստանի վրայ պիտի յարձակէին:

Բարեբախտաբար գերմանացիները, Սթալինկրատի մէջ պարտուեցան...

...1955-ին «Սելանիկի մէջ Աթաթիւրքին տունը ոմբահարեցին»-ի սուտով թուրքերը, մինչ այդ իր քրիստոնեայ դիմագիծը պահող Պոլսոյ մէջ քրիստոնեաներուն խանութները եւ տուները հրկիզեցին եւ քանդեցին, ու Պոլիսը, այն օրէն յետոյ, բոլորովին թրքացուցին...

1974թ. թուրքերուն «Մեծ թշնամի» Makarios-ի դէմ մահափորձի մը կատարուելէն օգտուելով, թուրքերը Կիպրոսի կէսը գրաւեցին:

Եւ 35 տարիներէ ի վեր թուրքերը, մինչեւ այսօր, Կիպրոսին կէսը ձեռքերնուն պահած են...

Եւ եթէ թուրքերը առիթը գտնեն, ամբողջ Եւրոպան ալ կը գրաւեն:

Իսկ եւրոպական պետութիւնները, տարիներէ ի վեր, իրարու հետ կը վիճաբանին ըսելով՝ «Թուրքերը Եւրոպական միութեան մէջ առնե՞նք, թէ՞ ոչ»:

Եւրոպացի պետական պատասխանատուներ, պարապ տեղ իրարու հետ մի՛ վիճաբանիք: Թուրքերը Եւրոպական միութեան մէջ առնելու պէտք չունիք:

Որովհետեւ, ձեր այս թուլամորթ կեցուածքով՝ թուրքերը միջոց մը յետոյ, ամբողջ Եւրոպային պիտի տիրեն:

Թիւ 155

«Նայիրի», 8 Ապրիլ 2008, Թիւ 285

**ԹՈՒՐԲԵՐԸ “LAÏC” ԵՆ, ԹԵ՛ ԾԱՅՐԱՅԵՂ ԻՍԼԱՄ:  
Ո՞՞ ԱՅՍ ԵՆ. ԵՒ Ո՞՞ ԱԼ ՄԻԻՍԸ:  
ԹՈՒՐԲԻԱ ԸՍՈՒԱՏ ԱՌԵՂԾՈՒԱԾԸ՝ ԻՆՉ ԸԼԼԱԸ ԱՆՍՏՈՅՉ,  
ԲԱՉՄԱԹԻ ԳԼՈՒԽՆԵՐՈՎ ՃԻԱՂ ՄԸՆ Է:**

Ի՞նչ կարծեցիք, Թուրքե՛ր, այնքան դիւրի՞ն պիտի ըլլար ուրիշին հայրենիքը գողնալը:

Անաթոլիոյ 5000 տարուան բնիկ ժողովուրդները քանի մը տարուան մէջ ցեղասպանութեան ենթարկեցիք, եւ յետոյ, 1933-ին՝ հանրապետութեան տասներորդ տարեդարձին՝ «Տասը տարուան մէջ տասնհինգ միլիոն երիտասարդ ստեղծեցինք» ըսելով յոխորտացիք...

Մուստաֆա Քեմալի եւ Իսմէթ Ինէօնիւի բռնապետութեան շրջաններուն, այս սուտերը բոլորին կլեցուցիք: Բայց, 1950թ. յետոյ, իրականութիւնները յայտնուիլ սկսան:

Եւ 2000թ. շրջաններուն ամէն բան մէջտեղ ելաւ:

«Լայի՞ք» էք, Թէ՞ ոչ ծայրայեղ իսլամ: Այլ՝ ուրիշին հայրենիքը կլած ըլլալնուդ պատճառաւ մարսողութեան դժուարութիւն քաշող բազմաթիւ գլուխներով ճիւղ մըն էք:

\* \* \*

1915-էն մինչեւ 1923 տարեթիւր դուք, միւսլիման Թուրքե՛ր, միւսլիման քիւրտերուն հետ միասնաբար, Անաթոլիոյ բնիկ քրիստոնեայ ժողովուրդները ցեղասպանութեան ենթարկեցիք:

Բայց 1923թ. ձեր մեծաւորը՝ Մուստաֆա Քեմալը, հակառակ որ քիւրտերուն շնորհիւ իշխանութիւնը ձեռք անցուցած էր՝ քիւրտերուն ոչ մէկ իրաւունքը ճանչցաւ: Ընդհակառակը՝ իրաւունք ուզող քիւրտերն ալ մաքրագործեց: Եւ Թուրքերուն

մեծաւորը ըլլալով՝ բնիկ քրիստոնեայ ժողովուրդներու հողերուն, ինչքերուն, բոլոր հարստութիւններուն տէրը դարձաւ:

Ահաւասիկ, Թուրքիոյ մէջ 1950թ. սկսող եւ մինչեւ այսօր շարունակուող ալեկոծութիւններուն եւ խլրտումներուն բուն պատճառը, որ Թուրքերուն եւ քիւրտերուն միջեւ, բնիկ քրիստոնեայ ժողովուրդներուն ժառանգը բաժանելու պայքարն է:

\* \* \*

Եւ Թուրքիոյ մէջ այս՝ Թուրքերուն եւ քիւրտերու միջեւ մղուող պայքարը՝ առանց կողմերու անուններու բացայայտման, ամէն օր ամէն տեղ եւ ամէն մարզի մէջ անողոքաբար կը շարունակուի:

Այս պայքարին անունին երբեմն «Զախի եւ աջի կոխ կըսեն եւ երբեմն ալ “Laïc”-ներու եւ ծայրայեղ իսլամներու պայքար» անունը կուտան:

Բայց, անունը ինչ որ ալ ըլլայ, բուն արմատը՝ Թուրք եւ քրտական ժառանգի պատերազմ է...

Վերջին օրերուն «Մուստաֆա քեմալականները» մեծ քայլ մը նետեցին:

Սահմանադրական դատարան դիմեցին եւ, այսօր իշխանական կուսակցութիւն եղող Թայիպ էրտողանի եւ Ապտուլլա Կիլի կուսակցութեան (A.K.) ծայրայեղ իսլամներու կուսակցութիւն մը ըլլալուն պատճառաւ, անոր փակումը պահանջեցին: Պատճառն ալ հետեւեալն է:

Վերջին ամիսներուն A.K. կուսակցութիւնը Ազգային ժողովէն օրէնք մը հաստատել տուաւ - ուսանողուհիներուն լաջակով համալսարան մտնելը արտօնեց:

Մինչդեռ այս լաջակի արտօնութեան օրէնքը՝ Մուստաֆա Քեմալին «Լայիքութեան» խորհրդանիշը եղող «Հագուստի օրէնքին» հակառակ էր:

Եւ այս՝ դպրոցի մէջ լաջակ կրելը թոյլատրող օրէնքը, A.K. կուսակցութեան համար դեռ փորձ մըն էր: Յետոյ, կամաց-կամաց Մուստաֆա Քեմալին բոլոր «Լայիքութեան»

օրէնքները «Միւսլիմանութեան հակառակ է» ըսելով՝ փոխել պիտի ուզէին:

Այս վտանգը նախատեսող «Մուստաֆա քեմալականները» Սահմանադրական դատարանին դիմեցին եւ Ա.Կ. կուսակցութեան փակումը պահանջեցին, որ Ա.Կ. կուսակցութիւնը աւելի «առաջ» չերթայ:

Կրնա՞ք երեւակայել, թէ ինչ ըսել է այսօր, Թուրքիոյ մէջ իշխանութեան տէրը եղող Ա.Կ. կուսակցութեան փակումը:

Ասիկա, օրէնքի վրայ յենելով կատարուած «Պետական հարուած» մըն է...

Այս՝ փակման վտանգին դէմ, վարչապետ Թայիպ էրտողան յայտարարութիւն մը տուաւ եւ ըսաւ թէ՝

«Մենք ժողովուրդին քուէներովը իշխանութեան եկանք»...

Այս վիճակը դէպի ներքին քաղաքացիական պատերազմի կը տանի:

Եթէ անցեալին ըլլար, բանակը կեդրոնական հրապարակներու վրայ հրասայլեր կ'իջեցնէր եւ կառավարութիւնը վար կ'առնէր:

Թուրքիոյ մէջ, 1950-էն յետոյ, մինչեւ վերջին չրջանները, շատ անգամներ հրասայլերով կառավարութիւնները վար առնուեցան:

Թուրքիոյ մէջ բոլոր պետական հարուածները Ամերիկայի հրամանով կատարուած էին:

Բայց այսօր, Ամերիկան Թ. էրտողանի կառավարութեան վար առնուելուն կողմնակից չէ:

Որովհետեւ, իրականութեան մէջ, Թ. էրտողանի դահլիճը իշխանութեան գլուխ բերողը ամերիկացիներն են:

Այդ պատճառաւ կ'ըսենք, թէ Մուստաֆա քեմալականներուն գործը շատ դժուար է:

Որովհետեւ ամերիկացիները, Իրաքի մէջ քրտական պետութիւն մը հիմնեցին:

Որովհետեւ ամերիկացիները, այս՝ քրտական պետութեան թուրքերուն կողմէ քանդուիլը, չեն ուզեր:

Ընդհակառակը՝ քիւրտերը թուրքերուն աւելի զօրանալով Միջին Արեւելքի մէջ ամերիկացիներուն գլխուն փորձանք ըլլալուն արգելք կ'ըլլան:

Այս հեռանկարներով՝ ամերիկացիները քիւրտերուն թիկունք կը կանգնին:

Այս պատճառաւ ալ կ'ըսենք՝ ո՛վ թուրքեր, Անաթոլիոյ մէջ յոյները եւ հայերը մաքրագործելով անոնցմէ յափշտակուած հողերը, դիւրին-դիւրին պիտի չկրնաք մարսել:

Քիւրտերը ձեր յոյներէն եւ հայերէն գողցած հողերը ձեզի պիտի չձգեն:

Թիւ 156

«Նայիրի», 22 Ապրիլ 2008, Թիւ 286

**ԱՅՍՈՐ, 24 ԱՊՐԻԼ 2008,**

**ԹՈՒՐՔԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԳՈՐԾՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ**

**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 93-ՐԴ ՏԱՐԵԼԻՅՆ Է:**

**ԵՒ ՀԱՅԵՐԸ, 93 ՏԱՐԻՆԵՐԷ Ի ՎԵՐ, ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
ՏԱՐԵԼԻՅՆԵՐՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԿԸ ՀԱՒԱՔՈՒՆ,  
ՈՒ ԼԱՆՈՎ Կ՛ՈՒՁԵՆ, ՈՐ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԸԼԼԱՅ:**

**ԵՒ ԽԵՂՎ ՀԱՅԵՐԸ ՉԵՆ ԳԻՏԵՐ, ՈՐ ԼԱՆՈՎ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ  
ՉԻ ՊԱՀԱՆՁՈՒԻՐ:**

**ԱՅՍ ՇԱՀԱՆՆԴԻՐ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՅ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԻՇՏ  
ՉՕՐԱԴՈՐԻՆ ԿՈՂՄՆ Է**

Թուրքերուն համար կ'ըսեն թէ՛ «Թուրքերը բախտաւոր են: 1800թ. թուրքերուն անունը «հիւանդ մարդ» էր: Անոնք մահամերձ վիճակի մէջ էին...

Բայց յետոյ, բախտը իրենց օգնեց...

Եւ այսօր թուրքերը, շուրջ 70 միլիոն բնակչութեամբ, Մերձաւոր Արեւելքի ամենագօրաւոր պետութիւնը եղան»:

Մենք ալ կ'ըսենք, թէ քաղաքականութեան աշխարհին մէջ բախտը ոչ մէկ «ղեր» ունի:

Թուրքերուն «հիւանդ մարդ» ըլլալէ փրկուիլը՝ սիոնիստներուն աշխարհակալ ծրագիրներուն հետեւանքն է:

Սիոնիստները վերակենդանացուցին թուրքերուն, որ ասոնք ուսերուն դէմ վահանի դեր կատարեն:

Այս իրականութիւնները երբեք չեն խօսուիր: Որովհետեւ արգիլուած նիւթ են...

... Բայց, ամէն բան, արեւի լոյսի նման յայտնի է:

19-րդ դարուն վերջաւորութեան, Սելանիկի մէջ, Փարմասոն հրէաները եւ Փարմասոն դաւանափոխ հրէաները՝ երիտթուրքերու կազմակերպութիւնը հիմնեցին:

1900թ., կրկին Սելանիկի մէջ, Փարմասոն հրէաները եւ Փարմասոն դաւանափոխ հրէաները՝ «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութիւնը կազմեցին:

Եւ 1908-ին ալ «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութիւնը, Պոլսոյ մէջ, իշխանութիւնը ձեռք անցուց:

Եւ 1915թ., Առաջին աշխարհամարտին խառնաշփոթութենէն օգտուելով, ներքին գործոց նախարար Թալեաթ փաշայի հրամանով հայերը ցեղասպանութեան ենթարկուեցան...

Ո՞վ էր Թալեաթ փաշա: Ան, էտիրնէ ծնած է: Յետոյ, Սելանիկի մէջ, թղթատարական պաշտօնեայ եղեր է:

Աւելի յետոյ, «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան ղեկավարներէն մէկը կը դառնայ: Ամէնէն կարելորդ՝ հուսկ՝ օսմանեան Փարմասոններուն պետը կը դառնայ [«մեծ վարպետ»]= (*Grand Maitre*):

Մենք, Թալեաթ փաշային համար կը կարծէինք, որ ծագումով գնչու է:

Բայց, սա վերջին օրերուն, *Yalçın Küçük*-ին «Գաղտնի պատմութիւն» գիրքը կարդացինք: Այս գիրքին մէջ *Yalçın Küçük* փաստերով կ'ապացուցանէ՝ «Թալեաթ փաշան դաւանափոխ հրէայ է»: Կրնայ ըլլալ: Թէ՛ դաւանափոխ հրէայ եւ թէ՛ օսմանեան Փարմասոններու պետ:

Այս երկու «ուժերը» եթէ միանան՝ «հրաշքներ» կրնան գործել:

Իրապէս ալ, Թալեաթ փաշան, Հայկական ցեղասպանութիւնը իրագործած ըլլալուն համար կը յոխորտայ եւ սապէս կ'ըսէ եղեր.—

«Օսմանեան սուլթանները դարերով Հայկական հարցը չկրցան կարգադրել:

Մինչդեռ ես, Հայկական հարցը, քանի մը ամսուան մէջ կարգադրեցի»:

... 1919թ. ալ, կրկին ուրիշ սելանիկցի եւ Փարմասոն մը՝ Մուստաֆա Քեմալը օսմանցիներուն գլուխը կ'անցնի եւ ան ալ, Անատոլիոյ մէջ յոյները եւ ցեղասպանութենէն վերապրած հայերը կը մաքրագործէ, եւ պարպուած Անատոլիոյ հողերուն վրայ «Թուրքիա» ըսուած նոր պետութիւն մը կ'ստեղծէ:

Ուշադրութիւն ըրի՞ք արդեօք: «Երիտթուրքերը» հիմնողները սելանիկցի Փարմասոն հրէաներն են: «Իթթիհատ եւ թերաքքին» կազմողները սելանիկցի Փարմասոն հրէաներն են: «Թալեաթ փաշան» սելանիկցի Փարմասոն դաւանափոխ հրէայ է: «Մուստաֆա Քեմալը» սելանիկցի Փարմասոն դաւանափոխ հրէայ է...

Այդ պատճառաւ կ'ըսենք, թէ քաղաքականութեան մէջ բախտը ոչ մէկ դեր ունի:

Ամէն բան սիոնիստական աշխարհակալութեան համար ծրագրուած էր առաջուց: Եւ ծրագիրը գործադրուեցաւ: Եւ այսօրուան Թուրքիան ստեղծուեցաւ...

... Բայց, 85 տարիներ յետոյ, այսօր այս մեծ եւ աւելի ալ մեծնալ ուզող Թուրքիան՝ սիոնիստական աշխարհակալութեան վնասակար ըլլալ սկսաւ:

Այդ պատճառաւ, հակառակ գործունէութիւն մը սկսաւ: Ֆարմասոն հրէաները Թուրքիան այս անգամ տկարացնելու պիտի աշխատին:



...Մինչեւ վերջին տարիները, միջազգային Փարմասոնու-  
թիւնը թուրքերուն կողմը «կը բռնէր» եւ Հայկական ցեղա-  
սպանութիւնը անգիտանալ կը ձեւացնէր...

... Բայց, վերջին շրջաններուն, կացութիւնը փոխուեցաւ:  
Վերջին լուրը հետեւեալն է.

«Ֆրանսայի Grand Orient-ի Փարմասոններուն «մեծ վար-  
պետը» (Grand Maitre) Jean-Michel Quillard-ը 24 Ապրիլ  
2008-ին, Փարիզի մէջ, ցեղասպանութեան յուշարձան որպէս  
ծանօթ եղող Կոմիտասի արձանին առջեւ, 1915թ. Հայկական  
ցեղասպանութեան զոհերուն յիշատակին ելոյթ մը պիտի  
ունենայ»:

Ասկէ առաջ ալ (Grand Maitre) Jean-Michel Quillard, թրքա-  
կան լրագրի մը յայտարարութիւն կը կատարէ եւ թուրքերէն  
կը պահանջէ, որ թուրքերը ճանչնան Հայկական ցեղասպա-  
նութիւնը:

... Այսօր, 24 Ապրիլ 2008:

Հայկական ցեղասպանութեան 93-րդ տարելիցին օրը,  
մեր խօսքը թուրքերուն կ'ուղղենք.—

Ո՛վ թուրքեր, ձեր շուրջը կազմուած օղակը օրէ օր աւելի  
պիտի սեղմուի: Եւ, ի վերջոյ, ձեզի պիտի ստիպեն, որ Հայկա-  
կան ցեղասպանութիւնը ընդունիք:

Եւ դուք, հայ ազգը ցեղասպանութեան ենթարկած ըլլա-  
լու յանցանքով, պիտի պատժուիք:

Թիւ 157

«Նայիրի», 13 Մայիս 2008, Թիւ 287

**ԿԸ «ՇՆՈՐՀԱԻՐԵՆԸ» ԶԵՉ ԹՈՒՐՔԵՐ՝  
ՆՈՐԷՆ ՏԱՐԻ ՍԸ ՇԱՀԵՑԱԸ:  
ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 93-ՐԴ ՏԱՐԻՆ ԱԼ  
ԱՆՅԱԲ ՈՒ ՓՆԱՅ...  
ԱՌԱՆՅ ՈՐ ՅԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐՔԵՐԸ ՊԱՏԺՈՒԻՆ**

Կրնա՞ք երեւակայել, Թուրքեր:

93 տարիներէ ի վեր, հակառակ ձեր գործած Հայկական ցեղասպանութեան, առանց որեւէ պատիժի ենթարկուելու, հանգիստ կ'ապրիք մինչեւ այսօր: Եւ ժամանակը ի նպաստ ձեզի կ'աշխատի:

Եւ ամէն տարի, Հայկական ցեղասպանութիւնը քիչ մ'աւելի մոռացութեան ենթարկուելով կ'անցնի ու կ'երթայ... Եւ պատմութեան փոշոտ էջերուն մէջ քիչ մը աւելի կը թաղուի...

1915-ին Թուրքերուն գործած ցեղային «մաքրագործումէն» ողջ մնացող հայերը՝ աշխարհի բոլոր կողմերը գաղթեցին:

Եւ այս ցիրուցան եղած հայերը, աշխարհի չորս անկիւններու մէջ, ամէն տարուան պէս այս տարի ալ, 24 Ապրիլը նշելու համար հաւաքուեցան:

Եւ եկեղեցիներուն մէջ արարողութիւններ կատարեցին, լացին ու ողբացին եւ աղաղակեցին, որ «Թուրքերը 1915-ին մէկուկէս միլիոն հայեր ջարդած են»:

Բայց ամէն տարի եղածին նման, այս տարի ալ իրենց կորսնցուցած հայրենիքին, Թուրքերուն կողմէ գողցուած Արեւմտեան Հայաստանին մասին բնաւ չարտայայտուեցան:

Այս խեղճ հայերը չեն գիտեր, որ ցեղասպանութեան ենթարկուածներուն տեղը թէեւ նոր սերունդներ կրնա՞ն հասնիլ, բայց կորսուած, գողցուած հայրենիքը ետ չի գար:

\* \* \*

24 Ապրիլ 2008-ին Ֆրանսայի մէջ Հայկական ցեղասպանութեան 93-րդ տարելիցին առթիւ տեղի ունեցած յուշատօներուն մասնակցեցան նաեւ ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդներու ներկայացուցիչներ ըլլալով հրէաներն եւ ռուանտացիները:

Իրապէս ալ ռուանտացիները ցեղասպանութեան ենթարկուեցան, բայց այսօր Ռուանտական պետութիւնը եղածին պէս կանգուն է, առանց սանթիմ մը հող կորսնցնելու:

Հրէաները Երկրորդ աշխարհամարտին, գերմանացիներու կողմէ ցեղասպանութեան ենթարկուեցան, բայց հայրենիք չկորսնցուցին: Հրէաները ընդհակառակը՝ գերմանացիներուն կողմէ ցեղասպանութեան ենթարկուելուն փոխան, հայրենիք մը չահեցան:

1948-ին պաղեստինեան ժողովուրդին հողերուն վրայ, Իսրայէլ մը ստեղծեցին:

\* \* \*

«Նայիրիի» 22 Ապրիլ 2008 թուակիրին մէջ գրած էինք թէ... «Ո՛վ թուրքեր, ձեր շուրջ կազմուած զսպանակէ օղակը օրէ օր աւելի պիտի սեղմուի: Եւ ի վերջոյ, ձեզի պիտի ստիպեն, որ Հայկական ցեղասպանութիւնը ընդունիք»:

Այս վտանգը շատ առաջուց կուահող Փաշիատ թուրքերը Հայկական ցեղասպանութեան ճանաչման արգելք ըլլալու համար աշխատիլ սկսան:

Անցեալ տարի Ամերիկա այցելած թրքական սպայակոյտի նախագահ՝ զօրավար Եաչար Պիւեիւքքանըթը, ԱՄՆ-ի թուրքերուն հետ ժողովներ գումարած եւ անոնցմէ պահանջած է, որ հայկական սփիւռքի դէմ պայքար սկսին:

Զօրավար Պիւեիւքքանըթին այս աշխատանքները, դեռ ա՛յն ատենները արդէն սկսած էր իր «արդիւնքը» տալ:

Թուրքիոյ եւ Սփիւռքի մէջ հայերուն դէմ կատարուած ահաբեկչութիւններուն պատասխանատուները «Հայոց դէմ պայքար» կազմակերպութեան գործակալներն էին:

«ERGENEKON» ահաբեկչական կազմակերպութիւնը՝ զօրավար Պիւեիւքքանըթին «հասցուցած պտուղներն» են:

Վերջին շրջաններուն, այս ահաբեկչական կազմակերպութիւնը իր գործունէութեան տարածքը այնքա՛ն ընդլայնեց, որ նոյնիսկ Փրանսահայերուն մօտ սարսափ ստեղծած է:

Այս ֆաշիստ թուրքերը՝ հայերէն ձայնասփռում կատարող ուստիոկայաններուն հեռաձայնով կ'սպառնան եւ կ'ըսեն. «Եթէ ցեղասպանութեան մասին խօսիք՝ ձեզ կ'սպաննենք»:

... Այս ֆաշիստ թրքական պետութեան հակահայ պայքարին վերջ տալու միակ միջոցը հետեւեալն է. կրկին ու կրկին կ'ըսենք.

«Թուրք պետութիւնը պէտք է խստիւ պատժուի Հայկական ցեղասպանութիւն գործած ըլլալու յանցանքով:

Եթէ թուրք պետութիւնը չպատժուի, այս վայրենաբարոյները պիտի շարունակեն նոր սպանութիւններ, նոր ջարդեր ու նոր ցեղասպանութիւններ գործել»:

Թիւ 158

«Նայիրի», 10 Յունիս 2008, Թիւ 288

**«ՄԱՐԴՈՒ ԵՐԵՍԸ՝ ՀՈԳԻՒՆ ՀԱՅԵԼԻՆ Է»**

**ԼԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ԱՍԱՅՈՒԱԾՔԻ**

**«ՄԱՐԴԱՄՊԱՆԻ ԵՐԵՍՈՎ ԹՈՒՐԷԵՐ»**

**ՓՈՂՈՅԸ ԵՌԷ ԹՈՒՐԷ ՄԸ ՏԵՍԵՆԷ, ԱՆՈՐ ԹՈՒՐԷ**

**ԸԼԼԱԸ ԱՆՄԻՅԱՊԵՍ ԿԸ ՀԱՍԿԵԱՆԷ:**

**ԻՆՉՊԷ՛Ս:**

**ՈՐՈՎԷՏԵՒ, ՄԱՐԴԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ՝**

**ԹՈՒՐԷԵՐՈՒՆ ԵՐԵՄԻՆ ՎՐԱՅ ԶԱՆՎԱԿՈՒԱԾ Է**

Ոճրագիտութեան հռչակաւոր մասնագէտ իտալացի Սեզարէ Լոմպրոզօյի համաձայն, «Մարդասպանները՝ մարդասպան կը ծնին»: Այսինքն՝ մարդասպաններուն մարդ սպան-

նելու ունակութիւնը՝ իրենց նախնիներուն արիւնին մէջ անցած «ժառանգութիւն» մըն է:

Եւ մարդասպաններուն երեսին վրայ մարդասպանութեան խորհրդանիշը քանդակուած է:

Լոմպրոզոյի՝ մարդասպաններու մասին կատարած այս ախտաճանաչումը, ամէնէն աւելի թուրք կոչուած անձերու մօտ կը նշմարուի:

Որովհետեւ դարերու ընթացքին, թալանը եւ մարդասպանութիւնը իրենց «արհեստ» ընելով, մինչեւ Վիէննայի դռներուն առջեւ յառաջացած վայրի վոհմակներուն շառաւիղը եղող թուրքերը՝ 1915-ին աշխարհի մէջ նմանը չտեսնուած զարհուրելի վայրագութեամբ, անպաշտպան հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին:

Ահա՛, թէ ինչու, թուրքերուն երեսին վրայ, դարերէ ի վեր եւ մինչեւ այսօր շարունակուող թրքական բարբարոսութեան խորհրդանիշը քանդակուած է:

\* \* \*

Մենք 1976թ., կրկին թուրքերուն ողջակէզը չըլլալու համար, նաե՛ւ այլեւ թուրքերուն վայրենի երեսը չտեսնելու համար, վերջնականապէս Պոլսէն հեռացանք եւ Ֆրանսա հաստատուեցանք...

Եւ քանի մը օր առաջ ալ, մեր դուստրերը տեսնելու համար ժրնեւ եկանք: Բայց այսօր [7 Յունիս 2008-ին], ժրնեւ եկած ըլլալնու համար զղջացինք:

Որովհետեւ ժրնեւ քաղաքը, 7 Յունիս 2008-ի գիշերը տեղի ունենայիք Փորթուկալ-Թուրքիա ֆութպոլի խաղը դիտելու համար, ժրնեւ եկած հազարաւոր թուրքերով լեցուած էր:

Եւ ժրնեւի կեդրոնական հրապարակը հաւաքուած եւ ձեռքերնուն մեծ եւ արիւնոտ թրքական դրօշակներ բռնած թուրքեր, կոկորդնին պատռելու աստիճան ուժգնութեամբ «Թուրքիա, Թուրքիա» կ'աղաղակէին:

Եւ մենք աչքերնուս չհաւատացինք:

Այս թուրքերը ֆուտպոլի խաղ դիտելու եկած էին արդեօք, թէ ոչ՝ ժրնեւ քաղաքը գրաւելու...

Մե՛նք, թրքական դրօշակներ կրող եւ «Թուրքիա», «Թուրքիա» աղաղակող այս «Գորշ գայլերու» վոհմակաները, Պոլսոյ մէջ, շատ լաւ ճանչցած էինք:

1945-ին Պոլսոյ մէջ Սոցիալիստ "TAN" թերթի տպարանը քանդողները նոյն՝ այս «Գորշ գայլերն» էին:

1955-ին, 6-7 Սեպտեմբերի գիշերը, քրիստոնեայ Պոլիսը քանդողները եւ յունական եկեղեցիները հրկիզողներն ալ այս «Գորշ գայլերու» վոհմականերն էին:

Եւ այսօր, ժրնեւի կեդրոնական հրապարակին վրայ, ձեռքերնուն թրքական մեծ դրօշակներ բռնած ու «Թուրքիա, Թուրքիա» աղաղակողները՝ նոյն «Գորշ գայլերու» շառաւիղներն են:

Եւ այս «Գորշ գայլերուն» երեսներուն վրայ, իրենց թալանող եւ մարդասպան պապերուն խորհրդանիշը քանդակուած էր:

Թիւ 159

«Նայիրի», 1 Յուլիս 2008, թիւ 289

**«ՎԻԷՆՆԱՆ ԻՆՎԱԻ»,  
«ԱՏՐԻԱՎԱՆԷՆ ՄԻՆՉԵԻ ԳԻՆԱՎԱՆ ՊԱՐԻՍՊՆԵՐԸ»,  
«ԽԱՂ ԶԷ, ՊԱՏԵՐԱԶՍ Է»**

Այս երեք վերնագիրներն ալ մեր գրութիւնները չեն:

«Վիէննան ինկաւ», «Ատրիականէն մինչեւ Զինական պարիսպները»- Պոլսոյ 2 թրքական թերթերուն առաջին էջերուն վերնագիրներն են:

Մինչդեռ «Խաղ չէ, պատերազմ է» գրութիւնը, Եւրոպայի մէջ քիւրտերու կողմէ թրքերէն լեզուով հրատարակուող «ÖZGÜR POLİTİKA» թերթին վերնագիրն է:

1.- Պոլսոյ մէջ հրատարակուող թերթ մը, իր առաջին էջին կէսին ծաւալով ու մեծատառ վերնագիր մը հրատարակեր է՝ «Վիէննան ինկա՛ւ»:

20 Յունիս 2008-ին, Վիէննայի մէջ խաղացուած եւ թուրքերուն «Penalty»-ներով շահած՝ Խրուաթիա-Թուրքիա ֆուտպոլի խաղը՝ ի՞նչ կապ ունի Վիէննայի անկումին հետ:

Բայց, մինչեւ այսօր, ցեղասպան «Իթթիհատ եւ թերաքքի»-ականներուն իշխանութեան ենթարկուած Թուրքիոյ մէջ, ամենափոքր առիթով, 1683-ին Վիէննան պաշարող-թալանող եւ ջարդարար օսմանեան մտայնութիւնը կը վերակենդանանայ, եւ այս պատճառաւ Վիէննայի մէջ տեղի ունեցած ֆուտպոլի խաղի յաղթանակը՝ Վիէննայի անկումին կը նմանցուի:

2.- Պոլսոյ մէջ հրատարակուող «ZAMAN» օրաթերթին առաջին էջի վերնագիրն է՝

«Ատրիականէն մինչեւ Չինական պարիսպները»:

Որովհետեւ Պոսնիաէն մինչեւ Ադրբեջան, օսմանեան շրջանին բռնութեամբ իսլամացած ժողովուրդները, քանի մը սերունդ յետոյ, քարոզչութիւններով թուրքէն աւելի թուրքի վերածուած էին:

Ահա, այս PSEUDO-թուրքերը Պոսնիաէն ու Սոֆիաէն մինչեւ Բաքու՝ Վիէննայի մէջ թրքական ֆուտպոլի խումբին Խրուաթիոյ խումբին դէմ տարած յաղթանակը ցնծութեամբ տօնեցին:

Բայց «ZAMAN» թերթին «Ատրիականէն մինչեւ Չինական պարիսպները» վերնագիր դնելը՝ ուրիշ նպատակաւ է:

Որովհետեւ 1993-ին Թուրքիոյ Հանրապետութեան նախագահ եղող Փարմասոն Սիլվեյման Տէմիրելը, Սովետական միութեան կործանումէն քաջալերուած եւ իթթիհատական մտայնութենէն ալ աւելի ծայրայեղ եղող Փաշիստ-թուրանական գաղափարականով, Ատրիականէն մինչեւ Չինական պարիսպները երկարող «Մեծն Թուրքիայի» երազներ տեսնել սկսած էր:

Ահա, «ZAMAN» թերթին այս տեսակ վերնագիր մը դնելուն նպատակը, Սիւլէյման Տէմիրելին «Մեծն Թուրքիա» մտայնութիւնը, Փաշիստ թուրքերուն ուղեղներուն մէջ [թրքական խումբին Վիէննայի մէջ տարած յաղթանակէն յետոյ] վերակենդանացնել էր:

3.- Եւրոպայի մէջ քիւրտերուն կողմէ թրքերէն լեզուով հրատարակուող «ÖZGÜR POLİTİKA» օրաթերթին մէջ մինչդեռ, շատ իրատես վերնագիր մը դրուած էր՝ «ԽԱՂ ԶԷ, ՊԱՏԵՐԱԶՄ Է»:

10 Յունիս 2008-ին, «Նայիրի» թերթին մէջ սապէս գրած էինք՝

«ԱՅՍ ԹՈՒՐԲԵՐԸ ՖՈՒՏՊՈԼԻ ԽԱՂ ԴԻՏԵԼՈՒ ԵԿԱԾ ԷԻՆ ԱՐԴԵՕՔ, ԹԷ՞ ժԸՆԵԻ ՔԱՂԱՔԸ ԳՐԱԻԵԼՈՒ...»:

«ÖZGÜR POLİTİKA» թերթին գրածին համաձայն թուրքերը՝ Վիէննայի մէջ ալ նոյն գոռոզ մտայնութեամբ ցոյցեր կատարեր են: Քաղաքին մեծամասնութեամբ թուրք բնակչութիւն ունեցող թաղերուն մէջ եղած ծայրայեղ արարքներուն պատճառաւ, ոստիկանութիւնը միջամտեր է, վիրաւորներ եղեր են: Եւ ոստիկանները 11 հոգի հսկողութեան տակ առեր են:

Բայց թուրքերը [մանաւանդ՝ իրենց խումբին յաղթանակէն յետոյ], հակառակ աղմկելը արգիլուած ըլլալուն, ինքնաշարժերով մինչեւ առաւօտ Վիէննայի փողոցներուն մէջ «Թուրքիա, Թուրքիա» աղաղակելով ցոյցեր կատարեր են...

... Եւ այս ցոյցերուն ընթացքին արձակուած եւ մեզ ամէնէն աւելի տպաւորած լողունգը հետեւեալն է՝

«Եւրոպա՛, Եւրոպա՛, լսէ մեր ձայնը, մենք եկած ենք»:

\* \* \*

Եւ մէնք ալ կ'ըսենք.

«Արթնցի՛ր, Եւրոպացի՛, արթնցի՛ր... Թուրքերը 1683-ին Վիէննան չկրցան գրաւել:



Բայց այսօր թուրքերը, Վիեննայի մէջ թրքական թաղամասեր ստեղծեր են:

Պերլինին կէսն ալ՝ թուրքերով լեցուած է:

Եւ վաղը... թուրքերը, ամբողջ Եւրոպան ձեռք պիտի անցրնեն»:

ԹԻԼ 160

«Նայիրի», 22 Յուլիս 2008, ԹԻԼ 290

**2002 ԹՈՒՄԿԱՆԷՆ Ի ՎԵՐ, ՄԱՐՄԱՐԱՅԻ ԻՄՐԱԸ ԿՂՉԻՆ ՄԷՑ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ ՆԱԽԿԻՆ ՔԿԿ-Ի ՂԵԿԱՎԱՐ ԱՊՏՈՒԼԼԱԶ ԷՕՃԱԼԱՆԸ, ԻՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՒՆ ՃԱՄԲՈՎ ԵՒՐՈՊԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՈՂ ՔՐՏԱԿԱՆ ԹԵՐԹԻՆ “ÖZGÜR POLİTİKA“ ՕՐԱԹԵՐԹԻՆ**

**ՇԱՏ ԿԱՐԵՒՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵՐ Է:**

**5 ՅՈՒԼԻՍ 2008Թ. “ÖZGÜR POLİTİKA“ ԹԵՐԹԻՆ ՄԷՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԱՊՏՈՒԼԼԱԶ ԷՕՃԱԼԱՆԻ ՍԱ ԽՕՍՔԵՐԸ, ԵՐԷԿՈՒԱՆ ԵՒ ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՈՒՐՔԻԱՆ ՃԱՆՉՆԱԼ ՈՒՉՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ ՇԱՏ ՕԳՏԱԿԱՐ ԱՂԲԻՐ ԿԸ ԿԱՉՄԵՆ**

2002 թուականին *KENYA*-ի մէջ ձերբակալուած Ապտուլ-լահ Էօճալանին համար, թուրքիոյ այն ատենուան վարչապետ *BÜLENT ECEVİT*-ը թերթերուն հետեւեալ յայտարարութիւնը կատարած էր՝

«Հայկական ԱՍԱԼԱ կազմակերպութիւնը մաքրագործող իսրայէլեան խումբերը, Էօճալանը ծուղակը ձգեցին եւ զայն թուրքերուն յանձնեցին»:

Թուրքերը Էօճալանը [իբր թէ] դատեցին եւ մահուան դատապարտեցին:

Բայց արեւմտեան պետութիւնները՝ Էօճալանին կախաղան հանուելուն արգելք եղան: Եւ Էօճալանի դէմ արձակուած մահաւճիռը ցկեանս բանտարկութեան վերածուեցաւ:

2002 թուականին ի վեր Իմրալի կղզիին մէջ բանտարկուած Էօճայանը՝ իր փաստաբաններուն ճամբով, թերթերուն երբեմն յայտարարութիւններ կ'ուղարկէր:

5 Յուլիս 2008 թուականին «ÖZGÜR POLİTİKA» թերթին մէջ հրատարակուած Ապտուլլահ Էօճայանին կատարած յայտնութիւնները՝ իրապէս ալ, շատ թուրքերու համար, անծանօթ իրականութիւններ են:

... Մեր այս գրութեան մէջ, Ապտուլլահ Էօճայանին կատարած յայտնութիւններուն ամէնէն կարեւորները տալու պիտի ջանանք:

«ERGENEKON [Ազգայնական] կազմակերպութեան եւ վարչապետ Թայիպ Էրտողանի կուսակցութեան՝ AKP-ի միջեւ անցած-դարձածները՝ գերիշխանութեան պատերազմ է: Արտասահմանէն կը ղեկավարուին: Ազգայնականները եւ AKP-ները նոյն ուժերուն կողմէ իրարու դէմ ընդհարումի կը մղուին: Այս ուժերը Մ. Նահանգները, Մ. Բրիտանիան եւ Իսրայէլն են»:

... «Հրէաներուն դերը շատ մեծ է հոս: Թուրքիան, իր կազմուած օրէն սկսեալ, հրէաներուն հակակշռին ենթարկուած է:

Միայն 1960թ. Ատնան Մենտերէսն էր, որ ջանաց Ռուսիոյ մօտենալ: Այդ պատճառով ալ զինք կախաղան հանեցին»:

«Մ. Նահանգները, Անգլիան եւ Իսրայէլը գիտեն, որ Թուրքիոյ հետ գործը այլեւս նոյն ձեւով պիտի չքայլէ: Այս պատճառով, Միջին Արեւելքի մէջ իրենց իշխանութիւնը տեւականացնելու համար, «Չափաւորական իսլամութեան» հետ համակարգութիւն մը ստեղծել ծրագրեր են:

Միջին Արեւելքի համար՝ այս համակարգումը անհրաժեշտ կը նկատեն:

Թուրքիոյ համար ալ նոր վիճակ մը, կերպարանք մը նախատեսեր են: Որովհետեւ Իսրայէլը կ'ուզէր, որ Թուրքիան միշտ ներքին բախումներու ենթակայ մնայ»:

«Իրաքէն, Իրանէն եւ Սուրիայէն յետոյ՝ հերթը Թուրքիոյ հասած ըլլալը կը մատնանշեմ:

Թուրքիան Պաղեստինի, Իրաքի եւ Լիբանանի նման կ'ըլլայ: Եթէ Թուրքիա Իրաքի եւ Լիբանանի վիճակին ենթարկուի, այս մէկը շատ վտանգաւոր հետեւանքներ կ'ստեղծէ:

Մնաց որ, այն ատեն հայերուն, "PONTUS"-ցիներուն եւ նաեւ ուրիշներուն վերաբերող շատ մը բաներուն հաշիւները Թուրքիայէն պիտի պահանջեն»:

ԱՊՏՈՒԼԼԱՅ ԷՅՃԱԼԱՆ

\* \* \*

Հիմա ալ մենք, ասկէ առաջ «Նայիրի» թերթին մէջ մեր գրածները կրկին նշենք.

«1923թ. Թուրքիան հրէաները ստեղծեցին:

Բայց այսօր, Թուրքիան շատ բազմացաւ եւ սիոնիստներուն համար վտանգաւոր ըլլալ սկսաւ:

Այդ պատճառաւ սիոնիստները, կայսերապաշտներուն մեծագոյն զէնքը եղող «Բաժանէ եւ իշխէ»-ի ռազմավարութիւնը Թուրքիոյ համար կիրարկել սկսան:

Նախ՝ Իրաքի հիւսիսը քրտական պետութիւն մը ստեղծեցին, որ յետագային Թուրքիոյ արեւելքը գտնուող քիւրտերուն հետ կարենան միութիւն ստեղծել:

Հիմա ալ կրօնամոլները եւ ազգայնականները իրարու հետ հակամարտելու կը մղեն, որ Թուրքիան գլուխ չկարենայ բարձրացնել, որպէսզի այս ձեւով սիոնիստները Թուրքիան, տեւաբար, հակակշռի տակ կարենան պահել:

Թիւ 161

«Նայիրի», 14 Օգոստոս 2008, Թիւ 291

### **ԹՈՒՐՔԻՈՅ ԿՐՕՆԱՄՈՒ ՎԱՐՉԱՊԵՏ ԹԱՅԻՊ ԷՐՏՈՂԱՆԻՆ ԲԱՃ ՆԱՄԱԿ.—**

### **ԴՈՒՆ, ՀԱՅԵՐԸ, ԱՅՆՔԱՆ ՏԽՍԱՐ ԵՒ ԿՈՅՐ ԿԸ ԿԱՐԾԵ՛Ս...**

Վերջին օրերուն շտապով Մոսկուա գացած էիր՝ վրաստանը զինելով Օսեթիայի ողբերգութեան առաջին պատասխանատուն Թուրքիան ըլլալուն՝ ուսերուն հակազդեցութենէն վախացար, եւ Մետվետելը հանդարտեցնելու համար Մոսկուա գացիր:

... Եւ վերադառնալէ յետոյ, 15 Օգոստոս 2008-ին Պոտրումի մէջ, մամլոյ հաւաքոյթի մը ընթացքին, թրքական նոր ծրագիր մը առաջարկեցիր:

Աւելի ճիշդ՝ ծրագիր չէ, այլ նոր թրքական ծուղակ մը՝ [իբր թէ] խաղաղութեան մէջ ապրելու համար, Թուրքիոյ հետ դիւանագիտական կապեր չունեցող Հայաստանը վրացիներէն, ազերիներէն եւ թուրքերէն կազմուած միութեան մը մէջ առնել առաջարկեցիր:

Դուն, հայերը, այնքան տխմար եւ կոյր կը կարծե՞ս:

1918-ին հայերը Ռուսիայէն անջատելու համար «Ազատ, Անկախ» Հայաստան մը ստեղծեցիք:

Եւ 1920-ին ալ, այս առիթէն օգտուելով, Քազիմ Քարապեքիր փաշա կոչուած դահիճը, ուսերէն բաժնուելով մինակ մնացած հայերուն վերջին հայրենի հողը եղող Հայաստանի վրայ յարձակեցաւ:

Եւ հայեր՝ 1915-ին եղածին նման, Ք. Քարապեքիրի աւազակներուն կողմէ, բոլորն ալ, սուրէ պիտի անցուէին:

Փա՛ռք Աստուծոյ, որ սովետական բանակը հայերուն օգնութեան հասավ:

Եւ թուրք ցեղասպանները ստիպուեցան նահանջել...

«Պատմութիւնը՝ կրկնութիւն է»՝ կ'ըսեն:

Թայի՛ւ պ էրտողան, 1918-ի թրքական ծուղակը այսօր կրկին հայերուն «կլեցնե՞լ» կ'ուզես:

Բնական է՝ վերջին շրջաններուն Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանէն՝ Ապտուլլա Կիլը հայ-թուրք ֆուտպոլի խաղերը դիտելու համար Հայաստան հրաւիրելէն եւ թուրքերուն հետ առանց նախապայմանի բանակցելու առաջարկէն օգտուեցար՝ հայերուն նոր թրքական ծրագիրը ներկայացնելու համար:

Այսօրուան Հայաստանի վարիչները իբր դրացի երկիր թուրքերուն հետ խաղաղութեան մթնոլորտի մէջ ապրելու համար՝ ձեզի այս առաջարկները կ'ընեն:

Բայց հայերը ո՛չ մէկ ատեն, ուսերէն անջատուելով, վրացիներէն, ազերիներէն եւ թուրքերէն կազմուած միութեան մը մէջ կը մտնեն:

Հայերը շատ լաւ գիտեն թէ՛

«Հօտէն բաժնուող ոչխարը՝ գայլերուն «ձեռքը կ'իյնայ»»:

1920-ի Քազիմ Քարապեքիրի պատճառած ողբերգութիւնը հայերը երբեք չեն կրնար մոռնալ:

Եւ դեռ երէկ, 16 Օգոստոս 2008-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը Վրաստանի տազնապի առնչութեամբ Հայաստանի կեցուածքը շատ յստակօրէն բացայայտեց՝

«Ռուսիան մեր ռազմագիտական դաշնակիցն է», — ըսաւ:

... Եւ հայերը՝ թշնամիներէն շրջապատուած, այս շատ վտանգաւոր կացութենէն փրկուելու համար, իբր Հայաստանի պետութիւն՝ ժամ առաջ Ռուսական Դաշնութեանը հետ միանալու ստիպուած են:

Թիւ 162

«Նայիրի», 9 Սեպտեմբեր 2008, Թիւ 292

**ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՊՏՈՒԼԼԱՀ  
ԿԻԼ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ:  
ՂԱՐԵՐԷ Ի ՎԵՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
ՉՈՂԸ ԵՂԱՍՏ ՀԱՅ ԱՉԳԻՆ ՄԷՎ ԱՆՂԱՍԵ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ  
ԿԱՐՕՏԸ ՈՒՆԵՅՈՂ ՀԱՅ ՄԸ ԸԼԼԱԼՈՎ` ԹՈՒՐՔԻՈՅ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՊՏՈՒԼԼԱՀ ԿԻԼԻ  
ԵՐԵՒԱՆ ԿԱՏԱՐԱՍՏ ԱՅՍ  
«ԲԱՐԵՎԱՍՏԱԿԱՆ» ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆԸ**

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանին՝ դրացի երկիր եղող Թուրքիոյ հետ համերաչիս պայմաններու մէջ ապրելու հեռանկարով Ապտուլլահ Կիլը Հայաստան-Թուրքիա ֆուտպոլի խաղը դիտելու համար Երեւան հրաւիրելը, հեռատես որոշում մըն է:

Բայց ինք միայն, այսօրուան փոքր Հայաստանին նախագահն է:

Բո՛ւն Հայաստանին քսան առ հարիւրին նախագահը:

Մինչեւ 1915 թուականը, աշխարհագրութեան բոլոր քարտէսներուն վրայ, Հայաստան ըլլալով ցոյց տրուած հողերուն ութսուն առ հարիւրը այսօր, թուրքերուն կողմէ, գրաւուած է:

Թուրքերը այս հողերուն «Արեւելեան Անատոլու» կ'ըսեն:

Քիւրտերը, 1915-ի Հայկական ցեղասպանութեամբ ամալացած հայապատկան հողերը ուր կը բնակին իրենք այսօր, «Քիւրտիստան» կը կոչեն:

Հայերն ալ, պատմութեան ծանօթ թուականներէն մինչեւ 1915թ., հայերուն հայրենիքը եղող տարածքին «Արեւմտեան Հայաստան» կ'ըսեն:

Հայաստանի տարածքին միայն քսան առ հարիւրին նախագահը եղող Սերժ Սարգսեանին թուրքերուն հետ խաղա-

ղութեան մէջ ապրելու համար անոնց բարեկամական վերաբերում ցուցնելուն նպատակը, շատ լաւ կը հասկնանք:

Բայց այս վերաբերումը, 1915թ. ցեղասպանութեան ենթարկուելով աշխարհի բոլոր կողմերը տարածուած հայերուն շառաւիղները եղող ներկայ Սփիւռքի հայութեան ազգային հարցերէն ոչ մէկը կրնայ կարգադրել:

Ո՛չ «1915-ի ցեղասպանութիւնին», ո՛չ ալ «Գողցուած հայրենիքին հարստութիւններուն» հարցերը Սերժ Սարգսեանին «Բարեկամական վերաբերումներով» կրնան կարգադրուիլ: Ընդհակառակը...

Մենք, հայրենագրկուած սփիւռքահայ մը ըլլալով մտահոգ ենք, որ թուրքերուն հետ այս «Նոր բարեկամական վերաբերումներու» ընթացքին՝ 1915-ի ցեղասպանութիւնը եւ Արեւմտեան Հայաստանը կրնան սակարկութեան հարց ըլլալ:

Այսօրուան Հայաստանը, ազերիներուն հետ, Ղարաբաղի հարցը ունի, որ, գրեթէ քսան տարիներէ ի վեր, կը շարունակուի առանց լուծումի յանգելու:

Թուրքերն ալ, հայերուն հետ, 1915-ի ցեղասպանութեան եւ Արեւմտեան Հայաստանի հարցերը ունին, որոնք, 93 տարիներէ ի վեր, կ'արիւնին:

Այսօրուան Հայաստանի նախագահը ղարաբաղցի հայ մըն է: Այսինքն՝ 1915-ի ցեղասպանութեան ենթարկուած հայերուն մէկ շառաւիղը չէ: Եւ ան, Սփիւռքի հայութեան հարցերը չէ ապրած: Այսինքն՝ Սփիւռքի հայերուն ցաւերը «իր մորթին վրայ չէ զգացած»: Մեր վախը հետեւեալն է.

Ապտուլլահ Կիլը, Ղարաբաղի հարցի լուծման համար, ազերիները կրնայ համոզել...

Եւ ասոր փոխադարձ՝ հայերն ալ 1915-ի ցեղասպանութիւնը եւ Արեւմտեան Հայաստանի կորուստը կրնան մոռնալ...

\* \* \*

1915թ. մինչեւ այսօր, Սփիւռքի հայութիւնը միացեալ Սփիւռքի ներկայացուցչական կառավարութիւն մը չկրցան կազմել:

Այս պատճառաւ աշխարհի պատմութեան մէջ նմանը չունեցող եւ զարհուրելի՝ 1915-ի ցեղասպանութիւնը կատարած թուրքերը, մինչեւ այսօր, չպատժուեցա՛ն:

Սփիւռքի մէջ միացեալ հայկական ներկայացուցչական կառավարութեան մը կազմուելուն արգելք եղող, սիոնիստներուն հնազանդ, իբր թէ ազգայնականի համբաւ ունեցող Սփիւռքի հայ որոշ կուսակցական ղեկավարներուն... Անվերջ անէ՛ծք:

Թիւ 163

«Նայիրի», 7 Հոկտեմբեր 2008, Թիւ 293

**ԺԱՌԱՆՔԻ ԿՈՒԻ -  
ԹՈՒՐԶ - ԵՐՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՅՍԸ  
ԹԻ - 2**

**4 մարտ 2008 թուակիր «Նայիրի» թերթին մեր գրութեան մէջ,  
"THIS IS THE BEGINNING"**

Դեռ այս՝ սկզբնաւորութիւնն է:

«Տակաւին ինչե՛ր պիտի ըլլան, ինչե՛ր եւ ինչե՛ր», — ըսած էինք:

Այսօր ձեզի, այդ «Ինչե՛ր եւ ինչե՛րէն» լո՛կ նմոյշ մը կը ներկայացնենք:

Թրքական պաշտօնական շրջանակները կը տեղեկացնեն, թէ P.K.K.-ական «ահաբեկիչները» Ուրբաթ, 3 Հոկտեմբեր 2008-ի ցերեկէն յետոյ, HAKKARİ-ի Շեմտինլի գաւառակի AKTÜTÜN-ի սահմանային գումարտակին վրայ յարձակում գործեցին եւ 15 թուրք զինուորներ սպաննեցին եւ 21 ուրիշներ ալ վիրաւորուեցան:

P.K.K.-ականները 2 թուրք զինուորներ գերի առին: Թուրք զինուորական հրամանատարութեան տեղեկացուցածին համե-



մատ, յարձակումին 350 P.K.K.-ական ահարեկիչներ մասնակցած են:

P.K.K.-ականները այս յարձակումին ընթացքին, հակաօդային թնդանօթներ, գնդացիրներ, հրասանդ թնդանօթներ գործածած են... Թուրքերուն ըսածին համեմատ՝ այս պատերազմին 23 P.K.K.-ական «ահարեկիչներ» սպաննուած են:

\* \* \*

Բնական է՝ քրտական այս յարձակումը՝ թրքական բանակին 22 Փետրուար 2008 թուականէն սկսեալ իրաքեան Բիւրտիստանի վրայ կատարած վայրագ ներխուժումին եւ օդանաւային ուժակոծումներուն փոխադարձութիւնն էր: Եւ թուրքերուն կողմէ այս յարձակումներուն ընթացքին սպաննուած քիւրտերուն վրէժը առնելու նպատակաւ կատարուեցաւ...

Հիմա ալ թուրքերը, այս նորագոյն քրտական յարձակման միջոցին սպաննուած թուրք զինուորներուն վրէժը առնելու համար, իրաքեան Բիւրտիստանի վրայ կրկին յարձակում պիտի գործեն:

Եւ յետոյ՝ նոյն վրիժառու փոխադարձութիւնները քիւրտերը պիտի կատարեն թուրքերուն դէմ:

Եւ այս վիճակը, այս ձեւով, պիտի երկար շարունակէ...

Եւ յետոյ՝ ինչեր պիտի ըլլան: Ինչեր եւ ինչեր...

Սպաննեցէք իրար... Դուք՝ հայ ազգին ցեղասպանները եղող թուրքեր եւ քիւրտեր:

Մինչեւ վերջ սպաննեցէք իրար... Մինչեւ որ մէջտեղէն վերանաք:

Դուք, թուրքեր՝, քիւրտերուն հետ միասնաբար ու դարերէ ի վեր եւ մինչեւ 1915թ. հայ ազգին հայրենիքը եղող Անաթոլիոյ մէջ, մէկ հայ ողջ չձգելու պայմանաւ, տեղւոյն բոլոր հայերը սպաննեցիք:

Եւ այսօր, այս հայկական դժբախտ հայրենիքին արիւնաթաթախ ժառանգորդները ըլլալ յաւակնելով, հայկական հայրենիքին վերջնական տէրը ըլլալու համար ժառանգի կռիւ կ'ընէք եւ իրար կ'սպաննէք... ... Եւ մենք՝ հայերս, այս վիճակին՝

«ԵՐԿՆԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԶԵԶԻ ՏՈՒԱԾ ՊԱՏԻԺՆ Է»  
կ'ըսենք:

Թիւ 164

«Նայիրի», 11 Նոյեմբեր 2008, Թիւ 294

## **ԹՈՒՐԷ - ՔՐՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ**

### **ԹԻ - 3**

**1915Թ. ԹՈՒՐԷՐՈՒ ԿՈՂՄԷ ԳՈՐԾՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԵՒՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԲՆԱԶՆՁՄԱՆ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ...**

**1923Թ. ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԹՈՒՐԷՐՈՒ ԵՒ  
ՔԻԻՐՏԵՐՈՒ ՄԻՋԵՒ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՌԱՆԳԸ» ԲԱԺՆԵԼՈՒ ԿՈՒԻՆԵ-  
ՐԸ: ՄՊԱՆՆԵՅԷՔ ԻՐԱՐ, ԳՈՒՔ` ՀԱՅ ԱԶԳԻ ՅԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐ-  
ՔԵՐ ԵՒ ՔԻԻՐՏԵՐ... ՄԻՆՉԵՒ ՈՐ ՄԷՋՏԵՂԵՆ ՎԵՐԱՆԱՔ... ԻՐԱՐ  
ՄՊԱՆՆԵՅԷՔ...**

**ՏԱԿԱԻՆ ԻՆՉԵ՛Ր ՊԻՏԻ ԸԼԼԱՆ. ԻՆՉԵ՛Ր ԵՒ ԻՆՉԵ՛Ր...**

**1 ՆՈՅՆԵՄԲԵՐ 2008-ԻՆ, ՎԱՆԻ ԵՒ ՀԱՔՔԱՐԻԻ ՄԷՋ, ՎԱՐՉԱՊԵՏ  
ԷՐՏՈՂԱՆԻ ԴԵՍ ՅՈՅՅԵՐ ԿԱՏԱՐՈՒԵՅԱՆ:**

**ՎԱՆԸ, ՀԱՔՔԱՐԻՆ ԵՒ ԱՄԲՈՂՋ ԱՐԵՒՍՏԵԱՆ**

**ԱՆԱԹՈՒԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ ԴԱՇՏԻ ՎԵՐԱԾՈՒԵՅԱՆ**

Այստեղ կը հրատարակենք Պոլսոյ "TARAF" Թերթով 2  
նոյեմբեր 2008-ին լոյս տեսած ու Վանի մէջ էրտողանի դէմ  
կատարուած ցոյցերուն վերաբերող նկարները:

**ՊՈԼՍՈՅ "TARAF" ԹԵՐԹԸ- 2. 11. 2008 ԹՈՒԱԿԻՐ.- ՎԱՆԻ  
ՄԷՋ, ՄԻՋԱԴԷՊԵՐՈՎ ԴԻՄԱԽՈՐՈՒՄ**

1 Նոյեմբեր 2008թ., Վան գացող էրտողան, ընտրական  
ճառեր արտասանել կ'ուզէ հոն: Բայց Վանի մէջ ցուցարար-  
ներու կողմէ, յարձակման կ'ենթարկուի, եւ հազիւ, սպաննո-  
ւելէ փրկուելով՝ ապահովութեան ուժերուն օգնութեամբ,  
կառավարական շէնք մը կ'ապաստանի:

\* \* \*

Աւելի ետք ալ էրտողան, դարձեալ ապահովութեան մեծա-  
թիւ ուժերուն խիստ հսկողութեան ներքեւ, ելոյթ մը կ'ունենայ:

Բայց էրտողանը ունկնդրողները միայն ցեղապաշտ թուր-  
քեր, պետութեան պաշտօնեաներ եւ բանակի սպաներ կ'ըլլան:

Այսինքն՝ էրտողան ժողովուրդէն հեռու՝ ինքզինքին  
համար խօսեր է...

Կեցցե՛ք... Հո՛ւ, Վան է...

Եւ [իբր թէ] Թուրքիա է...

Վարչապետին Վանի մէջ ունեցած ելոյթը բաւական  
նորութիւններ ունի...

Ծանօթ է, որ [իբր թէ] Թուրքիոյ մէջ, մինչեւ այսօր, միայն  
«Թուրքեր» կային:

Մուստաֆա Քեմալ «Խնչ երջանիկ է այն, որ թուրք եմ  
կ'ըսէ» քարոզած էր:

«Հիւրիչէթ» թերթի առաջին էջին անուանագրին վրայ  
մինչեւ այսօր, հետեւեալ խօսքերը գրուած են.

«ԹՈՒՐՔԻԱՆ՝ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ Է»:

Այսինքն՝ Թուրքիոյ մէջ, ամէն բան, թրքական է:

...Քիւրտ ըսուած բան մը գոյութիւն չունի:

«ԱՍՈՆՔ՝ ԼԵՌՆԱԿԱՆ ԹՈՒՐՔԵՐ ԵՆ»:

Էրտողան Վանի մէջ, այս ձաբոտութիւնները մոռցեր է... Եւ  
բոլորովին ուրիշ բաներ կ'ըսէ.

Ահաւասիկ, էրտողանին Վանի շրջանի մէջ ըսածները.  
«Թուրքով, քիւրտով, լազով, չէրքէզով, պոչնաքով, արնաւու-  
թով... բոլոր մեր մարդիկը եղբայր են, սրտակից են»:

Շատ ապրիս էրտողան... որ «նոր օսմանցիականու-  
թիւնը» կը կենդանացնես...

«էրտողան... ե՛տ դարձիր... մա՛րչ... մա՛րչ»:

Բայց էրտողանը միայն կէս օսմանցիականութեան մտայ-  
նութիւնը կը վերականգնէ:

Ինչո՞ւ «ԿԷՍ ՕՍՄԱՆՑԻ»:

Որովհետեւ 1908թ. Թալեաթ, Էնվեր ու Ճեմալ կոչուած  
երրորդութեան առաջնորդութեամբ իթթիհատական կու-

սակցութեան բերած [իրը թէ] ազատութեան (Hürriyet) շրջանին, «նոր օսմանցիականութեան» գաղափարը մէջտեղ հանուած էր:

Այսինքն՝ իսլամ ըլլայ թէ՞ քրիստոնեայ՝ օսմանեան պետութեան մէջ ապրող բոլոր մարդիկ «օսմանցի» էին:

Եւ մինչեւ 1915 թուականը, օսմանեան պետութեան մէջ ժողովուրդին կէսէն աւելին «քրիստոնեայ օսմանցի» էր:

Բայց 1923թ. կազմուած եւ Թուրքիա կոչուող շինծու պետութեան մէջ, մինչ այդ յիսուն առ հարիւրէ աւելին եղող քրիստոնեայ օսմանցիներէն ոչ մէկը մնացած էր:

Ի՞նչ եղան այս քրիստոնեայ օսմանցիները:

Որովհետեւ 1915թ. մինչեւ 1923 թուականը, իսլամ օսմանցիները քրիստոնեայ օսմանցիներուն ցեղասպանութեան ենթարկեցին:

Եւ 1923թ. Թուրքիա ըսուած այս դրածոյ ու աճապարար պետութեան մէջ, միայն օսմանցիներուն կէսը մնացին:

Այսինքն՝ միայն իսլամ օսմանցիները:

Ահա, 1 Նոյեմբեր 2008թ., վարչապետ էրտողանի այցելութեան շարժառիթով, Վանը պատերազմի դաշտի վերածած ցոյցերուն բուն պատճառը...

Իսլամ օսմանցիներուն միջեւ օրերս մղուողը եւ ցեղասպանութեան ենթարկուած քրիստոնեայ օսմանցիներուն ժառանգը բաժնելու պատերազմն է:

Թիւ 165

«Նայիրի», 1 Յունուար 2009, Բացառիկ

**ՎԵՐՁԻՆ ԱՏԵՆՆԵՐՈՒՆ AHMET INSEL-Ի, BASKIN ORAN-Ի ԵՒ  
ALİ BAYRAMOĞLU-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԳ ՍԸ  
ԹՈՒՐԶ ՄՏԱԽՈՐԱԿԱՆՆԵՐ «ՀԱՅԵՐԷՆ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ  
ԽՆԴՐԵԼՈՒ» ԱՐԸԱԻ ՍԸ ՁԵՆՆԱՐԿԵՐ ԵՆ**

Մեր համոզումով՝ այսօրուան [իբր ԹԷ] թուրքիոյ մէջ, այս տեսակ արչաւանքի մը սկսիլը շատ յառաջադէմ քայլ մըն է:

Այս շատ մարդասիրական շարժումին նախաձեռնողները եւ նաեւ ներողութիւն խնդրելու արչաւը ստորագրողները ամբողջ սրտով կը շնորհաւորենք ...

Մինչեւ այսօր տասներմէկ հազար հոգի այս ներողութիւն խնդրելու արչաւը ստորագրեր են:

Տասներմէկ հազար ստորագրութիւն՝ եօթանասուն միլիոն հոգի հաշուող [իբր ԹԷ] թուրքիոյ համար, շատ փոքր թիւ մըն է... Բայց մտածեցէք, որ մինչեւ երէկ, Հայկական հարցին մասին խօսիլն անգամ յանցանք էր...

Այսօրուան պէս կը յիշենք... 1973թ. Lou Անճելըսի մէջ 2 թուրք դիւանագէտներ ահաբեկող ալեւոր Եանրկեանի դէպքին պատճառաւ, Պոլսոյ հայերուն երեւելի անձնաւորութիւններ հեռատեսիլէն խօսեցնել տուին:

Հեռատեսիլէն ելոյթ ունեցող հայերը, թուրքէ աւելի թուրք ըլլալնին ապացուցանելու համար, իրարու հետ կը մրցէին:

Այս հայերէն լո՛կ Պոլսոյ Եսայեան աղջկանց լիսէի տնօրէնուհի Հերմինէ Գալուստեանը, միւս հայերուն նման խօսելէ յետոյ, միայն մէկ նախադասութիւն աւելցուց. «1915-ի դէպքերը մոռնալու ենք» ըսաւ:

Գալուստեանին՝ 1915 տարին նշելն անգամ յանցանք նկատուեցաւ եւ որոշ շատ չնչին պատճառաբանութեամբ մը Հերմինէ Գալուստեանը Եսայեան վարժարանի տնօրէնութենէն հեռացուեցաւ...

Այդ տարիներուն թուրք նոր սերունդներուն «Հայկական հարցին» մասին սորվեցուցածնին՝ «Հայերը մեզ ջարդեցին»-ի ձարուտուքն էր:

Քանի մը սերունդ տեւողութեամբ թուրք երիտասարդները թրքական այս «մասալներով» մեծցան... Մինչդեռ այսօր՝ կացութիւնը շատ տարբեր է: Այսօր այլեւ 1915թ. Հայկական ողբերգութեան մասին բացէ ի բաց սկսած է խօսուիլ: Թուրք գրողներ անգամ, 1915թ. հայոց ենթարկուած զարհուրելի «Թրաժետիան» նկարագրող գիրքեր կը հրատարակեն:

Պոլսոյ գրախանութներուն մէջ, Հայկական ցեղասպանութիւնը ամենավաւերական փաստաթուղթերով ներկայացնող՝ փրոֆ. Վահագն Տատրեանի, փրոֆ. Թանէր Աքչամի, Ռակիբ Զարաքօլուի եւ ասոնց նման պատմագէտներու գիրքերը ազատօրէն կը վաճառուին... :

Միայն բան մը մեր ուշադրութիւնը գրաւեց. ներողութիւն խնդրելու արչաւի մարզի մէջ՝ 1915թ. հայոց պատճառուածին մասին «Մեծ Աղէտ» ըսուած է: «Ցեղասպանութիւն» բառը չէ գործածուած:

Մենք ասիկա շատ բնական կը նկատենք: Քանի որ, թրքական պետութիւնը դե՛ռ մինչեւ այսօր, Հայկական Մեծ ցեղասպանութիւնը կ'ուրանայ:

Ներողութիւն խնդրելու այդ յանդուզն արչաւանքին ձեռնարկողները շատ ուշադիր գտնուած են:

Յարձակումներու նշաւակ չըլլալու եւ առաջին օրէն շարժումը ձախողութեան չենթարկելու համար, «ցեղասպանութիւն» բառը չեն գործածած...

Բայց ժամանակով շատ բան պիտի փոխուի... եւ թուրքերը հայոց արժէքը պիտի հասկնան...

Հայերը ատեն մը, օսմանցիներուն համար, «Հաւատարիմ ազգ հայոց» էին:

Հայերը այս հաւատարմութիւնը այնքա՛ն առաջ տարին որ, Զօհրապի նման գրողներ, Դաշնակցութիւն կուսակցութեան նախագահ Ակնունիի նման ղեկավարներ, 1908թ. թուրքերուն հետ եղբայրութիւն հռչակեցին...

Եւ իրենց ձեռքերովը հայոց հայրենիքը [Թուրքերուն նուիրեցին:

... Եւ անշուշտ օր պիտի գայ, որ [Թուրքերը, այսօրուան [իրր [ԹԷ] Թուրքիոյ իսկական հիմնադիրները ըլլալով՝ Զօհրապի եւ Ակնունիի նման հայ ղեկավարներուն արձանները պիտի կանգնեն...

Խեղճ, անմիտ եւ պինդգլուխ հայեր:

Թիւ 166

«Նայիրի», 27 Յունուար 2009, Թիւ 295

### ԹԱՆԱԹ ՓԱՆԱՅԻ ԱՆՅԱՅՏ ԶԵՌԱՏԵՏՐԵՐԸ

Murat Bardakçı-ն Թալեաթ փաշային Հայկական ցեղասպանութիւնը իրագործած օրերուն անձնապէս կազմած նօթագրութիւնները, ասկէ առաջ «Milliyet» թերթին մէջ հրատարակած էր:

Սա վերջին օրերուն Մուրատ Պարտագճին, Թալեաթ փաշային Հայկական ցեղասպանութեան վերաբերեալ այդ նօթագրութիւնները, այս անգամ ալ իրր գիրք հրատարակեց:

Թալեաթ փաշան հաշուակալի մը նման, 1915-ին Անաթոլիոյ եւ Թրակիոյ քաղաք եւ գիւղաքաղաքներուն մէջ որքան հայեր ապրած ըլլալը եւ այդ քաղաք-գիւղաքաղաքներէն դէպի Սուրիոյ անապատները [այսինքն՝ դէպի մահ] որքան հայեր արքսորած ըլլալը արձանագրեր է:

Մուրատ Պարտագճին ալ Թալեաթ փաշային այս բոլոր թուանշանները համադրեր եւ առանձին գիրքի մը մէջ հրատարակեր է:

Մ. Պարտագճին հրատարակած գիրքին մէջ Թալեաթ փաշային հաշիւներուն համաձայն, դէպի Սուրիոյ անապատները արքսորուած հայերուն թիւը՝ 974 հազար 246 է:

\* \* \*

Այսօր, մեր նպատակը, այս թուանշաններուն ճշգրտութեան մասին արտայայտուիլ չէ:

Մեր մատնանշել ուզած իրականութիւնը հետեւեալն է՝  
Թալեաթ փաշային անձամբ գրածներուն համեմատ, հազարաւոր տարիներէ ի վեր Անաթոլիոյ եւ Թրակիոյ մէջ ապրող հայերը, 1915-ին, բոլորն ալ, աքսորուել են:

Այսինքն՝ հայ ազգը զանգուածային մաքրագործումի ենթարկուել է: Իսկ ուրիշ խօսքով՝ հայ ազգը արմատախիլ եղել է:

\* \* \*

Մ. Պարտազճիի հրատարակած գիրքին մէջ եւ Թալեաթ փաշայի հայերու տեղահանութեան վերաբերող նօթագրութիւնները, մինչեւ այսօր Հայկական ցեղասպանութիւնը ուրացող թրքական պետութեան, Թալեաթ փաշային աշակերտները եղող, Հրանդ Տինքը սպաննող «էրկէնէքոնականներուն» եւ ինքզինքնին ազգայնական համարող ռազմասէր թուրքերուն հասցուած շատ ծանր հարուած մըն է:

Թիւ 167

«Նայիրի», 27 Փետրուար 2009, Թիւ 296

**«ՈՒՉԵՍ ՀԱԻՍՏԱՅ-ՈՒՉԵՍ ՄԻ ՀԱԻՍԱՐ»,**

**«ՍՏԱԽՕ՝Ս ԱՇԽԱՐՀ»,**

**«ԳԱԼՈՎ ՍՊԱՆՆԵԼՈՒ ՀԱՐՅԻՆ՝ ԴՈՒՔ ՆԱ՝Տ ԼԱԻ ՊԻՏԵՔ»**

Վերի նախադասութիւնը՝ հին ու նոր շրջաններու պատմութեան ընթացքին եւ երէկ ու այսօր մարդասպանութեան մարզին մէջ աշխարհի ախոյեանը եղող թուրքերուն համար չէ ըսուած:



Ընդհակառակը՝ Թուրքիոյ վարչապետ Թայյիպ Էրտողանի 29 Յունուար 2009-ին, DAVOS-ի մէջ [Զուիցերիա] Իսրայէլի նախագահ Շիմոն Փերեսի դէմ ըսուեցաւ:

Ի՞նչ եղաւ իրենց ամբողջ ունեցածին, նոյնիսկ այսօրուան Թուրքիոյ հիմնադրութեան համար հրէաներուն շնորհապարտ եղող թուրքերուն փոխադարձութիւնը:

Ինչո՞ւ անոնք հրէաներուն հետ մէկէն թշնամացան:

Ծանօթ ասացուածք է՝ «Քաղաքականութեան մէջ մշտնջենական բարեկամութիւններ չկան, միայն շարունակական շահեր կան»:

Թուրքերու մօտ սա վերջին շրջաններուն տեսնուած հակաիսրայէլական կեցուածքը՝ այս անկիւնէն պէտք է դիտել:

Քանի մը տարիներէ ի վեր, Թուրքիոյ եւ Իսրայէլի միջեւ եղած [պատճառը պաշտօնապէս չբացատրուած] լարուածութիւնը, ամէն առիթով, մէջտեղ կ'ելլէ:

Եւ վերջին շրջաններուն Թուրքիան, պաշտօնապէս ՀԱՄԱՍ-ին սկսաւ ուժ տալ:

Եւ շրջափակման ենթարկուած ՀԱՄԱՍ-ին բեռնատար ինքնաշարժերով օգնութիւն ուղարկեց:

Եւ Թուրքիոյ վարչապետ Թայյիպ Էրտողան, միջոց մ'առաջ, անձնապէս Կազազնաց տեղւոյն կացութիւնը տեսնելու եւ, հոնկէ վերադարձին, կազազիներու զարհուրելի վիճակը նկարագրող յայտարարութիւններ կատարեց:

Եւ 29 Յունուար 2009-ին ալ Տաւոսի մէջ տնտեսական հարցերու համար հաւաքուած Forum-ին առջեւ, Կազայի հարցը մէջտեղ նետեց, եւ մանաւանդ՝ պաղեստինցիները եւ ասոնց համակիրները շատ ուրախացնող իրապաշտ ելոյթ մը ունեցաւ:

Մենք այստեղ, պիտի ջանանք տալ, այս ելոյթին ամէնէն կարելոր մասերը.—

«Կազան գրեթէ բացօդեայ արգելանոց մըն է»:

«Olmert-ին հարցուցի.— «ՀԱՄԱՍ-ին նետած «Փիւզէներուն» պատճառաւ մահացողներ եղա՞ն»։ Olmert պատասխանեց.— «Մահացող չկայ»։ Աւելի ետք կազազիներուն վրայ

ուումբերու իյնալը տեսանք: Ինչ եղաւ արդիւնքը՝ 1200 անմեղներ մահացան»:

«Իսրայէլի ձեռքը եղող զէնքի ուժին, ներառեալ զանգուածային բնաջնջման զէնքերուն պզտիկ մէկ մասնիկը արդեօք պաղեստինցիները ունի՞ն: Ես գիտեմ, թէ բացարձակապէս չունին»: «Միացեալ ազգերը ժողով գումարեց եւ որոշում առաւ: Բայց Իսրայէլ այդ որոշումները չընդունեց», — ըսաւ:

«Միացեալ ազգերուն (ONU) պատկանող շէնքերը, դպրոցներն անգամ ումբակոծուեցան:

Այս բոլորի կատարման միջոցին մարդկութիւնը ի՞նչ ըրաւ, միայն դիտեց»:

«Քայլով սպաննելու հարցին՝ դուք շատ լաւ գիտէք»:

«Աստուածաշունչի վեցերորդ յօդուածը կ'ըսէ, թէ՛ պիտի չմեռցնես: Այստեղ սպանութիւն կայ: Avi Chalom Gardina- ն ալ կ'ըսէ. «Իսրայէլը՝ աւազակ պետութեան վերածուեցաւ»»:

\* \* \*

Թայիպ էրտողանի այս անհաւատալի թուելու աստիճան «ճիշդ» եղող խօսքերը սրտանց կը ծափահարենք:

Բայց ուշադրութիւն՝ արդեօք էրտողան ինչո՞ւ այսքան իրապաշտ ելոյթ մը ունեցաւ:

Որովհետեւ էրտողանին հոգը շատ մեծ է:

Որովհետեւ Իսրայէլ Իրաքի մէջ, թրքական սահմանին վրայ, քրտական մեծ պետութիւն մը կազմել տուաւ...

Եւ քրտական այս պետութիւնը յառաջիկային, Թուրքիոյ մէջ ապրող նուազագոյնը 30 միլիոն քիւրտերուն առջեւ, Արեւելեան Անաթոլիոյ մէջ քրտական պետութիւն մը հիմնելու ճամբան պիտի բանայ:

Այդ պատճառաւ Թայիպ էրտողան, որպէս փոխադարձութիւն Իսրայէլի կողմէ քիւրտերուն տրուած օգնութեան, պաղեստինցիներուն նեցուկ ըլլալու կ'աշխատի:

Իրականութեան մէջ՝ Թայիպ էրտողանը արդարութեան ու մարդասիրութեան հետ ոչ մէկ կապ ունի:

Պաղեստինցիներու հարցին մէջ մարդասէր երեւցող Թուրքիան, քիւրտերուն ոչ մէկ իրաւունքը ճանչցած է:

Աւելին՝ իրաւունք ուզող քիւրտերուն «Ահաբեկիչ են» ըսելով, անոնց կը սպաննէ բուռն ոմբակոծումներով:

1915թ. հայերուն դէմ ըրածները այսօր քիւրտերուն դէմ կը գործադրէ:

Եւ մարդասիրութիւն քարոզող Թուրքիան, հայերը մաքրագործելով Արեւմտեան Հայաստանը իւրացնելէ յետոյ, դեռ մինչեւ այսօր Հայկական ցեղասպանութիւնը կ'ուրանայ:

Եւ աւելին՝ յարատեւ քարոզչութեամբ, մինչեւ իսկ դպրոցներուն մէջ Փիլմերու, Video-ներու ցուցադրութեամբ և գիրքերով, իրականութիւնները բոլորովին փոխելով՝ հայերուն Թուրքեր ջարդած ըլլալու «մասալը» կը տարածէ...

Շատ անգամ ըսած ենք... կրկին պիտի ըսենք.—

**ԶԱՐԴԱՐԱՐ ԵՒ ՑԵՂԱՍՊԱՆ ՕՍՄԱՆՑԻՆԵՐՈՒ ՀԱՐԱԶԱՏ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՂՈՂ ԱՅՍՕՐՈՒԱՆ ՖԱՇԻՍԾ ԹՐԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ, ՄԻՆՉԵՒ ՈՐ ՀԱՅ ԱԶԳԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԱԾ ԸԼԼԱԼՈՒ ՅԱՆՑԱՆՔՈՎ ԶՊԱՏԺՈՒԻ, ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՆՈՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԳՈՐԾԵԼ:**

Թիւ 168

«Նայիրի», 10 Մարտ 2009, Թիւ 297

### «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ»

7 Մարտ 2009-ին, Պոլսոյ «Milliyet» թերթին աշխատակից-յօդուածագիր Taha Akyol-ի գրութեան մէջ, սա տեսակ վերտառութիւն մը կայ՝ «Ցեղախումբէն՝ պետութիւն»:

Taha Akyol այս յօդուածին մէջ իբր եզրակացութիւն, օսմանեան վարչութիւնը կը գովաբանէ եւ ըսել կ'ուզէ թէ՛ «Օսմանցիներու շնորհիւ՝ ցեղախումբէն պետութիւն եղանք»:

Taha Akyol-ին ըսածները շատ ճիշդ են: Եւ ձեռով մըն ալ իրականութեան մը խոստովանութիւնն է:

«Այսինքն՝ ցեղախումբ մըն էիք: Քանի մը դար յետոյ՝ պետութիւն եղաք»:

Բայց Taha Akyol-էն 150 տարիներ առաջ, օսմանցի բանաստեղծ մը, մանաւանդ շատ հռչակաւոր բանաստեղծ մը, նոյն խօսքերը աւելի պերճիմաստ ձեռով ըսած էր:

Ո՞վ էր այս բանաստեղծը: Անպայման ծանօթ է ձեզի: Այս բանաստեղծը ծագումով թուրք էր:

Այսինքն՝ ձեր շատերուն եղածին նման [իբր թէ] թուրք էր:

Այսինքն՝ Միջին Ասիայէն եկած ու թաթարական ծագում չունէր:

«Օսմանցի» էր, այսինքն՝ սուրի սպառնալիքով իսլամացած օսմանցի էր:... Այն՝ [իբր թէ] թուրք եղողներէն էր: Բայց թուրքէ աւելի թուրք եղաւ: Եւ ձերիններուն հայրենասիրութիւն սորվեցուց:

Ըսենք այլեւս անունը՝ Նամըք Քեմալ:

Ահա այս Նամըք Քեմալը ձեր իսկական պատմութիւնը, մէկ նախադասութեամբ, շատ յստակօրէն ներկայացուց՝ ըսելով.

«Ցեղախումբէ մը՝ աշխարհակալ պետութիւն մը ստեղծեցինք»:

Մենք ալ կ'ըսենք, որ դուք, 11-րդ դարուն, Միջին Ասիայէն եկած վայրագ եւ արիւնարբու ցեղախումբ մ'ըլլալով, մտաք Անաթոլիոյ հողերը... բայց մինչեւ այսօր, կրկին այդ նոյն վայրագ եւ արիւնարբու ցեղախումբը մնացիք:

Երբեք իսկական պետութիւն մը չեղաք... Եւ չէք կրնար ըլլալ:

Որովհետեւ այսօր [իբր թէ] Թուրքիա ըսուած այդ հողերը՝ ձեր մայր հայրենիքը չեն: Դուք այդ հողերուն վրայ օտարներ էք...

Աշխարհակալ ցեղախումբ մը ըլլալով՝ մինչեւ Վիէնայի դռները յառաջացաք: Եւ քանի մը դար այդ հողերուն տիրութիւն ըրիք:

Եւ մինչեւ Վիէննա՝ այդ հողերուն անունը կը կոչուէր...  
«Օսմանեան կայսրութիւն»:

Այսինքն՝ [իրր ԹԷ] Թուրքիա...

... Բայց, քանի մը դար յետոյ, նահանջել սկսաք... Եւ ի վերջոյ, ձեր ձեռքին մնաց միայն Անաթոլիան:

Եւ 1915թ. Անաթոլիոյ բնիկ ժողովուրդները եղող հայերն եւ յոյները մաքրագործել սկսաք:

1920թ. ալ իթթիհատականներուն շարունակութիւնը եղող և «Kuva-yi Milliye» [Ազգային ուժեր] կոչուող Մուստաֆա Քեմալի ցեղախումբը՝ միջազգային գաղտնի ուժերուն թիկունքով, գողցուած Անաթոլիոյ հողերուն վրայ [իրր ԹԷ] Թուրքիա մը կազմեց:

Եւ մինչեւ այսօր ալ, կրկին միջազգային գաղտնի ուժերուն թիկունքով, այս Մուստաֆա Քեմալին ցեղախումբը [իրր ԹԷ] Թուրքիոյ գոյութիւնը կը շարունակէ...

\* \* \*

Այս զարհուրելի իրականութիւնը շատ հեռու չէ: Քանի մը ամիս առաջ ձեր պաշտպանութեան նախարարը բացայայտօրէն խոստովանեցաւ. — «Եթէ հայերը եւ յոյները չմաքրագործէինք՝ այսօրուան Թուրքիան չէինք կրնար մէջտեղ բերել»:

Թիւ 169

«Նայիրի», 24 Մարտ 2009, Թիւ 298

**24 ՄԱՐՏ 2009- Ի ԳԻՇԵՐԸ,  
ԺԱՄԸ 23-ԻՆ,  
ՖՐԱՆՍԱԿԱՆ «ARTE» ՀԵՌԱՏԵՍԻԼԻ ԿԱՅԱՆԵՆ  
«ՀՐԱՆԳ ՏԻՆԶԻ ՍՊԱՆՈՒԹԻԻՆԸ» ՆԻԹՈՎ, 55 ՎԱՅՐԿԵԱՆՆՈՅ  
ՎԱԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄ ՍԸ ՅՈՒՅԱԴՐՈՒԵՑԱԷ:  
ԵՒ ԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏԸ ՈՒՆԵՑՈՂ ՍՓԻՈՔԻ ԽԵՂՃ  
ՀԱՅԵՐԵՆ ՇԱՏԵՐԸ ՈՒՇՈՎ ԴԻՏԵՑԻՆ ԱՅՍ ՖԻԼՄԸ**

Այս խեղճ հայերուն մաս կազմող մէկն ըլլալով՝ մենք ալ դիտեցինք հեռատեսիլէն սփռուած այս ֆիլմը:

Արդեօք 1915-ի համար եւ վերջապէ՛ս, իրականութիւններն կ'ըսե՞ն ըսինք:

Գիտէք, թէ վերջերս Եւրոպայի մէջ, Հայկական ցեղասպանութեան մասին շատ մը հրատարակութիւններ կը հրատարակուին... բայց դեռ ֆիլմին վերնագիրը տեսած վայրկեաննէս հասկցանք, որ մեր յոյսերը ի դերեւ պիտի ելլեն:

Ֆրանսական «ARTE» հեռատեսիլի կայանը, նոյն ատեն թէ՛ ֆրանսերէն եւ թէ՛ գերմաներէն սփռում կը կատարէ:

Ֆիլմին ֆրանսերէն անունը՝ «LES ARMENIENS EN TURQUIE» է, իսկ գերմաներէնը՝ «DIE ARMENIER IN DER TÜRKEI»: Թարգմանութիւնը՝ «Հայերը՝ Թուրքիոյ մէջ»- Բոլորովին սուտ վերնագիր մը:

Այս վերնագրին ճիշդ գրուածքը սապէս պէտք է ըլլար.- «Թուրքերը՝ Հայաստանի մէջ»:

Որովհետեւ Թուրքերը՝ 11-րդ դարուն Միջին Ասիայէն գալով՝ Հայաստանի հողերը մտան:

Եւ թալանող օսմանցիներ ըլլալով՝ մինչեւ Վիեննայի դռները յառաջացան:

Եւ այդ բոլոր հողերը՝ Օսմանեան կայսրութեան մաս կը կազմէին:

Բայց ամէն երկիր անուն մը ունէր՝ Յունաստան, Սերպիա, Պուլկարիա, Հունգարիա եւ Հայաստան...

Վերը նշուած անուններէն՝ Յունաստան, Սերպիա, Պուլկարիա, Հունգարիա՝ մինչեւ 1912 թուականը իրենց ազատութեան տիրացան եւ զատ-զատ պետութիւններ եղան:

Այս երկիրներէն միայն Հայաստանը՝ 1876-ի «Այս Սթեֆանոսի» [այսօրուան իբր թէ «Եչիլքէօյը»], ռուս-օսմանեան համաձայնութեամբ, ինքնավար շրջան պիտի ըլլար:

Բայց պոռնիկ անգլիացիներուն խաղերուն պատճառաւ՝ 1878-ի Պեոլինի խորհրդաժողովին մէջ, Հայաստանի ինքնավարութիւնը, Եւրոպական երկիրներուն [իբր թէ] հակակշռին փոխանցուեցաւ:

Եւ մինչեւ 1914 թուականը՝ հայերը, «այսօր-վաղը» ըսելով՝ Եւրոպացիներու կողմէ «քնացուեցան»:

Եւ վերջապէս 1914-ին, Եւրոպայէն [նորվեգացի և շուէտացի] քննիչներ եկան՝ հայկական նահանգներու մէջ քննութիւններ կատարելու եւ շրջանը վերահսկելու:

Բայց, 1914-ի Առաջին համաշխարհային պատերազմը բռնկեցաւ եւ այդ «քննիչները» իրենց երկիրները վերադարձան առանց իրենց առաքելութիւնը ամբողջացնելու:

1915-ին ալ, համաշխարհային պատերազմին խառնակութիւններէն օգտուելով, Թալեաթ փաշայի առաջնորդութեամբ օսմանցիները [այսինքն՝ թուրքերը] Հայաստանի եւ Անատոլիոյ հողերուն վրայ, պատմութեան գիտցուած թուականներէն ի վեր տեղացի բնիկ ժողովուրդը եղող հայերը աքսորով եւ ջարդերով գրեթէ ամբողջութեամբ «մաքրագործեցին»:

Եւ թուրքերը պարպուած Հայաստանի հողերուն (DE FACTO) տէրը դարձան...

Ահաւասիկ, քանի մը նախադասութեամբ, հայկական Մեծ եղեռնին իսկական պատմութիւնը այս է:

Եւ մինչեւ այսօր Եւրոպայի մէջ, հայոց ողբերգութեան մասին ըսուած եւ գրուածները՝ Եւրոպական պետութիւններուն շահերուն համեմատ շարադրուած [բոլորովին իրականութիւններու հակառակ] յերիւրածոյ «մասալներ» են:

\* \* \*

Հայերը երկար տարիներէ ի վեր կ'աշխատին, որ իրենց Մեծ եղեռնը, որուն ենթարկուեցան իրենք, կոչուի իր անունով՝ Ցեղասպանութիւն:

Ինչո՞ւ. որովհետեւ Հայերը կ'ուզեն, որ եղեռնը որուն ենթարկուած են իրենք, հրէաներուն դէմ եղածին նման՝ GENOCIDE կոչուի:

Բոլորին ծանօթ է, որ հրէաներուն GENOCIDE-ը ամբողջ աշխարհ գիտէ...

Եւ ամէն օր, ամէն տեղ հրէական GENOCIDE-ի մասին կը խօսուի...

... Բայց խեղճ Հայերը չեն գիտեր, որ հայկական Մեծ եղեռնը՝ ո՛չ հրէաներուն, ո՛չ խեմբերներուն եւ ո՛չ ալ Ռուանտային GENOCIDE-ին կը նմանի...

Որովհետեւ հրէաները, GENOCIDE-ի շնորհիւ, Իսրայէլ մը շահեցան. խեմբերները եւ ռուանտացիներն ալ՝ իրենց GENOCIDE-ին պատճառաւ մէկ սանթիմ հող չկորսնցուցին:

Բայց հայկական Մեծ եղեռնին ընթացքին, Հայ ազգը բնաջնջուեցաւ. եւ Հայաստան ըսուած երկիրը թուրքերու կողմէ գողցուեցաւ:

\* \* \*

Հայերը այս իրականութիւնները չե՞ն գիտեր արդեօք: Շատ «քիչեր» գիտեն... գիտեն... եւ կը խօսին ալ:

Բայց անոնց ձայնը՝ ոչ մէկը կը լսէ:

Որովհետեւ իրենց ձայները մինչեւ Եւրոպա հասցնելու կարող Հայերը, Եւրոպացիներուն ծախուած դրուժաններ են...



Թիւ 170

«Նայիրի», 21 Ապրիլ 2009, Թիւ 299

## «ՃԵՂԱԽՈՒՄԲԷՆ՝ ՊԵՏՈՒԹԻՒՆ» ԹԻ-2-

10 Մարտ 2009 թուակիր «Նայիրի» թերթով լոյս տեսած մեր թրքերէն գրութեան մէջ, հրատարակեցինք Namik Kemal-ին տխրահոչակ խօսքը՝ «Ցեղախումբէ մը աշխարհակալ պետութիւն մը ստեղծեցինք»:

Namik Kemal-ին այս խօսքին դէմ մեր գաղափարը յայտնած էինք: «11-րդ դարուն Միջին Ասիայէն եկած վայրագ եւ արիւնարբու ցեղախումբ մը ըլլալով՝ մտաք Անաթոլիոյ հողերը... Բայց մինչեւ այսօր, կրկին այդ նոյն վայրագ եւ արիւնարբու ցեղախումբը մնացիք: Երբեք իսկական պետութիւն մը չեղաք... Եւ չէք կրնար ըլլալ:

Որովհետեւ այսօր [իբր թէ] Թուրքիա ըստած այդ հողերը՝ ձեր մայր հայրենիքը չեն: Դուք այդ հողերուն վրայ՝ «Գրաւող օտարներ էք...»: Այսօր ալ, դեռ ցեղախումբ մը մնացած ըլլալնիդ՝ թրքական աղբիւրներէն առած իրական եղելութիւններ նշելով զայն ապացուցանել պիտի ջանանք:

1.- 1920թ. Մուստաֆա Քեմալը, Անգարայի մէջ, ցեղասպան իթիհատականներէ եւ հայ ազգը ջարդի ենթարկած եւ անոնց թանկարժէք իրերն ու կալուածները գողցած աւազակներէ կազմուած «Kuva-yi Milliye» կառավարութիւն մը հիմնած էր:

Եւ անոնց դէմ, Օսմանեան կայսրութեան Պոլսոյ օրինական կառավարութիւնը, Մուստաֆա Քեմալին հիմնած կառավարութեան համար հետեւեալ իրատես յայտարարութիւնը կատարած էր «աւազակներու եւ հրոսախումբերու կառավարութիւնը»:

Իրապէս ալ Մուստաֆա Քեմալ՝ այս աւազակներուն եւ հրոսախումբերուն վրայ յենելով, երկար տարիներ վայրագ եւ արհւնարբու բռնակալ մը ըլլալով՝ իշխանութեան տիրացաւ:

2.- Վերջին շրջաններուն Թուրքիոյ մէջ «էրկէնէքոնականներ» կոչուած եւ պետութեան մէջ պետութիւն եղող կազմակերպութեան պարագլուխները ձերբակալուեցան: Եւ «Կառավարութիւնը վար առնելու համար՝ ժողովուրդը ապստամբութեան մղելու յանցանքով» դատուիլ սկսան:

Դատավարութիւնը ամիսներէ ի վեր կը շարունակուի:

Դատավարութեան ընթացքին յայտնաբերուած նորութիւնները զարհուրելի են:

Յայտնի կ'ըլլայ, որ Թուրքիան բուն կառավարողները՝ այս էրկէնէքոնականներն են:

Եւ ովքե՞ր են՝ սա էրկէնէքոնականները: Նախկին իթթի-հատականներուն շարունակութիւնը եղող կազմակերպութիւն մըն են:

Մենք այս էրկէնէքոնականներուն դատավարութեան արդիւնքի մը կարենալ հասնելուն չենք հաւատար: Որովհետեւ էրկէնէքոնականներուն ոչ ոք կրնայ պատմել:

Մեր այս տեսակէտը ապացուցանելու համար, անցեալները իբր էրկէնէքոնական պարագլուխ դատուող փաստաբան Քեմալ Քէրինչսիզին դատավարութեան ընթացքին իբր պաշտպանողական ըրած խօսքերը նշելու պիտի ջանանք: Ահաւասիկ, էրկէնէքոնական փաստաբանին ըսածները.—

«Մեծայարգ դատախազներ, չըլլայ որ ըսէք, թէ «Մենք դատախազ ենք. մեր ետին կառավարութիւնը կայ, ոչ մէկը կրնայ դպիլ մեզի», օր մը ձեր ետին գտնուած այդ ուժը կը վերջանայ»:

էրկէնէքոնական փաստաբանին այս ըսածները՝ պաշտպանողական խօսքեր չեն:

Այս խօսքերը, պաշտօնապէս դատախազներուն դէմ կատարուած՝ սպառնալիքներ են:

Եթէ այս փաստաբանը նոյն խօսքերը Ֆրանսայի մէջ դատախազի մը ըսած ըլլար, անմիջապէս դատախազին դէմ

սպառնալիք ըրած ըլլալու յանցանքով կը դատուէր եւ շատ ծանր պատիժ կը ստանար: Բայց Թուրքիոյ մէջ, այս էրկէնէ-քոնական փաստաբանին ըսածներուն դատախազները ոչ իսկ մէկ բառով պատասխանեցին: Յայտնի է, որ դատախազները վախցեր են...

Այդ պատճառաւ՝ կրկին պիտի ըսենք.

«Դուք, մինչեւ այսօր, էրկէնէքոնէն եկող նոյն վայրագ եւ արինարբու ցեղախուճքն էք:

Երբէք իսկական պետութիւն մը չեղաք... Եւ չէք կրնար ըլլալ»:

Թիւ 171

«Նայիրի», 23 Յունիս 2009, Թիւ 301

**ԽԵՂՃ, ՏԻՄԱՐ ԵՒ ՊԻՆՂՂՈՒԻՆ ՀԱՅԵՐ**

**1915. ԹՈՒՐՔԵՐՈՒՆ**

**ԻՐԱԳՈՐԾԱՄ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿԱՅ**

**ՀԱՅԵՐԷՆ ՈՂՁ ՄՆԱՅԱՍՆԵՐՈՒՆ**

**ՇԱՌԱՒԻՂՆԵՐԸ, «ԹՈՒՐՔԵՐԸ ՄԵՉ ՉԱՐԴԵՅԻՆ»**

**ԸՍԵԼՈՎ, ՏԵԻԱԲԱՐ ԿՈՒԼԱՆ**

Ո՛վ տխմար հայեր... Թուրք կոչուած գայլերու վոհմակները՝ իրենց «վայրագ գայլութիւնը» պիտի ընէին և ձեզ պիտի սպաննէին: Ինչպէս որ 1076թ. Անաթոլիա ներխուժող Թուրքերը՝ Անաթոլիոյ բնիկ ժողովուրդները եղող յոյները և հայերը տեւաբար սպաննեցին:

Այդ թուականներէն ի վեր ինչո՞ւ աչքերնիդ չբացիք: Գառնուկի մորթը իրենց վրայ առած վայրենի թուրքերուն ատեն-ատեն ձեզի ըսած անուշ խօսքերուն հաւատացիք:

19-րդ դարուն այս վայրենի թուրքերը նախ «Hatti Humayun» ըսուած աֆիոնի օշարակով ձեզ քնացուցին...

... Բայց թուրքերը ձեզի, մեծագույն կեղծիքով՝ 1908թ. «Hürriyet» կոչուած «օսմանցիութեան» և «եղբայրութեան» ձարուտութենով թմրեցուցին:

Ինքզինքնիդ շատ խելացի կարծող հայեր... դո՛ւք, «իբր թէ» Hürriyet հռչակող իթթիհատական կուսակցութեան հիմնադիրներուն՝ սելանիկցի հրէաներ ըլլալը չէի՞ք գիտեր:

Այս սելանիկցի հրէաները մէկ կողմէն՝ ձեզ «Hürriyet»-ի ազատութեան ու եղբայրութեան «մասալներով» կը քնացնէին, միւս կողմէն ալ՝ Հունգարիոյ հրէաները թուրքերուն մէջ թուրանականութեան և ցեղապաշտութեան գաղափարները կը տարածէին:

Եվ դուք՝ հայերդ, շատ լաւ կլլեցիք, «Hürriyet»-ի ձարուտութենքը, և Պոլիսը հայութեան կեդրոն ըրիք:

Կրնա՞ք երեւակայել՝ հայկական կուսակցութիւններուն [Դաշնակցութիւն և Հնչակեան] բոլորին կեդրոնները Պոլսոյ մէջ էին:

Եւ ամէնէն կարելորդ՝ 1909-ին թուրքերը Ատանայի մէջ հայերուն ջարդեցին: 50 հազար հայ սպաննուեցան 1909-ին Ատանայի մէջ՝ եղբայրութիւն կեղծող թուրքերուն կողմէ:

Եւ դուք, տխմար հայեր, կրկին չարթնցաք:

Եւ Առաջին աշխարհամարտը թուրքերուն շատ «օգտակար» եղաւ:

Վայրագ գայլերու վոհմակները՝ թուրքերը մշուշապատ պատերազմական մթնոլորտէն օգտուեցան և հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին...:

Քանի մը չարաթներ առաջ՝ 24 Ապրիլ 2009-ին, աշխարհի բոլոր հայերը՝ Պոլսոյ մէջ հայ մտաւորականներուն Անաթոլիա արսորուելնուն և սպանդի ենթարկուելնէն յետոյ սկսած հայկական ցեղասպանութեան 94-րդ տարելիցը ոգեկոչեցին:

Երկու օր առաջ ալ՝ 15 Յունիս 2009թ., Հնչակեան կուսակցութեան 20 ղեկավարներուն Պոլսոյ Պայազիտ հրապարակին վրայ կախաղան հանուելով սպաննելնուն 94-րդ տարելիցի սեւ օրն էր:

\* \* \*

Թուրքերուն հայ ազգին դէմ գործադրած սարսափազդու ցեղասպանութենէն յետոյ, հայերը այլեւ այս ողբերգութիւններէն «դաս» առած ըլլալով թուրքերուն ո՞վ ըլլալը պէտք էր գիտնայի՛ն:

Բնական մարդկային տրամաբանութիւնը կ'ստիպէր, որ այդպէս ըլլար:

Բայց, «ցաւոք սրտի» ըսենք, որ տխմար, պինդգլուխ հայերը, այս Մեծ եղեռնէն ալ ոչ մէկ «դաս» առին:

1990-ին Սովետական Միութենէն բաժնուելով անկախութիւն հռչակած Հայաստանին նոր նախագահը՝ Լ. Տէր-Պետրոսեան, թուրքերու հետ... բարեկամութեան քաղաքականութիւն հետապնդեց...:

Բարեբախտաբար, որ թուրքերը Տէր-Պետրոսեանին շատ չքաջալերեցին:

1997թ. ալ Հայաստանի նոր նախագահը՝ Ռ. Քոչարեան, աւելի առաջ գնաց և «թուրքերուն հետ դաշնակից անգամ կրնանք ըլլալ» ըսաւ...:

2008թ. Հայաստանի նախագահ ընտրուած Սերժ Սարգսեանը, ուրիշ մէկ քաղաքականութեամբ, թուրքերուն հետ բարեկամութիւն հաստատելու աշխատեցաւ:

Այս քաղաքականութեան անունը՝ «Foot Ball»-ի քաղաքականութիւն էր: Սերժ Սարգսեանը՝ 2008թ. Երեւանի մէջ տեղի ունենալիք Հայաստան-Թուրքիա «Foot Ball»-ի մրցումին՝ Թուրքիոյ նախագահ Ապտուլլա Կիլը հոն հրաւիրեց:

Արցախցի Ս. Սարգսեանին՝ «նուրբ քաղաքականութիւն» հետապնդելուն նպատակը, ինչքան որ մենք հասկցանք՝ հետեւեալն էր:

Թուրքերը համոզելու էին ազերիներուն, որ Արցախը տան հայերուն, եւ ասոր փոխարէն հայերը մոռնալու էին 1915թ. Հայկական ցեղասպանութիւնը:

Նորամանկ թուրքերը՝ Սարգսեանին Երեւան «մաչի» գալու հրաւէրը ընդունեցին... եւ Ապտուլլա Կիլը Երեւան գնաց ֆուտպոլի «մաչը» դիտելու Սարգսեանին հետ:

Եւ այս «նուրբ քաղաքականութեան» արդիւնքը ի՞նչ եղաւ:

[Իբր թէ] թուրքերը եւ ազերիները իրարու թշնամացան:

Եւ Ամերիկայի առաջնորդութեամբ Արեւմտեան աշխարհը՝ «նայեցէք, հայերը թուրքերուն հետ համաձայնեցան» ըսին:

Եւ Արեւմտեան աշխարհը գրեթէ մոռցաւ Հայկական ցեղասպանութիւնը:

Եւ թուրքերուն [իբր թէ չա՛տ խաղաղասէր պետութեան] առջեւ, անմիջապէս բացուեցան բանակցութեան դռները, իրենց Եւրոպական միութիւն մուտքը թոյլատրող:

Այսօր, Արցախի հարցը կը գտնուի հոն, ուր որ էր՝ սառած:

Գալով Հայկական ցեղասպանութեան՝ մոռացութեան ճամբուն վրայ է ան, եւ դէպի 100-րդ տարելիցը կը յառաջանայ:

Խեղճ, տխմար եւ պինդգլուխ հայեր...

Թիւ 172

«Նայիրի», 28 Յուլիս 2009, Թիւ 302

**ՊՈԼՍՈՅ ՄԷՋ, ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՈՒ ԱՄԵՆԷՆ  
ՍԱՐՍԱԾԱԶԴՈՒ ԵՂԵԼՈՒԹԻՒՆԸ - ՊԷՅՕՂԼՈՒԻ  
ԼՆԱՆԿԻՆ PÉRAJ-Ն ՄԷՋ, SAINN ANTOINE  
ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՆ ՄՕՏԵՐԸ, ԻՊՐԱՅԻՍ  
ԱԶԵՈԼ ԱՆՈՒՆՈՎ ԹՈՒՐՔ ՄԸ, ԵԿԵՂԵՑԻՆ ԵԼԼՈՂ  
ԳԵՐՄԱՆԱՑԻՆ ԴԱՇՈՒՆԱԶԱՐԵԼՈՎ ԶԱՅՆ Կ՝ՍՊԱՆԵՆ:  
22 ՅՈՒԼԻՍ 2009 ԹՈՒՍԿԻՐ «ՀԻՐՐԻՅԷԹ» ԹԵՐԹԻՆ ԱՅՍ  
ԴԷՊՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵՐՆԱԳԻՐԸ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԵՆՔ.  
«ԳԵՐՄԱՆԱՑԻ ԶԲՕՍԱՇՐՋԻԿԻՆ ՄԱՐԴԱՍՊԱՆԷՆ  
ՍԱՐՍԱԾ ԱԶԴՈՂ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ»**

Պոլսոյ մէջ մարդ սպաննելը՝ շատ սովորական դէպք մ'է:  
Ինչո՞ւ «Հիւրրիյէթ» թերթը, այս մարդասպանութեան  
համար, «սարսափ ազդող» վերնագիր դրեր է:

Որովհետեւ, մարդասպանին տուած բացատրութիւնները, իրապէ՛ս ալ շատ սարսափազդու են:

Մտիկ ըրէք մարդասպանին ըսածները. «Այդ օր քրիստոնեայ մը սպաննել կ'ուզէի: Եկեղեցիները պտըտեցայ:

Այս մարդը տեսայ. սպաննեցի»:

\* \* \*

Շատ ապրիս մարդասպան Իպրահիմ Աքեոյ: Դուն «Ներսը, դուրսը՝ նոյն» մարդն ես եղեր...

Դուն «Միտքը և խօսքը նոյն» թուրք մըն ես եղեր...

Քու ցեղակիցներդ ալ քեզի պէս կը մտածեն:

Անոնք ալ, քեզ նման, իրենց նախնիներէն եկած վարժութեամբ, քրիստոնեայ մեռցնել կ'ուզեն... եւ կը մեռցնեն ալ... Բայց, վերջին շրջաններուն, այդ մէկը բացէ ի բաց չեն կրնար ընել:

Որովհետեւ ձեր կառավարութիւնը, «իբր թէ», եւրոպացի պիտի ըլլայ այլեւս:

\* \* \*

Ժամանակին քրիստոնեայ (GÂVUR) սպաննելը ձեր՝ թուրքերուդ համար, հաւ մորթելու պէս պարզ բան մըն էր:

Արդէն այս մէկը այլապէս, ինչպէ՞ս կրնանք բացատրել:

11-րդ դարուն ցեղախումբ մ'ըլլալով, մտաք քաղաքակրթութիւններու եւ քրիստոնէութեան օրրան եղող Անաթոլիոյ հողերը...

Եւ 20-րդ դարու սկիզբը՝ Անաթոլիոյ մէջ, մէկ հատ քրիստոնեայ չ'ձգեցիք: Բոլորն ալ մորթեցիք:

Որովհետեւ, հին շրջաններուն ալ, երէկ ալ, այսօր ալ՝ քրիստոնեայ սպաննելը, ձեզի համար, յանցանք մը չէր ու չէ՛: Ընդհակառակը՝ բարեպաշտութիւն էր, «Դրախտին դռները կը բանար»:

\* \* \*

Օսմանեան պետութեան չրջանին, քրիստոնեայ սպաննելուն յանցանք մը չըլլալը ապացուցանելու համար, օսմանեան խորհրդարանէն երեսփոխանի մը, 1910թ. Պոլսոյ մէջ ընտրական ճառի մ'ընթացքին այս մասին ըսածները, պիտի ջանանք նշել:

«Իթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան երեսփոխաններէն, իրաւաբանական համալսարանի փրոֆեսոր, գրող և ֆարմասոն, եւ ֆարմասոնական օթեակին մէջ «մեծ վարպետ» (GRAND MAITRE) Թալեաթ փաշային ֆարմասոն «եղբայր» եղող Գրիգոր Զօհրապ, 1904թ. Կիլիկիոյ մէջ թուրքերուն քառասուն հազար հայ ջարդելուն պատասխանատուն եղող «Իթիհատ վէ թերաքքի» կուսակցութեան յանցանքը թեթեւցնելու համար, Պոլսոյ հայերուն ուղղած իր ճառին մէջ սապէս կ'ըսէ.

«Օսմանեան պետութեան պատմութեան մէջ ե՞րբ տեսնուած է, որ Ատանայի մէջ հայեր մեռցուցած են ըսելով [քանի մը հատ Յ. Չ.] թուրքեր կախաղան հանուին»:

\* \* \*

Մեծ վարպետ, մեծ փրոֆեսոր, մեծ գրող, մեծ տաղանդ, բայց իրականութեան մէջ մեծ միամիտ մը եղող Գրիգոր Զօհրապը, թուրքերուն «ո՞վ ըլլալը և ի՞նչ ըլլալը» չհասկցաւ:

Եւ իր [անմիտ] օսմանցիացման քաղաքականութեան պատճառաւ՝ ականայ մեղսակցեցաւ ու հայ ազգը դէպի «1915-ի ցեղասպանութեան» առաջնորդեց:

Եւ Գրիգոր Զօհրապը՝ մեծ վարպետ, իր ֆարմասոն եղբօրը՝ Թալեաթ փաշայի կողմէ 1915-ին, Տիգրանակերտ արսորուեցաւ: Եւ միջոց մը յետոյ Գրիգոր Զօհրապ՝ Ատանայի չրջակայքը, չէրքէզ Ահմէտի կողմէ սպաննուեցաւ: Ժայռի բեկորով մը գլուխը ջարդեցին:



«Նայիրի», 25 Օգոստոս 2009, թիվ 303

**ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՈՒՆ ՌՈՒՄԲԻ ՊԷՍ ՊԱՅԹԱՍ ԼՈՒՐ ՄԸ -  
ՃԵՂԱՊԱՇՏ - ԹՈՒՐԱՆԱԿԱՆ -  
Մ. Խ. Ք. ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐ  
BAHÇELI-ԻՆ ՄԵԾ ՄԱՅՐԸ  
ՀԱՅ Է ԵՂԵՐ**

Վերջին չրջաններուն, վարչապետ Թայիպ Էրտողանի քիւրտերուն և հայերուն հանդէպ ցուցաբերած ընթացքին դէմ Մ. Խ. Ք. կուսակցութեան ղեկավար Devlet Bahçeli կրակ ժայթքած և «Հայրենիքը մեր ձեռքէն պիտի երթայ» ըսելով ճառեր «նետած» էր...

23 Օգոստոս 2009-ին, ուումրի նման լուր մը պայթեցաւ.

«ERGENEKON»-ի ամբաստանեալներէն՝ «Բացառիկ գործունէութիւններու» փոխնախագահ Ibrahim Sahin-ին իր ծոցատետրին մէջ գրածին համեմատ՝ Մ. Խ. Ք. կուսակցութեան ղեկավար Devlet Bahçeli-ին մեծ մայրը հայ է եղեր:

Մինչեւ այսօր Մ. Խ. Ք. կուսակցութեան կողմէ այս լուրին մասին պատասխան չէ տրուած...

Արդէն ի՞նչ կրնան ըսել որ...

Վերջին չրջաններուն եւրոպացի գիտնականներուն զանազան ազգերու ծիներու վրայ կատարած ուսումնասիրութիւններուն արդիւնքէն հետեւցուած է, որ ամէնէն զտարին ազգը՝ ուսաներն են: Մինչդեռ թուրքերը, այս ուսումնասիրութիւններուն արդիւնքէն մեկնելով հաստատուած է՝ որ ամէնէն խառնածիններն են:

Թուրքերուն ծիներուն կառոյցը՝ ութը տարբեր ցեղերու ծիները կը պարունակէ:

\* \* \*

Տարիներէ ի վեր կը գրենք... Անաթոլիոյ մէջ թուրք ըսուած ցեղ մը չկայ:

Թուրքերը 11-րդ դարուն, տասը հազարանոց ցեղախումբ մ'ըլլալով խուժեցին Անաթոլիոյ հողերը:

Եւ քանի մը դարերու ընթացքին, իրենց ահռելի վայրագութեամբ, Անաթոլիոյ բնիկ ժողովուրդները եղող յոյները և հայերը սուրի սպառնալիքով իսլամացուցին և թրքացուցին:

Եւ այս թրքացման հետեւանքով՝ այսօր Անաթոլիոյ մէջ իբր թէ թուրք կոչուողներուն մեծամասնութիւնը՝ յունական և հայկական ծագում ունին:

Եւրոպացի գիտնականներուն վերջին շրջաններուն թուրք ըսուածներուն ծիններուն վրայ կատարած քննութիւններուն արդիւնք-տուեալները, մեր տարիներէ ի վեր գրած իրականութիւնները կը հաստատեն, թէ՛ Անաթոլիոյ մէջ թուրք ըսուածներուն մեծամասնութիւնը յոյն և հայ են:

\* \* \*

Այստեղ՝ «Նայիրի» թերթին մէջ լոյս տեսած և այս նիւթին հետ կապ ունեցող մեր գրութիւններէն երկուքը կրկին հրատարակելը, շատ այժմէական և օգտակար կը նկատենք:

\* \* \*

«ՆԱՅԻՐԻ» 1 ՅՈՒՆՈՒԱՐ 2001-ԲԱՅԱՌԻԿ

ԹՈՒՐԲՈՄԱՆԻ

Ապտուլլահ Էօճալանին համար «հայու ապօրինի զաւակ», «փիչ» ըսեր էք:

Էօճալանին հայու «փիչ» ըլլալը չենք կրնար գիտնալ:

Բայց, մեր գիտցած մէկ բանը կայ: Դուք, մեծամասնութեամբ, յոյնի և հայու «փիչ» էք:

\* \* \*

«ՆԱՅԻՐԻ» 22 ՄԱՅԻՍ 2001

ՍՈՒՏԵՐՈՒ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԸ -

ԻԲՐ ԹԷ «ԹՈՒՐԲԻԱ»

Օսմանեան պետութեան դազաղին մէջէն «Թուրքիա» ըսուած ուրուականը ելաւ:

Եւ մակեդոնական օթեակին մէջ Փարմասոն ըլլալով արձանագրուած և ծնունդով սելանիկցի ձեր նախահայրը, թրքութեան առաքեալ ըլլալով մէջտեղ ելաւ:

Ալ ի՛նչ ճառեր, ի՛նչ ճառեր: Ամէն ինչ թուրք, ամէն բան թուրք: Թուրքիա և տեւական Թուրքիա:

Բայց ո՞վ է թուրքը: Ամէն մարդ թուրք է: Ուզես արար եղիր, ուզես քիւրտ, ուզես հայ եղիր, ուզես յոյն: Ի՛նչ երջանիկ է, «թուրք եմ» ըսողը:

Որովհետեւ թուրք ըսուած մէկը գոյութիւն չունի: Եւ անկէ յետոյ, ուռեցուր և ուռեցո՛ւր. երակներուն ուժի դեղ:

Նախահայրը ձեր երակներուն մէջի ազնուական արիւնէն խօսք ըրեր է: Այդ ո՞ր արիւնն է արդեօք: Բոմիա՞ք է, պոսնիա՞կ է, չէրքէ՞զ է, ալպանացի՞ է: Մի գո՞ւցէ հայկական արիւն չըլլա՛յ:

Թիւ 174

«Նայիրի», 29 Սեպտեմբեր 2009, Թիւ 304

**ՀՈՂՄԱՅՈՅՅԻ ՆՄԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԸ -  
ԱԲԵԼԻ ՃԻՇԴ «ՀՈՂՄԱՅՈՅՅԻ ՆՄԱՆՈՂ ԹՈՒՐԷԻԱ ՍԸ»  
ԹՈՒՐԷԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ RECEP ERDOGAN**

**ՀՈՂՄԱՅՈՅՅ ԷՐՏՈՂԱՆ ԹԻԻ 1**

17 Փետրուար 2009 թուականը կրող «Նայիրի»-ի մեր գրութեան մէջ վարչապետ Էրտողանին համար սապէս արտայայտուած էինք:

«24 Յունուար 2009 թուականին Davos-ի [Զուիցերիոյ] մէջ կատարուած ժողովին, վարչապետ Erdogan Իսրայէլի Հանրապետութեան նախագահ Շիմոն Փերեսի երեսին, Կազայի մէջ իսրայէլացիներուն սպաննած պաղեստինցիներուն համար սապէս ըսեր է՝

«Գալով սպաննելու հարցին՝ դուք շատ լաւ գիտէք»

... Ի՞նչ եղաւ թուրքերուն:

Իրենց ամբողջ ունեցածին համար հրէաներուն պարտական եղող թուրքերը՝ ինչո՞ւ հրէաներուն մէկէն թշնամացան: Որովհետեւ էրտողանին ցաւը շատ մեծ է:

Որովհետեւ Իսրայէլը՝ Իրաքի մէջ, թրքական սահմանին վրայ, քրտական մեծ պետութիւն մը կազմել տուաւ...

Այդ պատճառաւ Թայիպ էրտողան, որպէս փոխադարձութիւն տրուած օգնութեան, պաղեստինցիներուն նեցուկ ըլլալու կ'աշխատի:

Իրականութեան մէջ՝ Թայիպ էրտողան արդարութեան, մարդասիրութեան հետ ոչ մէկ կապ ունի:

Պաղեստինցիներու հարցին մէջ մարդասէր երեւցող Թուրքիան, քիւրտերուն ոչ մէկ իրաւունքը ճանչցած է»:

\* \* \*

## ՀՈՂՄԱՑՈՅՑ ԷՐՏՈՂԱՆ ԹԻԻ 2

Վարչապետ էրտողան 23 Սեպտեմբեր 2009 թուականին, Նիւ Եորքի մէջ սկսելիք «Միացեալ Ազգերու» ժողովին մասնակցելու համար Ամերիկա գացեր է:

Եւ հոն, Նիւ Եորք դեռ նոր հասած ժամերուն էրտողան, պատմական Plaza պանդոկին մէջ առաջին գործունէութիւն ըլլալով կ'ընդունի՝ 50-ի շուրջ հրէական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ...

... Եւ այս ժողովին կը տեսակցի Ամերիկայի հրէական Loby-ին ամենակարեւոր կազմակերպութիւններէն մէկը նկատուած, Հայկական ցեղասպանութեան մինչեւ հիմա Ամերիկայի կողմէ չճանցուելու հարցին մէջ մեծ դեր ունեցող ADL (Anti-Defamation Ligue)-ի հրէական կազմակերպութեան տնօրէն Abraham Foxman-ի հետ:

Շատերուն ծանօթ է, թէ Թուրքիան այս հրէական կազմակերպութեան ամէն տարի միլիոններով տողար կը վճարէ, որ Հայկական ցեղասպանութիւնը ամերիկեան Congress-ի կողմէ չընդունուի:

Վարչապետ էրտողանին Abraham Foxman-ին հետ տեսնուելուն պատճառը՝ Թուրքիայի կողմէ այս տարի հրէական

կազմակերպութեան քանի՞ միլիոն տոլար վճարելու սակարկութեան համար է անպայման:

Բնական է, որ հրէաներուն հետ գումարուած այս ժողովին ընթացքին, էրտողանին Davos-ի մէջ Շիմոն Փերեսի դէմ ըսածները մոռցուած են:

\* \* \*

### ՀՈՂՄԱՑՈՅՑ ԷՐՏՈՂԱՆ ԹԻՒ 3

Բայց միջոց մը յետոյ էրտողան «Միացեալ Ազգերու» ժողովին կը մասնակցի:

Եւ իբր Թուրքիոյ վարչապետ «Միացեալ Ազգերու» ամպիոնէն կատարած ելոյթին մէջ, կրկին պաղեստինեան հարցին համար Իսրայէլի դէմ «մեծ-մեծ կը ջարդէ»:

Եւ սպաննուած պաղեստինցիներուն մասին, տառապող պաղեստինցի երախայ և կիներու մասին կը խօսի:

Եւ մարդասէր «Առաքելի» դեր կը խաղայ...

... Բայց Թուրքիա վերադառնալէն յետոյ, թրքական բանակին Իրաքի քիւրտերը ումբակոծելու թրքական Ազգային ժողովին որոշումը՝ մէկ տարի եւս երկարելու և այս ձեւով Իրաքի քիւրտերը կրկին սպաննելու վճիռը կ'արձակէ:

\* \* \*

### ՀՈՂՄԱՑՈՅՑ ԷՐՏՈՂԱՆ ԹԻՒ 4

Թուրքիոյ վարչապետ էրտողան Հայկական ցեղասպանութիւնը չընդունիր և Ամերիկան ալ պաշտօնապէս չճանչնայ ըսելով, Ամերիկայի հրէական Lobby-ին ամէն միլիոններով տոլար կը վճարէ...

... Սակայն մէկ կողմէ ալ Հայաստանի հետ բարեկամական կապեր հաստատելու կ'աշխատի:

Բայց մեզի համար ամէնէն կարելորը՝ թրքական գրաւման տակ գտնուող Արեւմտեան Հայաստանի մէջ [այսինքն այսօրուան Արեւելեան Անաթոլիոյ մէջ], հայկական պատմական յուշարձանները և եկեղեցիները նորոգել կու տայ:

Վանի Ախթամարի եկեղեցին վերանորոգուեցաւ: Հազար ու մէկ եկեղեցիներու քաղաք Անիի մէջի Մայր եկեղեցին նորոգելու աշխատանքներ կը տանին:

Տիգրանակերտի և Ալեքսանտրէթի եկեղեցիները և ուրիշ եկեղեցիներ վերանորոգելու ծրագիրներ կը մշակուին:

Մեր համոզումով՝ այս բոլոր [իրը թէ] թրքական բարեացակամութեան նշան եղող երեսոյթները, հողմացոյց վարչապետ էրտողանին ծրագիրներուն մաս կը կազմեն...

Հայկական եկեղեցիները նորոգել տալով՝ էրտողան Արեւելեան Անաթոլիոյ հողերուն տէր դառնալ ուզող քիւրտերուն ըսել կ'ուզէ, թէ՛ «Արեւելեան Անաթոլիան հայերուն էր: Այս հողերուն վրայ քիւրտերը ոչ մէկ իրաւունք ունին»:

Եւ այս ձեւով Իրաքի մէջ քրտական պետութիւն մը հիմնող քիւրտերուն յառաջիկային Արեւելեան Անաթոլիոյ մէջ ալ քրտական պետութիւն մը հիմնելուն արգելք ըլլալ կ'ուզէ:

\* \* \*

Սեղճ, անմիտ և պինդգլուխ հայեր:

1071 թուականի Մանազկերտի ճակատամարտէն յետոյ, հայերը թուրքերուն թէ՛ զոհը և թէ՛ ստրուկը եղան:

Թրքական ջարդերէն վերապրող հայերը, մինչեւ 20-րդ դար, հաւատարմաբար թուրքերուն համար աշխատեցան...

... 1915-ին ալ թուրքերը այս «Հաւատարիմ ազգը» ցեղասպանութեան ենթարկեցին:

... Եւ այսօր հայերուն ձեռքը՝ ուսներուն կողմէ ազատագրուած փոքր Հայաստան մը մնաց:

Եւ այսօր, այս փոքր Հայաստանի մէջ մեծամասնութիւնը 1915-ի ցեղասպանութենէն փրկուած հայերու շառաւիղները եղող չուրջ երեք միլիոն կազմող հայեր կ'ապրին...

Բայց այսօր Հայաստանի անմիտ և պինդգլուխ որոշ պետական այրեր, պատմութենէն բնաւ դաս չեն առած: Եւ թուրքերուն «ի՞նչ ըլլալը» դեռ չեն հասկցած:

... Եւ այս հայերը այսօր, թուրքերուն հետ բարեկամական դրացնութեան լաւ կապեր հաստատելու երազներ կը տեսնեն...

Խեղճ, անմիտ և պինդգլուխ հայեր:

Թիւ 175

«Նայիրի», 3 Նոյեմբեր 2009, Թիւ 305

**ՎԵՐՁԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՅԵՂԱՊԱՇՏ-ԹՈՒՐԱՆԱԿԱՆ  
ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԲԵՐՆԻՆ «ԾԱՄՕՆ» ԵՂԱԾ ԼՈՅՈՒՆՔԸ՝  
«ՄԵԿ ԱԶՊ, ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ» Է:  
ԹՈՒՐԱՆԱԿԱՆ ԹՈՒՐՔԵՐԸ ԸՍԵԼ Կ՝ՈՒՅԵՆ ԹԷ՝  
«ԹՈՒՐՔԵՐԸ ԵՒ ԱԶԵՐԻՆԵՐԸ ՆՈՅՆ ԱԶՊՆ ԵՆ:  
ԵՐԿՈՒ ԱՆՁԱՏ ՊԵՏՈՒԹԻՒՆ ԸԼԼԱԼՈՒ ԶԷ:  
ԹՈՒՐՔԻԱՆ ԵՒ ԱՂՐԲԵՋԱՆԸ ՊԵՏՔ Է ՄԻԱՆԱՆ  
ԵՒ ՄԵԿ ՊԵՏՈՒԹԻՒՆ ԸԼԼԱՆ»**

Ցեղապաշտ-թուրանական թուրքեր, դուք իրականութեան հետ կապ չունիք: Բայց մենք ձեզի ճշմարտութիւնը ըսելու ջանանք:

Ո՛չ այսօր Անաթոլիոյ մէջ թուրք ըսուածները, ո՛չ ալ Աղրբեջանի մէջ այսօր թուրք կոչուածները՝ իրականութեան մէջ թուրք չեն:

Անաթոլիոյ հողերը և նաեւ Աղրբեջանի հողերը՝ 11-րդ դարուն, թուրք և թաթար ցեղախումբերու կողմէ, տեղացի ժողովուրդը ճզմելով գրաւուեցան:

Աղրբեջանի բնիկ ժողովուրդը՝ աղուաններ, պարսիկներ ու հայեր էին:

Անաթոլիոյ տեղացի ժողովուրդներն ալ, պատմութեան ծանօթ թուականներէն ի վեր՝ յոյներն և հայերը էին:

Մինչեւ 11-րդ դարու վերջերը, Աղրբեջանի և Անաթոլիոյ մէջ, մէկ հատ իսկ թուրք և թաթար գոյութիւն չունէին:

Այս պատճառաւ կ'ըսենք որ դուք այսօր, Թուրքիա և Ադրբեջան ըսուած երկիրներուն մէջ նոյն ազգը չէք:

Դուք, վայրենի Թուրք և Թաթար վոհմակներու խուժաններ, Ադրբեջանի և Անատոլիոյ բնիկ ժողովուրդները ջարդող և ցեղասպանութեան ենթարկող գրաւիչ օտարներն էք:

\* \* \*

Ձեզի, «կեղծ Թուրքերուն» Թուրանականութիւն սորվեցնողն ալ Թուրք մը չէ:

1873թ. Պուտաբեչտի մէջ, հունգարացի հրէայ՝ Արմին Վամպերին է Թուրանական գաղափարախօսութիւնը մէջտեղ հանողը [բնական է՝ Ա. Վամպերին նպատակն էր՝ Թուրանականութեան ճամբով ծառայել սիոնիզմին]:

Աւելի ետք՝ Ջիյա Կէօքալի կոչուած մէկ ուրիշ հրէայ դաւանափոխ մը, ձեր ուղեղներուն մէջ ներմուծել սկսաւ Թուրանականութիւնը:

Բայց բո՛ւն Թուրանականութիւնը՝ Թուրքիոյ մէջ երկրորդ աշխարհամարտի տարիներուն, գերմանացիները սկսան տարածել՝ իբր ցեղապաշտական քարոզչութիւն... Ձեր «ազգային դեկավարին»՝ Իսմէթ Ինէօնիւի չըջանին...

Ձեր Թուրանականութիւնը՝ գերմանական ցեղապաշտութեան շարունակութիւնն է:

Այսինքն՝ դուք՝ Թուրանականներդ, հիթլերականութեան մէկ ապօրինի զաւակներն էք...

Բայց գերմանական ցեղապաշտութիւնը՝ հակառակ իր անմարդկային կողմերուն, չափով մը իրականութեան բաժին մը ունէր:

Որովհետեւ այսօր նոյնիսկ, եւրոպական ժողովուրդներուն մեծամասնութիւնը, իրենց ծագումով՝ գերմանական ցեղին կը պատկանին:

Բայց Թուրանական ցեղապաշտութիւնը գերմանականէն բոլորովին տարբեր է:



Որովհետեւ դուք՝ թուրանականներդ, թրքութեան հետ կապ չունեցող և տարբեր ցեղերու պատկանող ժողովուրդները, սուրի սպառնալիքով իսլամացուցիք և թրքացուցիք...

Եւ բռնութեամբ թրքացած այս ժողովուրդները դուք այսօր ձեր թուրանական ձաբոտութներուն զոհը ընել կ'ուզէք:

\* \* \*

Գանք, սա վերջին շրջաններուն, հայերու և թուրքերու միջեւ խաղացուած «ոտնագնդակի [ֆուտբոլ] քաղաքականութեան»:

Թուրքերը մէկ կողմէ՝ ազերիներուն հետ միանալու ծրագիրներ կը մշակեն:

Իսկ միւս կողմէն ալ՝ հայերուն հետ բարիդրացիական համաձայնագիր կ'ստորագրեն...

Հայերն ալ, մէկ կողմէ՝ 1915-ի ցեղասպանութիւնը անկարելի է, որ մոռնանք կ'ըսեն, իսկ միւս կողմէն ալ՝ թուրքերուն հետ, «առանց պայմանի» բարեկամական համաձայնագիր կ'ստորագրեն...

Այս ի՞նչ տեսակ խաղ է... Ճիշդ է՝ այս մէկը խաղ մըն է: Աւելի ճիշդ՝ թատրոն է:

Երկու արարնոց թատրոն մը:

**ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ**

Թուրքերը՝ 1915թ. ցեղասպանութիւնը մոռցնելու և իրենց «կլլած» Արեւմտեան Հայաստանը մարսելու համար, ատեն շահիլ կ'ուզեն:

**ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ**

Հայաստանի մէջ այսօր իշխանութեան գլուխը եղողները դարաբաղցի են:

Ղարաբաղցիներուն համար՝ 1915թ. ցեղասպանութիւնը և Արեւմտեան Հայաստանի կորուստը այնքան ալ կարելոր չէ:

Անոնց համար ամէնէն կարելոր հարցը՝ Ղարաբաղն է...

Հայերուն յոյսն է, որ թուրքերուն հետ համաձայնելով՝ թուրքերը ազերիներուն պիտի համոզեն, որ անոնք Ղարաբաղը հայերուն ձգեն:

Կարճ խօսքով՝ Արեւմտեան Հայաստանի դէմ՝ Ղարաբաղը...:

Թիւ 176

«Նայիրի», Բացառիկ, 1 Յունուար 2010

**ՕՍՍԱՆԵԱՆ ԱԻԱՉԱԿ ՄՏԱՅՆՈՒԹԵԱՆ ՉԻՆՈՒՈՐԸ  
ԹԱՅԻՊ ԷՐՏՈՂԱՆԻ՝ ԵՐՈՂԱՆ ՊՐԱԿԵԼՈՒ  
ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ ԿԱՏԱՐԱԾ ՆՈՐ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԸ...:  
2 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2009-ԻՆ ԷՐՏՈՂԱՆ,  
ՉՈՒՅԵՐԻՈՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ՝ ԻՐԵՆՅ  
ԵՐԿՐԻՆ ՄԵՉ ՄԻՆԱՐԵՆԵՐՈՒ ԿԱՌՈՒՅՄԱՆ  
ՈՒ ՊՈՅՈՒԹԵԱՆ «ՈՉ» ԸՍԵԼՈՒՆ ԴԵՄ ԵԼԱԻ:  
ԵՒ ՉՈՒՅԵՐԻԱՅԻՆԵՐԸ «ՅԵՂԱՊԱՇՏ ԵՒ  
ԻՍԼԱՄԻՆ ՀԱԿԱՌԱԿ» ԸԼԼԱԼՈՒ  
«ՄԵՂՔՈՎ» ԱՄԲԱՍՏԱՆԵՅ**

Թուրքիոյ վարչապետ Էրտողան իր կատարած այս խօսքերով՝ վերջին չըջաններուն խաղացած թատրոնին մէջ գործածած «ժողովրդավարի» դիմակը վառ առաւ: Եւ իր իրական դէմքը՝ անգուլթ և նախայարձակ օսմանեան զինուորի մտայնութեան տէր ըլլալն ու մնալը ապացուցանեց:

Ահաւասիկ Թայիպ Էրտողանին իսկական դէմքը. ահա՛ քանի մը տարիներ առաջ անոր ըսածները. «Մինարէները, մեր սուլիներն են: Գմբէթները՝ մեր վահանները: Մզկիթները՝ մեր զօրանոցները, եւ հաւատացեալները՝ մեր զինուորները»:  
1996-TAYYIP ERDOGAN

Այսօր Եւրոպայի մէջ ժողովուրդին հինգ առ հարիւրը թուրք և իսլամ են:

Բայց 2050թ., եւրոպական ժողովուրդին մեծամասնութիւնը... թուրք և իսլամ պիտի ըլլայ: Այս խօսքերը ըսողը՝ մենք չենք:

Հրէայ ու Թրքասէր փրոֆեսոր Պեոնար Լեւիսը ըսած է, տասը տարիներ առաջ, այս խօսքերը: Որովհետեւ, Հրէայ փրոֆեսորը շատ լաւ գիտէ սիոնիստներուն ծրագիրը: Որովհետեւ սիոնիստներուն ծրագիրը ճերմակ ցեղը և քրիստոնէութիւնը բնաջնջել է: Այս պատճառաւ ալ անոնք, Թուրքերը և իսլամները իբր գործիք կը շահագործեն: Որովհետեւ, զուիցերիացի ժողովուրդին մինարէներու գոյութեան «ոչ» ըսելը՝ եւրոպացիներուն կրնայ արթնցնել, և սիոնիստներու ծրագիրը խանգարել:

Այս պատճառաւ սիոնիստներու ձեռքը գտնուող լրատուութեան և «բրորականտի» ցանցը համազարկ բացաւ Զուիցերիոյ դէմ:

Եւ Զուիցերիոյ դէմ ի՞նչ անարգանքներ, ի՞նչ զրպարտութիւններ և, մանաւանդ՝ ի՞նչ սպառնալիքներ ըսես չկատարուեցան:

Այս համազարկին մասնակցեցաւ նաեւ, Ֆրանսայի ԱԳ նախարար, ծագումով Հրէայ Պեոնար Քուչնէրը: Եւ Զուիցերիոյ ժողովուրդին «մինարէներու» դէմ ելլելը՝ «ամօթալի որոշում մը» որակեց:

Եւրոպայի «կանանչներուն» ղեկավարը՝ գերմանացի Հրէայ, որ ապօրինի զաւակ ըլլալուն համար կը հպարտանայ, Լնախկին կարմիր Տանին այժմ կանաչ Տանի կը կոչուի (Daniel Cohn-Benit-ը) աւելի առաջ գնաց և Եւրոպական միութիւնէն պահանջեց, որ Զուիցերիան պատժուի:

Բայց ամէնէն ինքնատիպ և ազդեցիկ առաջարկը՝ Թուրքիոյ ԱԳ նախարար Ահմէտ Տաւուտօղլուն ըրաւ:

«Թուրքերը, ասկէ յետոյ, Զուիցերիան դրամատուներուն հետ պէտք չէ աշխատին: Թուրքերը զուիցերիական դրամատուներու մէջ իրենց ունեցած գումարները ետ քաշելու են», — ըսաւ:

Եւ այսքանն ալ չբաւեր կարծես: Անգարայի զուիցերիական դեսպանատան առջեւ լրնական է՝ Թրքական կառավարութեան Թելադրութեամբ՝ Թուրքերը ցոյցեր կատարեցին...

Եւ այս բոլոր բաները ինչո՞ւ կատարուեցան.— Քանի որ Զուր-  
ցերիոյ ժողովուրդը մինարէններու գոյութեան «ոչ» ըսած էր:

Մտածեցէք անգամ մը... Ասոնք կը կատարուին այն  
պահուն՝ երբ Թուրքիոյ մէջ քրիստոնեայ կրօնականները  
դաշունահարուելով կ'սպաննուին: Քրիստոնէական կրօնա-  
կան գիրքեր կարդալնուն համար մարդիկ ոչխարներու նման  
կը մորթուին:

Եւ Վանի Ախթամար կղզիին վրայի հազարամեայ հայկա-  
կան եկեղեցիին գմբէթին խաչ դնելն անգամ կ'արգելուի:

Եւ մանաւանդ՝ մտածեցէք անգամ մը՝ եթէ այսօր, Եւրո-  
պայի մէջ ժողովուրդին հարիւրին հինգը միայն թուրք և իս-  
լամ է. անոնք եթէ 2050թ. մեծամասնութիւն կազմեն, ինչե՞ր,  
ինչե՞ր պիտի պատահին:

Քրիստոնեաներուն այսօրուան եղբայրականութեան և  
բարեացականութեան բարոյականութիւնը, հանդուրժողու-  
թիւնը զիրենք ամբողջական բնաջնջման կրնայ տանիլ:

1915թ. թուրքերուն սպաննած հայ բնաստեղծ և գրող  
Ռուբէն Սեւակին ըսածին պէս՝ «Թուրը աւելի արդար է  
Նաչէն»:

Եթէ եւրոպացիները այս «քրիստոնէական» մտայնու-  
թեամբ շարունակե՛ն անտարբեր մնալ, իսլամ թուրքերը,  
1915թ. հայերուն դէմ կատարածնուն նման, եւրոպացիներուն  
ալ ցեղասպանութեան կրնան ենթարկել:

Բայց, եւրոպացիներն ալ, «արժան» են ասոր: Գիտենք որ  
եւրոպացիները, 1915թ., թուրքերուն կողմէ հայոց դէմ գոր-  
ծուող ցեղասպանութեան արգելք չեղա՛ն:

Ասոր պատիժը պիտի կրեն:

Թիւ 177

«Նայիրի», 2 Փետրուար 2010, Թիւ 306

**ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՎԵՐՁԱՊԷՍ ԽԵԼԱՅԻ ԶԱՅՆ ՄԸ  
ԲԱՐՉՐԱՅԱԻ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ՄԻԱԿՐՈՒՄ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆ  
ՀԱՅԿ ՊԱՊՈՒԽԱՆԵԱՆԸ ՀԵՏԵԻԵԱԼ ՀԱՏ ԻՐԱՏԵՍ  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐԵՅ՝**

**«ՀԱՅԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՆ ԵՐԵՔ ԱՆՉԱՄ  
ԹՐՔԱԿԱՆ ԾԱԳՈՒՄՈՎ ԽՄԲԱԿՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ  
ՍԱՐՔՈՒԱԾ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՅԱՆ...  
ԱՅՍՕՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐՁԱՊԱՏՈՒԱԾ Է  
100 ՄԻԼԻՈՆ ԹՈՒՐՔԵՐՈՎ ԵՒ ԱՉԵՐԻՆԵՐՈՎ,  
ՈՐՈՆՔ ԿԸ ՄՊԱՌՆԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ:  
ԱՅԼԵԻՍ ԺԱՄԱՆԱԿԸ ԵԿԱԾ Է, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ  
ԿՈՐԻՉԱՅԻՆ ԶԷՆՔ ԶԱՐԳԱՅՆԷ:  
ԱՄՆ, ՈՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱ ՊԷՏՔ Է  
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ Ի ՆՊԱՍՏ  
ՄԻՉՈՅՆԵՐ ԶԵՈՔ ԱՌՆԵՆ»**

Այսօր հպարտութեամբ ըսենք, որ Հայաստանի մէջ Սահմանադրական միավորում կուսակցութեան տնօրէն՝ Հայկ Պապուխանեանին ներկայիս ըսած այս խօսքերը մենք, ճիշդ 21 տարի առաջ՝ 1989թ., Փարիզ-Ֆրանսա մեր հրատարակած «Նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակի գաղափարականը» գիրքին մէջ գրեթէ նոյն խօսքերով գրած էինք արդէն: ԱՀԱԻԱՍԻԿ, 1989թ. ՄԵՐ ԸՍԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ. —

Այսօր՝ Մեծ եղեռնէն 75 տարիներ յետոյ, հայերուն վերջին յոյսը եղող մեր փոքր Հայաստանը, կեղծ առաջնորդներու կողմէ վտանգի ենթարկուած է:

Զմոռնանք, որ Հայաստանը այսօր, կոկորդիլոսի մը բերանին մէջ է: Նայեցէք այսօրուան Հայաստանի քարտէսը: Երեք կողմէ շրջապատուած է թուրքերով, արեւմուտքէն՝ ցեղասպան

Թուրքերով, արեւելքէն՝ ազերի թուրքերով, հարաւէն՝ Պարսկաստանի հիւսիսը գտնուող ազերի թուրքերով:

Եւ այս կոկորդիլոսին բերանը օր մը կրնայ գոցուիլ, ճգմելով ամբողջ հայութիւնը... եթէ [Աստուած պահէ] ուսական բանակը հեռանայ...

Յ. Չ.— 1989, Փարիզ»:

Այո՛... մենք այս խօսքերը 21 տարի առաջ ըսած էինք... բայց ձայն բարբառոյ յանապատի մնացին...

Եւ դժբախտաբար 1991թ., անմիտ և պինդգլուխ հայերը իրենց նստած ծառին ճիւղը կտրեցին...

Եւ բարգաւաճ ու ապահով ձեռքերու մէջ գտնուող Սովետական Հայաստանը քանդեցին... և ուսերուն վռնտեցին:

Եւ Սովետական Հայաստանը քանդող, կայսերապաշտներուն կամակատար Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ հանրապետութեան նախագահ եղաւ...

Եւ Լեւոն Տէր-Պետրոսեանին առաջին գործը եղաւ՝ թուրքերուն հետ եղբայրական կապեր հաստատելու աշխատիլ:

«Փառք Աստուծոյ», որ թուրքերը Արցախի հարցին պատճառաւ ազերիներուն թելադրանքներուն ենթարկուեցան ... և Լեւոն Տէր-Պետրոսեանին «չատ երես չտուին»:

Եւ Արցախի համար Հայաստանի դէմ պատերազմ հռչակող ազերիները Պաքուի, Սումկայիթի և այլուր եղող հայերուն ջարդել սկսան...

Եւ վերջապէս իրականութիւնները հասկցող Վազգէն Սարգսեանի նման հայրենասէր հայերը ուսերէն օգնութիւն ուղեցին:

Եւ ուսերը, պատմութեան մէջ միշտ եղածին նման, եկան և հայերուն ազատեցին...

Այսօր Հայաստան [իբր թէ] անկախ պետութիւն մըն է:

Բայց այսօր, բարեբախտաբար, Հայաստան թուրքերուն դէմ, ուսական բանակին պաշտպանութեան ներքեւ է...

Եւ Աստուած պահէ ուսերը...

Եթէ ոուսերը տկարանան և կամ վտանգի ենթարկուին՝ [1917թ. ոուսական յեղափոխութենէն յետոյ եղածին նման] թուրքերը Հայաստանի վրայ կը յարձակին:

Այն ատեն ալ ոուսական Կարմիր բանակը հայերուն օգնութեան հասած էր...

Ասկէ առաջուան մեր գրութիւններուն մէջ ալ ըսած էինք, հիմա կրկին ըսենք:

Հայաստան, ժամ մը առաջ՝ Ռուսաստանի Դաշնութեան մէջ պէտք է մտնէ զինակցելով...

Այլապէս՝ երեք կողմէ թուրքերու կողմէ չըջապատուած և այսօր կոկորդիլոսի բերնին մէջ գտնուող Հայաստանը կոկորդիլոսին գոհը կ'ըլլայ...

Թիւ 178

«Նայիրի», 2 Մարտ 2010, Թիւ 307

**ՍԵԼԱՆԻԿՅԻ ՏՕՔԹՈՐ ՆԱԶԸՄ (1870-1926)  
13 ՓԵՏՐՈՒԲԱՐ 2010 ԹՈՒԿԿԻՐ ՊՈԼՍԱԿԱՆ  
«ԹԱՐԱՖ» ԹԵՐԹԸ, 1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԷՆ ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆ  
ՏՕՔԹՈՐ ՆԱԶԸՄԻՆ ԴՈՒՓԱԿ ՆԻՍՏԻ ՄԸ ԸՆԹԱՅՔԻՆ  
ԸՍԱԾ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՕՍՔԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ:  
ԱՀԱՄԱՍԻԿ ՍԵԼԱՆԻԿՅԻ ՏՕՔԹՈՐ ՆԱԶԸՄԻՆ  
1915-Ի ՍԿԻԶԲԵՐԸ, ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐԱԾ  
ՍԱՐՍԱԾԱԶԳՈՒ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.-**

«ՀԱՅԵՐԸ ՄԱՀԱՑՈՒ ՎԷՐՔԻ ՄԸ ԿԸ ՆՄԱՆԻՆ:  
ԵԹԷ ԱՏԵՆԻՆ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ ՉԱՌՆԵՍ,  
Ի ՎԵՐՋՈՅ ԱՆ ԿԸ ՍՊԱՆՆԷ ՔԵԶ:

ՄԵՆՔ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՐՄԱՏԱՊԷՍ ՊԷՏՔ Է  
ՄԱՔՐԵՆՔ ՄԵՐ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅԷՆ:  
ՄԷԿ ՀՈԳԻ ԻՍԿ ՊԷՏՔ ՉԷ ՓՐԿՈՒԻ,  
ԵՒ ՀԱՅԵՐՈՒ ԱՆՈՒՆԸ ՊԷՏՔ Է ՄՈՌՑՈՒԻ»:

13 Փետրուար 2010թ., Պոլսոյ «Թարաֆ» թերթին մէջ մարդու իրաւունքներու պաշտպան և փաստաբան Էրէն Քէսքին, մինչեւ այսօր Թուրքիոյ մէջ Հայկական ցեղասպանութեան մասին հրատարակուած ամէնէն զարհուրելի իրականութիւնները հրապարակեց...

Եւ «Իթթիհատ եւ թերաքքի» կուսակցութեան հիմնադիրներէն՝ սելանիկցի բժիշկ Նազըմին Պոլսոյ մէջ, 1915թ. սկիզբները, դռնփակ նիստի մը ընթացքի ըսած, հայոց վերաբերող ու «մահավճիռ» մը եղող հետեւեալ խօսքերը յայտնաբերեց.— «ՀԱՅԵՐԸ ՄԱՀԱՑՈՒ ՎԷՐՔԻ ՄԸ ԿԸ



ՆՄԱՆԻՆ: ԵԹԷ ԱՏԵՆԻՆ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ ՉԱՌՆԵՍ, Ի ՎԵՐՋՈՅ ԱՆ ԿԸ ՍՊԱՆՆԷ ՔԵԶ:

ՄԵՆՔ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՐՄԱՏԱՊԷՍ ՊԷՏՔ Է ՄԱՔ-ՐԵՆՔ ՄԵՐ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅԷՆ:

ՄԷԿ ՀՈԳԻ ԻՍԿ ՊԷՏՔ ՉԷ ՓՐԿՈՒԻ, ԵՒ ՀԱՅԵԶՈՒ ԱՆՈՒՆԸ ՊԷՏՔ Է ՄՈՒՑՈՒԻ»:

\* \* \*

Մարդու իրաւունքներու պաշտպան և փաստաբան էրէն Քէսքինը, տօքթոր Նազրմին հայոց մասին ըսած այս ահուելի խօսքերը Պոլսոյ «Թարաֆ» թերթին մէջ հրատարակելու յանդգնութիւնը ունեցած ըլլալուն համար, զինք սրտանց կը շնորհաւորենք:

Բայց տօքթոր Նազրմին հայ ազգին ցեղասպանութեան յանցապարտներէն ըլլալը՝ ամբողջ աշխարհն ու նաեւ սփիւռքահայութիւնը գիտէին արդէն...

Որովհետեւ 5 Յուլիս 1919-ին, Պոլսոյ մէջ, օսմանեան զինուորական դատարանը, հայ ազգին ցեղասպանութեան պատասխանատուներ նկատելով Թալեաթին, էնվերին, Ճեմալին և նաեւ օսմանեան կրթութեան նախարար սելանիկցի տօքթոր Նազրմին՝ զանոնք, ի բացակայութեան, մահուան դատապարտած էր:

Որովհետեւ յանցապարտները Գերմանիա, արտասահման փախած էին...

... Այս իրականութիւնները՝ միայն Թուրքիոյ մէջ ապրող ժողովուրդներուն համար «Tabou» էր, գիտնալը արգիլուած էր...

Թուրքիոյ մէջ Հայկական հարցի մասին, Հայկական ցեղասպանութեան մասին խօսիլ կարելի չէր:

Որովհետեւ խօսողները, թրքութիւնը անարգած ըլլալու յանցանքով, ծանր պատիժներու կը դատապարտուէին:

Բայց ինչպէ՞ս կ'ըլլայ որ այսօր, այս նիւթին մասին արտայայտուելու համարձակութիւն ունեցողներ կան հոն: Թուրքիոյ մէջ ժողովրդավարութիւնն հաստատուեցաւ...

Ո՛չ, ո՛չ եղբա՛յր... Թուրքիա կոչուած պետութիւնը ինչ որ էր երէկ, այսօր ալ նոյնն է:

Նոյն ցեղասպան պետութիւնն է:

\* \* \*

Իրականութիւնները բացատրելու ջանանք:

[Ասկէ առաջ ալ, այս մասին գրած էինք]:

Այսօր, Թուրքիոյ մէջ կատարուած դէպքերուն բուն պատճառը՝

«1915-ի ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ «ՇՆՈՐՀԻԻ», ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ «ԿԼԼԱԾ» ԱՅՍՕՐՈՒԱՆ ՇԻՆԾՈՒԹՈՒՐՔ ՊԵՏՈՒԹԵԱՆ «ԱՆՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ» ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԸԼԼԱՆ Է»:

1915-ի Հայկական ցեղասպանութիւնը՝ երիտթուրքեր կոչուած սելանիկցի դաւանափոխներուն կազմած «Իթթիհատ վէ թերաքքի» կուսակցութեան կառավարութիւնը ծրագրեց և իրականացուց:

Բայց իթթիհատականները Հայկական ցեղասպանութիւնը գործադրելու համար, քիւրտերուն իբր դահիճ գործածեցին:

Աւելի ետք, Մուստաֆա Քեմալն ալ՝ քիւրտերուն շնորհիւ, իշխանութեան գլուխ եկաւ...

Բայց Մուստաֆա Քեմալ ու իր արբանեակները քիւրտերուն ոչ մէկ իրաւունքը ճանչցան:

Ընդհակառակն՝ թուրքերը 1923թ. մինչեւ այսօր, հայերուն ըրածնուն նման, քիւրտերուն ցեղասպանութեան ենթարկել ջանացին...

Բայց քիւրտերը, հայոց նման զոհաբերուելու պատրաստ գառնուկի պէս ազգ մը չեն...

Քիւրտերը՝ 1923թ. մինչեւ այսօր, թուրքերուն դէմ պատերազմեցան... ու կը կռուին...

Եւ 1990թ., Իսրայէլի շնորհիւ, Հիւսիսային Իրաքի մէջ ինքնավար քրտական պետութիւն մը հիմնեցին...

Եւ հիմա կարգը, 1915թ. Հայկական ցեղասպանութենէն յետոյ, Արեւելեան Անաթոլիա [Արեւմտեան Հայաստան] տեղաւորուող քիւրտերուն ինքնավարութիւն հռչակելուն եկաւ...

Եւ այսօր, քիւրտերուն բուն և վերջին նպատակը՝ մեծ և անկախ քրտական պետութիւն մը հիմնելն է...

Եւ իբր եզրակացութիւն ըսենք՝

1923թ. մինչեւ այսօր, Թուրքիա կոչուած շինծու պետութեան մէջ կատարուած բոլոր խռովութիւններուն, բոլոր արիւնոտ բախումներուն բուն պատճառը...

1915թ. Թուրքերու և քիւրտերու կողմէ ցեղասպանութեան ենթարկուած հայ ազգին ժառանգը ձեռք անցրնելու համար, Թուրքերու և քիւրտերու միջեւ ընթացող ԺԱՌԱՆԳԻ ԿՌԻՒՆ է:

Թիւ 179

«Նայիրի», 30 Մարտ 2010, Թիւ 308

**ՀԻՄՆԳ ՄԱՐԴԸ = ԹՈՒՐԷՒՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐՏՈՂԱՆ  
ԹՈՒՐԷՒՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐՏՈՂԱՆ 16 ՄԱՐՏ 2010-ԻՆ -  
BBC-Ի ԹՂԹԱԿՅԻՆ ՏՈՒՄՑ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ...**

**«ԱՄԵՐԻԿԱՆ ԵԹԷ ԸՆԳՈՒՆԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ,  
ՄԵՆՔ ԱԼ ԹՈՒՐԷՒՈՅ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ 100,000 ԼՅԱՐԻՐ ՀԱՉԱՐԻ  
ՀԱՅԵՐԸ ՍԱՀՄԱՆԷՆ ԴՈՒՐՍ ԿԸ ՀԱՆԵՆՔ»**

**ՄՊԱՌՆԱԼԻՔԸ ԿԱՏԱՐԵՐ Է:**

**ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐՏՈՂԱՆ ԻՐ ԱՅՍ ԽՕՍԷՐՈՎ, 1915Թ. ՀԱՅՎԱԿԱՆ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐՈՂ ԹԱԼԵԱԹ ՓԱՇՏՅԷՆ  
ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԵՆԱԸ ԵՒ ՆՈՅՆ ՎԱՅՐԱԳ, ԶԱՐԳԱՐԱՐ  
ԵՒ ՅԵՂԱՍՊԱՆ ՕՍՄԱՆՅԻ ԹՈՒՐԷՒՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԸ ԸԼԼԱԸ,  
ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍՈՒԼԻՆ ԱՈՋԵՒ, ԱՊԱՅՈՒՅԱՍ ԵՂԱՒ**

Մենք, ասկէ առաջուան գրուածիւններու մէջ, էրտողանին  
վտանգաւոր մարդ մը ըլլալը ըսած էինք:

Եւ 21 Մարտ 2006-ին «Նայիրի»-ի մէջ սապէս գրած էինք.

«Թուրքիոյ վարչապետ էրտողանը տրամաբանութիւն  
չունեցող մարդ մըն է:

Այս անտրամաբան մարդը՝ Թէ՛ Թուրքիոյ և Թէ՛ աշխարհի  
գլուխը կրնայ փորձանքի ենթարկել: Ուշադրութի՛ւն ըրէք այս  
մարդուն»:

Այդ պատճառաւ հիմա ալ կ'ըսենք, որ վարչապետ էրտո-  
ղան հիւանդ է:

\* \* \*

Բայց հիւանդ եղողը միայն վարչապետ էրտողանը չէ:

Թուրքիոյ պետութիւնը, իր ամբողջութեամբ՝ հիւանդ է:

Եւ այս հիւանդութիւնը նոր բան մը չէ:

Դարերէ ի վեր կը շարունակուի...

19-րդ դարուն Օսմանեան կայսրութեան անունը՝ «հիւանդ  
մարդ» էր:

Որովհետեւ, Օսմանեան կայսրութիւնը ճարճատիլ, փլչիլ սկսած էր...

Եւ իր վերջին տարիները կ'ապրէր...

13-րդ դարուն վերջաւորութեան, Միջին Ասիայէն գալով Անաթոլիա խուժող օսմանեան ցեղախումբը յարդի խուրճի պէս բռնկելով, իր վայրագութեամբ և աղուէսային խորամանկ ռազմավարութեամբ, մինչեւ Վիէնայի դռներուն առջեւ հասնող կայսրութիւն մը կազմած էին:

Բայց, յարդի բոցը շուտ կը մարի:

Եւ օսմանցիները պիտի քշուէին Միջին Ասիոյ տափաստանները, ուրկէ եկած էին անոնք:

Բայց երոպացիներու և ռուսերու միջեւ օսմանեան ժառանգը բաժանելու պայքար սկսաւ:

Եւ երոպացիները օսմանցիներուն Անաթոլիա մնալը ուզեցին ու որոշեցին, որ ռուսերուն Միջերկրական ծով իջնելնուն արգելք ըլլան:

Եւ կրկին երոպացիներուն որոշումով՝ օսմանցիներուն Անաթոլիոյ մէջ մնալը ապահովելու համար, պատմութեան գիտցուած թուականէն ի վեր Անաթոլիոյ տէրը եղող հայերը և յոյները, 1915-էն մինչեւ 1923 երկարող տարիներուն, ցեղասպանութեան ենթարկուեցան:

Եւ հայերու և յոյներու հայրենի հողերուն վրայ, շինծու թրքական պետութիւն մը ստեղծեցին:

Ահա, թէ ինչու և ինչպէս, Թուրքիա ըսուած ճիւղ պետութեան մէջ, 1923թ. մինչեւ այսօր կատարուած ողբերգական բոլոր դէպքերուն բուն պատճառը, հայերուն և յոյներուն հայրենիքը «կլլող» թուրքերուն անցուցած անմարսողութեան տազնապներն են:

Դո՛ւք, թուրքեր՛...

Հայերուն և յոյներուն հայրենիքը «կլլելը» կը կարծէիք, թէ այնքան շո՞ւտ պիտի կարենայիք մարսել...

Թուրքիա հիւանդ է՝ և շատ ծանր հիւանդ...

Եւ թուրքերը, մինչեւ այսօր իրենց կատարած ցեղասպանութիւններուն պատիժը պիտի կրեն:

Թիւ 180

«Նայիրի», 30 Մարտ 2010, Թիւ 309

**ԳՈՂՅՈՒԱՍ ՀԱՅՐԵՆԻՔԸ -****1915Թ. ՀԱՅՈՑ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ****95-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԸ****ԹՈՒՐՔԵՐԸ, 1915Թ. ՀԱՅԵՐԸ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ****ԵՆԹԱՐԿԵԼՈՎ, 5000 ՏԱՐԻՆԵՐԷ Ի ՎԵՐ ՀԱՅԵՐՈՒՆ****ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՂՈՂ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳՈՂՅԱՆ:****ԵՒ ԳՈՂՅՈՒԱՍ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐՈՒՆ****ՎՐԱՅ ԱՅՍՕՐՈՒԱՆ ՇԻՆՇՈՒ ԵՒ ՃԻՒԱՂ ԹՈՒՐՔԻԱՆ ՍՏԵՂՇԵՅԻՆ:****ՀԱՅ ԱՉԳԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՇՆԱՄԻՆ****Ո՛Վ Է... ԳԻՏԷ՛Ք... ԹՈՒՐՔԵՐԸ: ԲԱՅՅ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ****Ի՛ՆՉ ԳԱՉԱՆ ԵՒ ԶԱՐԴԱՐԱՐ ԸԼԼԱԸ ԱՄԲՈՂՁ****ԱՇԽԱՐՀԸ ԳԻՏԷ... ԱՅՂ ՊԱՏՃԱՌԱՄԻ ԹՈՒՐՔԵՐԸ ԻՐԵՆՅՑ****ԳԱՉԱՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՐԱՏԵՒ ԳՈՐԾԱԴՐԵՅԻՆ**

Հայ ազգին թշնամիներուն մեղսակիցներ եղան այն հայ [ղաջնակ] ղեկավարները, որոնք 1908-ին «Hürriyet»-ի տարիներուն իթթիհատական ղեկավարներուն հետ մասոնական «եղբայրութիւն» հաստատեցին:

Եւ այս ղեկավարները մինչեւ 1915, թուրքերուն «եղբայրութիւն» խօսքերուն հաւատացին:

Եւ այս հայ որոշ ղեկավարներուն, թուրքերուն «եղբայրութիւնի» մասին խօսքերուն միամտաբար հաւատացած ըլլալնէն օգտուելով, թուրքերը 1915-ին, Առաջին աշխարհամարտին խառնակութիւններն ալ պատեհ առիթ սեպելով, հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին... և պարպուած Արեւմտեան Հայաստանին տէրը դարձան...

Այս օրերուն թուրքիա ըսուած խառնակ երկրին մէջ հայոց մասին շատ խօսիլ սկսած են:

Եւ կարգ մը խղճամիտ թուրքեր, 1915-ին հայոց ենթարկուած ցեղասպանութեան մասին շատ մարդկային, յուզիչ գրութիւններ կը հրատարակեն: Մենք իրենց շնորհակալութիւն կը յայտնենք:

\* \* \*

Բայց, ոչ մէկը բուն իրականութիւնը կ'ըսէ:

Մէկը չըսեր, որ օսմանցի ըսուած ցեղախումբը, 13-րդ դարու վերջաւորութեան, Կեդրոնական Ասիայէն գալով, ահռելի վայրագութեամբ նախ Անատոլիան գրաւեցին: Յետոյ, քանի մը դարերու ընթացքին, մինչեւ Վիէնայի դռները հասան...

... Բայց միջոց մը յետոյ, ռուսերուն օգնութեամբ, Պալքանեան ազգերը օսմանցիներուն վճռեցին:

Եւ 1912թ. պուլկարները պատերազմելով, մինչեւ Պոլսոյ չրջակայքը հասան: Մերօրեայ [Չաթայճայա ըսուած և Պոլսոյ մաս կազմող մէկ թաղամասի]:

Եւ պուլկարներուն համար Պոլիսը գրաւելը շատ դիւրին բան մըն էր...

... Ահա, այն օրերուն, կայսերապաշտ պետութիւնները միջամտեցին...

Եւ օսմանցիներուն իրենց մեկնակէտը՝ մինչեւ Ասիա վերադառնալուն արգելք եղան, «օսմանցիներուն տեղը՝ ռուսերը չգան» ըսելով...

Կայսերապաշտներն իրենց այս որոշումով հայ ազգին մահուան վճիռը տուած եղան:

Օսմանեան կայսրութեան մաս կազմող բոլոր գերի ազգերը՝ հունգարները, սերպերը, յոյները, պուլկարները, ալպանացիները, արաբները — բոլորը ազատութեան տիրացան: Եւ իրենց հողերուն վրայ մէյմէկ պետութիւն հիմնեցին:

Եւ կործանած Օսմանեան կայսրութեան մէջ, միայն մէկ ազգ գոհուեցաւ՝ հայերը, որոնք կայսերապաշտներուն զոհը եղան:

Որպեսզի ուուսերը Միջերկրական ծով չիջնան պատրուակով, գաղութարար-կայսերապաշտները 1915թ., թուրքերուն ձեռամբ, հայ ազգը ցեղասպանութեան ենթարկել տուին:

... Եւ ինչ տեսակի ապօրինի արարած մը ըլլալին յայտնի չեղող թուրքերուն մէջտեղ բերին:

\* \* \*

Հայ ազգին մեծագոյն թշնամիին շարքին կը դասուին, որպէս մեղսակից, այն հայ ղեկավարները, որոնք, իրենց ազգավնաս ընթացքով, դիւրացուցին [կամայ-ակամայ] հայութեան դէմ ծրագրուած դաւերու գործադրութիւնը:

95 տարիներէ ի վեր, մասնաւորապէս այս ղեկավարներուն յանձնարարութեամբ, հայերը ամէն տարի 24 Ապրիլին, «թուրքերը 1915-ին մէկուկէս միլիոն հայեր ցեղասպանութեան ենթարկեցին» ըսելով կուլան...

Բայց թուրքերը հայ ազգը ինչո՞ւ ցեղասպանութեան ենթարկեցին:

Արեւմտեան Հայաստանին տէրը դառնալու համար:

Օսմանցիները, ինչպէս որ Սերպիայէն, Յունաստանէն, Պուլկարիայէն և արաբական երկիրներէն վճռուեցան, նոյնպէս ալ Արեւմտեան Հայաստանէն պիտի վճռուէին: Եւ Օսմանեան կայսրութիւնը ամբողջութեամբ պիտի կործանէր:

Կայսերապաշտները 1915թ., հայերը ցեղասպանութեան ենթարկել տալով, պարպուած հայկական հողերուն վրայ օսմանցիներուն նոր հայրենիք մը նուիրեցին:

\* \* \*

Հայերը ամէն տարի՝ 24 Ապրիլին, անարժան, ատեն մը օտարի ծառայութեան մտած ծանօթ ղեկավարներու հետեւողութեամբ, «մէկուկէս միլիոն հայեր սպաննուեցան» ըսելով կուլան:

Մեռնողներուն տեղ նոր սերունդներ կուզան: Բայց գողցուած հայրենիքը ետ չի գար:



Այդ պատճառաւ հայերը «մէկուկէս միլիոն հայեր սպան-  
նուեցան» ըսելով լալու տեղ, աւելի ճիշդ ըրած պիտի ըլլան  
եթէ ողբան ու մեղադրեն. «Թուրքերը մեր հայրենիքը՝ Արեւմ-  
տեան Հայաստանը գողցան»:

Թիւ 181

«Նայիրի», 25 Մայիս 2010, Թիւ 310

**ՀԱՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԳՈՂՃՈՂ  
ՃԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՀԱՅՈՑ ԴԵՍ ԿԻՐԱՐԿԱԾ  
ԱՍԵՆԷՆ ԽՈՐԱՍԱՆԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ՝  
«ԺԱՄԱՆԱԿ ՇԱՀԻՆ» Է**

Հայերը 1915թ. ի վեր կ'աշխատին, որ «աշխարհ» ճանչնայ  
այն ցեղասպանութիւնը, որուն ենթարկուեցաւ հայութիւնը:

Եթէ նոյնի՛սկ ամբողջ աշխարհն պաշտօնապէս ճանչնայ  
Հայոց ցեղասպանութիւնը, ի՞նչ պիտի ըլլայ օգուտը Հայոց  
համար:

Թուրքերը իրենց գողցած Արեւմտեան Հայաստանը ետ՝  
Հայոց պիտի վերադարձնե՞ն:

1915թ. մինչեւ այսօր, 95 տարիներ անցան...

Թուրքերը մինչեւ այսօր բռնագրաւած կը պահեն Արեւմ-  
տեան Հայաստանը:

Թուրքիոյ Հանրապետութեան 10-րդ տարեդարձին եր-  
գուած քայլերգը կրկին յիշենք:

1923–1933 տարիներուն մանաւանդ, տասնամեակ մ'ամ-  
բողջ, թրքական քայլերգը սապէս կ'սկսէր՝

«Տասը տարուան մէջ 15 միլիոն երիտասարդ ստեղծե-  
ցինք»:

Թուրքերը, Հայոց և յոյներուն ցեղասպանութեան ենթար-  
կուելնուն պատճառաւ, Անաթոլիոյ պարպուած հողերուն  
վրայ բնակեցուցին Պալքաններէն գաղթել տուած [իրը թէ]

իսլամ, իրականութեան մէջ դաւանափոխ եղած քրիստոնեաները – Pomiaak-ները, Bosniak-ները, յոյներն և արպանացիները:

Ասոնց վրայ աւելցուցէք 14-րդ դարէն սկսեալ մինչեւ 1915–1923 թուականները, չջարդուին ըսելով դաւանափոխ եղած միլիոնաւոր հայերը:

Ահա, այս ձեւով ստեղծուեցան, տասը տարուան մէջ, 15 միլիոն [իբր թէ] թուրքեր...

... Մինչեւ 1915 թուականը օսմանցիները, բռնի իսլամացման քաղաքականութիւնը կը կիրարկէին:

Մինչդեռ 1923թ. յետոյ Մուստաֆա Քեմալ, իր ծայրայեղ ցեղապաշտ, ֆաշիստ գաղափարախոսութեամբ, թուրքիոյ ամբողջ տարածքին վրայ, թրքացման ուսումնավարութիւն մը գործադրեց:

«Ինչ երջանիկ է այն, որ թուրք եմ կ'ըսէ» կարգախօսը, Մուստաֆա Քեմալին ցեղապաշտ ուղղավարութեան ամէնէն ցայտուն ապացոյցներէն մէկն է:

\* \* \*

Թուրքերուն ամէնէն կարեւոր ուղղավարութիւնը՝ «ժամանակ չահիլ է» ըսած էինք:

Թուրքերը այս ուղղավարութեան մէջ յաջողեցան:

Որովհետեւ 1923թ. մինչեւ այսօր, հակառակ «ժողովրդավար պետութիւն ենք» ըսելով իրենց կատարած սուտ քարոզչութիւններուն, թրքացման այդ ահռելի ուղղավարութիւնը, բոլոր մարզերու մէջ, մեծ ուժգնութեամբ կը շարունակուի:

Եւ թուրքերը 1923թ. մինչեւ այսօր, թրքացման այս ծրագրով, 1933թ. 15 միլիոն թուրքէն այսօր 70 միլիոննոց թուրքիա մը ստեղծեցին:

Այս 70 միլիոն եղող [իբր թէ] թուրքերը, «քեմալիզմ» ըսուած ցեղապաշտ վարչաձեւին դպրոցներու մէջ տարածած ստայօղ գաղափարներով դաստիարակուեցան:

Եւ այս թուրքերուն ուղեղները «լուացուեցան»:

Եւ այս դաստիարակութեամբ «Աթաթիւրքի երիտասարդութիւն» ըսուած մարդամեքենաներու, (Robot)-ներու սե-

րունդներ մէջտեղ եկան, որոնք շատ կը նմանին Հիթլերի «Hitler Jugend»-ներուն – [Հիթլերական երիտասարդութեան]:

Եւ այս նոր [Թուրք-մարդուն] ծիները որքան ալ հայ, յոյն, փոմիաք, պոսնիաք կամ ալպանացի ըլլան, այս մարդիկ, 1923թ. մինչեւ այսօր, շատոնց իրենց «ինքնութիւնը» մոռցած են:

Եւ 1923-էն մինչեւ այսօր, [մինչեւ 2010թ.], գրեթէ 3 նոր սերունդներ յառաջացան «նոր» Թուրքիոյ մէջ:

Եւ այսօր այդ սերունդները բոլորովին իրենց նախնիները մոռցած, ամբողջապէս թրքացած սերունդ մը կը ներկայացնեն: [Քանի մը բացառութիւնները նկատի չառնենք]:

... Օսմանեան շրջանի ենիչերիները իրականութեան մէջ քրիստոնեաներու զաւակներ էին:

Բայց այս քրիստոնեայ տղաքը՝ քանի մը տարուան խիստ դաստիարակութեամբ, վայրագ օսմանցի ուղղակիներու կը վերածուէին: Եւ անգլիացի պատմագէտ Առնոլտ Թոյնպիին գրածին պէս... «Այս ենիչերիները այն աստիճան օսմանցիներու կը վերածուէին, որ իրենց հարազատ մայրերը ու հայրերն անգամ սուրէ կ'անցընէին»:

Ժամանակը և դաստիարակութիւնը շատ բան կը փոխեն: Եւ ցեղապաշտ Մուստաֆա Քեմալի վարչաձեւը շատ բան փոխեց:

Եւ այսօր, Թուրքիոյ մէջ, ցեղապաշտ Մուստաֆա Քեմալի վարչաձեւը և քաղաքականութիւնը նոյնութեամբ կը շարունակուի... Որովհետեւ ցեղասպան թուրքերը մինչեւ այսօր չպատժուեցան...

Թուրքերը մէկ կողմէ՝ հայերու հետ բարի յարաբերութիւններու «Protocole» կ'ստորագրեն...

Միւս կողմէ ալ՝ Ապրիլ 2010թ., Պաքուի թուրանական համաժողովին մէջ, մեծ և նոր թրքական կայսրութիւն մը կազմելու ծրագիրներ կը մշակեն:

Ապրիլ 2010թ., համաժողովին մասնակցող թուրանականները, հետեւեալ որոշումը կ'առնեն.

«Մէկ ԱԶԳ, ԵՕԹ ՊԵՏՈՒԹԻՒՆ»:

Այսինքն՝ եօթը թրքախօս պետութիւնները պիտի միանան  
և մէկ պետութիւն կազմեն:

\* \* \*

Մենք՝ հայերս, մինչեւ այսօր թուրքին «ի՞նչ ըլլալը» չենք  
հասկցած:

1915-ին թուրքերը եղբայրութեան սուտերով մեզ քնա-  
ցուցին և նոյն տարիներուն ալ՝ հայութիւնը ցեղասպանութեան  
ենթարկող [1915[թ.] իրենց ծրագիրները պատրաստեցին:

Այսօրուան թուրքերը՝ հայերու հետ «Protocole» կ'ստո-  
րագրեն: Բայց մէկ կողմէն ալ, Պաքուի մէջ, թուրանական  
կայսրութիւն կազմելու կը պատրաստուին...

Արթնցէ՛ք, հայեր:

1915-էն մինչեւ այսօր, թուրքերուն ի՞նչ ըլլալը չհասկ-  
ցաք...:

Այսօր թուրքերը մեզ ամբողջական բնաջնջման ենթար-  
կելու կը պատրաստուին:

Ալ կը բաւէ... ինչքան որ խաբուեցանք ցարդ... Լաւ բացէք  
ձեր աչքերը այլեւս... Եւ տեսէք իրականութիւնները:

Թիւ 182

«Նայիրի», 22 Յունիս 2010, Թիւ 311

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ  
ԿԱՉՄԱԿԵՐԴՈՒԹԵԱՆ ԴՈՒՍՈՅ ՄԱՍՆԱՃԻՂԸ,  
24 ԱՊՐԻԼ 1915-Ի` ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ  
ՉՈՇԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ, 24 ԱՊՐԻԼ 2010-ԻՆ,  
ԹԱՔՍԻՄԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ ԵՒ ՀԱՅՏԱՐ ՓԱՇԱՅԻ  
ԿԱՅԱՐԱՆԻՆ ԱՌՋԵՒ ՃՈՅՅԵՐ ԿԱՏԱՐԵՅ**

Թաքսիմի հրապարակը և Հայտար փաշայի կայարանին առջեւ 30-40-ի շուրջ մարդասէր հայ, քիւրտ և թուրքեր, ձեռքերնին 24 Ապրիլ 1915-ի ցեղասպանութեան զոհերէն մէկ քանին նկարներով, լուսանկարիչներու կողմէ տեւաբար նկարուեցան...

Եւ այս նկարները, կայծակի արագութեամբ, ամբողջ աշխարհի թերթերուն և հեռատեսիլներուն կողմէ ցուցադրուեցան:

Եւ ամբողջ աշխարհ հաւատաց, որ թուրքիան այլեւս շատ ժողովրդավար և արդար երկիր մըն է:

Եւ մասնաւորապէս Hillary Clinton-ը և Barack Obama-ն, թուրքիոյ մէջ նկատուած այս մարդասիրական [իբր թէ] զարգացումը սրտանց շնորհաւորեցին...:

Սփիւռքի հայկական մամուլն անգամ, Պոլսոյ մէջ 24 Ապրիլին կատարուած ցոյցերը դրական յառաջացում որակեց:

Մենք ալ կը շնորհաւորենք:

Որո՞ւ...

Մարդու իրաւունքներու միջազգային կազմակերպութիւնը կը շնորհաւորենք...

Շատ կատարեալ բեմադրութեամբ յաջող թատրոն մը ներկայացուցին...

30—40 հոգիի... ձեռքին նկարներ տուր և քանի մը նահատակի նկարները ամբողջ աշխարհի մամուլէն և հեռատեսիլէն ցուցադրէ...

Եւ ամբողջ աշխարհին հաւատացուր, որ Թուրքիոյ մէջ այլեւս չատ բան փոխուած է, Թուրքիան մարդու իրաւունքներու պաշտպան երկիր մըն է:

Այս տեսակ յաջողութիւն մը միայն միջազգային մեծ դրամատէրերու կազմակերպութեան մէկ ճիւղաւորումը եղող Մարդու իրաւանց կազմակերպութեան կողմէ կրնայ կատարուիլ...

\* \* \*

Իրականութեան մէջ Թուրքիա ըսուած Փաշիստ պետութեան մտայնութեան մէջ, ոչ մէկ փոփոխութիւն և բարելաւում կայ:

Այսօրուան Թուրքիան, 1908—1915-ի՝ իթթիհատական Թալեաթ փաշայի կառավարութենէն շատ անելի ծայրայեղ, ցեղապաշտ, թուրանական, Փաշիստ մէկ պետութիւն է:

Մինչեւ 1915 թուականը, Թալեաթ փաշային հայերուն դէմ կիրարկած երկերես, խորամանկ քաղաքականութիւնը՝ այսօրուան Թայիպ էրտողանի կառավարութիւնը նոյնութեամբ կը գործադրէ:

Մինչեւ 1915թ. Պոլսոյ մէջ, հայ որոշ ղեկավարներ՝ Թալեաթ փաշային կիրարկած երկերես «Թատրոնը» չկրցան հասկնալ:

Կրնա՞ք երեւակայե՛լ, մինչեւ 1915 թուականը հայ որոշ ղեկավարներ Թալեաթ փաշային Փարմասոնական եղբայրութեան ձաբուտութիւններուն հաւատացին:

Եւ ըլլայ դաշնակ. ըլլայ ուրիշ կուսակցութեանց կեդրոնական կազմակերպութիւնները և ասոնց առաջնակարգ ղեկավարները մինչեւ 1915 թուականը Պոլսոյ մէջ կը գտնուէին...

Եւ մենք մինչեւ այսօր, այդ կուսակցութեանց ու մանաւանդ ՀՅԴ-ի ղեկավարներուն այսքան միամտօրէն թուրքերուն հաւատացած ըլլալնուն պատճառը չենք կրցած հասկնալ:

Այս անհեռատեսութեան հետեւանքը ի՞նչ եղաւ, հայ ղեկավարները իրենց անմտութեան պատիժը՝ իրենց կեանքովը քաւեցին...

Եւ թուրքերը 24 Ապրիլ 1915-ին, միամիտ հայ ղեկավարները «տանձ հաւաքելու» նման մէկիկ-մէկիկ ձերբակալեցին և բոլորն ալ մահուան առաջնորդեցին:

\* \* \*

Այսօր Պոլիս ապրող հայերուն համար կ'ուզենք կէտ մը շեշտել –

1915-էն առաջ և 1915-էն յետոյ:

Մինչեւ 1915 թուականը Օսմանեան կայսրութեան մէջ Արեւելեան Անաթոլիոյ նահանգներուն անունը՝

«Արեւմտեան Հայաստան» էր:

24 Ապրիլ 1915-ի ցեղասպանութեան իբր հետեւանք՝ այսօր «Արեւմտեան Հայաստան» գոյութիւն չունի...

Եւ այսօր, Պոլսոյ մէջ սրատումէ մնացորդ շուրջ 50 հազար հայեր կ'ապրին...

Եւ Պոլսոյ հայերը այսօր, թուրքերուն ձեռքը, պատանդ են, գերի են:

Եւ Պոլսոյ հայերը՝ գերիներու հոգեվիճակով, թուրքերուն պարտադրած բոլոր «մասալները» կրկնելու ստիպուած են:

... Պոլսոյ հայերուն մէջ «Հայկական ոգի» ունեցող հայեր ալ կան:

Այս «Հայկական ոգի» ունեցող հայերէն մէկը Հրանդ Տինքն էր:

Հրանդ Տինքը մալաթիացի հայրենասէր հայ մըն էր:

Եւ Հրանդ Տինքը հայկական բոլոր իրականութիւնները թուրքերուն երեսին բացէ ի բաց ըսելու քաջութիւնը ունեցաւ:

... Բայց, Հրանդ Տինք, Փարմասոն Գրիգոր Զօհրապի նման, թուրքերուն հետ միասին, եղբօր պէս ապրելու կարելիութեան հաւատացող միամիտ հայ մըն էր:

Եւ թուրքիոյ՝ Եւրոպական միութեան մէջ մտնելու կարելիութեան համար Հ. Տինքը շատ աշխատանք տարաւ...

Հակառակ Հրանդ Տինքին թրքասեր կեցուածքին, թուրքերը սպաննեցին զինք՝ Հրանդ Տինքը...

\* \* \*

Թուրքերուն նոր Թալեաթ փաշան, վարչապետ Էրտողան, 24 Ապրիլ 1915-ի Հայկական ցեղասպանութեան 95-րդ տարելիցէն միջոց մ'առաջ [26 Մարտ 2010, Անգարայի վարչապետարանի շէնքին մէջ կ'ընդունի Պոլսոյ ետիքուլէի Հայկական հիւանդանոցի հիմնարկին «Yakif» ատենապետ Պետրոս Շիրինօղլուն: Ինչո՞ւ...

Պետրոս Շիրինօղլուն Թուրքիոյ վարչապետին հետ ի՞նչ գործ ունի...

... Սպասեցէք... հիմա բացատրելու պիտի ջանանք:

Պոլսոյ հայերուն մասին քիչ վերը գրած էինք:

«Պոլսոյ հայերը, գերիներու հոգեվիճակով, թուրքերուն պարտադրած բոլոր «մասալաները» կրկնելու ստիպուած են»:

Պետրոս Շիրինօղլու վարչապետ Էրտողանի հետ տեսակցելէ յետոյ, հետեւեալ յայտարարութիւնը կը կատարէ.

«1915թ. կատարուած դէպքերը՝ շատ մտերիմ երկու ընկերներու, իրար շատ սիրող գործակիցներու միջեւ ստեղծուած երկպառակութիւն է:

Այս երկպառակութեան պատճառաւ, իրար շատ սիրող ընկերներու կռիւր՝ դժբախտաբար շատ վատ կ'աւարտի:

Այս կռիւր 100 տարի առաջ պատահած է: Ասիկա մոռնալ պէտք է:

Թուրքիոյ ապագային համար աշխատիլ պէտք է...»:

Մենք ալ, այս Պետրոս Շիրինօղլուին սա պատասխանը պիտի տանք՝

Հայ ազգին գլխաւոր թշնամին՝ ծախուած հայ կարգ մը «ղեկավարներն» են:



Թիւ 183

«Նայիրի», 27 Յուլիս 2010, Թիւ 312

### «ԹՐԵԱԿԱՆ ՄԵԾ ԹԱՏՐՈՆ»

1-6-2010

Այստեղ թարգմանաբար կը հրատարակենք Պոլսոյ թրքական «Hürriyet» թերթին մէջ «Gaza» ողբերգութեան հետեւեալ օրը լոյս տեսած գրութեան վերնագիրները:

«ԱՇԽԱՐՀ ՈՏՔԻ ԵԼԱԾ Է»

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶՈՒՐԵՐՈՒ ՄԷՋ ԱՐԻՒՆՈՏ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ»

«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆ»

«ԷՐՏՈՂԱՆ ՇԱՏ ԽԻՍՏ Է՝ ՊԵՏԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ»

\* \* \*

Մեր գրութեան վերնագրին մէջ, 31 Մայիս 2010-ին «Gaza»-ի բացերը կատարուած արիւնոտ դէպքերը «թրքական մեծ թատրոն» որակեցինք:

Որովհետեւ Թուրքիոյ վարչապետ էրտողան, «յառաջադիմական» թուրք երիտասարդները Gaza-ի բացերը՝ մահուան ուղարկելով, թրքական ծրագիրները իրագործելու համար, չատ մեծ թատրոն մը բեմադրեց:

էրտողան իր այս թատրոնը անցեալ տարի, Զուիցերիոյ «Davos» քաղաքին մէջ կատարուած վեհաժողովին սկսած էր խաղալ:

Իսրայէլի Հանրապետութեան նախագահ Shimon Perez «Մէկ վայրկեան» [Ուան մինիթ] ըսելով, պաղեստինեան ժողովուրդին իրաւունքները պաշտպանած և արդարութեան առաքեալի դեր ստանձնած էր:

31 Մայիս 2010-ին ալ, «Կապոյտ Մարմարա» նաւով պաղեստինեան ժողովուրդին [իբր թէ] օգնութիւն ուղարկելով, իսլամ ժողովուրդներուն համակրանքը շահեցաւ:

Կրօնամոլ վարչապետ Էրտողանին նպատակը՝ 1924թ. օսմանեան վերջին սուլթանով պատմութեան առնչուած իսլամ մարգարէներուն երկրային ներկայացուցիչը ըլլալու տիտղոսը եղող «Հալիֆէ» անունը վերստին ստանձնել էր:

Էրտողանին բուն նպատակը՝ «Հալիֆէ» տիտղոսով իսլամական պետութիւններուն առաջնորդ դեկավարը ըլլալ է: [Իսլամ պետութիւնները, մանաւանդ ներկայ արաբ պետութիւնները, դարեր տելոդութեամբ օսմանեան գրաւման շրջաններուն թուրքերուն արաբ ժողովուրդին դէմ կատարած վայրագութիւնները կրնա՞ն մոռնալ արդեօք]:

Թուրքիոյ վարչապետ Էրտողանին երեւակայութեան սահմանները շատ ընդարձակ են:

Էրտողանին նպատակներէն մէկն ալ՝ Օսմանեան կայսրութիւն վերստեղծելն է:

Այս պատճառաւ Էրտողան, Պալքաններու մէջ դեռ հեռու անցեալին քրիստոնեայ եղող, բայց օսմանեան վայրագութիւններու հետեւանքով ու սպառնալիքի տակ դաւանափոխ եղած, իսլամացած պոսնիաքները, ալպանացի առնաւուտներն ու պուլկար փոմիաքները տեւապէս կը գրգռէ:

Էրտողանի ուրիշ մէկ երազն ալ՝ թուրանի տեսիլքն է: Ասիոյ մէջ գտնուող թուրանական ցեղին պատկանող պետութիւններուն հետ մեծ միութիւն մը հիմնել...:

\* \* \*

Բնական է՝ Էրտողանի այս «մեծամոլական» երազները այսօր, աշխարհի տէրը եղող կայսերապաշտներուն սկսած է անհանգստացնել ու նոյնիսկ՝ վախեցնել:

Էրտողանին մէկ ուրիշ «նպատակը» եղող — Թուրքիոյ Եւրոպական միութիւն մուտքը դիւրացնելու համար, կայսերապաշտները տեւաբար ու տենդագին կ'աշխատին:

Եւ թուրքերուն՝ իսլամ պետութիւններուն միանալով՝ անոնց հետ շատ մեծ ուժ գոյացնելու հաւանականութեան սպառնալից հեռանկարով, կայսերապաշտները կը վախցնեն

Թուրքիոյ Եւրոպական միութեան անդամակցութեան հակառակ եղող պետութիւններուն:

Այդ պատճառաւ մենք կտրուկ կ'ըսենք, որ կայսերապաշտներու, թուրքերը Եւրոպական միութեան անդամ դարձնելու աշխատանքները՝ ի վերջոյ յաջողութեան պիտի յանգին:

Թիւ 184

«Նայիրի», 31 Օգոստոս 2010, Թիւ 313

**ՎԱՆԻ ԱՆԽԹԱՄԱՐ ԿՂԶԻՒՆ ՎՐԱՅ ՉՏՆՈՒՈՂ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՉ  
ԹՐՔԱԿԱՆ ՄԵԾ ԹԱՏՐՈՆ  
19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2010-ԻՆ, ՎԱՆԻ ԱՆԽԹԱՄԱՐ  
ԿՂԶԻՒՆ ՎՐԱՅ ՉՏՆՈՒՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ  
ՍՈՒՐԲ ԽԱՉՉ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՉ, ԹՐՔԱԿԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ՈՒ «ՍՈՒՐԲ ԽԱՉՉ»  
ՏՕՆԻՆ ԱՌԹԻ, ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ  
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԻ:  
ՄԵԿ ԶԱՐՈՎ 9 ԹՈՉՈՒՆ ԿԱՐԵԼԻ՝ Է ՈՐՍԱԼ:  
ԱՂՈՒԷՍԻ ՆՄԱՆ ԽՈՐԱՄԱՆԿ ԹՈՒՐՔԵՐԸ ԿՐՆԱՆ ՈՐՍԱԼ:  
ԱՆԽԹԱՄԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՉ ԿԱՏԱՐՈՒԵԼԻՔ  
ԱՐԱՐՈՂՈՒԹԵՆԷՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԶԱՂԵԼԻՔ  
ՕԳՈՒՏՆԵՐԸ ՆՇԵԼՈՒ ԶԱՆԱՆՔ...**

- 1.- Թուրքիոյ մէջ ժողովրդավարութիւն կայ պիտի ըսուի:
- 2.- Թուրքիոյ հայերը իրենց պատմական եկեղեցիներուն մէջ ազատօրէն արարողութիւն կը կատարեն:
- 3.- Թուրքիան այլեւս մարդասիրական երկիր մըն է:
- 4.- Թուրքիան մարդու իրաւունքները կը յարգէ:
- 5.- Ախթամար կղզիի այս արարողութեան ներկայ գտնուելու համար, արտասահմանէն մեծ թիւով հայեր պիտի ժամանեն:

6.— Այս հայ գրասաչրջիկները՝ Թուրքիոյ և մասնաւորապէս Վանի թուրք ժողովուրդին, ամէն տեսակէտով՝ շատ օգտակար պիտի ըլլան:

7.— Եւրոպան ալ այլեւս պիտի հասկնայ, որ Թուրքիան անցեալի վայրագ Թուրքիան չէ:

8.— Թուրքիոյ Եւրոպական միութեան մաս կազմելուն պիտի նպաստէ:

9.— Ի՞նչ է արդեօք իններորդը...

Վերը նշուած ձեւով՝ Ախթամարի եկեղեցիին մէջ 19 Սեպտեմբեր 2010-ին կատարուելիք հայկական եկեղեցական արարողութիւնը, շատ տեսակէտով Թուրքիոյ օգտակար պիտի ըլլայ...

Բայց Ախթամար կղզիին վրայ թրքական թատրոնի մը բեմադրութեամբ, թուրքերուն հետապնդած բուն նպատակին մասին ոչ մէկը կ'արտայայտուի...

Թուրքերուն ներկայի բուն և մեծագոյն խնդիրը՝ հայերը չեն:

Թուրքերը 1915թ., հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին, և հայոց հայրենիքը՝ Արեւմտեան Հայաստանը, գողցան:

Թուրքերը, հայ ազգը ցեղասպանութեան ենթարկելով, Հայկական հարցին վերջ տուին:

Ահաւասիկ՝ խնդիրը այստեղ կը սկսի:

Թուրքերը՝ Արեւմտեան Հայաստանին տէր դարձան... Բայց այս հողերուն վրայ, 1915թ. ցեղասպանութենէն յետոյ, թուրքերուն Հայկական ցեղասպանութեան մէջ մեղսակիցները և վարձկան դահիճները եղող քիւրտեր տեղաւորուեցան...

Այսօր, Արեւմտեան Հայաստանի մէջ, հայեր չկան...

Բայց այս հողերուն վրայ, Կարսէն մինչեւ Վան ու ամէն կողմ, ամբողջութեամբ քիւրտեր տեղաւորուած են:

Եւ քիւրտերը այսօր գործնապէս (Di Facto) Արեւմտեան Հայաստան հաստատուած ժողովուրդ մը ըլլալով, թուրքերուն

դէմ, 1923թ. մինչեւ այսօր, ինքնիշխանութեան համար կը պատերազմին:

Եւ թուրքերը՝ ինքնավարութեան համար պայքարող այս քիւրտերուն, շատ անիրաւարար՝ «P. K. K.-ական ահաբեկիչ» կ'ամբաստանեն:

Իսկ այս թուրք-քիւրտ պատերազմին աւարտը թուրքերուն համար նպաստաւոր պիտի չըլլայ:

Քանի որ այսօր թուրքերը, 1915թ. հայերուն դէմ ըրածնուն նման՝ չեն կրնար քիւրտերուն ցեղասպանութեան ենթարկել:

Որովհետեւ քիւրտերը, հայերու նման ողջակէզ ըլլալու պատրաստ ազգ մը չեն...

Ընդհակառակն՝ քիւրտերը, թուրքերուն նման ուազմիկ և վայրագ ազգ մըն են:

Եւ ասկէ առաջ ալ, շատ առիթներով գրած էինք, թէ՛ այս թուրք-քիւրտ պատերազմը, իրականութեան մէջ, հայոց հայրենիքը բաժանելու համար թուրքերուն ու քիւրտերուն միջեւ և 1923-էն մինչեւ այսօր տեւող ժառանգ-աւարի բաժանման պատերազմ մըն է...

Եւ այս պատերազմի մասին մեր համոզումը հետեւեալն է...

Ի վերջոյ, հայոց հայրենիքին վրայ տեղաւորուող քիւրտերը, յաղթական պիտի ելլեն:

Քանի որ այդ «հողերուն» վրայ այսօր բնակող քիւրտերը, այդ հողերուն իրողական տէրերն են:

Թիւ 185

«Նայիրի», 19 Հոկտեմբեր 2010, Թիւ 314

**ԹՈՒՐԷՐՈՒՆ ԲԵՄԱԴՐԱԾ ՆՈՐ ԹԱՏՐՈՆԸ՝  
 ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ  
 ՊԵՐՄԱՆԱՅԻՆԵՐԸ ԾՐԱԳՐԵՐ ԵՆ:  
 ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՈՒՆ ԹՈՒՐԷՐԸ՝  
 ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ԻՐԵՆՅ՝ ՎՐԱՅԷՆ  
 ՆԵՏԵԼՈՒ ՀԱՍԱՐ, ՆՈՐ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՍԿՍԱՆ:  
 BERNAR LEWIS-Ի ՆՄԱՆ ԹՈՒՐԷՐՈՒՆ ԾԱՌԱՆ  
 ԵՂՈՂ ՊԱՏՄԱԲԱՆ PROF. FERUZ AHMAD-Ը ԸՍԵՐ Է,  
 ՈՐ «ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ  
 ԼԱԻԵԼԻ ՃԻՇԳ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ),  
 ՄԵԾ ՀԱԻԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ՝  
 ՊԵՐՄԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՄԸՆ Է»**

PROF. FERUZ AHMAD-ը, իր կատարած երկար ելոյթին մէջ սապէս կ'ըսէ. –

«Առաջին համաշխարհային պատերազմին, օսմանեան բանակը բոլորովին գերմանացիներուն հակակշռին ենթարկուած էր:

Օսմանեան բոլոր հարցերը՝ Պերլինի մէջ կ'որոշուէին: Եւ ոչ թէ Պոլսոյ մէջ: Օսմանեան զինուորական ուժերը գերմանացիներու կողմէ կը ղեկավարուէին:

Նոյնիսկ օսմանեան գանձի տնտեսութիւնը... Նաւատորմը գերմանացիները կը հակակշռէին: Եւ ամէն մէկ օսմանեան բանակին մէջ գերմանական սպայակոյտի նախագահ մը կար: Եւ նոյնիսկ էնվէր փաշայի քովը գերմանական սպայակոյտի նախագահ մը կը կենար»...

PROF. Feroz Ahmad-ին ըսածները, մեզի՝ հայերուն համար նորութիւն մը չեն:

Բայց նորութիւն եղողը՝ Հայկական ցեղասպանութեան մէջ թուրքերուն, գերմանացիները պատասխանատու նկատելին է:

Որովհետեւ մինչեւ այսօր, թուրքերը Հայկական ցեղասպանութիւնը կ'ուրանան:

Բայց, վերջին չրջաններուն, Ամերիկայի և ուրիշ շատ երկիրներու կողմէ Հայկական ցեղասպանութեան թուրքերուն կողմէ կատարուած ըլլալու փաստի ընդունման «վտանգին» սպառնալիք-հաւանականութիւնը մէջտեղ ելաւ:

Թուրքերը՝ «Մենք յանցաւոր չենք, բուն յանցաւորները՝ գերմանացիներն են» ըսել սկսան: Իրաւագէտները շատ լաւ գիտեն՝ չարագործներուն յանցաւորի բնագղային կեցուածքը՝ «Ես չըրի: Ան ըրաւ»:

Թուրքերը, այս թատրոնը՝ 1975թ. ալ խաղալ սկսած էին: Երբ ԱՍԱԼԱ-ի հերոսները ցեղասպան թուրքիոյ դիւանագէտները ահաբեկել սկսան, թուրքերը, յանցանքը գերմանացիներուն վրայ նետեցին:

Եւ թրքական թերթերը այդ տարիներուն «Հայկական ցեղասպանութեան բուն պատասխանատուները՝ գերմանացիներն են» գրեցին:

... Թուրքերը միշտ, դժուար կացութեան մատնելու պարագային, իրենց յանցանքը գերմանացիներուն վրայ կը նետեն...

... Եւ թուրքերուն դէմ՝ «ցեղասպանութիւն» ամբաստանութիւնները կը դադրին:

Որովհետեւ, եթէ գերմանական պատասխանատուութիւնը մէջտեղ ելլէ, այն ատեն բուն պատասխանատուներուն, միջազգային դրամատիրութեան ծանօթ դեկավարներուն, սելանիկցի դաւանափոխներուն խաղացած դերն ալ երեւան կ'ելլէ:

Եւ «չատ մի խառներ, տակէն... «չոգոլա կ'ելլէ»»...

Եւ իրականութիւնները կը պարզուին...

... Արդէն, Հայկական ցեղասպանութեան մէջ գերմանական պատասխանատուութեան մասին, դեռ 1915-ին եւրոպացի պատմագէտները գիրքեր հրատարակած էին...

ARNOLD TOYNBEE-ին, VISCOUNT BRYCE-ին և մանաւանդ RENE PINON-ին գրած գիրքին անունը նշենք.

«METHODE ALLEMANDE, TRAVAIL TURC»

1915-ի Հայկական ցեղասպանութեան առաջնակարգ պատասխանատու Թալեաթ փաշայի դէմ Պոլսոյ թրքական զինուորական դատարանին տուած [1919-ին] մահապճիոր գործադրող Սողոմոն Թէհլիրեանի փաստաբանին՝ գերմանացի DR. NIEMEYER-ին, 3-6-1921-ին, Պերլինի դատարանին առջև ըսածները բացառիկ կարեւորութիւն ունին:

«... Թուրքերը Հայկական տեղահանութեան համար սապէս կ'ըսեն՝

«Գերմանական հրամանը չեղած՝ Հայկական տեղահանութիւնը կատարելը անկարելի էր: Որովհետեւ գերմանացիները շատ զօրաւոր են...»:

«... Այս տեսակէտով ամէն կողմ մեզ՝ գերմանացիներս պատասխանատու կը նկատեն Հայկական ջարդերուն համար...»»:

Եւ շատ մեծ թիւով հրատարակութիւններ կան Ամերիկայի, Ֆրանսայի և Արեւելքի մէջ, որոնք կ'ակնարկեն ըսելով՝ «Գերմանացիներն էին իրական թալեաթները Թուրքիոյ մէջ»:

\* \* \*

1921-ին, եթէ մենք՝ բոլոր հայերս, միանայինք, ուժեղ ճակատ մը կազմէինք և այս իրականութիւններուն մէջտեղ ելլելուն համար պայքարէինք՝

1923-ին այսօրուան Թուրքիան չէր ստեղծուեր...

Եւ հայերն ալ այսօրուան [գրեթէ] թշուառ և դժուար վիճակին չէին մատնուեր:



Թիւ 186

«Նայիրի», Բացառիկ, 1 Յունուար 2011

## ԹՈՒՐՔԵՐԸ ԻՐԵՆՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԴԵՌ ՆՈՐ ԿԸ ՍՈՐՎԻՆ

Վերջերս Պոլսոյ մէջ, հայ ճարտարապետներուն սարքած կառույցներուն վերաբերող, ցուցահանդէս մը հանրութեան բացուեցաւ:

Եւ կարգ մը «մարդասէր» թուրք գրողներ, ճարտարապետ Սինանին և ճարտարապետներու ընտանիք՝ Պալեաններուն մասին երախտագիտութեամբ արտայայտուեցան և ճարտարապետ Սինանին և Պալեաններուն կառուցած՝ մզկիթ, պալատ և միւս պատմական շինութիւններուն մասին հիացումով բացատրութիւններ տուին:

Մենք, 3 Յուլիս 2001-ին, «Նայիրի» թերթով լոյս տեսած գրութեան մէջ, սապէս գրած էինք՝ «Վերցուցէք Պոլսէն՝ Բիւզանդիոնէն մնացած պատմական կառույցները, և ճարտարապետ Սինանին ու ճարտարապետներու ընտանիք՝ Պալեաններուն կերտած մզկիթ, պալատ և միւս կառույցները – Պոլսոյ մէջ ի՞նչ կը մնայ:

Կը մնան միայն ծուռումուռ «պեթոնէ» շէնքերը... Եւ մանաւանդ՝ գիշերաբոյս տուները»:

\* \* \*

Կը կարծէ՞ք, թէ հայերը միայն ճարտարապետութեան մարզին մէջ օգտակար եղած են:

... Թէեւ այսօր սակաւաթիւ մարդասէր թուրք գրողներ, ճարտարապետութեան մարզի մէջ օգտակար եղած հայերուն մասին կը խօսին... Բայց թուրքերը՝ իրենց անցեալը դեռ նոր- նոր սորվիլ պիտի սկսին...

Եւ պիտի սորվին որ ամէն մարզի մէջ՝ վաճառականութիւն, ճարտարարուեստ, ուսում, կրթութիւն, գիտութիւն,

արուեստ, արհեստ ու հողագործութիւն... Այս բոլոր մարզերէ ներս օսմանեան պետութիւնը արդիականացնողները հայերը եղած են:

Որովհետեւ հայերը 1830թ. յետոյ, օսմանցիներուն հրապարակած «Hatti-Hümayun, Tanzimat»-ի նման սուլթանական հրովարտականերուն միամտաբար հաւատացին: Եւ օսմանցիէն աւելի օսմանցի եղան...

... 1908թ. ալ, «Jüne Türk» կոչուած դաւանափոխներուն կողմէ մէջտեղ բերուած «Hürriyet»-ի [ազատութիւն] յեղաշրջումին, հայերը [քիչ բացառութեամբ] երիտթուրքերուն միացան:

Եւ «Hürriyet»-ի շրջանին, այդ հայերը, իրենց հոգին և մարմինը, նոյնիսկ հայ գիւղացիին զէնքերը երիտթուրք-իթթիհատականներուն յանձնեցին:

Այդ կարգի հայերուն կուրաբար իթթիհատականներուն հաւատալուն արդիւնքը՝ բոլորին ծանօթ է՝ անոր սեփականատէրը ըլլալը ապացուցանեց:

1914թ. աշխարհամարտէն օգտուող իթթիհատականները [իբր թէ] իրենց «եղբայրները» եղող հայերը ցեղասպանութեան ենթարկեցին:

\* \* \*

Թուրքիոյ մէջ սոյն իրականութիւններուն մասին այժմ, ազատօրէն, գրուիլ սկսաւ...

Եւ վերջին շրջաններուն բացայայտուած իրականութիւն մը մեզ շատ տպաւորեց:

Սելանիկցի Մուստաֆա Քեմալին շրջան մը զբաղցուցած ու Անգարա գտնուող հանրապետութեան նախագահի ապարանքին բուն տէրը՝ անգարացի Գասապեան ընտանիքն է եղեր:

Այսինքն՝ Թուրքիոյ խորհրդանիշը եղող Անգարայի ծանօթ «Çankaya» ապարանքին տէրը հայ է...

Քանի մը չաբաթ առաջ ալ, Ամերիկայի մէջ հայ մը՝ Ատանայի շրջակայքը գտնուող և ամերիկացիներու կողմէ իբր զինուորական մեծ խարիսխ գործածուող «Incirlik»-ի

օղակայանին բոլոր հողամասերուն իր ընտանիքին պատկանած ըլլալը վկայող կալուածաթուղթերը ցոյց տալով, անոնց սեփականատէրն ըլլալը ապացուցանեց:

Պոլսոյ շրջակայքը գտնուող «Yesilköy»-ի օղակայանին [այսօրուան անունով՝ «Ataturk» օղակայան] բոլոր հողամասերուն՝ Տատեան ընտանիքին պատկանիլը, Պոլսոյ հայերէն շատերը գիտեն:

Որովհետեւ 1830թ. օսմանեան պետութեան մէջ վառօղի առաջին գործարանը հիմնող Տատեաններուն, օսմանեան սուլթանը իր գոհունակութիւնը կը յայտնէ, և իբր վարձատրութիւն՝ Մաքրիգիւղէն մինչեւ Քիւչիք Չէքմէճէ լիճին վերջաւորութիւնը երկարող այս անծայրածիր հողային տարածքները վառօղի արտադրութեան մասնագէտ՝ Տատեանին և անոր ընտանիքին կը նուիրէ...

... 1950թ. յետոյ, Թուրքիոյ մէջ իշխանութեան եկող [իբր թէ] Դեմոկրատ կուսակցութեան շրջանին, «Yesilköy»-ի օղակայանի հողերուն տէրերը եղող Տատեան ընտանիքին Եգիպտոս բնակող ժառանգորդները, Պոլիս կուզան և դատարանի ճամբով այդ հողերուն փոխարժէքները կը պահանջեն:

Ո՛վ գիտէ՝ թէ այս եգիպտահայերուն ո՛վ խաբած էր, որ անոնք Պոլիս եկած և դատ բացած էին:

Անպայման Եգիպտոսի կամ Պոլսոյ մէջ գտնուող խորամանկ և չահամոլ փաստաբաններ...

... Այս փաստաբանները չէի՞ն գիտեր, որ Թուրքիոյ մէջ ամէն բան «օրէնքներու» համաձայն կը կատարուին...

Եւ Թուրքիոյ մէջ Envali Metruke [լքուած գոյք] ըսուած օրէնք մը կայ:

Եւ մինչեւ այսօր, այս օրէնքը ի գորու է:

Ի՞նչ ըսել է Envali Metruke = լքուած գոյք:

Արաբերէն բառերէ կազմուած ասացուածք մը՝ Envali Metruke-ին իմաստը՝ «Տէր չունեցող, անչարժ կալուած» ըսել է:

Եւ այս օրէնքը՝ Հայկական ցեղասպանութենէն յետոյ մէջտեղ ելաւ...

Եթէ մարդու մը արեան մէջ թրքութիւն ըսուած վայրագութեան ախտը մտնէ, անկէ յետոյ այդ անձը՝ զինիէն դարձած քացախի նման, թուրքէ աւելի թուրքի կը վերածուի...

Անգլիացի պատմարան Arnold Toynbee-ն իր օսմանցիներու վերաբերեալ գիրքին մէջ կ'ըսէ, թէ «Քրիստոնեայ տղաքը՝ մասնաւոր կեդրոններու մէջ թրքացուելով Yeniceri-ներու վերածուելէ յետոյ, իրենց հարազատ քրիստոնեայ հայրերն և մայրերն անգամ սուրէ կ'անցրնէին»...

Մենք ալ, 13 Յունուար 2001 թուակիր «Նայիրի»-ի մէջ սապէս գրած էինք.

Ապտուլլահ Էօճալանին համար «Հայու ապօրինի զաւակ, փիչ է» ըսեր էք: Էօճալանին հայու «փիչ» ըլլալը չենք կրնար գիտնալ:

Բայց մեր գիտցած մէկ բանը կայ:

Դուք, մեծամասնութեամբ, յոյնի և հայու «փիչ» էք:

\* \* \*

Վերադառնանք Հայկական ցեղասպանութեան...

11-րդ դարուն Միջին Ասիայէն եկող վայրենիներու խուժան մը ըլլալով մտաք Անաթոլիոյ հողերը... Եւ քիչ աւելի ետք, Պալքանեան բոլոր ժողովուրդները սուրէ անցնելով [այսինքն՝ ցեղասպանութեան ենթարկելով], 1683-ին մինչեւ Վիէննայի դռներուն առջեւ յառաջացաք...

Մինչեւ 1683-թուականը այդ բոլոր գրաւեալ հողամասերը կը կոչուէին՝ Օսմանեան կայսրութիւն [այսինքն՝ Թուրքիա]:

Բայց 1683-էն մինչեւ 1914 թուականը այդ բոլոր գրաւուած հողերէն նահանջելու ստիպուեցաք:

\* \* \*

Եւ 1914-էն յետոյ ձեր բոլոր ուժերը Անաթոլիոյ մէջ համախմբեցիք:

Եւ Անաթոլիայէն ալ չվճնտուելու համար, այդ հողերուն բուն տէրէրը եղող հայ ազգը 1915-ին ցեղասպանութեան ենթարկեցիք...

... Օսմանեան գրաման ենթարկուած բոլոր ազգերը, հակառակ որ ցեղասպանութեան ենթարկուած էին, Օսմանեան կայսրութեան փլուզումէն յետոյ, կրկին իրենց հողերուն տիրացան...

... Եւ միայն հայերը...

Թէ՛ ցեղասպանութեան ենթարկուեցան և թէ՛ իրենց հայրենիքը գողցուեցաւ:

\* \* \*

Ապտուլլահ Կիլը, թող ուզածին չափ պոչաւոր սուտեր խօսի եւ ցեղասպանութիւն չէ եղած ըսէ...

Այսօրուան [իբր թէ] թուրքիոյ պատմութիւնը հետեւեալ 3 նախադասութիւններու մէջ կրնանք ամփոփել.

1.- Թուրքերը 1915-ին հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեցին:

2.- Եւ հայոց հայրենիքը գողցան:

3.- Եւ հայոց հայրենիքին վրայ այսօրուան [իբր թէ] թուրքիան ստեղծեցին:

Թիւ 188

«Նայիրի», 15 Մարտ 2011, թիւ 316

**Ո՛Վ ՅԵՂԱՍՊԱՆ ԵՒ «ԳՈՐԸ ՊԱՅՆԵՐ»-ԱԿԱՆ ԹՈՒՐԶԵՐ՝  
1915Թ. ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԵՆ  
500 ՏԱՐԻՆԵՐ ՅԵՏՈՅ ԱԼ,  
ԴՈՒՔ ՀԱՅԵՐՈՒՆ ԶԵՌՔԵՆ  
ԶԵՔ ԿՐՆԱՐ ԱԶԱՏԻԼ**

Պոլսոյ «RADIKAL» թերթին մէջ Կէօքճէ Այթուլու, «Զկրցանք ազատիլ սա հայերուն ձեռքէն» վերտառութեամբ գրութիւնով՝ Արեւմտեան Հայաստանի Բաբերդ քաղաքին [իբր թէ] հայերէն ազատագրութեան տարեդարձին, ազատութեան հանդիսութիւնները կը պատմէ և թրքական պետութեան

[իբր թէ] խաղաղասէր քաղաքականութեան ետեւ խաղացուած, հայերուն դէմ ատելութեան և թշնամութեան զգացումներ հրահրող բեմադրութիւնները կը մատնանչէ...

Ո՛վ ցեղասպան և «Գորշ գայլեր»-ական թուրքեր՝ 1915-ի Հայկական ցեղասպանութեան թուականէն 500 տարիներ յետոյ ալ, դուք հայերուն ձեռքէն չէք կրնար ազատիլ...

Վերադառնանք Բաբերդ քաղաքին «ազատագրման»:

Բաբերդ քաղաքը ինչպէ՞ս հայերէն «ազատագրուած» կրնայ ըլլալ... Երբ քաղաքին անունը անգամ՝ «BAYBURT = Բաբերդ» հայկական է...

\* \* \*

Ցեղասպան եւ «Գորշ գայլեր»-ական թուրքեր՝ 70 միլիոն-նոց պետութիւն մը եղանք ըսելով մի՛ յոխորտաք...

Որովհետեւ ձեր պետութիւնը թղթախաղի թուղթերէ կազմուած աշտարակ մըն է...

Փոքր շարժումով մը կը փլչի...

Ինչո՞ւ, գիտէ՞ք...

Որովհետեւ միջազգային ADN-ի մասնագէտները քննութիւններ կատարել են:

Եւ այս ADN-ի քննութիւններուն արդիւնքին համաձայն՝ թուրքիոյ մէջ թուրանական ծագումով թուրքերուն համեմատութիւնը հազիւ հարիւրէն հինգ է:

Այսինքն՝ թուրքիոյ մէջ բնակող 70 միլիոն ժողովուրդին 67 միլիոնը թրքական ծագում չունին:

Այս 67 միլիոն թուրք ըսուածներուն մեծամասնութիւնը, Անատոլիոյ բնիկ ժողովուրդներ եղող, ծագումով յոյներ և հայեր են...

Յետոյ կան՝ ասորիներ, արաբներ, բոմաքներ, պոսնիաքներ, վրացիներ, հրէաներ, չէրքէզներ, գնչուներ... և դեռ ուրիշ ցեղերու պատկանող ժողովուրդներ...

Եւ թուրքերը այս ժողովուրդներու «Խճանկարը» (Mosaïque) «Իթթիհատ և թերաքքի» ըսուած թրքամոլ կուսակցութիւնով սկսող և յետոյ իթթիհատականներուն գաղափարակիցը եղող վարչակարգով շարունակվող սարսափելի

տարիներուն՝ ցեղասպանութիւններով, ջարդերով և բռնութիւններով օտարազգիները թրքացնելու աշխատեցան...

Բայց այսօր պայմանները և կարգերը փոխուեցան այլևս...

... Այս շինծու թրքական պետութիւնը ստեղծողները և մինչեւ վերջին չրջանները թրքական պետութեան թիկունք կանգնողները միջազգային դրամատիրութեան ղեկավարներն էին:

Բայց խօսքով՝ սիոնական հրէաները:

Բայց Թուրքիա ըստած այս ճիւղաղ պետութիւնը, վերջին չրջաններուն, Օսմանեան կայսրութիւնը վերականգնելու երազներ տեսնել սկսաւ:

Եւ բնական է, որ թրքական այս մարմաջները՝ միջազգային դրամատիրութեան ղեկավարներուն շահերուն համար փտանգաւոր և վնասակար էին...

Այս պատճառաւ կ'ըսենք, թէ հրէաներուն թիկունքէն զրկուող թրքական շինծու պետութիւնը, թղթախաղի թուղթերէ կազմուած աշտարակի նման [եթէ հրէաները որոշեն], անոնց փոքր մէկ հպումով պիտի կործանի:

Թիւ 189

«Նայիրի», 19 Ապրիլ 2011, Թիւ 317

**ՊՈԼՍՈՅ ԱՄԵՆԷՆ ՀԻՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԷՆ՝  
«AKSAM»-Ի ՄԷՉ ORAY EGİN, ԻՐ 8 ԱՊՐԻԼ  
2011 ԹՈՒԱԿԻՐ ՓՐՈՒԹԵԱՆ ՄԷՉ, ՏԽՐԱՀՈՉԱԿ  
ՃԵՄԱԼ ՓԱՇԱՅԻՆ ԹՈՌԱՆ՝ «HASAN CEMAL»-ԻՆ,  
ԼՍԱՆՃԵԼԵՍԻ ՀԱՅԵՐՈՒՆ ՄԷԿ ԱԿՈՒՄԲԻՆ  
ՄԷՉ ՈՒՆԵՃԱԾ ԽՕՍԱԿՅՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՃՔԻՆ,  
ՉՈՐՍ ԱՆՓԱՄ «ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ»  
ԲԱՌԸ ՓՈՐՇԱՄԱՍ ԸԼԼԱԼՈՒՆ ՀԱՄԱՐ  
ՉԱՅՆ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ**

Եւ «AKSAM»-ի հրապարակագիրը այլեւս դդումի համ տուող թրքական քարոզչութիւնը կը կրկնէ՝

«Ցեղասպանութիւն չէ եղած... Կարողացէք փրոֆեսորներ՝ STANFORD SHOW-ի և BERNARD LEWIS-ի գիրքերը...»:

Բայց այսօր, թուրքերն անգամ գիտեն թէ՛ STANFORD SHOW և BERNARD LEWIS թրքական կառավարութեան կողմէ վճարուող պատմագէտներ են...

\* \* \*

Բնական է, որ 1915-ի Հայկական ցեղասպանութեան յանցագործներէն ճեմալ փաշային թողը՝ Հասան ճեմալին հայ ազգէն ներողութիւն խնդրելը և Երեւանի Մեծ եղեռնի գոհերի յուշարձանին ծաղիկ տանիլն ու յարգանքի տուրք մատուցանելը՝ հայերուն գոհունակութիւն կը պատճառեն:

Բայց ինչի՞ կը ծառայեն...

Հասան ճեմալի անուշ խօսքերը՝ հայերուն կ'ուրախացնեն. կը թմրեցնեն և կը քնացնեն...

Եւ հայերը թուրքիոյ վարչապետ էրտողանին խօսքերը չեն իմանար, ... չեն գիտեր... և չեն հասկնար...



Թուրքիոյ «Տօն Քիչօթ» վարչապետը 25 Յունուար 2011-ին, Սթրազպուրկի մէջ կատարած ելոյթի ընթացքին, «Թուրքիոյ պատմութեան մէջ ցեղասպանութիւն չէ կատարուած» ըսած էր...

... Այս չէր բաւեր... մեծամոլութեան հիւանդութենէ վարակուած վարչապետ էրտողանը, երկու օր առաջ 13 Ապրիլ 2011-ին Սթրազպուրկի եւրոպական ժողովասրահին մէջ ունեցած ելոյթին ընթացքին, իր ոչ միայն օսմանցի, այլ նաե՛ւ թուրանական և ֆաշիստ ըլլալն ալ ապացուցանեց ըսելով.

«Մենք բարեկամ և եղբայրատուրպայճանական ժողովուրդին իրաւունքը և օրէնսգիտութիւնը հայերուն չենք կրնար կերցնել:

Այսինքն՝ էրտողան ըսել կ'ուզէր, թէ՛ «Արցախին՝ հայոց տրուելուն արգելք պիտի ըլլանք»:

Բայց, իրականութեան մէջ, իր միտք բանին հետեւեալն է...—

«Ազերիներուն 1988-ին Պաքուի և Սումկայիթի մէջ ըրածնուն նման, առաջին առթիւ իսկ, Արցախի հայերը մաքրագործելու համար, անոնց պիտի օգնենք»:

\* \* \*

էրտողան պէ՛յ՝ ազերիները ուրկէ՛ ուր ձեր եղբայրները կ'ըլլան եղեր...

Անաթոլիոյ ժողովուրդին 99 առ հարիւրը [ADN-ի կատարուած քննութիւններու արդիւնքներուն համեմատ] թուրք-թուրանական ծագում չունին:

Օսմանցիներն անգամ, մինչեւ սա վերջին շրջանները, Կովկասէն եկողներուն իրենցմէ ըլլալը չէին ընդունիր: Եւ անոնց «թաթար» կ'որակէին...

Եթէ համարձակութիւն ունիք՝ ADN-ի քննութիւն կատարեցէք, որ տեսնենք, թէ լա՞զ էք, քի՞ւրտ էք, և կամ հա՞յ էք... հասկնա՞նք:

\* \* \*

Էրտողան պէյ, ձեզի բան մը ըսե՞նք:

Դուք ձեր «քթին առջեւը» անգամ չտեսնող իսկական «Տօն Քիչոթ» մըն էք:

Անաթոլիոյ ժողովուրդը, ցեղապաշտ և ֆաշական կարգախօսներ կրող և ամէն առաւօտ դպրոցներուն մէջ աշակերտներուն Ձեր կլլեցուցածին նման՝ «թուրք եմ, պարկեշտ եմ»-ի ձարուտութիւններուն այլեւ չի հաւատար:

Անաթոլիոյ մէջ, բռնութեամբ թրքացուած բոլոր ազգաբնակչութիւնները՝ քիւրտերը, լազերը, հայերը և ասորիները, այլեւ իրենց արմատներուն վերադառնալ կ'ուզեն:

Արդէն, այս ուղղութեամբ, առաջին քայլը նետուեցաւ:

Հիւսիսային Իրաքի մէջ, ինքնավար քրտական պետութիւն մը հիմնուեցաւ:

Եւ հիմա կարգը եկաւ՝ Անաթոլիոյ մէջ և Պոլսոյ շրջակայքը գտնուող 30 միլիոննոց քիւրտներուն...

Էրտողան պէյ՝ Անաթոլիան ճարճատիլ սկսած է:

Իսկ դուք «Մեծ Թուրանի» երազներ կը տեսնէք:

Ուշադրութիւն ըրէք՝

Ճարճատիլ սկսող Անաթոլիոյ աւերակներուն տակ պիտի ճզմուիք...

Թիւ 190

«Նայիրի», 10 Մայիս 2011, [Թիւ 318

**ՇԱՏ ԱՊՐԻ DİYARBAKIR ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ  
ՔԻՐՏ ԶԱՂԱՔԱՊԵՏԸ:**

**«1915-ԻՆ ՄՊԱՆՆՈՒԱԾ ՀԱՅ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՄ  
ՅԻՇԱՏԱԿԻՆ DİYARBAKIR ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՉ  
ՅՈՒՇԱՐՁԱՆ ՄԸ ՊԻՏԻ ԿԱՆԳՆԵՄ:  
ԵՒ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱԷՐԱԿ ՎԻՃԱԿԻ ՄԷՉ ԵՂՈՂ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԻՏԻ ՎԵՐԱՆՈՐՈՎԵՄ  
ԵՒ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ՊԻՏԻ ԲԱՆԱՄ»:**

ՄԱՅԻՍ 2011,  
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ԴժՆ, շատ ապրիս, Diyarbakir – Տիգրանակերտի քաղաքապետ:

1915-ին սպաննուած հայերուն յիշատակին յուշարձան մը հիմնելու և Diyarbakir Տիգրանակերտի հայկական մեծ եկեղեցին վերանորոգելու և պաշտամունքի բանալու որոշումդ սրտանց կը շնորհաւորենք:

\* \* \*

Մինչ այդ՝ «Diyarbakir» քաղաքի մասին կարգ մը բացատրութիւններ տալը օգտակար կը նկատենք...

Diyarbakir-ին անունը՝ մինչեւ 1930թ. Diyaribekir էր:

Այսինքն՝ արարական ազգատոհմի մը անունը եղող «BEKIR»-ին քաղաքը:

Մուստաֆա Քեմալին իբր թէ հանրապետութեան [իրականութեան մէջ ցեղապաշտ և ֆաշական վարչակարգին] չրջանին Diyaribekir-ին անունը իբր թէ թրքացուեցաւ և Diyarbakir-ի վերածուեցաւ:

Անպայման չրջակայքը գտնուող ERGANI-ի պղինձի հանքերուն վերագրելով...

Հայերը Diyar Bekir-ին Տիգրանակերտ կը կոչեն...

Ք. Ա. 70-թուականներուն Հայոց արքայ՝ Մեծն Տիգրան, հայկական կայսրութեան մայրաքաղաք ըլլալով նոր քաղաք մը կառուցել կուտայ: Եւ անունը «Տիգրանակերտ» կը կոչէ...

Իրականութեան մէջ՝ Տիգրանակերտը այսօրուան Diyaribekir-էն բաւական հեռու եղող բերդաքաղաք մըն է...

Եւ այսօրուան Diyaribekir-ին հետ կապ չունի...

1517-ին օսմանեան սուլթանը՝ Sultan Selim Diyarbekir-ը կը գրաւէ:

Մինչեւ այդ թուականը Diyaribekir-ի բնակչութեան մեծամասնութիւնը հայեր և ասորիներ էին:

Եւ Yavuz Selim հարաւի չրջակայքէն քիւրտ ցեղախումբեր բերել կուտայ: Diyarbekir-ի հայերը և ասորիները քիւրտերուն իշխանութեան կը յանձնէ...

Մինչեւ 1915 թուականը Diyarbekir-ի մէջ 150,000 [հարիւր յիսուն հազար] հայեր կ'ապրէին...

Այսօր Diyarbakir-ի մէջ հայերուն թիւը քանի մը հարիւրի շուրջ է:

Եւ այսօր Diyarbakir-ին բնակչութեան մեծամասնութիւնը քիւրտեր են...

Եւ քիւրտերը Diyarbakir-ը՝ ապագայ մեծ Քիւրտիստանին մայրաքաղաքը ընել ծրագրած են:

\* \* \*

Ահաւասիկ՝ մինչեւ 1915թ. հայկական քաղաք եղող Տիգրանակերտին և տեղւոյն հայ ժողովուրդին ողբերգութեան պատմութիւնը...

Այս ողբերգութեան հետեւանքով է, որ հայկական մայրաքաղաք եղող Տիգրանակերտը՝ այսօր քրտական մայրաքաղաքի վերածուեցաւ:

Թիւ 191

«Նայիրի», 28 Յունիս 2011, Թիւ 319

**TÜRK İNTİKAM TUGAY-Ը (Տ. Ի. Դ.)**  
**(ԹՐԲԱԿԱՆ ՎՐԻՃԱՌՈՒԹԵԱՆ ԶՈՎԱՏ)**  
**ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**  
**ԳՐՈՂ BASKIN ORHAN-ԻՆ ՄԱՀՈՒԱՆ**  
**ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԿԱՏԱՐԵՐ Է...**

**... Ո՛Վ Է BASKIN ORAN-Ը**

BASKIN ORAN-ի մասին «Նայիրի»-ի մէջ քանի մը անգամ արտայայտուած էինք:

1 Յունուար 2009 թուակիր «Նայիրի»-ի մէջ Պասքըն Օրանի և իր մտաւորական ընկերներուն հայերէն ներողութիւն խնդրելու արչաւի մը սկսած ըլլալին գրած էինք...

28 Յուլիս 2009 թուակիր «Նայիրի»-ի մէջ Պասքըն Օրանին Ֆրանսայի Avignon քաղաքի շրջակայքը կատարուած հայկական փառատօնին մասնակցած ըլլալը և հոն Ռուբէն Սեւակի 95 տարեկան աղջկան՝ Շամիրամին ծանօթացած ըլլալուն մասին գրածները արտատպած էինք...

Այդ թուականէն յետոյ Պասքըն Օրան, հայերու մասին իրականութիւնները շարունակեց գրել...

Բայց Թուրքիա ըստուած ճիւղալ պետութեան մէջ իրականութիւններ արտայայտելը արգիլուած է...

Այսօր Թուրքիոյ մէջ [իբր թէ] իրականութիւնները կրնանք ըսել...

Որովհետեւ Թուրք պետութիւնը, իր այսօրուան քաղաքականութեամբ, «Թուրքիոյ ժողովրդավար պետութիւն մը» ըլլալը երոպացիներուն կլեցնել կ'ուզէ:

Իրականութեան մէջ՝ թրքական մտայնութիւնը մինչեւ 1915թ. ինչ որ էր, այսօր ալ անոր օսմանական արչաւող և թալանող նոյն մտայնութիւնը կը շարունակուի...

Նայեցէք, թէ «Թրքական վրիժառուիթեան ջոկատը» Պասքըն Օրանի դէմ ի՞նչ սպառնալիքներ կը տեղացնէ...

«Պասքըն Օրան՝ քու ամբողջ կեանքդ հայերուն պնակալիզուիլն ընելով անցաւ...»

Ո՞վ կրցեր է թուրքին գլուխ բռնել, որ հիմա դուն պիտի բռնես...

Եթէ դուն և քու շուներդ հաւաքուելով Հայաստան չերթաք՝ մահը անխուսափելի վախճան մը պիտի ըլլայ ձեզի համար...

Քեզ նման հայու արիւն կրողներուն տեղը դամբանի քարն է...

Մահուանդ ժամը հասած է...

17 Յունիսին Պասքըն Օրան անունով շունը մէջտեղէն վերցնելով ցոյց պիտի տանք թուրքին ուժը»:

\* \* \*

«Թրքական վրիժառուիթեան ջոկատին» սպառնալիքները՝ յատկանշական օսմանական արշաւող և թալանող մտայնութեան հայելին են...

Օսմանցիները այս մտայնութեամբ մինչեւ Վիէնայի դռները հասան... «Կա՛մ կ'իսլամանաս, կա՛մ գլուխդ կը թռի»:

Բարեբախտաբար Լեհաստանի թագաւոր ժան Սոպիէսքին, օսմանցիներուն այս մտայնութիւնը կասեցուց... Եւ 1683թ. Վիէնայի առջեւ, օսմանցիները պարտութեան մատնեց...

Եւ օսմանցիները սկսան նահանջել... մինչեւ 1915թ.:

Եւ իրենց ձեռքը Պոլիսն ու Անաթոլիան մնացած էին միայն: Եւ օսմանցիներուն վերջը եկած էր: Եւ անոնք իրենց եկած տեղը՝ Միջին Ասիոյ տափաստանները պիտի քշուէին...

Բայց կայսերապաշտները՝ այս «հիւանդ մարդը», օսմանցիները վերակենդանացուցին...

Եւ օսմանցիները 1915-էն մինչեւ 1923, հայերը և յոյները ցեղասպանութեան ենթարկելով, Անաթոլիոյ մէջ նոր թուրքիա մը ստեղծեցին.....

... «Թրքական վրիժառույթեան ջոկատը» Պասքըն Օրանը Հայաստան կը վռնտէ...

Բայց չի չգիտեր, որ Պասքըն Օրանը արդէն Հայաստան է...

Այսօր Թուրքիա ըսուած պետութեան հողերուն բաւական մեծ մասը՝ հայերուն հողերն են – հայերուն հայրենիքն է, Հայաստան է...

Եւ օսմանական արչաւող, թալանող մտայնութեամբ «Թրքական վրիժառույթեան ջոկատի» մաս կազմողներ՝ դուք պիտի վռնտուիք ձեր եկած Միջին Ասիոյ անապատները...

Թիւ 192

«Նայիրի», 9 Օգոստոս 2011, Թիւ 320

### **ՕՍԼՕ ԼՆՈՐՎԵՂԻԱ - ԹՈՒՐԲ ԶԵՂԱՍՊԱՆՆԵՐՈՒՆ ՈՒՂՈՒՄԾ ՊԱՏՉԱՄ**

22 Յուլիս 2011-ին, Նորվեգիոյ մայրաքաղաք՝ Օսլոյի մօտ եղող կղզիի մը վրայ, նորվեգացի ազգայնապաշտ ահաբեկիչ մը, 76 հոգի սպաննեց, և նոյնքան ալ մարդ վիրաւորեց.....

Նորվեգացի ընկերվարական ճանչցուածները, այս կղզիին վրայ, մեծամասնութեամբ իսլամ եղող օտար ազգի գործաւորները կազմակերպելու համար, ժողովներ կը գումարէին:

Ընկերվարական պիտակի տակ գումարուող այս ժողովներուն հետեւանքով Նորվեգիոյ բնիկ ժողովուրդն իր ինքնութիւնը կորսնցնելու և ի վերջոյ երկրին օտարներուն և իսլամներուն ձեռքը անցնելու վտանգ նախատեսող նորվեգացի ազգայնապաշտ երիտասարդը, կղզիին մէջ հաւաքուած օտարներուն վրայ կը կրակէ և շատերուն մահուան պատճառ կ'ըլլայ:

\* \* \*

Բնական է՝ խղճամիտ մարդ մը ըլլալով, ցաւ կ'զգանք մեռնողներուն համար... և վերապահ ենք հակազդումի այդ կերպին հանդէպ:

Բայց չմոռնանք, որ Երկրորդ աշխարհամարտէն յետոյ, աշխարհի իշխանութիւնը ձեռք անցընել ուզող միջազգային դրամատէրերու կազմակերպութեան՝ իր իշխանութիւնը տեւականացնելու համար սարքած պատերազմներուն պատճառաւ, միլիոնաւոր մարդեր մեռան...

Եւ դեռ մինչեւ այսօր՝ Իրաքի, Աֆղանիստանի, Փաքիստանի և օրերս Լիպիոյ մէջ, կայսերապաշտներուն հրահրած պատերազմներուն հետեւանքով, ամէն օր հարիւրաւոր մարդիկ կը մեռնին...

... Այս սպաննուողները մարդեր չե՞ն:

\* \* \*

Նորվեգացի ազգայնապաշտ երիտասարդ ահաբեկչական արարքը՝ միջազգային դրամատէրերու կազմակերպութեան «Եւրոպան կրօնափոխ դարձնելու» ծրագրին դէմ ըմբոստացման հակազդեցութիւնն է...

Եւ Եւրոպան դաւանափոխելու ծրագրին դէմ եղած այս ըմբոստութիւնները՝ Եւրոպայի ուրիշ երկիրներուն մէջ զանազան ձեւերով պիտի շարունակուին:

\* \* \*

Նորվեգացի ահաբեկիչ երիտասարդը ահաբեկչական իր արարքին չսկսած՝ «Իսլամանալու վտանգին դէմ» իր գաղափարները ինթերնետի (համացանցի) միջոցաւ հրապարակեց:

Այս գրութիւններուն մէջ, այլադաւան շարժումներուն առաջնակարգ պատասխանատուն թուրքերը ըլլալը և թուրքերուն քանի մը դարերու ընթացքին Անաթոլիոյ ու Պալքանեան ժողովուրդները իսլամացուցած ըլլալը իրենց բոլոր մանրամասնութիւններով նշուած է...



Նորվեգացի ազգայնապաշտ ահաբեկիչին ինթերնետի գրութիւններուն մէջ նշած՝ Թուրքերուն հայերուն դէմ կատարած ցեղային մաքրագործման ողբերգութիւնը, ո՛չ մէկ արեւմտեան պատմագէտ այս աստիճան յստակ ու կտրուկ անմիջականութեամբ գրած է:

Այստեղ կը հրատարակենք նորվեգացի ահաբեկիչին հայկական ողբերգութեան մասին ինթերնետի մէջ գրածները...

«Օսմանեան կայսրութեան վերջին տարիներուն, նախ՝ սուլթան Ապտիլ Համիտի կողմէ, իսկ յետոյ՝ 1915թ. Թալեաթի, Ճեմալի և էնվերի կազմակերպած ցեղասպանութեան և ստիպողական տեղահանութեան հետեւանքով, հայ ազգը իր պատմական հայրենիքը՝ Արեւմտեան Հայաստանը, կորսնցուց...

Թուրքերը, Անատոլիան և Պալքանները գրաւելէ յետոյ՝ միլիոնաւոր քրիստոնեաներ սպաննեցին և միլիոնաւոր քրիստոնեաներ ալ իսլամացուցին...

Թուրքերը աշխարհի մեծագոյն ցեղասպաններն են...

Թուրքերը Անատոլիոյ մէջ ո՛չ միայն հայերը, այլ՝ յոյները և ասորիներն ալ ցեղասպանութեան ենթարկեցին...

Այսօր Թուրքիոյ կրօնամոլ վարչապետը՝ Ռեճեօ Էրտողան Օսմանեան կայսրութիւնը վերակենդանացնելու կ'աշխատի...

Եւ Եւրոպան իսլամացնելու համար, Եւրոպա գտնուող Թուրք գործաւորներու զանգւածները իսլամական կրօնամոլութեամբ և Թրքական ազգայնամոլութեամբ գրգռելով, զանոնք իբր զէնք կը գործածէ...

Եւ այս ռազմավարութեամբ՝ Եւրոպան ներսէն կործանել կը ծրագրէ»:

\* \* \*

Ամէն մէկ ազգ՝ դուրսէն եկած վտանգներուն դէմ ինքզինք կը պաշտպանէ...

Նորվեգացի ազգայնապաշտ ահաբեկիչին կատարած արարքը, որքան ալ ցնցիչ ու ցաւալի եղած ըլլայ ան, ինքնապաշտպանութեան միջոց ու սկզբնաւորութիւն կը նկատենք:

### Կեանքիս պատմութիւնը

Ես, 1924-ին, Պոլսոյ ամենագեղեցիկ ծովափ-գիւղը եղող Ֆլորիայի մէջ ծներ եմ Թուրքիոյ առաջին վառողի գործարանը հիմնող Տատիաններու ընտանիքին պատկանող ազարակին մէջ:

Քերայրս ու հայրս, Սիլիվրիէն 1922-ին հեռանալու պարտադրուիլնէն յետոյ, Ֆլորիայի այս ազարակը Տատիաններու ազգականներէն վարձեր են:

Բայց միջոց մը ետք, Մուստաֆա Քեմալը մեզի այս ազարակէն վռնտեց:

Եւ Ֆլորիայի մէջ ծովին վրայ, իրեն համար պալատ մը շինիլ տուաւ:

Եւ ազարակն ալ իրեն մարդոցը յատկացուց: Մենք ալ Մաքրիգիւղի չրջակայքը, Տատիաններուն ուրիշ մէկ ազարակը վարձեցինք:

Այդ տարիներուն չրջակայքի հողերուն մեծամասնութիւնը Տատիաններուն ընտանիքին կը պատկանէին:

Որովհետեւ Թուրք սուլթանը, վառողի գործարանը հիմնեց ըսելով՝ իբր վարձատրութիւն Մաքրիգիւղի չրջակայքի բոլոր հողամասերը Տատիաններուն նուիրեր է:

Իմ մանկութիւնս այս ազարակներուն մէջ անցաւ:

Բնութեան գեղեցկութիւնը այս ազարակներուն մէջ տեսնիլ սկսայ:

Բայց նոյն ատեն, երկրագործութեան աշխատաւորներուն, ամառը արեւին տակ այրելով, ձմեռն ալ, պաղէն դողդողալով կատարած աշխատանքներուն դժուարութիւնը այս ազարակներուն մէջ սորվեցայ:

Իմ մէջի բնութեան սէրը եւ գործաւորներուն հանդէպ ունեցած հիացումս ազարակի մէջ անցուցած կեանքիս կը պարտիմ...

Նախակրթարանի եւ միջնակարգի ուսումս, Մաքրիգիւղի Պեզագեան վարժարանին մէջ աւարտեցի:

Այս վարժարանը եկող թուրք քննիչ մը, մեզի հայերուն թուրք ըլլալը սորվեցուց:

«Թրքերէն «ER» քաջ ըսիլ է: «MEN» ալ մարդ ըսիլ է: «ERMENI-ի իմաստը թրքերէն «քաջ մարդ» ըսիլ է: Ուրեմն հայերը թուրք են» ըսաւ:

Այս ձաբոտութիւններուն այն ատենները հաւատացած էինք: Նոյնիսկ, Մուստաֆա Քեմալին մահացած օրը հեծկտոցով լացինք:

Թուրք ուսուցիչները, մանաւանդ հայկական դպրոցներուն մէջ, հայ աշակերտները՝ թուրք մը ըլլալով կը հասցնէին: Բայց, կամաց-կամաց աչքս բացուիլ սկսած էր:

Տարիքս յառաջանալով, հայ ազգին ենթարկուած ցեղասպանութիւնը աւելի հասկնալ սկսած էի:

Երկրորդական ուսումս՝ Պոլսոյ Աւստրիական քոլէճին մէջ շարունակեցի, եւ այս դպրոցէն 1944-ին շրջանաւարտ եղայ:

Եւ բժշկական համալսարանը արձանագրուեցայ: Բժիշկ ըլլալ կ'ուզէի: Որովհետեւ հօրեղբայրս Ռուբէն Սեւակ բժիշկ եղած էր:

Եւ հօրեղբօրս հիացող մըն էի:

Բայց փափագը ուրիշ բան է: Կարողութիւնը՝ ուրիշ բան: Ես արիւն տեսած ատեն նեղութիւն կ'անցնէի: Այս վիճակիս մէջ ինչպէ՞ս բժիշկ կրնայի ըլլալ: Ստիպողաբար բժշկական համալսարանէն հեռացայ: Եւ վաճառականի մը քով, իբր գրագիր աշխատիլ սկսայ: 1946-էրուն, պատերազմէն վերջաւորութեան պոլսահայերը թրքական վայրագութիւնէն ազատելու համար Հայաստան ներգաղթել ուզեցին: Եւ հարուստ եւ աղքատ, շատ մը հայեր արձանագրուելու համար Պոլսոյ սովետական հիւպատոսարանին առջեւ կարգի մտան:

Ես ալ Հայաստան երթալու որոշում տուի, եւ սովետական հիւպատոսարան գացի արձանագրուեցայ:

Տուն վերադարձի ճամբուն վրայ նկատեցի, որ ետեւէս տեւաբար մէկը կուգար: Եւ մինչեւ որ տուն մտայ, մարդ մը ինծի հետապնդեց: Յետոյ թաղին պատասխանատու պաշտօնեայէն տեղեկացայ, թէ ինծի հետապնդողը ոստիկան մըն է

եղեր, եւ թաղին պատասխանատուէն իմ մասին տեղեկութիւններ առէր է:

Այն օրէն յետոյ իմ մէջս թուրք ոստիկանութիւնէն վախը աւելի շեշտուեցաւ:

Դժբախտաբար, պոլսահայերը Հայաստան չի կրցան ներգաղթիլ: Ես ալ չի կարողացայ երթալ:

Եւ ստիպողաբար գործի կեանքի նետուեցայ: Եւ այս ձեւով տարիներ անցան...

1955-ին, Պոլսոյ մէջ 6-7 Սեպտեմբեր ըսուած ողբերգութիւնը ապրեցայ:

Մինչեւ այդ օրը, թուրքին ի՞նչ ըլլալը ընտանիքէս լսած եւ գիրքերէն կարդացած էի:

Բայց 6-7 Սեպտեմբեր 1955-ի գիշերը աչքերովս տեսայ, թուրքերուն ի՞նչ գազան եւ վայրենի ըլլալնին:

Եւ այն օրը երդում ըրի, որ այլեւս այս երկիրը պիտի չ'ապրիմ:

Եւ վերջապէս, օր մը վերջնականապէս հեռացայ Պոլիսէն: Այն Պոլիսը, որ քրիստոնէութեան կեդրոնը եղած էր: Այն Պոլիսը, որ թուրքերուն իշխանութեան ներքեւ քրիստոնեաներուն գերեզմանոցը եղաւ...

Այսօր 30 տարիներէ ի վեր Եւրոպա կապրիմ ազատ եւ առանց թրքական վախի:

Երբեմն, ինծի քանի՞ տարեկան ըլլալս կը հարցնեն: Ես ալ «30 տարեկան եմ» կը պատասխանեմ: Դիմացինս կը շուարի եւ ի՞նչ ըսել ուզելս չի հասկնար:

Այո կըսեմ... 30 տարեկան եմ... Որովհետեւ 30 տարի առաջ թրքացած հայ մը ըլլալով Պոլսէն հեռացայ...

Եւ Եւրոպայի մէջ ազատ եւ իսկական հայ մը ըլլալով կրկին աշխարհ եկայ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

(Վրէժ Ռուբէնեան)

## ՌՌԻԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՏԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Հաւաքածոյ արեւմտահայ գրողներու», չորս հատոր: ՎԵՐԺԻՆ ՏԷՕՇԷՄԷՃԵԱՆ, Պոլիս, 1971:
2. «Հայ ժողովուրդի ողբերգական անցեալը եւ խրախուսիչ ներկան»: ԿԱՐՈ ՄԵՀԵԱՆ, Ս. Ղազար, Վենետիկ, 1982:
3. «Որպէս երազ անկրկնելի», Բ հատոր, «Պատմուածքներ»: ԿԱՐՈ ՄԵՀԵԱՆ, Անթիլիաս, 1984:
4. «Ռուբէն Սեւակ եւ փրցուելիք ուղեղներ»: ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Փարիզ, 1986:
5. «Ռուբէն Սեւակի վերջին օրերը», Թատերախաղ 5 պատկերով: ԳԷՈՐԳ ԳԱՍՊԱՌԱՃԵԱՆ, Պեյրուիթ, 1986:
6. «Ս.-Դ. Հնչակեան կուսակցութեան հարիւրամեակը»: ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ, Պեյրուիթ, 1987:
7. «Մատենագիտութիւն հայատառ օտար լեզուներով տպագիր գիրքերու»: ԱՐՏԱՇԵՍ Հ. ԳԱՐՏԱՇԵԱՆ, Փարիզ, 1987:
8. «Ովքեր են ի վերջոյ արիացիները»: ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԱՐՊԵՏԵԱՆ, Մարսէյ, 1988:
9. «Ռուբէն Սեւակի անուան յիշատակի տուն», «Ռուբէն Սեւակի գաղափարականը», «Ռուբէն Սեւակի անուան գրական մրցանակ»: ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Փարիզ, 1989:
10. «Թրքական համաթուրանականութիւնը վարագոյրով չի ծածկուիր»: ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ, Պեյրուիթ, 1990:
11. «Ռուբէն Սեւակ», Երկեր, հատոր երկրորդ: ԱԼԵՔՍԱՆՏՐ ԹՈՓՉԵԱՆ, Երեւան, 1996:
12. «Էնվեր փաշայի վերջը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Պեյրուիթ, 1996:
13. «Ռուբէն Սեւակ», Երկեր: Բ հրատարակութիւն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997:
14. «Արարատը պետք է մնայ Երեւանի կողմը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Բեյրուիթ, 2001:
15. «Ռուբեն Սեւակը և մեր ժամանակը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Երևան, 2003:
16. «Թուրքերու իբր թէ չգիտցած իրականութիւնները»: Ա հատոր, Հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն: ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2004:

17. ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ, Բանաստեղծություններ, Թարգմանություններ: Ռուսերեն, Երևան, 2004:
18. «Սուտերու եւ երազներու զոհ «էչի նահատակ» եղած ազգ մը՝ «Հայերը»: Ա Հատոր, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Պեյրուիթ, 2004:
19. «Իմ Ռուբէն Սեւակը»: ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ, Հալեպ, 2004:
20. «Մենագրույց նահատակ բանաստեղծի հետ»: ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Երևան, 2005:
21. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ Հատոր, Հայերեն, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երևան, 2005:
22. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ Հատոր, անգլերեն, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երևան, 2005:
23. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները: Բ Հատոր, Փրանսերեն, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երևան, 2005:
24. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ Հատոր, Թուրքերեն, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երևան, 2005:
26. ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ, «Հատընտիր»: Ֆրանսերեն, Երևան, 2007:
27. «Ժամանակի հրամայականը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Երևան, 2008:
28. «Թուրքերուն [իբր թէ] չգիտցած իրականութիւնները» (լրացված վերահրատարակություն), Բ Հատոր, Հայերեն, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երևան, 2009:
29. «Թուրքերուն [իբր թէ] չգիտցած իրականութիւնները», (լրացված վերահրատարակություն), Բ Հատոր, Թուրքերեն, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երևան, 2009:
30. «Ռուբեն Սևակի աչքերով»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Երևան, 2010:
31. «Վերադարձ Հայաստան», ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երևան, 2011:
32. «Սուտերէ եւ սխալներէ ազատուած Ռուբէն Սեւակի հերոսական կեանքի եւ գաղափարականի պատմութիւնը», ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երևան, 2012:
33. «Թուրքերուն [իբր թէ] չգիտցած իրականութիւնները» (լրացված վերահրատարակություն), Գ Հատոր, Թուրքերեն, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ Երևան, 2013:
34. «Թուրքերուն [իբր թէ] չգիտցած իրականութիւնները» (լրացված վերահրատարակություն), Գ Հատոր, Հայերեն, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ Երևան, 2013:

ՅՈՎՆԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

**ԹՈՒՐ-ՔԵՐՈՒՆ**  
**[ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ**  
**ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Երրորդ լրացված վերահրապարակություն

Կազմել և խմբագրել են  
Ժիրայր Նայիրին և  
Վլադիմիր Պետրոսյանը

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան  
Գեղարվեստական խմբագիր՝ Արա Բաղդասարյան  
Զնափորումը և էջադրումը՝ Գագիկ Սարոյանի  
Սրբագրիչ՝ Սերժ Մելքումյան

Տպագրությունը՝ օֆսեթ  
Չափսը՝ 60x84 1/24  
Թուղթը՝ օֆսեթ  
Ծավալը՝ 22 տպ. մամուլ  
Տպաքանակ՝ 500